

ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

15

Հ. Յ. Դ. 100 ԱՄԵԱԿ

ԳԱՂԱՓԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ
ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Բ. ՀԱՏՈՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ԳԱՂԱՓԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ
ՅԵՂԱՓՈՒՈՒԿԱՆ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Բ. ՀԱՏՈՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ



«Յեղափոխական Գրադարան»

Հրատարակութիւն Հ.Յ. Դաշնակցութեան Բիւրոյի

ՅԵՂԱՓՈՒԽԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ - ԹԻԻ 15

**ԳԱՂԱՓԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ
ՀԱՅ
ՅԵՂԱՓՈՒԽԱԿԱՆ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ**

(ԵՌԱՀԱՏՈՐ ՇԱՐՔ)

Բ. ՀԱՏՈՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

1997

Հրատարակութեան մեկեճա

Յ.Յ.Դ. ՍՈՂՈՍՈՆ ԹԵՐԼԻՐԵԱՆ ԿՈՄԻՏԵ

ՖՐԵՁՆՕ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ

Հ.Յ.Դ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

ՆԱԽԱԲԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

4. Մանոյեան. 3. ք. Շ. Գանտահարեան էջ
15

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

I - ՏԵՍՈՒԹԻՒՆ. ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ, ՇԵՇՏՈՒՄՆԵՐ

1. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ՝

Ա. ԿԱՆՈՆԱԳՐԻՆ ՀԱՆԴԵՊ

1. «Մտածումներ Հ.Յ.Դ.եան մասին» - Ն. Աղբալեան. 50
2. «Կրկին մեր Կանոնագիրը» - Ն. Աղբալեան. 65
3. «Կրկին մեր Կանոնագիրը» - Ն. Աղբալեան. 69
4. «Ո՞վ է Դաշնակցականը» - Հ. Տասնապետեան 73

Բ. ԻՐՐ ՏԻՊԱՐ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ, ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ, ԶՈՂԱԲԵՐՈՒԹԵԱՆ

5. «Պատմական Չարիք» - Բ. Միքայելեան 80
6. «Մեր Ներքին Չարիքներից» - առաջնորդող
«Դրօշակ»ի 82

7. «Կուսակցությունն ու Կուսակցականը» - <i>Բ. Փափազեան</i> 84 <i>Ներդիր՝ «Ֆրանս. Ընկվ. Կուսակցությունը» (Վ. Շուշանեան)</i>	
---	--

9. ՈՉ-ԿՈՒՄԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՒԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՊ	
8. «Մտածումներ Յ.Յ.Դեան մասին» - <i>Ն. Աղբալեան</i> 90	

2. ԿԱՆՈՆԱԳԻՐԸ՝

Ա. ԻԲՐ ՍԿԶՐՈՒՆՔ, ԻԲՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՅՑ	
9. «Դաշնակցությունը եւ նրա հակառակորդները» - <i>Մ. Վարանդեան</i> 99	
10. «Մեր Կանոնագիրը», ա. - <i>Ն. Աղբալեան</i> 101	
11. «Մտածումներ Յ.Յ.Դեան մասին» - <i>Ն. Աղբալեան</i> 106	
12. «Մտածումներ Յ.Յ.Դեան մասին» - <i>Ն. Աղբալեան</i> 111	
13. «Յ.Յ.Դ. Կազմակերպությունը - <i>Ռուբեն</i> 118 <i>Ներդիր՝ «Ուժերի համադրություն» յօդուածն, «Դրօշակ»</i> <i>Ներդիր՝ Ռուբենի «Յիշատակներ»-ու ա. հատորն</i>	
14. (Յ.Յ.Դ. Կանոնագրի առանձնայատկություններն) - <i>Ռուբեն</i> 122	
15. «Գաղափարների Ոգին» - <i>Վ. Նաւասարդեան</i> 123	
16. «Գաղափարների Ոգին» - <i>Վ. Նաւասարդեան</i> 124 <i>Ներդիր՝ Ռոստոմի մէկ նամակէն՝ Վարանդեանին</i>	
17. «Մեր Կանոնագրի զոյգ թշնամիները», <i>Խաժակ</i> 125	

Բ. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՊԱԿԵԴՐՈՆԱՑՈՒՄ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱՑՈՒՄ	
18. «Գաղափարների Ոգին» - <i>Վ. Նաւասարդեան</i> 129	
19. «Յ.Յ.Դ. Կազմակերպությունը» - <i>Ռուբեն</i> 130 <i>Ներդիր՝ Յոնանի մէկ նամակէն</i> <i>Ներդիր՝ Բաբկէն Սիւնիի մէկ նամակէն</i>	
20. «Խումբը՝ իբր կազմակերպական միաւոր» - <i>Բ. Փափազեան</i> 133 <i>Ներդիր՝ Վռամեանի մէկ նամակէն</i>	
21. «Տարբերությունը ուժ է, երբ միությունը կը խորացնէ» - <i>Ն. Պէրպէրեան</i> 138	

II - ԳՈՐԾԱՐԿՈՒՄ. ԱՐԺԵՒՐՈՒՄՆԵՐ

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ՝ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄԵՋ.

Ա. ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ

15ԱՄԵԱԿԻ ՄԸ

22. «Հ.Յ.Դ. Կազմակերպական Կառույցի
Հոլովոյթը» - Հ. Տասնապետեան 141
Ներդիր՝ 9. Ընդհ. ժողովի որոշումներէն

Բ. ՊԱՅԵՐ ԱՅՂ ՀՈԼՈՎՈՅԹԵՆ

23. «1895ի Ռայոնական ժողովը» 161
24. «1897-98ի տարեկան Ռայոնական ժողովը» 163
25. (Վասպուրականը՝ 1900ի շուրջ ու աւելի ետք) -
Ռուբէն 165
26. (Տարօնը՝ 1890ական տարիներէն մինչեւ 1904) -
Ռուբէն 169
27. (Տարօնի կազմակերպութեան թուլացումը՝
սահմանադր. շրջանին) - *Ռուբէն* 173
28. (Հ.Յ.Դ. կազմակերպութիւնը՝ 9րդ Ընդհ. ժողովի
պահուն ու անկէ ետք) - *Ռուբէն* 179
29. «Կազմակերպական Խնդիրներ Հ.Յ.Դ.
11րդ Ընդհ. ժողովում» - Ա. Զամալեան 186
30. «Երիտասարդ Սերունդի Յեղափոխական
Դաստիարակութիւնը» - Կ. Սասունի 190
31. «Ռաշնակցութեան Բարոյականը» - Կ. Սասունի 193
32. Հ.Յ.Դ. Ապակեղրոնացման Ընթրնումը -
Բ. Փափազեան 197
*Ներդիր՝ 21րդ Ընդհ. ժողովի «Կառույց
եւ Կանոնագիր» բաժինէն*

2. ԿԱՌՈՅՑԻ ՏԻՊԵՐ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱՇՐՋԱՆՆԵՐ

33. (Ատրպատականը՝ 1890-ական տարիներուն) -
Ռուբէն 206
34. (Կարսի «հնոց»ը՝ 1904ին - *Ռուբէն* 208
35. (Ալեքսանդրապոլը՝ 1904ին) - *Ռուբէն* 213

36. (Տարօնի վերակազմակերպումը՝ Ս. Կարապետի Շրջ. ժողովին, 1906) - <i>Ռուբէն</i>	216
37. «Յ.Յ.Դ. Արիեստակցական միութիւնները» - <i>Ե. Թովչեան</i> <i>Ներդիրներ՝ Արիեստակցական միութիւններ</i> <i>և Գիւղացիական միութիւններ</i>	224

III - ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ

38. Յ.Յ.Դ. առաջին Ծրագիր. «Կազմակերպութիւն»	231
39. Յ.Յ.Դ. ք. Ընդի. ժողով, 1898. Սուտք «Կազմակերպութիւն» օրակարգի <i>Ներդիր.- Հատուած Կանոնագրի նախագծէ</i> <i>(ձեռագիր Ս. Զաւարեանի)</i>	233
40. Արեւելեան Բիւրոյի շրջանի ժողով. 1899	235
41. Փորձնական Կանոնագիր Ցուցական Պատասխանատու Մարմնի, 1904	242
42. Յ.Յ.Դ. Արեւելեան Մարմիններու Ռայոնական ժողովը. 1906	245
43. Յ.Յ.Դ. Վասպուրականի Յրդ Ռայոնական ժողովի արձանագրութիւնները	268
44. Յ.Յ.Դ. Կովկասեան Խորհրդաժողովի Որոշումները. 1907 275	
45. Տեղեկագիր Շտուքկարտի Համագումարին. 1907	278
46. ՀՀԴ Խորհուրդ, 1908ի Նստաշրջան	280
47. Ժողովական/կանոնագրական որոշումներ սահմանադրական ժամանակաշրջանէն 281	
48. Որոշումներ Յ.Յ.Դ. 13րդ Ընդի. ժողովէն. 1938	286
49. Որոշումներ Յ.Յ.Դ. 18րդ Ընդի. ժողովէն. 1963	288
50. Որոշումներ Յ.Յ.Դ. 19րդ Ընդի. ժողովէն. 1967	290
51. Որոշումներ Յ.Յ.Դ. 20րդ Ընդի. ժողովէն. 1972	291
52. Որոշումներ Յ.Յ.Դ. 21րդ Ընդի. ժողովէն. 1977	294
 <i>ԱՆՀԱՏ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ ՑԱՆԿ</i>	 299
 <i>ՍԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ</i>	 300

ՆԱԽԱԲԱՆ

«Գաղափարագրութիւն 3.3.Դաշնակցութեան» շարքի այս երկրորդ հատորը, ինչպէս նախատեսուած էր, կը խմբէ հատուածներ՝ կարելորագոյնները այն գործերէն, որոնք քանակապէս են բանաձեւել դաշնակցական մտածումը՝ կուսակցական կազմակերպութեան ու անոր առնչուող զանազան հարցերու եւ երեւոյթներու շուրջ - 3.3.Դաշնակցութեան կազմակերպական կառոյցին, գաղափարա-բարոյական թէ հոգեբանական ու ընկերաբանական սկզբունքներուն, թանձրացական-պատմական ձեւաւորումներուն, դրած ներկայ-գործնական թէ հեռանկարային խնդիրներուն:

Ինչպէս նախորդը, այս հատորը եւս համակարգեալ ծաղկաքաղ մըն է հատուածներու՝ դաշնակցական մտածողներու գործերէ, լոյս տեսած ուրոյն հատորներու թէ պարբերական մամուլի մէջ, լրացուած՝ ծրագրային-կազմակերպական վաւերագրերով, ժողովական արձանագրութիւններով ու այլ փաստաթուղթերով:

Այսօր դաշնակցական այժմնութեան դրուող կարեւոր խընդիրներէն է, ինչպէս գաղափարաբանական՝ նոյնպէս ալ կազմակերպական հիմունքներու քննարկումը - մենք չենք փութար ըսելու՝ վերաքննութիւնը: Այդ քննարկումը սակայն, պէտք է անմիջապէս յիշել ու յիշեցնել, յատուկ չէ ներկայ պահուն, ոչ ալ այդ մարտահրաւէրը իբր առանձնաշնորհեալ ու բացառիկ շարժառիթ ունի վերջին տասնամեակի իրադրական վերիվայրումները: Չհաշուած փաստը, որ այդ քննարկում-այժմեականացումը պարբերաբար դրուեր է Յ.Յ. Դաշնակցութեան պատմութեան երկայնքին՝ էական, ինքնածին դրուածքով մը, - հոս կը բաւէ նշել անոր վերջին դրուածքը՝ 18րդ Ընդի. Ժողովէն (1963) ասդին, վերջ տուող՝ կազմակերպական դանդաղումի եւ ոչ-հարցադրման բաւական երկարատեւ փուլի մը, անոր սփիւռքեան տեղայնացումի հակումներուն հակադրելով ապակեդրոնացման դաշնակցական պատկերացումը - յեղափոխական նախաձեռնութիւն ու միանգամայն գաղափարաբարոյական յանձնառութիւն՝ հանդէպ Դաշնակցութեան հիմնական աւանդը կազմող **անփոփոխելիին**: Աւելի կուռ, թէւ սքենայական (ու դարձեալ՝ աւանդական...) տարագով՝ **կազմակերպական ապակեդրոնացում՝ գաղափարաբարոյական կեդրոնացման մէջ**:

*

* *

Ինչպէս եռհատորեակի առաջին գիրքին մէջ կը նշուեր, այս հատորի պարագային եւս, հրատարակչական նախաձեռնութիւնը շարժառիթ ունեցած է դաշնակցական մամուլի հին ժողովածուներու եւ դաշնակցական մտքի դասականներու գործերու շատ անբաւարար տրամադրելիութիւնը (ծրագրային-կազմակերպական փաստաթուղթերու եւ դիւանական նիւթերու մարզին մէջ է միայն, որ աւելի մխիթարական երեւոյթով կը ներկայանան Յ.Յ. Դ. նախորդ տասնամեակներու հրատարակութիւնները - շնորհիւ յատկապէս «Նիւթեր Յ.Յ. Դ. Պատմու-

թեան համար» շարքին): Ներկայ հատորը, իր կարգին մասնակի՝ գործնական սահմանափակումներու բերմամբ, այսուհանդերձ կը ձգտի գոցել նշուած այդ բացը - ջանալով խտացրնել էականը: Կա՞յ կարիք շեշտելու, որ **այդ էականի ծանաչումով եւ լրջագոյն նկատառում-քննարկումով է, նա՛եւ** Դաշնակցութեան պատմութեան, գաղափարաբանութեան եւ՛ ռազմավարական մտածողութեան ծանաչումով, որ դաշնակցականներս իրաւասու կը դառնանք մասնակցելու մեր կազմակերպական կառոյցներու քննարկման հաւաքական ճիգին:

*

* * *

Քանի մը գործնական տեղեկութիւններ՝ այս հատորին մասին.- Ինչպէս նախորդը, անիկա իբր ժամանակագրական սահման կընդունի 22րդ Ընդի. ժողովը (1982), ուր կանգ կ'առնէ՝ անսալով արդէն բացատրուած մտահոգութեան մը: Ապա՝ կառուցուած է վերլուծական նախագծի մը վրայ, որ սակայն կը տարբերի ա. հատորի նախագիծէն: Ներածութիւնները, պատրաստուած՝ ընկերներ Կիրո Սանոյեանի եւ Շահան Փանտահարեանի ու հատորի խմբագրին կողմէ, տեղադրուած են հատորի սկիզբը. արտատպեալ հատուածները խմբուած են երեք մեծ բաժիններու մէջ - յաջորդաբար՝ տեսական, գործնական-կիրառական եւ փաստաթղթային. արդարեւ, դաշնակցական կազմակերպութեան մասին խորհրդածութիւններու կողքին, կարելոր ու շահեկան պիտի ըլլայ տեսնել վկայութիւններ ու արժեւորումներ՝ անոնց իրագործման շուրջ (ասոնք եւս, մեծ մասամբ, կը բխին Գ.Յ.Գ. պատմութեան գլխաւոր դերակատարներու՝ գործիչներու գրիչէն):

Ինչպէս նախորդ հատորի պարագային, «առաջնորդող» ծանօթագրութիւնները զեղչուած են նուազագոյնի - առարկայականութեան յաւելեալ մտահոգութեամբ մը: Ասիկա՝ կը վերաբերի ինչպէս «Տեսութիւն» բաժինի, այնպէս ալ «Գործար-

կում» եւ «Փաստաթուղթեր» բաժիններուն: Այս վերջինները, կը կարծենք, բաւականաչափ կը լուսաբանուին նախորդ մասերով - իրենց կարգին փոխադարձաբար լուսաբանելով անոնց շարք մը նշումները:

Աւարտին՝ ցանկ մը կը խմբէ անհատ-հեղինակները այբ-բենական կարգով, մինչ զոյգ մատենագիտական ցանկեր կու տան լրացուցիչ տեղեկութիւններ ներկայ հատորի եւ նախորդ՝ առաջին հատորի աղբիւրներուն մասին: Ձանց առնուած է բանալի յղացքներու վերլուծական ցանկը, նկատի առած նիւթի սահմանափակութիւնը եւ անոր հետեւանք շարժումի դիւրութիւնը՝ հատորի բաժիններուն եւ հատուածներուն մէջ ու միջեւ:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ա. ՄԱՍ

Յ.Յ.Դ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Կիրո Մանոյեան

Յ.Յ.Դաշնակցութեան նման պետական սահմանները զանցող կազմակերպութեան մը կենսունակութիւնը գլխաւորաբար կախեալ է անոր կազմակերպական հիմնական սկզբունքներէն, որոնցմէ մեկնելով է որ անիկա յաճախ լուծում տուած է իր դիմագրաւած կազմակերպական հարցերուն:

Յ.Յ.Դաշնակցութեան հիմնադրութենէն ետք երկու տարին բաւական եղաւ, որպէսզի իր Առաջին Ընդհանուր Ժողովին (1892) անիկա հրաժարի իր կեդրոնաձիգ գործելաոճէն, եւ կազմակերպական ապակեդրոնացումը որդեգրէ որպէս սկզբունք:

«*Դաշնակցութիւնը՝ անցեալի փորձէն համոզուած է, թէ յեղափոխական գործին մէջ իրաւունքի եւ պահանջի խնդիր չի կրնար ըլլալ, այլ միմիայն բարոյական պարտաւորութեան ու բաւարարութեան խնդիր: Ահա այս հիման վրայ «Դաշնակցութեան» Ընդհանուր Ժողովը ընդունեց կազմակերպութեան մէջ մտցնել ապակեդրոնացման սկզբունքը, որ աւելի կը համապատասխանէ ընկերական, բարոյական յեղափոխական գործին եւ որ անցեալին մէջ կիսով չափ գործադրուեր է»:*

Ապակեդրոնացման սկզբունքով՝ մարմինները իրենց շրջաններու ներքին գործերը կը վարեն *«անկախ, ինքնուրոյն կերպով»*. մարմինները *«կը կապէ, կը միացնէ Ընդհանուր ժողովը»*, որ կը մշակէ Յ.Յ.Դ. Ծրագիրը եւ *«որու վճիռները պարտաւորիչ են ամէնուն համար եւ ինքը միայն կարող է փոփոխութիւն մտցնել Ծրագրին մէջ»*:

Ապակեդրոնացման սկզբունքի որդեգրումով փաստօրէն հիմնական քայլ կ'առնուէր *«Յայ Յեղափոխականների Դաշնակցութիւն»*ը վերածելու *«Յայ Յեղափոխական Դաշնակցութեան»*: Իրարմէ անջատաբար ծնունդ առած եւ միեւնոյն նպատակին համար համախմբուած *«Յայ Յեղափոխականների Դաշնակցութիւն»*ը իր նպատակին ծառայելու համար պէտք է վերածուէր յեղափոխական միաձոյլ կազմակերպութեան մը: Ապակեդրոնացման սկզբունքը եթէ մէկ կողմէ շրջանները կը մղէր *«անկախ, ինքնուրոյն կերպով»* գործելու, միւս կողմէ զանոնք կ'ենթարկէր Ընդհանուր ժողովի մշակած Ծրագրին եւ որոշումներուն: Եւ այս՝ որպէս *«բարոյական պարտաւորութիւն»* ու *բաւարարութիւն»*, եւ ոչ թէ՛ որպէս *«իրաւունքի եւ պահանջի խնդիր»*:

Շրջանային կամ աշխատանքի մը բնագաւառին համար կազմըւած մարմինները իրենց շրջաններուն կամ բնագաւառներուն մէջ *«անկախ, ինքնուրոյն կերպով»* գործելու հնարաւորութիւն ունենալով հանդերձ, բարոյական պարտաւորութիւն ունեցած են խորհրդակցելու այլ մարմիններու հետ, եթէ իրենց առնելիք քայլերէն որեւէ մէկը ներկայացուցած է հաւանականութիւնը՝ անոնց շրջանին վրայ եւս անմիջական հետեւանք-ազդեցութիւն ձգելու:

Յ.Յ.Դաշնակցութեան կազմակերպական ապակեդրոնացման սկզբունքի կիրառումն է, որ հնարաւորութիւն տուած է կազմակերպութեան, շրջաններու ներկայացուցիչներէ բաղկացած Ընդհանուր ժողովով, օրուան հրամայականներուն համաձայն, ճշդել գործունեութեան ընդհանուր ուղեգիծ - ի հարկին՝ մշակել նոր Ծրագիր - եւ նոյն այդ շրջաններու *«բարոյական պարտաւորութեան ու բաւարարութեան»* չափով՝ իրագործել այդ ուղեգծով ճշդուած աշխատանքները: Ապակեդրոնացումի կիրառումը, որպէս շարունակուող, մնայուն համադրում-համարկումի գործընթաց, պահած է Յ.Յ.Դաշնակցութեան կենսունակութիւնը, անոր գործունեութիւնը համապատասխանեցնելով փոխուող պայմաններուն եւ մարտահրաւերներուն:

Առաջին երեսնամեակի իրերայաջորդ Ընդհանուր ժողովները իրենցն է բխած միայն մէկ մարմնի չէ որ յանձնած են կուսակցութեան ամբողջ գործունէութեան ղեկավարութիւնը: Դաշնակցութեան պատմութեան ուսումնասիրողը անոր էջերուն մէջ, զոյգ (երբեմն եւ երեք) Բիւրոներու կողքին, պիտի հանդիպի անուններուն Պատասխանատու Կ. Կոմիտէներու, Դաշնակցութեան Կամբը ներկայացնող Մարմնի, Դ.Յ.Դ. Խորհուրդի կամ Դ.Յ.Դ. Գերագոյն Դատական Ատեանի:

Ապակեդրոնացման այս սկզբունքը, սակայն, որոշ չափով տեղի տուած է կեդրոնացման առջեւ, երբ նոյնիմքն Ընդհանուր ժողովի որոշումով (Յրդի՝ 1919ին), Դ.Յ.Դ. Բիւրոն դարձած է «*կուսակցութեան կենտրոնական գործադիր մարմին*», իսկ աւելի ետք՝ «*գերագոյն գործադիր մարմին*»: Այն աստիճան, որ այդ «գերագոյն մարմնի» մէկ անդամը իր պաշտօնավարութեան ընթացքին, կրցած է գրաւոր յայտարարել, թէ «*պատրանք է “ապակեդրոնացումը”*». *խորքին եւ էութեանը մէջ “ապակեդրոնացում” չկայ*»¹:

Դ.Յ.Դ. 21րդ Ընդհանուր ժողովը (1977-78), կը վերահաստատէ, թէ «*կազմակերպական ապակեդրոնացումը եղած է ցարդ, եւ պէտք է մնայ այսուհետեւ, մեր կուսակցական կառոյցի եւ գործելակերպի հիմնական ձեւը*»: 21րդ Ընդհ. ժողովը միաժամանակ կը հաստատէ, թէ «*մեր կուսակցութեան համար եւ նոյնքան աւանդութիւն դարձած ըմբռնում եւ սկզբունք է սակայն՝ դաշնակցական մարդոց եւ մարմիններու գաղափարական-բարոյական կեդրոնացումը*: (...) Սրբութեան նման՝ պէտք է անաղարտ պահել մեր գաղափարական եւ բարոյական ըմբռնումներու կեդրոնացեալ այդ դրութիւնը, առանց որուն մեր կազմակերպական ապակեդրոնացումը մեզ կրնայ վերածել իրարմէ հետզհետէ հեռացող, իրարմէ հետզհետէ տարբերող շրջաններու եւ մարմիններու կեդրոնախոյս եւ անձանաչելի ամբողջութեան մը»: Յամենայնդէպս, իրերայաջորդ Ընդհանուր ժողովները ուղղակի կամ անուղղակի (Կազմակերպական Կանոններու համապատասխան յօդուածը անփոփոխ պահելով) կը հաստատեն, թէ «*Կուսակցութեան գերագոյն գործադիր մարմինն է Դ.Յ.Դ. Բիւրոն*»: Միաժամանակ, Կազմակերպական կանոններով հետզհետէ կը նուիրագործուի կազմակերպական շրջաններուն իրաւունքը՝ ունենալու իրենց ներքին կանոնագրութիւնները, որոնք կրնան տարբեր ըլլալ շրջանէ շրջան:

Ամեն պարագայի, ապակեդրոնացումը եղած է հաւաքական եւ ոչ՝ անհատական: Խումբերը, ժողովներն ու մարմիններն է որ կազմակերպական ապակեդրոնացեալ դրութեան մէջ, իրենց աշխարհագրական շրջաններու կամ գործի ճշդուած բնագաւառներուն մէջ ինքնուրոյն գործելու հնարաւորութիւն ունին, մինչ անհատները կրնան գործել միայն այդ հաւաքականութեան -խումբ, ժողով, մարմին- մէջ: Անհատը իր ազատ կամքով մաս կը կազմէ կուսակցութեան, եւ միշտ՝ պարտի մաս կազմել իր շրջանի խումբին կամ զայն փոխարինող կազմակերպական միաւորին: (Յ.Յ.Դաշնակցութեան մէջ անհատի մասին՝ աւելի ետք):

*
* *

Հայաստանի Հանրապետութեան մէջ 1989էն սկսեալ իր կազմակերպական վերընձիւղումով, Յ.Յ.Դաշնակցութիւնը այսօր եւս կը գտնուի իր կազմակերպական կառոյցը առկայ պայմաններուն եւ մարտահրաւերներուն համապատասխանեցնելու հրամայակահին առջեւ: Կազմակերպութեան մէջ կիրարկուող ժողովրդավարութիւնը կը հանդիսանայ այն գրաւականը, որ Յ.Յ.Դաշնակցութիւնը այս անգամ եւս պիտի կարենայ դիմագրաւել այդ հրամայականը:

Կեդրոնացեալ թէ ապակեդրոն՝ Յ.Յ.Դաշնակցութեան մէջ կիրարկուող ժողովրդավարութիւնը եւս Դաշնակցութեան կազմակերպական հիմնական սկզբունքներէն մէկն է: Ժողովրդավարութիւն՝ որ միայն քուէարկելու իրաւունքով չի սահմանափակուիր: Յ.Յ.Դաշնակցութեան մէջ, ժողովրդավարութիւնը կ'ենթադրէ նախ եւ առաջ մտածումի եւ խօսքի ազատութիւն: Յ.Յ.Դաշնակցութեան համապատասխան ժողովներուն մէջ, մասնակիցները լրիւ ազատ են -աւելին՝ բարոյապէս պարտաւոր են- իրենց տեսակէտները ազատօրէն արտայայտելու, որպէսզի բազմակարծութեան մթնոլորտի մէջ կատարուած վիճաբանութեան ճամբով կարելի ըլլայ հասնիլ այդ պահուն մեծամասնութեան կարծիքով ամենաճիշդ նկատուած եզրակացութեան: Իսկ եզրակացութիւնը եւ կամ որոշումը կ'որդեգրուին ձայներու պարզ մեծամասնութեամբ, բացի կարգ մը ծանրակշիռ պարագաներէ, երբ ձայներու առնուազն երկու-երրորդ պահանջուած է կամ կը պահանջուի: Արդարեւ, Յ.Յ.Դաշնակցութեան Ընդհանուր ժողովները, տարբեր ժամանակաշրջաններու, որոշած են, որ կարգ մը մարմիններու ընտրութիւնը, ահաբեկումի ու կարգապահական որոշումները, Ծրագրային եւ Կանոնագրային փոփոխութիւնները կատարուին ձայներու առնուազն երկու-երրորդ մեծամասնու-

թեամբ:

ժամանակի ընթացքին զարգացած Յ.Յ.Դ. ներքին ժողովրդավարութիւնը կ'երաշխաւորէ նաեւ, որ զանազան հարցերու մասին փոքրամասնութեան մը կարծիքները եւս տեղ հասնին: Յատկապէս գերադաս ժողովներու ուղարկուած տեսակետներու պարագային, փոքրամասնութիւնները միշտ ալ իրաւունք ունին իրենց տեսակետները որպէս այդպիսին փոխանցելու այդ ժողովներուն:

Դաշնակցութեան կազմակերպական կառոյցը երբեմն պետական կառոյցներու համեմատելով, ոմանք հասած են այն թիւր եզրակացութեան, թէ Դաշնակցութեան ժողովները «օրէնսդիր» եւ «համարառու» են, մինչ մարմինները՝ «գործադիր» եւ «համարատու»: Մէկ բան յստակ է. ժողովները գերադաս են իրենցմէ բխող մարմիններէն: Բացի Ընդհանուր ժողովէն, սակայն, ժողովները միայն «համարառու» չեն, որովհետեւ անոնք նոյնքան համարատու են իրենցմէ գերադաս ժողովներուն եւ մարմիններուն: Իսկ մարմինները միայն համարատու չեն, որովհետեւ անոնք կը հսկեն իրենցմէ ստորադաս ժողովներուն եւ մարմիններուն գործունէութեան: Ժողովներու եւ մարմիններու միջեւ «օրէնսդիր»ի եւ «գործադիր»ի բնութագրումն ալ այդքան կտրուկ չէ, որովհետեւ նոյն այդ ժողովները իրաւասութիւն տուած են իրենցմէ բխած մարմիններուն յաճախ առնելու «օրէնսդիր» նկատուող որոշումներ, եթէ տուեալ հարցի մասին ժողովը ինք որոշում չէ առած եւ կամ՝ տուեալները այնքան մը փոխուած են, որ մարմինը հարկադրուած է նոր որոշում կայացնելու: Ստորադաս մարմիններն ու ժողովներն ալ միշտ ունեցած են եւ ունին հնարաւորութիւնը արտակարգ գերադաս ժողով հրաւիրելու, եթէ կը նկատեն որ իրենցմէ գերադաս մարմնի գործունէութիւնը նախապէս ճշդուած ուղեգծէն շեղում արձանագրած է: Մնայուն կերպով փոխադարձ ազդեցութեան այս դրութիւնն է որ Դաշնակցութեան բոլոր ժողովներն ու որոշումները կը դարձնէ եւ համարատու, եւ՝ համարառու. որովհետեւ, նախնական բանաձեւումով՝ «յեղափոխական գործին մէջ իրաւունքի եւ պահանջի խնդիր չի կրնար ըլլալ, այլ միմիայն *բարոյական պարտաւորութեան ու բաւարարութեան* խնդիր»²:

Մեծամասնութեան կամքով առնուած որոշումները պարտադիր են բոլորին: Դաշնակցութեան կազմակերպական կեանքին մէջ այս եւս հիմնական սկզբունք է, որ Կազմակերպական կանոններով նուիրագործուած է ԺԳ. Ընդհանուր ժողովին (1938) կողմէ ճշդուած երդման բանաձեւով: Իր երդումով իսկ դաշնակցականը յանձնառու կ'ըլլայ «միշտ *հաւատարիմ մնալ Յ.Յ.Դաշնակցութեան Ծրագրին, Կանոնագրին ու որոշումներուն*» (ընդգծումը՝ մեզմէ):

*
* * *

3.3. Դաշնակցութեան անդամակցելու ձեւն ու պայմանները եւս ժամանակի ընթացքին զանազան հոլովոյթներէ անցած եւ բիւրեղացած են: Եթէ սկզբնական շրջանին նոյնիսկ դիպուածով կարելի էր դաշնակցական դառնալ, վերջին հինգ-վեց տասնամեակին՝ դաշնակցական դառնալու մէկ ձեւ կայ, ամենուրեք. դիմում՝ իր բնական շրջանի դաշնակցական մարմնին, այդ շրջանի կազմին պատկանող երկու անդամի գրաւոր երաշխաւորութիւնը՝ թեկնածուի մասին եւ այդ կազմին կարծիքը թեկնածուի մասին. թեկնածուն կ'ընդունուի դիմումագիրը ստացող մարմնին որոշումով: Սակայն, չէ փոխուած էականը. այն՝ թէ ո՛վ դաշնակցական կրնայ ըլլալ: Եիշդ է որ դաշնակցականին «բարոյական տիպարային եութիւն»ը³ եւս հոլովոյթներէ անցած է եւ դաշնակցական բազմաթիւ տիպարներու նկարագրային ամենայատկանշական գիծերու համադրոյթով կազմուած է, սակայն, այդ նկարագրային գիծերը սկիզբէն ի վեր յատկանշական եղած են դաշնակցականներուն մօտ, անկախ անոնց նախասիրած աշխատանքի բնոյթէն՝ մտաւորական, մարտական, քաղաքական, կազմակերպական, քարոզչական թէ այլ: Դաշնակցականի «տիպարային բնորոշումը անգիր է, մասնաւոր բարոյական հասկացողութեանց մարզին մէջ: Չկան դաշնակցականին խառնուածքը, դաշնակցական մարդու նկարագրային գիծերը պայմանաւորող կանոնական տրամադրութիւններ: Ուստի, անխուսափելիօրէն, անոնց բնութագրումը կը զգենու ենթակայական, որոշ չափով նաեւ զգացական բնոյթ: Բայց այս հաստատումը չի կրնար ժխտել դաշնակցականի բարոյական իւրայատուկ տիպարային գոյութիւնը»:⁴ «Դաշնակցականութիւնը, իր զանազան առաքինութիւններով, հաւաքական աւանդն է բոլորին, համապարփակ գումարը բոլորի՝ նկարագրային շեշտուած գծերուն»:⁵

Այդ բարոյական տիպարային եութեան մաս կազմած են ու կը կազմեն գործնական գաղափարապաշտութիւնը, անշահախնդի եւ ամբողջական նուիրումը, ինքնամոռաց զոհաբերութիւնը, վճռականութիւնն ու արիութիւնը, խիզախութիւնն ու մարտունակութիւնը, բարոյական/մտաւորական թէ նիւթական պարկեշտութիւնը, համեստութիւնն ու խոնարհութիւնը, ընկերասիրութիւնը, փոխադարձ գուրգուրանքն ու նուիրուածութիւնը, ինքնաթելադրուած կարգապահութիւնը:⁶

Բարոյական այս գիծերուն զուգահեռ, սակայն, դաշնակցականը նաեւ հաւաքականութեան մէջ գործող կազմակերպական մարդ է:

Դաշնակցութենէն դուրս՝ դաշնակցական կարելի չէ ըլլալ. լաւագոյն պարագային՝ կարելի է Դաշնակցութեան «*օժանդակ անդամ*» եւ կամ ջերմ համակիր ըլլալ: Որովհետեւ, Զ.Յ.Դաշնակցութեան անդամագրուելով է միայն, որ անհատը յանձնառու կ'ըլլայ ընդունելու «*Կուսակցութեան Ծրագիրն ու գործելակերպը, կ'ենթարկուի անոր կանոններուն ու որոշումներուն եւ ամէն ջանք կը թափէ իրականացնելու զանոնք*»:՝ Նաեւ՝ «*Ամէն դաշնակցական պարտաւոր է անդամակցիլ իր բնական վայրի խումբին եւ կատարել Կուսակցութեան կողմէ իր վրայ դրուած նիւթական եւ բարոյական բոլոր պարտականութիւնները*»:՝⁶

Այս յանձնառութիւնն է, որ հիմնաքարը կը հանդիսանայ կազմակերպական կառոյցին: Զ.Յ.Դ. Ծրագրին, Կանոնագրին, եւ որոշումներուն հանդէպ այս յանձնառութեամբ է, որ դաշնակցականը ինքնակամօրէն ոչ միայն կ'ենթարկուի մեծամասնութեան որոշումներուն, այլեւ՝ ամէն ջանք կը թափէ իրականացնելու զանոնք:

Յաւաքական աշխատանքի այս յանձնառութիւնն է, որ իմաստ կու տայ Դաշնակցութեան անդամակցութեան: Յանձնառութիւն՝ որ նաեւ մեկնակէտն է ինքնաթելադրուած կարգապահութեան, որ սակայն միշտ չէ որ կիրարկուած է անհատ դաշնակցականին կողմէ: Այս ինքնաթելադրուած կարգապահութեան անհատական թէ հաւաքական խախտումի *կրկնութեան* առաջըը առնելու համար ալ Դաշնակցութիւնը ունի կարգապահական տնօրինումներ, որոնք ժողովներուն եւ մարմիններու հնարաւորութիւն կու տան բարոյական միջոցներով եւ ընկերական մթնոլորտի մէջ՝ զգաստութեան հրաւիրելու անկարգապահները: Դաշնակցութեան մէջ կարգապահական տնօրինումները՝ պատիժները, տուգանային բնոյթ չունին, այլ բացառապէս՝ բարոյական: Ձեւականօրէն նոյն յանցանքին համար, դաշնակցական արդարամտութիւնը տարբեր պատիժներ կը տնօրինէ երկու դաշնակցականներու. կարգապահական պատիժի կշիռը կախեալ է հակակարգապահական ընթացքի մէջ եղած անդամին կուսակցական փորձառութենէն. որքան փորձառու եղած ըլլայ ան, այնքան աւելի ծանր է անոր սահմանուած պատիժը, որ առաւելագոյնը՝ Դաշնակցութենէն հեռացում կամ արտաքսում կ'ենթադրէ: Դաշնակցութեան մէջ, կարգապահական տնօրինումները յաջորդական-աստիճանային բնոյթ չունին, սակայն անոնք ազդեցութեան իմաստով կը սկսին մեղմէն հասնելով մինչեւ ծանրագոյնը: Անհատներու պարագային, ամենէն մեղմ պատիժը դիտողութիւն-նկատողութիւնն է, ապա՝ յանդիմանութիւնը, ընտրուելու իրաւունքէ զրկումը, քուէի իրաւունքէ զրկումը, կախակայումը շարքերէն, մինչեւ հեռացումն ու արտաքսումը. մարմիններու պարագային՝ լուծումը, իսկ ժողովներու պարագային՝ ցրուումը: Բոլորն ալ՝ բարոյական այն նոյն

հասկացողութեամբ, որ հակակարգապական ընթացքի մէջ եղած երեց դաշնակցական ֆետայիին պատժելու ամենէն ազդու միջոցը զայն ընկերներուն առջեւ զինաթափ ընելը եղած է:

Հաւաքական աշխատանքի դաշնակցական յանձնառութիւնը կ'ենթադրէ նաեւ, թէ անհատ դաշնակցականը՝ մարմնի անդամ թէ շարքային, հաւաքական որոշումներէն դուրս ինքնազուլի նախաձեռնութիւններու չի դիմեր: Յատկապէս մարմնի անդամը՝ առանց յատուկ լիազօրութեան, չի կրնար մարմնի որոշումներէն անկախ կարգադրութիւններ կատարել:

Միւս կողմէ՝ ինքնաթելադրուած կարգապահութիւնը երբեմն սխալ մեկնաբանուած կամ հասկցուած է, պատճառ դառնալով որ դաշնակցական անհատներ -նոյնիսկ մարմիններ- միայն սպասեն գերադաս մարմիններէ կամ ժողովներէ գալիք ցուցմունքներու, այդպիսով մեծագոյն հարուածը հասցնելով կազմակերպական ապակեդրոնացման: Դաշնակցութեան գաղափարական կեդրոնացման ու կազմակերպական ապակեդրոնացման արդիւնաւետութիւնը պայմանաւորուած են **ճշդուած ընդհանուր սկզբունքներու հիման վրայ ճշդուած ընդհանուր նպատակներուն հասնելու՝ տեղական-շրջանային մակարդակի հաւաքական նախաձեռնութեամբ:** Խումբի կամ կոմիտեութեան ժողովներու մասնակիցներէն կախեալ է այդ խումբի կամ կոմիտեութեան սահմաններուն մէջ ինկող աշխատանքի նախաձեռնութիւնը - միշտ ըստ ճշդուած նպատակներու եւ սկզբունքներու-, առանց անպայման սպասելու «վերէն» գալիք որեւէ հրահանգի: Ինքնաթելադրուած կարգապահութեան սխալ ըմբռնումը պարզապէս կ'անդամալուծէ Դաշնակցութեան տուեալ կազմակերպական օղակը:

Դաշնակցութեան կազմակերպական հիմնական գիծերէն է նաեւ յեղափոխականութիւնը, որ նախ եւ առաջ աշխարհահայեացք եւ գործելաոճ է: Դաշնակցական յեղափոխականութեան հիմնական գիծը՝ կացութիւնները բարելաւելու համար յարատեւ կռիւի պատկերացումն է: *«Յառաջդիմութիւնը ծնունդ է պայքարի, եւ կեանքի գոյութիւնը անհասկնալի է առանց պայքարի: (...) Պայքարը արժէք է՝ ինչպէս մեր կեանքը. պայքարը սուրբ է՝ ինչպէս աշխատանքը, պայքարը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մտքի, հոգիի եւ աշխատանքի խտացումը իր գերազանց ուժով»:*⁹

Դաշնակցութեան մարմիններուն թէ ժողովներուն մէջ, մինչեւ եզրակացութեան մը կամ որոշումի մը յանգիլը, ըսինք արդէն, թէ իւրաքանչիւր անհատ ունի ազատօրէն արտայայտուելու հնարաւորու-

թիւնն ու բարոյական պարտաւորութիւնը: Սակայն, որոշումի կայացումէն ետք իւրաքանչիւր դաշնակցական բարոյական պարտաւորութիւնն ունի ամէն ջանք թափելու՝ իրականացնելու այդ որոշումը: Դաշնակցութեան ժողովներու եւ մարմիններու մէջ որոշումներու կայացման այս ազատ եւ ներքին իմաստով բաց ձեւը հարկադրած է, որ Դաշնակցութեան կազմակերպական յատկանիշներէն մէկը ըլլայ նաեւ գաղտնապահութիւնը: Դաշնակցութեան ժողովներն ու մարմիններն են Դաշնակցութեան որոշումներու կայացման միակ վայրերը. այդ ժողովներուն եւ մարմիններուն մէջ է, որ ամենայն անկեղծութեամբ լուսարձակի տակ կ'առնուին կուսակցութեան թերացումները, կ'արժեւորուին անոր իրական հնարաւորութիւնները, եւ կը ճշդուին հետագայ ընելիքները: Այս պատճառով ալ, անհրաժեշտ է ապահովել այդ տուեալներու եւ որոշումներու գաղտնիութիւնը: Ոմանք, յաճախ չարամտութեամբ կամ անգիտութեամբ, Դաշնակցութեան գաղտնապահութիւնը մեկնաբանած են որպէս փաստ՝ Դաշնակցութեան «*դաւադրական*» նկարագրին: Մինչդէռ՝ ներկազմակերպական իմաստով Դաշնակցութեան չափ բաց կազմակերպութիւններ հազուագիւտ են: Դաշնակցութեան ամենաբազմամասն ժողովները առաւելագոյնը հարիւրի շուրջ մասնակիցներ ունեցած են կամ ունին: Այդ ժողովներուն մէջ է որ լայնօրէն կը քննուին բոլոր հարցերը եւ կ'առնուին որոշումները: Դաշնակցութեան ժողովները չեն մնանիր այլ կուսակցութիւններու բազմահարիւր մասնակիցներով յաճախ ձեւական, նոյնիսկ թատերական համաժողովներուն (խօսքը միայն հայկական կուսակցութիւններու մասին է), որոնք կրնան առաւելագոյնը երեք օրուան մէջ նոյնիսկ ամբողջ աշխարհի ճակատագրին վրայ ազդող «որոշումներ» կայացնել. այսպիսի կազմակերպութիւններու պարագային, իրական որոշումները կ'առնուին շատ արելի սեղմ շրջանակներու եւ իսկապէս գաղտնի պայմաններու մէջ:

Դաշնակցութեան որոշումներու գործադրութեան համար «*ամէն ջանք թափելու*» դաշնակցականի յանձնառութիւնը յաճախ հարցականի տակ դրած է անհատին դերը Դաշնակցութեան մէջ: Դաշնակցութեան կարգ մը ժողովներ, նոյնիսկ, քննած են անհատական ապակեդրոնացման կարելիութիւնները եւ կարճ ժամանակի համար ալ՝ փորձարկած: Սակայն, ընդհանուր եւ հաստատուած եզրակացութիւնը այն է, որ Դաշնակցութեան մէջ կայ հաւաքական եւ ոչ թէ անհատական ապակեդրոնացում: Այս իմաստով ալ, անհատին դերը Դաշնակցութեան մէջ արժեւորուած է այնքան՝ որքան ան կըրցած է հաւաքական գործին մէջ իր ներդրումը բերել: Այդպիսով է, որ Դաշնակցութեան պատմութեան մէջ կան բազմաթիւ հերոսներ,

կազմակերպութեան վրայ իրենց դրոշմը ձգած անհատականութիւններ եւ բառին բուն իմաստով առաջնորդներ. չկան սակայն կուսակցապետի իմաստով առանձին ղեկավարներ: «*Դաշնակցութիւնը չէ ունեցած եւ չունի առանձին պարագլուխներ եւ չի հանդուրժեր անոնց*»: ¹⁰ Հայաստանի առաջին Հանրապետութեան երկու տարուան բացառութենէն դուրս Դաշնակցութեան գործունէութեան բնոյթըն ալ՝ ոչ կարիքը ունէր, ոչ ալ հնարաւորութիւն կու տար Դաշնակցութեան մէջ առանձին ղեկավարներու աճին: Սակայն, նոյն այդ պայմաններուն մէջ Դաշնակցութեան գործիչային աշխատանքի դրութիւնը իր մէջ աճեցուցած է հաւաքականութեան մէջ արժեւորուած անհատականութիւններ: Հայաստանի ներկայ Հանրապետութեան գոյութիւնը այս իմաստով նոր մարտահրաւերներու առջեւ դրած է Դաշնակցութիւնը: Դաշնակցութիւնը ենթակայ է Հայաստանի մէջ առկայ եւ զարգացող քաղաքական մշակոյթին, եւ պարտի իր պատասխանները գտնել այդ քաղաքական մշակոյթի դրած պայմաններուն մէջ - միաժամանակ ջանալով ներազդել այդ մշակոյթի զարգացման վրայ:

*

* * *

Դաշնակցութեան կազմակերպական հիմնական յատկանիշներէն մէկն է նաեւ անոր ժողովրդայնութիւնը: Իր ամենէն յեղափոխական-մարտական օրերէն սկսեալ, Դաշնակցութիւնը իր գործունէութեան համար ապաւինած է ժողովուրդի լայն զանգուածներու նեցուկին: Ժողովրդային այդ նեցուկը Դաշնակցութիւնը ապահոված է միշտ ականջալուր մնալով ժողովուրդի ձգտումներուն, այդ ձրգտումները քաղաքական իրագործելի նպատակներու վերածելով եւ այդ նպատակներուն համար յեղափոխական թէ խաղաղ միջոցներ օգտագործելով: Միաժամանակ Դաշնակցութիւնը զբաղած է նաեւ ժողովուրդի քաղաքացիական դաստիարակութեամբ, Երկրին մէջ հայ կրթական հաստատութիւններու վրայ իր անուղակի ազդեցութեամբ: Այսպէս էր սկզբնական շրջանին, երբ Երկրին մէջ Դաշնակցութիւնը կը ջանար ժողովուրդը կազմակերպել՝ զէնքով պաշտպանելու իր ամենատարրական իրաւունքները: Այդպէս էր նաեւ երբ Դաշնակցութիւնը կը կազմակերպէր գլխաւորաբար Անդրկովկասի հայ աշխատաւորութիւնը՝ 20րդ դարու առաջին տասնամեակէն ըսկըսեալ եւ Հայաստանի անկախ Հանրապետութեան օրերուն, այս վերջինի ընթացքին՝ կազմակերպելով նաեւ հայ գիւղացիութիւնը: Այդպէս էր, երբ Դաշնակցութիւնը գործօն կերպով կը մասնակցէր Ռուսահայ Ազգային Համագումարի աշխատանքներուն, 1917ին, եւ պատգամաւորներու իր մեծամասնութեամբ կը հակակշռէր այդ ժողովը եւ անկէ բխած Հայոց Ազգային Խորհուրդը, որ հետագային

պիտի հռչակեր Հայաստանի անկախութիւնը:

Իսկ Սփիւռքի մէջ, Դաշնակցութիւնը իր ժողովրդային խարիսխը յառաջացուց եւ պահեց իր գաղափարակից-ուղեկից կազմակերպութիւններու միջոցաւ, որոնք հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութեան, կրթական, մշակութային, մարզական թէ այլ կարիքներուն բաւարարելու աշխատանք տարին ու կը տանին, ու ամբողջ սերունդներ դաստիարակեցին ու կազմակերպեցին:

«Մենք կը մտածենք, որ (...) ականջ կը կախենք զանգուածի բանաւոր թելադրանքին, կը ջանանք հասկնալ զայն եւ մեր ծրագիրը յարմարցնել ժողովուրդին եւ ոչ թէ ժողովուրդը յարմարցնել մեր ծրագրին: Մենք հագուստը կը յարմարցնենք մարմնին եւ ոչ թէ մարմինը կը յարմարցնենք հագուստին: Եւ ասոր մէջն է մեր ժողովրդականութեան գաղտնիքը եւ կուսակցութեան ուժը»:¹¹

Դաշնակցութեան կազմակերպական մնայուն վերանորոգման իմաստով կարելորդ դեր խաղացած են նաեւ Հ.Յ.Դ. Ուսանողական ու Աշակերտական, եւ ապա՝ Պատանեկան եւ Երիտասարդական միութիւնները:

Դաշնակցութիւնը իր ժողովրդային խարիսխը ամրացուցած է նաեւ ժողովուրդին ներկայացուցած իր հաշուետուութիւններով: Դաշնակցութեան Ընդհանուր ժողովներու որոշումներէն քաղուածքներ յաճախ հրատարակուած են ժողովրդային խաւերը Դաշնակցութեան գործունէութեան հաղորդ պահելու համար: Դաշնակցութեան գաղտնապահութիւնը չէ նշանակած ժողովուրդէն ծածուկ պահել այն աշխատանքները, որոնց իրագործումը նախ եւ առաջ ժողովուրդի աջակցութիւն կ'ենթադրէ:

Ժողովուրդին հետ մնայուն հաղորդակցութեան անհրաժեշտութեան գիտակցութիւնն է, որ մղած է Դաշնակցութիւնը առաջին օրէն ունենալու իր մամուլը, որ ընդհանրապէս ունեցած է ժողովրդական բաց նկարագիր: Այս մարզը արժանի է յատուկ անդրադարձի: Հոս նշենք միայն, որ պայմաններու զարգացմամբ, Դաշնակցութիւնը հաղորդակցութեան այլ միջոցներ հետատեսիլ եւ ձայնասփիւռ եւս կը գործածէ իր առօրեայ կապը ժողովուրդին հետ պահելու համար:

*

* * *

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կենսունակ երկարակեցութիւնը վերագրելի է գլխաւորաբար անոր կազմակերպութեան: Որպէս նախ եւ առաջ գործի կազմակերպութիւն, Դաշնակցութիւնը շատ աւելի -թէեւ միշտ կարելի է առարկել- ոչ բաւարար- կարելորու-

թին տուած է իր կազմակերպական սկզբունքներու բիրեղացման, քան՝ ծրագրային բանաձեւումներուն: Աւելին՝ յատկապէս Դաշնակցութեան պարագային՝ «Կազմակերպութեան ձեւը նոյնքան կարեւոր է, որքան կազմակերպութեան նպատակը: Կազմակերպական ձեւը ի վերջոյ կը նախորդէ նաեւ նպատակները»:¹²

Կ. Մ.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Վահան Նաւասարդեան, «Գաղափարների ոգին - Գաշնակցութեան «ապակեկորոնացում»ի առիթով», 1951, ԿԿ. «Յուսարեր», Գահիրէ, էջ 147:
2. Հ.Յ.Գ. Ա. Ընդհանուր ժողով, 1892:
- 3 Հրաչ Տասնապետեան, «Ո՞վ է դաշնակցականը», 1975, Պէյրութ, էջ 9:
4. Անդ, էջ 41-42:
5. Անդ, էջ 57:
6. Աւելի մանրամասն՝ տեսնել ընկ. Հ. Տասնապետեանի վերոյիշեալ գործը:
7. Հ.Յ.Գ. Կազմակերպական կանոններ, 1992, յօդուած 1, էջ 7: Մեկնաբանական վերլուծումի մը համար՝ տեսնել Ն. Աղբալեանի «Մտածումներ Հ.Յ. Գաշնակցութեան մասին» գործը, ինչպէս եւ «Մեր Կանոնագիրը», ա. եւ բ. (հրատ. յաջորդաբար՝ Փարիզ, 1930 եւ Պէյրութ, 1937):
8. Անդ, յօդուած 4, էջ 8:
9. Ռուբէն, «Հ.Յ.Գ. Կազմակերպութիւնը», 1991, Երեւան (առաջին հրատարակութիւնը՝ 1935ին), էջ 3:
10. Անդ, էջ 13:
11. Անդ, էջ 14:
- 12 Անդ, էջ 21:

Բ. ՄԱՍ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՔԱՐՈՋՉՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՍՈՒԼ

Յարութիւն Քիւրքճեան

Ինքնուրոյն կազմակերպական սկզբունքներ ու կառոյց մը՝ անպայմանօրէն պիտի ծնէին ուրոյն պատկերացում եւ գործարկում - քարոզչութեան եւ մամուլի գետիմներու վրայ: Ու, արդարեւ, խորապէս իւրայատուկ է եղած դաշնակցական քարոզչութիւնը իր առաջին իսկ քայլերէն, ինչպէս իւրայատուկ է եղած, եւ է այսօր, դաշնակցական մամուլը՝ իբր պատկերացում թէ իբր գործարկում:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՔԱՐՈՋՉՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է քարոզչութիւնը. ինչպիսի՞ գործածութիւններ ունի կամ կրնայ ունենալ: Ինչպէ՞ս գործարկուած է Դաշնակցութեան մամուլին եւ հրատարակութիւններուն մէջ, առհասարակ անոր մշակութային ճիգին մէջ:

Մեկնելով ընդհանուր տարազէ մը, պարզ է թէ քարոզչութիւնը

գիտակցութեան, զգայուն անդրադարձի զարթեցման ճիգ է: Գիտակցութիւնն ու զարթեցման ճիգ, կատարուած՝ գաղափարներու արծարծումով (ենթակայական ոլորտի միջոցներով - յղացքներ, տրամաբանական վերլուծում, զգացական-բարոյական, մարդկային արժեւատարակներ) ու արժեչափեր), սակայն ներգործօն ազդակի վերածուելու ատակութեամբ, տուեալ իրականութիւնը ազդու ներգործութեամբ փոխելու, զայն ընդհանրապէս վարելու խոստումով:

ՔԱՐՈՉՉՈՒԹԻՒՆ` ԸՍՏ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՒ...

Քարոզչութիւնը, ուրեմն, կը կայացնէ կենսական վառելանիւթերէն մէկը՝ իրադրութեան մը ճանաչումէն մեկնող, ապա այդ իրադրութեան յանձանձումին, յաճախ փոխակերպումին միտող ենթակայական ոլորտին, այսինքն մարդկային քաղաքական գործունէութեան: Այսքան հանգուցային դեր՝ մարդկային հաւաքական հոլովոյթին, Սարդու պատմութեան *տիպէթիք* ընթացքի խաչմերուկին,- լրջօրէն, ծանրօրէն պիտի դնէր հարցը քարոզչութեան արժէքին, արժեչափերուն: Ըստ ի՞նչ չափանիշներու կ'արժեւորուի ան՝ մարդերը շարժման դնելու ձգտող այս քարիւղը, գոնէ՝ մեքենան ճամբայ հանող կայծը: Եթէ հետեւելիք գործունէութիւնը, այս կամ այն չափով, կախուած է մեկնակէտէն, զարթեցուած -կամ արուեստականօրէն ներմուծուած- դրդումներու բնոյթէն, կը հասկցուի, որ քարոզչութեան արժէքը, որակը՝ ծանրակշիռ հարցադրումներու դուռ բանայ...:

Աչք մը Դաշնակցութեան աշխատանքային «ճամբարին» վրայ - հայրենի Լեռնաշխարհէն մինչեւ Անդրկովկասի, Օսմանեան կայսրութեան յետին անկիւնները եւ դեռ մինչեւ Պարսկաստան, ու Եւրոպա եւ հեռաւոր Ամերիկա, ներիմաց ակնարկով, եւ ոչ-չարական տրամադրութիւններով՝ աչք մը- ու պիտի տեսնուի արդէն, թէ քարոզչութիւն եզրը, պատշաճելու համար այդ ճամբարի անսահմանափակ տարածքին կիրարկուած ու դեռ կիրարկուող գաղափարական արծարծումին, պարտի առնուիլ իր լայնագոյն, իր խորագոյն իմաստով:

Այս հաստատումը չի մեկնիր «եզակիութեան», «աննմանութեան» նախապաշարումներէ: Քարոզչական իր գործին առանձնաշատկութիւնները, նաեւ իր կիրարկած քարոզչութեան յղացքին՝ յատուկ նկարագիրը՝ Դաշնակցութիւնը կը պարտի պատմա-քաղաքական շատ ուրոյն պայմաններու: Այսպէս, մեր կազմակերպութեան համար քարոզչութիւնը երբեւէ չէ զգեցած այնպիսի բնոյթ, որ

ծախակողմեան քաղաքական գործարկման մէջ սովոր են բնորոշել «ագիտացիա» -շատ դիպուկ, բայց նաեւ վերջին հաշուով ոչ-դրական եւ երբեք լուրջ- եզրով: «Ագիտացիա» կամ «ագիտարոպ» բնորոշումներուն տակ ծուարած *փրաթիքները*, գործելաձեւերը, որքան ալ իրենց յատուկ նպատակներուն ձգտող միջոցներ ըլլան, անմիջական ու սահմանափակ այնպիսի խեղճութիւն մը կը թելադրեն, այնքան զուրկ են մարդկային ամբողջ ատաղձը գրկող ու մշակող դաստիարակութենէն, որ բնականաբար ոչ մէկ հող պիտի գտնին Դաշնակցութեան ճամբարին մէջ՝ իբր գործելաձեւ: Գամբար՝ ուր մնայուն ճգնաժամի, մնայուն ահագանգի կացութիւն է տիրած գրեթէ միշտ: Ուր խորքով, ամբողջ խորքով իրագործուած քաղաքական ու մարդկային-բարոյական դաստիարակութիւնը միայն կրցած է «քննութիւն բռնել» եւ յաջողիլ: Ուր -նոյնիսկ շարքերէն դուրս՝ յաշս համակիր զանգուածներու- խօսքէն, «քարոզ»էն առաջ ու վեր՝ կենդանի օրինակները կատարած են յաճախ կենդանի քարոզչութիւնը: Այնքան որ երբ պատահած է դաշնակցական անհատին թերանալ իր վարք ու վարմունքին մէջ, կենդանի օրինակի քարոզչութեան վարժուած Յամակիրը խստապահանջօրէն մղած է զինք վերագրտնելու իր կազմակերպութեան մակարդակը, չբաւարարուելու՝ բանաւոր քարոզչութեան յարաբերական մակերեսայնութեամբ:

... ԸՆԴՄԷՋ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒ ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ՈՒՈՐՏՆԵՐՈՒ

Այս վերջին փաստերը՝ շեշտելու համար, դաշնակցական քաղաքական գործարկումին մէջ, կենդանի օրինակին եւ գործով քարոզչութեան կենսական տեղը՝ բանաւոր քարոզչութեան կողքին: Անոր *կողքին*, սակայն, ոչ անոր *տեղը*՝ իբր փոխարինող: Որովհետեւ պարզ է միւս կողմէ, թէ լայնահուն գործունեութեան դաշտի ու վաստակի տէր կազմակերպութիւն մը ամէն պարագայի պիտի չհանտեսէր լուրջ, կազմակերպ քարոզչութեան, բանաւոր քարոզչութեան դերը եւս: Թէկուզ եւ աւելի ազգային Դատի քարոզչութիւնը ընդհանրապէս նպատակակէտ դարձուցած քան յատուկ կերպով իր սեփական գաղափարները -իբր մասնաւոր կազմակերպութիւն-, թէկուզ եւ յաճախ ժողովուրդի ու իր շարքերու դաստիարակութեան ալ նոյնացուցած ազգային-քաղաքական դաստիարակութեան հետ ընդհանրապէս (հաւանաբար չափով մը անճիշդ այս պատկերացումէն տուժելով իսկ իբր մասնաւոր կազմակերպութիւն)-, ամէն պարագայի, Դաշնակցութիւնը բանաւոր քարոզչութեան գործը վարած է իւրայատուկ ոճ ու բովանդակութիւն տալով անոր՝ եւ արտաքին,

ել ներքին ոլորտներու պարագային: Ու կ'արժէ ամբողջացնել յընդացքներու այս վերլուծումը՝ քանի մը լրացուցիչ վերլուծական մատնանշումներով:

Քարոզչութիւն մը, պիտի ըսենք անմիջապէս, իբր «արժէքաւոր», այսինքն ճշմարտացի, կ'երաշխաւորուի, նախ եւ առաջ, ներկայացուած տուեալ իրականութեան իր համապատասխանութեամբ: Տընեալ քարոզչութեան մը առաջադրած վերաբերմունքը -այդ իրականութեան հանդէպ- կը հիմնուի՞ կացութեան ճշմարտացի պատկերացումի մը վրայ. այդ պատկերացման մէջ չկա՞ն վիպապաշտական ինքնախաբէութեան, պատրանքի տարրեր. չկա՞ն գաղափարախօսական ներյայտ կամ բացայայտ կեղծիքի, գեղծումի ձեռնարկութիւններ: Օրինակ, այդ պատկերացումը չի՞ չափազանցեր՝ ցեղային բնա-պատմական տարբերութիւնները -պարզ հաստատելի իրողութիւններ- անոնց վրայ ցեղային գերակայութեան առասպելներ լաստակերտելու համար, ցեղապաշտական խաչակրութիւններ շղթայազերծելու համար: Այլ պարագայի՝ այդպիսի ուրիշ պատկերացում մը, անհատներու գոյութեան, մեկնակետային նմանութեան փաստէն, ու ապա հաւասարութեան նոյնիսկ գովելի հրամայականէն ելլելով, չի՞ յանգիր «ազատ» շահագործումի սկզբունքին, «ազատ» նախաձեռնութեան ու առիթներու տեսական հաւասարութեան մը քողին տակ պահուռտած:

Չ'արժեր յամենալ ընկերա-մշակութային այս այնքան ընթացիկ երեւոյթին վրայ, որ գաղափարախօսական քողարկումի երեւոյթն է, աւելի քան հարիւրամեակէ մը ի վեր երեւան հանուած՝ ընկերվարական մտածողութեան ճիգին շնորհիւ: Կարելի է -ու անհրաժեշտ- միայն աւելցնել, որ ո՛չ մէկ հոսանք, ընկերա-քաղաքական մտածողութեան ու գործարկման հոսանքներէն, յետ-մարքսեան քննականութեան մեր աշխարհին մէջ, կրնայ արդարօրէն յաւակնիլ իր գաղափարախօսական բանաձեւումները նոյն այդ քննականութեան ք-ճառագայթային թափանցումէն հեռու պահելու իրաւունքը պահանջել: Ու ասիկա՝ սկսած մարքսադաւաններէն...:

Քարոզչութեան ճշմարտացիութեան երկրորդ չափանիշ կարելի է նկատել անոր համապատասխանութիւնը առարկայական կարելիութիւններու եւ ձգտումներու: Ապա նաեւ՝ անոր արդիւնաւետութիւնը, *յարաբերաբար երկար տեւողութեան մը վրայ*: Այս չափանիշը, որուն կիրարկումը եւ հետեւող փաստարկումը կրնան հանդիպիլ դժուարութիւններու եւ խութերու, կախեալ է պատմամեկնաբանական մեթոտներէ, կը ներկայացնէ *ա փոսթերիորի* հիմ-

նաւորումներու յատուկ անպատեհութիւններ, ու կրնայ մեզ հոս չըզբաղեցնել երկար: Վերը ուրուագծուած օրինակները -ցեղապատական թէ դրամատիրական խեղաթիւրումներն ու առասպելացումները արժեչափի զարմող- կրնան փոխ վերցուիլ եւ քննուիլ ըստ այս վերջին՝ առարկայական ձգտումի կամ արդիւնաւետութեան չափանիշին եւս:

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ. ԶԱՐԻԻՐԱՄԵԱՅ ԸՆԹԱՑՔԻ ՄԸ ԱՎՆԹԱՐԹԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԸ

Բնական է, ինչպէս այլ քաղաքական կազմակերպութիւններու, նաեւ Դ.Յ.Դաշնակցութեան պարագային՝ մամուլը պիտի կայացնէ քարոզչական անփոխարինելի գէնք մը: Նկատի առնելով հայկական իրականութեան մասնայատուկ պայմանները, պիտի կըրնանք նոյնիսկ ըսել, որ պարբերական մամուլը չէր կրնար չդառնալ առաջնահերթ ու առանձնաշնորհեալ գործիքը այդ քարոզչութեան:

Ճամբայ ելած 1891ին՝ կեդրոնական օրգան «*Դրօշակ*»ի առաջին համարով՝ այդ մամուլը այսօր կը շարունակէ գրաւել կարեւոր տեղ հայ մամուլի ներկային մէջ: Եւ դեռ՝ իրնով ճամբայ ելած, իր -երբեմն մենաւոր- ճիգերով կրուած ու կռանուած, իր շունչին տակ բիւրեղացած շատ գաղափարներ այսօր անվիճելի ու անբաժան մասն են ազգային գաղափարական արժէքներու ժառանգութեան, ամէնօրեայ դրսեւորումով՝ ոչ միայն իրենց ուղեկից մամուլին, այլեւ հայ մամուլի բոլոր լուրջ ներկայացուցիչներուն ու հոսանքներուն համար, ներառեալ Դաշնակցութեան հակառակորդները:

Աւելի քան հարիւրամեայ այս մամուլը իր մեկնակէտին ճանջցած է երկու տարագ. արտասահմանեան թոյլատու պայմաններուն մէջ տեղադրած՝ իր տարածուն օրգաններու ենթաշէնքը, օսմանեան թէ ցարական ճնշումի ենթակայ բուն Զայաստանը, դուրսէն ստացուած վերոնշեալներու կողքին, անիկա կը հրատարակէր ընդյատակեայ, սահմանափակ տարածումով օրգաններ: Յաջորդաբար 1905-6ին եւ 1908ին, Արեւելեան ու Արեւմտեան մեր շրջաններուն համար պիտի փոխուի այդ իրադրութիւնը կարեւոր օրգաններու ստեղծումով երկրամերձ շրջաններու, նաեւ բուն իսկ երկրի մէջ: Այս շարժումը պիտի կատեցուի սակայն, մեղմօրէն՝ Արեւելեան հատուածին համար, աւելի բիրտ՝ Արեւմտեան հատուածին՝ 1909ին ու 1914ին՝ յաջորդաբար: 1914էն սկսեալ, եւ մանաւանդ 1917-18էն ետք, նոյն կարգով պիտի վերակենդանանան երկու գօտիները, մինչ արտասահմանեան հեռաւոր օրգանները առաւել կամ նուազ կայուն ընթացք մը կը պահեն արդէն: Աստիճանաբար կեդրոնացած՝ մէկ կողմէ

Պոլիս-Իզմիր գօտիին, բայց մանաւանդ՝ Հայաստանի Հանրապետութեան հողամասին ու անմիջական շրջապատին մէջ, 1921էն սկսեալ՝ յանկարծական շրջումով դաշնակցական այդ մանուլը պիտի տեղադրուի, գրեթէ ամբողջութեամբ, արտասահմանեան հողի վրայ: Ի վերջոյ, 1990ականները պիտի գան՝ հայրենադարձի, արագ ու շքեղ ծաղկումի եւ ... կասեցման իրերայաջորդ ու անակընկալ փուլերով: Բայց այս ակնարկը շատ համառօտ է, եւ դաշնակցական մանուլի պատմութիւնը շատ հարուստ (նաեւ, ու յատկապէս, նորագոյն փուլերը դեռ շատ թարմ) որեւէ յամեցում ու մանրամասնում արտօնելու համար: Առկախե՛նք պատմագրական այս նշումները, եւ փորձե՛նք յստակօրէն բանաձեւել դաշնակցական մանուլի նկարագիրը, ընդհանուր յատկանիշները:

ՀԻՄՆՈՒԱԾ ԶԱՐՈՉՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԻ ՍԸ ՎՐԱՅ...

Մեկնելով Դաշնակցութեան պատմութեան ու գործելաձեւի փաստերէն, նշեցինք, որ քարոզչութեան ընդհանուր պատկերացումը Դաշնակցութեան մօտ միշտ ալ հեռու է մնացած մակերեսային «*ազիտացիա*»ներու փորձութենէն: Կեանքի ու պայքարի ահաւոր պայմանները «*արնոտ երկիր, սուգ ու շիւան*», իրենց կիրարկած բնական գտումի չափանիշներով իսկ, անկարելի պիտի դարձնէին նման բան: Ռահվիրաներու կիրարկած քարոզչութիւնը, կենդանի օրինակի ինքնաբեր օրինակի կողքին, *մարդկային արժանաւորութեան ու ազգային ինքնուրոյն գոյութեան իրաւունքի գիտակցութեան զարթեցումը* միայն կրնար ըլլալ, ու այդպէս ալ եղաւ առիասարակ:

Պիտի ըսուի՝ քարոզչական այսքան ընդհանրական բնաբաններ չեն բաւեր քաղաքական կուսակցութիւն մը սահմանելու, բնորոշելու, գատորոշելու: Գիշդ է: Սակայն Դաշնակցութեան տեսաբան-քարոզիչները, առանց անտեսելու ռազմավարական-գաղափարաբանական յատուկ մշակումներու ոլորտները, գիտցան զանոնք դնել երկրորդ գծի վրայ, յարմարագոյն պահուն անհրաժեշտ շէտը տալու համար անոնց- եւ լծուիլ (տեսակ մը կուսակցական Եսի առկախումով) ազգային-քաղաքական գիտակցութեան արծարծման լեռնակուտակ, սիզիֆեան աշխատանքին: Համաժողովրդական շարժման հիմերը նետելով, Դաշնակցութիւնը յամենայն դէպս հաւատարիմ կը մնար իր հիմնադիրներու եւ առաջին սերունդի կեանքի, մարդու եւ պատմութեան պատկերացումին- խորապէս դեմոկրատական, երբեք աղանդաւոր: Այսպիսի կշռուած ու լայնահուն գիծ, անշուշտ, կրնար հանդիպիլ *կրկնակ* անհասկացողութեան: Զա-

նազան փանջունիներ պիտի մեղադրեին դաշնակցական քարոզիչը -գործիչ թե մամուլ- իր «անտոկմայնութեան» համար, «իդէոլոգիայ»է զուրկ եւ «օպորտունիստ»ական կեցուածքներուն համար: Միւս կողմէ, իսկական պատեհապաշտներ, զանազան... Օտեաններ, հակադիր մեղադրանքով Դաշնակցութեան համար շահ պիտի նկատեին իր գաղափարաբանական անուր, կուռ, զուսպ ենթահողը, եւ այս անգամ փանջունիութեամբ ամբաստանեին Գեորգներու եւ Զաւարեաններու կուսակցութիւնը. ի դէպ՝ առհասարակ գործելով նաեւ ծանր մեղքը գաղափարականութիւնը ամբաստանելու... գաղափարականութեան խեղճուկրակ ծաղրանկարին ընդմէջէն:

Դաշնակցական մամուլի ու քարոզչութեան ներուճակ են եղած ե՛ւ իրապաշտութիւնը (երբեք սակայն պատեհապաշտական համակերպում), ե՛ւ կամապաշտութիւնը (երբեք սակայն ուտոպիապաշտ ռոմանթիզմ...): Հայութեան առարկայական իրականութիւնը այնքա՛ն ծանր էր որ չէր կրնար ծնիլ ու ապրեցնել այդ իրականութեան անհաղորդ կազմակերպութիւն: Նոյն այդ անհանդուրժելիութիւնն է սակայն աղբիւրը նշեալ կամապաշտ մերժումին, ընդվզումի վճիռին: Առարկայական ու ենթակայական տուեալներու նժարային հաւասարութեան այս փաստը, ի դէպ, կը վերագտնուի Դաշնակցութեան ինչպէս գաղափարաբանութեան՝ այնպէս ալ քարոզչութեան այլ մակարդակներուն. ընկերա-տնտեսական տեսիլը թանձրացական շրջանակով իրացնել անպայման, ազգային անուր եւ իրական ենթահողը պարզելէ անոր լաստակերտումին, ապա այդ ենթահողի անփոխարինելի ձեւաւորման՝ լեզու-մշակոյթ իրողութեան արժեւորումն ալ կատարել առաջին իսկ յոպէէն. զանցել, սկիզբէն նուաճուած հասունութեան մը շնորհիւ, զանազան կեղծ հակադրութիւններու ծանծաղուտը՝ ընդմէջ մշակութայինի ու քաղաքականի, ընդմէջ ազգայինի եւ ընկերա-տնտեսա-դասակարգայինի...: Ահա՛ ի՛նչ հիմունքներու վրայ կը տեսնենք կերտուած, առաջին իսկ օրէն, դաշնակցական մամուլի շէնքը:

ԵԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻՆ

Մեկնելով վերի նշումներէն, հետեւեալ տարագներով, մայր գիծերով կրնանք խտացնել դաշնակցական մամուլի բովանդակութիւնը.-

ա) Հայութեան «ցաւ»ը գրել. այդ «ցաւ»ը բերել նախ՝ Հայու իսկ գիտակցութեան, զինք արթնցնել կեղեքումի կամ հանգստաւէ-

տութեան (ըստ աշխարհագրական շրջանի) թմբիրեն: Ձայն բերել, ապա, աշխարհի յանցաւոր-մեղսակից խղճին առջել: Ստեղծել հաւաքական գիտակցութիւն ու կեցուածք՝ Ներսը եւ Դուրսը:

Դաշնակցական մամուլի բովանդակութեան կարելոր մէկ մասը այս մտահոգութեան համապատասխան է եղած գրեթէ միշտ, քանի հայ Կեանքը փաստօրէն չէ ճանչցած հանգիստ փուլեր: Մնայուն են եղած բրտութիւնն ու բռնութիւնը՝ հոս կամ հոն, ընդհանուր կամ մասնակի: Կը բաւէ ասոր համար աչքէ անցնել «Դրօշակ»ի առաջին 16-17 տարիներու բովանդակութիւնը: Նոյնն է պարագան այլ օրգաններու, յատկապէս ֆրանսալեզու «Փրօ Արմենիա»ի եւ Երկրի թէ անմիջական շրջապատի թերթերուն - մանաւանդ՝ մինչեւ 1908:

Դաշնակցական մամուլի առաքելութեան այս երեսը, չենք մոռնար, կը բովանդակէ երկու եական շեշտադրումներ, յաճախ սերտօրէն շաղկապուած իրարու, երբեմն առաւել ուժգնութեամբ՝ մէկուն կամ միւսին վրայ. զոյգ այդ շեշտադրումները, նաեւ ըստ էութեան անբաժան իրարմէ, կը վերաբերին յաջորդաբար ազգային խտրականութեան ու հալածանքին, եւ կենցաղային, ընկերա-տնտեսական ճնշումին: Դասկնալի է, որ ասոնցմէ առաջինը տիրական եղած ըլլայ, երկրորդը՝ աւելի կամ նուազ ներյայտ, քիչ տեսանելի, երբեմն միայն ուրոյնօրէն երեւցող: Սակայն, նոյնիսկ բրտութեան, ազգային հալածանքի թեմաներու արծարծումին մէջ, դաշնակցական մամուլը գիտցեր է խուսափիլ ազգամուլ, այլամերժ շեշտերէ: Աւելին. անիկա, դաշնակցական գործին զուգահեռ, ու Կազմակերպութեան Ծրագրին ինքնուրոյնօրէն ընկերվար ներշնչումին հնազանդ, երբեք ձեռնթափ չէ եղեր ազգամիջեան կապերու, գործակցութիւններու ստեղծման ջանքերէն - նոյնիսկ մեր աշխարհագրա-քաղաքական անասելիօրէն ապերախտ իրադրոյթին մէջ:

բ) Առաջին այս թեման դաշնակցական մամուլին մէջ կրնար տեղ ունենալ միմիայն իբր բնական ու մնայուն լրացուցիչը՝ բողոքի, ընդվըզումի թեմային: Այս փաստի հանրայայտութիւնն իսկ աւելորդ կը դարձնէ ամէն ծանրացում անոր վրայ: Դարստահարութեան, ճնշումի համահայկական գիտակցութիւն ստեղծելը դաշնակցական մամուլին մէջ անշուշտ անջատաբար պիտի չներկայացուէր իր կենսական նպատակադրումէն - մշակումը ընդվզումի, մերժումի կամապաշտ կեցուածքի: Կեցուածք՝ որ կը դառնայ քաղաքական գիտակցութիւն, ազգային արժանաւոր գոյածելի մը, ապա՝ ազգային անկախութեան հրամայականի ճանաչում, իւրացում (կեանքի կշռոյթով *աստիճանական* բիւրեղացման այս ընթացքը, ազ-

գային անկախութեան իտէալի *աստիճանական* նուաճումն մը ըլլալու փաստը՝ ժխտական փաստ կրնայ նկատուիլ միայն իմաստակներու կողմէ:) Ուրեմն դաշնակցական մամուլը միանգամայն եղած է նաեւ քաղաքական գիտակցութեան ծնուցիչ, ապա քաղաքական բուռն գործունէութեան մը հայելին:

Յոս կը տեղադրուի դաշնակցական մամուլի լրացուցիչ մէկ ինքնուրոյնութիւնը, որ անկասկած անոր առաքելութեան էութիւնն իսկ է - յեղափոխական-քաղաքական գիտակցութեան ստեղծման ճիգէն անդին, այդ գիտակցութեան բիրտեղացման առանցքը կազմող, անոր հոլովոյթը իմաստաւորող: Արդարեւ, հարկ է չմոռնալ, որ հայ յեղափոխական այս կուսակցութիւնը միանգամայն *Ղաշնակցութիւն* մըն է: Այսինքն, յատկապէս իր մեկնակէտին, բայց եւ աւելի ետք, հայ կեանքի իրերամերձ, բայց եւ իրարմէ բաւական տարբերող ուժերու համախմբումն մը: Եւ որոնք միաբերող բնորոշ գլխաւոր գիծը, կազմակերպական գետնին վրայ, *յանձնառութիւնն է ենթարկուելու, մասնակցելու՝ գաղափարներու եւ գործարկման տեսական համադրութեան ընթացքի մը*: Բարոյական յանձնառութիւն՝ որ ուղղակի կը կրկնապատկէ պայքարին անհրաժեշտ զոհաբերութեան ոգին, զայն հարստացնելով լրջութեան, կարգապահութեան հրամայականով մը՝ ինքնաթելադիր, նրբահիւս, այլ խիստ: Եւ որ իր կարգին արդիւնաւետօրէն կը հակակշռէ կազմակերպական ապակեդրոնացման հրամայականը, պահանջուած՝ աշխարհագրա-քաղաքական ցրուածութենէն անդին ու աւելի՝ իբր ծնուցիչ նախածեռնութեան ոգիի եւ պատասխանատուութեան:

Եւ եթէ դաշնակցական Գործը եղած է գաղափարներու եւ կամքերու այդ համադրութեան աշխատանոցը, քուրան,- դաշնակցական մամուլը, իր կարգին, բնականօրէն պիտի հանդիսանար մնայուն այդ բիրտեղացման, դաշնակցականացման պատատռը, բեմը. համադրութեան յանձնառութեան եւ գործընթացին ամէնօրեայ ժամանակագրութիւնն ու մնայուն վկայութիւնը, կոթողը:

գ) Կազմակերպական-գաղափարական բիրտեղացման այս կամեցողութիւնն ու ընթացքը, յաճախ ներյայտ՝ դաշնակցական մամուլին մէջ (այնքան յաճախակի են եղած ճգնաժամային պահերը մեր նորագոյն պատմութեան մէջ, նախորդ դարավերջէն սկսած...),- պարբերաբար անոր էջերէն դրսեւորուելը են նաեւ իբր ուղղակի արտայայտութիւն սեփական գաղափարաբանութեան պատմա-փիլիսոփայական համակարգի: Ճիշդ է, դաշնակցական մամուլը երբեք չէ շնորհած ինքնիրեն «պերճանքը» ամբողջապէս տեսաբանական

օրկանի մը. եւ ընկերվարական տեսիլի մշակումը միշտ ալ յետադրուեր է ազգային ինքնորոշման պայքարի հրամայականին: Գործածելով բառամթերքը հիմնադիրներու լուսաւոր մէկ վերլուծումին («*Այբ եւ Բեն*», «*Դրօշակ*», 1893-94), ընկերա-տնտեսական Բարեւուման Բ-ը դրուեր է քաղաքական Ազատութեան Ա-էն ետք - սակայն ո՛չ անոր ստորադաս: Ռազմավարական ու գաղափարաբանական մակարդակներու համեմատութիւնը եղեր է առողջ ու մնացեր է այդպիսին, չհաշուած բացատրելի կղզիացած շեղումներ:

դ) Ազգային միջավայրի, պատմական *քատրի* ծնունդ, նաեւ անխուսափելիօրէն կամապաշտ ու հաւատաւոր ձգտումներու ծնունդ, - Դաշնակցութիւնն ու իր մամուլը ազգային գոյածեւն ու անոր էական դրսեւորումը կազմող լեզուամշակութային եզրը չէին կրնար չդաւանիլ իրենց բովանդակութեան էատարր: Ոչ միայն իր կեցուածքով մշակոյթի հանդէպ, այլեւ մշակութային նիւթերու տրամադրած իր էջերով՝ դաշնակցական մամուլը տուած է փաստը «քաղաքական»ի ընդլայնուած ընկալման, ուր քաղաքականացեալ «մշակութային»ը ներքին ամբողջ կենսունակութիւնը կ'ընէ համայնքին, այս պարագային Չայութեան՝ իբր ազգային հաւաքականութիւն: Կը կազմէ քաղաքականը կենսաւորող միջուկը, իբր անոր շրջօնքը՝ նոյնացող անոր հետ:

ՓՈՒՆ Ի ՓՈՒՆ ՏԻՐՎՊԵՏՈՂ

Արագօրէն տարագուած չորս այս «մայր գիծեր»ը, անշուշտ, վերացարկունով են անջատուած իրարմէ: Համադիր ներկայութիւն՝ անոնք իրար լրացնող էատարրեր են եղած, իրական, թանձրացական, դաշնակցական մամուլի այս բոլոր բաղադիր կեցուածքներուն մէջ:

Գիշդ է, միւս կողմէ, որ այս գիծերէն ոմանք տիրապետող են եղած տուեալ պահու մը, միւսները՝ այս կամ այն չափով երկրորդ մակարդակի մղուած: Արդէն տրուեցան օրինակներ: Կը հասկցուի, որ պատմա-քաղաքական գլխապտոյտ հոլովոյթներու մէջ, Կազմակերպութեան ռազմավարական ընտրանքներու կողքին՝ շրջումներ տեղի ունեցած ըլլան նաեւ անոր քարոզչական վերաբերումին ու մամուլի բովանդակութեան մէջ: Դաշնակցական գործիչը, քարոզիչն ու հրապարակագիրը փոխն ի փոխ առաջնահերթութիւն են տուեր, յաճախ, իրենց այս կամ այն կարողութեան: Շեշտը դրեր են, ըստ կարիքի, *կամ* ազգային-քաղաքական բուռն պայքարին վրայ, *կամ*

Խաղաղ գործունեության վրայ՝ քաղաքական ու մշակութային տարրերի կազմում։ *Կամ* դեռ՝ առաւել շեշտուած ընկերա-տնտեսական դիրքաւորման վրայ, ընկերացող պայքարով հանդերձ։ Նոյնիսկ, դանդաղեցման այս կամ այն պահուն, դաշնակցական մամուլը կրնայ ետ մնացած ըլլալ գաղափարներու արծարծման ու համադրման, կամքերու դարբնում-ձուլումի իր առաւել բնորոշ առաքելութենէն։ Աքեմաներ՝ ասոնք, որոնց համապատասխան կացութիւններ դիւրին է յիշատակել Դաշնակցութեան պատմութեան երկայնքին։ Նախա-1908եան տարիները, 1908-15 շրջանը՝ օսմանեան ծիրի մէջ, 1905-1906 տարիները՝ անդրկովկասեան ծիրի մէջ, -ահա՛ երեք պատմական ժամանակահատուածներ՝ ուր վերի տիպաբանական նմուշներէն երեքը, տիպական «տիրապետումներով», կ'իրանան, կը մարմնաւորուին։ 1917-21 շրջանը, Դաշնակցութեան պատմութեան ինչպէս անոր մամուլի բովանդակութեան մէջ, իր կարգին, կը ներկայանայ առաւել բարդ, առաւել բազմակողմանի իրականութեամբ մը, ուր դժուարին սքեմացում մը մեզ կը մղէ ի վերջոյ տեսնելու *բոլոր գիծերու* համադիր ներկայութիւնը։ Մինչ սփիւռքեան մի քանի տասնամեակներ, յատկապէս 1930ականներու կեսէն մինչեւ 1960ականներու կեսը, կը բնորոշուին մշակութային էստարրի զգալի տիրապետութեամբ մը, գաղափարական կենսունակութեան որոշ նուազումով։ Փուլ մը՝ որ 1970ականներէն ասդին, աստիճանաբար, կրկին տեղ պիտի տայ առաւել հաւասարակշիռ գոյակցութեան մը՝ ընդմէջ բոլոր գիծերուն, էստարրերուն։

Գ. ՄԱՍ

**ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ, ՀԱՄԱԿԻՐ ԶԱՆԳՈՒԱԾ,
ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

Յ.Ք.

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ...

Անկասկած, Հ.Յ.Դաշնակցութեան համար, կուռ շարքերը, յեղափոխական կամքի դարբնունը հանդիսացած են իր պայքարի առաջնահերթ ու անփոխարինելի գործօնը: Սակայն, կազմակերպական այդ հրամայականին կողքին, անիկա համակիր զանգուածի կռուանին մէջ տեսած է երկրորդ կարեւոր գործօնը իր հեղինակութեան եւ ուժին - ազգային-հաւաքական առումով. լիուլի վայելելով միանգամայն՝ այդ կռուանի համակրանքը - իբր բնական հետեւանք յատկապէս «*հայ ժողովուրդի բովանդակ շահերը*» պաշտպանելու, ազգային-համայնական գործունէութեան գլխաւոր մարզերը ճիշդ ուղիի վրայ պահելու իր տեւական ձգտումին ու ջանքերուն:

Հ.Յ.Դաշնակցութեան առնչութիւնը հայ զանգուածին հետ առհասարակ՝ արժանի է բազմակողմանի ուսումնասիրութեան՝ հոգե-

ընկերաբանական թէ քաղաքական տեսակետներէ: Որովհետեւ անհկա բարդ է, իմաստալի, ըլլալով արդիւնքը կուսակցութեան կողմէ առաջին իսկ օրէն, իր կազմակերպական կառոյցներու ստեղծման առընթեր՝ սերտուած-նախապատրաստուած, մշակուած վերաբերումի մը: Յենուած միանգամայն բարոյական-սկզբունքային ե՛ւ իրական-գիտական տուեալներու վրայ:

3.3. Դաշնակցութեան վերաբերումը հայ զանգուածին հանդէպ արտայայտուած է ու այսօր ալ կ'արտայայտուի ըլլա՛յ ուղղակի այդ զանգուածին հետ շփման առիթներով, ըլլայ իր կողմէ ստեղծուած համակիր կառոյցներու կամ, ըստ պատմական պայմաններու, ազգային-համայնքային թէ ազգային-պետական կառոյցներու հետ գործակցութեան իր ոճին ընդմէջէն: Անոր հիմունքները այնքան ամուր են ու բնորոշ՝ ե՛ւ իրականութեան, ե՛ւ բարոյական հրամայականներու, որ 1890ական թուականներէն մինչեւ այսօր, ու անցնելով դարասկիզբի վերիվայրումներէն, անոնք, կը հաւատանք, ըստ էութեան կը պահեն իրենց այժմէականութիւնն ու կարողականութիւնը: Այսպիսի հաստատում ընելու համար, սակայն, պէտք է, «նոր պայմաններ» ու դիրին փաստարկումէն անդին, երեւոյթներու մակերեսէն անդին, գիտնալ սեւեռել այդ սկզբունք-հիմունքներու էական բովանդակութիւնը: Երկրէն՝ Դաշնակցութեան հարկադրական ելքէն ետք անգամ, իր տարագրութեան գրեթէ երեք-քառորդ դարու ընթացքին, նոյն այդ սկզբունքները վարեցին կազմակերպութեան գործունէութիւնը - կարելի դարձնելով անասելիօրէն դժուար պայքար մը՝ տեղայնական հակումներու, ա՛լ իրապէս տարասփիւռ շըրջաններու՝ իրարմէ կղզիացման սպառնալի վտանգին դէմ: Եթէ այդ հակումները կրցան, տեղ-տեղ ու որոշ պահերու, խախտել Դաշնակցութեան առաջին երեսնամեակին հաստատուած սկզբունքները կազմակերպութիւն-զանգուած յարաբերութեան,- աստիկա՝ արդէն դրսեւորումն է եղած՝ կազմակերպութեան սեփական առողջութեան ժամանակաւոր ընկրկումներուն, նոյն պատմական վերիվայրումներուն ենթակայ:

Բոլոր պարագաներու, յանձնարարելի է **Դաշնակցութեան ըսփիւռքեան շրջանի, ե՛ւ ներկայի, գործունէութեան ոճը, ազգային ամբողջին հետ յարաբերելու իր ձեւերը տեսնել նախորդ շրջանի լոյսին տակ՝ իբր անոր հետ շարունակականութիւն կազմող պրոցէս,-** ե՛ւ զայն աւելի լուսաւորելու, աւելի հասկնալի, իմաստալի՝ ընծայելու, ե՛ւ միանգամայն տարասփիւռ պայմաններու եւ սխալ մերձեցումներու խառնարանին մէջ յարաբերաձեւերու վաւերականութեան չափանիշեր պահելու առաջադրանքով: Վաւերակա-

նութեան չափանիշներ՝ ուրեմն՝ ոչ միայն երեւոյթի ընթացման ձգտող տեսական միտքի սպասին, այլեւ գործող, յանձնառու մարդուն համար:

Նախ քան անցնիլը բուն երեւոյթի արագ սեւեռման, հարկ է շեշտել, որ Դաշնակցութեան գաղափարաբանական հաւատամքի էատարր ժողովրդավարութիւնը, ապա անոր կազմակերպական ներքին հիմնական սկզբունքներէն՝ ապակեդրոնացումը, իրենց յարակից ենթադրութիւններով, բնականօրէն կը պայմանաւորեն նաեւ կուսակցութեան դէպի դուրս վերաբերումը - ըլլայ՝ ատիկա զանգըւածի, ըլլայ անկէ ձեւաւորուող համակիր-ուղեկից թէ ազգային-ընդհանրական կառոյցներու պարագային: (Կուսակցութեան մը ներքին ժողովրդավարութիւնը եւ վարչական ապակեդրոնացումը ինքնին՝ ուրիշ բան չեն, եթէ ոչ կարելիութիւնը՝ կազմակերպական ամրափակ ու ինքնաբաւ կառոյցը օժտելու, միանագամայն, կարելի առաւելագոյն ճկունութեամբ, «բացութեամբ»:) Նախաձեռնութեան եւ պատասխանատուութեան իրար հաւասարակշռող զոյգ «հրահանգ»ները կը վարեն եւ ներքին, եւ արտաքին մարզի կեցուածքները - բնականօրէն տարբեր ձեւաւորումներով ամեն մէկ պարագայի: Ինչպէս իր երդուեալ շարքայիններէն, Դաշնակցութիւնը ժողովրդական տարրէն եւս ակնկալած է եւ ուժական, եւ պատասխանատու գործունէութիւն, ու անոր հանդէպ ցուցաբերած՝ նոյնպիսի գործակցութեան ոգի:

Գալով կազմակերպութիւն-զանգուած յարաբերութեան բո՛ւն երեւոյթին, պէտք է նախ սեւեռենք անոր առաջին գիծը (առաջին՝ եւ կարեւորութեան իմաստով, եւ ժամանակագրականօրէն), որ է ազգային գոյապայքարի, զինեալ պայքարի մարզը, այդ մարզի դաշնակցական պատկերացումը: Արդարեւ, չկայ աւելի կենսական ու աւելի կենսականօրէն կազմակերպութեան ու զանգուածի յարաբերութիւն ենթադրող մարզ, քան ժողովրդական ինքնապաշտպանութեան հարցը: Հոս՝ կրնանք բաւարարուիլ յղումներով, արագ յիշատակումներով, քանի ներկայ հատորը արդէն պիտի տրամադրէ հայ յեղափոխական զրականութեան նիւթերէն կարեւորագոյնները՝ նաեւ այս մարզին առնչուող: Հ.Յ.Դ. պատմութեան ժողովական կարեւորագոյն փաստաթուղթերով կը վկայուի այն հանգուման մասին, թէ «ժողովրդի մը ազատագրութիւնը ապահովուած կրնայ համարուիլ միայն այն ժամանակ, երբ այդ ազատագրութեան շարժումը իր բոլոր պահանջներով (թէ՛ դրամի, թէ՛ կռուողներու, թէ՛

ղեկավարներու եւ թէ զենքի) կ'ընդգրկուի լայն չափով իրենց՝ տառապողներու կողմէ»։ Իսկ ազատագրական պայքարի հնոց-շրջաններու կազմակերպման պատմութիւն-ներկայացումը, գլխաւոր գործիչներէն ոմանց գրիչով, լուսաւոր կերպով կը վկայէ այդ սկզբունքի կիրարկման մասին։

Օրինակային արժէք ունին յատկապէս Տարօնի ժողովրդական կազմակերպութեան մասին բերուած վկայութիւնները՝ Արմենակ-Յրայրէն ու Վահանէն մինչեւ Ռուբէն։ Առանց այս ուղղութեամբ ստորագնահատելու Վասպուրականի կազմակերպութեան փաստը, կամ՝ Երկրի ժողովուրդին նպաստ բերելու համար առաջացուած Ատրպատականի, Կարսի, Երեւանի նահանգներու՝ կուսակցական կառոյցներու առընթեր ժողովրդական կառոյցներու ստեղծման փաստերը - գործարկուած Ռուբէնի, Իշխանի, Արամի եւ այլոց կողմէ։ Առանց, միւս կողմէ, մտնելու լրացուցիչ մանրամասնութիւններու մէջ - գիւղերու կամ քաղաքային թաղերու դաշնակցական մարտական խումբերու կողքին՝ օժանդակ մարտական խումբեր, կանանց Կարմիր Խաչ, պատանեկան խումբեր... Կամ նախածեռնութիւնները՝ ժողովուրդը սեփական-համայնքային կառոյցներու առաջացման գործօն դարձնող - դպրոցաշինութիւն, սեփական արդարադատութիւն...

Երկրի տարածքի կամ անոր անմիջապէս կից շրջաններու յատուկ՝ զանգուածը ինքնավար համայնքի վերածելու ձգտող գործունեութեան այս ոճը, դէպքերու եւ գաղափարներու կրկնակ հոլովոյթի մը բերումով, շատ շուտով կիրարկում պիտի գտնէ նաեւ Անդրկովկասի հայութեան ծոցին մէջ։ 1903ին՝ եկեղեցական կալուածներու գրաման ցարական գրգռութեան համաժողովրդական ծառացումով պատասխանելու ճիգով (ջանալով անոր զօրակցելու բերել նոյնիսկ եկեղեցական հիմնարկութիւնը), իսկ 1905ին՝ թաթարական նախայարձակման դէմ հակահարուած մը ոտքի հանելու համար, Դաշնակցութեամբ ղեկավարուած բայց ժողովրդական զանգուածէն «լայն չափով ընդգրկուած»։

Նոյն 1905ին է որ, այս անգամ՝ կովկասեան միջավայրի գաղափարական հասունացման եւ ռուսական առաջին յեղափոխութեան հետեւեանք, Դաշնակցութիւնը պիտի առաջնորդուի ժողովրդական զանգուածի մէջ աւելի շեշտ ընկերա-տնտեսական ձեւաւորումներ մուծելու։ Մինչեւ 1907, ցարական եւ համաթրքական կրկնակ զրրոցութեան ու վտանգին թոյլ տուած չափերով ստեղծուած-գործարկուած այս կառոյցները անհամեմատ ուշագրաւ են ու բնորոշ։ Փաստը՝ որ անոնք աւելի ուշ պիտի չգտնէին կրկնումի յարմար հող,

եթէ չհաշուենք անկախութեան շրջանին նոյնքան կարճ տեւողութեան վրայ ու հասկնալիօրէն անկատար մնանատիպ փորձեր, հեռու արժեզրկելէ՛ վերլուծող աչքին համար այս բնորոշները կ'օժտէ անփոխարինելիի՛ կարելորութեամբը: Պիտի արժէր ուրեմն, այսպիսի հապճեպ ակնարկէ մը անդին, ուսումնասիրական լուրջ աշխատանքով մը սեւեռել Դաշնակցութեան ընկերա-քաղաքական այս քիչ ծանօթ բնորոշները եւ անոնց գործնականացման ձեւաւորումները - արհմիութիւններ, «գիւղացիական միութիւններ», համագործակցականներ, քաղաքային միութիւններ...

Չանգուածին յղուիլը, զանգուածին երթալը, անոր շփուիլը, իբր քաղաքական գործունէութիւն, երկդիմի շարժում է յատկապէս յեղափոխական կուսակցութեան մը համար - գործածումը երկսայրի զէնքի մը: Դաշնակցութիւնը երբեք չէ անգիտացած այս երկդիմութեան անպատեհութիւնը, չըսելու համար վտանգը՝ կուսակցութիւն ըլլալէ դադրելով «ժողովուրդ դառնալու», կամ «պետութեան վերածուելու»: Ատկէ՛ խուսափումը, Դաշնակցութեան մօտ, զանգուածին բացուելէ, նոյնիսկ զայն ուղղակի առաջնորդելու փորձուելէ - ջանալով հանդերձ զանգուածին հաղորդ մնալ, զայն նախածեռնութիւններու ճիշդ ուղիին վրայ դնել:

Եթէ Դաշնակցութեան պատմութիւնը ճանչցած է զգայուն հաւասարակշռութեան այս գիծէն շեղումի պահեր, բնորոշ է որ ատիկա չէ եղած զանգուածէն հեռանալու, «ընտրանի խաղալու» փորձութեան իմաստով: (Յեղափոխական գործի ընտրանիական, «անդրանիկեան» պատկերացումը բացառութիւն մըն է, կանոնը հաստատող:) Փորձութիւնը, աւելի եղած է հակադիր՝ կուսակցութեան ծայրայեղ «մասսայականացման» ուղղութեամբ: Ու այսպիսի պահեր, եթէ երբեմն յանգած են անել կացութեան ծանր հետեւանքներով (տեսնել Օսմանեան սահմանադրութեան տարիներու գործիչ Գարնէնի սխալներուն վերլուծումը Ռուբէնի կողմէ), աւելի յաճախ առիթը տուած են կուսակցութեան հասունցնելու անոնց հակադիր բովանդակութեամբ պահը - իբր քաղաքական-յեղափոխական կազմակերպութիւն ինքնահաստատման, յաւելեալ ինքնացման պահ: Այսպէս է, որ Անդրկովկասի 1903-1906 տարիներու «մասսայականացման» կը հետեւի Դ. Ընդի. ժողովի բիրեղացումը, 1914-16ին՝ կամաւորական շարժում գլխաւորելէ ետք ու 1918էն՝ պետութիւն ստեղծելուն զուգընթաց՝ Թ. Ընդի. ժողովը կը տքնի պահպանելու, վերստեղծելու կուսակցութեան ինքնութիւնը - միակ Բիրոյով մը որոշ յաւելեալ կեդրոնացում առաջացնելու գնով իսկ. ինքնացման ճիգ՝ որ կ'երկա-

րածգուի, ամբողջ հնգամեակ մը վերիվայրուամներ կամրջելով, Ժ. Ընդի. Ժողովին (1924) մէջ: Կամ նորագոյն օրինակի մը համար՝ 1940-50ական տարիներու տեղայնացում-դանդաղեցումի երեւոյթ-ները, ապա՝ ազգային-եկեղեցական հարցերու մէջ - ճիշդ է՝ անխու-սափելի-ներգրաւումը, որոնց կը հետեւի, սակայն, ուշ-60ականներու եւ 70ականներու «քաղաքականացման» ինքնահրահանգումը:

Քիչ մը վեր ակնարկուեցաւ 1918-1920 Յանրապետութեան շըրջանի կուսակցութիւն-պետութիւն երկուութեան երեւոյթին: Ակնարկութենէ անդին՝ տեղ չունինք յամենալու անոր շուրջ, նոյնիսկ եթէ կը ճանչնանք անոր այլապէ՛ս միակ (ուրեմն իր կարգին անփոխարինելի ու կարեւորութեամբ քննելի) երեւոյթի հանգամանքը: Ընթերցողը կրնայ յղուիլ այս էջերուն մէջ հիւրընկալուած սպառիչ վերլուծումներու՝ «առաջին ձեռքէ» - Ռուբէնի «Յիշատակներ»ու 7րդ հատորին, ուր պիտի գտնէ բախումը կառավարման ուղղակի («յեղափոխական ժամանակաշրջանի» յատուկ) եւ ֆրակցիաներով միջարկուած (ուրեմն ժողովրդավար) կառավարման ոճերու միջեւ, հակադրում՝ որ կ'երեւի եւ կուսակցական-կառավարական մարմիններու յարաբերութեանց, եւ կառավարման ձեւերու մակարդակին:

Պարզ յիշեցման կարգով՝ ճշդենք, որ նորագոյն Յանրապետութեան տարիները՝ 1990ականներու ներկայ տասնամեակը, արդէն այլապէ՛ս դեռ շատ թարմ՝ քննական վերլուծումի նիւթ դառնալու համար, դուրս կ'իյնայ այս շարքի ժամանակագրական պարունակէն:

Յ. ք.

... ԵՒ ՍՓԻՒՔԵԱՆ ՁԵՒԱՒՈՐՈՒՄՆԵՐ

Շահան Գանտահարեան

Սփիւռքի պարագային, կազմակերպական իրադրութեան մասնայատկութիւնը, անշուշտ պարտադրեալ ու բացասական, կը կայանայ բնաշխարհէն դուրս եւ հեռու, առաւել՝ հեռու եւ առաւել ցըրուած ըլլալուն մէջ: Իր ետեւէն բերելով առաջին հետեւանքը՝ «զանգրւած» հասկացութեան էական մէկ ձեւազեղծումը - քանի այդ զան-

գըլածը՝ ազգային համայնքը ցրօնք մը կը դառնայ, եւ «համակիր» կառոյցները կ'ըլլան անհամեմատ նուազ ամբողջական, աւելի թոյլ ու անծէւ: Ապա, երկրորդ հետեւեանք, համայնքի եւ կազմակերպութեան մէջ՝ իբր հակազդ այս կացութեան՝ առաջացնելով կարիքը կառոյցները ամրացնելու, հակակշիռը աւելի անմիջական ու ամուր դարձնելու - փորձութիւնը՝ կարծրանալու...

Այսպէս, յետ-եղեռնեան եւ յետ-անկախական ժամանակաշրջանին, Դաշնակցութեան անմիջական շրջանակէն ներս մուտք գործած են իրերայաջորդ սերունդներ, հոն տեսնելով թրքական ցեղասպան պետութեան դէմ անհաշտ պայքարի բանակատեղին, միանգամայն ազգային պայքարի ամուր կռուան՝ հայրենիքի արեւելեան հողատարածքներուն տիրացած համայնավար վարչակարգին դէմ:

Ժողովրդային այս զանգուածներէն կազմակերպ միաւորներ յառաջացնելու դաշնակցական նախաձեռնութիւնը վերստեղծած է նախորդ երեսնամեակի ուղեկից-յարակից միութիւնները՝ անոնց որոշ ձեւաւորումներով, իր համահայկական նպատակներուն համար՝ զանոնք ընդգրկելով համապարփակ կառոյցի մը մէջ: Առանց մտահան ընելու, միւս կողմէ, որ մշակութային, ընկերա-ծառայական կամ մարզական միութիւններ հովանաւորելու իր առաքելութեան մէջ՝ քաղաքական կազմակերպութիւնը պարտի մերժել զիջումները յեղափոխական-քաղաքական իր դիմագծէն: Որովհետեւ, որքան ալ՝ ըստ եւութեան՝ սփիւռքեան այլասերիչ պայմաններու մէջ մարմնակրթական դրօշին տակ տասնեակ մը հազար հայորդի համախմբելը կամ փոքրամասնական-ցրուած մշակոյթի յաւերժացման ձգտող միաւոր մը հիմնելը ինքնին յեղափոխական արարք ըլլայ, - անվիճելի է, որ ոչ-քաղաքական այս զանազան աշխատանքները ի վերջոյ կը խաթարեն քաղաքական կուսակցութեան մը դիմագիծը: Գ.Յ. Դաշնակցութիւնը, արդէն շեշտուեցաւ, մնացած է զգաստ այս ուղիութեամբ, եւ ջանացած՝ անեղծ պահել այդ դիմագիծը՝ միանգամայն պահելով ուղեկից միաւորներու աշխատանքներուն մէջ ոչ-միջամտութեան ոճը:

Թէ՛ կրթա-մշակութային կազմակերպութեան Զամազգայինի, թէ՛ ընկերա-մարդասիրական կանացի կառոյցին՝ Գ.Օ.Մ.ին, եւ թէ՛ մարմնակրթական-սկաւտական շարժման՝ Գ.Մ.Ը.Ս.ի պարագային, Դաշնակցութեան կառուցային առնչութիւնը եղած է ու կը մնայ անուղղակի դրուածքով: Այլ խօսքով, իրեն յարակցող միութիւններու կեանքին Դաշնակցութիւնը կը շարունակէ հետեւիլ, կամ անոնց գործունէութիւնը վերահսկել, իր ֆրակցիաներուն ճամբով: Ֆրակցիան՝ տուեալ միութեան անդամակցող ընկերներու համախմբումը,

պարբերական հանդիպումներով վերահասու կ'ըլլայ կուսակցութեան քաղաքական ուղեգիծին հանդէպ տուեալ միութեան գործի դաշտին վերաբերող հարցերուն, առանց միջամտելու գործունէութեան ներքին ծալքերուն կամ ժողովական կեանքին իբր այդպիսին: Կուսակցական միութեանականները ուղեկից կազմակերպութիւններու մէջ կը գործեն իբրեւ անհատ Յ.Օ.Մ.ականներ, Համագայնականներ կամ Հ.Ս.Ը.Մ.ականներ, եւ ո՛չ իբրեւ Դաշնակցութեան ներկայացուցիչներ:

Հ.Յ.Դաշնակցութիւնը ֆրակցիայի ճամբով անուղղակի կ'առնչուի նաեւ համայնքնային հասկացողութեամբ ազգային կեանքին: Ազգային առաջնորդարաններու մարմիններուն եւ յանձնախումբերուն մաս կը կազմեն մեծ թիւով դաշնակցականներ, սակայն անոնցմէ ոեւէ մէկը կազմակերպականօրէն ուղղակի ենթակայ չէ որեւէ դաշնակցական մարմնի: Դաշնակցութեան պատկան ժողովները միայն սկզբունքային-ընդհանրական որոշումներ կ'առնեն ազգային կեանքի ղեկավարման մասին. այդ սկզբունքներու ոգիի նկատառումով մեր ազգային մարմիններու ֆրակցիաները կը ջանան յաջս ներազգային թէ օտար հանրային կարծիքին բարձր պահել հայ համայնքը ներկայացնող ազգային առաջնորդարաններու հեղինակութիւնը:

Հասկնալի է, որ ճգնաժամային պահերու, հայութեան կարիքներուն անմիջականօրէն հասնելու իր ճիգին մէջ, կուսակցութիւնը փոփոխած ըլլայ անուղղակի առնչութեան այս դրուածքը, տարած՝ օրինակ՝ ընկերա-մարդասիրական անմնացորդ աշխատանք, մեկնելով հայութեան ֆիզիքական պաշտպանութեան թելադրանքէն՝ ազգային զոյապահպանման դաշնակցական ինքնաթելադրանքէն: Այսպէս՝ հայկական թաղերու ինքնապաշտպանութեան, բնակարանի, սնունդի տարրական կարիքներուն համար - Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն: Կամ երբ, Հայաստանի վերջին աղիտալի երկրաշարժի վաղորդայնին, աշխարհասփիւռ դաշնակցական ակումբները իրենց կարգին կը դառնային մէկական ազգային առաջնորդարան կամ ընկերա-ժառայական կեդրոն, ուր դաշնակցական մարմիններ, կամ Դաշնակցութեան նախաձեռնութեամբ յառաջացած միջ-կուսակցական յանձնախումբեր, ոգի ի բռին կ'աշխատէին օժանդակութիւն հասցնել աղէտի գօտի: Նոյնը՝ արցախեան ճգնաժամի տարիներուն, երբ Երեւանէն Ստեփանակերտ՝ Դաշնակցութեան զրասնեակները, իրենց վարած թէժ զոյապայքարին զուգահեռ, կը հասնէին կազմակերպելու վիրաւոր ազատամարտիկներու բժշկական խնամքը եւ զոհուածներու ընտանիքներու

օժանդակութիւնը: Դարձեալ Գործն էր, որ մեր կուսակցութիւնը կը մղէր ադարացի «խախտում» կատարելու ընկալեալ սովորութենէն, իր իսկ կողմէ հաստատուած կարգէն: Առանց երբեք կանոնի վերածելու ընկերա-մարդասիրական այս ուղղակի գործունէութիւնը, խաչածեւելու համար -այս պարագային- իր իսկ կողմէ հիմնադրուած եւ նոյնաբնոյթ աշխատանքներ լաւագոյնս իրագործող Զ.Օ.Ս.ը:

Յ.Յ.Դաշնակցութեան՝ ազգային կեանքի անուղղակի առնչութեան այս դրուածքը կրնայ տակաւին փոփոխութեան ենթարկուիլ, եթէ հակադիր ուժերէ եկող ոտնձգութիւններ կատարուին՝ յստակ քաղաքական նկատառումով: Այսպէս եղաւ, երբ հակազգային եւ հակակրօն համայնավարական գործօնը 1950ական թուականներուն խռովեց հայ կեանքը: Կիլիկեան թեմեր էջմիածնի ենթարկելու պահանջին տակ կար յստակ նպատակադրումը Յ.Յ.Դաշնակցութեան հեղինակագրկման, անոր համակիր զանգուածներու անկէ օտարման: Քաղաքական շարժառիթ մեկնող այս մարտահրաւերին դէմ Դաշնակցութիւնը հարկադրանքի տակ էր ուղղակի հակազդելու: Ու այսպէս է որ, ընդդէմ համայնավարական սադրանքին, պահպանուեցաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անկախութիւնը:

Յամենայնդէպս, բնականոն պայմաններու վերադարձով, Դաշնակցութիւնը միշտ վերադարձած է իր կեդրոնատեղին եւ հեռուէն հսկած իր ուղեկիցներու թէ ազգային իշխանութիւններու աշխատանքին, կանխելու համար՝ անոնց հեղինակութեան սպառնացող որելէ վտանգ:

*

* *

Հասկնալիօրէն, տարբեր է պարագան Յ.Յ.Դ. Երիտասարդական միաւորներուն: Այս հասկացողութիւնը կը ներառէ Յ.Յ.Դ. Պատանեկան, Երիտասարդական եւ Ուսանողական միութիւնները, եւ իր անմիջական-կազմակերպական բնոյթով իսկ՝ զանոնք կ'անջատէ ուղեկից միութիւններու վերոնշեալ ծիրէն եւ ֆրակցիաներով անուղղակի ներկայութեան ձեւէն: Կ'արժէ շեշտել, որ դաշնակցական երիտասարդական միաւորները ի սկզբանէ դասուած են եղած այս ուղղակի առնչութեան մէջ:

Յ.Յ.Դ. Ուսանողական միութիւնները կը նկատուին դաշնակցական կոմիտէութիւններ, որոնց բնականաբար կ'անդամակցին ուսանող դաշնակցականները: Ուսանողական միութիւնները ունին կանոնագրային առանձնաշնորհում. իրենց պատկանած կազմակերպական շրջանի գերագոյն ժողովին մասնակցելու իրաւունքէն բացի, Յ.Յ.Դ. Կանոնագրի յատուկ տրամադրութեամբ՝ անոնք առի-

թը ունին ուղղակի ներկայացուելու Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովին (լրացնել է տը կանոնագրով ճշդուած պայմանները՝ ընդհանուր նուազագոյն թիւ, ուսանող ընկերներու թիւ, եւն.): Պատմական այս առանձնաշնորհումը, որ մեր կուսակցութիւնը տուած է իր ուսանող հատուածին, կը բխի յատուկ գուրգուրանքէ՝ կուսակցութիւն-ուսանողութիւն յարաբերակցութեան մէջ եւ ուսանողութեան պատմադրոշմ դերակատարութենէն՝ Դաշնակցութեան բարձրագոյն ժողովներուն մէջ: Ծանօթ է Հ.Յ.Դ. պատմութեան մանաւանդ առաջին շրջանի դաշնակցական ուսանողութեան ներդրումը ընդհանուր գործին. հոս հարկ չկայ մանրամասնելու այս ընդգծումը: Բայց կ'արժէ արձանագրել, որ նորագոյն ժամանակակից այս օրերուն, մեր ուսանողական միութիւնները փաստեցին որ ամուր պահած են համալսարաններէն դուրս եւս, եւ այս պարագային Երկրէն ներս գործելու յեղափոխական աւանդը: Այսպէս, պատմութիւնը անպայման պիտի արձանագրէ Հայաստանի եւ Լիբանանի դաշնակցական ուսանողական միութիւններու մասնակցութիւնը՝ արցախեան ազատամարտին - անոնց տուած նահատակները:

Ինչ կը վերաբերի Հ.Յ.Դ. Երիտասարդական միութիւններուն, սփիւռքեան առաջին տասնամեակներուն ցրուած, տարբեր ու փոփոխական ձեւաւորումներով՝ գաղութ գաղութ ու ժամանակէ ժամանակ, անոնք աստիճանաբար, 1970ական տարիներէն, վերադարձուեցան կազմակերպական կառոյցի Հ.Յ.Դ. պատմութեան մէջ կիրարկուած ամենէն ընթացիկ ձեւաւորման, զոր՝ աստիճանական բիւրեղացումով կը պահեն եւ այսօր: Կապուած են տուեալ շրջանի բարձրագոյն մարմինն՝ Կեդրոնական, Մեկուսի կամ Առանձնակի կոմիտէին: Կուսակցական պատկան մարմինները իրենց ուղղակի կամ լիազօր ներկայացուցչները կ'ունենան անոնց կեդրոնական վարչութիւններուն մօտ, որոնք կը ստանձնեն կուսակցական վերահսկողութիւնը՝ Երիտասարդականի կառոյցին մօտ, յարգելով Երիտասարդականի ինքնադեկավարման սկզբունքը՝ **ինքնադեկավարման վարժեցումի իմաստով ու սահմաններուն մէջ**: Ապագայ դաշնակցական մարդը պատրաստող Երիտասարդական այս հնոցները եղած են ու կը մնան Դաշնակցութեան գլխաւոր Դպրոցը, իր տասնեակ հազարաւոր շրջանաւարտներով՝ տասնամեակներն ի վեր:

Երիտասարդական միաւորներու դրուածքին, 1970ականներէն սկսեալ աստիճանաբար համասփիւռքեան, իսկ 1990ականներու սկիզբէն՝ համահայկական (Աղբալեան Ուսանողականի եւ Հա-

յաստանի Երիտասարդականներու յաջորդական հիմնադրումներով), այսօր, գրեթէ երկու տասնամեակէ ի վեր, կը զուգորդուի Երիտասարդական հարցերու Գրասենեակը, որ, հիմնադրուած Զ.Յ.Դ. Բիւրոյի կողմէ, պարտականութիւն ունի համադրել Երիտասարդականներու աշխատանքները՝ առանց կազմակերպական միջամտութեան տեղական աշխատանքներու:

Զ.Յ.Դ. Պատանեկան Միութիւնները, իրենց կարգին կոչուած՝ հայ մատղաշ սերունդները հաղորդակից դարձնելու հայ ազատագրման շարժման պատմութեան եւ դաշնակցական աւանդներուն, այսօր աւելի բիրեղացած ու միատեսակացուած են կառոյցով ու գործունէութեամբ, եւ կը ղեկավարուին Երիտասարդական միութիւններու կեդրոնական վարչութենէն:

Ուղեկից թէ Երիտասարդական միաւորներուն ներգրաւուած կամ անոնցմէ դուրս գտնուող համակիրներով, այսօր՝ ահա աւելի քան հարիւրամեակէ մը ի վեր, Զ.Յ. Դաշնակցութիւնը յաջողած է կերտել ժողովրդային զանգուածներու ամուր յենարան մը, որ զինք ընտրած է իբր ճիշդ ուղի՝ հասնելու համար միացեալ, ազատ ու անկախ հայրենիքի մը իր տեսլականին:

Շ. Գ.

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

I. ՏԵՍՈՒԹԻՒՆ.- ՎԵՐԼՈՒԾՈՒՄՆԵՐ, ՇԵՇՏՈՒՄՆԵՐ

1Ա. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ՝ ԿԱՆՈՆԱԳՐԻՆ ՅԱՆԴԵՊ

1

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ

Շատ անգամ առիթ եմ ունեցած մտածելու մեր Կանոնագրի առաջին երկու կետերի մասին, որ ասում են. «*Հ.Յ. Դաշնակցութեան անդամ կրնայ ըլլալ ամէն քաղաքացի, որ կ'ընդունի կուսակցութեան ծրագիրն ու գործելակերպը, կենթարկուի անոր Կանոնագրին եւ որոշումներուն եւ ամէն ջանք կը թափէ իրականացնելու զանոնք*»:- «*Իւրաքանչիւր դաշնակցական պարտաւոր է մտնելով իւնքի մը մէջ՝ վճարել կուսակցական տուրք Շրջանային Ժողովի որոշած սակի համաձայն*»:

Որքան խորամուխ եմ լինում այս յօդուածների ներքին իմաստին, այնքան ատելի համոզում եմ, որ նրանց կանոնադրական չոր ու ցամաք խօսքերի մէջ լիովին ուրուագծուած է կենդանի դաշնակցականի գաղափարական տիպարը:

...Կանոնագիրը հինգ պահանջ է դնում ամէն մի քաղաքացու առջեւ, որ ցանկանում է անդամ դառնալ Հ.Յ. Դաշնակցութեան. ա) ընդունել Դաշնակցութեան ծրագիրն ու գործելակերպը. բ) ենթարկուել կուսակցութեան կանոնագրին ու որոշումներին. գ) ամէն ջանք թափել իրականացնելու «զանոնք», այսինքն կուսակցութեան ծրագիրը, կանոնագիրն ու որոշումները՝ կուսակցական գործելակերպով. դ) որեւէ դաշնակցական խմբի անդամ դառնալ եւ ե) դրամական տուրք հատուցանել՝ Շրջանային Ժողովի որոշած սակի համաձայն:

Կարելի՞ է այս հինգ պահանջներից որեւէ մէկը կատարել եւ «դաշնակցական» համարուել. կամ կարելի՞ է նրանցից մի քանիսը ընդունել եւ «դաշնակցական» նկատուել: Կանոնագրի տառն ասում է «ո՛չ». նա հինգ պահանջ է դնում եւ հինգին եւս գոհացում պարտադրում: Իսկ ես ասում եմ. ոչ միայն Կանոնագրի տառը, այլ, մանաւանդ, **ոգին** պահանջում է, որ այդ բոլոր պայմանները լրացուեն՝ «դաշնակցական» նկատուելու համար. եւ լրացուեն ոչ թէ աստիճանաբար, այսօր մէկը, վաղը միսը, հետեւեալ օրը մնացածը. այլ բոլորը **միաժամանակ**: Եթէ մերձուստ քննութեան առնենք իրական կեանքի պայմանները եւ կուսակցականի կոչումն ու դերը, մենք կը տեսնենք որ ուրիշ կերպ կարելի չէ. որ ուրիշ «կերպերը» մեզ կը տան թերի դաշնակցականներ, մեր շուրջը կը համախմբեն համակիրներ, գործակիցներ, օժանդակներ, բայց բնաւ «դաշնակցականներ» բառի բուն իմաստով եւ կանոնադրական առումով:

Առնենք, օրինակ, առաջին պահանջը, որ ասում է ընդունել կուսակցութեան «ծրագիրն ու գործելակերպը»: Նախ՝ ի՞նչ է «ծրագիր» ասածը: «Ծրագիրը» մի քաղաքական-տնտեսական բնոյթ ունեցող մտայղացում է, որ ունի մի իմացական հիմնաւորում: «Ծրագիրը» նախ պատճառաբանում է, յետոյ այդ հիման վրայ կառուցանում մի քաղաքական եւ տնտեսական կենցաղի ուրուագիծ, որի իրագործումը համարում է ցանկալի եւ հնարատր: «Ծրագիրն», ուրեմն, մի ցնորք չէ կամ երազանք, այլ մի իրագործելի հնարաւորութիւն: Նա արդիւնք է որոշ մտածման եւ որոշ տենչերի: Նա ենթադրում է, թէ հնարատր է յեղաշրջել տիրող քաղաքական եւ տնտեսական կացութիւնը եւ տենչալի է համարում այդ յեղաշրջումը: Նա կարծում է, որ մարդկային անջատ ճիգերը կարելի է համադրել եւ այդ համադիր ճիգերով յեղաշրջում առաջ բերել տիրող կացութեան մէջ: Նա մի որոշ կարծիք ունի հանրային ուժերի բնական ընթացքի մասին, ինչպէս նաեւ անհատական եւ խմբական կամեցողութեան դերի մասին: Նա կարծում է, որ հանրային կեանքի «բնական» համարուած ընթացքը կարելի է շեղել եւ կազմակերպուած զանգուածների գրոհի տակ՝ նոր հունով վարել. եւ այլն: Մի խօսքով, նա ոչ միայն որոշ պահանջների յայտագիր է, այլ եւ որոշ մտածումի յայտարար:

Արդ՝ երբ Կանոնագիրը պահանջում է ընդունել «ծրագիրը» (թողնենք առայժմ «գործելակերպը»), նա պահանջում է ոչ միայն յարել որոշ քաղաքական-տնտեսական պահանջների, այլեւ որոշ մտածման: ...

...Զննելով դաշնակցական թեկնածուների այլազան տիպարներ, որ ընդունում են մեր Կանոնագրի առաջին պահանջը - «*ծրագիրն ու գործելակերպը*», մենք տեսնում ենք, որ միմիայն մի պահանջին գոհացում տալով որեւէ քաղաքացի «դաշնակցական» դառնալ չի

կարող: «Գործը» պետք է, որոշ «ծրագրի» հասնելու համար. «ծրագիրը» պետք է գործերին իմաստ տալու համար: «Գործեր» կատարել, առանց «ծրագրի» հետապնդելու եւ «ծրագիր» դաւանել, առանց «գործերով» իրացնելու՝ երկուսն եւս «դաշնակցական» վերաբերում չեն կեանքին: Յեղափոխական նպատակներ ունենալ առանց յեղափոխական գործելակերպի. կամ դաշնակցական գործելակերպ որդեգրել առանց դաշնակցական ծրագրի՝ նոյնպէս «դաշնակցական» վերաբերում չէ կեանքին: Նա որ կամենում է դաշնակցական լինել՝ անխուսափօրէն պետք է դաշնակցական ծրագիր եւ գործելակերպ որդեգրել՝ անվերապահ եւ լիովին: Ու պետք է նաեւ, որ դաշնակցական մտայնութիւն ունենայ, քանի որ՝ թէւ տարամիտ մարդիկ կարող են միատեսակ նպատակներ ու գործ ունենալ, բայց ոչ **միշտ** նոյն նպատակներն ու **միշտ** նոյն գործը: Նրանք կարող են մինչեւ մի որոշ տեղ եւ մինչեւ որոշ ժամանակ իրար հետ գնալ, բայց այնուհետեւ անխուսափօրէն պիտի շեղեն իրենց ուղին, քանի որ նրանց առաջնորդում է ո՛չ նոյն մտածումը: Սի քանի գործեր միայն բերում են նրանց իրար մօտ: Եթէ կուսակցութեան մէջ գօրատր տարր չկազմեն այն անդամները, որ կապուած են իրար միեւնոյն «ծրագրով» եւ որդեգրած են միեւնոյն «գործելակերպը» -որ ասել է թէ նոյն մտայնութիւնն ունին- դաշնակցութիւնը կը դառնայ տարբեր դաւանանք ունեցող մարդկանց մի խմբակցութիւն, որ չունենալով գործունէութեան միեւնոյն տեսչերը՝ շուտով կը շեղի իր ճամբան եւ դիւրակերթայ դէպի քայքայում: Այստեղ օգնել չի կարող մինչեւ իսկ այն պարագան եթէ բոլոր տարամիտ անդամները ենթարկուեն կուսակցութեան միեւնոյն կանոնագրին ու որոշումներին: Որովհետեւ Դաշնակցութեան Կանոնագրին ու որոշումներին ենթարկուել՝ դեռ չի նշանակում «դաշնակցական» լինել: Կանոնագիր ու որոշում արդիւնք են մի որոշ մտայնութեան: Կանոնագիրը կազմում է որոշ «ծրագիր» հետապնդելու համար եւ որոշումները կայացում են նոյն նպատակով: Բաւական չէ դաշնակցական Կանոնագրի *ենթարկուել* եւ դաշնակցական որոշումներ *իրագործել*, պետք է կարողանալ դաշնակցական Կանոնագրի *մշակել* եւ դաշնակցական որոշումներ *կայացրնել*. իսկ սրա համար պետք է դաշնակցական մտայնութիւն ունենալ եւ Դաշնակցութեան «ծրագիրն» ընդունել: Որ կողմ եւ դառնանք, մենք տեսնում ենք, որ «դաշնակցական» կոչուելու համար նախ անհրաժեշտ է ընդունել Դաշնակցութեան ծրագիրն ու գործելակերպը՝ անվերապահ եւ լիովին:

Ընդունենք հիմա, որ մեր թեկնածուն լիովին համամիտ է մեզ ու անվերապահ ընդունում է Դաշնակցութեան ծրագիրն ու գործելակերպը: Տեսանք, որ այսքանը բաւական չէ «դաշնակցական» կոչուե-

լու համար: Պէտք է գոհացում տալ եւ միւս պահանջին, որ ասում է «*ենթարկուիլ Կանոնագրին ու որոշումներուն*»: Ուրեմն, ոչ թէ «*ընդունել*» տեսարար, այլ *ենթարկուել* գործնապէս. որովհետեւ Դաշնակցութիւնը գործի կազմակերպութիւն է. մի գործ, որ կատարում է միասնական աշխատանքով. այսինքն զատ-զատ ճիգերի համադրութեամբ եւ մի որոշ ուղղութեամբ՝ մի որոշ նպատակի հասնելու համար: Արդ՝ ճիգերի այդ համադրութիւնը ենթադրում է կախումներ մարմինների եւ ստակական անդամների միջեւ - թէ՛ իրար հանդէպ եւ թէ՛ իրար մէջ- ընկեր ընկերի եւ մարմին մարմնի հետ եւ ընկեր ու մարմին իրար հետ: Այդ կախումները բարոյական յանձնառութիւններ են, որ իրաւական ուժ են ստանում գործի ընթացքին: Միւս կողմից «գործերը» կատարում են իրաւասու մարմիններին վճռով եւ ընկերների ձեռքով: Մարմինների որոշումները պարտադիր են ենթակայ ընկերների համար: Չի կարող գոյութիւն պահել մի կազմակերպութիւն, ուր ամէն ոք ինքն է որոշում իր անելիքն ու իր կախումը: Սա կը լինէր անիշխանութիւն եւ անկարգութիւն. ամբոյս եւ ոչ թէ կազմակերպութիւն. եւ այդ իսկ պատճառով՝ ենթակայ ամէն տեսակ քայքայման եւ անատակ որեւէ նպատակ հետապնդելու: Ընդունել ծրագիր ու գործելակերպ, բայց գործել ու որոշել անջատօրէն իբր «ազատ» քաղաքացի, իբր «անկախ» միաւոր - սա անարժէք է կուսակցական տեսակէտից: Եւ «դաշնակցական» համարուել չի կարող մէկը, որ այս ընթրնումն ունի հանրային գործերի մասին: Սրանք անձնապատասխան մեծամիտներ են, որ յաւակնութիւն ունին կուսակցական «ամբոյսն» իրենց յետեւից քաշելու, կամ պատահական ուղեկիցներ են, որ խառնում են գործակատար «ամբոյսին»: Լաւագոյն դէպքում սրանք առժամեայ գործակիցներ են, ինչպէս անցորդը, որ օգնում է կառքը շրջած կառապանին: Բայց կառապանն իր ճամբան ունի եւ իր նպատակը, անցորդն՝ ի՞ր ճամբան: Այս տեսակ անկազմակերպ ուժերը, որքան եւ համակիր ու համամիտ լինեն մեզ, անարժէք են կուսակցական տեսակէտով, եթէ մինչեւ իսկ հազարների հասնեն: Դրանք չեն կարող կուսակցութեան յենարան լինել, քանի որ կապուած չեն իրարու կանոնադրապէս եւ ենթակայ չեն միեւնոյն որոշումներին: Ինքնաբաւ անհատներ են, ազատ ու անկախ, եւ այդ իսկ պատճառով իրարամերժ: Նրանք գերադասում են իրենց կարծիքը ընկերների որոշումներից եւ իրենց կամքը՝ որոշումների պարտադրանքից: Հնազանդիլը նրանց թւում է «ստրկկութիւն», եւ կարգապահութիւնը՝ տափաւորութիւն: Ճկում են գլուխը գերազանց անհատական ուժի առջեւ, ծառանում են հաւասարի դէմ՝ ստեղծելով կազ ու կռիւ, եւ բռնանում են թոյլերի վրայ եւ իրենց քմայքը օրէնք հռչակում: Սրանք ըմբոստ անդամներն են կազմակերպութեան, եթէ մտած են արդէն շարքերը եւ անխուսափելի տարերքն

են մասնակի մարմինների քայքայման եւ ընդհանուր կուսակցութեան պառակտման: Եւ Կանոնագիրն իրաւամբ պահանջում է -դեռ եւս Դաշնակցութեան շէնքը չկոխած- որ թեկնածուն յանձնառու լինի ենթարկուելու կուսակցութեան «Կանոնագրին եւ որոշումներուն».: այսինքն պատրաստ լինի հրաժարուելու իր «կարծիքից» ու «կամքից» ընկերների մշակած կարծիքն ու կամքը որդեգրելու համար. մէկը տարածելու եւ միւրը՝ գործադրելու: Այլապէս նա հրաժարում է «դաշնակցական» կոչումը տալ այդպիսի մէկին, թէկուզ եւ նա ընդունի մեր ծրագիրն ու գործելակերպը լիովին եւ նոյն մտայնութիւնն ունենայ ինչ որ մենք:

Սրանով, սակայն, չի վերջանում Կանոնագրի պահանջը մեր թեկնածուներից: Բաւական չէ նոյն ծրագիրն ու գործելակերպն ունենալ եւ նոյն Կանոնագրին որոշումներին ենթարկուել: Կանոնագիրը պահանջում է նաեւ «ամէն ջանք թափել իրականացնելու զսկոնք»: Սա մի հիմնական պահանջ է: Կանոնագիրը գործօն անդամին է շնորհում «դաշնակցական» կոչումը եւ ոչ կրատրական ենթակային: Նա հնազանդութիւն է պահանջում Կանոնագրին եւ որոշումներին ոչ թէ անդամների կորովը մեռցնելու համար, այլ նրանց աշխատանքը ընդհանուրի որոշած հունով վարելու համար: Որովհետեւ Դաշնակցութիւնը ոչ թէ կրատր անձերու խմբակցութիւն է՝ ենթակայ զօրաւոր անհատների կամեցողութեան, այլ գործօն անդամների կազմակերպութիւն է՝ Կանոնագիր եւ որոշումներ «ընդունող»: Դաշնակցականը ոչ թէ հլու հնազանդ է Կանոնագրի եւ որոշումների, այլ նա «ընդունում» է Կանոնագիրն ու որոշում. այսինքն հնազանդում է գիտակցաբար եւ դարձնում է նրանց իր ներքին խթանը, որով իր «հնազանդութիւնը» դառնում է «համամարտիւն» եւ իր գործը «անչնակաս», «սեփական» կամքի գործադրութիւն: Նա դառնում է «համակամ» իր ընկերներին եւ ոչ թէ «հնազանդ» սրան կամ նրան: Նա կատարում է որոշումները, որովհետեւ համոզումով յարում է նրանց ու հնազանդում է Կանոնագրին, որովհետեւ «համարում» է անհրաժեշտ: Այս պատճառով նրա հնազանդութիւնը ստրկամտութիւն չէ, այլ ինքընտիր պարտադրանք: Նա գիտակցաբար լուծ է դնում իր վզին, հանրային գործի աայլը քաշելու համար. եւ պիտի քաշէ «ամէն ջանք թափելով», այլապէս «դաշնակցական» կոչուելու արժանի չէ: Այդպէս է հրամայում Կանոնագիրը եւ ա՛յդ յանձնառութեան հիման վրայ նա թեկնածուին «դաշնակցական» անունն է տալիս:...

*

* * *

...Ունենալ նոյն մտայնութիւնն ու ծրագիրը, ենթարկուել նոյն Կանոնագրին ու որոշումներին եւ ամէն կերպ աշխատել նրանց

իրացման համար - արդէն բաւական է որ մարդ համարուի «դաշնակցական»:

Բայց Կանոնագիրը երկրորդ յօդուածով դնում է լրացուցիչ երկու պահանջներ. նրանք եւս պէտք է գոհացուին լրիւ դաշնակցական կոչուելու համար: Առաջինն ասում է, որ «*հրաքանչիւր դաշնակցական*» (նկատէք, որ Կանոնագիրը երեք հիմնական պահանջներին գոհացում տուողին արդէն անուանում է «*դաշնակցական*») պարտաւոր է անդամակցիլ որեւէ դաշնակցական խմբի: Յանձն առնելով «*ենթարկուիլ*» Կանոնագրին եւ որոշումներին՝ դրանով իսկ թեկնածուն պարտադրաբար պէտք է կատարէ եւ ա՛յս պահանջը, քանի որ սա Կանոնագրի յօդուած է եւ հետեւաբար՝ կուսակցական որոշում: Բայց այս պահանջը պէտք է գոհացուի ո՛չ ձեւական պատճառով միայն: Այս պահանջին անհրաժեշտ է գոհացում տալ, որովհետեւ Դաշնակցութիւնը համամիտ մարդկանց մի պատահական խմբակցութիւն չէ, այլ մի **կազմակերպութիւն** է. այսինքն մի մնայուն մարմին է, որ ամէն օր եւ ամէն ժամ իր գործն ունի եւ հետապնդում է իր ծրագիրը: Նա չի գործում պոռթկումներով եւ ընդհատ, այլ հետեւօրէն ու շարունակ: Իր անդամները չեն հաւաքում երբեմն, որոշ գործի համար, իրար հետ խորհրդակցում, որոշում կայացնում, գործի ձեռնարկում, յաջողում կամ ձախողում ապա ցրում՝ մի ուրիշ անգամ, ուրիշ տեղ, ուրիշ առիթով նորից հաւաքուելու եւ ուրիշ գործ կատարելու համար, այլ նրանք կապուած են իրար որոշ կանոնագրով եւ հետապնդում են որոշ ծրագիր՝ շարունակ եւ հետեւօրէն: Դաշնակցականը մեկուսի ասպետ չէ պայքարի դաշտում, այլ ասպետական մի կարգի անդամ: Կանոնագիրը չի ճանաչում մեկուսի անհատներ, իրարից անկախ աշխատատրներ, որ մի օր միացած են ու գործակից, միւս օրը բաժան ու անձնընթաց: Նրանց աշխատանքը կազմակերպուած է, ճիգերը համադրուած են, պարտականութիւնները ճշտուած են, իրաւունքներ որոշուած են եւ ոչ թէ մի օրուան ու մի գործի համար, այլ մի ծրագրի եւ ամէն օրուան համար: Դաշնակցականն անդամ է մի «*կուսակցութեան*», այսինքն **զինուոր է մի քաղաքական բանակի**: Այս պատճառով Կանոնագիրը պահանջում է, որ ամէն մի դաշնակցական **որեւէ խմբի անդամ լինի**, անկախ իր դիրքից կուսակցութեան մէջ: Նա պահանջում է, որ ամէն անդամ կազմակերպօրէն կապուած լինի իր ընկերների հետ եւ ոչ թէ մնայ մեկուսի, որքան եւ շքեղ լինի այդ մեկուսացումը: Կուսակցութեան անդամները «*ընկեր*» են իրար ոչ միայն այն պատճառով, որ նոյն Ծրագիրն ու Կանոնագիրն ունին, այլ որ նոյն կազմակերպութեան անդամ են՝ որեւէ խմբի միջոցով: Նոյն ծրագիրն ունենալ -նշանակում է համամիտ լինել եւ համախոհ. նոյն կանոնագրի որոշումներին ենթարկուել - նշանակում է նոյն

իրաւունքն ու պարտականութիւնը ունենալ. բայց նոյն խմբին անդամակցիլ ու դրանով միեւնոյն գործին սպասարկել - նշանակում է «ընկեր» լինել եւ նոյն կազմակերպութեան իսկական անդամ: Կազմակերպութեան մէջ խմբից դուրս չկան ուրիշ «ընկեր» անող կազմութիւններ. մնացածները «մարմիններ» են գործեր վարելու համար եւ «ժողովներ»՝ որոշումներ հանելու համար: Խմբի անդամ լինելով է, որ մէկը դառնում է Դաշնակցութեան անդամ եւ «դաշնակցական»: Մարմնի անդամ լինելը առժամեայ հանգամանք է. այսօր դու՛ն ես վարիչը գործերի, վաղը կարող եմ ե՛ս լինել: Սա ոչ թէ կոչման, այլ կարողութեան խնդիր է: «Դաշնակցական» կոչուելու համար հարկ չկայ որ մէկը դաշնակցական մարմնի անդամ լինի, մինչդեռ անկարելի է իսկական դաշնակցական նկատել մէկին, որ խմբի անդամ չէ: Ինչպէս հանրային առաքինութիւնները նախ ծրու մ ո գորանում են ընտանիքի մէջ, յետագային փարթամօրէն աճելու համար հանրային կեանքի լայն դաշտում, այնպէս էլ կուսակցական առաքինութիւնները ծրում ու գորանում են խմբերի որրանում, յետագային աճելու համար գործի լայն ասպարէզում: Կուսակցութեան հիմունքը խմբերն են կազմում եւ նրա գորութեան գրաւականը այն բարոյական շաղախն է, որով խմբի անդամները սերտօրէն կապուում են իրար: Խմբերի շնորհիւ է, որ կուսակցութիւնը մնացած է եւ մնում է անխորտակելի, հակառակ ահաւոր փորձութեանց: Կայծակը կարող է զարկել հաստաբուն կաղնուրն եւ խորտակել նրա կատաղը կամ այս ու այն բազուկը, բայց նուազ կարող է ազդել նրա արմատներին, որ թաղուած են հողի տակ: Նրանք են որ կենսատու հիօթը դարձնում են անապառ եւ համեստ ու յարատեւ աշխատանքով դարմանում են փոթորկի աւերը:

Ահա թէ ինչու է Կանոնագիրը իմաստօրէն պահանջ դնում, որ «դաշնակցականը» որեւէ խմբի անդամ լինի եւ դրանով մաս կազմէ հանուր կազմակերպութեան: Կանոնագրի տառն ու ոգին իսկական «դաշնակցական» չեն համարում այն մարդուն, որ դաշնակցական դաւանանք ու գործելակերպ որդեգրելով՝ անդամ չի դառնում որեւէ խմբի եւ մնում է մեկուսի: Խմբից դուրս անդամը կարող է անհատապէս մեծարժէք լինել ու երբեմն մեծ ծառայութիւն մատուցանել կուսակցութեան, բայց որեւէ խմբի չանդամակցելով՝ նա անհաղորդ է մնում սոսկական ընկերների առօրէական չար ու բարուն, որ կուսակցութեան ամենօրեայ կեանքն է եւ նրա շնչառութեան տուր եւ առը, եւ դրանով մի տեսակ ուժացման է գնում՝ հանդիսաւոր կամ վճռական օրերին միայն հրապարակ իջնելով:

Խումբը կենդանի բջիջն է կենդանի կազմակերպութեան. նրան անդամակցիլ՝ նշանակում է կուսակցութեան կենդանութեան մասնակցիլ, նրա կայունութեանը զարկ տալ, նրա հիւսուածքները

թարմ եւ առողջ պահել եւ դրանով ընդունակ՝ իր հանրային դերը խաղալու: Խմբերի մէջ է, որ անդամները «ընկեր» են դառնում եւ «ընկերների» միջավայրն է, որ հերոս ու նահատակ է սնուցանում:

*

* *

Կանոնագիրը դնում է իր վերջին պահանջը - «կուսակցական տուրք վճարել Երջանային Ժողովի որոշած սակի համաձայն»: Ինչպէս որտե՛ս խմբի անդամակցելը, այսպէս եւ այժս պահանջը տուրքի վճարման, մի ստորադաս պահանջ է առաջին երեքի համեմատութեամբ եւ բխում է երկրորդ հիմնական պահանջից, որ ասում է թէ պէտք է ենթարկուել Կանոնագրին եւ որոշումներին, ինչպէս եւ չորրորդ պահանջից՝ «ամէն ջանք թափելու» մասին:

Կանոնագիրը որտե՛ս շրջանի գերագոյն ժողով ճանաչում է այդ վայրի Երջանային Ժողովը: Նրա որոշումները պարտադիր են շրջանի բոլոր ընկերների համար: «Դաշնակցականը» պարտաւոր է ենթարկուել իրաւասու ժողովների որոշումներին: Այդ որոշումները վերաբերում են նաեւ սակին, որի համեմատ պէտք է կուսակցական տուրք վճարել: Հետեւապէս սակի մասին եղած որոշումները նոյնպէս պարտադիր են «դաշնակցական» մարդու համար: Եւ, ուրեմն, կուսակցական տուրք հատուցանել՝ նշանակում է դաշնակցական պարտականութիւն կատարել: Բայց տուրքի պահանջը այս ձեւական կողմից չէ, որ արժանի է ուշադրութեան: Կանոնագիրը «ամէն ջանք թափել» պարտադրելով, կարող էր եւ տուրքի հատուցումը «ամէն ջանք»ի մէջ հասկանալ, բայց նա այդ մէկ «ջանքը» զատած է եւ կանոնադրական յատուկ կէտի նիւթ է դարձրած, հետեւապէս հարկ է համարած յատուկ յիշատակելու:

Կանոնագիրն իրաւունք ունի այս մասնաւոր պահանջը առանձնապէս շեշտելու, որովհետեւ տուրքի հատուցումը նիւթականից աւելի բարոյական մեծ կշիռ ունի: Ոչ մէկ հանրային գործ կարելի է կազմակերպել ու վարել առանց նիւթական միջոցների, իսկ մի լայն ու տեւական ազատարար շարժում՝ առաւել էւս: Այսպէս է նաեւ կուսակցութիւնն ու իր գործը: Դաշնակցութեան նպատակները համագալին են եւ համամարդկային: Ոչ ամենքը գիտակից են մեր կուսակցութեան այս բնոյթին ու դերին: Դաշնակցականը, սակայն, պարտաւոր է գիտենալ իր կուսակցութեան արժէքն ու դերը մեր եւ մարդկային կեանքում: Մենք կարող ենք ակնկալել, որ «ազգը» երբեւիցէ կը հասնի այն գիտակցութեան թէ Դաշնակցութիւնը պատմական ազդակ է հայոց կեանքի մէջ եւ իր գիտակցութեան չափով՝ նիւթապէս կը նպաստէ նրա գոյութեան ու գործին. բայց մենք ոչ մէկ **պահանջ** կարող ենք ուղղել «ազգին», որքան եւ նա տիտղոսաւոր եւ դրամա-

տէր տարրեր ունենայ: Դաշնակցականը, սակայն, որ գիտակից է իր կուսակցութեան արժէքին եւ դերին մեր կեանքին մէջ, **պարտաւոր** է այդ գիտակցութեան համեմատ նիւթապէս նեցուկ դառնալ **իր** կուսակցութեան: Այդ «գիտակցութիւնը», սակայն, անհատական չէ, այլ խմբական, ժողովական: Ոչ մէկ սահման կայ նիւթական զոհողութեան առջեւ դէպի վեր, բայց դէպի վար սահմանը գծում է Շրջանային Ժողովը: Նա որոշում է «նուագագոյնը», որ պարտադիր է «դաշնակցական» մարդու համար եւ թողնում է «առաւելագոյնը» ամէն մի «դաշնակցականի» գիտակցութեան չափին: Այսպիսով նիւթական զոհաբերութեան քանակը մի տեսակ չափանիշ է դառնում կուսակցական գիտակցութեան. ո՛չ միակ չափանիշը, բայց նիշերից մէկը եւ ամենից տարրականը: Այսպիսով Շրջանային եւ Ընդհանուր Ժողովների սահմանած սակերը յայտարար են ընկերների եւ շրջանների «դաշնակցական» գիտակցութեան աստիճանին, իսկ «ազգի» բերած կողմնակի օժանդակութիւնը յայտարար է նոյն «ազգի» գիտակցութեան ու գնահատանքին՝ Դաշնակցութեան դերի եւ նրա կատարած գործի արժէքին մասին. ո՛չ թէ բացարձակ առումով՝ իբր պատմական դեր ու գործ, այլ «ազգի» գիտակցութեան չափով:

Կուսակցական տուրքը նուագագոյն պարտականութիւնն է, որ մի «դաշնակցական» պէտք է կատարէ իր կուսակցութեան հանդէպ: *«Ամէն ջանք քափելու»* յանձնառութեամբ կուսակցութեան անդամակցողը ամենից առաջ «ջանքերի» այս նուագագոյնը պարտաւոր է կատարել: *«Ամէն ջանք քափելու»* գաղափարի մէջ շա՛տ աւելի պարտականութիւններ են մտնում քան կուսակցական տուրքի հատուցումը. անտեսումն ընտանեկան եւ անձնական բարօրութեան, արհամարհանք դիրքի եւ ազդեցութեան, ժխտում ամէն բարեկեցութեան եւ ապահով կենցաղի, վերջապէս գերագոյնը - մահ՝ բոլորը մտնում են «ամէն ջանքի» մէջ: Սրանց համեմատութեամբ կուսակցական տուրքը իրօք որ մի տարրական պարտականութիւն է: Սա առաջին դասն է նուիրումի, առաջին ցոյցը համոզումի անկեղծութեան: Նա որ տուրքը տալիս է սրտանց՝ կարող է յետագային իր աշխատանքն ու ժամանակը զոհաբերել եւ այդ ճամբին առաջանալով՝ հասնել մինչեւ կեանքի զոհաբերութիւն: Բայց նա, որ թերամում է այս տարրական պարտականութեան մէջ, յուսալի չէ, որ չթերանայ երբ կուսակցութիւնը նրանից աւելին պահանջէ քան տուրքի հատուցումն է: Ուստի Կանոնագիրը «ամէն ջանքերից» տարրականը -տուրքի հատուցումը- գատում ու դնում է իբր փորձաքար «դաշնակցական» մարդու որակը ճանաչելու: Նա, որ կատարում է Կանոնագրի միւս պահանջները եւ թերանում է այս մէկի մէջ, նա չի կարող իրաւամբ «դաշնակցական» նկատուել եւ դժուար է ընդունել, որ նա միւս պահանջների հանդէպ նուագ թերացող լինի, քան այս մէկի դէմ:

*
* * *

...Այսպիսով Կանոնագիրն իր չոր ու ցամաք երկու յօդուածով ուրուագծում է «դաշնակցական» մարդու գաղափարական տիպարը: Կարող եմ ասել, թե նա գծում է իսկական կուսակցական մարդու տիպարը՝ անկախ կուսակցութեան բնոյթից: Տասնամեակների հարուստ փորձ է խտացած այդ երկու յօդուածների մէջ: Նրանք նախորոշած են բոլոր գալիք փորձութիւնները եւ հաւասարակշռած են բոլոր հնարատր յաւակնութիւնները:

Մտաւորականին, որ ապաստանած է իր տեսական իմացութեան ուժին՝ Կանոնագիրը պարտադրում է հեռու մնալ մեկուսացումից, մտնել որեւէ խմբի մէջ իբր համեստ ու պարզ անդամ, Կանոնագիր, որոշում ու տուրք պարտադիր համարել նաեւ ի՛ր համար եւ «ընկերների» մշտական շփումով՝ կենդանի պահել դաշնակցական ոգին ու բարքն իր մէջ.- այլապէս զլանում է նրան «դաշնակցական» կոչումը: Գործնական ուժերին՝ [նա] պարտադրում է չապաստանել միմիայն գործին եւ դրանով արտօնուած համարել իրանց՝ միւս պահանջներն անտեսելու: «Գործն» այնքան արժէք ունի, որքան ծառայում է մի նպատակի: «Գործն» իր իմաստը Ծրագրից է ստանում: «Գործը» մի մարզանք է, ոչինչ աւելի, եթէ չի հետապնդում մի որոշ հանրային գաղափար: Գուցէ ինքն է բուն իսկ վարիչն այդ գործի. գուցէ հերոսը. բայց դա նրան մեկուսացման իրաւունք չի տալիս: Կազմակերպութիւնն այն պատուանդանն է, որ նա արձանանում է իբր հերոս ու վարիչ: Կուսակցութեան գոյութիւնն անհրաժեշտ պայման է իր հերոսութեան, նրա Կանոնագիրը՝ իր գործավարութեան. եւ կուսակցութիւնն է, որ ստեղծում է վարիչ ու հերոս եւ ոչ հերոսն ու վարիչը՝ կուսակցութիւն: Ճիշդ է, իր փառքը ճառագայթում է հեռուն ու նաեւ կուսակցութեան վրայ, բայց կուսակցութեան բոքբոք հնոցի մէջ է շիկանում փառքի մետաղը, ճառագայթելու համար հերոսի վրայ եւ հեռուները:

Կանոնագիրը սանձահարում է եւ այն մարդկանց, որ կարծում են թէ այնքան աւելի երախտիք ունին կազմակերպութեան վրայ, որքան աւելի նիւթական մեծ զոհողութիւն են արած: Նրանց յիշեցնում է, որ համեստ խմբի պարզ անդամները, որ տեսական տուրքերով եւ աշխատանքով կանգուն են պահում կազմակերպութիւնը՝ նուազ երախտատր չեն քան ինքը, որ դրամ է վճարում, առանց միւս յանձառութեանց: Կուսակցութեան ծրագիրն ու կանոնագիրը ընդունող եւ «ամէն կերպ» գործադրող պարզ ընկերը շատ աւելի մեծ արժէք ունի քան նա, որ կուսակցութեան ներսն է, բայց իր դերը տուրքով համարում է վերջացած. կամ դուրսն է եւ աջակցում է իբրեւ համակիր: Կանոնագիրը ներշնչում է նրանց, որ կուսակցութեան

դերն ու բախտը ոչ թե նրա նիւթական միջոցներից է կախուած, այլ նրա կազմակերպական շաղախից եւ անդամների պատրաստական եւ համադիր ճիգերից. որովհետեւ՝ ուր կայ կուռ ու գործօն կազմակերպութիւն՝ այնտեղ միշտ հնարատր է նիւթական միջոցներ գտնել, բայց ուր կան նիւթական միջոցներ՝ դեռ չի նշանակում, որ կարելի է գաղափարական կազմակերպութիւն ու մթնոլորտ ստեղծել: Կարելի է մի առժամեայ շահախնդիր խմբակցութիւն առաջ բերել եղած դրամը վատնելու համար եւ դրամի վատնումով կը վերանայ նաեւ «կազմակերպութիւնը». որովհետեւ դրամը մեծարժէք է գաղափարներ հետապնդելու համար, բայց առանց գաղափարների եւ նուիրման՝ կուսակցութիւն լինել չի կարող: Ծրագիրն արելի հիմնական է քան դրամը. Ծրագիրը կարող է դրամ գտնել, բայց դրամը կուսակցական Ծրագիր ստեղծել չի կարող:

Վերջապէս, այն մարդկանց համար, որ առանց մտայնութեան նոյնութեան եւ Ծրագրի միութեան, լոկ «գործերի» սիրուն սպրդած են կազմակերպութեան մէջ եւ կուսակցութիւնը համարում են մարգավայր՝ Կանոնագրի յօդուածները տեսական եւ արթուն սպառնալիք են, որ հսկում են նրանց քայլերին: Թոյլ տալով, որ մինչեւ մի որոշ ժամանակ իրենց գործակցութիւնը բերեն մեր կուսակցութեան, յաճախ հասցնելով նրանց կուսակցութեան, հանրային եւ պետական բարձր դիրքերի՝ Կանոնագիրն իր անողոր խստութեանը իջնում է նրանց համբաւի վզին իբր պատուհասող սուր եւ ործկում է իբր անմարսելի կերակուր, երբ նրանք փորձ են անում իրենց ոչ կուսակցական մտայնութեամբ կուսակցութեան ճամբան թեքելու եւ իրենց ոչ կուսակցական բարքերի դրոշմը կուսակցութեան գործերի վրայ դնելու:

Կանոնագրի երկու հիմնական յօդուածները ցուցափայտեր են, որ մատնանշում են «դաշնակցականի» ուղին. նրանք չեն փակում ճամբան, այլ ազդարարում են որ չչեղուն: Նրանք յիշեցնում են շարունակ «դաշնակցականի» կոչումը եւ դրդում են շարունակ առաջ գնալ «ամէն ջանք թափելու» ճամբով: Նրանք արգելք չեն, որ մտաւորականը միշտ արելի խորանայ տեսական խնդիրների քննութեան մէջ եւ միշտ արելի լաւ հիմունքներ ու ձեւակերպութիւն գտնէ Ծրագրի եւ Կանոնագրի համար: Նրանք քաջալերում են գործնական ուժերին միշտ ազդու եւ յարաճուն գործունէութիւն հանդէս բերելու եւ որքան գործիչը հմտանում ու մտերմանում է իր գործին՝ այնքան արելի դիրք է գրաւում կուսակցութեան մէջ եւ ընկերների յարգանքը շահում: Կանոնագիրը դրդում ու քաջալերում է գոհողութեան ոգին եւ «դաշնակցականի» գնահատում է նրա գոհողութեան չափով: Կուսակցութիւնը չի ճանաչում ազդեցութեան որեւէ նիւթական աղբիւր.

«դաշնակցականը» հեղինակութեան հասնում է անվերապահ նուիրումով: Իսկ նրանք, որ զոհաբերում են մեծագոյնը աշխարհում -իրենց կեանքը- կուսակցութիւնը դատում է նրանց իր նահատակների շարքը եւ պաշտամունք է ստեղծում նրանց անուան ու յիշատակի շուրջը:

Այսպիսով Կանոնագիրն անողոք ու խիստ է շեղընթացների հանդէպ եւ հովանաւոր ու քաջալեր նրանց, որ ճգնում են ուղիղ ճամբան քալելու: Նա գնահատում է սլացքը դէպի գաղափար եւ պատուհասում է շեղումը Ծրագրի ճամբից եւ ընդհանրապէս հանդուրժում է սիրով այն բոլոր անդամներին, որ շարունակ աշխատում են միշտ աւելի արդարացնել իրենց «դաշնակցական» բարձր կոչումը:...

*
* *
*

...Ես աշխատեցի պարզել «դաշնակցական» մարդու գաղափարական տիպարը: Ուշադրութեան արժանի է «դաշնակցական» մարդու մի տիպար միայն: Իր գաղափարական առումով Դաշնակցութիւնը համատեսակ տիպարների միութիւն է, որ նշանակում է, թէ բոլոր դաշնակցականները աւելի կամ պակաս նոյն կաղապարով ձուլուած մարդիկ են: Այս հանգամանքն շատերն են նկատած եւ ամէն օր կարելի է ստուգել, բանալով աշխարհի հեռաւոր վայրերում լոյս տեսնող կուսակցական թերթերը եւ տեսնելով միօրինակ վերաբերում միեւնոյն խնդիրների հանդէպ: Սա արտաքին յայտարարն է մտայնութեան նոյնութեան: Թերթերը չեն գրում ամէնօրեայ հրահանգի համաձայն, խմբագիրներն են որ մտածում են որոշ ուղղութեամբ: Որոշ կաղապարով ձուլուած մտայնութեան հետ է մեր գործը եւ ոչ թէ որոշ կարգադրութեան հնազանդ մարդկանց: Եթէ քննութեան առնենք «դաշնակցական» գործերը, ուր եւ կատարուեն, մենք կը նկատենք նոյն ընթացքը նաեւ գործի մէջ, որ յայտարար է «գործելակերպի» նոյնութեան: Այստեղ եւս կարգադրութիւն չէ, որ կատարում են մեր ընկերները (քանի որ ամէն շրջան իր գործերն ունի եւ կուսակցութիւնն ապակենտրոն է), այլ նոյն կաղապարով ձուլուած կամքերի արդիւնք է այդ երեւոյթը: Կուսակցական կաղապարն է նոյն, ուստի եւ ձուլուածքները նման են իրար: Սա նշանակում է թէ Դաշնակցութեան անդամները իմացական ու բարոյական կառոյցի հիմնական գծերով մօտաւորապէս նման են իրար: Այս հիմնական հէնքի վրայ ամէն մի «դաշնակցական» իր նկարն է գործում՝ գորգի զարդերի նման: Տարբեր են գոյները, տարբեր՝ նկարն ու դասաւորութիւնը, տարբեր՝ մեծութիւնը, բայց նոյն է հէնքը եւ բոլորն էլ գորգ են:

Այս պատճառով Գաշնակցութիւնը թէւ ընկերային կազմակերպութիւն է, բայց նա նման չէ պետական կազմակերպութեան: Արտաքուստ նայելով՝ թուում է թէ նա շատ գուգահեռ ունի պետութեան հետ, բայց խորքը դիտելով՝ մենք տեսնում ենք, որ անմնան են իրար: Գաշնակցութեան մէջ չկայ մասնագիտացում եւ պէտք չէ, որ լինի: Այսօրուան խմբագիրը վաղը կարող է քարոզիչ դառնալ, միւս օրը խմբապետ, երրորդ օրը մաուզերիստ: Այս ճկուն կերպարանափոխութիւնը արդիւնք է նրա «դաշնակցական» կոչման, սա ճառագայթումն է նրա տիպարի: Կարող է մէկի մէջ շեշտուած լինել ռազմիկի կարողութիւնը, միւսի մէջ՝ տեսական մտքի ուժը, երրորդի մէջ՝ խօսքի շնորհքը, չորրորդի մէջ՝ կազմակերպելու տաղանդը, բայց երբ հարկը պահանջեց՝ ամենքը պարտաւոր են գէնք առնելու եւ կռուի դաշտ իջնելու, թողնելով մէկն իր յօդուածը, միւսն իր բեմը, երրորդն իր ժողովը: Կամ ընդհակառակն, երբ պէտք է Կանոնագիր մշակել եւ որոշումներ կայացրնել, այստեղ ձայն ունեն են տեսաբանը, եւ բեմբասացը, եւ կազմակերպիչը եւ մարտիկը: Չկայ մի ասպարէզ, որ վերապահուած լինի միմիայն որոշ ընկերների եւ գոցուած լինի միւսների հանդէպ: Կանոնագիրը պահանջում է «ամէն ջանք թափել» իրականացնելու Ծրագիրն ու որոշումները, եթէ դրա համար պէտք է, որ մէկը խօսէ եւ չկայ ընկեր, որ խօսքի շնորհք ունենայ՝ բեմ է բարձրանում լեռների մարտիկը. եթէ պէտք է ակաբեկում կատարուի եւ յարմարագոյն մարդը չկայ, գնում է գործի՝ կուսակցութեան հիմնադիրն ու տեսաբանը:

Գաշնակցութեան մէջ **չկայ եւ չի կարող լինել մասնագիտացում**, որովհետեւ մեր կուսակցութիւնը ոչ թէ մասնագէտների միութիւն է, այլ հանրային որոշ տիպարների ընկերութիւն. մարդիկ, որ սուր ականջ ունեն հայութեան տառապանքի ճիչը լսելու, ուր եւ նա հնչէ եւ որ շարունակ իրենց Ծրագիրն ունեն աչքի առջեւ: Նրա իրացումը պահանջում է բազմազան աշխատանք, ուստի կուսակցութեան մէջ չէ եղած եւ պէտք չէ, որ լինի որեւէ գործից հրաժարում: Կարող է առարկութիւն լինել այս ու այն անդամի յարմարութեան մասին, բայց խօսք չի կարող լինել կուսակցութեան պահանջը մերժելու մասին: Այս ոգին է, որ կուսակցական համեստ ընկերներին դարձնում է հերոս, պարտադրելով կատարել գործեր, որ առաջին նուագ թում են անհնարին նրանց ուժերի համար: Համարձակութիւն չի լինի եթէ ասեմ, թէ «դաշնակցականի» համար անհնարին բան չկայ իր Ծրագրի իրացման ճամբին: Յիշեցէք կուսակցութեան անցեալը եւ պիտի հանդիպէք փափկասուն մարդկանց, որ «դաշնակցական» կոչումին հաստարիմ՝ դարձած են խստաբարոյ եւ լեռնակեաց մարտիկին հասար ընկեր, մոռանալով իրենց սովոր հանգիստը եւ դիրտատար պայմանները: Անշուշտ, ղեկավար մարմինների գործն է ընկերներին դասատրել այնպէս, որ նրանք լաւապէս օգտակար լինեն, բայց

«դաշնակցականը» պարտական է գնալ ամեն գործի, որ պահանջում է կուսակցութիւնը, որովհետեւ նա մի հանդիսատար ժամի յանձնառու եղած է «ամեն ջանք թափել» իրացնելու կուսակցութեան ճրագիրն ու որոշումները:

Կուսակցութեան հաւատարիմ անդամները գիտեն, թէ յաճախ որքա՛ն անողոր եղած է Դաշնակցութիւնը եւ կը յիշեն անշուշտ հարիւրատը ընկերներ, որ հնազանդ ու սիրով ենթարկուած են կուսակցութեան անողոր որոշումներին: Այս անողոր դպրոցին մէջ են մարզըում «դաշնակցական» մարդու կուսակցական բարձր առաքինութիւնները, որ ոչ միայն կուսակցական են, այլ եւ մարդկային: Իրենց դաժան գեղեցկութեամբ իրենք իշխում են մարդու հոգում եւ գերում են առմիշտ՝ ստեղծելով նահատակներ ու հերոսներ: Այս մուրճի տակ է, որ կոփում են անձեւ հոգիները եւ այս բովի մէջ է, որ պողպատանում են երեքուն կամքերը: Դաշնակցութիւնն այսպիսով, ոչ միայն դառնում է քաղաքական գորատը ազդակ, այլ եւ հայ տիպարի ազնուացման ազդու մարգարան: Եւ որքան աւելի «դաշնակցական» են դառնում մեր ընկերները, այնքան աւելի խորանում է նրանց բաժանող խրամատը հայութեան միւս տիպարից: Այս երեւոյթը ոմանք տհաճութեամբ են դիտում, միմչդեռ պէտք է գոհութեամբ լցնէր ամենքիս սիրտը, որովհետեւ **ոչ ամէն խրամատ ու պառակտում աւերիչ են.** կայ շինարարութիւն, որ միայն պառակտումով հնարատը է եւ խրամատով գորացող: Ազգային նկարագրի ազնուացումը այդ շինարար գործերից մէկն է: Ոչինչ առնչութիւն կարող է լինել անողնայար սրիկայի եւ գաղափարատենչ մարտիկի միջեւ: Ազգային ծագումն արգելք չէ, որ նրանք իրար հիմնապէս ժխտեն: Սրիկան միայն վախ եւ ատելութիւն կարող է սնուցանել իր հոգում գաղափարական մարդու հանդէպ. իսկ սա արգահատանք եւ արհամարհանք՝ նրա ճկուն կենցաղի դիմաց: Մէկն ստիպուած է կեղծ ու թաքուն գործելու, միւսը շիտակ է եւ ինքնավստահ. որովհետեւ մէկը հետամուտ է իր անձնական բարիքին եւ խորշանք ունի բարոյական ճիգի դէմ. երկրորդը սլացք ունի դէպի գաղափար եւ իր թռիչքի ընթացքին հազիւ նկատում է կենքի բարիքը: Եւ որքա՛ն շահաւէտ ու փայլուն ասպարեզներ լքած է «դաշնակցականը» իր գաղափարին ծառայելու համար. ասպարեզներ, որ շատերի երագն են կազմում: Եւ որքա՛ն անձնուէր ու մաքուր սէրեր մերժած է «դաշնակցականը», խորտակելով քնքուշ հոգիներ, որոնց մասին գաղափար իսկ չունի սրիկան: Կեանքըն այսպիսով նպատակ չէ «դաշնակցական» մարդու համար. նա միջոց է ճրագիր հետապնդելու եւ որոշումներ իրացնելու: Մի շատ համեստ խօսք՝ *«ամէն ջանք թափել»*, ազդակ է դառնում մարդկային տիպարի ազնուացման եւ խթան՝ գերագոյն գոհաբերութեան, որովհետեւ երբ ասում է *«ամէն ջանք»*, այլ եւս տեղ չի թողնում, որ

ապաստանես հմտութեան պարսպին եւ հրաժարուես պարտքից՝ անհմտութեան պատրուակով: Դ-ա մի կոչ է, որ կազմակերպական Կանոնագիրն ուղղում է բոլոր «դաշնակցականներին»՝ պատրաստ լինել ամէն ժամ եւ ամէն տեղ կատարելու այն գործը, որ անհրաժեշտ է, անկախ այն բանից՝ «մասնագէտ» ես թէ ոչ: Դաշնակցութեան մէջ մասնագէտներ չկան. կան **միմիայն** «դաշնակցականներ»:

Այս չի նշանակում, որ Դաշնակցութիւնը դէմ է մասնագիտութեան կամ հակառակ է մասնագէտներու օգտագործելուն: Սա **նշանակում է միայն, որ «դաշնակցական» ըմբռնումի մէջ «մասնագէտ» գաղափարը տեղ չէ գրաւում:** «Դաշնակցականը» կարող է մասնագէտ լինել, բայց **իր մասնագիտութեամբ չէ, որ «դաշնակցական» է.** ինչպէս եւ մասնագէտը կարող է դաշնակցական գործին մեծապէս նպաստել, բայց դրանով «դաշնակցական» չի դառնում: Հայ-թաթարական ընդհարումների ժամանակ մենք մասնագէտ գողեր ունէինք, որ զօրանցներից զէնք ու փամփուշտ էին գողանում մեզ համար, բայց նրանք «դաշնակցական» չէին, ինչպէս ուրիշ վայրերում «դաշնակցականներ» կային, որ նոյն գործն էին կազմակերպում ու կատարում, առանց, սակայն, մասնագէտ գողեր դառնալու: «Դաշնակցական» մաքսանենգներ եղած են, որ մեծաքանակ զէնք ու փամփուշտ փոխադրած են սահմանից սահման, բայց եւ ոչ մի ապրանք չեն փոխադրած անձնական շահի համար, ինչպէս եղած են մասնագէտ մաքսանենգներ, որ իրենց փոխադրած անձնական ապրանքի հետ փոխադրած են եւ մեր զինամթերքն ու գրականութիւնը: Սրանով «դաշնակցականը» մաքսանենգ չի դարձած եւ մաքսանենգը՝ «դաշնակցական»: Մէկն աշխատած է *«ամէն ջանք թափել»* իր Ծրագիրն ու կուսակցութեան որոշումներն իրագործելու, միւսն իր անձնական շահին նոր շահեր բարդելու: Եւ յաճախ է պատահած, որ «դաշնակցական» գործ կատարելով, մասնագէտ գողն ու մաքսանենգը մկրտուած են նոր աւազանում եւ դարձած են տիպար յեղափոխական, ամէն դասի մարդկանց հիացումը խլելով: Դաշնակցական Խեչօն, որ հայ ժողովրդի ազնուագոյն գաւակներից մէկն եղաւ, մի պատանի գրպանահատ էր... Ոչ ամէն զինուորական, որ կռուած է Դաշնակցութեան դրօշի տակ իր կեանքը վտանգելով՝ դրանով իսկ դարձած է դաշնակցական, բայց շատ «դաշնակցականներ» *«ամէն ջանքի»* թելադրանքին հնազանդ՝ մտած են կռուի ասպարէզ ու դարձած զինուորական: «Դաշնակցական» կոչումը մասնագիտութիւն չէ. նա որոշ բարոյական կառուցուածք է մատնանշում, որոշ Ծրագիր ու Կանոնագիր, իսկ մասնագիտութիւնը որոշ կարողութիւն է, որ «դաշնակցութիւն» չի ենթադրում: Ուստի պէտք չէ զարմանալ, որ կան հազարաւոր գիտացիներ, բանուորներ, եւ արհեստաւորներ, որ «դաշնակցական» են անկախ իրենց արհեստից,

եւ կան շատ տիտղոսաւոր մասնագէտներ, որ «դաշնակցական» չեն եւ լինել չեն կարող, կրկին անկախ իրենց արհեստից: «Դաշնակցականը» մի տիպար է, որ երբ հարկը պահանջէ կարող է եւ պարտաւոր է մասնագիտանալ, բայց մասնագէտը չի կարող «դաշնակցական» դառնալ՝ **ապաւինած միմիայն իր մասնագիտութեան:** Դրա համար պէտք է «դաշնակցական» մտայնութիւն ունենալ եւ «դաշնակցական» բարոյական կառուցուածք: ...

«Մտածումներ Ջ.Յ. Դաշնակցութեան մասին», Ն. Աղբալեան

2

ԿԱՆՈՆԱԳԻՐ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Մեր կուսակցութեան չպատկանող մարդիկ, տեսնելով մեր կարգապահ շարքերը գործի ժամանակ եւ մտածումի նոյնութիւնը ժողովների եւ մամուլի մէջ՝ կարծում են, թէ Դաշնակցութիւնը մի բռնապետական կազմակերպութիւն է, որ կաշկանդում է իր անդամների մտածումն ու կամքը եւ պատրաստում է հլու եւ հնազանդ հետեւորդներ: Մենք գիտենք սակայն, թէ այդ կարծիքը մի թիրիմացութիւն է եւ թերամտութեան արդիւնք: Թիրիմացութեան պատճառն այն է, որ այդպէս կարծողները լաւապէս ծանօթ չեն մեր կուսակցութեան ոգուն ու կենսքին, իսկ թերամտութիւնը պարզ երեւում է, երբ տեսնում ենք, թէ նրանք ծանօթ չեն ընկերային երեւոյթների գիտական մեկնութեան եւ քաղաքական պայքարների հոգեբանական կողմին, նրանց պատմական անցեալին եւ ներկայ վիճակին: Լինելով անկազմակերպ մի գանգուած՝ նրանք չեն կարողանում հասկանալ կազմակերպութեան արժէքն ու բնոյթը. լինելով սահմանափակ կամ մասնակի իմացութեան տէր՝ նրանք չգիտեն, որ քաղաքական պայքարի մէջ յաջողելու համար անհրաժեշտ է մտածումների, բայց մասնաւոր կամքերի տեսական համադրութիւն:

Մի կէտ ճշմարիտ է. դաշնակցականը **պէտք է** ընդունի իր կուսակցութեան ծրագիրն ու կանոնագիրը եւ երդումով հաստատէ իր համամտութիւնն ու հնազանդելու յօժարութիւնը: Բայց այս պարագան ո՛չ թէ բռնութիւն է, այլ պայման, ինչպէս թատրոնի տոմար յաճախորդի համար. առանց տոմարի թատրոն մտնողը չի կարող բռնութիւն համարել, երբ դռնապանը նրան ներս չառնէ: Ոչ որ չի ստիպում, որ մէկն անպատճառ դաշնակցական լինի. բայց եթէ փափաք ունի

դաշնակցական դառնալու՝ **պետք է** ընդունել կուսակցութեան ծրագիրն ու կանոնագիրը եւ իր յօժարութիւնը երդումով հաստատել: Երբ մէկն իբր հաւասար եւ նոյնիրաւ ընկեր անցնի կազմակերպութեան շարքերը, այնուհետեւ նա լիովին ազատ է իր կարծիքը յայտնելու մեր կուսակցութեան թէ՛ ծրագրի, թէ՛ կանոնագրի, թէ՛ գործի մասին. նա ազատ է խնդիր յարուցանել ծրագիրն աւելի որոշ ու լրիւ ձեւակերպելու, կանոնագրի այս կամ այն կէտը գեղջելու կամ փոխելու, կուսակցութեան հերթական գործին այս կամ այն նոր ընթացքը տալու մասին. մի խօսքով նա իրաւունք ունի իր կուսակցականի հանգամանքը լիովին արժեցնելու:

Բայց այստեղ մի կարեւոր հանգամանք կայ, որ պետք է խստօրէն ուշադրութեան առնել: Այո՛, ընկերն ազատ է իր կարծիքները յայտնելու, բայց ազատ չէ իր կարծիքին համեմատ գործելու: Պէտք է նախ՝ որ իր կարծիքին ընկերների **մեծամասնութիւնը** համամիտ լինի. պետք է, որ այդ համամտութիւնը ընկերների մեծամասնութեան հաւանութեամբ դառնայ ժողովական որոշում եւ պարտադրուի մարմիններից գործադրել այդ **որոշումը**. ա՛յս դէպքում միայն ընկերը կարող է իր կարծիքի համեմատ գործել: Սակայն այս դէպքում նա այլեւս ո՛չ թէ իր կարծիքի համեմատ գործած կը լինի, այլ ժողովական որոշման հնազանդած կը լինի. ո՛չ միայն ինքն է, որ հնազանդած կը լինի, այլեւ բոլոր այն ընկերները, որոնց վրայ կը տարածուի այդ որոշման պարտադրանքը: Այսպիսով անհատ ընկերների կարծիքը՝ մեծամասնութեան հաւանութեամբ՝ դառնում է վճիռ ու որոշում, եւ նրան պարտաւոր են հնազանդել թէ՛ նրանք, որ այդ կարծիքին էին եւ թէ՛ նրանք, որ այդ կարծիքը չունէին եւ մնացին փոքրամասնութիւն: Ընկերների մեծամասնութեան կարծիքը կուսակցութեան կարծիքն է այն շրջանի համար, ուր այդ մասնաւոր կարծիքը դարձած է վճիռ ու որոշում: Եթէ խումբն է այդ վճիռն արձակողը եւ որոշումը կայացրնողը՝ որոշումը պարտադիր է խմբի բոլոր անդամների համար. եթէ պատգամաւորական ժողովն է վճիռ արձակած՝ այդ վճիռը պարտադիր է կոմիտեութեան բոլոր ընկերների համար, ինչպէս նաեւ կոմիտեի համար. եթէ Շրջանային ժողովն է որոշում հանած՝ այդ որոշման ենթակայ են կենտրոնական կոմիտեն եւ նրա շրջանի բոլոր ընկերները՝ թէկուզ եւ շատերը համամիտ չլինեն այդ որոշման. եթէ Հ.Յ.Գ. Ընդհանուր ժողովն է, որ մեծամասնութեամբ հաւանութիւն տուած է անհատ պատգամաւորի անձնական կարծիքին՝ այդ կարիքը պարտադիր է **բովանդակ** Դաշնակցութեան համար, ո՛չ միայն բոլոր ընկերների, այլեւ բոլոր մարմինների համար, ուր եւ գտնուին: Այսպիսով դաշնակցական ընկերներն ազատ են իրենց գործելաձեւերն առաջադրելու, բայց քանի դեռ մեծամասնութեան հաւանու-

թիւնը շահած չեն, ո՛չ իրաւունք ունին իրենց կարծիքը պարտադրելու եւ ո՛չ իրենց կարծիքի համեմատ գործելու: Դաշնակցականը պարտաւոր է **որոշումների** հնազանդել եւ ո՛չ թէ կարծիքների հետեւիլ, նա պարտաւոր է ժողովական **վճիռներ** իրագործել եւ ո՛չ թէ իր կամ ուրիշի կամքը կատարել: Ունանց այս վիճակը ծանր է թւում. բայց այդ նշան է, թէ դեռ գիտակից եւ մարգում կուսակցական չեն, որովհետեւ այնտեղ ուր անհատական կարծիքն ու կամեցողութիւնը փորձում են գործ դառնալ առանց մեծամասնութեան օրինական համամտութեան, այնտեղ այլեւս կազմակերպութիւն չկայ, այլ կայ միայն անկարգ ամբոխ, ուր ամէն ոք իր քմայքին է հետեւում եւ շունը տիրոջ չի ճանաչում:

Կայ եւ մի ուրիշ կարեւոր հանգամանք, որ նոյնպէս պէտք է նկատի ունենան մարմիններն ու ընկերները: Մեր կանոնագրով միմիայն Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովն իրաւունք ունի ծրագիր եւ կանոնագիր փոփոխելու. ստորադաս մարմինները իրաւասու չեն այս կէտի մէջ: Նրանք կարող են միայն առաջարկներ անել Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովին, որ եթէ մեծամասնութեամբ համամիտ գտնուի՝ վճիռ կը տայ գործադրելու: Այստեղից ինքնին հետեւում է, որ ստորադաս մարմիններն ու ժողովները, ինչպէս եւ անհատ ընկերները իրենց շրջանների մէջ՝ այնպիսի կարծիքներ եւ առաջարկներ կարող են բերել, որ չեն հակասում կուսակցութեան ծրագրին եւ կանոնագրին: Ու նաեւ՝ ստորադաս ժողովներն ու մարմինները կարող են այնպիսի կարծիքներ եւ առաջարկներ ընդունել եւ վճիռ ու որոշում դարձնել, որ հակառակ չեն կուսակցութեան ծրագրին ու կանոնագրին: Մարմիններն ու ժողովները գործում են կանոնագրի սահմանների մէջ. իրենց պարտականութիւնն է այդ կանոնագիրը պաշտպանել: Նրանք չեն կարող այնպիսի վճիռներ արձակել, որ հակասէ այն կանոնագրին, որի պաշտպանութիւնը առաւելապէս նրանց է յանձնած ընկերների մեծամասնութիւնը: Մարմինը կարող է տարբեր տեսակէտ ունենալ կանոնագրի այս կամ այն յօդուածի մասին, ինչպէս նաեւ գործերի այս կամ այն ընթացքի մասին, բայց այդ տեսակէտն աւելի չէ իր արժէքով, քան անհատ ընկերների անձնական կարծիքը: Քանի դեռ այդ տեսակէտը Հ. Յ.Դ. Ընդհանուր ժողովի հաւանութեան չէ արժանացած՝ նա գործնական եւ գործադրական արժէք չունի: Այս տեսակ դէպքերում մարմին եւ ստակական ընկեր պարտաւոր են իրագործել Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովի որոշումները, ինչպէս նաեւ իրենց գերադաս ժողովների վճիռները: Պէտք է մոռանալ, որ բոլոր ընկերները իրենց պատուի վրայ երդում են արած ընդունել կուսակցութեան ծրագիրն ու կանոնագիրը եւ հաւատարիմ մնալ նրանց. հետեւապէս նախքան որեւէ կարծիք յայտնելը եւ վճիռ արձակել,

ընկեր թէ մարմին՝ պարտաւոր են հաշիւ տալ իրենց թէ մինչեւ ո՞ր աստիճան այդ կարծիքն ու վճիռը համաձայն են մեր կուսակցութեան ծրագրին եւ կանոնագրին: Մտքի ազատութեան ջերմ պաշտպան է Ղաշնակցութիւնը, հետեւապէս նա չի կարող բռնանալ կարծիքների վրայ, բայց կազմակերպութեան իրաւունքն է եւ սրբազան պարտականութիւնը՝ պահանջել ընկերներից, որ յարգեն իրենց հանդիսաւոր երդումը եւ անաստողներին, իբր անհաւատարիմ եւ անպատիւ տարրեր, վտարել իր շարքերից:

Այս կէտի մէջ եւս պէտք է տարբերութիւն դնել ազատ համամտութեան ու գործակցութեան եւ կուսակցական համամտութեան ու գործակցութեան միջեւ : Քաղաքական կուսակցութիւնը չի կարող խիստ կարգապահութիւն չպահանջել իր անդամներից եւ չպարտադրել, որ կանոնագիրը գործադրուի տեւապէս: Անկանոնական ընթացքը քայքայում կը բերի կազմակերպութեան, հետեւապէս կը խորտակէ այն ոյժը, որի միջոցով մենք յոյս ունինք մեր ծրագիրն իրագործելու: Մինչդեռ կուսակցութիւնը իր անդամներից պահանջում է հնազանդութիւն իր ծրագրին ու կանոնագրին՝ մնացած հայութեան նա յորդորում է եւ համոզում, որ աջակցին իր գործին: Նա պատիժներ է տնօրինում այն ընկերների համար, որ հաւատարիմ չեն մնում իր ծրագրին եւ կանոնագրին, մինչդեռ մնացած հայութիւնը ազատ է պատժից ու պատուհասից: Դրսի մարդիկ ազատ են մեզ համակրելու կամ հակակրելու, բարեկամ կամ թշնամի լինելու, մինչդեռ մեր ընկերը մեզ թշնամի լինել չի կարող եւ ոչ մեր գործին հակակիր, որովհետեւ դրսի մարդն ազատ է, իսկ մեր ընկերը կապուած է իր երդումով: Դրսի մարդիկ կարող են ազդել մեր կուսակցութեան վրայ այն չափով, որքան ընկերների մեծամասնութիւնը համամիտ գտնուին նրանց քարոզած գաղափարներին. այսպէս են մեծ գիտունները, ընկերվարութեան նշանաւոր առաջնորդները: Նրանք վարդապետում են բովանդակ մարդկութեան եւ նրանց հետեւում են բազմահազար ունկընդիրներ եւ ընթերցողներ: Նրանց գաղափարները թափանցում են եւ մեր մտաւորական ընկերների մէջ, դառնում են համոզում, քարոզում են մեր շարքերին, շահում են մեծամասնութեան համամտութիւնը եւ ժողովական կարգով դառնում են վճիռ ու որոշում եւ պարտադրում բոլոր ընկերներին: Բայց նոյնիսկ այստեղ՝ դուք տեսնում էք թէ կանոնագիրն է, որ հնար է տալիս դրսի ազդեցութեան մուտք գործելու մեր կուսակցութեան մէջ եւ ժողովական որոշումն է, որ այս կամ այն նոր տեսակէտը, գործելաձեւը կամ կազմակերպական եղանակը պարտադիր է դարձնում մեր շարքերի համար: Այսպէս է որ մեր կուսակցութիւնը չի լճանում եւ մեր ծրագիրն ու կանոնագիրը չեն քարանում, այլ կեանքի զարկին զուգահեռ՝ տրոփում է եւ մեր կուսակցութեան զարկերակը եւ նա մնում է կենդանի եւ դիմացկուն՝

չնայած ահաւոր փորձութիւնների: Նա գնում է ժամանակի հետ, որովհետեւ ընկերների մտածումը հետեւում է ժամանակի ընթացքին եւ առնում ու իրացնում է դրսից այն ամենը, որ յարմար եւ պիտանի է համարում իր կենսունակութեան համար: Ընկերների վերափոխումը եւ թարմացած մտածումը յօրինում է տեսական ու գործնական նոր գաղափարներ, որ վարի խաւերից բարձրանում են վեր եւ իրաւաստ ժողովների մէջ դառնում են վճիռ ու որոշում:

Այստեղից հետեւում է ինքնին, որ ծրագրի եւ կանոնագրի քննութիւնը, ինչպէս նաեւ մարմինների եւ ընկերների ընթացքի լաւ ու վատ գնահատանքը կարող է եւ պէտք է լինի կուսակցութեան ներսը, որ կարենայ շահիլ մեծամասնութեան հաւանութիւնը եւ վճիռ դառնալով՝ ազդէ կազմակերպութեան կեանքին վրայ: Դրսի աշխարհի համար մենք կանք եւ պէտք է մնանք իբր միաձոյլ եւ կարգապահ կուսակցութիւն, ուր իշխում է մի կամք, մէկ մտայնութիւն եւ որ ունի մի որոշ ընթացք: Իսկ մեր ժողովների մէջ մենք ո՛չ միայն իրաւունք, այլ մանաւանդ պարտականութիւն ունինք մեր ծրագրային եւ կանոնագրային թերիները մատնանշելու եւ մեր մարմինների եւ ընկերների ընթացքը քննադատելու՝ լաւագոյն վճիռների եւ որոշումների հասնելու համար: Զննական ոգին շինարար է ներսը եւ քայքայիչ՝ երբ դրսից է գործում: Դրսից մեզ ու մեր գործը կարող է քննադատել հակառակորդն ու թշնամին, նաեւ բարեացակամ համակիրը. իսկ մեր ընկերները պարտաւոր են կազմակերպութեան ներսը քննադատել, եթէ նպատակ ունին կուսակցութեան կեանքը բարելաւելու եւ լաւագոյնին հասնելու:

«Կրկին մեր Կանոնագիրը» (բ), Ն. Աղբալեան

3

Ո՞Վ Է ՄԵՐ ԸՆԿԵՐԸ

Այն մարդուն, որ ապրում ու գործում է ընթացիկ բարոյականի համեմատ՝ ասում են «պարկեշտ մարդ»: «Պարկեշտ ընկեր» կարող ենք ասել կուսակցութեան այն անդամին, որ իբր կուսակցական՝ գործում է կանոնագրի համեմատ, այսինքն՝ կատարում է այն պարտականութիւնը, որ կանոնագրով դրուած է նրա վրայ եւ օգտում է այն իրաւունքից, որ ունի նոյն կանոնագրով: Բայց կուսակցութեան անդամները բազմաթիւ են եւ բազմազան բնաւորութեան տէր եւ մեր

կապերն իրար հետ բազմատեսակ են, իսկ մեր կանոնագիրը մի վտիտ գրքոյկ է եւ ոչ թէ մի ստուար օրէնագիրք: Նա չի կարող եւ պէտք չունի ամէն դէպք ու պատահար նախատեսելու եւ կանոնագրելու: Չին շատ եկող երկիրների մէջ, ճամբաների քովերը բարձր ձողեր կան տնկուած, որ ձմեռը, երբ ձիւնը ծածկում է քար ու փոս՝ ուղեւորին ցոյց են տալիս ճամբի ուղղութիւնը՝ վեր մնալով ձիւնի երեսից: Մեր կանոնագրի յօդուածներ այդ երկար ձողերի պաշտօնն են կատարում, վեր մնալով մեր բազմատեսակ վարմունքներից: Նրանք մեզ մատնանշում են մեր վարմունքի ընդհանուր ուղղութիւնը, մնացածը թողնելով մեր սրտին ու կամքին եւ մեր ողջամտութեան: Կուսակցութիւնը պետութիւն չէ: Պետութիւնը գործ ունի բազմատեսակ եւ տարամերժ տարրերի հետ եւ պարտաւոր է նրանց անհամար բախումները կարգաւորել իր օրէնքներով: Մեր կանոնագիրը բարեացակամ խորհրդատու է եւ խստապահանջ, բայց զուսպ վերահսկող. նա մատնանշում է մեր ընթացքը առանց մանրամասնութեան եւ անսաստողին պատուիստում է առանց մանրակրկիտ ձեւականութեան: Ընդարձակ բացեր թողած է նա գործադրողի կամքին, որ եթէ չարեացակամ մէկն է եւ ձեւապաշտ բծախնդիր՝ կարող է բարեացակամ կանոնագիրը դարձնել պատուիստ եւ անարժէք բախումները դատ ու վէճ: Կանոնագիրը համառօտ է եւ էական, որովհետեւ նրա մշակողն է Դաշնակցութեան ընտրանին եւ մշակած է ո՛չ թէ հպատակների, այլ ընկերների համար: Դաշնակցութիւնը համակամ եւ համամիտ անձերի տեսական միութիւն է, որ երբեմն կարող են իրար հետ բախումներ ու գծտութիւն ունենալ, բայց երբեք չեն կարող տարամերժ եւ հակադիր լինել, եթէ իրօք դաշնակցական են: Դաշնակցականներն ընկեր են իրար եւ ընկերական ոգին շատ յաճախ տեղ չի թողնում կանոնագրի միջամտութեան:

Այո՛, Դաշնակցութեան անդամներն ընկեր են իրար եւ իրար կանչում են «ընկեր»: Բայց ի՞նչ սահմանների մէջ եւ մինչեւ ո՞ր ընկեր են իրար: Բազմահազար մարդիկ այսօր դաշնակցական են աշխարհի չորս կողմը, որոնց ո՛չ տեսած ենք, ո՛չ ճանաչում ենք: Բայց բաւական է, որ մէկը նրանցից իր մարմնի հաստատագիրը ձեռքին երեւայ մեր մէջ, որ մենք նրան տարիների ընկեր նկատենք: Ի՞նչն է այս սրտագին վարմունքի դրդիչն ու պատճառը: Հաստատագրին նայելով՝ մենք իսկոյն հասկանում ենք, որ նորեկը ժամանակին երդւած է մեզ նման հաւատարիմ լինել մեր ծրագրին ու կանոնագրին, հետեւապէս նա մեր համամիտն է եւ գործակիցը: Այսպիսով մենք «ընկեր» ենք իրար կանոնագրի սահմանների մէջ եւ նրա՛ն ենք համարում «ընկեր», որ մեզ նման ձգտում է մեր ծրագրի իրագործման եւ հնազանդում է մեր կանոնագրին: Ընկերական կապն ու շփումը ամրապնդում են մեր կանոնագրական եւ ծրագրային սերտութիւնը

եւ փոխադարձաբար՝ կանոնագրական եւ ծրագրային կապը առատ սնունդ է տալիս մեր ընկերական զգացումին: Այստեղից պարզ է ինքնին, որ մենք կարող ենք եւ պետք է ընկերական կապ ու վերաբերում ունենանք մեզ ծանօթ եւ անծանօթ անձերի հետ միմիայն այն պատճառով, որ նրանք՝ ինչպէս ասում են՝ մեր հաւատի մարդիկ են, մեզ պէս են մտածում ու գործում, ալլապէս ո՛չ մէկ հիմք կայ ծանօթ եւ անծանօթ՝ բայց մեզ ոչ համամիտ եւ ոչ գործակից մարդկանց ընկեր նկատելու եւ նրանց հանդէպ ընկերական վերաբերում ունենալու: Երբ մէկն իմ ծրագիրը չի ընդունում, իմ կանոնագրին չի ենթարկում, իմ կուսակցական աշխատանքին չի գործակցում՝ այլեւս ի՞նչ ընկեր: Նա արժանի չէ այդ մեծարժէք անունին: Նա կարող է լինել ու մնալ շատ յարգելի բարեկամ, շնորհալի խօսակից, ուրախ ընկալից, պարկեշտ խաղակից, եւ այլն եւ այլն. բայց ընկե՞ր - բնա՛ւ եւ երբեք: Մեր ընկերը նա՛ է, որ նո՛յն նպատակին է ձգտում ինչ որ մենք եւ նո՛յն կանոնագրին է ենթարկում ինչ որ ամենքս, եւ հետեւապէս ուխտած եւ երդուած է մի՛շտ մեզ հետ լինել մեր թե՛ լայն եւ թե՛ նեղ օրին: Անկարգապահը մի որոշ չափով կորցնում է իր ընկերական արժանիքը. անպարտաճանաչը կորցնում է դրանից շատ ատելին. իր թերութեանց մէջ յամառողը դառնում է անվստահելի եւ անվստահութեան մէջ յարատեւողը՝ վտարելի, որ եւ կատարում է մարմինը խղճի անդորրութեամբ: Ընկերների եւ մարմինների պարտականութիւնն է ընկերաբար յորդորել, մեծի պէս խրատել, փորձուածի պէս զգուշացնել, իբրեւ մարմին՝ ազդարարել եւ վերջապէս իբր օրինապահ՝ պատժել ու վտարել: Ոչ մէկ մարմին իրաւունք ունի պահանջելու ատելին՝ քան կանոնագիրն ու կանոնական որոշումը, բայց եւ ոչ մէկ ընկեր իրաւունք ունի անսաստելու կանոնագրին ու կանոնական որոշումներին: Ընկերոջ իրաւունքն է ծառանալ ապականոն պահանջի դէմ, բայց եւ իր պարտականութիւնն է կատարել կանոնական պահանջը: Կանոնագիրը սանձն է թե՛ ընկերների, թե՛ մարմինների:

Մեր ընկերական յարաբերութիւնները ատելի ասանդական սովորոյթով են դեկավարում, քան կանոնագրի յօդուածներով. բայց այսպէս է այնքան ժամանակ, որքան կուսակցութեան անդամն ատելի ընկեր է զգում իրան, քան իրատաւեր անդամ: Երբ ընկերը շեղում է կանոնագրից՝ ընկերական կապերին ապաւինելով եւ անկարգապահ քայլեր է անում՝ բարեացակամ վերաբերում յուսալով, մարմինների պարտականութիւնն է զգաստութեան հրաւիրել այդ ընկերը, որ շեղումով չմոլորուի եւ ծուռ քայլերով՝ չսայթաքի գահավէժ: Աւանդական սովորոյթին պետք է փոխարինել օրինապահ վերաբերումը այդ կարգի ընկերների հանդէպ, որովհետեւ անկարգապահ ընթացքը սառցնում է ընկերական ջերմութիւնը եւ սովորոյթի մեղմու-

թիւնը դառնում է կարծր պաշտօնականութիւն: Սովորոյթը հանդուրժումնի այն չափն է, որ կարող է թոյլ տալ մարմինը ընկերների հանդէպ. այդ հանդուրժումը սակայն չի կարող հասնիլ մինչեւ կանոնագրի անտեսումը: Սովորոյթն այնքան արժէք ունի եւ հանդուրժելի է, որքան դէմ չէ մեր կանոնագրին, որին պատկանում է վերջին ու կըտրուկ խօսքը երբ բախում են իրար ընկեր ու մարմին: Ինչ-ինչ բարի դիտումներով, մարմինը կարող է յետաձգել կանոնագրի միջամբողջութիւնը բախումների ժամանակ. նոյն տեսակ բարի դիտումներով ընկերները կարող են առժամապէս համբերատար գտնուիլ մարմինների թերացման հանդէպ, բայց մարմինները չեն կարող հանդուրժել մինչ այն աստիճան, որ կուսակցական բարքն ապականուի, ինչպէս եւ ընկերներն իրաւունք չունին համբերատար լինել մինչ այն աստիճան, որ գեղծում եւ ապօրինութիւն տիրապետեն: Սովորոյթը չի կարող կանոնագրի տեղը գրաւել: Սովորոյթը ասանդութեան հմայքն ունի եւ գրաւիչ է յաճախ, բայց նա անորոշ է ընդհանրապէս եւ միտած է մեղկութեան: Ընկերական սերը շինարար է կանոնագրի սահմանների մէջ եւ քայքայիչ ու լոյծ՝ երբ դուրս է գալիս այդ սահմաններից: Սովորոյթը սպեղանի է մանր վերքերի, բայց փտախտը կանոնագրի դանակը կարող է բուժել: Վարիչ մարմինը պէտք է ջերմ սեր ունենայ դէպի ընկերները, բայց կանոնագրի հատու հարուածը միշտ պէտք է պատրաստ լինի իր ձեռքին, որովհետեւ հին ու ճշմարիտ խօսք է թէ՛ «Որ ոչ լուիցէ ունկամբ՝ լուիցէ թիկամբ» (Ո՛վ չի լսի ականջով՝ կը լսի թիկունքով - այսինքն ծեծով):

Այսպիսով ընկերական սերն ու կանոնագրին իրար չեն ժխտում, այլ լրացնում են իրար. երբ չի ազդում առաջինը՝ միջամտում է երկրորդը: Բայց երկրորդը պէտք է միջամտէ այն ժամանակ, երբ առաջինն անգոր է եւ ապարդիւն: Մարմինները առաջին հերթին պարտաւոր են յորդոր ու խրատ կիրարկել՝ ընկերական սերը գործի կանչելով եւ վերջին վայրկեանին կանոնագրի հեղինակութեան դիմեն, երբ յորդորն ու սերը անգոր գտնուին: Կանոնագրի գործադրութեան յետաձգումը մարմինների իրաւունքն է եւ պարտականութիւնը, որովհետեւ նրանք գործ ունին ո՛չ թէ հպատակների, այլ ընկերների հետ, բայց կանոնագրի անտեսումը յանուն ընկերութեան՝ նշան է մարմինների մեղկութեան: Վերջին հաշուով՝ կանոնագրին է, որ դեկավարն է կուսակցութեան եւ ոչ ընկերական վերաբերումը կամ ասանդական սովորոյթը: Որքան թեթեւամիտ է այն մարմինը, որ բախումի պարագային անմիջապէս քաշում է կանոնագրի սուրը, նոյնքան մեղկ է այն մարմինը, որ՝ ուր պէտք է սուր քաշել, յորդոր ու խրատ է կիրարկում:

«Կրկին մեր Կանոնագիրը (բ.), Ն. Աղբալեան

Ո՞Վ Է ԳԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ

Եթե ուզենք Գաշնակցութեան մեծ տեսաբան Նիկոլ Աղբալեանի հետեւողութեամբ *«մեկնել Կանոնագրի յօդուածները, լուծել ու մանրել նրանց խորացած իմաստը»*, պիտի նկատենք, որ դաշնակցականը, իբրեւ կազմակերպութեան մարդ, պարտաւոր է լրացնելու հիմնական հետեւեալ պայմանները.- ա) ընդունիլ կուսակցութեան ծրագիրն ու գործելակերպը. բ) ենթարկուիլ անոր կանոններուն ու որոշումներուն. գ) ամէն ջանք թափել՝ իրականացնելու զանոնք. դ) անդամակցիլ իր բնակած վայրի խումբին եւ ե) կատարել կուսակցութեան կողմէ իր վրայ դրուած միութեական եւ բարոյական բոլոր պարտականութիւնները:

Պարզ է՝ որ վերոյիշեալ հինգ պայմանները զիրար կ'ամբողջացնեն, ու միասնաբար կը կազմեն անմասնատելի ամբողջութիւն մը... Անդրադառնանք սակայն իւրաքանչիւրին առանձին:

ա) *«Ընդունիլ կուսակցութեան ծրագիրն ու գործելակերպը»*.- ... Կուսակցութեան մը անդամակցութեան նախապայմանը այդ կուսակցութեան քաղաքական, ընկերային կամ տնտեսական բնոյթի հիմնական նպատակներն ու առաջադրանքները բաժնելն է: Ծրագիրը կը կազմէ այդ նպատակներու եւ առաջադրանքներու պաշտօնական բանաձեւումը՝ հիմնաւորուած եւ պատճառաբանուած եղանակով:

Ուրեմն,- եւ այս՝ իբրեւ առաջնահերթ մեկնակէտ - ով որ Գաշնակցութեան ծրագրին լրիւ կերպով համաձայն չէ, դաշնակցական չի կրնար նկատուիլ... Եթէ նոյնիսկ որեւէ դիպումս հետեւանքով ան կը գտնուի մեր կուսակցութեան շարքերուն մէջ: Անկեղծութիւնը, որ հիմնական առաքինութիւն է առհասարակ, այս պարագային կը դառնայ հրամայական անհրաժեշտութիւն: Ով որ անկերծօրէն չի հաւատար հայ ազգի անկապտելի իրաւունքներուն, իր պապենական հողերուն վրայ անոր ազատ եւ անկախ հայրենիք կերտելու պատմական անհրաժեշտութեան, եւ ով որ վախճանական այդ նպատակին համար իրապէ՛ս պատրաստ չէ իր բոլոր միջոցներով ու հնարաւորութիւններով տքնելու, դաշնակցական չի կրնար ըլլալ: Եւ տակաւին՝ ով որ խորապէս չի հաւատար ու չի ձգտիր իրա՛ն ու չեղծուած ընկերվարութեան մը վերջնական յաղթանակին,- ընկերվարութեան մը, որ հիմնուած ըլլայ մարդուն անբռնաբարելի իրա-

ունքներուն եւ մարդոց իրական հաւասարութեան վրայ, ուր չըլլան կեղեքողներու եւ կեղեքուողներու դասակարգեր, օգտուողներ ու գրք-կրօններ,- դաշնակցական չի կրնար ըլլալ: Հիմնականին մէջ, ազգային-քաղաքական եւ ընկերային այս կրկնակ հաւատոյ հանգանակն է որ կը բանաձեւուի եւ կ'արտայայտուի Դաշնակցութեան ծրագրով:

... Ծրագրին անմիջական կերպով կը հետեւի գործելակերպը: Ան եւս պէտք է ընդունելի ըլլայ Դաշնակցութեան սեմնն ներս կոխող թեկնածուին համար: ... Պարզ է անշուշտ՝ որ գործելակերպը ատելի փոփոխական է, քան ծրագիրը: ... Անվարան կարելի է ըսել սակայն, որ, այսօր ինչպէս երէկ, գոյութիւն ունի աշխատելու եւ գործերը վարելու դաշնակցական ոճ մը,- գործելակերպ մը, որ դաշնակցական մարդուն խառնուածքային գիծերէն կուգայ եւ հաւատքով, վճռակամութեամբ ու նուիրուածութեամբ կը յատկանշուի: Իրաւ դաշնակցականը պիտի ունենայ կամ պիտի կարենայ կարճ ժամանակի մէջ ի՛րը ընել այդ ոճը:

Ճիշդ է նաեւ՝ որ իւրաքանչիւր անհատ չի կրնար լրիւ յարմարիլ աշխատանքի բոլոր մարզերուն եւ բոլոր ձեւերուն. որ՝ անպայմանօրէն պիտի ըլլան մտաւորական ընկերներ, գործիչներ եւ կազմակերպչական սեւ աշխատանք տանողներ, մարտական ընկերներ: Դաշնակցական գործելակերպի ընկալումն ու իւրացումը կը յըստականան, եթէ շեշտը դնենք առաւելաբար աշխատանքի ոճին վրայ, որ ... պէտք է ընդհանուր ըլլայ ու կիրարկուի կուսակցական աշխատանքի բոլոր մարզերուն:

Սեր ծրագիրն ու գործելակերպը ընդունիր... դաշնակցական դառնալու հիմնական նախապայման է ուրեմն: [Անհրաժեշտ, եւ սակայն ոչ բարար]: Շատեր տոգորուած են ընկերվարական գաղափարներով, եւ Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստանի մը վախճանական տեսլականը -մենք կը հաւատանք- կը պատկանի ամէն իրաւ հայու: Ընկերային-քաղաքական կրկնակ այս ապրումը ունեցողը, սակայն, երբ չունի մեր աշխատելու ոճը եւ չի բաժներ մեր գործելակերպը, լրագոյն պարագային անկեղծ համակիր մըն է... Աւելի [եւս] ուշադիր պէտք է ըլլալ անոնց նկատմամբ, որոնք առհասարակ գաղափարական աշխարհ չունին կամ չեն համոզուած մեր ծրագրային առաջադրանքներու արդարութեան թէ գործնապէս իրականանալի ըլլալուն, բայց որ կը բաժնեն գործելու դաշնակցական ոճը... այդպիսիները մարտական գործերու մէջ կրնան ըլլալ անկեղծ գործակիցներ, երբեմն նոյնիսկ հաւատարիմ ու խիզախ զինուորներ, բայց նաեւ, յաճախ, պատեհապաշտ արկածախնդիրներ:

Եւ տակաւին, իրական եւ ամբողջական դաշնակցական ըլլալու համար չի բաւեր մեր առաջադրանքներու իրագործման համար

աշխատիլ մեր գործելակերպով ու ոճով, այնքան ատեն որ ենթական երդումով ու Կանոնագրով չէ կապուած մեր կազմակերպութեան հետ: Ծրագրային եւ գործելակերպի գոյգ նախապայմանները միայն լրացնող անհատները կուսակցութեան համար երբեմն շատ թանկագին, վստահելի համակիր-գործակիցներ կ'ըլլան, դաշնակցական մտայնութեան տէր ու դաշնակցականօրէն գործող մարդիկ, **բայց ո՛չ դաշնակցական ընկերներ:**

բ) *«Ենթարկուիլ անոր կանոններուն ու որոշումներուն»*.- Կարգապահութեան հիմնական հարցն է որ կը դրուի: Տիեզերական նախապայման եւ անհրաժեշտ յատկանիշ՝ կազմակերպուած որեւէ հաւաքականութեան, բնական, մեքենական, կենսաբանական թէ ընկերային-հասարակական որեւէ կառոյցի համար: Էական յատկանիշ, որուն նոյնիսկ մասնակի խախտումը կառոյցը կը թուլացնէ, կը տկարացնէ, կը մաշեցնէ եւ կրնայ, կրկնութեան պարագային, գայն բոլորովին քայքայել ու փճացնել: Կարգապահութիւնը՝ որ, ըստ սահմանումի, կը կայանայ կառոյցին կամ հաւաքականութեան բաղկացուցիչ տարրերէն իւրաքանչիւրին՝ իր դերը, իրեն սահմանուած պաշտօնը լրիւ եւ անշեղ կերպով կատարելուն մէջ, յօգուտ ամբողջութեան առողջ եւ յաջող գործունէութեան:

... Մարդկային հաւաքականութեանց պարագային, կազմակերպութեան ձեւն ու գործող միաւորներու (ժողով, մարմին, խումբ, անհատ) փոխյարաբերութեանց սահմանումը արդիւնք են մարդկային մտածողութեան: Բնական համակարգութեանց օրինակով՝ մարդիկ ստեղծած են իրենց կազմակերպական դրոթիւնները, ճշդած իւրաքանչիւր միաւորի տեղը՝ ընդհանուր կառոյցին մէջ, իւրաքանչիւրի դերը, պաշտօնը, պարտականութիւններն ու իրաւասութիւնները, փոխյարաբերութեանց եղանակը: Այս բոլորը յստակացուած կ'ըլլան առհասարակ... տուեալ կազմակերպութեան հիմնադիր ժողովին կամ սահմանադիր ժողովներէն մէկուն կողմէ եւ, հրատարակուելով, կը կազմեն այդ կազմակերպութեան սահմանադրութիւնը (պետական կազմակերպութիւն) կամ կանոնագիրը (կուսակցութիւն, միութիւն, ընկերակցութիւն):

Անհատը, երբ իր ազատ ընտրութեամբ կ'որոշէ մաս կազմել որեւէ կազմակերպութեան, պարտաւոր է ուրեմն ծանօթանալու անոր կառոյցը պայմանաւորող կանոնագրին, կազմակերպական կանոններուն եւ յարգել զանոնք այն յստակ գիտակցութեամբ, որ կանոնագրային որեւէ խախտում, ... որեւէ թերացում, ուշ կամ կանուխ պիտի վնասէ այն ամբողջութեան, որ կազմակերպութիւնն է:

Միեւնոյն այս գիտակցութեամբ է որ դաշնակցական մարդը, երբ երդման արարողութեամբ կը մտնէ այս կազմակերպութեան սեմէն

ներս, պատուոյ հարց պէտք է դարձնէ իրեն համար՝ Դաշնակցութեան Կանոնագրի բծախնդիր եւ ամբողջական յարգումը:

... Ընկերային կառոյց մը չի գործեր... ի բնէ իրեն պարտադրուած բնական կամ մեքենական օրէնքներու միասպաղաղ եւ անփոփոխելի կշռոյթով: Կեանքի քաղաքական, տնտեսական եւ այլ փոփոխումները, ինչպէս նաեւ յաճախ արտաքին ուժեր՝ կազմակերպութեան ուղղակիօրէն հակադրուող կամ ոչ, կը ստեղծեն նոր կացութիւններ, անհաստատ վիճակներ, շրջապատը փոփոխութեան ենթարկող ելեւէջներ, որոնց հակազդելու, յարմարելու կամ նոր պայմաններուն պատշաճ եղանակներով՝ ծրագրային առաջադրանքները հետապնդելու բոլոր միջոցներն ու հնարքները նախատեսուած չեն կրնար ըլլալ անշուշտ կառոյցը պայմանաւորող կազմակերպական կանոններուն մէջ:

Բայց նախատեսուած են այն մարմիններն ու ժողովները, որոնք լիազօրուած են նման պարագաներու կացութիւնը քննութեան ենթարկելու եւ այդ քննութեան ճամբով յանգելու կազմակերպութեան միատրոններու թէ անհատ անդամներու կեցուածքը, վերաբերմունքը եւ տանելիք աշխատանքը ճշդող որոշումներու:

... Կուսակցականները մարդիկ են հարկաւ: Եւ ատկէ՝ գլխաւոր դժուարութիւնը ամէն որոշման բծախնդիր յարգումին՝ բոլորին կողմէ: Յաճախադէպ իրողութիւն է, որ ժողովներու եւ մարմիններու բոլոր որոշումները հաշտ չլլան մեզմէ իւրաքանչիւրին անհատական տեսակէտներուն եւ տրամադրութիւններուն հետ: Բայց կուսակցական ենք կամ չենք: Պարկէշտ կուսակցականը իր անձնական տեսակէտը արձանագրել կուտայ պատկան ժողովներու ատենագրութեանց մէջ, բայց այնուհետեւ կը գործէ եւ կը վերաբերի այնպէս՝ կարծես մեծամասնութեան մտածելակերպը արտայայտող որոշումը արդիւնքը ըլլար իր սեփական մտայղացման եւ լրիւ համապատասխանէր իր անհատական համոզումներուն: Այսպէ՛ս է: Եւ բարոյական գեղեցկութիւն ու բարձրութիւն է սեփական եսի այս ձեռք ստորադասումը՝ կազմակերպութեան հաւաքական եսին: ... Դաշնակցական մարդուն անհատական վարմունքի եւ գործելակերպի ազատութեան ինքնապարտադիր ու գիտակցական սահմանափակումը՝ Դաշնակցութեան ո՛ւժն իսկ է:

զ) «Ամէն ջանք թափել՝ իրականացնելու զսնունք».- Ինչպէս հաւաքական ուրիշ կառոյցներ, ընկերային կազմակերպութիւնները եւս կրնան ունենալ կրատրական-կայունական կամ գործօն-ուժական խառնուածք: Ընդհանուր առմամբ, քաղաքական կուսակցութիւնները կը պատկանին անշուշտ վերջին տեսակին: Անոնց առաջադրանքները շատ քիչ անգամ իրերու բնական հողվոյթով իրակա-

նանալի են, ու յաճախ կը բախի՛ն հաստատուած կարգերու inertieին կամ այլ կազմակերպութեանց եւ ուժերու հակընթաց ճիգին: Ուստի, սեփական նպատակներու իրագործման համար միշտ գործ է պէտք, եւ յաճախ՝ պայքար: Կենդանի գործն է, որ կուսակցութիւնը կը պահէ արթուն ու լարուած, իր կազմակերպական բոլոր օղակներով՝ միշտ շարժուն եւ ուժական. մինչ գործի եւ պայքարի պակասը զայն կը նւարանացնէ, կ'ամլացնէ եւ կրնայ ներքնապէս մաշեցնել:

... Հ.Յ.Գ-աշնակցութիւնը միշտ եղած է էապէս **գործի եւ պայքարի** կուսակցութիւն: Յատկանշական իրողութիւն է, որ մեր կուսակցութիւնը, իր կազմութեան օրերէն իսկ սկսեալ, համեմատաբար երկրորդական տեղ տուած է տեսական հարցերու, երբեք իրը չէ ըրած սոցիալ-դեմոկրատներու եւ ընկերվարական ձգտումներով այլ կազմակերպութեանց ընկերային-տեսաբանական phrasnologieի պաշտամունքը, բայց միշտ եղած է գործօն, շարժուն, ուժական՝ շնորհիւ առաւելաբար իր ապակերտրոնացեալ կառոյցին, եւ ազգային-ազատագրական պայքարի ու հայ մարդու ապահովութեան եւ իրաւունքներու պաշտպանութեան առաջին գիծերուն վրայ՝ շնորհիւ իր շարքերու եւ դեկավարներու գաղափարական բարձրութեան ու անսակարկ նուիրումին: Ու գործը, պայքարը յատուկ չեն եղած միայն յեղափոխական-մարտական շրջանին, որուն յաջորդած է վերջին յիսնամեակը՝ գաղութներու կազմակերպման, անոնց համայնքային եւ այլ իրաւունքներու պաշտպանութեան, ազգային-եկեղեցական եւ կրթական-մշակութային կեանքի մասնակցութեան եւ հսկողութեան, ինչպէս նաեւ, արտաքին ճակատի վրայ, հայ ազգի քաղաքական պահանջներու հետապնդման ոչ միշտ դիւրին եւ ոչ միշտ անմիջականօրէն արգասաբեր աշխատանքներովը լեցուն:

... Գործի եւ պայքարի այս կուսակցութիւնը չէր կրնար չպահանջել իր անդամներէն՝ ըլլալ գործօն եւ ո՛չ կրատրական... Կազմակերպական կանոնները ընդունիլը եւ մարմիններու որոշումներուն կրատրական ենթակայութիւնը բարարար չեն դաշնակցական մարդը յատկանշելու համար. ան -եւ այս՝ կազմակերպութենէն ներս ընդունման իբրեւ նախապայման- պէտք է ըլլայ նաեւ գործօն, եւ իր ֆիզիքական, բարոյական ու նիւթական բոլոր հնարաւորութիւններով՝ *«ամէն ջանք թափէ իրականացնելու»* կուսակցութեան առաջադրանքներն ու որոշումները:

Որեւէ մեծ ծրագիր, ազգային, ընկերային կամ այլ բնոյթի յեղաշրջող առաջադրանք չի յաջողիր առանց հաւաքական ու կազմակերպ գործունէութեան, առանց նուիրեալ բանակի մը վճռական պայքարին: Եւ հաւաքական գործն ու պայքարը գումարն են միայն այդ բանակի զինուորներուն ամէնօրեայ ճիգին, գոհողութիւններուն՝ կազմակերպական ներքին օրէնքներով շաղկապուած անշուշտ:

... Կուսակցությունն են ներս մտնելով՝ դաշնակցական մարդը իր վրայ է առած անոր պատմական առաքելութեան, անմիջական եւ հեռուոր առաջադրանքներու իրականացման պարտականութիւնը, կամ անկէ բաժին մը՝ իւրաքանչիւրը իր կարողութեան եւ հնարատրութեանց ամբողջական ներդրումովը: Ջինուորագրուած է ան Գաղափարին, Ծրագրին: Գարձած է Գաշնակցութեան նպատակներու իրագործման մէկ միաւոր-ագդակը, միաւոր-գործօնը: Այդ գիտակցութեամբ է որ պիտի գործէ ան, նուիրելով ինքզինքը, նուիրաբերելով իր կարելիութիւնները, զոհելով շատ բան...

դ) «Անդամակցիլ իր բնակած վայրի խումբին».- Կազմակերպական կառոյցի եւ կեանքի գործնական առաջին մատնանշումն է որ կ'ըլլայ այստեղ՝ Կանոնագրի 4րդ յօդուածով: Խումբը -նոյն վայրին մէջ բնակող (գիւղ, թաղ եւն.) եւ միասին գործող 5-10 կամ ատելի մեծ թիով դաշնակցականներու տարրական այդ հաւաքը-Գաշնակցութեան ապակեդրոնացեալ կառոյցի հիմնական միաւորը կազմած է միշտ, հոգ չէ թէ երբեմն տարբեր անուններով: Մեր առաջին Ծրագիրը յստակ կերպով կը բնորոշէ Գաշնակցութեան ապակեդրոնացման խմբական բնոյթը («**խմբական եւ ոչ անհատական ապակեդրոնացում**»), ատով իսկ լռելեայն արձանագրելով, դեռ 1892ին, որ չի կրնար ըլլալ խումբի մաս չկազմող եւ առանձին գործող դաշնակցական:

... Խումբը Գաշնակցութեան մեծ ընտանիքին ամենահիմնական **կենդանի բջիջն** է, տարրական այն միջավայրը, որ այդ ընտանիքին անդամները կը կապէ իրարու, զանոնք կը դարձնէ կազմակերպութեան մարդ. խումբն է, որ անոնց միջեւ կը յառաջացնէ մտածելակերպի եւ գործելակերպի միութիւն՝ միաձուլելով, հոգեպէս եւ գաղափարապէս, տարբեր անհատականութիւններ ունեցող տարբերը: Խումբը համադրողն է անհատական տեսակետներու եւ ատով իսկ՝ կուսակցական հաւաքական տեսակետներու դարբնումի ամենատարրական մեկնակէտ-միջավայրը: Խումբն է նաեւ, միւս ուղղութեամբ, կազմակերպական այն ծայրագոյն օղակը, ուր կը յանգին հաւաքական այդ տեսակետները արտայայտող որոշումները՝ բաշխելու համար, առ ի գործադրութիւն, կուսակցութեան ուժականութիւնը մարմնատրող անհատ ընկերներուն: Խումբը նախապայման է կազմակերպական կեանքի:

ե) «Կատարել կուսակցութեան կողմէ իր վրայ դրուած նիւթական եւ բարոյական բոլոր պարտականութիւնները».- Խումբի մը մաս կազմելու կազմակերպական կանոնին իբր յաւելում տրուած այս ակընկալութիւնը, այստեղ շեշտուած որպէս դաշնակցական մարդու

պարտաւորութիւն, փաստօրէն կ'իմացուէր արդէն կուսակցութենէն ներս ընդունման պայմանները արտայայտող կանոնագրային առաջին յօդուածէն,- «*կենթարկուի անոր կանոններուն եւ որոշումներուն եւ ամէն ջանք կը թափէ իրականացնելու զանոնք:*»

Մենք մեկնաբանեցինք արդէն այդ տրամադրութիւնները... Չենք կրնար այստեղ չանդրադառնալ սակայն, Ադրալեանի հետեւողութեամբ, դաշնակցականի նիւթական պարտաւորութիւններուն էապէս բարոյական նշանակութեան: Ոչ որ կ'անգիտանայ, որ մեծ տարողութեամբ քաղաքական կամ հանրային որեւէ աշխատանքի յաջողութիւնը, անկախ կուսակցական մարդոց կարգապահութեան, ուժականութեան եւ ինքնանուիրումի առաջնահերթ պայմաններէն, կապուած է նաեւ նիւթական անհրաժեշտութիւններու հետ: Ուստի կուսակցութիւնը ընդհանրապէս եւ անոր գործօն միատրները առանձնապէս իրենց տրամադրութեան տակ անպայման պէտք է ունենան դրամական միջոցներ, զանոնք գործածելու համար կազմակերպական առաջադրանքներու եւ որոշումներու իրականացման ճամբուն վրայ՝ անհրաժեշտութեան պարագային: Արդ՝ կուսակցական գանձը, այսինքն կազմակերպական միատրներու թէ կուսակցութեան ընդհանրական դրամական միջոցները, կրնան գոյանալ միայն անդամներու նիւթական զոհողութիւններու՝ տարեկան ցեւեղերու եւ այլ յատկացումներու գումարումով: Ահա թէ ինչու նիւթական պարտաւորութեանց բժախնդիր յարգումը դաշնակցական մարդուն համար կը ստանայ էապէս բարոյական իմաստ. առանց անոր, ընկերներու նուիրումը կուսակցական կենդանի գործին, ինչպէս նաեւ կազմակերպութեան ուժականութիւնը՝ ընդհանրապէս, տարաբախտաբար կը մնան անբարարար Դաշնակցութեան ծրագրային թէ անմիջական նպատակներու յաջողութեան համար...

«Ո՞վ է Դաշնակցականը», Հ. Տասնապետեան

1Բ. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ՝ ԻՔՐ ՏԻՊԱՐ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ, ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ, ԶՈՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ

5

ԿԵՆԴԱՆԻ ՕՐԻՆԱԿԻ ՔԱՐՈՉՉՈՒԹԻՒՆԸ՝ ՊԱՏՍԱԿԱՆ ՉԱՐԻՔԻՆ ԴԷՍՅ

Ինչպե՞ս վարուել այդ կարգի [անլուրջ եւ անպարկեշտ] բազմա-
զան հակառակորդների հետ - դա անհատական խնդիր է ի հարկէ...
Բայց մի բան, որ պէտք է անկասկած արտայայտուի բոլոր դէպքե-
րում եւ բոլոր ընկերների մէջ,- դա վերջիվերջոյ այն արիութիւնն է,
որով նրանք երբեք չպէտք է ազդուեն այդպիսի երեւոյթներից,
որովհետեւ դրանց մէջ չկայ ոչ մի բանաւոր հիմք մեզ ոգետորոզ
դաւանանքի դէմ: Սենք մնում ենք փոքրամասնութիւն, բայց այդ
փոքրամասնութիւնը չէ, որ պիտի ենթարկուի անտարբերների,
ձեռնպահների եւ ամէն կարգի ճիգիների, իմաստակների կամ շառ-
լատանների բազմութեանը: «Այս կամ այն ընթացքը, որին հետեւում
են (որոշ հասարակական պայմաններում հ հարկէ - ատլացները
մեր կողմից) մի քանի բայց միշտ աւելի եռանդուն մարդիկ, դառնում
է ընդհանուր կարգ, ընդհանուր սովորութիւն՝ շնորհիւ այն հանգա-
մանքի, որ ուրիշներն էլ ընտելանում են նոյն ընթացքին: Առաջըն-
թաց մարդկանց օրինակին հետեւելով՝ կազմում է վերջապէս ընդ-
հանուր համոզմունք, որ բոլոր[եքեա]ն էլ անհրաժեշտաբար պէտք
է ընթանան այնպէս եւ ոչ ուրիշ կերպ», - ասում է յայտնի պրոֆեսոր
Սերգէեիչ իր դասախօսութիւններում ռուսաց իրաւունքի մասին:

Մեզ վարանումներ չեն հարկաւոր, այլ հաւատ. մեզ խօսքեր չեն հարկաւոր, այլ գործեր. մեզ թերահաւատութիւն չէ հարկաւոր, այլ եռանդ. մեզ տատանումներ չեն հարկաւոր, այլ վճռողականութիւն եւ յանդգնութիւն: Կրկնէնք անմահ Դանտոնի խօսքերը. «Il nous faut de l'audace, et encore de l'audace, et toujours de l'audace» (Մեզ հարկաւոր է յանդգնութիւն, կրկին յանդգնութիւն եւ միշտ յանդգնութիւն):

Բաւական է, որ հայ ժողովրդի ազատութեան գաղափարը նուիրական է ամբողջ ազգի եւ համայն մարդկութեան ամենահամակրելի տարրերի առաջ. բաւական է, որ յեղափոխական կռիւր թելադրում, բխում է ինքնըստինքեան այն սոսկալի իրականութիւնից, որի հրէշաւոր ծանրութիւնը այս կամ այն չափով զգացել եւ զգում է ամէն հայ մարդ: Հետեւողներ եւ զինակիցներ, համամիտներ եւ գաղափարակիցներ, համակիրներ եւ ամէն կարգի ընկերներ անշուշտ կ'ունենանք, անշուշտ կը գտնենք:

ՅՐԱՆՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՎԱՐ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ 1927ԻՆ

[Կուսակցութեան] ղեկավարութիւնը ամբողջովին ու բացառապէս մտաւորականներու ձեռքն է: Համալսարանաւարտ եւ նրբացած մարդիկ ոչ թէ բանուորութենէ բարձրացած, [այլ] եկած քաղքենիութենէ դէպի բանուորական ընտանիքին... Եւ որովհետեւ մտաւորականութիւնը, շատ աւելի թաթխուած ըլլալով այս քաղքենի քաղաքակրթութեամբ..., շատ աւելի ապականած է քան ընկերութեան միւս խաւերը, կարելի է երեւակայել խարդախութիւնները, որ կը գործուին յանուն ընկերվարութեան: [Կը հետեւին օրինակներ՝ այժմէութենէն:]

Ու ինչ որ պէտք է նշել, ընկերվարական կուսակցութեան մէջ, բացակայութիւնն է երիտասարդ մտաւորական տարրերու...

ՅՐԱՆՄԱԿԱՆ ԸՆԿՎ. ԿՈՒՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ, Վ. Շուշանիս, «Դրօշակ», 1927, ք. 2

Այո՛, թողնենք մեռելներին թաղեն իրենց մեռելները եւ ամենայն արթնութեամբ առաջ տանենք մեր արդար կռիւր: Չմոռանանք երբեք, որ եթէ հայը իր տխուր անցեալում ժառանգել է շատ բացասական յատկութիւններ, ապա այսօր նա արդէն այն բացառիկ դրութիւններից մէկումն է, երբ չարիքը կարող է զարգանալ չտեսնուած չափերով եւ վերջապէս հարուածել ազգային ամբողջ մարմինը, եթէ թուլանայ մեր դատի համար բողոքող ձայնը: ... Մենք, որ այնքան խոր զգում ենք պատմութիւնից ժառանգած ազգային թերութիւնները, որ այսօր բողոքում ենք դրանց դէմ բարձրաձայն, - մենք չենք ի հարկէ, որ պիտի անտարբեր լինենք դէպի մեր ազգային բարոյական նկարագրին աւելի եւս սպառնացող ժամանակակից մեծ վտանգը:

Սակայն ի՞նչ միջոց կարող է ներկայ պայմաններում լինել ատելի նպատակայարմար... քարոշական այլասերման դեմ կռուելու համար, քան յեղափոխական ուղին, որ մի կողմից պահանջում ու վառ է պահում սերնդի մեջ անձնականը հասարակականին ենթարկելու ամենամեծ առաքինությունը, եւ միւս կողմից ձգտում է մի ապագայի, ուր կարիք չպիտի լինի այն պակասությունների, որոնք անհրաժեշտ են դառնում այժմ՝ իբրեւ գոյութեան համար նպաստաւոր առաւելութիւններ: Այո՛, յեղափոխական դժուար կռիւն է, որի ընթացքում թշնամու դեմ կուրծքը կրծքին դիմագրաւող, իր կեանքը հայրենիքի սեղանին զոհող հայը անձնուիրութեան սուրբ կրակով տաքացնում է ժամանակակից աճող սերնդի սիրտը եւ ժողովրդի ամենաթանկագին այդ մասի մէջ կենդանի պահում ազգային ոգու պայծառ հակումները... Բարոյախօսական քարոզները չեն, որ կարող են բարձրացնել մի ժողովուրդ: «Սոված մարդը ականջ չունի», ասում է առածը: Հայը Տաճկաստանում այսօր ատելի է դժբախտ, քան մի սովեալ, եւ եթէ նա կարող է փրկուել - դա կը լինի միմիայն այդ անսահման դժբախտի աղաղակներին արձագանք տուող կենդանի օրինակների կախարդիչ ուժով...

Պարմասկան Չարիք, [Ը Միքայէլեան], «Դրօշակ», ք. 3, 1901

6

ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ՉԱՐԻՔՆԵՐԻՑ

Ձերձ չէ խոշոր չարիքներից եւ մեր յեղափոխական ասպարէզը:

Անշուշտ մեծ է այդտեղ հայ ֆեդայու խաղացած քարոշական եւ ռազմական դերը: ... Չուրկ ամէն ինչից, երկրի խուլ անկիւնում ընկած, նա պատրաստ է ամէն օր, ամէն վայրկեան ենթարկել կռիւ պատահականություններին, որպէս զի պաշտպանէ թշնամու թալանից ու ւտերումներից՝ իրեն յանձնուած վայրը: Իր կենդանի բողոքներով, իր մղած անհասասար եւ յանդուգն կռիւներով նա յաճախ բարձրացրել է հայ երիտասարդի պատերազմական ոգին եւ որոշ յարգանք ու նոյն իսկ վախ է ներշնչել թշնամուն:

Դժբախտաբար, հայ կամաւորների գոյութեան շրջանում կան եւ սեւ գծեր, որ անկարելի է աչքից թողնել: Վերջին տարիների ընթացքում հայ պարբերական մամուլը Սալմաստից, Մուշից, Կարսից եւ այլ տեղերից հաղորդում էր երբեմն տխուր լուրեր այդ շրջաններում ապրող «օտարականների», «դաշաղների», «ֆեդայիների» մասին:

... Դ՛ո՛րս վռնտել այդ սրիկաներին հայ շրջանից, վարել նրանց

հետ այնպես, ինչպես վարելու է իսկական ենիչերիների հետ, ինչպես վարում են յեղափոխական մարմինները մեր ազգային դատին դաւաճանողների հետ:

... Հ.Յ.Ղաշնակցութեան մարմիններից շատերը կուսած են այս չարիքների դէմ՝ պատժած են անարժաններին, արտաքսած են կազմակերպութիւնից, ծայրայեղ դէպքում դիմած են նոյն իսկ մահուան պատժի:

Սակայն դա բաւական չէ:

Յեղափոխական մաքուր մթնոլորտը սեւացնող յանցաորներից շատերը ազատոււմ են Ղաշնակցութեան հսկողութիւնից, յայտարարելով իրենց՝ այլ կուսակցութիւնների անդամ, նոյն իսկ դուրս՝ գոյութիւն ունեցող կազմակերպութիւններից: Այն ինչ՝ նրանց կատարած յանցանքները անդրադառնում են բոլորի վրայ, կողմնակի կերպով ազդում են նաեւ դաշնակցական շրջանների վրայ:

Չարիքը ընդհանուր է. նրա դէմ կռւելու է ընդհանուր ուժերով, առանց խտրութեան կուսակցական բաժանումների:

*

* *

Ղժբախտաբար, սրանով չեն սպառում մեր ներքին չարիքները: ... Յեղափոխական ասպարէզում դեռ եւս շարունակոււմ են գոյութիւն պահպանել մարդիկ եւ նոյն իսկ մարմիններ, որոնց գործունէութիւնը մեծ մասամբ կայանում է վարչութեան անդամների ապրուստը հոգալու եւ «սեփական» օրգան հրատարակելու մէջ: Լոկ դեր խաղալու տենչը, անձնապատանութիւնը, անհատական ձգտումները այնքան խոր արմատներ են ձգել հայերիս մէջ, որ, չնայած ընդհանուր ցանկութեան, մինչեւ օրս անկարելի է եղած ի մի գումարել բոլոր հայ յեղափոխական ուժերը: Հէնց ասպարէզից հեռանում է մի մարմին, կամ միանում է միւսի հետ՝ առաջ է գալիս մի ուրիշը, քողարկելով իր գոյութիւնը այս կամ այն մասնակի նպատակով՝ զէնք մատակարարելով, պրոպագանդ անելով եւլն. - կարծես թէ նոյն խնդիրներով չեն զբաղում արդէն գոյութիւն ունեցող կուսակցութիւնները: Մեր հասարակութիւնը այնքան խակ է դեռեւս, որ տարբերութիւն չի դնում ճոռոմաբանողների եւ իսկական գործիչ-աշխատողների մէջ, նա սորված չէ դեռեւս տալ խօսքին միայն այնքան արժէք, որքան նրա հետ կապուած է գործ: Նոյն տհասութեամբ է բացատրոււմ եւ այն ծայրայեղ, աղանդակի անհամբերողութիւնը, որ նկատոււմ է մեր յեղափոխականների շրջաններում:

... Մոռանալով բոլոր հայ յեղափոխականների ընդհանուր նպատակն ու շահը, յեղափոխականներից շատերը իրար օգնելու տեղ փորում են միմեանց ոտքերի տակ, կանգ չեն առնում մինչեւ իսկ բա-

ցարձակ թշնամութեան եւ մատնութեան առաջ: Աւելի եւս. հայերիս մէջ սակաւ չեն եւ այնպիսի դէպքեր, երբ միեւնոյն կուսակցութեան մարմիններ եւ միւնչեւ իսկ միեւնոյն մարմնի ընկերներ, այս կամ այն գործնական կէտին վերաբերեալ հայեացքների տարբերութեան պատճառով, կամ աւելի եւս վատ՝ այդ տեսակ տարբերութեամբ քօղարկելով նեղ անձնական հակակրօքիւնները - թշնամանում են միմեանց հետ եւ պատճառ դառնում ներքին խռովութիւնների:

Եւ մարմինները եւ անհատները մոռանում են, որ յեղափոխական գործի առաջադիմութեան համար անհրաժեշտ չէ բոլորովին միատեսակ հայեացքների գոյութիւնը բոլոր գործնական խնդիրների մէջ: Ընդհակառակը, մեր գործունէութեան պայմանները այնքան բազմակողմանի են, որ միակերպ գործունէութիւնը ամէն վայրում եւ բոլոր պայմաններում կարող է նոյն իսկ համարել յեղափոխական մտքի մեռելութեան նշան, կամ արդիւնք՝ վերացական հողի վրայ հիմնուած որոշումների: Համամիտ լինելով միմեանց հետ ընդհանուր ուղղութեան վերաբերմամբ, ընդունելով մեծամասնութեան կողմից տրրուած որոշումների անհրաժեշտութիւնը, բոլոր հայ յեղափոխական ուժերը օգնելու են իրար՝ առանց բռնանալու իրար վրայ, առանց ճնշելու տեղական մարմինների եւ նոյն իսկ անհատների ինքնուրոյնութիւնը ... Չէ՞ որ հէնց այսօր էլ մեր ամենամեծ ուժը ֆեդայու բարձր ու մաքուր կոչման եւ մեր պահանջների արդարութեան մէջն է: Այսօր Երրօպայի լաւագոյն մասը պաշտպանում է հայկական դատը, որովհետեւ նա դատ է առաջադիմութեան եւ մարդկայնութեան: Այսօր մեր թշնամիներից շատեր յարգում ու երգում են «ֆեդայիներին»՝ նրանց արտակարգ քաջութեան եւ անձնուիրութեան համար:

Մեր ուժը նոյնքան հայ ժողովուրդը պաշտպանող կամատրների ու զէնքի մէջ պէտք է փնտռել, որքան եւ յեղափոխականների ազնւութեան, արիութեան, դիսցիպլինի մէջ: ...

Որակը նոյնքան կարեւոր է մեզ համար, որքան եւ քանակը:

Առաջնորդող «Դրօշակ»ի, ք. 8, 1902

7

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԸ

Կուսակցութեան եւ կուսակցականներու յարաբերութեանց եղանակէն կը ծնի կուսակցութեան ուժը... Անհրաժեշտ է, որ այդ յարաբերութեանց եղանակին առողջ պահպանումը դառնայ իւրաքանչիւր կուսակցականի մտասեւեռումը...

Կանգ առնենք ժողովրդավարական կառոյցով կուսակցութեանց վրայ, ինչպիսին է Հ. Յ. Դաշնակցութիւնը:

... Կուսակցութեան եւ կուսակցականներու յարաբերութեան վայրն ու միջոցը կազմակերպութիւնն է:

Այս բացատրութիւնը, ամբողջովին ճշմարիտ ըլլալով հանդերձ, իր մէջ ունի սխալ եզրակացութեանց առաջնորդող պատկերացում մը, գոր պէտք է լաւապէս վերլուծել, ճանշնալ, որպէսզի սխալը չգործընթի, որովհետեւ ճակատագրական նշանակութիւն ունի մտքերու այն շփոթը, որ այդ սխալանքէն կ'առաջանայ:

Կրկնենք ուրեմն, թէ կուսակցութեան եւ կուսակցականներուն յարաբերութեանց միջոցը կազմակերպութիւնն է: Ամմիջապէս աւելցընելով սակայն, թէ կազմակերպութենէն անջատ պատկերացումով կուսակցութիւն գոյութիւն չունի եւ նման պատկերացումներ աղէտաբեր կրնան դառնալ:

Կուսակցութիւն մը քաղաքական նոյն մտածողութեան տէր, նոյն նպատակները հետապնդող անհատներու հաւաքականութիւնն է: Նման հաւաքականութիւն մը, եթէ չէ առաջացուցած գործելու կարելիութիւն տուող կազմակերպութիւն, կը նշանակէ մնացած է նոյն նպատակները ձեռք բերել ցանկացող մարդոց զանգուած, եւ չէ դարձած կուսակցութիւն: Կուսակցութիւնը նոյնը ցանկացողներու համադրութիւն մը չէ միայն, այլ այդ ցանկութիւնները իրականացնելու համար գործելու պատրաստ, տեսաբար գործող անհատներու կազմակերպուած հաւաքականութիւն մը:

Ուստի, կուսակցութիւնը կեանքի կու գայ երբ կ'առաջանայ կազմակերպութիւնը: Կուսակցութիւնը կայ, երբ կազմակերպութիւնը կայ: Կուսակցութիւնը կը գործէ, երբ կազմակերպութիւնը կը գործէ: Կուսակցութիւնը ուժեղ է, երբ կազմակերպութիւնը ուժեղ է...

Մարդկային տրամաբանութիւնը վարժ է *երկու տարբեր բաներ* համարելու այն երեւոյթները, որոնք իրարմով կը պայմանաւորուին... Այս մտապատկերացումին ծանրակշիռ հետեւանքը այն է, որ կազմակերպութեան մեքենայի զանազան աստիճաններուն վրայ գրտնընդող միատրոնները՝ ժողովներ ըլլան անոնք թէ մարմիններ, կամ ալ պարզապէս շարքային անհատներ, փոխադարձութեան հիմունքով իրենցմէ դուրս տեղէ մը կը սպասեն իրենց կենսունակութիւնը, ուժականութիւնը, վճռականութիւնը եւ գործելու կարելիութիւնները: «Թո՛ղ կուսակցութիւնը հրահանգէ», «կուսակցութիւնը թո՛ղ ըսէ», «կուսակցութիւնը թո՛ղ ընէ», արտայայտութիւնները իրար կը հրմըտարկեն այն սխալ պատկերացումին հետեւանքով՝ թէ կազմակերպութիւն եւ կուսակցութիւն իրարմէ տարբեր բաներ են: [Մինչդեռ անոնք, զոնէ] գործնականին մէջ, միեւնոյնն են: Չկայ կուսակցութիւն առանց կազմակերպութեան...

Կուսակցությունը, ընդհանրական, անցեալն ալ իր մէջ ներառած, անցեալին ապրած, գործած ու նահատակուած կուսակցական բոլոր առաքեալներուն կենսքն ու գործը մշտաբոն ունեւորութեան վերածած հաւաքականութիւնը (նոյնի՛սկ անիկա), կա՛յ այն ժամանակ միայն, երբ ներկայի կազմակերպական կենսքին մաս կը կազմէ...

Իսկ երբ վերադառնանք ներկային, անմիջականին միայն, այնտեղ եւս պիտի տեսնենք, թէ կուսակցութիւնը կազմակերպութեան միջոցով կ'արտայայտուի, կայ, կը գործէ ու նկարագիր կը կերտէ, իրայատուկ դիմագիծ կը ստանայ:

... Պէտք է տեսարար անդրադառնալ ուրեմն, թէ կուսակցութիւնը կայ կուսակցականներու համադրուած գործունէութեան, կուսակցականներու մտածողութեանց համադրութեան շնորհիւ: Իսկ այդ բոլորը տեղի կ'ունենայ կազմակերպութեան մէջ, կազմակերպական կենսքի ընթացքին:

... Ժողովրդավարական սկզբունքներու վրայ հիմնուած կուսակցութիւն մը զինք բաղկացնող կուսակցականներուն արտայայտութիւնն է ոչ թէ բառին տեսական, ձեւական իմաստով միայն, այլ ներքին, իրական իմաստով եւս... Հ. Յ. Գաշնակցութեան մէջ ժողովրդավարական մտտեցումը հասցուած է մինչեւ այն տեղ, որ բարձրագոյն ժողովներուն մէջ, իրենց շրջանի մեծամասնութեան կամքով եւ շրջանը ներկայացնող պատգամատրոները պարտին ժողովին ներկայացնել շրջանի մեծամասնութեան թէ՛ փոքրամասնութեան տեսակէտները. ապա իրենց վերապահուած է նաեւ ըստ խղճի ու գիտակցութեան թելադրանքին ազատօրէն քուէարկելու իրաւունքը:

Կուսակցութեան կամքին բիրեղացումը, փաստօրէն, իրապէս կ'անցնի կազմակերպութեան զանազան աստիճաններէն, սկսելով շարքային անհատ ընկերներու աստիճանէն, եւ ներկայացուցչական սիստեմով, աստիճանաբար բարձրանալով կը հասնի մինչեւ Գաշնակցութեան Գերագոյն Ժողովը՝ Ընդհանուր Ժողով, ուր դաշնակցական անհատներ, այս անգամ զգեցած շրջան մը, շրջաններ ներկայացնելու հանգամանք եւս, կազմակերպութեան գործունէութեան արժեւորումը կատարել էտք, կը գծեն ապագայ գործունէութեան ընթացքը, եւ դեռ կը սահմանեն կուսակցութեան գաղափարաբանութիւնը, սկզբունքները, նկարագիրը, ընդհանրական նպատակները...

ԱՆՀԱՏ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԻՆ ԿԵՆՍԱԿԱՆ ԴԵՐԸ

Ժողովրդավար ... կուսակցութեանց մէջ, անհատ կուսակցականներուն կեցուածքն ու գործունէութիւնը կենսական կարեւորութիւն մը ունին, կուսակցութեան կազմակերպական կառոյցի բոլոր աստի-

ճաններուն վրայ ալ: Կուսակցութիւնը անհատներուն կազմակերպութեամբ հաւաքականութիւնն է...

Այս իրողութեան սուր զգայնութիւնը միայն կրնայ անհատ կուսակցականը վերածել իր կոչումին տէր, գործօն, օգտակար, արդիւնաբեր, ուժի աղբիւր տարրի:

Այս իրողութեան անգիտացումը, հակառակ ժողովրդավարական սկզբունքներու գոյութեան, կուսակցականը կ'առաջնորդէ կրաւորական կեցուածքի մը, որ զինք կը վերածէ ենթարկուող մասնիկի մը, որմէ կու գայ կարգապահութեամբ գործող անհատ միատրի բերած ուժը, սակայն՝ այդքան միայն: Մինչ շատ ատելիւն պէտք է բերեն անհատները իրենց կուսակցութեան:

... Կուսակցութեան եկողը, իր բոլոր ուժերով անոր նպատակներուն իրականացման ծառայելը յանձն առնողը, կու գայ կուսակցութեան մը մէջ, որ ոչ միայն ունի իր կազմակերպական կառոյցը, այլ նաեւ անցեալ մը, իր կեանքի ընթացքին յայտնաբերուած իւրայատուկ կեցուածք, նկարագիր, ոգեղէն ուժ, իւրայատուկ գաղափարապաշտութիւն, նուիրումի եւ շատերու համար անըմբռնելի չափերու հասնող գոհաբերումի կարողութիւն եւ շարք մը այլ տուեալներ ու նկարագրի գիծեր, որոնք զինք կը վերածեն ապրող էութեան մը, զինք յատկանշած են տասնամեակներով, կը յատկանշեն այսօր, ու պիտի յատկանշեն նաեւ վաղը:

Այդ բոլորի գոյութեամբ, պտղաբերումով ու ճառագայթումով է, որ Դաշնակցութիւնը եղած է Դաշնակցութիւն: Իր նկարագիրն ու դիմագիրծը իր էութենէն կու գան, արդիւնք են իր կեանքին: Եթէ չըպահպանուի նկարագիրը՝ էութիւնը կը խաթարուի: Դաշնակցութեան էութիւնը անտեսող ամէն գործունէութիւն աստիճանաբար կ'աղաւաղէ Դաշնակցութեան դիմագիրծը: Ամէնէն ուժեղ, ամէնէն ազոյ գործունէութիւնն անգամ չի կրնար Հ. Յ. Դաշնակցութեան ուժի յաւելման աղբիւր մը ըլլալ, եթէ այդ գործունէութեան ընթացքին անվթար պահպանուած չէ Դաշնակցութեան նկարագիրն ու ներքին էութիւնը...

Այս իրողութեան չանդրադառնալը կամ գայն անտեսելն է, որ երբեմն պատճառ կը դառնայ անհատ կուսակցականներու կարգ մը անհասկացող կեցուածքներուն կամ արտայայտութեանց, որոնք, ժողովրդավարական կառոյցի ընծայած իրաւունքներու մատնանշումի ճամբով, կ'ուզեն Հ. Յ. Դաշնակցութեան համար ընդունելի համարել առաջադրուած այս կամ այն գործունէութիւնը, գործելակերպը. եւ կ'ընդվզին երբ իրենց կ'ըսուի թէ Դաշնակցութիւնը այդ ձեւի գործունէութիւն կամ գործելակերպ չի կրնար ունենալ, ՈՐՈՎՀԵՏԵՒ ԱՏԻԿԱ ԱՆՀԱՐԱԶԱՏ Է ԻՐ ԴԻՄԱԳԻԾԻՆ, ԻՐ ՆԿԱՐԱԳՐԻՆ, ԻՐ ԷՈՒԹԵԱՆ:

Եւ սակայն ուղիղ է այդ մատնանշումը եւ հիմնական նշանա-

կուրսին մը ունի կուսակցութեան եւ կազմակերպութեան կենսունակութեան եւ ուժի պահպանումին համար: Դաշնակցութեան ... նկարագիրը անվթար կրնայ պահպանուիլ միայն այն առեւ, երբ կուսակցութիւնը կազմող անհատները, իրենց ամէնօրեայ, տեսական, գործնական մասնակցութիւնը կը բերեն Դաշնակցութեան էութեան անվթար պահպանման աշխատանքին:

Ոչ մէկ դաշնակցական իրաւունք ունի սպասելու, որ ուրիշներ առեւնեն պէտք եղած քայլերը, զծեն հետեւելիք ուղիները, որպէսզի անվթար մնայ Հ. Յ. Դաշնակցութեան նկարագիրն ու էութիւնը: Այդ էութիւնը ամրակոտ կրնայ մնալ միայն այն պարագային, երբ ան մաս կը կազմէ կուսակցական իւրաքանչիւր անհատի էութեան, սնունդ կու տայ անոր մտածումներուն ու կը պայմանաւորէ անոր քայլերը:

... Անհատ կուսակցականը պարտաւոր է անդրադառնալու այս իրողութեանց. ան պարտի մանաւանդ գիտակցիլ, թէ իրմէ՛, իր կեցումածքէն կախուած է իր կուսակցութեան նկարագրին անվթար պահպանումը, անոր տեսական ճառագայթումը, գործելու ուժն ու կարելիութիւնները: Կուսակցական անհատը պարտաւոր է ինքզինք միախառնելու կուսակցութեան էութեան: Իսկ այդ էութիւնը երեւան կու գայ երբ մեր տեսողութեան դաշտին կը բերենք կուսակցութիւնը ԻՐ ԱՄԲՈՂՁՈՒԹԵԱՆ ՄԷՋ: Ամբողջութիւն բառը պէտք է առնել թէ՛ տարածութեան, թէ՛ ժամանակի իմաստով:

Հ. Յ. Դաշնակցութիւնը կը գործէ ներկայիս. կը գործէ Սփիւռքի մէջ: Ան սակայն այսօր առաջացած կուսակցութիւն մը չէ, Սփիւռքի համար կազմաւորուած կուսակցութիւն մը չէ եւ չի կրնար միայն Սփիւռքը հետաքրքրող հարցերով զբաղող կուսակցութիւն մը ըլլալ: Այն դաշնակցականը, որ կ'անտեսէ այս իրողութիւնը, արդէն իսկ բան մը խախտած կ'ըլլայ Դաշնակցութեան էութենէն: Հ. Յ. Դաշնակցութիւնը համայն հայ ժողովուրդի քաղաքական հիմնական շահերը պաշտպանող, անոր քաղաքական բոլոր իրաւունքներուն ձեռք բերման համար գործող ու պայքարող կուսակցութիւնն է: Դաշնակցական բոլոր միաւորներն ալ, իւրաքանչիւր անհատ դաշնակցական, պարտին տեսաբար այս իրողութիւնը առաջին գիծի վրայ պահել, իրենց գործունէութիւնը ըստ այնմ պայմանաւորել եւ հիմնականը մտասելեռում ընել:

Հ. Յ. Դաշնակցութիւնը կը գործէ այսօր. սակայն այսօր չի սկսիր իր կեանքը: Ի՛նչ ալ ըլլան կեանքի ներկայ պայմանները, ո՛ր ալ գործելու ըլլայ Դաշնակցութիւնը, իր մէջ տեսաբար ներկայ է իր անցեալը, իր մէջ կեանքի, կենսունակութեան ակունքի վերածումն են անցեալին գործած, զոհաբերած ու նահատակուած գաղափարական մեծութիւնները: Ապրիլ ու գործել այսօր, միայն ներկան նկատի ունենալով, անտեսելով Դաշնակցութեան կեանքն ու կեն-

սունակութեան աղբիւրները, արդէն կը նշանակէ անջատուիլ Գաշնակցութեան ԷՈՒԹԵՆԷՆ:

Աւանդութիւններով ապրիլ չի նշանակէր մեռելներու հետ ապրիլ, այլ մեռելներ կենդանացնել: Ով որ կը գոհաբերէ ու կը գոհուի, տեսլականի մը համար կը գոհուի ու իր գոհաբերութեամբն ալ տեսլականը կ'ամրապնդէ, կեանքին կը բերէ: Գաղափարները այդ ճամբով է, որ կը դառնան ուժի աղբիւր: Կարելի չէ Գաշնակցութիւնը առնել եւ մէկդի դնել իր գաղափարները, իր անցեալը, իր նահատակներն ու առաքեալները: Գաշնակցութիւնը պէտք է առնել նաեւ ժամանակի ընթացքի իր ամբողջութեան մէջ: Եւ պէտք է ճիգ թափել միախառնուելու այդ ամբողջութեան եւ ոչ թէ միայն մասնակիին, հին կամ նոր այս կամ այն ժամանակներու Գաշնակցութիւնը միայն ի մտի ունենալով:

Եւ եթէ տարածութիւնները, որոնց վրայ կը գործէ ներկայիս Գաշնակցութիւնը, հեռու են իրարմէ, եթէ անոնք հեռու են անցեալի գործելադաշտէն, այդ չի նշանակէր, թէ կարելի է Գաշնակցութիւնը դիտել միայն ներկայի գործունէութեան աշխարհագրական սահմաններուն մէջ: Մանաւանդ, կարելի չէ Սփիւռքի զանազան գաղութներու պայմաններուն այլազանութիւնը, անոնց ունեցած երբեմն հիմնական տարբերութիւնները նկատի ունենալով այն եզրակացութեան հասնիլ, թէ Գաշնակցութեան զանազան միատրները պէտք է գործեն «տեղական պայմաններ»ուն յարմարելով, հոգ չէ թէ այդ «տեղական պայմաններ»ը այնպիսին ըլլան, որ Գաշնակցութեան գործունէութեան եղանակը հեռացնեն իր նկարագրէն ու էութենէն: Նման մօտեցում եւս կը նպաստէ Գաշնակցութեան դիմագծի աղաւաղումին, իր նկարագրի աղարտումին: Այս չի նշանակէր անշուշտ թէ «տեղական պայմաններ»ը պէտք է անտեսել ի խնդիր միատեսակ գործունէութեան:

Այս չի կրնար նշանակել նաեւ, թէ Հ. Յ. Գաշնակցութեան գործունէութիւնը պէտք է կեդրոնացած ձեւով ղեկավարել: Նման կեդրոնացում եւս հիմնովին կ'աղաւաղէ Գաշնակցութեան էութիւնը:

... Ուրեմն, ամհատ դաշնակցականը ինքզինք Գաշնակցութեան հետ միախառնել կրնայ միայն այն ատեն, երբ Գաշնակցութեան ամբողջութիւնը միշտ ի մտի կ'ունենայ... Չուտ տեղական եւ միայն ներկայ ժամանակներու ըմբռնողութեամբ ամէն մօտեցում, հեռացում մըն է Հ. Յ. Գաշնակցութենէն:

*Բ. Փափազեան, «Ազդակ Շարքօրեակ-Դրօշակ»,
Ը. փարի, քք.30-32*

19. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ՝ ՈՉ-ԿՈՒՄԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒ (ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՅԱԻԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ) ՅԱՆԴԵՊ

8

[ԶԱՆԳՈՒԱԾԻՆ ԴԷՄ-ՅԱՆԴԻՍԱՆ]

...Դաշնակցութեան «հայ» կոչումից ծագում են մի շարք վերաբերումներ դէպի մեր հանրային հաստատութիւններն ու գործերը: Բոլոր մասնակի միութիւնները առնուազն հանդուրժելի են Դաշնակցութեան համար, բայց դուրս են նրա սահմանից: Դաշնակցականը կարող է այս կամ այն հայրենակցական միութեան անդամ լինել, բայց Դաշնակցութիւնը հայրենակցական միութիւն չէ. ինչպէս կարող է այս կամ այն յարանուանութեան անդամ լինել, բայց Դաշնակցութիւնը յարանուանութիւն չէ: Դաշնակցականը կարող է այս կամ այն գրական բարբառով գրել, բայց Դաշնակցութիւնը լեզուական խընդիրներ չունի: Սրանց ներքին հոգսերը, կազմակերպական խնդիրները, լաւն ու վատը կարող են դաշնակցականին մտահոգել, բայց կուսակցութեան հոգածութեան առարկան չեն: Որեւէ գրական, գիտական, գեղարուեստական, շահակցական եւ այլ կարգի միութիւններ կարող են դաշնակցական անդամ ունենալ, բայց Դաշնակցութիւնը վեր ու գատ է այս բոլոր մասնակի եւ անջատ միութիւններից:

Այս բոլոր միութեանց մէջ դաշնակցականը կարող է մտնել՝ **միշտ** մնալով «դաշնակցական». այսինքն պահելով իր «դաշնակցական» մտայնութիւնը, իր Ծրագիրն ու Կանոնագիրը եւ ամէն ջանք քափելով նրանց իրացման համար: Նախ Դաշնակցական գործ ու պարտականութիւն, յետոյ ուրիշ կարգի աշխատանք ու մտահոգութիւն: Գուցէ նա ունի կարողութիւններ, որոնց համար Դաշնակցութիւնն աս-

պարեզ չունի. բայց այն կարողութիւնները որ պիտանի են «դաշնակցական» գործին՝ նա պարտաւոր է արժեցնել լիովին եւ անվերապահ **իր** կուսակցութեան համար: Ինչ որ պէտք չէ Դաշնակցութեան՝ այն է տրամադրելին այլ գործի համար: Մտնելով այլազան միութեանց մէջ՝ Դաշնակցականը օգտագործում է եւ պէտք է օգտագործէ նրանց մի մեծ, ընդհանուր եւ համազգային նպատակի համար, որ ձեւակերպում է **իր** Ծրագիրը. «միացեալ, անկախ եւ ընկերվար Հայաստան»: Բոլոր մասնաւոր միութիւնները հանրային շահեր ունեն նկատի եւ այս կամ այն հանրային շահն են համարում հիմնական եւ յաճախ՝ գերադաս: Առանց այս սահմանափակ մտայնութիւնն ունենալով՝ «դաշնակցականը» մտնելով այդ կարգի միութեանց մէջ, պէտք է ջանայ նրանց հետապնդած հանրային բայց մասնակի շահերը ներդաշնակութեան բերել համազգային գերագոյն շահի հետ, որ իր Ծրագրի հետապնդածն է, եւ պիտի ջանայ իր դրոշմը դնել այդ միութեանց գործի վրայ, որ արդիւնք են տարբեր մտածութեան եւ շահիմացութեան:

Այդ միութիւնները պէտք չէ նկատել Հ.Յ. Դաշնակցութեան ենթակայ մարմիններ, ինչ որ անխորհուրդ կը լինէր եւ անիմաստ, քանի որ Դաշնակցութիւնը չունի մասնաւոր շահեր ու հոգեբանութիւն - այլ պէտք է նկատել ուժեր, որ կարող են նպաստել մեր ընդհանուր գործին: Ոչ այն ամէն ինչ որ մեր հետ չէ, մեզ հակառակ է. եւ ոչ այն ամէնը, ինչ որ մեր կազմածը չէ, դրանով իսկ դէմ է մեզ: Մեր մասնակցութեան, քաջալերութեան եւ պաշտպանութեան արժանի են բոլոր միութիւնները, որ թէկուզ մի մատ ջուր կարող են հոսեցնել դէպի մեր հանրային ջաղացքի առուն: Քանի դեռ խնդիրը վերաբերում է Դաշնակցութեան բուն գործին եւ մեր «դաշնակցական» հանգամանքին՝ մենք իրաւամբ կարող ենք ասել. «որ ոչ ընդ իս ցանէ՝ ցրուէ», այսինքն, ով մեզ հետ չի ցանում, ցրիւ է տալիս սերմը, ով չի ընդունում մեր Ծրագիրը, Կանոնագիրն ու որոշումները նա «դաշնակցական» չէ, աւելի կամ պակաս մեր հակառակորդն է եւ յամենայն դէպս միշտ տարբեր է մեզանից: Բայց երբ խնդիրը վերաբերում է մեր նպատակի հետապնդումին՝ այն ժամանակ սատանաներն անգամ դաշնակից են մեզ եւ օգտակար, եթէ մի որոշ ժամանակ ու մինչեւ մի որոշ տեղ ուղեկցող են մեզ եւ գործի ընկեր:

Այս պատճառով «դաշնակցականն» ամէն տեղ եւ ամենքի հետ կարող է լինել, մաքսաւորի եւ մեղաւորի հետ կարող է սեղան բազմել, բայց միշտ եւ ամէն տեղ մնալով «դաշնակցական» եւ քարոզելով «երկնքի արքայութիւնը», որ իր Ծրագիրն է եւ գործելակերպը: Եւ եթէ որեւէ մաքսաւոր որեւէ կերպ նպաստէ մեր գերագոյն նպատակի

իրականացման՝ դա մի շահ է ընդհանուր գործին: Եւ բնաւ արգելք չկայ, որ նա շարունակէ մնալ մաքսատր, թէւ ւսելի լաւ կը լինէր, որ նա դառնար մեզանից մէկը, մեր դասանակիցն ու գործակիցը: Դաշնակցականն անգիջող է իր համոզումների մէջ, բայց հանդուրժող է ուրիշների համոզման հանդէպ: Նա հետամուտ է իր Ծրագրի իրացման, բայց կարող է իր տարբեր կարողութիւնները եւ ազատ ժամանակը տրամադրել ուրիշ նպատակների, եթէ նրանք անուղակի նպաստում են մեր Ծրագրի իրացման:

Դաշնակցութիւնը կոչում չունի հայ մարդու բոլոր պահանջներին գոհացում տալու եւ ոչ հայոց ազգի բովանդակ շահերը պաշտպանելու: Նա արթնացնում է հայ ժողովուրդի քաղաքական մտածումը եւ ռազմական ոգին եւ կազմակերպում է հայութեան քաղաքական կամքը եւ յեղափոխական կորովը մի որոշ քաղաքական եւ տնտեսական ծրագրի իրացման հետամուտ: Այս աչքով է նա նայում հայ մարդուն եւ հայ զանգուածին. այս նպատակին տանող կարողութիւններն են նրա ուշադրութիւնը գրաւում եւ իր համագգային նպատակին օգտակար գործերն ու ճիգերն է նա գնահատում: Իր անդամներից այն է պահանջում ինչ որ օգտակար է եւ անհրաժեշտ իր Ծրագրի իրացման համար. մնացած բոլոր տեսակետներով՝ իր անդամները ազատ են ձգուած իրենց մասնաւոր նախասիրութեանց եւ գործերի մէջ: Դաշնակցութիւնը պաշտօն ու զբաղում չէ. նա մի որոշ մտայնութիւն է եւ բարոյական: Նա պահանջում է ոմանց լիակատար անձնուիրութիւնը մեր գործի համար, միւսների պատրաստակամութիւնը գոհաբերելու՝ երբ հարկը պահանջէ: Բայց քանի դէռ չի հընչած ժամը գերագոյն գոհաբերութեան, «դաշնակցականը» պարտատուր է Կանոնագրի հինգ պահանջներին գոհացում տալ եւ ամէն տեղ, ուր մտաւ՝ լինի միութիւն թէ պարզապէս օտար շրջանակ, Կուսակցութեան գաղափարները տարածել եւ մասնակի նպատակները ընդհանուր Ծրագրին ու գործին ներդաշնակել: Դաշնակցութիւնն այսպիսով թէ իր ընկերներից եւ թէ օտարներից պահանջում է այն ամէնը, ինչ որ համագգային քաղաքական արժէք կարող է ունենալ եւ իր գերագոյն նպատակին ծառայել, որ իր Ծրագրի իրացումն է կեանքի մէջ: Ինչ որ պահանջում է անհատ ընկերներից, նոյնը հետամուտ է ստանալու եւ տարբեր ու մասնակի միութիւններից: Նրանց գործունէութեան մէջ եւս իրան հետաքրքրում է համագգային արժէք ունեցող կողմը. ոչ մարդասիրականը, ոչ մասնագիտականը, ոչ [գեղ]արուեստականը, այլ ինչ որ կարող է նպաստել համագգային քաղաքական նպատակի իրացման, որ այլ բան չէ, քան իր Ծրագրի իրացումը:

*
* *

«Դաշնակցական» խումբ, մարմին թէ անհատ իրենք են, որ ճշդ-դում են իրենց վերաբերումը դեպի կուսակցական ամէն մի ներքին խնդիր եւ դեպի հանրային ամէն մի մարմին ու գործ: «Դաշնակցականը» պէտք չէ մոռանայ երբեք, որ ինքը մի **հայ** կուսակցութեան անդամ է եւ մի **քաղաքական** եւ **յեղափոխական** կուսակցութեան անդամ: Այս «հայ», «քաղաքական» եւ «յեղափոխական» բառերը նախորշում են իր բռնելիք դիրքի բնոյթը, իր ընթանալիք ճամբի ծիրը, առանց պատասխան տալու այս ու այն հարցումին. այդ պատասխանն ինքն է, որ պէտք է գտնէ եւ տայ՝ միշտ մնալով «դաշնակցական»: Նա պէտք չէ մոռնայ, որ ինքն ունի մի Ծրագիր, որի իրացման յանձնառու է եղած՝ կուսակցութեան անդամակցելով: Թէ ինչ պէտք է ձեռնարկել կուսակցութեան մէջ եւ արտաքին ո՞ր ձեռնարկներին պէտք է մասնակցել՝ կուսակցութեան Ծրագրին լաւապէս ծառայելու համար. ի՞նչ պահուածք պէտք է ունենալ անհատական կեանքի մէջ՝ կուսակցութեան վարկն ու հմայքը բարձր պահելու համար, սրանք խնդիրներ են, որ ինքը պէտք է որոշէ, եթէ մենակ է որեւէ շրջանի մէջ, եւ իր ընկերների հետ համախորհուրդ պէտք է որոշէ, եթէ կազմակերպութիւն կայ իր բնակած վայրի մէջ:

Վարմունքի այս ձեւը պարտադիր է բոլոր «դաշնակցականների» համար՝ լինեն ղեկավար թէ պարզ անդամներ: Սենակութիւնը պատճառ չէ, որ «դաշնակցականն» անգործ ու անտարբեր մնայ իր ապրած միջավայրում եւ իր գործօն դիրքը չճշդէ հանրային իրադարձութեանց եւ ուժերի հանդէպ: Իր «դաշնակցական» հանգամանքով նա մի ազդակ է կեանքի մէջ եւ պարտաւոր է քաղաքական մտածում արթնացնել եւ գործ առաջ բերել իր ապրած միջավայրում հայ զանգուածի մէջ: Այս նախաձեռնութեան ոգին բխում է մեր Կանոնագրից, որ պահանջում է «ամէն ջանք թափել» իրականացնելու մեր Ծրագիրը: Այդ Ծրագիրն է վարիչ սկզբունքը բովանդակ Դաշնակցութեան եւ ամէն մի դաշնակցականի. այդ Ծրագիրն է նաեւ, որ թելադրում է մի որոշ պահուածք եւ ընթացք դեպի հանրային ուժերն ու գործերը, դեպի օտար անձերն ու միութիւնները՝ լինեն նրանք հայ թէ այլազգի: Ինչպէս զօրքերը տրուած հրամանին հլու՝ շտկում են իրենց դէմքը աջ կամ ձախ եւ շարժում են մատնանիշ ուղղութեամբ, այնպէս էլ կուսակցութիւնը եւ կուսակցականը պարտաւոր են շարժուել Ծրագրի եւ Կանոնագրի ուղղութեամբ: Ամէն ոք պարտական է լսել այդ կանչը, որ հրաման է, յորդոր եւ սաստ միանգամայն: Հրաման փորձառուներին, յորդոր նորեկներին, եւ սաստ՝ շեղընթացներին:

Այս կարգապահութիւնը մեծագոյն ազգակներից մէկն է մեր կազմակերպութեան եւ յեղափոխիչ դեր է կատարած եւ շարունակում է կատարել մեր կազմալոյծ եւ ստրկածին ազգի մէջ: Սա մի կարգապահութիւն է, որ չի պարտադրում, այլ ամէն ոք ինքն է որոշում իր համար, իր իսկ յանձնառութեամբ: Ոչ ոք չի խնդրած կամ ստիպած, որ սա կամ նա դաշնակցական դառնան: Ամէն ոք ազատ է անդամակցիլ կամ ոչ: Բայց մէկ անգամ, որ յանձնառու եղաւ Կանոնագրի հինգ պահանջներին գոհացում տալ՝ այնուհետեւ նա պարտաւոր է կատարել իր յանձնառութիւնը հաւատարմութեամբ: Սա մի կարգապահութիւն է, որ բռնական չէ. սա տիրոջ հարկադրանքը չէ ստրուկի վրայ. սա չի ծագում մի օտար ուժից, այլ բխում է սեփական գիտակցութիւնից ու կամքից: Սա մի ուխտ է, որ ազատ մարդն ազատօրէն դնում է ինքն իր համար իր ազատ կամքով: Սա ազատ մարդկանց գործակցութեան մի պայման է ազատօրէն ընդունուած, բայց ստրկօրէն իրագործուած, ուր մարդն ինքն իր ստրուկն է եւ ոչ օտարի, ինքն իր կամակատարը եւ ոչ օտարի, որ ասել է թէ՛ ազատ է լիովին: Որովհետեւ ազատութիւնն անկարգութիւն չէ եւ ոչ սանձակոտոր մի ընթացք: Ազատութիւնը ինքնադիր օրէնքների եւ ինքնընտիր կարգերի յօժարական եւ անվերապահ հնազանդութիւնն է: «Ազատ» ու «հնազանդ», որ թում է թէ ժխտում են իրար, իսկապէս իրար լրացնում են: Մարդկային ճակատագիրն է ըմբոստանալ ու հնազանդիլ. սա տիեզերական կշռոյթի մի ցոլացումն է մարդու կեանքի եւ հոգու մէջ: Խնդիրն այն է թէ ինչի՞ դէմ ըմբոստանալ եւ ո՞ւմ հնազանդել: Իր նմանին հնազանդել հակառակ իր իսկ կամքին՝ սա կը լինէր ստրկութիւն եւ ստրկամտութիւն. իր սեփական որոշումին հնազանդել - սա կը լինէր սանձարձակութիւն. հաւաքական մի մարմնի որոշումներին հնազանդել, որին համամիտ է նաեւ ինքը - սա կը լինէր ազատութիւն՝ բառի իսկական եւ շինարար առումով: Դաշնակցութիւնը ազատ մարդկանց ընկերական խմբակցութիւն է եւ նրանց կուսակցական կազմակերպութիւնը, դրա համար նա գերազանցօրէն կարգապահ է քան որեւէ այլ մարմին: Սա մի կարգապահութիւն է, որ արդիւնք չէ արտաքին բռնադատութեան, այլ ներքին գիտակցութեան եւ խղճմտանքի: Ոչ թէ վախն է որ «դաշնակցականին» պահում է կարգապահ, այլ ամօթն իր ներքին լատագոյն հակումների հանդէպ, որոնց թելադրանքին անսալով՝ նա մի հանդիսատւոր օր երդում է տուած ընկերների ներկայութեամբ գոհացում տալ Կանոնագրի հինգ պահանջներին: Նա ձգտում է հաւատարիմ մնալ իր երդման եւ զգուշանում է շեղումներից: Նա ազատ է միանգամայն, բայց եւ կաշկանդուած է խստօրէն. սակայն, ոչ թէ դրսից մէկն է, որ պահում է նրան, այլ ինքն է, որ ձգտում է հաւատարիմ մնալ իր բնոյթի ազնուագոյն հակումներին: Իր անկարգապահ ընթացքը ոչ այնքան

օրինազանցութիւն է, որքան բարոյական անկում. յանցանք եւ օրինազանցութիւն կը լինէր, եթէ պարտադիր կարգի եւ կանոնի ստեղծումը կատարուած լինէր ուրիշի կամքով եւ բռնամար իր վրայ հակառակ իր կամքի. բայց դա անկում է, որովհետեւ ինքն է ձեռակերպած պարտադիր կարգն ու կանոնը, կամ ինքն է յանձնառու եղած նրանց հնազանդելու կամովին:

Այս պատճառով անհատապաշտ մարդիկ «դաշնակցական» լինել չեն կարող: Նրանք ստեղծելու կաշկանդուած կը զգան իրենց դաշնակցական Կանոնագրի ճիրանների մէջ եւ նրա Ծրագրի գծած ուղիների վրայ: Անհատապաշտը շատ ատելի արժէք է տալիս իր անձնական իմացութեան, քան հաւաքական իմաստութեան: Նա կարծում է թէ ամէն ոք ինքն իր վարիչն է եւ տէրն ու տնօրէնը եւ ազատ է այն պայմանով միայն, որ իր քմայքը օրէնք ճանաչուի ամէն տեղ եւ ամէն ժամանակ: Նա մոռանում է, որ ամենից անտէր է նա, որ կարծում է թէ ինքն է իր տէրը, եւ որ ամենից երերուն են այն մարդու քայլերը, որ կարծում է թէ ինքն է իր վարիչը: Ամէն լարում եւ ամէն պրկում իր թուլացումն ունի եւ ամէն մի ուժ իր յենարանը: Անհատական կամքի խթանը բաւական չէ մարդուն միշտ պիտի ու արթուն պահելու համար: Մենակեացը յաճախ մոլութեան մէջ է իր աչքը փակում, իսկ անձնամիտը՝ մոլորութեան մէջ: Մարդը հանրային կենդանի է եւ այնքան արժէք ունի, որքան հանրային է: Իր համակրանքի լայնութեամբ չափում է իր հոգու մեծութիւնը: Համակրական շրջանակի լայնացումը տանում է դէպի հերոսութիւն եւ վերջնագոյն նեղացումը՝ դէպի ոճիր: Անհատական ճիգն ու մտածումը կարող են առաւելել մի հոգեկան դաշտ հերկել, եթէ հանրային ապրումներից չեն արուած. հաւաքական մտածումն է, որ յեղաշրջում է կեանքի կերպարանքը: Այս ասպարէզում նոյնպէս՝ միտքն ու զգացումն այնքան արժէք ունեն, որքան հանրային են կամ ատակ են յետագային դառնալու հանրութեան միտք ու զգացում: Կամքն արգասաւոր է միմիայն հանրային միջավայրում եւ այնքան ժամանակ, որքան ենթակայ է հանրային խթանների, որ հասնում են օգնութեան, երբ անհատական կամքի խթանը թուլանում է: Հանրային մարդը զիջում է իր մտածումն ու կամքը մի տեղ, մի ուրիշ տեղ յաղթանակելու համար: Զիջումը չքացում չէ, այլ շեղում արգելքի հանդէպ: Կուսակցական մարդը իր ընկերների գործակցութեան մէջ է տեսնում իր մտածումի գործնական եւ իրական արժէքը եւ նրանց հաւաքական մտածումի մէջ՝ իր անհատական կամքի պիտանութիւնը: Ոչ ոք կարող է իրան ճանաչել ճշմարտապէս՝ մենակ մնալով եւ ոչ ոք կարող է հանրային մտածումներ իրացնել՝ անհաղորդ մնալով իր նմանների: Ոչ ոք կարող է հանրօգուտ գործ ստեղծել իր երկու

ձեռքով եւ հանրօգուտ մտածումներ ունենալ՝ իր մտքով միայն: Կուսակցութեան հաւաքական մտածումն այն յետանն է, որ սրում է անհատի մտածումը, իսկ կուսակցութեան հաւաքական կամքը այն կոթն է, որին յարմարելով՝ անհատական մտածումը կարող է աջ ու ձախ կտրել: Կազմակերպութեան սալի վրայ են յղկուում անհատական խառնուածքի խանգարիչ ցցուածքները եւ նրա հակակշռի տակ է, որ կամեցողութեան յաճախ կոյր ու ժը դառնում է հանրօրէն պիտանի ազդակ: Ոչ ոք, որ հնազանդել չգիտէ՝ կարող երբ եւ իցէ հնազանդութեան բերել. հնազանդութիւնը մեքենականութիւն ունի, որ մարդ պէտք է իր հոգու մէջ ճանաչած լինի, յետագային ուրիշների վրայ գործադրելու համար: Կոկոզակիզ անհատապաշտը ինքն է միայն, որ կայ. իր կօշիկը կարող է հագնել, բայց հանրային յեղաշրջումներ անկարող է կատարել, որովհետեւ այդ կարգի գործերը լինում են համադիր ճիգերով, հաւաքական մտածումով եւ գործակից աշխատանքով, այսինքն անհատի մէջ անձնականը մերժելով եւ հանրայինը առաջ քաշելով: Նա, որ չգիտէ օրինակի հետեւել, երբեք չի կարող օրինակ դառնալ: Կուսակցականն իր փորձ ընկերին նայելով է, որ դառնում է փորձուած ընկեր: Հաւաքականութեան մէջ է, որ մշակուում են հանրային բարքի օրինակները, կանոններն ու կարգերը եւ մշակուում են՝ փոխադարձ գործակցութեամբ: Հնազանդել այս կարգերին ու կանոններին, հետեւել այս օրինակներին՝ նշանակում է հաւաքական կեանքի գոյութիւնն ապահովել, իսկ հաւաքական կեանք ապահովել նշանակում է անհատական կեանքի բովանդակութիւնն ապահովել. որովհետեւ «մարդը» մարդու մէջ հաւաքական կեանքի ցոլացումն է եւ հաւաքական ճիգերի արդիւնքը. եւ մարդ այնքան աւելի մեծ արժէք ունի, որքան պայծառօրէն ցոլացնում է իր խմբակցութիւնը: Այս դէպքում է միայն, որ անհատի խօսքն ստանում է արժէք ու կշիռ, որովհետեւ նա բանաձեւում է հաւաքականութեան միտքը, զգացումն ու բարքը. որովհետեւ նա խօսում է այն, ինչ որ կարող էր եւ իր ընկերն ասել, եթէ նրա չափ խօսել իմանար. որովհետեւ նա մտածում է այն, ինչ որ՝ թէ եւ ոչ նոյն պայծառութեամբ, բայց էապէս մտածում է հաւաքական մարմնի անդամը. որովհետեւ նա գործում է այնպէս, ինչպէս կը գործէր իր ընկերը, եթէ նոյն վրձնականութիւնն ունենար: Չանգուածի համամտութիւնը, համազգացումն ու համաձայնութիւնն այսպիսով խթանում են անհատի կորովը եւ դարձնում են նրան հանրային շարժումների ազդակ, հանրային ապրումների թարգման, հանրային մտածումի առաջնորդ: Այսպիսով, անհատը կամ ինքն է օրինակ առնում կամ ինքն է օրինակ դառնում եւ ներքնապէս ազատօրէն մտածելով եւ ազատօրէն ինքն իրան յղկելով, ազատօրէն վճիռ արձակելով եւ գործի ձեռնարկելով՝ նա դառնում է ինքնաբեր եւ ինքնական մի կրկնութիւն հաւաքական

տիպարի, մտայնութեան ու բարքի: Նա մի տարբեր ցոլացումն է դառնում նոյն խորքի, որ իբր «անհատական» գիտակցուելով ներապէս, իրօք հանրային է իր էութեան մէջ: Նրա զգացումը, միտքն ու գործը այնքան անելի փայլուն են երեւում, որքան անելի շնորհք ու վճռականութիւն ունի իր հոգին եւ այնքան անելի զօրատր է իր ազդեցութիւնը եւ վարակիչ՝ իր օրինակը, որքան անելի մեծ զանգուածների արձագանք է ինքը: Նա չի կարող պարծենալ **իր** մտածումով, **իր** կամեցողութեամբ, **իր** անկախութեամբ ու ազատութեամբ, բայց իրօք նա է, որ ինքնուրոյն կամք ու մտածում ունի եւ անկախ ու ազատ նկարագիր: Այս կարգի մարդիկն են, որ երեւութապէս ազատ ու անկախ չեն, քանի որ անդամ են մի կուսակցութեան, բայց փաստօրէն զօրատր են եւ ազդեցիկ, քանի որ տիպար են մի հաւաքականութեան: Այս կարգի մարդկանց յիշատակն է, որ պահում է պատմութիւնը, որովհետեւ նրանք հաւաքականութեան ունեցածը մատուցում են նրան՝ անելի ցայտուն, վճռական ու հմայիչ տեսքով. որովհետեւ հաւաքականութիւնն իր դէմքն է տեսնում նրանց կեանքի հայելու մէջ եւ ընդունում է թէ նրանք «ոսկր են յոսկերաց եւ մարմին ի մարմնոյ»:

Կուսակցութիւնն այսպիսով կաշկանդում է իր անդամին՝ ազատութիւն տալով նրան. կապում է յանձնառութեամբ՝ եւ արձակում, որ ստեղծագործէ. գծում է ուղիները՝ բայց թողնում է, որ ամէն ոք գրնայ իր կարողութեան չափով. պարտադրում է որոշումները՝ բայց թողնում է, որ իրագործես ինչ որ ամենից անելի լաւ կարող ես իրագործել: Բանական ազատութեան մի մարզավայր է Դաշնակցութիւնը, ուր ամէն ոք կոչուած է ստեղծագործելու եւ արժեցնելու իր կարողութիւնը համազգային քաղաքական շահերի օգտին: Այս է պատճառը, որ չկան անելի լաւ ունկնդրուած բանախօսներ, քան ունի Դաշնակցութիւնը եւ անելի լաւ կատարուած որոշումներ, քան հանում է Դաշնակցութիւնը, որովհետեւ նրանք պայծառ ու ողորկ ձեւ են տալիս կուսակցական զանգուածի մտածումներին, բանաձեւում են նրա պահանջներն ու տենչերը եւ վարում են կեանքը նրանց որոշումների համաձայն: Ու քանի որ Դաշնակցականները հայ են եւ Դաշնակցութիւնը՝ հայ յեղափոխական կազմակերպութիւն, հետեւապէս միեւնոյն ժողովուրդի զաւակներն են եւ նոյն ազգի լաւագոյն երագն են ձգտում իրացնել եւ լաւագոյն տիպարը մարմնացնել - ուստի նրանց խօսքը, որ ուղղած է «ընկերներին», դառնում է մի խօսք, որ ունկնդրում է համայն հայութիւնը եւ դաշնակցականի գործը, որ կատարում է իր ընկերների որոշման համաձայն, դառնում է լայն զանգուածների համակրանքի առարկայ. ոչ այն համակրանքի, որ ծափ ու ծնծղայ է զարկում, այլ այն համակրանքի, որ ա-

պրում է հոգիների խորքը. եւ մենք տեսնում ենք, թէ ինչպէս Գաշնակցութիւնը վատարանում են անհատներ, բայց պահում են զանգրւածները, խաչակրութիւն են քարոզում նրա դէմ եւ ստանում են ովսանաններ իբր արդիւնք: Այս ամենը պէտք է ականջներին օղ անեն մեր այն բոլոր աւագ ու կրտսեր ընկերները, որ կարծում են թէ իրենց անհատական մտածումն ու կարծիքը աւելի կշիռ ունեն, քան դաշնակցական հանրութեան մտածումն ու կարծիքը. որ իրենց անձնական պատասխանատուութիւնը գերադասում են կուսակցութեան հաւաքական պատասխանատուութիւնից, որ երբեմն միտում են ցոյց տալիս շքեղօրէն մեկուսանալու իրենց անհատական տարակարծութեան մէջ: Ոչ որ մեծացած է մեկուսացումով, ամենքը շահած են հաղորդումով: Չանգուածը յանցարոր լինել չի կարող, քանի որ ինքն է դատարորն ու օրէնսդիրը: Չանգուածների հետ լինել նշանակում է յանցանքներից խուսափել: Պատասխանատուութիւնից գերծ է նա, որ թէկուզ անդունդն է գահավիժում զանգուածների հետ միասին. մինչդէռ պատասխանատու մնում է նա, որ մնում է մեկուսի իր անհատական խելքով ու «իմաստութեամբ»: Պատմութիւնը նրանց դաւաճան է անուանում. կուսակցութիւնը՝ անպիտան անդամ եւ կեանքը՝ հանրօրէն անարժէք: ...

«Մտածումներ Հ.Յ. Գաշնակցութեան մասին», Ն. Աղբալեան

2Ա. ԿԱՆՈՆԱԳԻՐԸ՝ ԻՔՐ ՍԿԶԲՈՒՆՔ ԵՒ ԻՔՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՅՑ

9

[ԲԵՂԱՆԱԲՈՐ ԱՅԼԱՏԱՐՐՈՒԹԻՒՆ՝ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՍԷՋ]

... Այսօր համարեա բոլոր քաղաքակիրթ երկրներում կողք կողքի գոյութիւն ունեն սոցիալիզմի երկու տարբեր հոսանքները - չափաւոր եւ արմատական ... Սոցիալիստական ամենամեայ համագումարներում ծեծում են հարցերը, եւ **փոքրամասնութիւնը համակերպում է մեծամասնութեան որոշումներին**: Դա կուսակցական *դիսցիպլինի* հիմնական օրէնքն է, եւ այդպիսով են միայն կանգուն մնում գաղափարական կուսակցութիւնները: Նոյնքան յարգելի ու պարտաւորիչ են բոլոր երկրների սոցիալիստ կուսակցութիւնների համար այն որոշումները, որ ընդունում են սոցիալիստական բարձրագոյն *արէոպատ*ում - միջազգային *կոնգրէս*ների մէջ:

Այդպէս այլատարր, *հերերոժէնէ* միջազգային սոցիալիստական իրականութիւնը - եւ լաւ է, որ այդպէս է նա... Այդպէս է քաղաքակրթուած Արեւմուտքում, ուր տասնեակ տարիներից իվեր մարդիկ շարունակ մշակել են ծրագիր ու *փակփոկկա*, արծարծել են տեսական աշխարհայեացքներ: Ո՞ր մնաց՝ մեզ մօտ...

Ես չեմ զարմանում, որ նոյն երեւոյթը այսօր դիտում է եւ դաշնակցական *ինսրէլիզենցիալի* մէջ: Միմպլիսր ու գռեհիկ ձեռով չի կարելի միակերպութիւն ստեղծել մի կուսակցութեան մէջ: Հոսնօժէնութիւնը

չպէտք է դառնայ **անգիտակից երամականութիւն** ... Մտածումների ու կարծիքների այլազանութիւնը կենսունակութեան եւ զարգացման գրաւական է ... իրաքանչիւր կուսակցութեան մէջ: ... Կարծիքների բախումից է որ ժայթքում է ճշմարտութիւնը:

Ի՞նչ կայ աւելի անկապտելի ու անբռնաբարելի՝ քան մարդկային ego-ն, եսը: Չպէտք է, ի հարկէ, երեակայել այդ ego-ն որպէս մարմնացումը բիրտ *էգոիզմի*, եսապաշտութեան... Իրաքանչիւր անհատի ոչ միայն իրաւունքն է, այլ եւ պարտականութիւնը ... հոգալ իր սեփական **ինքնահաստատումը**. [այդ] մի սոցիալական անհրաժեշտութիւն է ... Դեռ օրէնք է դաշնակցական ղեկավարող *ինստիտյուցիան* մէջ, ուր **ընդհանուր իդէալի, ծրագրային դաւանանքի սահմաններում** իրաքանչիւրը ազատ է մտածելու եւ գործելու ըստ իր հայեցողութեան: *Դիսցիպլինի* խախտում լինում է միայն այն դէպքում, երբ կազմակերպութեան այս կամ այն անդամը **գործում է հակառակ ընդհանուր ժողովից գծուած ծրագրի:**

... Արդիւնաբերական-առեւտրական մեծ կենտրոններում ունինք կուսակցութեան դրօշակի տակ բաւական ստուար երիտասարդութիւն, ժիր, հարցասէր ու զաղափարական, գիտութեան ծարաւ, վարժ ծրագրային, թէորիական խնդիրներու եւ միանգամայն սոցիալիստական աշխարհայեցողութեամբ:

Այլ է, ի հարկէ, պատկերը գաւառական հեռու ծայրերում: Այնտեղ դաշնակցական երիտասարդութիւն ղեռ միայն յանձին փոքրաթիւ անհատների է իւրացրել սոցիալիստական վարդապետութիւնը ... Գաղափարները իրենց տարածման ու պատուաստումի համար պահանջում են՝ թէ՛ ժամանակ, եւ թէ՛ մանաւանդ, շատ թէ քիչ նորմալ պայմաններ. իսկ ... գաւառների մեր *ինստիտյուցիան* չունի ոչ մէկը եւ ոչ միւրը, որ անողորք իրականութիւնը ուրիշ կարգի հոգսերով է ծանրաբեռնում նրան...

Եւս առաւել - **դաշնակցական մասսան...** Նոյնիսկ արդիւնաբերական կենտրոններում, այդ մասսայի միայն մի փոքրիկ տոկոսն է իւրացրել կուսակցական աշխարհայեացքը: [Արեւմտեան Եւրոպայում եւս քաղաքային պրոլետարիատի մի ստուար մասը -ղեռ մի կողմ թողած պահպանողական գիւղացիութիւնը- տակաւին հեռու է սոցիալիզմից]... Սոցիալիզմը հասարակութեան **արմատական վերանորոգման** խնդիր է դնում եւ այդ պատճառով նրա միսսիան շատ բարդ է, դժուարին ... Նոյնիսկ հոծ մասսաները, որոնք կանգնած են սոցիալիզմի դրօշակի տակ, ամբողջապէս գիտակից սոցիալիստներ չեն. մի որոշ տոկոսը իւրացնում է սոցիալիզմից միայն նուազագոյն պահանջները, որ վերաբերում են աշխատաւորի **ներկայ կացութեան** բարելաւման ... ու բաւական ժամանակ յետոյ են դառնում գիտակից սոցիալիստ, ընդունում կուսակցութեան մաքսիմալ պահանջները ...

Մեզ մօտ Կովկասում, մեր հակառակորդ [ս.դ.ները] կ'ուզեին ... միեւնոյն կտորից թխել մի ամբողջ կազմակերպութիւն... Դաշնակցական *իւնօրէի գեղնիս* ... հրաժարում է հետեւել [այդ մեթոդների], որոնք ... ուզում են հիմնել մի նոր եկեղեցի, նոյն տարամերժ, անհամբերող դրզմայականութեամբ, եւ Կարլ Մարքսը՝ իբրեւ այդ եկեղեցու անսխալական, անսասան պետ...

... Դաշնակցութեան ղեկավարող մարմինները երամական ու մըտասպան համատարրութիւնից գերադասում են այն **բեղմնաւոր ալլատարրութիւնը**, որով նրանք ձգտում են գրաւել, զինուորագրել ոչ թէ ատոմատներ, սերտած ու չմարսուած ֆորմուլաների թութականման արտասանողներ,- այլ ստեղծել գիտակից քաղաքացիներ, որոնք ընդունակ լինեն նախ եւ առաջ **քննադատաբար վերաբերուել** դէպի մտքի ու իրականութեան բոլոր այլազան արտայայտութիւնները:

Այլատարր, բայց ոչ հակամարտ, ոչ տարբեր՝ իրենց հիմնական համոզմունքներով: Դաշնակցութեան դրօշակի շուրջ համախմբուած մտատրականութիւնը ունի իր մէջ թեորիական երանգներ, տարբերութիւններ, բայց նա մէկ է իր հիմնական սկզբունքներով...

«Դաշնակցութիւնը եւ նրա Հակառակորդները», Մ. Վարսանդեան

10

[ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՅՕՐԻՆՈՒՄԸԸ]

Կուսակցութեան ծրագիրը մեր նպատակի մասին է խօսում եւ մեր նպատակն է հիմնաւորում, իսկ կանոնագիրը խօսում է մարմինների եւ անդամների փոխադարձ կապի մասին: Կուսակցութեան ընթացիկ կեանքին մէջ ծրագիրը նուազ է յիշում քան կանոնագիրը, որ յարատեւ գործում է: Ծրագիրը հասկանալու համար պահանջում է մի որոշ կրթութիւն եւ մտքի մեծ ճիգ, մինչդեռ կանոնագիրը ըմբռնելու համար պարզ մեկնութիւնը բաւական է, որովհետեւ կազմակերպութեան ընթացիկ կեանքը ամէն օր գործնական դաս է տալիս կանոնագրի մասին: Այս հանգամանքը ոմանց այն կարծիքին է բերած, թէ Դաշնակցութիւնը պարզապէս կազմակերպութիւնն է հայութեան, մոռանալով, որ ամէն կազմակերպութիւն մի որոշ նպատակ ունի եւ ինքնանպատակ լինել չի կարող: Մեր կազմակերպութիւնը ծրագրի իրագործութեան համար է, հետեւապէս մեր ծրագիրը գերադաս է կանոնագրից, թէւ կանոնագրի պարտադրանքը մենք շատ աւելի յաճախ ենք զգում, քան ծրագրի գոյութիւնը:

Վերից նայելով մեր կուսակցութեան շէնքին, ինչպէս որ այդ շէնքն երեւում է մեր կանոնագրի միջից՝ նրա հիմքը ժողովներից է սկսւում եւ ժողովով է վերջանում: Իրաւասութիւնը մեր կուսակցութեան մէջ ժողովների ձեռքին է: Մարմինները ժողովներից են բխում եւ ժողովներին ենթակայ են: Ժողովները գերադաս են, իսկ մարմինները ստորադաս: Ժողովներն օրինադրում են եւ մարմիններն իրագործում: Ոչ մէկ մարմին կարող է իր գերադաս ժողովը լուծել, բայց ժողովները կարող են ստորադաս մարմինները լուծել, երբ տեսնեն թէ նրանք իրենց որոշման հակառակ ընթացք ունին: Մարմինների եւ անդամների իրաւունքները կշիռ ու արժէք ունին, որովհետեւ ժողովները այդպէս են նախատեսւած:

Կուսակցութեան հիմքը կազմում է խմբական ժողովը, իսկ շէնքի կատարը՝ Ընդհանուր ժողովը, որից գերադաս ժողով չունի Դաշնակցութիւնը: Այս հանգամանքը բնորոշում է մեր կուսակցութեան կերպարանքը. Դաշնակցութիւնը մենատիրական չէ, այլ [ժողովրդավարական] կազմ ունի, այսինքն այնտեղ իշխել չի կարող որեւէ անհատի կամքը, որքան եւ այդ անհատը տաղանդաւոր եւ անձնուէր լինի. այնտեղ իշխում է ժողովների կամքը, որ կարող է անհատներին բարձրացնել եւ իջեցնել՝ նայելով նրանց ընթացքին ու գործին: Այդ իսկ պատճառով դաշնակցական ընկերները ո՛չ թէ կապուած են իրար հետ եւ Դաշնակցութիւն ասելով ո՛չ թէ այս ու այն մարմինն է հասկացում կամ այս ու այն ընկերների խումբը, այլ բոլոր ընկերների համագումարը: Բոլոր ընկերները ինչ գործ եւ կատարած լինեն կամ ինչ շնորհք եւ ցուցադրեն՝ իբրեւ կուսակցութեան անդամներ նոյնիրաւ են, այսինքն նոյն իրաւունքներն ունին եւ իրար հաւասար են: Ոչ մէկը նրանցից գերադաս է միւսից եւ ոչ մէկն իրաւունք ունի բռնանալու միւսի վրայ: Բոլոր ընկերները միասին առած կազմում են Դաշնակցութիւնը եւ բոլոր ընկերների հաւքական կամքն է, որ իշխում է կուսակցութեան մէջ: Այդ հաւաքական կամքին ենթակայ են եւ մարմինները եւ ընկերները: Այդ կամքն է տնօրինում կուսակցութեան ճակատագիրը: Նա է տէրն ու տնօրէնը բովանդակ կազմակերպութեան: Բայց այդ գերագոյն իրաւունքը ընկերներն ստանում են կանոնագրի հիման վրայ: Այդ կանոնագրի հիմնական պայմանն ընդունելով է, որ սոսկական մի հայ իրաւունք է ձեռք բերում Դաշնակցութեան բախտը տնօրինելու իր մնան ընկերների հետ միասին եւ համագումարը: Նա երդումով խոստացած է հաւատարիմ մնալ մեր ծրագրին եւ կանոնագրին, ուստի եւ տիրացած է այդ մեծ իրաւունքին: Այն օրը, որ նա անտես է իր կանոնագիրը, կը դադրի կուսակցութեան անդամ նկատուել եւ կը գրկուի կուսակցութեան կեանքը տնօրինելու մեծ ու բարձր իրաւունքից:

Մեր կուսակցութեան յօրինուածքի մէջ ժողովներն ու մարմինները յաջորդում են իրար եւ իրար գերադասում: Խմբական ժողովը ընտրում է իր վարիչ մարմինը - խմբապետը, գանձապահն ու քարտուղարը - որոնք խմբի հակակշռին ենթակայ են եւ կարող են փոխուել նոյն խմբի կամքով: Մի քանի խմբեր (3-4) միասնաբար ժողով գումարելով՝ ընտրում են ենթակոմիտէ. իսկ աւելի շատ խմբեր (50 եւ աւելի ընկերներ), եթէ նոյն վայրի մէջ են ապրում՝ միասնաբար ժողով գումարելով՝ ընտրում են այդ վայրի կոմիտէն: Եթէ այդ 50 ընկերները տարբեր վայրերի մէջ են՝ ընտրութեան տարբեր եղանակ են կիրարկում. խմբերն ընտրում են մէկ կամ մի քանի պատգամաւոր, որ իրաւունք ունեն խօսելու խումբի անունից եւ որ իրար քով գալով՝ կազմում են ժողով եւ ընտրում են կոմիտէ: Այսպէս է ընտրում եւ մի շրջանի կենտրոնական կոմիտէն, ինչպէս նաեւ Դաշնակցութեան Բիւրօն: Կոմիտէութեան ընտրական ժողովը կոչւում է Պատգամատրական, կենտրոնական կոմիտէ ընտրող ժողովը՝ Շրջանային, որին մասնակցում են կոմիտէների եւ նրանց շրջանի պատգամատրները, իսկ Բիւրօն ընտրում է Դաշնակցութեան Ընդհանուր ժողովի կողմից, որին մասնակցում են բոլոր կենտր. կոմիտէների եւ նրանց շրջանի պատգամատրները: Չկայ Դաշնակցութեան մէջ աւելի բարձր եւ իրաւասու ժողով քան Ընդհանուր ժողովը, ինչպէս չկայ աւելի բարձր եւ իրաւասու մարմին քան Բիւրօն: Բոլոր մարմինները համարատու են իրենց ընտրող ժողովներին եւ պատասխանատու են նրանց առջեւ: Բոլոր մարմինները պարտաւոր են իրենց ընտրող ժողովների որոշումներն իրագործել: Բոլոր ժողովներն համարատու են իրենց ընտրած մարմինների հանդէպ եւ իրաւունք ունեն պատիժ ու պատուհաս տնօրինելու նրանց մասին: Խումբը կարող է փոխել իր ընտրած մարմինը եւ պատժել իր անասատող ընկերը: Ընկերների ընդհանուր ժողովը կարող է իր դիտողութիւնն անել ենթակոմիտէին եւ կոմիտէին եւ դժգոհութեան պարագային չվերընտրել մարմինը: Շրջանային ժողովը իրաւունք ունի համար պահանջելու կենտր. կոմիտէից եւ նրան պատասխանատուութեան հրաւիրելու: Նոյնը կարող է անել Ընդհ. ժողովը Բիւրօնի վերաբերմամբ: Խմբի որոշումները պարտադիր են իր անդամների եւ իր ընտրած մարմնի համար. ընկերական ընդհանուր ժողովի կամ պատգամատրական ժողովի որոշումները պարտադիր են ենթակոմիտէի եւ կոմիտէի համար. Շրջանային ժողովի որոշումները օրէնք են կենտր. կոմիտէի համար, իսկ Ընդհանուր ժողովի որոշումները՝ Բիւրօնի համար: Բոլոր ժողովների որոշումները սակայն պէտք է կանոնագրի հիման վրայ տրուին եւ չհակասեն կուսակցութեան ծրագրին եւ որդեգրած գործելակերպին: Միմիայն ա՛յդ պայմանով որոշումները կարող են պարտադիր համարուել եւ օրինական ուժ ստանալ:

Ինչպես տեսնում էք՝ ժողովներն են որ մարմիններ են ընտրում եւ նրանց պատասխանատուութեան կանչում: Մարմինների անդամները քանի դեռ ժողովական են եւ մարմնի անդամ չեն ընտրուած՝ ոչ մէկ առաելութիւն ունին միւս ժողովական ընկերների հանդէպ: Բայց երբ ընկերների մեծամասնութեան հաւանութեամբ մի քանիսը ընտրուեն մարմնի անդամ՝ կացութիւնը կը փոխուի. ընտրուածները կը դառնան գործադիր իշխանութիւն եւ վարիչ, իսկ ընտրողները կը մնան ենթակայ: Շարքային պարզ ընկերը սակայն իրաւասու վարիչ կը դառնայ ո՛չ թէ իր կամքով, այլ ընկերների մեծամասնութեան հաւանութեամբ, եւ ո՛չ թէ ընկերների քմայքով, այլ կանոնագրի հիման վրայ: Կանոնագիրն է, որ նախորոշած է թէ ի՛նչպէս պիտի ընտրուին մարմինները եւ կանոնագիրն է, որ որոշած է մարմինների իրաւասութեան սահմանը. եւ ուրեմն ընկերները ենթարկուած են ո՛չ թէ մարմնի անդամներին, այլ կուսակցութեան կանոնագրին, երբ կատարում են մարմնի կարգադրութիւնները: Շարքային ընկերները երդում տուած են ընդունել կանոնագիրը եւ ենթարկուել նրան. այս երդումի ուժովն է, որ շարքային ընկերը պարտաւոր է ենթարկուել իր գերադաս մարմինների եւ ժողովների որոշումներին: Այս կամ այն ընկերը չէ, որ իրաւունք է համարում նրան հրամայելու, այլ մարմինը, որի մէկ անդամն է այս կամ այն ընկերը, իսկ մարմնին կանոնագիրն է տուած հրամայելու եւ հրահանգելու իրաւունքը: Այսպիսով մարմինների կանոնական որոշումների չենթարկուիլ՝ կը նշանակէ կանոնագիրն անտեսել եւ ընկերների մեծամասնութիւնն անարգել, քանի որ այդ մեծամասնութեան կամքով է, որ մի քանի պարզ շարքային ընկերներ ընտրուած են իբր իրաւասու եւ ղեկավար մարմին: Այս է պատճառը, որ կանոնագիրը պատիժներ սահմանած է անաստող ընկերների համար՝ պարզ յանդիմանութիւնից սկսած մինչեւ վտարումը կուսակցութեան շարքերից: Զանի որ կանոնագիրը կուսակցութեան ողնաշարն է, առանց որի նա քայլել ու գործել չի կարող՝ ինքնին պարզ է, որ կանոնագիրն անտեսողը սպառնում է խորտակել կուսակցութեան ողնասիւնը, քայքայել նրա յօրինուածքը եւ անգործութեան դատապարտել: Բնական է որ կուսակցութիւնը իր շարքերից հանէ այդ կարգի անաստող ընկերը, որ չի գիտակցում թէ իր առաջին եւ նուիրական պարտականութիւնն է պահպանել կուսակցութեան շէնքը, որի սիւներն են կանոնագրի յօդուածները եւ որի շնորհիւ միմիայն նա ընդունուած է կազմակերպական շարքերի մէջ:

Միմիայն Հ.Յ.Դ. Ընդհանուր ժողովն է, որ իրաւունք ունի ծրագիր եւ կանոնագիր փոփոխելու եւ միմիայն այդ ժողովի որոշումներին է, որ պարտաւոր են ենթարկուել **բոլոր** դաշնակցականները՝ ուր եւ

գտնուիմ, բոլոր ժողովները՝ ուր եւ գումարուիմ, եւ բոլոր մարմինները՝ ուր եւ գործեն: Այս իսկ պատճառով բոլոր դաշնակցականները պարտաւոր են ենթարկուել կուսակցութեան կանոնագրին, որովհետեւ նրա մէջ խտացած է Ընդհանուր ժողովի կամքը, որ պարտադիր է բովանդակ Դաշնակցութեան համար: Իսկ Ընդհանուր ժողովն իր հերթին բոլոր դաշնակցական ընկերների կամքն է որ արտայայտում է իր որոշումներով: Այսպիսով կանոնագրին չենթարկուել՝ կը նշանակէ համայն Դաշնակցութեան կամքն անտեսել եւ բազմա-հազար ընկերների հաւանութիւնն անարգել: Բովանդակ Դաշնակցութեան ձայնն է որ հնչում է կանոնագրի մէջ եւ ասում է մեր շարքերը մտնողին.- Բարեկամ, մենք դաշնակցականներս այս կանոնագրով կապուած ենք իրար հետ եւ այս կանոնագրին ենթակայ են մեր բոլոր ընկերները, ժողովները եւ մարմինները. եթէ փափաք ունես մեր շարքերը մտնելու եւ մեզ ընկեր դառնալու՝ պէտք է պատուիդ վրայ երդուես, որ ընդունում ես այս կանոնագիրը եւ խոստանում ես ենթարկուել նրան. այլապէս՝ ազատ ես: Եւ մի անգամ երդում տուողը, եթէ պատիւ ունի, պարտաւոր է ենթարկուել կանոնագրին եւ պաշտպանել նրա բարձր հեղինակութիւնը:

Ահա թէ ինչու դաշնակցական գիտակից մարմիններն ու ընկերները խստօրէն կառչած են կանոնագրին եւ նախանձախնդիր են նրա պաշտպանութեան: Մարմինները կոչում ունին պահակ կենալու կանոնագրի պահպանութեան, որովհետեւ բովանդակ Դաշնակցութեան կամքն է խտացած նրա մէջ. թերացումը նրա հանդէպ՝ անարգանք է այդ կամքին: Կազմակերպութեան համար չկայ գերագոյն օրէնք քան իր կանոնագիրը, ինչպէս չկայ գերագոյն ուղեցոյց քան իր ծրագիրը: Կանոնագիրը բարձրագոյն հեղինակութիւնն է կուսակցութեան համար. նա գերիշխան կամքն է բովանդակ Դաշնակցութեան, նրա ենթակայ են ու պէտք է ենթարկուեն բոլոր ընկերները, ժողովներն ու մարմինները՝ սկսած խմբից մինչեւ Ընդհանուր ժողով եւ խմբապետից մինչեւ Բիւրօ: Կուսակցութեան կանոնական կեանքը այն դպրոցն է, ուր անգիտակից հայ աշխատատորը գործնապէս դառնում է օրինապահ եւ իրաւագգաց քաղաքացի: Այստեղ է, ուր նա յանգէտս, տեսական մարզանքներով՝ սովորում է իրաւունք ճանաչել, պարտականութիւն կատարել, օրինապէս հնազանդել եւ իրաւապէս ենթարկել: Աւանդական քմահաճոյքի գերեզմանն է կանոնագիրը եւ շարքերի իրաւուտոյց դեկավարը: Նրա պաշտպանութիւնը բոլոր դաշնակցական ընկերների իրաւունքն է, ինչպէս նրան հնազանդելը՝ բոլորի պարտականութիւնը...

«Մեր Կանոնագիրը», ա., Ն. Աղբալեան.

[ԿԱՆՈՆԱԳԻՐ ԵՒ ՀՈԼՈՎՈՅԹ]

...Եթե ամեն մի դաշնակցական լրի գոհացում տայ Կանոնագրի հինգ պահանջներին միաժամանակ, կարող են կարծել, որ այն դեպքում մենք կ'ունենանք միօրինակ տիպարների մի ձանձրալի բազմություն: Կրկնելով միեւնոյն տիպարը, այդ միօրինակությունը թույլ է թէ պետք է իշխէր ժամանակի եւ տարածութեան մէջ, այսինքն ամէն տեղ նոյն տիպարները եւ ամէն ժամանակ նոյն տիպի մարդիկ: Սակայն, այդպէս չէ իրօք. Դաշնակցութիւնը բազմազան տարբերութեանց ցուցահանդէս է:

Դաշնակցականները **նման** տիպարներ են, ու՛ր եւ ե՛րբ հանդիպեն, բայց **նոյն** տիպարները չեն: Ինչպէս եռանկյունիները եռանկյուն են ամէն տեղ, բայց կան մեծ ու փոքր, սուրն ու բութը, ուղղածիրն ու կորածիրը: Ամէն մի դաշնակցական շարժում է իր տիպարի ուղղութեամբ, բայց ոչ ամէնքը նոյն արագութեամբ եւ նոյն տեղն են հասած: Ամէն մէկն աշխատում է «*ամէն ջանք քափել*», բայց ոչ ամէնքը նոյն գործերի մէջ եւ նոյն չափով: Իր էութեան մէջ անզան -իր Ծրագրի եւ Կանոնագրի մէջ- Դաշնակցութիւնն անշարժ կուսակցութիւն չէ: Ոչ միայն իր գործերն են փոխում, այլ եւ ինքը իբր գործող: Քառասուն տարուայ ընթացքին ոչ միայն մարդիկ են փոխուած, այլ եւ նրանց հմտութիւնները: Այդ փոփոխութիւնը բնական է եւ անհրաժեշտ: Այդ փոփոխութիւնն է Դաշնակցութեան ներքին պատմութիւնը, անկախ նրա գործերից, որ նրա արտաքին պատմութիւնն են կազմում: Փոփոխուելով միասին՝ Դաշնակցութիւնը մնում է **մի** կուսակցութիւն եւ իր բնոյթով **նոյն** կուսակցութիւնը: Սիւսժամանակ նա ամէնից աւանդապահ կուսակցութիւնն է եւ այդ աւանդութեան մէջ է իր միութեան ու նոյնութեան գաղտնիքը: Նա ա՛յն չափով անփոփոխ չի մնում, որ հինանայ եւ անպետքանայ հանրային կեանքի ղեկավարութեան համար եւ այդ իսկ պատճառով դուրս նետուի կեանքից, բայց եւ ա՛յնքան չի փոփոխուում յեղեղուկ, որ վստահութիւն չներշնչէ իբր յենարան կամքերի եւ լծակ՝ գործերի: Նա իր բնոյթով մնում է նոյնը, բայց յարմարում է կեանքին: Եւ որքան խստօրէն աշխատում է հաւատարիմ մնալ իր աւանդութեանց, այնքան լոջօրէն յարմարում է կեանքին: Նա նման է մարդկային լեզուին: Ամէն ոք աշխատում է ճշտօրէն խօսել իր լսած լեզուն եւ հարազատ մնալու ճիգով՝ փոխում է լեզուն, ու մի օր տեսնում ենք գրաբարը դարձած է աշխարհաբար, թէեւ 1500 տարի բոլոր գաւակներն աշխատած են իրենց մօր լեզուն խօսել հաւատարմութեամբ: Երկուսն էլ հայոց լեզու են, բայց տարբեր են

արդէն. մնան են, բայց նոյնը չեն: Այս է բնական ճամբան ամէն մի բարեշրջութեան: Ամէն փոփոխութիւն ոչ թէ բեկումն է այստեղ, այլ հոսում. ոչ յեղաշրջում, այլ բարեշրջում: Չգտելով յեղաշրջել հայոց կեանքի պայմանները, Գաշնակցութիւնը ներքուստ բարեշրջում է. ուստի նա մնում է մի եւ նոյն, թէեւ փոփոխում է շարունակ: Կանոնագրի հինգ պահանջները շարունակում են մնալ պարտադիր, բայց գոհացում են տարբեր եղանակով ու բովանդակութեամբ:

Այս երեւոյթը ընկերաբանական է եւ արժէ կանգ առնել իր մեկնութեան վրայ: Այս ի՞նչպէս է, որ Գաշնակցութիւնը մնում է նոյնը, բայց եւ փոփոխում է շարունակ՝ յարմարուելով կեանքին ու միջավայրին: Հիմնական պատճառը իր կատարած գործն է: Միշտ հաւատարիմ իր Ծրագրին ու Կանոնագրին՝ Գաշնակցութիւնը յղանում ու կատարում է գործեր, որ իր համոզումով տանում են դէպի Ծրագրի իրացումը: Անկախ ձեռնարկի ելքից -յաջող կամ անյաջող-, այդ գործի համար մշակած մասնատր ծրագիրն ու որոշումները՝ գործի վախճանին՝ դառնում են աւելորդ. նրանք յղացումներ ու վճիռներ չեն այլեւս, այլ իրացած փաստեր: Այդ իրացած փաստերի հետեւանքով փոխում է կացութիւնը: Կեանքի մէջ ստեղծում է մի փաստ, որ առաջ չկար. եւ կուսակցութիւնը արդէն կատարած է մի գործ, որ առաջ չուներ: Նա հիմա մի որոշ գործ կատարած կազմակերպութիւն է: Ընկերները հիմա ունեն մի գործի փորձառութիւն, որ առաջ չուներին: Ուրիշ ընկերներ աջակցած են արդէն մի որոշ գործի, որի մասին առաջ լուր իսկ չուներին: Եւ շրջապատը, որ առաջ մի որոշ վերաբերում ուներ դէպի կուսակցութիւնը, այս նոր գործից յետոյ փոխում է իր վերաբերումը դէպի լաւը կամ վատը, նայած թէ կատարուած գործը բարիք է համարում, թէ չարիք: Գործից շահողն ու տուժողը տարբեր վերաբերում են մշակում դէպի գործողը: Մի խօսքով փոխում է կացութիւնը ներքուստ եւ արտաքուստ. կուսակցութիւնն իր գործով, որ նոր դրուագ է դառնում իր հին պատմութեան, գործողն՝ իր ձեռք բերած փորձառութեամբ. աջակից ընկերներն՝ իրենց օժանդակութեամբ, շրջապատն՝ իր վերաբերումով:

Ձեռնարկում է հերթական գործը Ծրագրի իրացման համար. կազմակերպում է նոր ձեռնարկը, բայց արդէն տարբեր են պայմանները ներքուստ եւ արտաքուստ: Թէ՛ յղացողն ու որոշողը եւ թէ գործադրողը փոխառու են արդէն, նրանք նոյն մարդիկն են գուցէ, բայց արդէն փորձառու են: Գործի ծրագիրը ու որոշումները նոյնը չեն, ինչ որ առաջ, քանի որ ձեռնարկն ինքը նոր է եւ տարբեր, բայց հին փորձառութիւնն ազդում է նոր ծրագրի եւ որոշումների վրայ: Սրանք նոր մտայնութեան արդիւնք են, որ ինքն արդէն արդիւնք է նոր փոր-

ձառութեան: Կուսակցութիւնն իրան զգում է աւելի փորձառու, քան նախորդ գործի ժամանակ, ուստի աւելի ինքնավստահ է կամ աւելի զգուշատր իր որոշումների մէջ, նայած թէ նախորդ գործը յաջող թէ անյաջող ելք է ունեցած: Նոյն ելքի հետեւանքով՝ նոր ծրագիրը կազմում է աւելի լայն կամ աւելի նեղ չափերով: Մի խօսքով՝ կուսակցութիւնը նոյնն է, բայց կուսակցականը փոխուած է. իր նախորդ գործը մի փաստ է արդէն թէ՛ հանրային կեանքի մէջ եւ թէ՛ կուսակցականի եւ հանրութեան գիտակցութեան մէջ: Եթէ նախորդ ձեռնարկը մի ահաբեկում էր, այսօր ահաբեկուածը չկայ այլեւս: Գործի պայմանները փոխուած են արդէն: Եթէ ահաբեկուածը խուզարկութիւն էր կատարում շարունակ՝ նրան փոխարինողը զգուշանում է. դրա հետեւանքով զէնքի փոխադրութիւնը դիւրանում է: Իսկ եթէ նորեկն աւելի դաժան է՝ հալածանքները խստանում են, կացութիւնը վատթարանում է, ընկերները բանտարկւում են, ոմանք նահատակւում են, ուրիշները խուսափում են. բուսնում են մատնիչներ եւայլն եւայլն: Այսպէս ուրեմն գործերի հետեւանքով փոխուում է կացութիւնը - գործիչներն ու շրջապատը, փորձն ու մտայնութիւնը եւ դրա հետեւանքով նոր որոշումներ են կայացւում եւ գործելու նոր ճամբաներ գծւում: Բայց հիմնականը մնում է նոյնը այս դէպքում: Ծրագիր ու Կանոնագիր փոփոխութիւն չեն կրում. փոխուում են միայն մարդիկ, որոշումներն ու ձեռնարկները: Կուսակցութիւնը նոյնն է իր Ծրագրով ու Կանոնագրով, բայց փոխուած են իր որոշումները, գործերն ու անդամները:

Ոչ միայն մենք ենք, որ փաստեր ստեղծելով ազդում ենք մեզ եւ ուրիշի վրայ, այլ եւ ուրիշ միջավայրերում ստեղծւում են փաստեր, որ ազդում են մեզ ու մեր միջավայրի վրայ: Ծագում է համաշխարհային պատերազմը՝ ոչ մեր կամքով ու որոշումով: Ստեղծւում է անկախ Հայաստանի մի համեստ կորիզ: Փոխուած են միջավայրի պայմանները. փոխուում են գործերն ու գործիչները: Նոյն «դաշնակցական» մարդիկ են, բայց պէտք է ուրիշ գործեր յղանան եւ ուրիշ որոշումներ կայացնեն: Հին փորձառութիւնն օգտագործւում է նոր յղացումների համար, հին գործիչները՝ նոր գործերի համար, կատարած գործերն ազդում են մշակուող ծրագիրների վրայ: Հիմնական ծրագրի պահանջները հիմա մեզնից է կախուած գործադրել. մի մասը իրացւում է անմիջապէս, միւս մասը հերթի է սպասում: Բայց ստեղծուած կացութիւնն այն չէ, որ ակնկալւած կամ նախորոշած էր Ծրագիրը: Նա պահանջում էր դաշնակցօրէն միացած Կովկաս՝ Ռուսաստանին դաշնակցօրէն միացած: Բայց Ռուսաստան չկայ, որ Հայաստանը նրա հետ դաշնակցօրէն միանայ, եւ ոչ Կովկաս գոյութիւն ունի, որ Հայաստանն դաշնակցաբար միանայ նրան: Թա-

թար ու վրացի՝ անջատ միատրներ են դարձած: Նոյն Դաշնակցութիւնն է, նոյն Ծրագրով ու Կանոնագրով, բայց պայմանները փոխուած են: Բազմահազար զանգուածներ - դաշնակցական, համակիր, գործակից, տոսկական հայեր՝ առանց կուսակցական պիտակի՝ բռնութեամբ են Դաշնակցութեան շուրջը եւ գործում են նրա ղեկավարութեան տակ: Ծնունդ են առնում նոր տենչեր, բացում են նոր հորիզոններ այն բարձունքից, ուր հասած է հայութիւնը պատմական ղեկքերի ալիքներով վերացած, ինչպէս մէկը, որ հասնում է մի լերան գագաթ: Կատարուած գործերը վստահութիւն են ներշնչում զանգուածներին եւ վարիչներին, կացութիւնը հզօր թելադրանքներ է անում եւ կեանքի անդիմադիր բերումով փոփոխութեան է ենթարկում ամէնից արեւի անփոփոխելին - կուսակցութեան Ծրագիրը: Ինքնավար, դաշնակցաբար Կովկասին եւ նրանով Ռուսաստանին կապուած Հայաստանի գաղափարը մթագնում է մարդկանց գիտակցութեան մէջ եւ նրան փոխարինում է Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարը: Փոխում է կուսակցութեան դերն ու դիրքը հայ կեանքում ներքուստ եւ աշխարհի մէջ՝ արտաքուստ: Մշակում է մի նոր Կանոնագիր, որ սահմանում է պետական մարմինների եւ կուսակցութեան յարաբերութիւնը: Ծրագիրը դառնում է դրոյիչ բազմատեսակ գործառնութեանց ու ձեռնարկների: Նոյն կուսակցութիւնն է դարձեալ, բայց արդէն փոփոխ Ծրագրով, Կանոնագրով ու գործերով: Այսպէս ուրեմն կատարած գործը ինքնին սկզբունք է փոփոխութեան եւ վերակազմութեան:

Ի՞նչն է, սակայն, որ այս բոլոր փոփոխութեանց մէջ կայուն է պահում կուսակցութիւնը եւ կազմակերպութիւնը.- դաշնակցական տիպարների նոյնութիւնը նախորդ գործիչների համեմատութեամբ: Անկախ գործերի տեսակից ու չափից՝ դաշնակցականները մնում են նոյն տիպարի մարդիկ, նոյն բարոյական կառոյցներով. աշխատաւոր հայ ժողովրդի անկաշառ եւ անձնուէր սպասաւորներ, որ ենթակայ են նոյն Կանոնագրին եւ հետամուտ են նոյն Ծրագրի իրացման: Կուսակցութիւնը փոփոխած է իր Ծրագրի մի մասը եւ յատելում բերած է իր Կանոնագրին, բայց ասպետական կարգի բարոյական խարիսխները նոյն են մնացած եւ անդամների տիպարները իրենց բարոյական էութեամբ անփոփոխ են տեսալէս: Ըստ էութեան նոյն Դաշնակցութիւնն է ամէն տեղ եւ նոյն դաշնակցականները, որ «*ամէն ջանք քսիտում են*» Կանոնագրի հինգ կէտերին գոհացում տալու:

Կազմակերպական փորձառութիւնը, որ ձեռք է բերուած համեստ խմբերի եւ մարմինների մէջ, դառնում է գօրաւոր ազդակ հանրային մեծ շարժումներ վարելու գործում: Շարժումները փոխում են իրենց

ընթացքը, դառնում են նպատատր կամ աննպատ, բայց կուսակցությունն իր էութեան մէջ մնում է նոյնը եւ «դաշնակցական» հաւատարմօրէն կրկնում է նախորդ տիպարների հիմնական գծերը: Այս տեսակէտով ոչ այնքան գործերն են կարելորդ, որքան կազմակերպութիւնը, եւ կան օրեր երբ պէտք է գործերը քել, կազմակերպութիւնը պահելու համար: Կարճամիտներին կարող է թուալ, որ սա կը նշանակէ միջոցն աւելի գերադասել, քան նպատակը, բայց իրական կեանքն ու ուղիղ դատումը մեզ տարբեր բան են ասում: Կազմակերպութիւն ունենալով միշտ կարելի է գործեր կատարել, բայց կազմակերպութեան գոյութիւնը վտանգելով, Ծրագիրը կը մնայ անտէր եւ անտիրական եւ հանրային գործերը կը ստանան «բնական» ընթացք: Եւ ճիշդ այս է պատճառը, որ հայ ժողովուրդի ներքին եւ արտաքին թշնամիները գիտակցաբար թէ անգիտակցաբար ամէն կերպ աշխատում են քայքայել Դաշնակցութիւնը, որովհետեւ լաւ գիտեն թէ քանի նա կայ, միշտ կարող է «գործեր» ստեղծել, իր Ծրագրին հետամուտ եւ Կանոնագրին ենթակայ, իսկ եթէ նա վերանայ՝ հայութեան կեանքը ցրի եւ անկազմակերպ գործերի մի պղտոր ջուր կը դառնայ, ուր ամէն ոք կարող է իր ուզած ձուկը որսալ:

Այսպիսով Կանոնագրի հինգ պահանջները, որ առաջին նուազ թում են այնքան համեստ ու հասարակ, իրօք մեծարժէք են ոչ միայն կուսակցական այլ եւ հանրային տեսակէտով: Եւ այդ պահանջների ամէնօրեայ կատարումը, որ ոմանց թում է աննշան ու տաղտկալի, իրօք այն մուրճն է, որ դարբնում է կուսակցութեան պողպատը, դարձնելով նրան հատու զէնք ընկերային պայքարների մէջ: Այդ պահանջներին հաւատարմօրէն զոհացում տալով է, որ կուսակցութիւնը մնալով միշտ նոյն՝ ենթարկում է արդիւնատր փոփոխութեանց եւ տեսաբար յարմարուելով կեանքին՝ չի գուլանում ու ժանգոտում խաղաղ օրերին:

Այս տեսակէտով ամէն մի «դաշնակցական» կոչումը է նոյն դերը խաղալու կուսակցութեան մէջ, ինչ որ նրա հիմնադիրներն ու յետագայ պահնորդները: Սի խումբ նոյն տենչերն ունեցող մարդիկ ժամանակին մշակած են մի քաղաքական-տնտեսական յեղաշրջման իրագործելի Ծրագիր: Իրենց Ծրագրի իրացմանը հասնելու համար նրանք կազմած են մի Կանոնագիր եւ հերթական ձեռնարկների համար հանած են որոշումներ, տրամադրած են շատ համեստ դրամական միջոցներ եւ աշխատած են իրենց գաղափարները տարածել եւ կուսակիցներ գտնել, անձամբ «*ամէն ջանք քափելով*» իրենց Ծրագրի, Կանոնագրի եւ որոշումների իրագործման համար, կանգ չառնելով մինչեւ իսկ մահուան առջեւ: Նոյնը վիճակուած է անելու եւ յետագայ անդամներին. ընկերներ նրանք գտնում են խմբի մէջ,

որոնց թիւը պարտաւոր են անելացնել. Ծրագիրը նրանք գտնում են պատրաստ, բայց որ կոչուած են փոխելու՝ յարմարելով կեանքի բերումին. ենթակայ են մի կանոնագրի, որ կարող են փոփոխութեան ենթարկել՝ ընկերների հետ համախորհուրդ. կատարում են որոշումներ, որ իրանք են հանած կամ իրենց ընկերները՝ համախորհուրդ իրանց հետ. կուսակցական տուրք են վճարում եւ պարտաւոր են «*ամէն ջանք քափել*» իրացնելու իրենց Ծրագիրը, Կանոնագիրն ու որոշումները: Այսպիսով ոչ միայն աւանդ են ստանում, այլ եւ աւանդ են ստեղծում նախորդների պէս: Ոչ միայն հաւատարմութեամբ պահում են աւանդը, այլ եւ հաւատարիմ մնալու համար փոփոխում են շարունակ:

Այսպիսով, ըստ էութեան, կրկնում են ոչ միայն դաշնակցական տիպարները, այլ եւ նրանց պարտականութիւնն ու դերը կուսակցութեան մէջ: Դաշնակցութեան անդամակցիլ, «դաշնակցական» կոչումն իրաւամբ առնել իր վրայ նշանակում է աշխատել, որ ընկերային զօրաւոր ազդակը -Դաշնակցութիւնը- տեսապէս մնայ զօրաւոր՝ իր ընկերային յեղափոխական դերը կատարելու մեր կեանքում: Ամէն մի «դաշնակցական» կոչուած է Սասունցի Դաւթի նման «թուր կայծակին» շարժելու Մարայ Մելիքի դէմ. նա պարտաւոր է հոգալ թէ՛ իր բազկի զօրութեան մասին՝ բարոյական տիպարը մշակելով իր մէջ, եւ թէ՛ կայծակէ թուրի զօրութեան մասին՝ «*ամէն ջանք քափելով*», որ նա չգուլանայ եւ չժանգոտի անտեղի եւ անվայել գործերի մէջ, այլ միշտ սրբած ու պատրաստ՝ ասպետական անշահախնդիր ձեռքի մէջ, օրհասական պայքարների օրերին՝ իջնի թափով ու զարկէ սարսափով...

Ահա թէ ինչ են թելադրում Կանոնագրի երկու չոր ու ցամաք յօդուածները:...

«Միաժողովուրդի Հ.Յ.Դաշնակցութեան մասին», Ն. Աղբալեան

12

[Հ.Յ.Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ]

Մենք տեսանք թէ ո՞վ է «դաշնակցականը». բայց ո՞րն է Դաշնակցութիւնը. ոչ թէ կուսակցութիւնը, այլ Դաշնակցութիւնն իր էութեան մէջ: Բոլոր հին ու նոր ընկերները, բոլոր հին ու նոր մարմիններն իրենց գործերով միասին կազմում են մեր կուսակցութիւնը: Ե՛ր նրանք, որ նահատակուած ու մեռած են վաղուց, ե՛ր նրանք, որ բանտ ու աքաղաղ

մէջ են այսօր կամ ազատ գործում են աշխարհի հեռաւոր կողմերում. եւ այն գործերը, որ ծրագրուած են. եւ այն ձեռնարկները, որ կան, եւ այն կուսակցական կեանքը, որ եռում է ամենուր - այս ամենը մեր կուսակցութիւնն են կազմում: Այստեղ մտնում են թէ՛ մեր Ծրագիրը, թէ՛ մեր Կանոնագիրը, թէ՛ մեր որոշումները: Բայց ո՞րն է սրանցից Դաշնակցութիւնը. արդէօք այս կամ այն Կենտրոնական Կոմիտէն կամ Շրջանային Ժողովը: Այս մարմիններն ու ժողովները դաշնակցական գործ են կատարում, բայց զատ-զատ կամ միասին առած՝ Դաշնակցութիւն չեն, թէեւ կուսակցութիւնն են: **Դաշնակցութիւնը կուսակցութեան ընդհանուր ժողովն է:** Նրա վճիռներն են միայն, որ ճանաչում են «դաշնակցական»: Որեւէ Շրջանային Ժողով կարող է հարիւրաւոր որոշումներ կայացնել, բայց այդ որոշումները «դաշնակցական» կը ճանաչուին այն չափով, որքան չեն հակասում Ընդհանուր Ժողովի որոշումներին: Այս կամ այն սոսկական «դաշնակցականը» կամ մարմինը կարող են բազմատեսակ գործեր յղանալ եւ կատարել, բայց նրանք չեն համարուի «դաշնակցական» գործ ու յղացում, եթէ դէմ են Ընդհանուր Ժողովների ոգուն եւ թողած արանդութեան: Հ.Յ. Դաշնակցութեան Բիւրօն , որ հաւատարիմ արանդապահն է կուսակցութեան եւ Ընդհանուր Ժողովի որոշմանց իրագործողը, կարող է չեղեալ նկատել մի շրջանի որոշում եւ անգոյ՝ մի կուսակցական մարմին, եթէ նրանք դէմ են Ընդհանուր Ժողովների վճիռներին եւ նրանց արանդութեան: Ընդհանուր Ժողովի մշակած Կանոնագիրն է, որ պարտադիր է բովանդակ Դաշնակցութեան համար: Որեւէ Շրջան չի կարող մի մասնաւոր Կանոնագիր մշակել եւ պարտադիր հռչակել իր իսկ շրջանի համար, եթէ նրա հիմունքները հակասում են ընդհանուր Կանոնագրին, որ Ընդհանուր Ժողովին դրոշմն են կրում: Բոլոր ընկերները եւ մարմինները պատասխանատու են գերադաս մարմիններին եւ ժողովներին, միմիայն Ընդհանուր Ժողովն է, որ պատասխանատու չէ ոչ ոքի առջեւ: Նրա դատաւորը հայոց պատմութիւնն է, մինչդեռ մարմինների եւ ընկերների գերագոյն դատաւորը Ընդհանուր Ժողովն է: Նա կարող է պատուհասել եւ վարձատրել, բայց ինքը ենթակայ չէ պատուհասի եւ վարձատրութեան: Ամէն մի «դաշնակցական» մարմին ու անդամ պարտաւոր են իրենց ընթացքը շտկել այն ուղղութեամբ, որ մատնանշում է Ընդհանուր Ժողովը. միայն ինքն է, որ իր ընթացքը որոշում է ազատ եւ անկախ: Նա յենում է իր անդամների իմացական կարողութեան եւ փորձառութեան, լսում է բոլոր շրջանների եւ մարմինների կարծիքն ու տրամադրութիւնը, նկատի ունի ամենքի պահանջը եւ դիտողութիւնը, բայց ենթակայ չէ նրանց: Այս ամենը, որ գալիս են կուսակցութեան շրջաններից ու շարքերից՝ խորհրդակցութեան, դիտողութեան եւ կշռադատութեան նիւթ են միայն, բնաւ պարտադրանք: Ոչ

մէկ անհատ, մարմին կամ շրջան կարող են Ընդհանուր Ժողովին հրամայական լիազօրագիր ուղարկել եւ ոչ մէկը նրանցից իրաւասու է իրան Դաշնակցութիւնից դուրս հռչակել, եթէ իր կարծիքը չանցնի Ընդհանուր Ժողովի մէջ: Ընդհանուր Ժողովի շէմքը կոխելով՝ ամէն ոք յանձնառու է նրա որոշումները պարտադիր նկատել իր շրջանի համար, որովհետեւ Ընդհանուր Ժողովը բուն իսկ Դաշնակցութիւնն է, նրա միտքն ու կամքը: Նա Դաշնակցութիւնն է իր ներկայ կազմով եւ անցեալ պատմութեամբ. այնտեղ շնչում են ոչ միայն դաշնակցական զանգուածի ոգին, մարմինների եւ ժողովների մտածումն ու տրամադրութիւնները, այլ եւ այն հազարաւոր հերոսների եւ նահատակների յիշատակը, որ իրենց գործով ստեղծած են Դաշնակցութիւնը եւ իրենց արիւնով ամրապնդած են նրա հիմունքները: Ընդհանուր Ժողովն իր վճիռներն արձակում է ոչ միայն իր իմացութեան ու փորձին կրթնած, այլ եւ նրանց յիշատակին եւ աւանդութեան:

Մինչեւ Ընդհանուր Ժողովին դուռը լինելով խստօրէն կարգապահ եւ կաշկանդուած կուսակցականներ, պատգամաւոր ընկերները ներս մտնելով՝ դառնում են լիովին ազատ եւ անկաշկանդ: Այստեղ ոչ ոք եւ ոչինչ կարող է արգելք դառնալ պատգամաւորի մտքի եւ խղճի ազատութեան: Այստեղ դադարում է ամէն իշխանութիւն եւ հեղինակութիւն եւ Ընդհանուր Ժողովն ինքն է դառնում միակ իշխողն ու հեղինակութիւնը: Այստեղ խօսում, դատում ու վճիռ է արձակում ոչ թէ այս ու այն պատգամաւորը, այլ նոյն ինքը ... Դաշնակցութիւնը: Ինչ որ նա վճռէ՝ վերջնական է եւ անառարկելի, ինչ որ կանոնադրէ՝ պարտադիր է ամենքի համար. ինչ որ մտածէ եւ բանաձեւէ՝ ա՛յն է «դաշնակցական» միտքն ու կամքը: Կուսակցութեան ներքին բարեշրջումը աղբիւրանում է շրջանների մէջ եւ այստեղ է յորդում գետի պէս. զանգուածների մտածումն ու տրամադրութիւնը ծիլ արձակելով գատ-գատ շրջանների մէջ՝ այստեղ է ստանում իր վերջնական կերպարանքը եւ պարտադրում ամենքին: Ընդհանուր Ժողովը կարող էր ասել կուսակցութեան. «գքոյսդ ի քոյոց քեզ մատուցանեմ», այսինքն քո ունեցածն է, որ մատուցանում եմ քեզ, բայց վերջնապէս բանաձեւուած եւ հանրօրէն պարտադիր:

Բոլոր ինքնասիրութիւններն ու յաւակնութիւնները դադարում են Ընդհանուր Ժողովի մէջ՝ լինեն անհատական, շրջանային թէ հատուածական. ոչ ոք բռնանում է միւսի վրայ՝ լինեն անհատ թէ շրջան, եւ վճիռները տրւում են միջին եզրով, որ իմաստութիւնն ինքն է: Ծայրագոյն աջերը ու ծայրագոյն ձախերը գոհանում են միջին եզրը գտնելով. մէկը մտածում է, որ իր տեսակէտը թէւ չյաղթանակեց, բայց նրանից մի բան անցաւ ժողովի որոշման մէջ. միւսը մտածում է, թէւ իր տեսակէտը խստօրէն քննադատուեց, բայց եւ այնպէս

հիմնովին խորտակուած չէ. մի բան մտաւ նրանից ժողովի որոշման մէջ: Եւ այսպէս կեանքը թելադրում է, շրջաններն ուղարկում են Ընդհանուր Ժողով, Ժողովը քննում ու կշռադատում է եւ հանած վճիռը կազմում է մի նոր փուլը Դաշնակցութեան պատմութեան, ու նաեւ մի փուլը հայոց նորագոյն պատմութեան, որքանով Դաշնակցութեան գործը հայոց պատմութեան մի մասն է կազմում: Այսպէս է, որ կուսակցութիւնը մնում է մէկ եւ անբաժան, բայց փոփոխուում է ժամանակի հետ: Այսպէս է, որ ամէն քառամեակ մի ընդհանուր բնոյթ ունի Դաշնակցութեան պատմութեան մէջ, որովհետեւ ապրում ու գործում է միեւնոյն Ընդհանուր Ժողովի շունչով: Այսպէս է նաեւ, որ ոչ մէկ մարմին իրատունք է համարում իրան «Դաշնակցութիւն» նկատել, թէւ բոլորն իրանց «դաշնակցական» են համարում եւ ոչ որ համարձակութիւն ունի յանուն Դաշնակցութեան խօսելու, եթէ չի կրկնում կամ չի մեկնաբանում Ընդհանուր Ժողովի որոշումները: Այսպէս է դարձեալ, որ անհատ ընկերների մտածումները որոշ ուղղութիւն են ստանում եւ աշխարհի չորս կողմն ընկած դաշնակցական ընկերներն ու մարմինները միեւնոյն դիրքն են բռնում միեւնոյն խընդիրների հանդէպ: Այստեղ նոյնպէս գործում է ազատութեան արգասաւոր սկզբունքը: Դաշնակցականները չեն թութակում իրար, այլ իրենց մտածումն են արտայայտում եւ իրենց համոզումը: Նրանք ոչ թէ հնազանդում են վերին կարգադրութեան՝ իբր անկերպարան հլուներ, այլ արտայայտում են իրենց համոզումն՝ իբր գիտակից մարդիկ, որովհետեւ շրջանների պատգամաւոր ընկերները՝ նախքան քըւււէ տան մի կարծիքի, որ պէտք է դառնայ կուսակցութեան աշխարհայեացքի տարրերից մէկը կամ նախքան հասանութիւն տան մի որոշման, որ գործունէութեան նոր ուղիներ է հարթում կուսակցութեան առջեւ՝ նրանք նախապէս համոզում են ներքուստ եւ լիովին: Դրա համար յաճախ մեր Ընդհանուր Ժողովներն այնքան երկար են տեսում եւ վճիռները տրուում են մեծ մասամբ միաձայն: Որովհետեւ սա տարբեր կուսակցութեանց պատգամաւորների մի ժողով չէ, ուր ամէն մի պատգամաւոր յայտնում է իր տեսակէտը եւ քուէն է որոշում վերջնապէս. այլ միեւնոյն կուսակցութեան Ընդհանուր Ժողովն է, ուր կան տարամիտ ընկերներ, բայց չկան հակառակորդ բանակներ. ուր ամենքի համար թանկ է կուսակցութիւնը եւ նրա աներեր գոյութիւնը պայման է յետագայ ամէն գործունէութեան. ուր կարծիքներն աւելի կշիռ չունեն, քան կուսակցութեան Ծրագիրն ու հետապնդած գերագոյն նպատակը. ուր բոլոր ընկերները պէտք է մտածու մով նոյնանան, որ դուրս գալով ժողովից՝ իրենց շրջանների մէջ միեւնոյն ուղղութեամբ վարեն մտքերն ու գործերը եւ իբր նորադարձներ, նոր եռանդով ... վարակեն շարքերը: Այս ձեւով միայն կարող է կուսակցութիւնը մնալ միաձոյլ եւ անսասան եւ հայ ժողովուրդի կեան-

քին մէջ կատարել այն պատմական դերը, որ վիճակուած է նրան:

*

* *

Ոմանք կարող են շփոթել մեր Ընդհանուր Ժողովը պարլամենտի հետ...: Թէև երկուսն էլ ընտրուած պատգամատուրների վճռաբեր մարմիններ են, բայց նրանք մեծապէս տարբեր են իրարից: Պարլամենտը մի երկիր է ներկայացնում, Ընդհանուր Ժողովը՝ մի կուսակցութիւն: Այնտեղ մի երկրից տարամէտ անձեր են հաւաքուած իբր տարատեսակ շահերի պաշտպան, այստեղ նոյն կուսակցութեան համամիտ անդամներն են հաւաքուած իբր միեւնոյն շահերի պաշտպան: Այնտեղ ներկայ են հակառակորդ բանակների սպայակոյտեր, այստեղ մի համերաշխ բանակի սպայակոյտ է հաւաքուած: Չկայ մի պարտադիր Ծրագիր պարլամենտի բոլոր անդամների համար եւ ոչ մի պարտադիր Կանոնագիր, որ բոլորի ընթացքը ճշտէր պարլամենտից դուրս. մինչդեռ կուսակցութեան բոլոր անդամները նոյն Ծրագիրն են պարտադիր համարում եւ նոյն Կանոնագիրը: Ընկերային երեւոյթների մէջ եթէ կայ մէկը, որ կարող է Ընդհանուր Ժողովին զուգահեռ կազմել, եկեղեցական հին ժողովներն են, ուր հաւաքում էին նոյն դաւանանքն ունեցող մարդիկ, որ հետեւում էին նոյն կրօնին (սպրեւոյ եղանակին), ձեակերպում էին իրենց դաւանանքն ու վարքի կանոնները (Ծրագիր ու Կանոնագիր), որ պարտադիր էր ամենքի համար: Պարլամենտը բովանդակ ազգն է ներկայացնում, Ընդհանուր Ժողովը ազգի կազմակերպութիւններից մէկը: Նա օրինադրում է բովանդակ երկրի համար, Ընդհանուր Ժողովն՝ իր կուսակցութեան: Նա կազմակերպում ու հակակշռում է հանրային կեանքի բոլոր մարգերը, սա պայքարի կազմակերպութիւն է եւ պայքարներից մի տեսակի - քաղաքական-յեղափոխական: Գործնական տեսակէտով Ընդհանուր Ժողովը մի ռազմական խորհուրդ է, որ գծում է պայքարի մօտաւոր նպատակներն ու ընթացքը եւ թողնում է մնայուն սպայակոյտին իրագործելու: Դաշնակցութիւնն ունի պետութեան գործառնութիւններ - զինուորական, ներքին, արտաքին, դատական, լուսատւութեան, ելեւտական- եւ Ընդհանուր Ժողովը որոշում ու վճիռ է տալիս այս ամենի մասին. բայց մինչդեռ պարլամենտի վճիռները բովանդակ պետութեան կեանքին են վերաբերում, Ընդհանուր Ժողովն իր կուսակցութեան մասին է միայն վճիռներ տալիս:

*

* *

Այս տեսակէտից ամէն մի քաղաքական կուսակցութիւն մի պետական սաղմ է եւ նպաստաւոր պարագաների մէջ կարող է պետութիւն դառնալ՝ անպետութիւն ժողովուրդի մէջ եւ կառավարութիւն պե-

տութեան մէջ: Պատմութեան բերումով նա իր կուսակցական կազմակերպութիւնը կարող է դարձնել պետական կազմակերպութիւն: Այնտեղ, սակայն, ուր պետութիւն եւ կուսակցութիւն նոյնանում են - ստեղծում է մի չարաշուք բռնութիւն, որովհետեւ այն կարգերը, որ սահմանուած են որոշ խմբակցութեան համար՝ պարտադրում են ամենքին եւ այն Ծրագիրը, որ մշակուած է որոշ նպատակներով՝ համարում է պիտանի բոլոր նպատակների համար: Իշխանութեան անցնելով՝ կուսակցութիւնը պէտք չէ դադարի կուսակցութիւն մնալ, որովհետեւ բովանդակ ազգը մի կուսակցութիւն լինել չի կարող - ազգը այլազան շահերի, մտայնութեանց եւ տիպարների մի զանգում է - եւ կազմակերպութիւնը չի կարող պետական կազմ լինել, քանի որ պետութիւնը շատ աւելի այլազան գործառնութիւններ ունի, քան կուսակցութիւնը: Նա կարող է ներկայացնել զանգումային շահեր, բայց ոչ բոլոր շահերը: Նա կարող է հանդէս բերել հանրային ծաւալուն մտայնութիւն եւ համախմբել ազգութեան որոշ տիպարները, բայց ոչ բոլոր մտայնութիւններն ու տիպարները: Իշխանութեան հասած կուսակցութիւն մի մասն է երկրի ազգաբնակչութեան եւ կոչուած է ոչ թէ ամենքին թեքելու իր լուծի տակ, այլ ամենքի հետ միասին գտնելու շահերի եւ ուժերի միջինը եւ նրանց ընթացք տալու: Իշխանութեան հասնելով՝ կուսակցութեան գործը չի դադարում, այլ ծաւալում ու բարդանում է. նա հիմա կարող է աւելի շատ բեմերից խօսել եւ աւելի տիրաբար, աւելի շատ ուժեր համախմբել եւ աւելի ընդարձակ գործերի ձեռնարկել, բայց նա չի կարող նոյնանալ բովանդակ ազգի հետ, թէւ կարող է շահել զօրեղ մեծամասնութիւն: Մեծամասնութիւնը, սակայն, յարում է ոչ թէ Ծրագրի ամբողջութեան, այլ նրա այս կամ այն կէտին եւ այնքան ժամանակ «կուսակցական» է, որքան կուսակցութիւնը հետամուտ է ա՛յդ կէտերի իրացման: Բնական է, որ կուսակցութիւնը հետամուտ լինի իր Ծրագրի լիակատար եւ արմատական իրացման՝ որ համակիր մեծամասնութիւնը գնալով հարուի եւ կուսակցութիւնը մնայ իր հին սահմանների մէջ: Իսկ եթէ կամենայ յամառիլ եւ մնալ իշխանութեան գլուխ՝ նա ստիպուած է դիմել բռնութեան եւ գործել անհամակիր բազմութեան մէջ - իր քարոզն ու յորդորը դարձնելով սաստ եւ իր խօսքի համոզիչ ուժին ընկեր տալով սուին ու մտրակ: Այստեղ վերջանում է յեղափոխութիւնը եւ սկսում է բռնակալութիւնը:

Այս անփառունակ վախճանից խուսափելու համար կուսակցութիւն եւ պետութիւն պէտք է խստօրէն տարբերուեն «դաշնակցականի» գիտակցութեան մէջ: Դաշնակցութիւնը հետամուտ է հայ պետութիւն ստեղծելու եւ ոչ թէ ինքը հայ պետութիւն դառնալու: Պետութիւնն ազգի քաղաքական կերպարանքն է եւ ոչ թէ կուսակցութեան: Կուսակցութիւնը պետութեան ազդակներից մէկն է, բայց պետութիւն

չէ եւ լինել չի կարող: Նրանք, որ կարծում են, թէ անկախ Հայաստանը Դաշնակցութեան մարմնացումն է լինելու, նրա նահանգները՝ շրջաններ, նրա վարչութիւնները՝ կոմիտէներ, շատ թիր ըմբռնում ունեն ե՛ր կուսակցութեան, ե՛ր պետութեան մասին: Այս մտածումը «դաշնակցական» չէ, այլ եթէ կ'ուզէք՝ «մեծամասնական» է[. բոլշեիկների յատուկ]: Նրանք է, որ պետութիւն եւ կուսակցութիւն շփոթում են իրար հետ եւ ստեղծած են անօրինակ բռնութիւն, որ ժխտում է շահերի եւ մտածման ամէն տարբերութիւն: Մտածման մի եղանակ է նա ճշմարիտ համարում, որ իր իրաւունքն է. եւ նոյն եղանակն է ամենքին պարտադրում, որ բռնութիւն է: Նա իրան չի նկատում պատմական եւ ընկերային ազդակներից մէկը, այլ համարում է միակը: Այս մտայնութիւնը խորթ է Հ.Յ. Դաշնակցութեան եւ խորթ պիտի մնայ: Նա չի բռնանում, այլ յորդորում է յանձնառութեան: Նա պայքարում է անիրաւութեան դէմ եւ խուսափում է անիրաւութիւնից: Նա հրաւեր է կարողում, որ հայ մարդը քաղաքական ազատութեան ձգտէ եւ իր Ծրագիրն է առաջադրում իբր լաւագոյն լուծում հայ ժողովրդի հիմնական պահանջների, բայց նա չի բռնադատում, որ ամէն ոք իր մտածումն ու գործելակերպն ունենայ: Դաշնակցականն ինքն է բռնանում իր վրայ եւ ոչ կուսակցութիւնը նրա վրայ: Նա կարգապահ է ներքին համոզումով եւ ոչ արտաքին բռնութեամբ: Նա կուսակից է որոշ քաղաքական կացութեան եւ որոշ տնտեսական կարգի ոչ թէ այն պատճառով, որ ստիպում են նրան, այլ որովհետեւ այդպէս է իր համոզումը:

Այս հանգամանքը պէտք չէ մոռանալ մանաւանդ ազգային գործերի մէջ, ուր դաշնակցականը յաճախ իշխանութեան մաս է կազմում: Պէտք է որոշապէս տարբերել կուսակցութիւն եւ իշխանութիւն: Կուսակցութիւնն իշխանութիւն չէ, այլ իշխանութեան ազդակներից մէկն է միայն: Նա կարող է իշխանութեան հասնել, բայց պէտք է իր ինքնութեանը գիտակից լինի: Նա պէտք է միշտ հաշուի առնի այն «անտարբեր» զանգուածները, որոնց լուր համամտութեամբ անցած է իշխանութեան գլուխ: Նա պէտք է հաշուի առնի ոչ միայն կուսակցական քուէները, այլ եւ այն մարդկանց, որ նրան քուէ տուած են առանց կուսակցական լինելու: Նա պէտք է հաշուի առնի ոչ միայն նրանց, որ քուէարկած են թեր, այլ եւ նրանց, որ քուէարկած են դէմ եւ պայքարած են իբրեւ կատաղի հակառակորդ, որովհետեւ իշխանութիւնը ազգի եւ համայնքի վարչական կամքն ու կերպարանքն է, եւ ոչ կուսակցութեան: Անցնելով իշխանութեան գլուխ՝ նա դառնում է ազգի եւ համայնքի բերան եւ ոչ միմիայն իր կուսակցութեան: Նա պէտք է աշխատէ իր Ծրագրի այն կէտերը իրացնել, որ յուսալի է թէ հանրութեան հաւանութեան կարժանանան: Սա չի նշանակում

Ծրագրից հրաժարուել -քանի որ ձեռնարկած գործերը Ծրագրից են բխում կամ նրա մի մասն են կազմում-, սա նշանակում է յարմարուել միջավայրին եւ Ծրագրի հետապնդումը արդիւնատր դարձնել:

«Մտածումներ Հ.Յ. Դաշնակցութեան մասին», Ն. Աղբալեան

13

Հ.Յ.Դ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

... Ազգերու գոյութեան առաջին պայմանն է իր համախմբման կազմակերպումը եւ յետոյ միայն ազգային այլ արժէքներն ու նուաճումները - մշակոյթ, առեւտուր, ճարտարարուեստ, ուսում եւ այլն: Գաղափարը, լուսատրոփինը, ընդունակութիւնները թանկագին արժէքներ են այն ատեն միայն, երբ կամք կայ զանոնք արժեցնելու. հակառակ պարագային՝ այդ արժէքները ոչինչ են:

... Կազմակերպութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ ցրուած անհատական ուժերու, կամքերու համախմբում... Կազմակերպութեամբ մարդկային անհատական չնչին ուժերէ անյաղթելի ցեղ, ազգ եւ պետութիւն կը կազմուի:

... Մենք փոշիացած ենք առաւելապէս մեր այդ ներքին թերութեան՝ հաւաքականութեան կազմակերպման պակասի հետեւանքով...

... Ծրագիրը սրբութիւն մըն է Դաշնակցութեան համար... Այդպէս լինելով հանդերձ... հիմնական տարբերութիւն կայ Դաշնակցութեան Ծրագրին եւ այլ կուսակցութեանց ծրագիրներուն միջեւ...

[Նախ] Դաշնակցութեան «աւետարանը» փոփոխական է, ան ոչ քարացած դոգմա է, եւ ոչ ալ Դաշնակցութեան առաջին եւ վերջին խօսքը: Ընդհ. ժողովէ Ընդհ. ժողով, ըստ ժամանակի եւ ըստ պայմաններու թելադրանքի, ան կրնայ փոխուիլ եւ այլ կերպարանք առնել, առանց իր արժէքի եւ հրամայական պարտադրութեանց մէջ մազաչափ նուաստանալու:

... Կայ նաեւ ոչ նուազ կարեւոր [ուրիշ] տարբերութիւն մը: Այլ կուսակցութեանց մէջ ... փոքրամասնութեանց տեսակէտները կը բանադրուին... Այս դրութեան հետեւանք են նման կուսակցութեանց մէջ առաջ եկած անհաստատաշտութեան եւ մեծամասնապաշտութեան երեւոյթները, որոնցմէ կը բխին բոլոր հերձուածմները. օրինակ՝ ռուսական եւ ֆրանսական անթիւ ֆրակցիաները: Այդ չարիքները չկան մեր մէջ. աւելի շուտ՝ նուազ չափով կան, որովհետեւ մեր մէջ

չկայ նախ անհատապաշտութեան երեւոյթը, եւ երկրորդ՝ մեր մէջ ե-
թէ մեծամասնութեան կամքը պարտադիր է փոքրամասնութեան,
միաժամանակ նաեւ փոքրամասնութեան տեսակէտները յարգի են...
վերջնականօրէն անտեսուած չեն. ոչ միայն մեծամասնութեամբ,
այլեւ նոյնիսկ միաձայնութեամբ տրուած որոշումները անխոցելի
դրօժաններ չեն մեզի համար... «Փորձն է, որ տեսութիւն ու ծրագիր է
դառնում Գաշնակցութեան մէջ եւ ոչ թէ տեսութիւնն է, որ փորձ է
դառնում», կարծեմ այսպէս [ըսուած է], եւ շատ ճիշդ կերպով, Գաշ-
նակցութեան ծանօթ դատին մէջ...

Գաշնակցութիւնը կուսակցութի՞ւն է, թէ կազմակերպութիւն: Ու-
մանք կ'ընեն՝ կուսակցութիւն է, ոմանք՝ կազմակերպութիւն է: Բայց
ի՞նչ կարիք այս բանավէճին, քանի որ պարզ է՝ թէ կուսակցութիւն
մը, որ չունի կազմակերպութիւն, մէկ դիպէ է: Կուսակցութիւնը այն
է, որ նախ կազմակերպութիւն ունի՝ միասնական կամք եւ կա-
րողութիւն ցուցադրելու:

**ԳԱՂԱՓԱՐ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ՝
ՓՈՒՆԿԱՐՉԱԲԱՐ ԼՐԱՅՈՒՅԻՉ**

... Գաղափարի ուժը կազմակերպութեան մէջ է եւ կազմակերպու-
թեան ուժը գաղափարի մէջ. մինը առանց միւսի դատարկ է: Յեղա-
փոխական կազմակերպութիւնը եթէ չէ տոգորուած այդ գաղափարով՝
դատարկ ձեւ է միայն, արստրակցիա, ոչնչութիւն ... Իսկ երբ մի կազ-
մակերպութեան ամէն մի անդամի եւ ամբողջութեան [կողմից] յար-
գըրում է գաղափարը, երբ նա այդ գաղափարը թերփայլից գործնա-
կանին վերածելով՝ կատարում է իր պարտքը ընտրած ասպարէզի
վրայ, մի այդպիսի մարմին լիապէս արդարացնում է իր գոյութեան
իրաւունքը. նա կանգուն կը մնայ եւ ոչ մի հողմ չի կարող խարխլել
նրա հիմքերը ...

... Հոգանք, որ յեղափոխութիւնը աճի ոչ այնքան **տարածութեամբ**,
այլ մանաւանդ **խորութեամբ**: Այդ է եղել Հ.Յ.Գաշնակցութեան ամե-
նակիզիչ հոգաբ սկզբից իվեր ... Այդ նշանաբանը անպայման անհրա-
ժեշտ է դիտում ամէն մի յեղափոխական դիսցիպլինի մէջ, ո՞ր մնաց՝
մերում...

ՈՒԺԵՐԻ ՀՄԱՄԿՐՈՒԹԻՒՆ, «Դրօշակ», ք. 10, 31 Հոկտ. 1898

Եւ եթէ այդ կամքին աղբիւրը կը յորդի ժողովուրդի, գանգուածի
եւ ոչ թէ անոր միայն մէկ խմբակցութեան սրտէն, ուղեղէն եւ ձրգ-
տումներէն, այդ պարագային այդ կազմակերպութիւնը կը դադրի
պարզ կուսակցութիւն ըլլալէ, կը դառնայ աւելի բարձր եւ գերադաս՝
քան կուսակցութիւնը: Գաշնակցութիւնը ապացուցած է, որ ունի
կամք եւ կարողութիւն. անոր ուժին աղբիւրը եւ հետապնդած նպա-

տակները կը բխին ամբողջական հայ ժողովուրդէն եւ ոչ թէ անոր այս կամ այն հատուածէն: Ահա թէ ինչո՞ւ սխալ է Դաշնակցութիւնը որակել իբր կուսակցութիւն: Ան գերազանց է, քան կուսակցութիւնը: Ան ըստ էութեան հայ ժողովուրդի կազմակերպութիւնն է:

*
* * *

Այլ կուսակցութեանց մէջ թիւը որակ է եւ ձայնատուութիւնն է այն խարխախը, որուն վրայ կը հանգչի թուական ուժը: Դաշնակցութեան համար ձայնատուութիւնը ուժ չէ եւ թիւը բացարձակ արժէք չէ, եթէ ան որակ չունի:

Դաշնակցութեան համար արժէք է **որակը**: Եւ որակ ըսելով՝ ան կը հասկնայ **կարգապահութիւն**. այսինքն՝ ենթարկելու եւ ենթարկընելու յատկութիւն եւ անսահման զոհաբերութեան պատրաստակամութիւն, ոչ թէ իւրայիննի՝ այլ ընդհանրութեան համար: Այս սկզբունքները եւ պարտադրութիւնները կազմակերպութեան կուտան աւելի շատ զինուորական բանակի մը կերպարանք, որուն քուէները կը հաշուեն ոչ միայն մատով եւ ձայնով, այլեւ սուիճով ու զոհաբերութեամբ, եւ այս թիւն է որ կը ներկայացուի իբր գումար, իբր հաւաքականութիւն:

Կազմակերպական օրէնքներով անհատի ազատութիւնը սահմանազծուած է. ան ազատ է մտածելու, զգալու, գործելու այն սահմաններուն մէջ, որ ընդհանրութիւնը ընդունած է. ան իր անձնական ազատութիւնը կրնայ արտայայտել միայն այն ճանապարհներով որ Կանոնագիրը կը թոյլատրէ. ընդհանրութեան շահերուն համար անհատին ազատութիւնը զոհաբերուած է անոր մէջ:

Ռազմապաշտական չէ, բայց կազմակերպական այս ձեւը հիմունի հետեւեալ ծանօթ սկզբունքը. «*Մէկը ամենուն եւ ամէնքը մէկուն համար*», միակ պատուանդանը ազգ եւ պետութիւն կազմելու եւ ֆիզիքական ուժ ստեղծելու:

Կազմակերպական այս հիմնական գիծերը բարոյական եւ քաղաքական բացառիկ արժէք կուտան Դաշնակցութեան կազմակերպութեան:

Կանոնագրի հիմնական կէտերէն դուրս որոնց մասին արդէն խօսեցանք, միւս յօդուածները, այլ կուսակցութեանց կանոնագրերու հետ նմանութիւն ունենալով հանդերձ, անոնցմէ կը տարբերին անով, որ ոչ այնքան անխախտելի կանոններ են, սահմանուած զինուորագրեալի պարտականութիւնները ճշդելու, որքան յիշեցումներ են մէկ ընտանիքի անդամներուն՝ իրենց պարտականութեանց մասին: Կանոնագրով ձեւակերպուած պարտականութիւններէն դուրս կան անգիր կանոնագրեր, իւրաքանչիւր վայրին համապատասխան ոգիով,

որոնք իրենց մէջ կը խտացնեն այսպէս ըսած «Դաշնակցութեան ասանդակական սովորութիւնները», նոյնքան կենսական, որքան Կանոնագրով սահմանուածները: Աւելին՝ երբեմն այդ «ասանդութիւնները» աւելի հզօր են, քան ճշդուած օրէնքները: Այսպէս, օրինակ, Կանոնագրով չեն ճշդուած ընկերներու անձնական կեանքի մէջ ունեցած պարտաւորութիւնները, բայց լռելեայն, առանց պատիժի, անոնց այս կամ այն ընթացքը մեծապէս կ'անդրադառնայ իրենց դիրքին կամ կշիռին վրայ կուսակցութեան մէջ: Դաշնակցականին անձնական կեանքը միայն իրեն չի վերաբերիր, այլ, ըստ այդ ասանդութեանց, կը վերաբերի ամբողջին. եթէ ան մոլի է խմիչքի, խաղի, եթէ անմաքուր է իր անձնական, ընտանեկան կեանքին մէջ, եթէ խարդախ է, ծոյլ է իր անձնական կեանքին մէջ եւայլն, առանց Կանոնագրի տրամադրութեանց իսկ, կ'ան կը վտարուի ընկերական շարքերէն, եւ կ'ան կը չէզոքացուի: Իւրաքանչիւր դաշնակցական անդամ է այս կամ այն խումբին. ան կրնայ անդամագրուիլ միայն խումբի ցանկութեամբ. արդ, ընդունուող անդամը պիտի ունենայ իր խումբի եւ շրջանի ընդհանուր բարոյական հասկացողութիւնները եւ բարքերը: Եթէ ան չունեցաւ, դուրս կը մնայ շարքերէն, թէկուզ եւ այդ ընկերը ունենայ ե՛ր հաւատարմութիւն, ե՛ր զոհողութիւն, ե՛ր անցեալ: Այս դրութիւնը, որ կարծեմ յատուկ է միայն Դաշնակցութեան, անոր կազմակերպութեան կուտայ հայ մահապետական ընտանիքի բնոյթ, ուր խումբի անդամները ոչ թէ պարզ ընկերներ են, այլ աւելի շատ մէկ ընտանիքի քոյրեր եւ եղբայրներ, ջերմօրէն հարազատ իրարու, հսկողութեան տակ խստապահանջ «պապիկի» եւ «տատիկի», որոնք դաշնակցականի աչքին իր **ասանդութիւններն** են եւ **կանոնագրերը:**

**«ՀԱՐԱՉԱՏ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԱՐԴԻՒՆՔ ՄԸ
ՀԱՅՈՒԹԵԱՆ ՉԳՏՈՒՄՆԵՐՈՒՆ...»**

... Դաշնակցութիւնը վարդապետութիւն չէ, [այլ] միայն հարազատ հոգեբանական արդիւնք մը՝ հայութեան ձգտումներու ... Հայ ժողովուրդին համար, անհատը հիմքն է մարդկութեան եւ յառաջդիմութեան. ատոր համար ալ Դաշնակցութիւնը դէմ է ոչ միայն բոլոր բռնակալ իշխանութեանց, այլ նաեւ բոլոր այն կուսակցութիւններուն, որոնք ... կը ժխտեն անհատի արժէքը եւ կ'ուզեն կաղապարել ամենքը մէկ կաղապարի մէջ ...

Հայ ժողովուրդին համար, ընտանիքը ... կռուան մըն է անհատներու համախմբման եւ ընկերային ու ազգային միութեան: Ատոր համար ալ Դաշնակցութիւնը ... ինքը մի կուսակցական ընտանիք է՝ կազմուած նոյն մահապետական կարգերով:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՍԱԿՆԵՐԸ, Ռուբէն, I, Գլ. ԺԲ

... Եթէ Դաշնակցութիւնը ծրագիր եւ դաւանանք իսկ չունենար, անոր կազմակերպութիւնը բաւական պիտի լինէր հայ ժողովուրդին համախումբ աշխատելու հնարաւորութիւններ տալու, պահելու անոր համախումբ գոյութիւնը եւ այդ համախումբ զանգուածը առաջնորդելու դէպի աշխատանքի, հայրենիքի եւ հայութեան ազատագրում, միաժամանակ չժխտելով ե՛ւ այլոց ազատութիւնը. ընդհակառակն, դառնալով գաղափարական շաղախ եւ աջակից ուրիշներուն իրենց ազատագրական գործին մէջ:

«Հ.Յ.Դ. Կազմակերպութիւնը», Ռուբէն

14

[Հ.Յ.Դ. ԿԱՆՈՆԱԳՐԻ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ]

... Շատ անգամ մտածած էի եւ հիացած՝ մեր Կանոնագրի տրամադրութեանց վրայ, որոնց համաձայն մեր բարձր մարմինները կարող են որոշումներ կայացնել, օրէնքներ մշակել եւ իրենք ալ գործադրել իրենց իսկ տուած որոշումները:

Շատ անգամ կ'ըսէի փրոփականտի ատեն, որ եթէ դատաւորները իրենց պարտադրաբար լինէին գործադրողները իրենց որոշումներուն, 50 առ հարիւրով պիտի նուազէին մահուան վճիռները եւ անարդար կարգադրութիւնները... Որոշումները կայացնող մարմինները, իրենց որոշումները տալէ առաջ, միշտ նկատի պէտք է ունենան որ իրենք ալ կարող են լինել այդ որոշումները գործադրողները: Այդ անհրաժեշտ է, որպէսզի գիտակցին հնարաւորութեան սահմաններուն եւ գործադրութեան հետեւանքներու պատասխանատւութիւններուն:

Կազմակերպական երկրորդ հիմնական առաւելութիւն մը եւս ինձի համար համոզում էր դարձած: Այդ այն էր, որ Ընդհանուր Ժողովները, Ռայոնական եւ Շրջանային ժողովները տեսակ մը օրէնսդիր մարմիններ են կուսակցութեան համար, բաղկացած առաւելապէս վարչական մարմիններու ներկայացուցիչներէ եւ անոնցմէ, որոնք պատրաստական էին անոր որոշումները անձամբ իրագործելու: Այդ պատճառաւ էր որ պիտի չէզոքացուէին անհրազործելի, անհիմն եւ տեսական որոշումները. օրէնքը գործին պիտի համապատասխանէր եւ գործը օրէնքէն բխէր: Օրէնսդիր եւ Վարչական մարմինները տե-

սակ մը կը նոյնանային, իրարու մէջ կը ձուլուէին, առանց որ մէկը որոշում տուողի [մենաշնորհը ունենար, իսկ միւսը գործադրողը ըլլար]:

Միս կողմէ՛ այդ օրէնսդիր ժողովները, իրենց որոշումները տալէ ետք, կարճ ժամանակէն կը լուծուէին, իրաւագօրկ կը դառնային եւ, իրենցմէ 3-7 հոգիհոց բարձրագոյն մարմիններ ընտրելով՝ Բիւրօ կամ Պատասխանատու Մարմին, անոր կը փոխանցէին իրենց բոլոր լիազօրութիւնները: Այդպէտով՝ ընտրուած մարմինը կաշկանդուած էր միայն զինք ընտրող Գերագոյն Ժողովի որոշումներով եւ միայն անոր առջեւ պատասխանատու էր:

Ո՛չ ընտրուած Գործադիր Մարմինը, ոչ անոր ենթակայ Կ. Կոմիտէներ եւ անոնց Շրջանային Ժողովները, մասնակի կերպով կամ համախումբ, ոչ ալ ազդեցիկ ընկերներ, չէին կարող շեղիլ Ընդհանուր Ժողովի որոշմանց սահմաններէն եւ վերաքննութեան ու փոփոխութեան առաջարկներ ընել: Անոնք բոլորը պարտադիր կերպով իրենք իրենց շղթայուած պէտք է համարէին Ընդհանուր Ժողովի սկզբունքներով եւ անոնց գործադրողը, մինչեւ նոր Ընդհանուր Ժողովի գումարումը, ուր կրնային ազատիլ այդ շղթաներէն եւ փոխել ինչ որոշումները՝ իրենց անձնական եւ շրջաններու կարծիքները առաջադրելով:

Եթէ պատահէր, որ վարչական գերագոյն մարմինը անհրաժեշտ գտներ [փոփոխել] Ընդհանուր Ժողովի որոշումները, կանգնած լինելով բացառիկ նոր կացութեան առաջ, ան իրաւասու էր մարմիններէն հրաւիրելու Խորհուրդ կամ բացառիկ Ընդհանուր Ժողով՝ մինչ այդ անոր համար պարտադիր ըլլալով Ընդհանուր Ժողովի որոշումները...

«Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», գ., Ռուբէն

15

[Ի՞նչ ՉԻ ՆՇԱՆԱԿԵՐ «ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ»]

... Ինչպէ՛ս մեկնել մեր անունը, - **Հայ Յեղափոխական Գաշնակցութիւն**. անելի ճիշտը՝ այս անունը կազմող երեք բառերից վերջինը..., քանի որ սկզբի երկուսը դիւրաւ մեկնելի են:

Ինչպէս յայտնի է, **Ֆեդերացիան** (դաշնակցութիւն) օրէնսդրական-քաղաքական ապակենտրոնացում է, մինչ **դեցենտրալիզացիան**՝ վարչական-կազմակերպչական:

Արդ, յիսուն տարի առաջ ... նորաստեղծ կուսակցութիւնը **Գաշնակցութիւն** կոչուեց, ... ֆեդերացիա բառը մեր անուան մէջ մտաւ [ոչ] անշուշտ օրէնսդրական-քաղաքական իմաստով, որովհետեւ Գաշնակցութեան անդրանիկ Ծրագրի ... մէջ ֆեդերատիւ եւ ո՛չ մէկ

պահանջ չկայ. [առաւելագոյն Ծրագրի] մէջ խօսքը այն երազական ապագայի մասին է, «*երբ մարդոց կառավարութեան կը փոխարինէ իրերու կառավարութիւնը*» ... իսկ «նուագագոյնի» մէջ խօսքը միայն մեր եւ մեր երկրի մասին է, բայց ոչ Թուրքիոյ եւ թրքաբնակ բոլոր ժողովրդների (այսպէս եղաւ ատելի ուշ, դ. Ընդհ. ժողովում):

... Չուր ճիգ պիտի լինէր ֆեդերասիոն որոնել մեր անդրանիկ Ծրագրի քաղաքական բաժնի մէջ. մեր անուան մէջ դաշնակցութիւն բառը այդ իմաստով չմտաւ:

... Խորանալով հարցի մէջ, խուզարկու միտքը պիտի նկատի, որ մենք **դեցենտրալիստ**-ապակենտրոնական ծնունդինք (իբրեւ անդամ «Յեղափոխականների Դաշնակցութեան»), առանց երբեք **ֆեդերալիստ**-դաշնակցական լինելու. սակայն, տակաւին 1905ի «Նախագիծը» չիրապարակուած եւ տակաւին 1907ի դ. Ընդհ. ժողովը (Վիեննայի) տեղի չունեցած (ուր առաջին անգամը լինելով՝ պաշտօնապէս որդեգրեցինք ֆեդերասիոնի սկզբունքը մեր Ծրագրի մէջ), մինչ այդ արդէն եղանք-դարձանք **ֆեդերալիստ** («Յեղափոխական-դաշնակցական»), առանց նախնի իմաստով **դեցենտրալիստ** մնալու. ու շարունակեցինք յարատեւել իբրեւ ֆեդերալիստներ, երբ 1919ին թ. Ընդհ. ժողովի որոշումով **անկախականներ** էինք եւ արդէն ապրում էինք **անկախ** Հայաստանի մէջ:

«Գաղափարների Ոգիւն», Վ. Նասասարդեան

16

[Հ.Յ.Գ. ԳԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՒԱԲԱԿԱՆ-ԱՆԱՆՁՆԱԿԱՆ]

... Դաշնակցութեան գերագոյն մարմնի հեղինակութիւնը - **բարոյական** իշխանութիւն է **ազատութեան** մէջ... Դաշնակցութեան Բիւրոյի հեղինակութիւնը - **մարմնի՝ եւ հաւաքականութեան՝** հեղինակութիւն է (իշխում է **անանուն** Բիւրօն)... Դաշնակցութեան մէջ որքան մեծանում է անձը, այնքան ատելի ստուերի մէջ է մնում նրա անունը, եւ այնքան ատելի համեստ է դառնում նրա կեցուածքը... Դաշնակցութեան մէջ բուն բռնակալը **քուէն է՝** շատերի կամքը խորհրդատուող վստահութեան անբռնադատ ակտը. **մէկ քուէով** իսկ կարելի է տապալել ամենէն տիրական դէմքը Դաշնակցութեան մէջ... Դաշնակցութեան մէջ Բիւրօն իշխան լինելով՝ խորքին մէջ առաջին **ժառանգ** է Կուսակցութեան մէջ... Իշխանութեան հիմը՝ **ազատների** հոգեպարար **հպատակութիւնն** է...

Մի ուշագրաւ պարագայ. ինչ որ Բիւրօն է ամբողջ Կուսակցութեան մէջ, նոյնն է Կենտրոնական Կոմիտէն իր շրջանին մէջ: Ու նոյն պատկերը, աստիճանական վայրէջքով, մինչեւ Կազմի իրաւական ծիրը, մինչեւ Դաշնակցութեան ամենափոքրիկ միաւորը, մինչեւ Խումբը:

«ԱՆՀԱՏՆԵՐԻՆ ՉՈՒԷՆ ԽՍՐԵՐԻ ՄԷՉ»...

1897 Սեպտ. 26ին, Ժընեւից, յանուն «Դրօշակ»ի խմբագրութեան նամակ գրելով Ռումանիա... Մ. Վարանդեանին, որ այնտեղ էր կազմակերպական գործով, Ռոստոմը -քաջածանօթներից մէկը իր ստեղծած Կազմակերպութեան բարբերին եւ ըմբռնումների- նրան ուսուցանում էր.

«Երբ քեզակից պահանջում եմ հեղինաւոր ակուն Խմբագրութեան մէջ, ինչո՞ւ չես պարզում դրանց մեր տակտիկական՝ անհատներին չուրել խմբերի մէջ, որ խմբերը յայտնի լինեն եւ ոչ այս կամ այն անհատը. ինչո՞ւ չես ցոյց տալիս, որ հենց դրա մէջն է մեր առաւելութիւնը»...

Մէջբերում Վ. Նաւասարդեանէն («Գաղափարների Ոգին»)

Կուսակցութիւնը դաշնակցային հիմերով կերտում մէկ միաձոյլ ամբողջութիւն է, ուր իւրաքանչիւր միաւոր ինքն իր մէջ կենտրոնացած իշխանութիւն է, խստօրէն ենթակայ իրենից գերադաս մարմնին:

... «Տիրեր»ներ երբեք չունենալով եւ **անձերի** երբեք կապում չլինելով՝ դաշնակցական առաջնորդների -ու նրանց մէջ մինչեւ իսկ ամենակառկառունների- մահը անցաւ գրեթէ անհետեւանք Կուսակցութեան համար. մեկնողները (որոնց դիրքին ու ապրած կեանքին շարքերը ծանօթանում էին յաճախ նրանց մահից յետոյ միայն) ցընցում չպատճառեցին կազմակերպական կառոյցին, որ կանգուն մնաց անընդհատ... Նաեւ այստեղ, այս **անանուն** առաջնորդութեան մէջ, որոնցք մէկը Դաշնակցութեան կենսունակութեան ու յարատեւումի գաղտնիքներից:

«Գաղափարների Ոգին», Վ. Նաւասարդեան

17

ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳՐԻՆ ԶՈՅԳ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

... Դաշնակցականին համար մեր կանոնագրի տարին չափ կարեւոր է կազմակերպական մեր կանոններու ոգին: Մեր կանոնագրին

տառը եւ ոգին հաւասարապէս յարգելու այդ պահանջին ենթակայ են ոչ միայն անոնք, որ կը բաւարարուին կանոնագրի տառով ճշդըւած իրենց պարտաւորութիւնները կատարելով, այլեւ անոնք, որ, պատասխանատու դիրքերու վրայ գտնուելով հանդերձ, կ'ապաւինին կանոնագրի տառին, այլապէս ոչ-ընկերական իրենց ընթացքը արդարացնելու համար: ... [Իսկ գալով] կանոնագրին տառը անտեսող եւ միայն անոր ոգիին կառչող ընկերներուն, ... [անոնք] տուրք կուտան ինքնախաբէութեան եւ գործնապէս կը հարուածեն կուսակցական մեր ուժին կարեւորագոյն կռուաններէն կանոնագիրը:

Կազմակերպական մեր կեանքը լճացումի կը դատապարտուի, երբ ընկերներ միայն ձեւականօրէն կը յարգեն իրենց պարտաւորութիւնները, ... կ'անտեսեն դաշնակցականի իրենց յանձնառութեան ոգին, որ «*բոլոր ուժերով*» եւ ի հարկին «*կեանքի գնով*» զոհաբերումի ուղի մը կը բանայ բոլորիս առջեւ:

Լճացումը կը սկսի այն պահէն, երբ իր թաղի խումբին անդամակցելու, խմբական իր ժողովներուն կանոնաւորապէս մասնակցելու եւ իր անդամավճարը անյապաղ փակելու կանոնագրային պարտաւորութիւնները լրացնելով՝ խումբի ընկեր մը կը խորհի, որ դաշնակցականի իր կոչումին արժանի ընթացքի մէջ է: Կը մոռնայ, որ այդ պարտաւորութիւնները միայն նախապայմանն են եւ պարզապէս կը ծառայեն կազմակերպական մեր առօրեան կանոնաւորելու նպատակին եւ, հետեւաբար, չեն կրնար ինքնանպատակ դառնալ: Նոյնքան կարեւոր նշանակութիւն ունի խմբական իր կեանքը աշխուժացրնելու իւրաքանչիւր ընկերոջ պարտաւորութիւնը, որ մեր կանոնագրին մէջ ոչ մէկ տեղ արձանագրուած է, հակառակ անոր որ կազմակերպական մեր կենսունակութեան ամէնէն վաւերական աղբիւրն է: Անիկա թելադրանքն է մեր կանոնագրի ոգիին: Իսկ դաշնակցականի այդ պարտաւորութիւնը կը յարգուի միայն այն ատեն, երբ խումբի ընկերը ինք եւ, իր ճամբով, նոյնիմքն դաշնակցական խումբը կը վերածուի տուեալ թաղին մէջ Դաշնակցութեան խօսքը եւ գործը ապրեցնող միաւորի:

Լճացումի այլ մակարդակ՝ ... երբ այս անգամ մարմնի անդամ ընտրուած կամ խումբերու ճամբով պատասխանատուութեան կոչուած ընկերներ ... կանոնագրի տրամադրութիւնները յարգելու եւ չմեղանչելու իրենց պարտաւորութիւնը միակ մտասեւեռումի [կը վերածեն] ... սխալանքի դուռ բացող նախաձեռնութիւններէ խուսափելով, որքան որ ալ ստիպողական նկատուին անոնք: Չեն անդրադառնար, որ կանոնագիրին դէմ չմեղանչելու նախանձախնդրութիւնը կազմակերպական արժէք է միայն այն ատեն, երբ կը ցուցաբերուի գործելու պատրաստակամութեամբ օժտուած մարմիններու կողմէ ... որ միայն գործօս տարրը կրնայ սխալի, իսկ չսխալելու համար՝ կը բա-

ւէ... չգործել, որ սխալներուն մեծագոյնն է, անշուշտ: Կարելորդ գործելու եւ սեփական սխալները սրբագրելու կազմակերպական մասնաճախներու փունն է, որուն բացակայութեան՝ ամէն կանոնագիր կը վերածուի մեռեալ տառի, կը պարպուի զինք ապրեցնող ոգիէն:

Բայց լճացումի վտանգը միայն մէկն է այն դժուարութիւններէն, որոնց կը բախի կազմակերպական մեր կեանքը, երբ մեր կանոնագրին տառը եւ ոգին հաւասարապէս չեն յարգուիր:

Անկէս նաեւ սայթաքումներու դուռ բացող երեւոյթ է, երբ ամբողջ հարցին կը մօտենանք ժողովրդավարական հիմունքով գործող մեր կուսակցութեան գաղափարական ներքին եռեւեփումին դիտանկիւնէն:

Իբրեւ մտածումի եւ շարժումի ներքին ազատութիւններ քաջալերող եւ այդ հիման վրայ զարգացող գաղափարական շարժում՝ Դաշնակցութիւնը ժողովրդավար յարաբերութեանց մէջ կը տեսնէ եւ կը պատկերացնէ վէճերու եւ բախումներու լուծման ուղին: Հետեւաբար գաղափարական ներքին պայքարներէ անցնող իր ընկերներուն Դաշնակցութիւնը իր կանոնագրէն տարբեր զէնք չի կրնար տրամադրել: Բայց, ինչպէս ամէն զէնք, մեր կանոնագիրը եւս կրնայ չարաշահութեան զոհ երթալ, եթէ զայն պարպենք հաւաքական մեր կամքը կռանելու կոչուած զէնքի իր իմաստէն՝ ոգիէն, եւ վերածենք ընդդիմադիրներու չէզոքացման ծառայող միջոցի, պատժական տառի...

Այսպէս. կազմակերպական մեր ապակեղոնացումը նուիրագործող կանոնագրային տրամադրութիւնը կրնայ պատճառ դառնալ նման սայթաքումի, երբ մարմիններ կամ ընկերներ անոր տառին կը կառչին եւ ինքնագլուխ իրենց գործունէութիւնը կամ գաղափարական շեղումը կ'արդարացնեն այդ հիման վրայ...

Կուռ կազմակերպութիւն դառնալու կարելորագոյն մեր կռուաններէն կարգապահական խստապահանջութիւնը իր կարգին դուռ կը բանայ սայթաքումի ... Խօսուին է պարագան մեր կանոնագրի այն տրամադրութեան, որուն համաձայն՝ Դաշնակցութեան կեանքին մէջ մարմինները հաշուետուութեան կը կանչուին միայն համապատասխան ժողովներու ընթացքին, երբ տուեալ մարմին մը աւարտած է իր պաշտօնավարութեան շրջանը: Կանոնագրային այս տրամադրութիւնը, սակայն, կը պարպուի իր իմաստէն, երբ միայն իր տառով կ'ըմբռնուի թէ՛ մարմիններուն եւ թէ՛ ընկերներուն կողմէ: Մարմինները կը փորձեն թոյլ չտալ, իսկ ընկերներն ալ անհրաժեշտ մարտունակութիւնը չեն ցուցաբերեր, որպէսզի կարելի ըլլայ տուեալ մարմնի պաշտօնավարութեան շրջանին եւս ուշադիր գտնուիլ եւ առաջքը առնել գործուած սխալներուն: Կը մոռցուի, որ կանոնագրային այդ յօդուա-

ծին ոգին այլ բան է, պարզապես թելադրուած է տուեալ մարմնին գործելու եւ իր ծրագիրները իրականացնելու հնարատրութիւն ընծայելու նախանձախնդրութենէն...

Նոյնը կը պատահի դաշնակցական պատիժի պարագային, որ խառնուածքային անհարթութիւններ սրբագրելու եւ դաշնակցականավայել վարք խթանելու դաստիարակչական իր իմաստէն կը պարպրի, երբ կը վերածուի հեղինակութիւն պարտադրելու կանոնագրային միջոցի:

... Ի՞նչ կը մնայ կարգապահական մեր պատիժներէն, երկաթեայ կազմակերպութեան վահանի անոնց արժէքէն, եթէ պատժող մարմինը պիտի շահագործէ անոր տառը, իսկ պատժուողը պիտի չունենայ պատիժը կրելու դաշնակցական վեհութիւնը:

... Նոյնքան բացասական հետեւանքներ կ'ունենայ դեռ միւս ծայրայեղութիւնը, կանոնագրի ոգին նոյնիմքն կազմակերպական կանոններու դէմ գործածելու սխալը[, դուռ բանալով սայթաքումներու]:

... Ամէնէն դիպուկ օրինակները կը պարզուին գաղափարական ներքին պայքարներու ընթացքին:

Եղած են պարագաներ, ուր մեր ծրագրին կամ Ընդհանուր Ժողովի որոշումներուն հաւատարիմ գտնուելու նախանձախնդրութեամբ՝ ընկերներ տեղին պայքար բացած են շեղում արձանագրած մարմնին մը դէմ, բայց միաժամանակ գործած են կանոնագրի տառին հանդէպ անընդունելի արհամարհանքով, երբ մարմններու դէմ հրապարակային արշաւի բնոյթ տուած են իրենց պայքարին՝ առանց դիմելու օրինական ուղիով իրենց արդար դատը արժեցնելու կանոնագրային միջոցին կամ սպասելու այդ մարմնի կամ մարմններու պաշտօնավարութեան աւարտին... Մոռնալով որ կանոնագիրը կազմակերպական մեր կառոյցը խարսխած է ժողովրդավարական հակակշռի սկզբունքին վրայ, որ ոչ մէկ մարմն կրնայ խուսափիլ հաշիւ տալու իր պարտաւորութենէն եւ, աւելին, ժողովրդավարական հակակշռումի այդ յարաբերութիւնը կ'ընթանայ երկու ուղղութեամբ ալ, թէ՛ վերէն վար եւ թէ՛ վարէն վեր: Կարելորդ՝ մեր կանոնագրային այդ անփոխարինելի գէնքին գործածութիւնն է, իբրեւ մէկ ու անբաժանելի ամբողջութիւն՝ իր տառով եւ ոգիով...

Խաժակ, «Ազդակ Շարաքօրեակ-Դրօշակ», ԺԴ տարի, ք. 44-45

ԶԲ. Յ.Յ.Դ. ԿԱՆՈՆԱԳԻՐԸ՝
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՊԱԿԵԴՐՈՆԱՑՈՒՄ
ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱ-ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱՑՈՒՄ

18

[ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵՆԷՆ՝
ԴԷՊԻ ԳԼԽԱԳԻՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ]

1898 Փետր. 9 թուականով Ռոստոմը «Դրօշակ»ի անունից գրում էր Տրապիզոնի Կենտր. Կոմիտեին.

«Այս տարուան Մեծ-Զաղաքի (Թիֆլիս) Ռայոնական ժողովը ձեզ տեղի է տուել կարծելու, թէ դրանով նոքա իրենց միապետական ուղղութիւնը չխախտելու համար՝ Ընդհ. ժողովի իրագործումը մի կողմն են թողնում»:

«Միապետական» բառը յայտնապէս նետուած է ենթադրեալ «կենտրոնականների» հասցէին:

... Պայքարը-կենտրոնացման եւ ապակենտրոնացման շուրջ - մղում էր Դաշնակցութեան մէջ այն տարբերութեամբ, որ Դաշնակցութեան «կենտրոնականները» նոյնպէս «ապակենտրոնական»ներ էին, բայց միայն ուժեղ Կենտրոն ունենալու բացառապէս ձգտումով, ինչպէս որ «ապակենտրոնական»ներն էլ -մինչեւ իսկ ամենէն ծայրայեղները նրանց մէջ- որոշ իմաստով «կենտրոնական»-ներ էին:

... Թուում է, թէ մենք ծայրայեղ թելեր չունեցանք. չեղան մեր մէջ ընկերներ, որոնց «ապակենտրոնացում»ը յանգում էր անիշխանութեան, ինչպէս չեղան ընկերներ, որոնց «կենտրոնացում»ը փոշիացնում էր նախաձեռնութեան ոգին ինքնավար մարմինների մէջ:

... Մի բան, սակայն, վեր է կասկածից: Անտարակուսելի է, որ դաշնակցող յեղափոխականների մէջ դաշնակցութեան (ֆեդերասիոնի) հակառակ տարրեր կային: Այս վերջինները ոչ թէ միութեան էին ձգտում (ֆեդերատիւ հիմերով), այլ ձգտում էին **միաձուլումի**, աշխատում էին բոլոր յեղափոխական խմբերից շաղախել միայն **մէկ** կուսակցութիւն՝ **մէկ** մարմնով ու **մէկ** դաւանանքով:

... Դաշնակցող յեղափոխականների պայքարը -ֆեդերասիոնի եւ մէկ ու միաձուլ կուսակցութեան շուրջ- վերջացաւ «միացեալ»ականների յաղթանակով:

Աննկատ շոգիացաւ փոքրագիր «դաշնակցութիւն»ը, (ֆեդերասիոն) իր տեղը զիջելով գլխագիր **Դաշնակցութեան**:

Սակայն այս պայքարի խուլ արձագանգները շարունակեցին լրսունել երկար տարիներ: ... Դաշնակցութեան միեւնոյն Կենտրոնից եւ նոյն թուականին ելած թղթերից ոմանք գերակշռաբար «ապակենտրոնական» շունչ ունեն, իսկ ոմանք՝ «կենտրոնական», նայած թէ ո՛վ եղած է այդ թղթերի հեղինակը:

«Գաղափարների Ոգին», Վ. Նաւասարդեան

19

[ԱՊԱԿԵԴՐՈՆԱՅՈՒՄԸ ԱԻԵԼԻՆ՝ ՔԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՊԱՐԶ ՉԵՒ ՄԸ]

Կազմակերպութեան ձեւը նոյնքան կարեւոր է, որքան կազմակերպութեան նպատակը: Կազմակերպական ձեւը ի վերջոյ կը կանխորոշէ նաեւ նպատակները: Այսպէս, օրինակ, կեդրոնաձիգ կամ անհատապաշտ կազմակերպութիւն մը ուզէ-չուզէ ի վերջոյ կը յանգի միապետական, թեոկրատիկ ռեժիմի, թէկուզ ե՛ր իր նպատակներուն այդ հակառակ լինի. եւ ընդհակառակն, դեմոկրատիկ կառոյցով կազմակերպութիւն մը, հակառակ իր իսկ կամքին, պիտի թեքի դէպի ժողովրդապետութիւն: Եթէ կուսակցութիւնները կրնան ստել կամ սխալիլ իրենց ծրագիրներով, անհնար է որ անոնք կարողանան ստել կամ սխալիլ իրենց կանոնագիրներով, որ հայելին է իրենց կազմակերպութեան: Եթէ նպատակ կայ իր խորքով ճանչնալ կուսակցութիւն մը, հասկնալ անոր ներկան եւ նախատեսել ապագան, ապա պէտք է ուսումնասիրել ոչ այնքան անոր խոստումները, ծրագիրները, յայտարարութիւնները, որքան ուշի ուշով քննել այդ կուսակցութեան կառոյցը, անոր կազմակերպական ձեւը: Եւ դիտել միաժամանակ, թէ իր կիրարկած ձեւերը կեանքի մէջ ի՞նչ չափով արմատացած եւ

հարազատ դարձած են ժողովուրդին: Կազմակերպական ձեռքու եւ անոնց յաջողութեան մէջ պէտք է որոնել կուսակցութեան մը հետապնդած նպատակներուն մեծութիւնն ու կենսունակութիւնը: Եւ որ էականն է, ոչ միայն ներկան, այլեւ ապագան այդ կուսակցութեան, որուն կ'առաջնորդէ անոր կազմակերպութիւնը:

Գաշնակցութեան կանոնագիրը եւ կեանքի մէջ կիրարկած իր կազմակերպական ձեռքըրը հետեւեալ ինքնատիպ առանձնաշատկութիւններն ունին, թերեւս եւ անծանօթ որեւէ կուսակցութեան:

ա.- Ան ապակեղորոն է. այսինքն բազմաթիւ անկախ կեդր. կոմիտէներու դաշնակցութիւն մըն է. իւրաքանչիւր 500-1000 շաքաբայիններ կը կազմեն անջատ միատր մը, ունենալով օրէնսդիր եւ գործադիր մարմիններ: Այդ անջատ եւ անկախ մարմիններուն փոխադարձ համաձայնութեամբ կազմուած դաշնակցութիւնը ունի բոլոր մարմիններուն համար գերագոյն **օրէնսդիր** ատեան մը, որ կը կոչուի **Ընդհանուր ժողով**, եւ գերագոյն **վարչական** մարմին մը՝ **Քիւրօն**:

ԱՊԱԿԵԳՐՈՆԱՅՈՒՄԸ՝ ԻՐ ԱՌԱՒԵԼԱԳՈՅՆ ՇԵՇՏՈՒՄՈՎ

«Դրօշակ»ի խմբագրութիւնը [Յոնանը] 1895ին գրում էր Ամերիկայի «Հայր[եմասիրաց^օ] Օթեակ»ին, ի պատասխան այս վերջինի կողմից իրեն եղած դիմումին:

«Յարգելի պարոններ, Գաշնակցութեան կոմիտէ կազմելու համար հարկ չկայ իրաւունք խնդրելու: Ծրագրին ծանօթ էք, գիտէք, որ ապակենւորոնացումն է ընդունուած կազմակերպութեան մէջ, ուստի եւ բաւական է, որ մի խումբ մարդիկ ընդունում են Ծրագիրը. նրանք կարող են իրենց շրջանում կազմել մի դաշնակցական կոմիտէ: Միայն հարկատր է գոյութեան մասին յայտնել Քիւրօնեթից կամ կոմիտէներէից մէկին, որպէսզի նա էլ յայտնի միւսներին... Նոյն ապակենւորոնացման հիման վրայ իւրաքանչիւր կոմիտէ ազատ, անկախ, առանց հրամանների, պարտութեան մի ուրիշ մարմնից, գործում է իր շրջանում: Նա կարող է պարտատրել մարդիկ, նրանց գէլք տալ եւ ուղարկել: Միայն այս դէպքում առաջուց հարկատր է յայտնել սահմանագլխի կոմիտէներին եւ սպասել նրանց պարտասխանին, որովհետեւ ամէն ժամանակ մարդ չի կարելի ուղարկել եւ զնացողներին պէտք է նրանք ուղարկեն՝ առաջնորդ տրալով. առանց նրանց անհնար է սահմանը անցնել»:

Մէջբերում՝ Վ. Նաւասարդեան (**«Գաղափարների Ոգին»**)

Բայց նաեւ ստոնք գերագոյն մարմիններ են սահմանափակ իրաւունքներով. անոնց իրաւունքները գծուած են այս սահմանադրութեան մէջ, որ թէեւ ենթակայ, բայց էապէս անկախ միատրները ստեղծած են փոխադարձ համաձայնութեամբ:

Դաշնակցութեան կազմակերպութիւնը յար եւ նման է ֆեդերատիւ կամ կոնֆեդերատիւ պետական ձեւին:

Այդ պարագան ցոյց կուտայ, որ Դաշնակցութիւնը ուզէ-չուզէ իր նպատակներով եւ իր ապագայ քաղաքական առաջադրանքներով պիտի ընթանայ դէպի ապակեղրոնացում, դէպի **ֆեդերասիոն** կամ **կոնֆեդերասիոն**: Ան բնական հակառակորդ է ամէն կեղրոնաձիգ իշխանութեան ձեւի եւ կազմի:

բ.- Այլ կուսակցութեանց մէջ անհատը, իր մտաւոր եւ բարոյական արժէքով, ծագումով, դիրքով կամ հարստութեամբ կը գրաւէ այս կամ այն տեղը. շատ անգամ դեկավարութիւնը ճշդուած է ըստ այդ տրւեալներուն: Դաշնակցութեան համար նման արժէքներ գոյութիւն չունին: Արժէք չէ անհատի դասակարգային ծագումը, անցեալը, հարստութիւնը, տիտղոսը, մտաւոր պաշարը եւայլն: Սիայն եւ միայն երեք արժէքներ նկատի կ'առնուին,- **հաւատարմութիւն, զոհաբերութիւն** (ներկայի համար) եւ **գործելու եռանդ**:

ԱՊԱԿԵԳՐՈՆԱՅՈՒՄԸ
ՀՈՄՆԵՆՇ «ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ»Ի

...Շատ կը ցաւիմ, որ Պոլիս եղած ատենդ չմտածեցի մեր Ծրագիրը քեզի բացատրելու, որովհետեւ յայտնի կ'երեւի, որ չես ըմբռնած զայն: Անոր լայն ոգին կարող է ամենաազատ մտածող յեղափոխականին բաւարարութիւն տալ, եւ եթէ այս գիտնայիր, անշուշտ, մեր միասին գործելու խնդիրը տարբեր կերպով պիտի բացատրէիր:

Ահա թէ ինչպէս. Դաշնակցութեան հիմնական պայմանը ապակեղրոնացման դրութիւնն է. ամէն կոմիտէ ազատ է իր տեղին մէջ բոլորովին անկախ գործելու. նա իր առանձին ամունն ու ներքին ծրագիրը կրնայ ունենալ, բայց կը գործէ յանուն Դաշնակցութեան, եւ երբ Դաշնակցական անհատ մը որեւէ կոմիտէի իրաւասութեան տակ գտնուող տեղ մը երթայ, կ'ենթարկուի այդ կոմիտէին եւ կը գործէ անոր հրահանգներուն համեմատ: Կոմիտէն հաւաքական մարմին մըն է, որ կը ներկայացնէ իր շրջանի ամբողջ ընկերական կազմակերպութիւնը ու հաւաքական կարծիքը, որը բարձր է ամէն անհատականութենէ. եւ ամէն գործող պարտական է այդ ընդհանուր ձայնին ենթարկուիլ: Դաշնակցականներս աշխատած ենք ժողովուրդին մէջ այսպիսի գիտակցական վերաբերութիւն ստեղծել դէպի գործը...

9/21 Մարտ 1896

Բաբկէն Սիւնի
Հ.Յ.Դ. Դիւան, ա., էջ 304

Այս արժէքները խորքին մէջ ապադասակարգային կը դարձնեն կազմակերպութիւնը եւ զայն կը վերածեն աւելի գործի եւ զոհաբերու-

թեան տաճարի մը., քան տեսական սին վեճերու մէկ խմբակցութեան: Այս է պատճառը, որ Դաշնակցութեան մէջ ներքին ձգտում մը կայ **պարլամենտարիզմը** վերաքննութեան առնելու եւ օրէնսդիր ու գործադիր իշխանութիւնները ի մի ձուլելու, միաժամանակ ներդաշնակելով դասակարգային հակամարտութիւնները եւ ոչ թէ անոնց հակադրութիւնները սրելով: Դաշնակցութեան կազմակերպական ձեւը դէպի բնական հակառակութեան կը տանի **պարլամենտարիզմին** եւ դասակարգային հակադրութեանց. ի վերջոյ Դաշնակցութիւնը պիտի յանգի այլ ձեւերու, աւելի հարազատ իր կազմակերպական կառոյցին:

«Հ.Յ.Դ. Կազմակերպութիւնը», Ռուբէն

20

ԽՈՒՄԲԸ ՈՐՊԷՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻԱՒՈՐ (ԽՈՒՄԲԻ ԱՐԺԵՒՈՐՈՒՄՆ ՈՒ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԸ)

Հ. Յ.Դաշնակցութեան կազմակերպական կառոյցի հիմերը իր խումբերն են:

Անհատը, իր տեսակէտներով ու գործունէութեամբ, կը մնայ առանձնակի երեւոյթ, որքան ատեն որ կազմակերպ հաւաքակալութեան մը մէկ մասնիկը չէ դարձած իր յօժար կամքով եւ յանձն չէ առած իր ճիգերը համադրել, կապակցել ուրիշներու ճիգերուն հետ: Հիմնական համախմբումը Դաշնակցութեան մէջ խումբն է, որոշ թիւով դաշնակցականներու մէկտեղումը դաշնակցական միատրի մը մէջ, որ կը գումարէ իր ժողովները, կը լսէ վերին մարմիններու կողմէ տրուած թելադրանքները, ուղղութիւնը, երբեմն ալ՝ հրահանգները. եւ կը յայտնէ իր տեսակէտները՝ քննելի ու որոշելի այս կամ այն հարցի մասին, կ'ընտրէ իր ներկայացուցիչները, որոնք գումարուելով որոշումներ պիտի տան աւելի լայն սահմաններով միատրի մը գործունէութեան համար ու պիտի ընտրեն տրուած որոշումները գործադրող մարմին մը, այդ աւելի լայն միատրի սահմաններուն մէջ եւ կազմակերպութեան կանոնագրով անոր տրամադրուած իրաւասութիւններով:

... Ներկայ կառոյցով Դաշնակցութեան հիմնական տարրը խումբըն է, խումբերն են [- կազմակերպական «բուրգի» անհրաժեշտ խաւրիսխը:]

Կազմակերպութեան շէնքը դուրսէն դիտողներ կրնան այն տպա-

տրութիւնը կրել, թէ ... հիմնականը [այդ] բուրգի խարխիսին մէջ չի գտնուիր, այլ գագաթին, քանի որ բարձրագոյն ժողովներն են, որ ընդհանրական որոշումներ կու տան, համայն Դաշնակցութեան համար պարտադիր ուղեգիծը կը գծեն. եւ այդ ժողովներէն բխած մարմիններն են, որ տրուած որոշումներու գործադրութեան համար ճիգ կը թափեն, ուղղութիւն կու տան, պահանջ կը դնեն, կը վարեն կուսակցական լայն միատրներու կամ համայն կուսակցութեան գործերը: Կը պատահի նաեւ, որ մինչեւ անգամ դաշնակցական կազմակերպութեան անդամ եղողներ այդպէս մտածեն, այդպէս կարծեն:

**ԱՊԱԿԵՂՐՈՆԱՅՈՒՄԸ
ԵՒ ՓՈԽԱԳԱՐՁ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԱՆՈՒՄԸ**

... Աններելի անտեղութիւն մը ձեր բանաձեւին մէջ, որուն վրան ձեր լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրենք: [Ի՞նչ անհրաժեշտութիւն՝ Հնչակեաններուն հետ ձեր բանակցութեանց մէջ] Ժընեւի մասին խօսելու՝ իբրեւ Կեդրոնի: Ինչո՞ւ այդպիսի թիր բացատրութիւններով առիթ կ'ընծայէք մեր հակառակորդներուն մեր Կազմակերպութիւնը խժբծելու: Իրաւունք չե՞ն ունենար միթէ այդ պարոնները ըսելու, որ երբ Կեդր. Կոմիտէ մը պաշտօնական բանակցութեան մէջ [այդպէս կ'արտայայտուի], ըսել է որ իրապէս Կեդրոն մը գոյութիւն ունի Ժընեւի մէջ, թէւ Դաշնակցականները կը կեղծեն թէ ապակեդրոն են:

...Ընկերաբար կը հրաւիրենք անելի գգուշատր ըլլալ ձեր բացատրութիւններուն մէջ. եւ խօսակցութեան ատեն խորհրդակցիլ դուրսի ընկերներուն հետ. ի հարկին հոս դիմել, ոչ անոր համար՝ որ Ժընեւը կեդրոն է, այլ կեդրոնի բացակայութիւնը պարտք կը դնէ կոմիտէներուն վրայ իրենց ընկերներէն ալ լուսաբանուիլ: Երկրի գործիչները, որոնց տրամադրութիւններուն թարգման կ'ուզէք հանդիսանալ, երբեք կեդրոն մը չճանչնալով հանդերձ -որովհետեւ գոյութիւն չունի-, երբեք իրաւական կախում մը չունենալով հանդերձ, միշտ բարոյական կախում ունեցած են իրարմէ, որովհետեւ այլապէս ապակեդրոնացումը պիտի ըլլար անիշխանութիւն մը՝ երբ ամէն մարդ իր խելքին փշածը ըներ, երբ մէկուն զրածը միսին տրամագծօրէն հակառակէր, երբ ընդհանուրի փորձառութիւնը [տեղ] չունենար մասնատր գործունէութեան մէջ: Այդ ընկերական փոխադարձ խորհրդակցական սիստեմն է, ծագած իւրաքանչիւր կոմիտէի վրայ ծանրացած պատասխանատուութենէն, որ առաջ կը բերէ այդ սերտութիւնը Դաշնակցութեան գործունէութեան մէջ. որ միայն գործին օտարները կրնան չհասկնալ, եւ հակառակորդները չհասկնալ կեղծել ...

25 Յունիս 1897

Ա. Վռամեան

«ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, Մայիս-Օգոստոս 1941

Եապէս սխալ է սակայն այդպիսի մօտեցում մը: Եւ եթէ երբեմն իրականանման կը թուի՝ ատոր պատճառը այն է միայն, որ երբեմն

Դաշնակցութեան հիմնական տարրը կազմող խումբերը իրենք, գիտակցաբար կամ անգիտակցաբար, կը հրաժարին իրենց պարտաւորութիւններէն, կենսունակութենէն եւ կը սկսին դառնալ կրատրական միատրներ: Այն ատեն ահա խումբը կը սկսի արժեզրկուիլ եւ կը դադրի խաղալէ իր կենսական նշանակութիւն ունեցող դերը, կազմակերպութեան բուրգի հիմերու ամրակոտ պահպանման հարցին մէջ գէթ:

Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովներուն կողմէ հաստատուած կանոնագիրը կը պահանջէ, որ դաշնակցականը մաս կազմէ իր բնական վայրի խումբին եւ կատարէ կուսակցութեան կողմէ իր վրայ դրուած նիւթական եւ բարոյական բոլոր պարտաւորութիւնները:

Բարոյական պարտաւորութիւնները կատարելը միայն ենթարկելիլ չէ, միայն հրահանգներ ստանալ ու զանոնք գործադրել չէ ... Դաշնակցութեան խումբերը եթէ կուսակցութեան կամքը գործադրողներ են, միաժամանակ են, պարտաւոր են ըլլալու, ըստ իրենց վրայ դրուած բարոյական պարտաւորութեանց, նաեւ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ ԿԱՄՔԸ ՃՇԳՈՂՆԵՐ:

Հ. Յ. Դաշնակցութեան կառոյցին մէջ, այդ կառոյցին իսկ պատճառով, բոլոր որոշումները վարէն վեր կը բարձրանան եւ այդ որոշումներուն գործադրութեան պահանջներն են միայն որ վերէն վար կու գան:

Պէտք չէ սոռնալ նաեւ, որ մինչեւ անգամ տրուած որոշումներու գործադրութեան համար ընտրուող մարմինները իրենք ալ կ'ընտրուին որպէս վարէն վեր բարձրացող կամքերու արտայայտութիւն եւ չեն պարտադրուիր վերէն վար:

Եթէ ռեւէ դաշնակցական անհատ կամ խմբական միաւոր ինքզինք համարէ անմասնակից Դաշնակցութեան կամքի առաջացման կամ այդ կամքը գործադրող մարմիններու ընտրութեան, կը նշանակէ թէ այդ միաւորը ինք, ԽՈՒՍՔԸ ԻՆՔ ԿԱՄՈՎԻՆ ԳԱԳՐԱԾ է գործել, մտածել, զգալ, տառապել այնպէս, ինչպէս կենսունակ դաշնակցական խումբերը պարտաւոր են զգալու, տառապելու, մտածելու ու գործելու, ըստ Դաշնակցութեան կանոնագրով իսկ իրենցմէ սպասուած պարտաւորութեանց...

ԽՈՒՍՔԸ ԻԲԻԵՒ ԽԱՐԻՍԽ

... Դաշնակցութեան շարքերէն ներս մտնելու համար որոշ տրամադրութիւններ գոյութիւն ունին կուսակցութեան կանոնագրին մէջ: Ըստ այդ տրամադրութեանց, թեկնածու դաշնակցականի մը դիմումը իր բնական վայրի կոմիտէն է որ կ'ընդունի կամ կը մերժէ, առնելէ

ետք իր շրջանի խումբերուն կարծիքը թեկնածուի մասին: Թիւով փոքր շրջաններու համար ալ ենթակոմիտէն է, որ կ'ընդունի թեկնածուին դիմումը կամ կը մերժէ, միշտ առնել է ետք խումբերուն կարծիքը:

Ըստ կանոնագրին, կոմիտէութիւն մը կազմելու համար անհրաժեշտ նուազագոյն թիւը 50 է, ենթակոմիտէութիւն մը դառնալու համար՝ 30 է: Երեսուն կամ յիսուն շարքային դաշնակցականները բաժնւած են խումբերու, որոնց անդամներուն թիւը սովորաբար տասնի շուրջ կը դառնայ (բազմանդամ տեղերու մէջ՝ քիչ մը ավելի, փոքրաթիւ անդամներով շրջաններու մէջ՝ քիչ մը նուազ, սակայն մօտաւորապէս այդ են թիւերը):

Դաշնակցական դառնալու համար դիմում կատարած անհատի ընդունելութեան հարցին մէջ խումբերը երկու անգամ ... դերակատար են: [Նախ] խումբերու ներկայացուցիչներուն կողմէ ընտրուած մարմինը [՝ կոմիտէն է, որ] պիտի վճռէ թեկնածու դաշնակցականին շարքերէն ներս ընդունումը կամ մերժումը: [Ապա՝ Հ. Յ.Գ.]... շարքերուն մէջ նորեկ մը ընդունելու կամ չընդունելու որոշումը տրուած ատեն ... կոմիտէ մը, թեկնածուի մը դիմումը ընդունել կամ մերժելէ առաջ, պարտաւոր է առնելու իր կազմի բոլոր խումբերուն կարծիքը թեկնածուի մասին:

Դիմումնագրի վերջնական ընդունման կամ մերժումի իրաւասութիւնը տրուած է կոմիտէին. սակայն դժուար է երեսակայել գործադիր մարմին մը, որ, իր խումբերու մեծամասնութեան [կամ նոյնիսկ մէկ խումբի հիմնաւորեալ] կամքին հակառակ, ընթացք կու տայ թեկնածուի մը դիմումին եւ զայն ընդունի Դաշնակցութեան շարքերը...

Ուստի Հ. Յ.Գ-աշնակցութեան շարքերը կառուցողները ... շարքերը բաղկացնող ընկերներն են՝ իրենց խումբերուն մէջ, խմբական կեանքի ճամբով:

[Եթէ] խումբի անդամ շարքային դաշնակցական մը իր այդ պարտաւորութեան լրիւ իրականացման հետամուտ չըլլայ, ... բաւականաչ գործադիր մարմնին վստահելով ենթակայի մասին քննութիւն բանալը, ... այդ ձեռով իսկ պատճառ կը դառնայ, որ շարքերէն ներս մտնեն այնպիսի տարրեր, որոնք հաւանաբար չունին դաշնակցական կազմակերպութեան ամրապնդման համար անհրաժեշտ յատկութիւնները, որով վերջին հաշուով կը նպաստեն կազմակերպական թուլացումի, տկարացումի մը...

Նոյնն է պարագան դաշնակցական ընկերոջ մը խումբէ խումբ փոխադրութեան պարագային:

... Կանոնագիրը կը պահանջէ, որ գործադիր մարմինը, նախ քան ընկերոջ մը փոխադրութիւնը խումբէ մը ալ խումբ, այդ մասին տեղեկացնէ երկու խումբերուն ալ եւ առնէ անոնց կարծիքը իր առաջադ-

րութեան մասին: Երկու խումբերու դաշնակցական ընկերներն ալ առիթ ունին այս ձեռով իրենց տեսակետները արտայայտելու, իրենց մերժումը ձեւաորելու, եթէ պատճառներ ունին մերժելու կոմիտէի առաջարկը...

... Պարզացնելով ... կարելի է ըսել, թէ կազմակերպութեան շարքերուն դիմագիծին պատասխանատուն շարքային ընկերները իրենք են, խումբերը իրենք են: Անոր ուժին ու կենսունակութեան աղբիւրը իրենք են. միաժամանակ դառնալով պատճառ տկարութեանց՝ եթէ համապատասխան բժախնդի մօտեցումը չեն ցուցաբերեր խմբական կեանքին ու պարտաւորութեանց հանդէպ:

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐՈՒ ԱՅԼ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խումբի մը կարելիութիւնները՝ ազդելու կուսակցութեան կեանքին ու գործունէութեան վրայ՝ չեն վերջանար այսքանով... Խումբը նաեւ այն վայրն է, ուր նոյն գաղափարին ծառայող տարբեր անհատներ քով-քովի պիտի գան, համատեղ ապրելու համար կեանք մը, որ ... հասարակական է, հաւաքականութեան կեանքին հետ կապ ունեցող եւ այդ հաւաքականութիւնը կազմող միաւորներէն մէկուն կեանքն է ... Ընկերական մթնոլորտի առաջացման առաջին վայրը, ամենակարեւոր տեղը խումբն է ու խմբական կեանքը...

Տարակարծիք ըլլալ կուսակցութիւնն ու ժողովուրդը հետաքրքրող հարցերու կապակցութեամբ, ոչ միայն ներքինի է, այլեւ ամենաբնական եւ հիմնական անհրաժեշտութիւններէն մէկն է ժողովրդավարական ձեռով ապրող ու գործող կազմակերպութեանց համար ... [Ու] որքան տարակարծիք ըլլան նոյն գաղափարականին ծառայող երկու անհատներ, այնքան աւելի պարտին յարգել զիրար, յարգել իրենցմէ ամէն մէկուն իրաւունքը տարբեր տեսակետի ըլլալու, տարբեր ճամբաներ մատնանշելու ... Կազմակերպուած կեանքի իմաստը ուժերու բազմապատկումն է, որուն շնորհիւ կարելի կ'ըլլայ գործել եւ իրականացնել այնպիսի ձեռնարկներ, որոնք [անկազմակերպ] զանգուածներու հասողութենէն դուրս կը մնան:

Կուսակցութեան մը պատկանող ընկերներու տարակարծիք ըլլալը, ուրեմն, այս կամ այն հարցի կապակցութեամբ, ոչ մէկ պարագայի արգելք կրնայ հանդիսանալ խումբի կեանքի ընթացքին ընկերական մթնոլորտ առաջացնելուն: Եւ ճիշդ այդ ընկերական մթնոլորտի օճախը պարտի ըլլալ իւրաքանչիւր կուսակցական խումբ, երբ կը գիտակցի իր կոչումին...

Պայման է սակայն, որ խումբը ու գայն բաղկացնող անհատ կուսակցական ընկերները տեսաբար ի մտի ունենան, թէ մանր-մունր ամէն բանի մասին եւ ամէն բոլոր, առանց հարցնելու, առանց լուսա-

բանուելու խօսիլն ու քննադատելը չէ իրենց պարտականութիւնը, այլ հիմնական կամ գէթ կարեւոր հարցերու կապակցութեամբ եւ անհրաժեշտ լուսաբանութիւնը ստանալէ ետք կրնան, եթէ անհրաժեշտ համարեն, իրենց մտածումները փոխանցել կազմակերպութեան ընտանիքի ատելի լայն շրջանակով պատասխանատուներուն:

Անհրաժեշտ է նաեւ անշուշտ, որ խումբերը հիմնական սկզբունք դարձնեն միշտ ու տեսաբար մէկ չափի ու մէկ կշիռի [ցուցաբերումը]. այսինքն իրենց մտածողութիւնը, զգացումներն ու տեսակէտները բխին միայն համայն կուսակցութեան ընտանիքի շահէն, հայ ժողովուրդի շահերէն եւ երբեք անհատական տրամադրութիւններէ, համակրական ըլլան անոնք թէ հակակրական...

*Բ. Փափագեան, «Ազդակ Շարաքօրեակ-Դրօշակ»,
Ե. Կարի, քթ. 46-48*

21

ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ՈՒԺ Է, ԵՐԲ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԽՈՐԱՑՆԷ...

... Հ.Յ.Գաշնակցութեան մէջ տարբերութիւններ գոյութիւն ունին ... որովհետեւ իր կենսունակութեան համար Գաշնակցութիւնը ինքն հաւատացողն է տարբերութեան ուժին:

Իբրեւ այդպիսին, սակայն, գաղափարական մեր շարժումին մէջ տարբերութիւնները ունին պայմանաւորում մը ... Պայմանաւորող այդ ազդակը գաղափարական մեր միութիւնը խորացնելու կազմակերպական յանձնառութիւնն է, ծրագրային մեր ուղիին մէջ բոլոր տարբերութիւնները ներդաշնակելու գիծը...

... [Չմոռնանք, որ] խօսքը կը վերաբերի Հ.Յ.Գաշնակցութեան, որ իբրեւ յեղափոխական կուսակցութիւն թէ՛ ծրագրային իր աշխարհահայեացքով, թէ՛ քաղաքական իր ռազմավարութեամբ եւ թէ կազմակերպական իր մարտունակութեամբ ընտրած է հայ ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարի յեղափոխական ուղին ... որ իբրեւ ընկերվարական կուսակցութիւն թէ՛ գաղափարական, թէ՛ ռազմավարական եւ թէ կազմակերպական իր ներշնչումը կը ստանայ ու պայքարին ծաւալումը կը պատկերացնէ հայ աշխատաւոր ընդհանրութեան, գաղափարապաշտ երիտասարդութեան եւ յեղափոխական մտաւորականութեան կենարար դաշնադրութեամբ:

Գաշնակցութիւնը [մէկ խաւի ու մէկ ժամանակի կուսակցութիւն չէ եւ դէմ է դասակարգային խտրականութեան ու այլամերժութեան],

որովհետև «ամէնորեք կ'աշխատի պաշտպանել հայ ժողովուրդին բովանդակ շահերը», որոշապէս «իբրև յեղափոխական եւ ընկերվարական կուսակցութիւն» ... որովհետև կը պայքարի դասակարգային թէ այլ բնոյթի բոլոր շահագործումներուն դէմ, որովհետև ընտրած է հայ ժողովուրդի ազգային եւ ընկերային ամբողջական ազատագրութեան համար պայքարի ուղին...

Այս յստակացումէն պէտք է մեկնիլ՝ քննելու համար Դաշնակցութեան մէջ տարբերութիւններու գոյութիւնը [կատարելու համար՝ զանոնք] ուժի աղբիւրի վերածելու Դաշնակցութեան գործին արժեւորումը:

Վերջին հաշուով, մենք հայ ժողովուրդի ա՛յն կուսակցութիւնն ենք, որ ճամբայ ելաւ իբրև հայ յեղափոխականներու դաշնակցութիւն եւ որ երբ դարձաւ գաղափարական միաձոյլ շարժում՝ ապակեդրոնացումի վրայ խարսխեց կազմակերպական իր կառոյցը, որպէսզի յեղափոխական նոյն հունին մէջ հոսին տարբեր մտայնութեանց բերած նպաստները եւ որպէսզի մտածումի տարբերութիւնները ունենան ուժը՝ գաղափարական նոյն շարժումին ներքին միութիւնը կեանքով հարստացնելու եւ խորացնելու:

*Ն. Պէրպէրեան, «Ազդակ Շարքօրեակ-Դրօշակ»,
ԺԳ փարի, ք. 5*

II. ԳՈՐԾԱՐԿՈՒՄ. ԱՐԺԵՒՈՐՈՒՄՆԵՐ

1Ա. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ՝ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՄԷՋ.
ՀԱՄԱՊԱՏԿԵՐ՝ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ՍՏԵՂԾՄԱՆ
15ԱՄԵԱԿԻ ՄԸ

22

[ՍՏԵՂԾՈՒՄ ԵՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ]

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՒ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐ

... Հայ ազատագրական պայքարին նուիրուելու կոչուած նոր կուսակցութեան հիմնադիրներու ընկերային համոզումներու այլազանութիւնը հետագային եւս ... մնաց յատկանիշներէն մէկը Հ.Յ.Դ-աշնակցութեան, որուն մէջ հաւասար նուիրումով գործեցին ե՛ւ ծայրայեղ ձախակողմեաններ, ե՛ւ ֆետայական տիպի ազգայնականներ, ե՛ւ ընչազորկ գիւղացիներ, ե՛ւ մեծահարուստի զաւակներ: Նոր կուսակցութեան սկզբնական անունը անգամ,- **Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւն**,- կը բացայայտէր անոր ինքնական կերպով միատրուած բաղկացուցիչ տարրերու այլազանութիւնը:

Սպասելի էր հաւանաբար, որ այդ պայմաններուն մէջ յառաջացած միատրուան կառոյցը ըլլար խորապէս ապակեղորոն: Գիտենք, սակայն, որ այդպէս չեղաւ: Եւ «Հայ Յեղափոխականների» նորակազմ «Դաշնակցութիւնը», մինչեւ 1892ի առաջին Ընդհանուր Ժողովը, ունեցաւ իր **Կեդրոնական Վարչութիւնը** կամ «**Կենտրոնը**», յանձինս՝ Քրիստափոր Միքայէլեանի, Սիմոն Չաւարեանի, Բժ. Յովհաննէս Լորիս-Մելիքեանի, Աբրահամ Դաստակեանի եւ Լեւոն Սարգս-

եանի: Եւ այս՝ հակառակ Չաւարեանի նման ապակեդրոնացման ջերմ կողմնակիցներու ներկայութեան հիմնադիր ժողովներուն մէջ: Կարելի չէ՞ արդեօք խորհիլ, որ ընկերային տեսակէտներու խախտաբղէտութիւնն իսկ թելադրանք մը եղաւ, հիմնադիրներէն շատերու համար, գէթ գործունէութեան ներդաշնակման մտահոգութեամբ՝ ղեկավարման կեդրոնաձիգ դրութիւն մը ընդգրկելու:

Այսպէս կամ այնպէս, սակայն, կեանքը պիտի ընթանար իր բնական հունով: Հաղորդակցութեան դժուարութիւնները, - հասկնալի մանաւանդ ընդլատակեայ գործունէութեան մարզին մէջ, - օրէ օր ստեղծրող կազմակերպական ցանցի աշխարհագրական ընդարձակ տարածքը, ինչպէս նաեւ ղեկավարներու անհատական տրամադրութիւններն ու խառնուածքը ըրին այնպէս՝ որ նորածին «Դաշնակցութիւնը» երբեք չեղաւ հնչակեան տիպի կեդրոնացեալ ղեկավարութեամբ կազմակերպութիւն մը, - ինչպէս հետագային, հասունցած եւ ապակեդրոնացեալ Դաշնակցութիւնը երբեք պիտի չյանգէր անիշխանական քառսի մը:

... Իր կազմութենէն նուազ քան տարի մը ետք՝ Կեդրոնական Վարչութեան փաստացի ցրումը, Քրիստափորի ձեռքակալութեամբ եւ Չաւարեանի Տրապիզոն մեկնումով ու աքսորով, - ինչպէս նաեւ տիրական այլ դէմքերու երեսմը Թիֆլիսի յեղափոխական հրապարակին վրայ (Ռոստոմ, Արշակ Թադէոսեան), - այս բոլորը նաեւ կուգան վկայել, որ Դաշնակցութեան «Կենտրոն»ը «գրասենեակային» ղեկավարման ամբօրէն հաստատուած եւ անփոփոխելի մարմին մը չէր, այլ յեղափոխական-կազմակերպչական կենդանի գործը անձամբ վարողներու ոչ-փակ հաւաքականութիւն մը:

... Տրուած ըլլալով... նորակազմ կուսակցութեան կարեւոր դէմքերուն եւ գործիչներուն տեղաբաշխումը 1891-92 թուականներուն, կարելի է Մ. Վարանդեանի հետ եզրակացնել, թէ «*Կենտրոնը փութացնամբել իր ղեկավար ուժերը դէպի գաւառ, սրեղծելու ամէնօրեք տեղական կոմիտէներ*»: ... Իսկ Թիֆլիսի մէջ նորակազմ կուսակցութեան գործերը կը վարէին, «Կենտրոն»ի մնացեալ անդամներու կողքին, Ռոստոմը, Արշակ Թադէոսեանը, Մարտին Շաքիրեանը եւ ուրիշներ:

Ներկայացուցիչ-գործիչներու միջոցաւ շրջանները կազմակերպելու այս եղանակը պիտի շարունակուէր նաեւ 1892ի առաջին Ընդհանուր ժողովէն ետք, քանի մը տարիներու ընթացքին յանգելով կազմակերպական այն ծաւալուն եւ ամրակոռ ցանցին՝ որ գրաւոր կանոնագրութեամբ պիտի նուիրականանար եւ իր վերջնական ձեւը ստանար 1896-97ի Կովկասեան Ռայոնական ժողովներուն եւ 1898ի Երկրորդ Ընդհանուր ժողովին մէջ:

1892-1897 ՏԱՐԻՆԵՐԸ

... Ծրագիր(-Կանոնագիր)ը կը խօսի երկու **Բիւրօներու** մասին, ակնարկելով Թիֆլիսի եւ Թարիզի կեդրոնական երկու մարմիններուն, անոնց մօտաւորապէս համահասարակ դեր մը սահմանելով նաեւ, արտասահմանի մէջ, «Դ-րօշակ»ի խմբագրութեան: Ասոնք կապի մարմիններ են առաւելաբար, որոնց մօտ պէտք է կեդրոնացուի կոմիտէներու գործունէութեանց տեղեկագրերն ու անոնց պահանջները, եւ որոնք, իրենց կարգին, անհրաժեշտ տեղեկութիւնները պէտք է հաղորդեն թէ՛ իրարու (մանաւանդ «Դ-րօշակ»ին) եւ թէ բոլոր կոմիտէներուն: Բիւրօներուն կը տրուի նաեւ հիմնական այլ դեր մը՝ նիւթական հաշուառուի եւ կուսակցական զանձի պահպանման պարտականութիւնը:

Անկախ սակայն սկզբունքային եւ տեսական բոլոր հարցերէն, յեղափոխական գործնական կեանքը ունէր իր առօրեայ պահանջներն ու անհրաժեշտութիւնը: Եւ երբ մօտէն կը քննենք 1892-1897 տարիներու կազմակերպչական-յեղափոխական գործունէութիւնը - հինգ-վեց տարիներ, որոնց ընթացքին գործնական ճամբով հաստատուած ու բիրտղացած է Դաշնակցութեան կազմակերպական կառոյցը,- կը նկատենք, որ Բիւրօները այդ գործունէութեան մէջ ունեցած են բան մը աւելի՛, քան լոկ կապի եւ նիւթական յանձանձումի ու բաշխումի դեր, եւ որ Դաշնակցութեան ապակեդրոնացումը երբեք չյանգեցաւ իրարմէ բոլորովին անկախ գործող շրջանային ու տեղական մարմիններու անիշխանական ամբողջութեան մէջ:

Վահան Նաւասարդեան իր «**Հ.Յ.Դաշնակցութեան Գաղափարաբանութիւնը**» աշխատութեան մէջ կը բնորոշէ Դաշնակցութեան ապակեդրոնացման բնոյթը հետեւեալ տարագումով.- «*Այս հոյակապ Կառոյցը խալտրէն կենսորոնացած է իբրեւ իրաւունք եւ լայնօրէն ապակենսորոնացած՝ իբրեւ պարտականութիւն*»: Հիմնուելով Ծրագրի այն հաստատումին վրայ, թէ «*յեղափոխական գործին մէջ իրաւունքի եւ պահանջի խնդիր չի կրնար ըլլալ, այլ միմիայն բարոյական պարտաւորութեան եւ բարարարութեան խնդիր*», - Վ. Նաւասարդեան կը յանգի այն եզրակացութեան, թէ Դաշնակցութեան ապակեդրոնացման մէջ «*միայն զոհողութեան խնդիր կայ, իսկ իրաւունքի - երբեք*»:

Մեր յաջորդական Ընդհանուր եւ Ռայոնական Ժողովներու արձանագրութեանց, շրջանային մարմիններու կողմէ այդ ժողովներուն ներկայացուցած տեղեկագրերու, ինչպէս նաեւ իրերայաջորդ Կազմակերպական Կանոններու քննութիւնը **հիմք չի տար մեզի հաստատելու գոյութիւնը իրաւունքի ամբողջական կեդրոնացման մը՝** Բիւրօներու թէ, աւելի ուշ, Պատասխանատու Մարմիններու ձեռքը (շատ

քիչ բացառությամբ եւ միայն մասնակի ձեռնարկներու պարագային՝ հաւաքական որոշումէ մը ետք): Ուստի, լիովին ընդունելով հանդերձ Վ. Նաւասարդեանի կողմէ շեշտուած **պարտականութեան, նուիրումի եւ ինքնակամ զոհողութեան** առաքինութիւնները, որոնք դաշնակցականի բարոյական ամենացալտուն գիծերէն են եւ առանց որոնց՝ անբացատրելի պիտի ըլլային մեր կուսակցութեան պատմութեան հերոսական շատ մը էջերը, կառոյցի մարզին մէջ մենք աւելի հարազատ եւ աւելի իրական կերպով արտայայտիչ կը գրտնենք՝ **ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՊԱԿԵՂՐՈՆԱՅՈՒՄ, ԲԱՅՅ ԲԱՐՈՅԱԿԱՆ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԿԵՂՐՈՆԱՅՈՒՄ** տարազը:

Եւ ասիկա այն իմաստով՝ որ, իրօք, Բիւրօները շուտով դարձան յեղափոխութեան ղեկավար մարմիններ, որոնք գործիչ-ներկայացուցիչներ կը դրկէին Երկրի թէ արտասահմանի զանազան շրջանները՝ կազմակերպչական առաքելութեամբ, տեսական կապի մէջ էին այդ գործիչներուն եւ անոնց յառաջացուցած կազմակերպական մարմիններուն հետ, կը հետեւէին եւ ի պահանջել հարկին ուղղութիւն կու տային անոնց գործունէութեան, կը ծրագրէին յեղափոխական-մարտական ձեռնարկներ... Ապակեղրոնացած Դաշնակցութեան մէջ, Բիւրօները շատ աւելի մեծ բարոյական վարկ ու հեղինակութիւն ունեցան, քան սկզբնական տարիներու «Կենտրոն»ը:

Կասկած չկայ որ, ինչպէս Դաշնակցութեան բարոյական դիմագծի, նոյնպէս եւ անոր կազմակերպական ամրակոշ կառոյցի ըստեղծման մէջ, մեծ եղաւ նաեւ անհատներու դերը: Քրիստափորի, Ռոստոմի, Յովհաննէս Եուսուֆեանի եւ ուրիշներու կազմակերպչական տաղանդը ձեւ ու մարմին տուաւ Կովկասէն մինչեւ Պոլիս ու արտասահման տարածուող դաշնակցական միատրներուն: ... Տեսակ մը free-lance գործիչներ եղան անոնք, որ յեղափոխական տեսակէտէ տակաւին անմշակ հայութեան կազմակերպական ձեւ ու ոգի ներշնչեցին, բազմութիւնները իրենց անձնական շքեղ օրինակով վարակելով...

1895-98 տարիներուն, Թիֆլիսի Բիւրոյի հրատարակած [1895ի Ռայոնական ժողովի արձանագրութիւնը յստակօրէն կը նշէ, որ «Բիւրոյին է պատկանում ժողով կազմելու ինիցիատիւրը», Դաշնակցութեան արեւելեան շրջանի մարմինները գումարեցին ներկայացուցչական բնոյթի քանի մը ժողովներ, որոնք սկզբնապէս կոչուեցան **տարեկան «ընդհանուր» ժողովներ**, բայց որոնք, աւելի ուշ, տրուած ըլլալով որ Երկրի կարգ մը մարմինները եւ արտասահմանի կազմակերպութիւնները մաս չէին կազմած անոնց, ստացան «**Կովկասեան Ռայոնական (Շրջանային կամ Շրջանական) ժողովներ**» անունը:

«Ընդհանուր» կամ ոչ, Կովկասեան Ռայոնական ժողովները, եւ այդ տարիներուն, եւ աւելի ուշ՝ 1904-1906ին, փաստօրէն եղած են

կուսակցական բարձրագույն աստիճանի համախմբումներ, որոնք իրենց որոշումներով փոփոխութեան ենթարկած են կառույցի եւ իրատունքներու վերաբերեալ կարգ մը հիմնական կէտեր եւ մարմիններուն պարտադրած են նոր գործունէութիւն: Այսպէս, 1895ի Ռայոնական ժողովը վերջ կուտար Թարիզի Բիւրոյին, որոշելով որ «Պարսկաստանի Բիւրոն այսուհետեւ կոչուելու է եւ ստանալու ինքնուրոյն խմբի անուն եւ նշանակութիւն», մինչ 1896-97ի Ռայոնականը կ'որոշէր՝ «կազմակերպել մի ուժեղ խմբագրութիւն «Դրօշակ»ի համար... որ միեւնոյն ժամանակ լինելու է ամբողջ Դաշնակցութեան արդասահմանեան ներկայացուցիչ-Բիւրօն», այսպիսով փաստօրէն ստեղծելով Արեւմտեան Բիւրօն, որու գոյութեան իրաւական հաստատումը պիտի գար տալ, մէկուկէս տարի ետք, Հ.Յ.Դ. Երկրորդ Ընդհանուր ժողովը: Սիեւնոյն այդ Ռայոնական ժողովին (1896-97) կը պատկազնի «Վրէժպահանում (Արդարական) պարբերական ուժ (զէնք եւ մարդիկ) պահել եւ յարմար դէպքում մեծ արշաւանք գործել սահմանից» վճիռը, որ տարի մը չանցած պիտի յանգէր Խանասորին՝ Ատրպատականի Կ. Կոմիտէի եւ Արեւելեան Բիւրոյի ջանքերով:

Շահեկան է նաեւ 1896-97ի Ռայոնական ժողովի այն որոշումը, որ լիազօրութիւն կուտայ երկու Բիւրօներուն (Արեւելեան եւ Արեւմտեան) եւ Կոռաձաղիկի (Պոլիս) Կ. Կոմիտէին՝ «փոխադարձ խորհրդակցութեամբ բանակցելու» պետութեան ներկայացուցիչներուն հետ, եւ նոյնիսկ «որոշումներ ու վճիռներ կայացնելու ամբողջ Դաշնակցութեան կողմից»: Սահկա կը նախապատրաստէ Բ. Ընդհանուր ժողովի կողմէ հաստատումը **Դաշնակցութեան Կամքը Ներկայացրնող Մարմնին** (մասնակցութեամբը Բիւրօներուն եւ Պատասխանատու Մարմիններու մէկական ներկայացուցիչներուն), որ, ատելի ուշ, Գ. Ընդհ. ժողովին կողմէ, պիտի վերածուէր **Դաշնակցութեան Խորհուրդին**:

Կազմակերպական նոյնօրինակ մտահոգութիւններ եւ որոշումներ կը յայտնուին նաեւ 1897-98ի Ռայոնական ժողովին մէջ, որ տեղի ունեցած է ի նախապատրաստութիւն Բ. Ընդհ. ժողովին եւ ուր կը գտնենք գործնական նախագիծը շախատանքի եւ իրատեսութեանց այն յստակ սահմանումին, որ Գերագոյն ժողովը շուտով պիտի հաստատէր՝ երկու Բիւրօներու կապակցութեամբ: Աւելին՝ շահեկան է կարդալ այդ ժողովի հաստատումները՝ Բիւրօներու բնոյթին եւ իրատեսութեանց մասին [*«Բիւրօն, հիմնում լինելով Ծրագրի համաձայն իբրեւ լոկ րեդեկտարու հիմնարկութիւն, իրերի բնական պահանջին համապատասխանելով դարձել է կիսամյակական մարմին, որ չէ հակասում ապակէնտրոնացման սկզբունքին...»*]: ... Բարոյական-գաղափարական գերագոյն հեղինակութիւններ էին Բիւրօները,

որոնց ցուցմունքներուն եւ կարգադրութեանց ամբողջական նուիրումով ու հպարտութեամբ կ'ընդառաջէին ապակենտրոնացման հիմնական սկզբունքին շնորհիւ իրենց տեղական շրջաններուն մէջ ազատօրէն գործող դաշնակցական մարմինները: Լոկ կապի դերը վերածուած էր գործունէութիւն համակարգողի եւ վերահսկիչի դերին, Բիւրօները պարտականութիւն ունենալով «*վարելու ընդհանուր գործը Ծրագրի եւ Ընդհ. Ժողովի վճիռների գծած սահմաններում*»:

1897ին, Պարսկաստանի եւ Երկրի մէջ կազմակերպուած միատրոներ կը ներկայացնէին արդէն Վրէժի (Ատրպատական), Շամի (Վասպուրական), Բարձրաւանդակի եւ Պուրակի (Մասուն եւ Ախլաթ), Կարմիր-Բերդի (Բարձրաբերդ? = Կարին), Ծովափի (Տրապիզոն) եւ Սեպուհի (արդեօ՞ք Երզնկա-Տերսիմ) Կեդրոնական Կոմիտէները: Ասոնք, ինչպէս նաեւ Կովկասեան 9 մարմինները (Կ. Կոմիտէներ կամ կոմիտէներ՝ ընդհանրապէս I, II, III ... թիւերով անուանուած) կապուած էին Արեւելեան Բիւրոյին (Թիֆլիս):

Վիշապի կամ Կռուածաղիկի Կ. Կոմիտէութիւնը (Պոլսոյ շրջան), Ոսկեհանքը (Իզմիր), Լեռնավայրի (Կիլիկիա), Պալքաններու, Եգիպտոսի մարմինները (փոփոխական անուններով), Ամերիկայի Կ. Կոմիտէութիւնը եւ Եւրոպայի Հ.Յ.Դ. Ուսանող. Միութիւնը կապուած էին «Դրօշակ»ի խմբագրութեան, այլ խօսքով՝ Արեւմտեան Բիւրոյին (Շրնեւ):

Արդէն իսկ փաստօրէն կազմակերպական կենդանի դրութեան մը վերածուած այս ամբողջութիւնն էր, որ 1898ի Ապրիլ-Մայիս-Յունիս ամիսներուն Թիֆլիսի մէջ գումարեց Հ.Յ.Դ. Երկրորդ Ընդհ. Ժողովը, որ եկաւ, իր յանձնումներով եւ յստակացումներով, նուիրականացրնելու ստեղծուած կազմակերպականօրէն ապակեդրոնացեալ, բայց բարոյապէս եւ նիւթապէս Բիւրօներու հեղինակութեան եւ գերազոյն հակակշռին տակ գտնուող այս դրութիւնը:

Բ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ ԵՒ 1898-1903 ՎԵՑԱՍԵԱԿ

Հ.Յ.Դ. Երկրորդ Ընդհ. Ժողովը գումարուած է Թիֆլիս, 1898 Ապրիլ, Մայիս եւ Յունիս ամիսներուն ... Ժողովին կը մասնակցին, Թուրքիայէն՝ Վիշապի (Պոլիս), Ոսկեհանքի (Իզմիր), Ծովափի (Տրապիզոն), Արծիւի (արդեօ՞ք Երզնկա) եւ Կողքի (Կիպրոս) պատգամատրոները, Կովկասէն եւ Ռուսաստանէն՝ Սեժ-Քաղաքի (Թիֆլիս), Ոսկեջուրի (Պաքո), Ամուրի (°), Քարի (Ալեքսանդրապոլ), Ջրաբերդի (Կարս), Նաւահանգիստի (Պաթում), Աւագանի (Օտեսա-Խրիմ),

Նալպանտի (Նոր Նախիջեան) եւ Եկեղեցիի (Մոսկուա) պատգամաւորները, Երկրէն դուրս՝ Վրէժստանի (պարսկական Ատրպատական), Պաքսանեան թերակղզիի եւ Եգիպտոսի պատգամաւորները. նաեւ, անշուշտ, «Դրօշակ»ի խմբագրութեան եւ Բիւրոյի (Արեւելեան Բիւրօ, Թիֆլիս) ներկայացուցիչները: Ժողովին մասնակցելու հրաւիրուած են նաեւ «*Երկրի մէջ պատրաստանալու գործեր վարող ընկերներ, թուով 13 հոգի*»: Մասնակցութեան իրաւունք ունին, բայց կը բացակային՝ Շամի (Վան), Բարձրաւանդակի (Մասուն), Կարմիր-Բերդի (Կարին), Արարատի եւ Ամերիկայի պատգամաւորները:

Շրջաններու այս թումը՝ գաղափար մը տալու համար Դաշնակցութեան կազմակերպական տարածում ցանցին մասին, 1897-98 տարիներուն: Տրուած ըլլալով որ իւրաքանչիւր շրջան կը ներկայանայ մէկ պատգամաւորով միայն, հնարաւոր չէ անշուշտ ցուցակէն հետեւցնել կազմակերպական առանձին միաւորներու բացարձակ թէ յարաբերական տարողութիւնը: Ժողովին սկիզբը՝ այդ տարողութիւնը յստակացնելու կոչուած անունները եւս կը պակսին կամ շփոթ են տակաւին. այսպէս, Կովկաս-Ռուսաստանի ինը շրջանները կը ներկայացուին իբրեւ Կեդրոնական Կոմիտէութիւններ, մինչ նոյն որակումը չի տրուիր միւս շրջաններուն: Երկրորդ Ընդհանուր Ժողովը ինքն է, որ վերջնականապէս պիտի յստակացնէ կազմակերպական զանազան միաւորներու տարողութիւնն ու իրաւունքները. պիտի բիրտդասցնէ Դաշնակցութեան կազմակերպական կառոյցը՝ մարմիններու փոխադարձ կախումը, իրաւունքներն ու պարտաւորութիւնները սահմանելով, առաջին անգամ ըլլալով, կանոնագրային յստակ տրամադրութիւններով:

Այդ տրամադրութիւններէն է համապատասխան որոշումներէն՝ բաւական յստակ կերպով կ'արտացոլայ ընդհանուր ձգտում մը դէպի ուժերու հաւասարակշռութիւն, դէպի դեկավար մարմիններու իրաւասութեանց ու փոխադարձ պարտաւորութիւններու կանոնաւոր ու հաւասարակշռեալ բաշխում: Քանի մը բառի մէջ ամփոփելու համար Դաշնակցութեան կազմակերպական դրութեան բնութագրումը, այնպէս՝ ինչպէս այդ երեւան կու գայ 1898ի Ընդհանուր Ժողովի որոշումներու արձանագրութիւններէն եւ յարակից փաստաթուղթերէն, պիտի ըսենք՝ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՉ ԿԱԽՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՊԱԿԵՂՐՈՆԱՅՄԱՆ ՄԷՉ:

Ըիշդ է որ ապակեդրոնացման շուրջ տեսական կարծիքներու արտայայտութիւնները տեղ չեն գտած Ժողովի «*ամփոփ եւ կրճար արեւնագրութեան*» մէջ, սակայն Սիմոն Զաւարեանի կողմէ Ընդհ. Ժողովին ուղղուած կարգ մը նամակներու բովանդակութիւնը ... եզրակացնել կու տայ ... , թէ «*կենտրոնացման եւ ապակենտրոնացման խնդիրը բաւական զբաղեցրել է Ժողովը*» ...

... «**Կազմակերպութիւն**» գլուխին տակ կը ճշդուին յեղափոխական մարմիններու բնոյթը, անունը, իրաւաստութիւնները, փոխադարձ կախումը եւ յարաբերութեան ձեւերը: Այլ խօսքով, առաջին անգամ ըլլալով, ութամեայ կուսակցութիւնը թուրքի վրայ կը գծէ ամբողջութիւնը իր կազմակերպական կառոյցին՝ կանոնագրային յստակ բընոյթ տալով այդ ամբողջութեան:

Նկատի կ'առնուին պայմաններու տարբերութիւնները Թուրքիոյ մէջ (յեղափոխական ընդյատակեայ գործունէութիւն) եւ Թուրքիայէն դուրս (համեմատաբար ազատ պայմաններ եւ ուրեմն՝ կազմակերպական աւելի ժողովրդավար դրութեան մը հնարաւորութիւն): Այսպէս՝ մինչ Թուրքիոյ մէջ կոմիտէներ կը կազմուին «*դաշնակցական պարուիրակի մը շեռքով եւ փոփոխութեամբ ու շրջանի Կեդր. Կոմիտէի գիտութեամբ*» եւ մինչ անոր «*նոր անդամները կ'ընկրուին կոմիտէի անդամներուն փոխադարձ համաշայկութեամբ*» միայն, Թուրքիայէն դուրս, Կովկաս թէ արտասահման, նման անհրաժեշտութիւններ չկան, ու «*կոմիտէն կը կազմուի Կեդր. Կոմիտէի պարասիսանարութեան փակ, շրջանի Պարզամատրակական Ժողովի գծած ներքին Կանոնագրին համաշայկ*»: Մինչ յեղափոխական կենդանի գործի վայրերուն մէջ (Թուրքիա) «*շրջանի մը կոմիտէներու հասանութեամբ եւ Դաշնակցութեան Կամբը Ներկայացնող Մարմնի համաշայկութեամբ՝ իրենցմէ ամենէն աւելի յարմար դիրք ունեցող եւ եռանդուն գործունէութիւն ցոյց փոռող կոմիտէն կը յայտարարուի Կեդրոնական Կոմիտէ այդ շրջանին համար*», Թուրքիայէն դուրս՝ «*Կեդրոնական Կոմիտէն կ'ընկրուի իր շրջանի Պարզամատրակական Ժողովին կողմէ*»: Տարբերութիւնները որոշ են եւ հասկնալի: Տարբեր կերպով նախատեսուած ու սահմանագծուած են նաեւ գործերը վարելու եղանակները, մարմիններու փոխադարձ կախումը, ինչպէս նաեւ անոնց նիւթական պարտաւորութիւնները՝ յեղափոխական եւ օժանդակ շրջաններուն համար:

... Այլ մակարդակի մը վրայ՝ Երկրորդ Ընդհանուր Ժողովը իր յատուկ որոշումով կը նուիրագործէ 1896-1897ի Կովկասեան Ռայոնական Ժողովէն ասդին արդէն գոյութիւն ունեցող երկու Բիւրոներու դրութիւնը՝ Արեւելեան (Թիֆլիս) եւ Արեւմտեան (Շընք, «Դրօշակ»ի խմբագրութիւն): Բիւրոները բնականաբար կ'ընտրուին Ընդհանուր Ժողովին իսկ կողմէ եւ կը պաշտօնավարեն մինչեւ յաջորդ Ընդհ. Ժողովը, որուն հաշուետու են: Անոնց դերն ու իրաւաստեան սահմանները ճշդուած են, - անոնք պարբերաբար գիտակ կը պահեն իրենց շրջանի Կեդր. Կոմիտէները գործի ընթացքի մասին, կը հարդորդեն անոնց «*իրենց բիւրոյական հաշիւը*», կարգադրիչ դեր ունին դրամի բաշխումին մէջ եւ Կեդր. Կոմիտէներու հաշուետուութեան քննութիւնը կը կատարեն. Բիւրոն, եթէ հարկ տեսնէ, տեղացիներու

համաձայնութեամբ՝ հաւասար ձայնի իրաւունքով ընկերներ կրնայ որկել այս կամ այն Կեդր. Կոմիտէն գորացնելու համար. անոր վերապահուած է նաեւ Կեդր. Կոմիտէներուն համար կնիք պատրաստելու իրաւունքը:

Յստակ կերպով ճշդորոշուած են նաեւ երկու Բիւրոներու գործունէութեան աշխարհագրական սահմանները.- Երկիրը՝ Կիրասոն-Խարբերդ-Տիգրանակերտ գծէն դէպի արեւելք, ինչպէս նաեւ Պարսկաստանն ու Կովկաս-Ռուսաստանի (Սարուստան) բովանդակ տարածքը՝ կը կազմեն Արեւելեան Բիւրոյի շրջանը, մինչ միեւնոյն գծէն դէպի արեւմուտք ինկող բոլոր շրջանները, Պոլիսը, Պալքանները եւ ամբողջ արտասահմանը՝ Արեւմտեան Բիւրոյի շրջանը: Արեւմտեան Բիւրոյի հիմնական պարտականութիւններէն են նաեւ՝ Դաշնակցութեան օրգան «Դրօշակ»ի հրատարակութիւնն ու արտասահմանեան քարոզչութիւնը. անոր հինգ անդամներէն երեքը կը մնան ժընել, իսկ մնացեալ երկուքը շրջուն գործիչներ են, որոնք, ի պահանջել հարկին, հաւասար ձայնի իրաւունքով կրնան մտնել Պատասխանատու Կեդր. Կոմիտէներու մէջ: Երբ հարկ զգացուի, կազմակերպութեան հաշույն երկու անդամ կրնայ ունենալ նաեւ Արեւելեան Բիւրոն:

... Ի պատրաստութիւն եւ ի գործադրութիւն ապստամբական-ռազմական հետագայ մեծ ձեռնարկներու, Երկրի որոշ շրջաններու մէջ յեղափոխական ուժերու եւ ռազմաբերքի կեդրոնացումը եղաւ Ընդհանուր Ժողովի հիմնական որոշումներէն մէկը: Առ այդ, Ընդհանուր Ժողովը հաստատեց **Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէներու** դրութիւնը, այդպէս կոչելով իր իսկ ընտրած այն մարմինները, որոնց կը յանձնուէր *«վճռուած խոշոր ձեռնարկի մը իրագործման պարասխանարութիւնը՝ Երկրի որոշ շրջանի մէջ»*:

Իբրեւ կեդրոնացման հաւանական վայրեր՝ նկատի կ'առնուին Բարձրաւանդակը (Սասուն), Լեռնավայրը (Կիլիկիա), Կոռածաղիկը կամ Վիշապը (Պոլիս) եւ Վասպուրականը: Ժողովը կ'ընտրէ առաջին երեքի կազմերը, գործնական դժուարութեանց բերումով Վասպուրականի Պատասխանատու Մարմնի յառաջացումը վստահելով Արեւելեան Բիւրոյին՝ գործակցութեամբը Շամի (Վան) եւ Վրէժի (Ատրպատական) Կեդր. Կոմիտէներուն:

Պատասխանատու Մարմինները կ'օժտուին այնպիսի լիազօրութիւններով, որոնց մասին ակնարկ իսկ չկայ Բիւրոներու վերաբերեալ բաժնին մէջ: Ծիշդ է որ անոնցմէ իւրաքանչիւրը, *«իր սրանչևած խոշոր ձեռնարկին գործադրութեան վայրկեանը վճռելէ առաջ, պարտաւոր է այդ մասին խորհրդակցիլ զո՛նէ իր շրջանի Բիւրոյին եւ երկու Պարասխանատու Կեդր. Կոմիտէներու հետ»*, բայց անոնք ՎԱՐԻՉ ԴԵՐ ՈՒՆԻՆ ԻՐԵՆՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԸ ԿԱԶՄՈՂ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ, եւ անոնց հետ խորհրդակցիլը *«պարտա-*

տորիչ է հարեւան Կեդր. Կոմիտեներու համար ամէն անգամ, երբ վերջիններուն կողմէ քիչ-շար կարեւոր յեղափոխական գործ մը կատարուիլ կ'որոշուի»: Այլ խօսքով՝ Երկրի մարմիններուն համար եւ զուտ յեղափոխական-մարտական գործունէութեան ծիրին մէջ, կազմակերպական ապակեղորոնացումը որոշ չափով կը սամանափակուի, ի շահ Ընդհանուր Ժողովին իսկ կողմէ որոշուած ռազմական յատուկ ձեռնարկներու պատրաստութեան ու ղեկավարման առաքելութիւնը ունեցող՝ Դաշնակցութեան ամենագոր Պատասխանատու Մարմիններուն:

Եւ երբ նկատի կ'ունենանք անունները այն նուիրեալներուն, որոնք երկրորդ Ընդհանուր Ժողովին յաջորդող տասնամեակին մաս կազմեցին Պատասխանատու Կեդր. Կոմիտեներուն -Սերոբ, Գուրգէն, Հրայր, Վահան, Աշոտ-Երկաթ, Գեղամ Տէր Կարապետեան, Գեորգ Չաւուշ, Ռուբէն՝ Բարձրաւանդակի մէջ, Հրաչ, Մար, Պետրոս Սերեմճեան, Սիմոն Չաւարեան, Վարդան՝ Լեռնավայրի Մարմին մէջ, Գարեգին Խաժակ, Քրիստափոր, Քրիս Ֆեներճեան, Սաֆօ, Անդրանիկ, Ակնունի եւ ուրիշներ՝ Պոլսոյ եւ Յուգական Մարմիններուն մէջ եւայլն,- աւելի յստակ կը դառնայ թէ ինչ տարողութիւն ունէին այդ մարմինները եւ ինչ եղաւ անոնց դերը մեր ազատագրական շարժման պատմութեան մէջ:

Բիւրոներուն համահաւասար՝ Պատասխանատու Կեդր. Կոմիտեները «կը համարուին անդամ *Դաշնակցութեան Կամբը Ներկայացնող Մարմինն*»:

Թէեւ որոշ չափով նախապատրաստուած 1896-97ի Կովկասեան Ռայոնական Ժողովի արտայայտած տրամադրութիւններով, յամենայն դէպս, իբրեւ կանոնագրական յստակ որոշում, Երկրորդ Ընդհանուր Ժողովի բերած նորութիւններէն մէկն է նաեւ հաստատումը կուսակցական այս նոր ու գերագոյն միատրին (Դաշնակցութեան Կամբը Ներկայացնող Մարմինն), որ կոչուած է Դաշնակցութիւնը ներկայացնելու Ընդհանուր Ժողովներուն միջեւ ինկող շրջանին եւ զոր կը կազմեն երկու Բիւրոներն ու չորս Պատասխանատու Կեդր. Կոմիտեները՝ հաւաքաբար: Ան լիազօրուած է վարելու Կուսակցութեան արտաքին բոլոր յարաբերութիւնները, Ընդհ. Ժողովի վճռած ձեռնարկներու յաջողութիւնը ապահովելու համար ի պահանջել հարկին կատարելու ուժերու տեղաշարժ եւ նոր բաշխում, նոր տարրերով զօրացնել Բիւրոներն ու Պատասխանատու Մարմինները, ինչպէս նաեւ, **չնախատեսուած բացառիկ պարագաներու տակ, կոխել կամ յետաձգել Ընդհ. Ժողովի վճիռներ կամ նոր ձեռնարկ սկսիլ իր պատասխանատութեան տակ:** Փաստօրէն, եթէ ծրագրային հարցերը եւ կազմակերպական կանոններու հիմնական տրամադրութիւնները մէկդի ձգենք, մնացեալ բոլոր հարցերուն եւ ի մասնաւորի յարա-

բերական ու տակտիկային (գորելակերպի) որոշումներու մարզին մէջ, Կամքը Ներկայացնող Մարմինը օժտուած է Ընդհանուր Ժողովի իրաւասութիւններով:

Ներկայիս հրատարակուած ու տրամադրելի փաստաթուղթերու հիման վրայ՝ մենք ծանօթ ենք Գաշնակցութեան Կամքը ներկայացնող Մարմնի մէկ ժողովի միայն, որ տեղի ունեցած է Երկրորդ Ընդհանուր Ժողովէն ետք, 1901ի գարնան, Ֆիլիպէ, մասնակցութեամբ երկու Բիրոններու եւ Պոլսոյ ու Լեռնավայրի Պատասխանատու Կեդր. Կոմիտէներու ներկայացուցիչներուն: Այնտեղ կատարուած են Պատասխանատու Մարմիններու անդամներու նոր նշանակումներ: Օրակարգի հիմնական նիւթերը կազմած են դրամական տագնապը եւ, անոր իբր հետեւանք, զանազան շրջաններու կողմէ դրուած՝ բռնի հանգանակութեան պահանջը. իբրեւ որոշում՝ սկիզբ դրուած է «Փոքորիկ»ի գործին: Այլ հիմնական հարց եւ որոշում՝ առկախել Պոլսոյ ցուցական ընթացիկ ձեռնարկները եւ ահաբեկել Սուլթան Համիտը: Այս ծրագիրը կապուած ըլլալով նիւթական մեծ կարիքներու հետ, որոշուած է անոր ձեռնարկել դրամական գործի յաջող ելքէն ետք: Գիտենք, որ ահաբեկման վերջնական վճիռը պիտի տար Երրորդ Ընդհ.Ժողովը (Սոֆիա, 1904), առ այդ յառաջացնելով յատուկ Պատասխանատու Մարմին մը՝ **Յուսկան Մարմինը**:

Երկրորդ Ընդհ. Ժողովը կը ճշդէ նաեւ գոյութիւն ունեցող կամ իր կողմէ կազմուող մարմիններու կազմակերպական իրաւավիճակը եւ իրաւասութիւնները՝ ինչ կը վերաբերի, ի մասնաւորի, անոնց մասնակցութեան յաջորդ (Երրորդ) Ընդհանուր Ժողովին: Հետաքրքրական է դիտել, որ մինչ մէկական ձայն միայն կը տրուի երկու Բիրոններուն եւ չորս Պատասխանատու Կեդր. Կոմիտէներուն եւ չորս ձայն՝ Սարուստանի (Կովկաս-Ռուսաստան) բոլոր մարմիններուն հաւաքաբար, մէկական ձայնի իրաւունք կ'ունենան նաեւ առանձին Կեդր. Կոմիտէութիւններ, ինչպէս՝ Ծովափը, Վրէժստանը, Պալքանները եւ Ամերիկան եւ նոյնիսկ առանձին կոմիտէներ, ինչպէս՝ Սեպուհը(°), Կարմիր-Բերդը (Կարին), Ոսկեհանքը եւ Եգիպտոսը:

Կազմակերպական այս մեքենան էր որ պիտի գործէր 1898-1903 վեցամեակի ընթացքին, մինչեւ Երրորդ Ընդհ. Ժողով: Պարզ է անշուշտ, որ յեղափոխական-կազմակերպական կեանքը պիտի ունենար իր վերիվայրումներն ու հոլովոյթը, եւ այդ կառոյցը ամբողջ վեց տարի պիտի չմնար անփոփոխ՝ յուսալքման եւ տեղատուութեան դէմ պայքարի, ետրպական փրփականտի աշխուժ գործունէութեան, ապստամբական ձեռնարկներու նախապատրաստութեան, բռնի հանգանակութեան եւ, աւելի ուշ, ցարական բռնակալութեան դէմ ծառայած այդ ժամանակաշրջանին: Արեւելեան Բիրոյի 1899 Յունուարի նստաշրջանի ատենագրութիւնները, ինչպէս նաեւ Կամքի 1901ի Ժողովին մասին մեր ունեցած տեղեկութիւնները ցոյց կու տան, որ յեղափոխական կեանքի թոհուրոհին մէջ անխուսափելի կերպով յարափոփոխ էին եւ շրջանային միատրոններու (կոմիտէներ, Կ. Կոմիտէներ) կարեւորութիւնն ու կազմակերպական իրաւավիճակը, եւ դե-

կավար մարմիններու պարբերաբար հնճուող անձնակազմը. մինչ Բիրոնները տեսաբար կը ձգտէին լեցնել ինկողներու տեղը՝ նոր առաքելակներով:

1904ի սկիզբը Սոֆիայի մէջ գումարուող Հ.Յ.Գ. Երրորդ Ընդհանուր Ժողովին պատկերը լրիւ արտայայտիչ է վեցամեակի ընթացքին կառոյցի կրած հողովոյթի տեսակէտէն: Շամիրը (Վան) կը մնայ Կեդրոնական Կոմիտէի միջին. կազմուած չէ Պատասխանատու Մարմինը. մինչ Բարձրաւանդակի Պատ. Կ. Կոմիտէի ներկայացուցիչի կողմէն կը գտնենք նաեւ պատգամաւորները Դուրանի (Տարօն) եւ Պուրակի (Ախլաթ-Սալնոյ Չոր) նորակազմ Կեդր. Կոմիտէութեանց եւ Լեռնավայրի Պատ. Մարմնի ներկայացուցիչի կողմէն՝ պատգամաւորը Հովիտի (Այնթապ): Գոյութիւն ունենալէ դադարած է նաեւ, հաւանօրէն Կամքի Ժողովին իսկ որոշումներուն իբրեւ հետեւանք (կազմութիւն «Փոքորիկ»ի), Պոլսոյ Պատասխանատու Կ. Կոմիտէն: Մարուստանը, Բ. Ընդհանուր Ժողովի սահմանուած չորս ձայներուն տեղ, կը ներկայանայ հինգ պատգամաւորներով: Կը պակսին Սեպուիը եւ Կարմիր-Բերդը (Կարին): Խորհրդակցական ձայնով ներկայ են նաեւ Դաշնակցական Ուսանողական Միութիւնները՝ ինչպէս որոշած էր Երկրորդ Ընդհ. Ժողովը: Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմինը նախապատրաստած է արդէն Մասնոյ ապստամբութիւնը (որ դժբախտաբար պիտի պայթէր նախատեսուած ժամանակէն առաջ՝ Ընդհ. Ժողովի իսկ օրերուն), մինչ Կովկասի մէջ, ցարական բռնութիւններն ու դէպքերու նոր ընթացքը յառաջացուցած են նոր մարմին մը՝ «*Ինքնապաշտպանութեան Կեդրոնական Կոմիտէն*», որ Երրորդ Ընդհ. Ժողովի կողմէն կը ճանչցուի իբրեւ **Կովկասի Պատասխանատու Մարմին**:

Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ԵՒ 1904-1906 ՏԱՐԻՆԵՐ

Կառոյցի տեսակէտէ՝ Հ.Յ.Գ. Գ. Ընդհ. Ժողովը (Սոֆիա, 1904 Փետրուար-Մարտ) հիմնական փոփոխութիւններ չի մտցներ Բ. Ընդհ. Ժողովով իր յստակ ձեւաւորումը ստացած եւ 1898-1903 վեցամեակի ընթացքին բնական զարգացումի ենթարկուած եւ ուռճացած կազմակերպութեան մէջ: Կը պահուի երկու Բիրոններու (Արեւելեան եւ Արեւմտեան) դրութիւնը՝ իրաւասութեանց գրեթէ միեւնոյն սահմանումներով եւ աշխարհագրական միեւնոյն բաժանումներով: Կը պահուին նաեւ Պատասխանատու Կեդր. Կոմիտէները՝ աւելի յստակացուած իրաւունքներով եւ պարտականութիւններով. փոխուած են միայն անոնցմէ երկուքին գործի բնոյթը եւ անունը: Անուն կը փոխէ նաեւ Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմինը, դառնալով «**Դաշնակցութեան Խորհուրդ**». կազմուած Բիրոններու եւ Պատաս-

խանատու Կեդր. Կոմիտեներու **ներկայացուցիչներէն**, «Խորհուրդ»ը ունի աւելի յստակացում եւ մանրամասնում պարտականութիւններ եւ իրաւասութիւններ, քան նախորդ շրջանի «Կամբ»ը:

Կառոյցի եւ զայն սահմանող կանոնագրային կէտերու **յստակացումը** ընդհանուր է, եւ կը կազմէ Երրորդ Ընդհ. Ժողովի գլխաւոր իրազործումներէն մէկը: Առաջին անգամ ըլլալով՝ մշակուած են կազմակերպական կանոններ, մեծ մասամբ թուագրուած յօդուած առ յօդուած, ու տեղ գտած՝ Ընդհ. Ժողովի ատենագրութիւններուն մէջ: Երրորդ Ընդհ. Ժողովէն ետք է որ, կանոնագրային այդ յօդուածներու առանձնացումով, «Դրօշակ»ի տպարանէն լոյս տեսած է **Հ. Յ. Պաշնակցութեան Կազմակերպական Կանոններու** առաջին գրքոյկը:

Այդ Կազմակերպական Կանոնները բաժնուած են բազմաթիւ գլուխներու, որոնցմէ առաջինին մէջ կը սահմանուին **անհատ գործիչները** (ա.- շրջուն գործիչներ, շրջիկներ կամ պրոպագանդիստներ, բ.- պատուիրակներ, գ.- ներկայացուցիչներ) եւ անոնց դերը: Ապա կը սահմանուին **խումբերը եւ մարմինները՝ Թուրքիոյ մէջ**, իրենց թուական նուագագոյն ցենզով (խումբ՝ 7 հոգի, ենթակոմիտէ՝ 5 խումբ կամ 35 հոգի, կոմիտէ՝ 3 ենթակոմիտէ կամ 15 խումբ = 105 հոգի, Կեդրոնական Կոմիտէ՝ 3 կոմիտէ կամ 45 խումբ = 315 հոգի), պարտաւորութիւններով եւ պատասխանատւութիւններով: Մարմիններու կազմութեան եղանակը ճշդուած չէ, բայց Կեդր. Կոմիտէն «*լարիսի մէկ անգամ կը հրաւիրէ շրջանի պարզամտաւորական ժողով՝ եթէ դիրտութիւններ կան*» (յօդ. 16). ինչ որ ենթադրել կու տայ, որ նուագագոյն հնարաւորութեան պարագային, ընդունուած ձեւն էր մարմիններու ընտրութիւնը՝ ժողովրդավարական սկզբունքով եւ ժողովական կարգով: Բացայայտօրէն, ընտրական դրութիւնը եւ մարմիններու ապակեդրոնացեալ իրաւասութիւնները սահմանափակուած են կեդրոնացման վայրերուն մէջ միայն՝ ուր, փաստօրէն, կարեւոր ամէն կարգադրութիւն ենթակայ է Պատասխանատու Մարմնի վերին հակակշռին:

Կը հետեւի **խումբերու եւ մարմիններու** սահմանումը՝ **Թուրքիայէն դուրս** գտնուող շրջաններու համար: Խումբերը (առնուազն 7 հոգի) կրնան ըլլալ օժանդակ եւ մարտական. ենթակոմիտէն պէտք է ունենայ 5 խումբ կամ 35 անդամ, եւ կը կազմուի խումբերու ներկայացուցիչներէն. կոմիտէն պէտք է ունենայ 5 ենթակոմիտէ կամ 25 խումբ = 175 հոգի. Կեդրոնական Կոմիտէի թուական նուագագոյն ցենզն է՝ 5 կոմիտէ կամ 25 ենթակոմիտէ = 875 հոգի: Ընտրական դրութեան կիրարկումը բացայայտ է՝ այնտեղ ուր կը նշուի մարմիններու կազմութեան եղանակը. այսպէս՝ «յօդ. 41.- *Կեդր. Կոմիտէն ամէն րարի կ'ընտրուի իր շրջանի պարզամտաւորական ժողովի կողմէ*»: Ճշդուած կանոնագրային ընդհանուր կէտերէն դուրս,

«Արեժարանի, Բալկանեան քերականի, Եգիպտոսի եւ Ամերիկայի պարզամատրական ժողովներուն, ինչպէս նաեւ Սարուսարանի Կեդր. Կոմիտէներու պարզամատրական ժողովին կը վերապահուի Ընդհ. ժողովի այս որոշումներէն դուրս մնացած կազմակերպական խնդիրները գծել, իւրաքանչիւրն իր ներքին կանոնագրով, առանց հակասելու Դաշնակցութեան Ծրագրին եւ Ընդհ. ժողովի վճիռներուն».- յօդ. 50:

Չարմանալի է, որ Կազմակերպական Կանոնները **Ռ-այոնական ժողովներուն** կ'ակնարկեն պարագայական կերպով միայն, այստեղ խօսելով «Սարուստանի Կեդրոնական Կոմիտէներու Պատգամատրական ժողով»ին մասին, այլ տեղ նշելով, որ Արեւելեան Բիւրոյի հինգ անդամներէն երեքը կ'ընտրուին Կովկասի Ռ-այոնական ժողովին կողմէ: Մինչդեռ, իբրեւ բազմաթիւ Կեդր. Կոմիտէութիւններ պարփակող շրջանի մը գերագոյն հաւաքականութիւն՝ Արեւելեան Բիւրոյի շրջանի Ռ-այոնական ժողովները որոշիչ դեր ունեցած են Դաշնակցութեան պատմութեան մէջ՝ թէ՛ 1895-97 տարիներուն եւ թէ՛ 1904էն 1906՝ Չորրորդ Ընդհանուր ժողովին նախորդող ժամանակաշրջանին:

Կը յաջորդեն **Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէներուն** վերաբերող յօդուածները: Երկրորդ Ընդհ. ժողովի հիմնական որոշումները կը մնան անփոփոխ. յաւելումները աւելի եւս կը շեշտեն ու կը յստակացնեն Պատասխանատու Մարմիններու իրաւասութիւնները: Այսպէս, անոնց անդամները **ձայնի իրաւունքով կրնան մաս կազմել դաշնակցական ռեւ մարմնի**. անոնք (Պատ. Կ. Կ.ները) կ'ունենան իրենց ներկայացուցիչը «պատկանեալ» Բիւրոյի կազմին մէջ: Միւս կողմէ կ'աւելցուի սակայն՝ որ «*Պայք. Մարմնի անդամները պարտաւոր են Երկիր, իրենց գործունէութեան վայրը մըրնել: Առանց ընկերներու համաշայնութեան դուրս մնացած անդամը կը համարուի հրաժարած*»:

Ընդհանուր ժողովը կ'որոշէ Թուրքիոյ մէջ ունենալ երեք Պատասխանատու Կեդր. Կոմիտէներ, - **Լեռնավայրի** (Կիլիկիա) եւ **Բարձրաւանդակի** (Սասուն) **Պատ. Մարմինները** եւ **Վիշապ-Ոսկեհանքի** (Պոլիս-Իզմիր) **Յուցական Մարմինը**: Կամքի 1901ի ժողովին կողմէ հաստատուած «Փոթորիկ»ի գործը շարունակելու իրաւունքը կը տրուի Յուցական Մարմնին միայն: Անդին, Կովկասի մէջ, եկեղեցական կարուածներու բռնազրաման դէմ համաժողովրդային ծառայումը ղեկավարող «*Ինքնապաշտպանութեան Կեդրոնական Կոմիտէն*» կ'ընդունուի ի շարք Պատասխանատու Մարմիններու (**Կովկասի Պատ. Մարմին**): Առաջին երեքի կազմերը կ'ընտրէ Ընդհ. ժողովը. չորրորդինը՝ Սարուստանի Ռ-այոնական ժողովը: Յեղափոխական կենդանի գործի տեսակէտէ Պատասխանատու Մարմիններուն

տրուած հիմնական կարեւորութիւնը ի յայտ կու գայ նաեւ անկէ՝ որ Քրիստափորի եւ Չաւարեանի նման կեդրոնական դէմքեր, Բիւրոներէն դուրս գալով, կը մտնեն այդ Մարմիններուն մէջ:

Յաջորդ գլուխը յատկացուած է երկու **Բիւրոներուն**՝ որոնց պարտականութիւններն ու իրաւունքները, ինչպէս նաեւ աշխարհագրական սահմանները, ըսի՛նք արդէն, հիմնական ոչ մէկ փոփոխութիւն կը կրեն: Նորութիւնը կը կազմէ միայն անոնց ընտրութեան ձեւը: Արեւելեան Բիւրոյի 5 անդամներէն երեքը կ'ընտրուին Սարուստանի Ռայոնական Ժողովէն, մինչ միւս երկուքը կը որկեն (կամ կը նշանակեն) Բարձրաւանդակի Պատ. Մարմինն ու Շամիրի (Վան) Կեդր. Կոմիտէն: Իսկ Արեւմտեան Բիւրոյի 5 անդամներէն երեքը կ'ընտրուին Ընդհ. Ժողովին կողմէ, միւս երկուքը որկուելով՝ Յուցական եւ Լեռնավայրի Պատ. Մարմիններուն կողմէ: Հետաքրքրական է դիտել, որ համապատասխան Բիւրոյին մէջ անդամ կամ ներկայացուցիչ նշանակելու իրաւունքը տրուած չէ Կովկասի Պատասխանատու Մարմինն, որուն համար 67րդ յօդուածը կ'ըսէ, թէ ան «*կը գտնուի Արեւելեան Բիւրոյի գտնուած քաղաքին մէջ եւ կը գործէ անոր հետ համերաշխ կամ միացած*»:

«Դաշնակցութեան Խորհուրդ»-ին կը վերաբերին յաջորդ վեց յօդուածները:

Ապա տրուած են **Ընդհանուր Ժողովներու** գումարման, նախապատրաստութեան եւ ընթացքի, մասնակցութեան պայմաններու եւ ձայներու բաշխումի վերաբերեալ կանոնագրային բոլոր մանրամասնութիւնները՝ 22 յօդուածներով: Հիմնական բոլոր տրամադրութիւնները, շատ քիչ փոփոխութիւններով, պիտի դառնային կուսակցական աւանդութիւն եւ կիրարկուէին ամբողջ տասնամեակներ: Ընդհանուր Ժողովին կը մասնակցին Կեդրոնական Կոմիտէները, Բիւրոներն ու Պատասխանատու Մարմինները, (մէկական ձայնով), Դաշնակցական Ռուսանդակական Սիութիւնները, ինչպէս նաեւ Բիւրոյի մը եւ Պատասխանատու Կեդր. Կոմիտէի մը փոխադարձ համաձայնութեամբ կամ Ընդհ. Ժողովին իսկ կողմէ՝ հրաւիրուած «*այնպիսի ընկերներ, որոնք իրենց յեղափոխական գործունէութեամբ որոշ երաշխատութիւն կը ներկայացնեն՝ Ընդհ. Ժողովի որոշումներուն զգալապէս նպաստելու*» (պատգամաւորներու թիւին հետ համեմատութիւն ճշդուած չէ). հրաւիրուած այդ ընկերները «պատգամաւորի հասար ձայնի իրաւունք կ'ունենան Ընդհ. Ժողովին մէջ» (յօդ. 106 եւ 107): Հիմնական է եւ աւանդութիւն կը դառնայ նաեւ վերջին յօդուածը (119), որուն համաձայն՝ «*Դաշնակցութեան նպատակի եւ կազմակերպութեան սխարեմի վերաբերեալ որեւէ արմատական փոփոխութիւն չի կրնար որոշել Ընդհ. Ժողովը, եթէ կանխապէս այդ խնդիրը չէ ներկայացուած Կեդրոնական Կոմիտէներուն*»:

**ԿՈՄԻՏԵ ԶԵՂԱՅՑ ՎԱՅՐԵՐ, ԱՅԳ ՎԱՅՐԵՐՈՒ ՄԷՋ
ԱՆՀԱՏ ԳՈՐԾԻԶՆԵՐՈՒ ԳԵՐԸ**

(Գ. Ընդհ. Ժողովի ատենագրութիւններէն)

Կոմիտէ չեղած վայրերու մէջ անհատներու գործունէութեան մասին առաջ եկան երկու տարբեր ուղղութեան կարծիքներ:

Մէկ կողմը կը պահանջէր տալ անհատ գործիչներուն որոշ չափով ազատութիւն, որովհետեւ այն ժամանակ միայն կարելի կ'ըլլայ յեղափոխական գաղափարը վառ սահմանափակել: Բացի այդ սկզբունքի խնդրէն, դիտուեցաւ նաեւ ուրիշ գործնական անյարմարութիւն մը, այն է որ անհատ դաշնակցական մը, բոլորովին անտեղեակ դրացի Կոմիտէի կամ Պատասխանատու Մարմնի տըւած որոշումներուն ու գործունէութեան, կարող է յանկարծ կատարել այնպիսի գործ մը, որ բոլորովին խանգարէ այդ մարմիններու ծրագիրը: Անհատ գործիչները, պաշտպանուելով նաեւ Դաշնակցութեան անունին տակ, կրնան անձնական հակառակութիւններու պատճառով կատարել այնպիսի գործեր, որոնք կազմակերպութեան աւելի վնաս կուտան, քան թէ օգուտ: Այս ուղղութիւնը պաշտպանողները կ'ընդունէին տալ անհատ գործիչներու իրաւունք՝ կազմակերպական գործերով զբաղելու, բայց արգիլել տեռորներ, կառավարական շէնքերու վրայ յարձակումներ եւն., եւն., որքան ժամանակ որ մօտակայ կոմիտէի կամ Պատասխանատու Մարմնի համաձայնութիւնը չէ առնուած: Իսկ երբ կռիւ յայտարարուած է արդէն, ամէն կարգի իրաւունք կարելի է տալ, քանի որ պատերազմական դրութեան մէջ որքան շատ ձեռնարկներ կատարուին Երկրի զանազան կէտերու վրայ, այնչափ աւելի կը մեծնայ կռուի նշանակութիւնը:

Շողովականներու մի մասը, տեսնելով այդ ուղղութեան մէջ անհատական ապակենտրոնացում, եւ նկատելով ատիկա Դաշնակցութեան հիմնական սկզբունքին հակառակ՝ անհրաժեշտ կը համարէր անհատ գործիչներու իրաւատարբարը սահմանափակել: Բացի այդ սկզբունքի խնդրէն, դիտուեցաւ նաեւ ուրիշ գործնական անյարմարութիւն մը, այն է որ անհատ դաշնակցական մը, բոլորովին անտեղեակ դրացի Կոմիտէի կամ Պատասխանատու Մարմնի տըւած որոշումներուն ու գործունէութեան, կարող է յանկարծ կատարել այնպիսի գործ մը, որ բոլորովին խանգարէ այդ մարմիններու ծրագիրը: Անհատ գործիչները, պաշտպանուելով նաեւ Դաշնակցութեան անունին տակ, կրնան անձնական հակառակութիւններու պատճառով կատարել այնպիսի գործեր, որոնք կազմակերպութեան աւելի վնաս կուտան, քան թէ օգուտ: Այս ուղղութիւնը պաշտպանողները կ'ընդունէին տալ անհատ գործիչներու իրաւունք՝ կազմակերպական գործերով զբաղելու, բայց արգիլել տեռորներ, կառավարական շէնքերու վրայ յարձակումներ եւն., եւն., որքան ժամանակ որ մօտակայ կոմիտէի կամ Պատասխանատու Մարմնի համաձայնութիւնը չէ առնուած: Իսկ երբ կռիւ յայտարարուած է արդէն, ամէն կարգի իրաւունք կարելի է տալ, քանի որ պատերազմական դրութեան մէջ որքան շատ ձեռնարկներ կատարուին Երկրի զանազան կէտերու վրայ, այնչափ աւելի կը մեծնայ կռուի նշանակութիւնը:

Հարցի մասին Շողովը տուաւ [այս իմաստով համապատասխան որոշում]:
«Նիւթեր Հ.Յ.Դ. Պատմութեան համար», ք. հալոյր

Առանձին գլուխ մը յատկացուած է այն *«նուազագոյն պահանջներ»*ուն, որոնք դրուած են մարմիններուն վրայ եւ անոնց գոյութեան իրաւունքը կը պայմանաւորեն: Այսպէս՝ Կեդր. Կոմիտէ մը պարտաւոր է տարեկան առնուազն 10.000 ֆր. մուտք ունենալ, ամէն տարի կազմակերպութեան համար պատրաստել կամ գտնել գործիչ, ռազմագէտ կամ մասնագէտ ընկերներ (թուի ճշդումը կը ձգուի շրջանի Պատգամատրական Շողովին), եւ, դարձեալ իւրաքանչիւր տարի, առնուազն 50 զինավարժ ընկերներ (*«որոնցմէ՛ր քիսոր պատրաստ» Երկիր մըրնելու իրենց հաշուով*): Իւրաքանչիւր Բիւրօ պարտաւոր է ունենալ տարեկան նոյն նուազագոյն մուտքը (10.000 ֆր.՝ չհաշուած հրատարակութիւններու հատկոյթը), եւ պատրաստել կազ-

մակերպող թե՛ ռազմագետ վեց մտաւորական ուժեր: Յաւելեալ պարտաւորութիւններ կը դրուին Արեւմտեան Բիւրոյի վրայ՝ «Դրօշակ»ի եւ այլ հրատարակութեանց գծով: Վերոյիշեալ պահանջներուն գոհացում չտուած մարմինը Ընդհ. Ժողովին մասնակցելու իր իրատունքը կը կորսնցնէ: Գալով Հ.Յ.Դ. Ռուսանդական Միութիւններուն, անոնք կրնան մասնակցիլ Ընդհ. Ժողովին եթէ ունենան առնուազն 100 (Ռուսաստան) կամ 50 (արտասահման) անդամներ:

Կազմակերպական կանոններու յաջորդ բաժինները (**Կարգապահութիւն, Հաշուետուութիւն, Դաշնակցական տուրք եւ Օժանդակութիւն ընկերներու**) կազմակերպական կառոյցի հետ անմիջական աղերս չունին:

... Յատկանշական [է] Ժողովին մէջ տիրող այն համոզումը, որ ազատագրական շարժման յաջողութեան անհրաժեշտ նախապայմանն է բուն ինքն Երկրի տառապող ժողովուրդին ամբողջական ինքնագիտակցութիւնը եւ նուիրեալ մասնակցութիւնը: Այս համոզման արդիւնք են անկասկած ժողովուրդի կազմակերպման եւ զինման անհրաժեշտութեան նշումին առընթեր տրուած կարգ մը մասնակի որոշումները՝ ինչպէս Մեծ Հայքի եւ Փոքր Ասիոյ զանազան շրջաններուն մէջ կազմակերպութիւն յառաջացնել, մարտական օժանդակ խումբեր («պահեստի բանակ») ստեղծել եւայլն: Արտաքին քարոզչական ճակատի վրայ, Արեւմտեան Բիւրոյին կը յանձնարարուի կազմակերպել օտար հեղինակաւոր հայասերներէ բաղկացած մնայուն բիւրօ մը՝ անկախ Pro Armeniaի խմբագրութենէն:

1904-1906 ... [բեղուն շրջանի] գործօնները հանդիսացան Երրորդ Ընդհ. Ժողովին կողմէ ընտրուած կամ վերջնական ձեւ ստացած մարմինները, - ամբողջութիւնը Դաշնակցութեան կազմակերպական մեքենային՝ Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմին, Արեւմտեան Բիւրօ, Լեռնավայրի Պատասխանատու Մարմին, Յուցական Մարմին, Արեւելեան Բիւրօ, Կովկասի Պատասխանատու Մարմին, անմիջական օժանդակութեամբն ու գործօն աջակցութեամբը շրջանային Կեդրոնական Կոմիտէներուն:

Ռուս յեղափոխական շարժման բռնկումով, դէպքերը Կովկասի եւ ամբողջ Ռուսաստանի մէջ ընթացան զահավէժ արագութեամբ: Յարական բռնակալութեան դէմ պայքարը Դաշնակցութեան համար սկսած էր աւելի կանուխէն՝ 1903ի եկեղեցական կալուածներու գրաւման հրամանագրի օրերէն: Չուտ ազգային այդ պայքարը 1904էն սկսեալ զուգահեռ գնաց համառուական պոռթկումի ընկերային-յեղափոխական առաջադրանքներուն հետ: Դաշնակցութեան կովկասեան մարմինները մասնակցեցան Ռուսաստանի կուսակցութեանց համաժողովներուն, կազմակերպական ու դաւադրական գաղտնի աշխատանքներուն: Եւ անկասկած՝ շատ աւելի կարեւոր պիտի ըլլար Դաշնակցութեան մարտական մասնակցութիւնը հա-

մառուսական յեղափոխութեան, եթէ 1905 Փետրուարին չսկսեին հայ-թաթարական կռիւները, որոնք մեր կազմակերպութեան զինեալ ուժերը զբաղեցուցին աւելի քան տարի մը:

Այս պայմաններուն մէջ բնական է տեսնել, որ 1904-1906 տարիները Դաշնակցութեան կովկասեան մարմիններուն համար կը յատկանշուին թէ՛ տենդագին գործունէութեամբ մը՝ ժողովական, կազմակերպչական, քարոզչական եւ մարտական գօտիներուն մէջ, եւ թէ, միաժամանակ, գաղափարաբանական հողվոյթով մը՝ դէպի արտ-ազգային ընկերային առաջադրանքներ: Արեւելեան Բիւրոն, Կովկասի Պատասխանատու Մարմինը եւ կովկասեան յաջորդական Ռայոնական Ժողովները կը զբաղին ծրագրային նոր պահանջներու եւ համապատասխան գործունէութեան եղանակներու ձեւակերպումով: Ընկերվարութեան ամբողջապէս յարելու կամ ցարական բռնակալութեան դէմ հայութեան ծառայումը զուտ ազգային-ազատագրական պայքարի հունին մէջ պահելու հակոտնեայ ձգտումները կը բախին իրարու, յաճախ ստեղծելով բուռն վեճեր:

Միայն 1904 տարուան ընթացքին, եւ անկախ Ալեքսանդրապոլի զինուորական խորհրդակցութենէն, արխիւային նիւթերու համաձայն՝ Թիֆլիսի մէջ զումարուած են Ռայոնական չորս ժողովներ (ա. Ապրիլ-Մայիս. բ. Յուլիս՝ արտակարգ. գ. Սեպտեմբեր՝ արտակարգ եւ դ. Դեկտեմբեր): Վերջինին մէջ մանաւանդ՝ յստակօրէն առկայ է Կովկասի կազմակերպութեան համար տնտեսական եւ քաղաքական նոր ծրագիր կազմելու եւ աւելի յստակօրէն ու գործնականապէս ընկերվարութեան յարելու տրամադրութիւնը, թէ՛ անկէ առաջ իսկ այդ հարցերու քննութեան եւ յստակացման կարեւորութիւնը կը նշէ Արեւմտեան Բիւրոյի 30 Նոյեմբեր 1904ի շրջաբերականը:

Դաշնակցութեան Խորհուրդն էր, որ 1905ի զարման (Ժընե), բիրեղացնելով արտայայտուած տրամադրութիւնները, պիտի որոշէր՝ «*Կովկասեան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունէութեան, մշակել ծրագիր՝ համաձայն Կովկասեան Ռայոնական Ժողովոյն արտայայտուած փրամադրութեան, ուղարկել կովկասեան դաշնակցական մարմիններին՝ ժամանակաւորապէս ղեկավարուելու այդ ծրագրով, թողնելով նրա վերջնական մշակումը եւ հասարպարումը առաջիկայ Ընդհանուր Ժողովին*», ու Խորհուրդը պիտի կազմէր «*Կովկասեան Գործունէութեան Նախագիծ*»ը:

Սեր տրամադրութեան տակ ունինք նոթեր՝ Խորհուրդի երկու նիստերու մասին, - առաջինը՝ Փետրուարի վերջ, մասնակցութեամբ Ռոստոմի (Արեւմտեան Բիւրո), Հ. Օհանջանեանի (Արեւելեան Բիւրո), Անդրանիկի (Բարձրաւանդակի Պատ. Մարմին), Մռայլի (? - Կովկասի Պատ. Մարմին) եւ Յ. Գալֆայեանի (Վահրամ - Լեռնավայրի Պատ. Մարմին). երկրորդը, աւելի ընդլայնուած կազմով (կ'աւելնան՝ Յուցական Մարմնէն Մաֆոն, նաեւ Անարոնեանը, Ալեւունին, Վարանդեանը եւ Սարգիսը), Ապրիլին: Անկախ կովկասեան հարցերէն, Խորհուրդը մանրամասնօրէն կը զբաղի նաեւ Երկրի գործելակերպին եւ Յուցական Մարմնի ծրագիրներուն վերաբերեալ

հարցերով, Կեդր. Կոմիտեի ներքին իրաւունք կու տայ Ժլատի (Հիւ. Կովկաս) Կոմիտեին, նոր ուժերով (Մարգիս, Մամոն, Կոմս) կը զօրացնէ Վասպուրականի Կեդր. Կոմիտէն եւայլն. ան որոշումներ կու տայ նոյնպէս Մերաստիոյ շրջանի յատուկ ուսումնասիրութեան եւ կազմակերպման ուղիւնքով:

Խորհուրդի գումարումէն ետք եւ Չորրորդ Ընդհանուր Ժողովէն առաջ, եւ անկախ հայ-թաթարական կռիւներուն պարտադրած զինուորական յաճախակի խորհրդակցութիւններէն, Կովկասի մէջ տեղի ունեցած են առնուազն երկու Ռայոնական Ժողովներ, - առաջինը 1905 Նոյեմբեր, եւ երկրորդը, շատ անելի բազմամարդ ու կարեւոր, 1906 Մարտ-Ապրիլ ամիսներուն: Այն հիմունքով, որ հայ-թաթարական պատերազմին եւ համառուսական յեղափոխութեան բերումով Դաշնակցութեան կովկասեան բոլոր մարմինները (Արեւելեան Բիւրօ եւ Կեդր. Կոմիտէներ) մտած են կռուի անմիջօրեայ բռնութիւն մէջ, Նոյեմբերի Ռայոնական Ժողովը անշուք կը գտնէ Կովկասի Պատասխանատու Մարմնի առանձին գոյութիւնը եւ զայն կը յայտարարէ լուծուած: Երկրորդին մէջ, որուն կը մասնակցին արեւմտահայ կռուող ուժերէն եւ ղեկավարներէն շատեր (Մուրատ, Սեպուհ, Արմէն Գարօ, Կոմս, Համազասպ եւ ուրիշներ), վերստին սուր կերպով երեսն կու գան տարակարծութիւնները Կովկասեան Նախագծին շուրջ եւ բաւական յստակ կերպով կը դրուի կովկասեան ընկերային յեղափոխութիւնը քրքահայ դատէն անջատելու տրամադրութիւնը՝ արեւելահայ կարգ մը գործիչներու կողմէ: Ռոստոմի, Չաւարեանի, Գարեգին Խաժակի եւ Եղիշէ Թովչեանի մտան կեդրոնական դէմքերու հաւասարակշռուած ու առողջ կեցուածքն է որ առաջըը կ'առնէ «անջատման» վտանգաւոր տեսակէտի յաղթանակին, միաժամանակ սահմանափակելով Սիիրական կան ծայրայեղ ազգայնական հոսանքի ազդեցութիւնը՝ «հակառակազմական»ներուն մօտ: Իր այս զբաղումներով եւ արտայայտած մտահոգութիւններով՝ 1906 Մարտ-Ապրիլի Թիֆլիսի Ռայոնական Ժողովը Չորրորդ Ընդհանուր Ժողովը կը նախապատրաստէ:

Արեւմտեան Բիւրոյէն՝ Ռոստոմը, Վարանդեանը եւ Ահարոնեանը ներկայ են Կովկասեան Ռայոնական Ժողովին: Հայ-թրքական ընդհարումները ղեկավար ու մարտական ուժերու ընտրանին հաւաքած են Կովկաս: 1906ին, բժիշկ Լորիս-Սելիքեանի հրաժարումով, Երրորդ Ընդհ. Ժողովին կողմէ ընտրուած Արեւմտեան Բիւրոյի կազմէն՝ փաստօրէն Ժընեւ կը մնայ Ալեկունի միայն: Իրողութիւն մը, որ բաւական խիստ քննադատութիւններու առիթ պիտի տար Վիեննայի Ընդհ. Ժողովին մէջ: Ուժերու եւ մտահոգութիւններու կեդրոնացումը դէպի Կովկաս միայն Արեւմտեան Բիւրոյին վրայ չէ որ ժխտական կերպով կ'անդրադառնայ: Չաւարեանն ու Վարդանը անուանապէս է միայն, որ կը մնան անդամ Լեռնավայրի Պատասխանատու Մարմնին: Ու Յուցականը փաստօրէն ջլատուած է՝ Քրիստափորի մահէն եւ Երլտըզի մահափորձին ու Իզմիրի դաւադրական ձեռնարկներուն ձախող ելքէն ետք: Կռուող ուժերու մեկնումով եւ ասպատակութեան յաջորդող տեղադրութեան հետեւանքով՝ համեմատաբար տկարացած է Դուրան-Բարձրաւանդակի կազմակերպութիւնը. ու թէ կը մնայ Պատասխանատու Մարմինը՝ Գէորգ Չաւուշով, Գեղամ Տէր Կարապետ-

եանով եւ Վարդան Վարդապետով (որոնց վրայ 1906ին պիտի գար աւելնալ Ռուբէնը), սակայն 1907ին արդէն իսկ փաստօրէն գոյութիւն չունի Պուրակ-Սալնոյ Չորի Կեդրոնական Կոմիտէութիւնը (կամ, առնուազն, Ընդհանուր Ժողովին առանձին մասնակցելու չափ կարեւորութիւն չի ներկայացներ): Ծաւալած է սակայն Վասպուրականի կազմակերպութիւնը, որ, Գիսակէն (Վարդգէս) ու Կոմսէն ետք Արամի եւ Իշխանի տիրական ներկայութեամբ, դարձած է Երկրի յեղափոխական հիմնական դարբնոցը: Շամիրի (Վան) Կեդրոնական Կոմիտէութենէն զատ, Ռշտունեաց լեռներուն մէջ կը գործէ նաեւ Լեռնապարի Կեդրոնական Կոմիտէութիւնը:

Այս պայմաններուն մէջ էր, որ 1907ի Փետրուար-Մարտ-Ապրիլ ամիսներուն, Վիեննայի մէջ պիտի գումարուէր Հ. Յ. Դաշնակցութեան ամենէն կարեւոր Ընդհանուր Ժողովներէն մէկը՝ Չորրորդ Ընդհանուր Ժողովը:

*«Հ. Յ. Դ. Կազմակերպական Կառոյցի Հոլովոյթը»,
Հ. Տասնապետեան*

1Բ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ՝ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՍԵՋ. ՊԱՅԵՐ՝ ՅՈՒՆԿՈՅԹԸ

23

1895Ի ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

... Կազմակերպութեան վերաբերեալ հարցեր.- Նշանաւոր հարցերից մէկն էր ժողովականների համար՝ աւելի պարզ որոշել միմեանց մէջ ունենալիք փոխադարձ յարաբերութիւնների ձեւը եւ միջոցները: Ինչպէս յայտնի է («Գրօշակ»ի թիւ 11), 92ի ժողովում ընդունուած էր ապակենտրոնացման սկզբունքը, որով ամէն խումբ, նոյնիսկ անհատ, ազատ էր գործելու: Ժողովում ընդունում են նոյնպէս ապակենտրոնացման դրական կողմերը, քանի որ հազար վերստերի վրայ տարածուող գործունէութեան շրջանում կենտրոնակաւնութիւնը պիտի ստեղծէր մի ահագին տէրութեան նման կազմ, բայց գաղտնի կազմակերպութիւն, ինչ որ ինքն ըստ ինքեան անկարելի բան է: Բացի այդ՝ կենտրոնացումով կը ճնշուէր զանազան խմբերի շատ անգամ անհրաժեշտ ինքնուրոյնութիւնը, կը սահմանափակուէր նրանց զարգացումը, կը հեռացուէր նրանցից գործի համար անհրաժեշտ պատասխանատւութիւնը: Վերջապէս, որեւէ պատճառով կենտրոնին հասած վտանգը մեծ հարուած կը լինէր ամբողջ կազմակերպութեան համար եւ նոյնիսկ կարող էր պատճառ լինել գործի ընդհատման: Միւս կողմից էլ չէր կարելի չհամաձայնուել, որ բուն ապակենտրոնացումը կարող է հասցնել նոյնիսկ միմեանց հակասող գործողութիւնների զանազան խմբերի մէջ, կարող է ոչ-ցանկալի մրցումն առաջ բերել միեւնոյն կազմակերպութեան պատկանող եւ գործին ծառայող խմբերի եւ անձնատրութիւնների մէջ. կարող է ուժերը ու միջոցները բաժանել բոլորովին աննպատակայարմար կերպով:

Ուստի անհրաժեշտ էր մի միջին ճանապարհ գտնել, պահպանելով մի կողմից խմբերի եւ ռայոնների ազատութիւնը եւ ինքնուրոյնութիւնը, իսկ միւս կողմից՝ ապահովել գործնական ներդաշնակութիւն եւ համերաշխութիւն բոլոր խմբերի միջեւ:

Այդ իրագործելու համար ընդհանուր ժողովը եկաւ հետեւեալ եզրակացութեանը՝ ընդունելով սկզբունքով կազմակերպութեան նախկին ձեւը.-

Ապակենտրոնացումը, որով իւրաքանչիւր ռայոն գործում է ինքնուրոյն կերպով, ժողովս անհրաժեշտ է համարում՝ որ[պէսզի] մասնատոր խմբերը սերտ կապ պահպանեն իրանց ռայոնական կոմիտէների հետ, իսկ ռայոնական կոմիտէները Բիւրոյի հետ: Երբ հարցը ընդհանուր է, վերաբերում է արեւի լայն շրջանի, կամ դրա ազդեցութիւնը կարող է տարածուել գործող խմբի կամ ռայոնական կոմիտէի շրջանից դուրս, գործի յաջողութիւնը պահանջում է, որ այդ դէպքերում գործող մարմինը խորհրդակցել եւ աշխատէ համաձայնուել այն խմբերի եւ շրջանի հետ, մինչեւ ուր հասնում է կատարուելիք գործի ազդեցութիւնը: Իսկ արեւի ընդհանուր բնատրութիւն ունեցող հարցերում, կոմիտէները գործում են Բիւրոյի գիտութեամբ եւ խորհրդակցութեամբ: Նոյնը պիտի լինի մանաւանդ կազմակերպութեան ուժերն ու միջոցները գործածելու հարցում: Հակառակ դէպքում՝ եթէ զանազան խմբեր տեղեակ չլինին միմեանց գործողութիւնների մասին եւ այդ գործողութիւնները համաձայնեցրած չլինին ընդհանուրի շահին, կարող է առաջ գալ ուժերի եւ միջոցների աննպատակայարմար գործածութիւն. օրինակ, մի աննշան տեղ կարող են 5 հոգի ուղարկուել, այն ինչ արեւի կարելուր կէտում ոչ ոք չլինել. մէկը կը ստանայ միջոցներ ամեն կողմից, մինչդեռ միւսը տարիներով գուրկ կը լինի:

Կոմիտէների Բիւրոյի հետ ունենալիք «խորհրդակցութիւնները» արդիւնաւէտ դարձնելու եւ առհասարակ անհամաձայնութիւնների եւ դժգոհութիւնների տեղիք չտալու նպատակով, ժողովը որոշեց, որ «Բիւրոն ընտրողական լինի եւ միևնչեւ միւս ընդհանուր ժողովը բաղկացած լինի 6 ընտրուած անչնատրութիւններից՝ երեքը Բիւրոյի գրկուած բաղաբից, իսկ մնացեալ երեքը այն նշանատր երեք կենտրոններից, որոնց ցոյց է փունել ընդհանուր ժողովը»:

Որովհետեւ Բիւրոյի անդամներին մէկ տեղ ժողովելը կարող էր կտրել ներկայացուցիչներին իրենց ընտրող տեղերից, ուստի ժողովը թոյլ տուեց Բիւրոյի անդամներին մնալ իրանց տեղը՝ սերտ յարաբերութեան մէջ մտնելով միմեանց հետ եւ գլխատոր հարցերը որոշելով միմեանց համաձայնութեամբ, իսկ ժամանակ առ ժամանակ պայմանատրուել եւ տեսակցել իրար հետ:

Ասածներից պարզ է որ «կոմիտէների» ներկայացուցիչներից կազմուած ընդհանուր ժողովը մնում է գործի հիմնական ընթացքի

ղեկավար, իսկ Բիրօն մի կապ պահպանող, ներդաշնակութիւն տուող եւ ուժերը նպատակայարմար բաժանող մարմին՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը կազմող ազատ եւ ինքնուրոյն կերպով գործող մարմինների եւ կոմիտէների մէջ...

«Հ.Յ.Դ. Դիւան», ա. հայտոր

24

1897-98 ՏԱՐԵԿԱՆ [ՌԱՅՈՆԱԿԱՆ] ԺՈՂՈՎ

... ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

... Բիրօ եւ նրա յարաբերութիւնները կոմիտէների հետ. - Բոլորը համաձայն էին այն բանում, որ Բիրօն, հիմնուած լինելով Ծրագրի համաձայն, իբրեւ լոկ տեղեկատու հիմնարկութիւն, իրերի բնական պահանջին համապատասխանելով դարձել է կիսավարչական մարմին, որ չէ հակասում ապակենտրոնացման սկզբունքին, որովհետեւ լաւ հասկացուած ապակենտրոնացումը դէմ չէ այնպիսի կենտրոնական հաստատութեան, որ չխառնուելով տեղական հարցերի մէջ եւ կատարեալ ազատութիւն տալով այդ հարցերում տեղական գործիչներին՝ հսկում է, սակայն, նրանց գործունէութեան, համաձայնեցնում է իրար հետ նրանց այն քայլերը, որոնք ընդհանուր նշանակութիւն ունին եւ առհասարակ նախաձեռնող է հանդիսանում եւ վարում է ընդհանուր գործը Ծրագրի եւ Ընդհ. Ժողովի վճիռների գծած սահմաններում:

Կենտրոնական մարմնի թուի մասին, սակայն, երկար վիճաբանութիւններ եղան: Աննշան մեծամասնութիւնը... պնդում էր թէ չպէտք է խիստ փոփոխութիւններ մտցնել եղած կարգերի մէջ, այլ պէտք է եղածը, որ երեսան է եկել իբրեւ բնական ծնունդ իրականութեան, աւելի եւս զարգացնել այն ուղղութեամբ, որ ցոյց է տալիս կեանքը: Այդ տեսակէտից նրանք անհրաժեշտ էին համարում թողնել երկու Բիրօ - մէկը Սարուստանում, մէկը՝ արտասահմանում, տալով նրանց կիսավարչական իրաւունքներ իրանց շրջանում...

Փոքրամասնութիւնը բաժանում էր երկու մասի, մի մասը բերելով Միացեալ Նահանգների եւ Շւէյցարիայի օրինակները՝ պնդում էր, որ ապակենտրոնացման սկզբունքը դէմ չէ կենտրոնական վարչութեան եւ առաջարկում էր կազմել մի կենտրոնական վարչութիւն, որ

ընտրությունը Ընդհ. Ժողովից՝ կը վարի գործը այդ Ժողովի վճիռների համաձայն: Միս մասը առաջարկում էր բաժանել Երկիրը մի քանի մասերի, նայելով թե որքան կետերում պատասխանատու գործեր կը լինեն կատարելու, նշանակել այնտեղ գործադիր պատասխանատու մարմիններ աչքի ընկնող տեղական եւ դրսի գործիչներից, տալ նրանց կենտրոնական Կոմիտեների իրաւունքներ, բաժանել բուն Երկրից դուրս եղած սահմանակից տեղերն այնպէս, որ նրանցից ամէն մէկը օժանդակիչ համարուի Երկրի շրջաններից մէկին, հիմնել այդ շրջաններին կից Բիւրօներ, որոնցից իւրաքանչիւրը կը հանդիսանայ օժանդակիչ իր Կենտրոնական կոմիտէին: Պարտականութիւն դնել Կենտրոնական Կոմիտեների եւ նրանց կից Բիւրօների վրայ տանել գործը իրանց շրջանում Ընդհ. Ժողովի վճիռ համաձայն եւ իրաւունք տալ նրանց ընտրել իրանց միջից մի-մի ներկայացուցիչ ամէն շրջանից (Կենտրոնական Կոմիտէն եւ կից Բիւրօն միացած), որոնք հարկաւոր դէպքում ժողովուելով կարողանան 1) հանդիսանալ ամբողջ կազմակերպութեան ներկայացուցիչ Եւրոպայի եւ Թուրքիայի առաջ, 2) վճռել այնպիսի ընդհանուր հարցեր, որոնք դուրս լինելով մի շրջանի իրաւասութիւնից եւ շօշափելով ուրիշ շրջանների շահերը, այնքան կարեւոր չեն սակայն, որ պէտք լինի նրանց համար գումարել Ընդհ. Ժողով:

Հետեւեալ [նիստում] խօսք եղաւ նրա մասին, թէ տա՞լ արդեօք իրաւունք Բիւրօներին փոխել Ընդհ. Ժողովի վճիռները հանգամանքների պահանջի համաձայն, այսինքն չկատարել Ընդհ. Ժողովի որոշածը եւ ձեռնարկել այնպիսի բան, որ չէ որոշուած Ընդհ. Ժողովից: Միաձայն վճռուեց, որ այնպիսի դէպքերում, երբ այդպիսի արմատական փոփոխութիւն կարող է պահանջուել հանգամանքների փոփոխման շնորհիւ, ... Բիւրօները պարտական են իրաւիքել Ընդհ. Ժողով. եթէ այդ անկարելի լինի՝ գոնէ [ռայոնական] ժողով: Յետոյ ձայները բաժանուեցին. 8 հոգի այն կարծիքին էին, որ եթէ այնքան շտապով պահանջուի վճիռ, որ անհնար լինի գումարել նոյնիսկ [ռայոնական] ժողով, այն ժամանակ Բիւրօները կարող են իրանք վճռել հարցը, պարտաւոր լինելով սակայն նախապէս նամակներով իմանալ մօտակայ կոմիտեների կարծիքները, առնել այն կոմիտէի համաձայնութիւնը, որտեղ կատարուելու է գործը, եւ արդարացնել իրենց վարմունքը յառաջիկայ Ընդհ. Ժողովի առաջ. իսկ 5 հոգի այն կարծիքին էին, թէ Բիւրօները առանց Ընդհ. կամ [ռայոնական] ժողովի իրաւունք չունին հիմնական փոփոխութիւն մտցնել Ընդհ. Ժողովի վճիռների մէջ, այլ կարող են միայն երկրորդական փոփոխութիւններ մտցնել, այն էլ խորհրդակցելով պատասխանատու մարմինների կամ նրանց ներկայացուցիչների հետ: Այնուհետեւ որոշուեց՝ 1) (ձայների բացարձակ մեծամասնութեամբ) որ Բիւրոյի անդամներին

ամէն տարի ընտրում է [ռայոնական] ժողովը, 2) ... որ Բիւրոյի անդամները չփոխուեն ամէն անգամ բոլորը միասին, այլ մի անգամ կանոնաւոր ընտրուելուց յետոյ՝ մաս-մաս, այնպէս որ ամէն տարի դուրս գայ Բիւրոյի կազմութիւնից նրա փոքրամասնութիւնը՝ նորից վերընտրուելու իրաւունքով, 3) որ Բիւրոյի անդամները պարտական են իրանց ժողովներին հրաւիրել խորհրդակցական ձայնով պատասխանատու մարմինների անդամ եղած այնպիսի անձնատրութիւնների, որոնք կարող են օգտակար լինել ընդհանուր հարցեր քննելիս...

«Հ.Յ.Դ. Դիւան», ք. հայտոր

25

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԸ՝ 1900Ի ՇՈՒՐՉ ՈՒ ԱՒԵԼԻ ԵՏՔԷ

[1896ի Վասպուրականի դէպքերէն ետք, վնասներու կողքին] օգուտները այն էին, որ Վասպուրականի ամենախուլ անկիւններուն մէջ անգամ, ամբողջ հայութիւնը ցնցուեցաւ եւ գիտակցեցաւ, որ ինք հայ է... Վասպուրականի մէջ դրուեցաւ հիմը ազգային ընդհանուր միութեան գաղափարի, որ մինչ այդ կը բացակայէր այնտեղ... Վանի կռիւներու օրինակին վրայ, հայերը տեսան ու համոզուեցան, որ կռուելով աւելի քիչ կորուստ կուտան, քան եթէ անտրտունջ ենթարկուին թշնամիին ու կոտորուին առանց որեւէ դիմադրութեան: ... [Այս] միահամուռ կամքը ... պատճառ դարձաւ, որ քրտութիւնը չափաւորէր իր ախորժակը եւ կամ ձեռք քաշէր իր իրաւունքներէն ... շրջաններու մէջ՝ ինչպէս օրինակ Վան-Տոսպի, Թիմարի, Հայոց Չորի եւ Գեաւաշի որոշ մասերը...

Այդ է ահա պատճառը, որ մինչդեռ Արմենական կուսակցութիւնը, որ ընդհանուր համակրանք կը վայելէր Վասպուրականի մէջ, եւ անոր հետ նաեւ Հնչակեան կուսակցութիւնը, որ հմայք ունէր եւ անցեալ կը հեռանան ասպարէզէն, իսկ Դաշնակցութիւնը, որ աւելի ծայրայեղ էր իր յեղափոխական ուժով եւ մարտաշունչ ոգիով, որով է կոտորածէն յետոյ ամենէն աւելի պէտք է իր դէմ հանէր Վասպուրականի ժողովուրդը, ջերմ ընդունելութիւն կը գտնէ անոր կողմէ: Դաշնակցութեան ուժի եւ յաջողութեան գաղտնիքը պէտք է փնտռել նախ այդ կուսակցութեան յամառութեան եւ անվիատութեան մէջ, ապա այն բանի՝ որ Դաշնակցութիւնը արթնցուց ժողովուրդի մէջ զէնքով

եւ ուժով պայքարելու գաղափարը. եւ վերջապէս, որ ան կանգնեցաւ ճիշդ հողի վրայ՝ որ գիւղացիութիւնն է, եւ իրեն իբրեւ յենարան ընտրեց զաւառները՝ ձգելով որ կեդրոնը եւ հայ արիստոկրատիան եւ մտաւորականութիւնը մնան միայն կուսակցութեան օգնողի, օժանդակի դերին մէջ: Դրանով պիտի բացատրել, որ յետագայում Դաշնակցութեան շարքերու մէջ մտաւորականները համեմատաբար քիչ թիւ կը կազմէին, եւ Վասպուրականի կուսակցական բուն զանգրածը կը կազմէին գիւղացիները, ֆետայիները եւ կիսագրագէտները: Եւ հակառակ որ քաղաքի ամբողջ բարձր խաւը՝ մինչեւ 1905 դուրս կը մնար Դաշնակցութենէն, լինելով չէզոք կամ յարելով Արմենական կուսակցութեան, Դաշնակցութիւնը կը հանդիսանար միակ ղեկավարը եւ տէրը Վասպուրականի ժողովուրդին: Ան իրեն իբրեւ յենարան ունէր Կարկառի Գալուստներու, Հասան Չաւուշներու, Շատախի Յովսէփներու, Գեաւաշի Հաչիներու, Հայոց Չորի Տիգրաններու, Արճակի Շիրիններու, կամ Բերկրիի Մելօներու պէս հասարակ, համարեա անգրագէտ գիւղացիներ, որոնք իրենց շահերու ամբողջ գիտակցութեամբ եւ գիւղական տոկոսնութեամբ՝ նուիրուած էին պայքարի եւ յեղափոխական պատրաստութեան աշխատանքին:

Եթէ Վասպուրականի եւ Տարօնի յեղափոխական շարժումները օրինակ պիտի ծառայեն, յիշենք ուրեմն, որ յեղափոխական կուսակցութեան մը հիմքը պիտի ըլլան ժողովրդական թէկուզ տգէտ ուժերը, իսկ մտաւորականութիւնը՝ անոր օժանդակը, ծառայողը, ցուցմունքներ տուողը, առանց սակայն, որ այդ ցուցմունքները հրաման դառնան:

1905 թուին՝ Վասպուրականը կը բաժնուր երկու Կ. Կոմիտէութիւններու, Շամի եւ Լեռնապարի: Շամի մէջ կեդրոնական անձնատրութիւնը Արամն էր, իսկ Լեռնապարի մէջ՝ Իշխանը: Շամի Կ. Կոմիտէութեան մէջ կը մտնէին Վան քաղաքը, Վան-Տոսպը, Բաշկալան, Աղբակը, Արճակը, Թիմարը, Բերկրին, Արճէշը, Ալջաւազը... Լեռնապարի շրջանը կազմուած էր Հայոց Չորէն, Նորդուգէն, Շատախէն, Մոկսէն, Գեաւաշէն, Կարկառէն, Սպարկերտէն, Շնիճորէն, Կեցանէն, Կարճկանէն, Գեաւսարէն. իսկ անոր ազդեցութեան տակն էին՝ Պիթիսը, Սղերդը եւ Ախլաթը: Այս վերջիններու վրայ ազդեցութիւն ունէր նաեւ Դուրանը:

[Կազմակերպական կառոյց.-] Իւրաքանչիւր գիւղի մէջ կար մարտական խումբ մը: Իւրաքանչիւր գիւղի համայնք՝ խումբի հետ միասին՝ կ'ընտրէր ենթակոմիտէ մը, որ գիւղին ղեկավարն էր: Իւրաքանչիւր գաւառի մէջ գտնուող բոլոր գիւղերու ներկայացուցիչները կ'ընտրէին կոմիտէ մը, որ այդ գաւառի ղեկավարն էր: Բայց այն գաւառներուն մէջ, ուր ընտրութիւնները կրնային վտանգ ներկա-

յացնել, կոմիտէի անդամները կը նշանակուէին կուսակցութեան լիազօրի կողմէ: Շամի եւ Լեռնապարի գաւառներու գլուխը կանգնած էին երկու Կ. Կոմիտէները:

Կ. Կոմիտէութեան ներկայացուցիչը, որ միաժամանակ ներկայացուցիչն էր կուսակցութեան, ունէր իրեն տրամադրելի մարտական խումբ մը՝ փախստականներէ կազմուած, որոնց հետ ան կը շրջէր գաւառները եւ գիւղերը, կը հսկէր տեղական խումբերու, ինչպէս եւ բոլոր գործերու կատարման վրայ:

Գաւառներու մէջ, բացի կոմիտէներէն, կային Կ. Կոմիտէի կողմէ նշանակուած շրջիկներ, որոնք շատ անգամ կ'ըլլային Կ. Կոմիտէի անդամներէն: Շրջիկները իրենց տրամադրութեան տակ ունէին զինուորական խումբեր, բայց անոնք անելի յաճախ կ'օգտագործէին զինուորական կամ թաղային խումբերը՝ իրենց հրահանգները ի կատար ածելու, կամ գիւղէ գիւղ ու գաւառէ գաւառ փոխադրուելու եւ շրջելու պարագային: Վարչական այսպիսի ձեւ ունէին [դաշտային] Վասպուրականը եւ Լեռնապարը, որոնք գրեթէ միատեսակ կազմակերպուած էին:

[Այս կազմակերպութեան նպատակն էր] վարել տեղական բոլոր գործերը:

ա) Դատական գործ.- Հայերէն ոչ որ գանգատի համար չէր դիմեր ոչ իր քիւրտ աղային եւ ոչ ալ կառավարութեան: Իրարու մէջ եղած բոլոր խնդիրները կը լուծէր գիւղի խումբը, ենթակոմիտէն, գաւառի կոմիտէն եւ կամ Կ. Կոմիտէն, իսկ ծայրայեղ պարագային՝ շրջանի շրջիկը եւ կուսակցութեան ներկայացուցիչը: Այն խնդիրների համար, որ հայերը անխուսափելիօրէն պիտի ունենային քիւրտերու կամ կառավարութեան հետ, կային Կ. Կոմիտէի տրամադրութեան տակ յատուկ մարդիկ, որոնք տեղական փաստաբաններ եւ օրէնքէ հասկըցողներ էին եւ ցուցնուքներ կուտային անփորձ գիւղացիներուն՝ իրենց դատերը շահելու կամ պակաս վնասով ազատելու համար:

Կրթական գործ.- Կ. Կոմիտէները, գաւառային կոմիտէները եւ գիւղի ենթակոմիտէները պարտական էին դպրոցներու կարգադրման խնդիրը իրենց վրայ առնել եւ պարտադրել ժողովուրդին կանոնաւոր դպրոցներ ունենալ: Ուսուցիչները կը նշանակուէին ենթակոմիտէներու եւ կոմիտէներու կողմէ, իսկ գլխաւոր դպրոցներու համար՝ Կ. Կոմիտէի համաձայնութեամբ: Եւ քանի որ դպրոցները պետութենէն ոչ մէկ նպաստ կը ստանային, անոնց մատակարարումը կը կատարուէր հոգաբարձուներու կողմէ, որոնք նիւթական միջոցներ կը հայթայթէին եւ կը կառավարէին դպրոցը:

Կային նաեւ խմորատիպ թերթեր, զորս կը հրատարակէին ուսուցիչները եւ աշակերտները Վանի եւ գաւառներու մէջ, Կ. Կոմիտէի

ուղեցոյցով: Այդ կարգի թերթեր կը հրատարակուէին Շատախ, Աղ-թամար եւ Վան, եւ կը բաժնուէին խումբերու մէջ:

Զինում.- Ինչպէս ասացի, իրաքանչիւր գիտի մէջ կը կազմակերպուէր մարտական խումբ մը, որ կազմակերպութեան հիմքը եւ ուժը կը կազմէր: Անոր անդամներու թիւը 7-15 կ'ըլլար, երբեմն աւելի: Բոլոր խումբերն ալ կազմուած էին երիտասարդներէ, եւ կարելի եղածին չափ՝ զէնք ունեցողներէ: Անոնց մէջ է որ կը տարուէր ուժեղ փրփակական՝ յեղափոխական գաղափարներու հիմնատրման նպատակով: Անոնք կը ստանային ռազմական կրթութիւն, կը սորվէին զինուորական կռիւի ձեւերը եւ կը վարժուէին նշանառութեան: Սի խօսքով՝ ասոնք մեր զինուորական ուժի կորիզները կը հանդիսանային: Խումբերու պարտքն էր յենարանը լինել կուսակցութեան եւ անոր հրահանգները կատարել, գիւղացիներու շահերը պաշտպանել հանդէպ բռնակալներու եւ շահագործողներու՝ լինին անոնք թուրք թէ քիւրտ: Խումբն էր որ պիտի գիտը պաշտպանէր յարձակումներէ. ան էր որ կ'երթար օգնութեան երբ հաւար (ահազանգ) հնչէր: Գիւղի դէկը ըստ էութեան կը գտնուէր խումբի ձեռքը եւ անոր տրամադրութեան համաձայն էր, որ կ'ընտրուէին ենթակոմիտէները:

Զէնքի հայթայթման գործը սկիզբները կը կատարուէր բացառապէս արտասահմանէն՝ Պարսկաստան-Կովկասէն, եւ միմիայն յեղափոխական խումբերու միջոցով: 1900էն սկսած՝ այդ գործը աւելի կը ձեւաւորուի եւ 1904-1908ին բոլորովին այլ կերպարանք կ'առնէ: Այլեւս ... զէնքերը կը փոխադրուին մեծ մասամբ քիւրտ եւ հայ շալակատրներու միջոցով: Երբեմն էշերու եւ եզներու կարաւանները օր ցերեկին ճամբայ կ'ելլէին Սալմաստէն եւ փամփուշտներով բեռցրած՝ ապահով կը հասնէին Վան, կամ քանի մը տասնեակ հայ շալակատրներ գիշերով կը հասցնէին զէնքերը մէկ կէտէ միւսը, եւ գործը արարտելէ ետք՝ կը դառնային նորէն գիւղացի: Այդ ձեւով, առանց աղմուկի, Վան կը կեդրոնանար մեծ քանակով զինամթերք:

Բայց այդ ռազմաթերքէն ոչ ոք կարող էր օգտուիլ: Ատիկա կ'ամբարուէր պահեստներու մէջ սեւ օրերու համար եւ կը գործածուէր միայն կռիւի, կոտորածի կամ ապստամբութեան պարագային: Ժողովուրդը կամ գիւղական խումբերը իրատուք չունէին օգտուիլ անկէ: Ֆետայիներու յեղափոխական շրջիկ խումբերը միայն պաշար կը ստանային պահեստի ռազմամթերքէն...

Պէտք էր սակայն բարարարուէին գիւղական մարտական խումբերը եւ ժողովուրդը, որոնք հետզհետէ կը զգային զէնքի կարիքը եւ անհրաժեշտութիւնը: ... 1900էն սկսած [յատկապէս,] կուսակցականի մը համար սեփական զէնք ունենալը կը դառնայ բարոյական պարտականութիւն մը, իսկ Իշխանի, Արամի եւ Վահանի ժամանակները (1904 թ.) ատիկա կը դառնայ արդէն հարկադրական պարտականու-

թին մը: Մէկ կողմէ մտրակը, միւս կողմէ քարոզչութիւնը գէնքի կարեւորութեան գիտակցութիւնը հասունցուցած էին ժողովուրդին մէջ եւ աւելցուցած ռազմանիւթի պահանջը... Կուսակցութիւնը միայն կը պահանջէր գիւղի ենթակոմիտէն եւ խումբէն, որ որոշ քանակութեամբ եւ որոշ տեսակի հրացաններ պիտի ունենայ: Հարուստները կը պարտադրուէին ունենալ իրենց սեփական գէնքը, իսկ աղքատներէն կը հաւաքուէր, ըստ իւրաքանչիւրի կարողութեան, գումար մը, որ կը տրամադրուէր գիւղի ենթակոմիտէին: [Ռազմամթերքը ձեռք կը բերուէր] քիւրտերէն, թիւրքերէն, կաշառուած ոստիկաններէ եւ զօրքէն, ու մանաւանդ հայ առետրականներէ, որոնք ամէն վտանգ յանձն առնելով՝ կը զբաղէին գէնքի առետուորով, որովհետեւ անկէ մեծ շահ կը ստանային: Ձէնքերը կ'արծանագրուէին..., որով անոնց վաճառումը կը դառնար անհնարին:

1904-1908 թուականները հայ ժողովուրդի գլխավին զինման շրջանն է... Յեղափոխութիւնը [անոր մէջ արթնցուցած էր] առնակաւորութիւնը եւ գէնքի սերը, զոր ունէին դրացի քիւրտերը եւ կամ Սասունի հայ ժողովուրդը... Բայց զանգուածը կը մնար տակաւին խեղճ ու անատամ: Իշխանի ու Արամի գալէն ետք, այդ զանգուածներու սպառնազինման գործը առաջ կ'երթայ մեծ թափով... Պէտք էր ժողովուրդը վարժեցնել նաեւ գէնքի գործածութեան եւ եփել կռուի ու փորձառութեան մէջ: Այդ ուղղութեամբ կ'աշխատէին շրջիկ խումբերը, հին ֆետայիները, շրջիկները, Կ.Կ.ի անդամներն ու ազատ գործիչները...

Ֆինանսական. - Կուսակցութեան ֆինանսներու աղբիւրներն էին՝ դուրսէն ստացուած գումարներ, անդամավճարները, տուգանքները, վանք ու եկեղեցիներու եկամուտները եւ հանգանակութիւնները:

Բոլոր գումարները մարմիններու միջոցով կը գանձուէին ըստ Կանոնագրի, ու թէեւ մեծ գումարներ չէին, բայց կը բաւարարէին կուսակցական պէտքերը, մանաւանդ որ գիւղերու մէջ խումբերը կը կերակրուէին ձրիաբար, իսկ բոլոր գործիչները կ'աշխատէին անվարձ եւ կ'ապրէին իրենց հաշուին: Եթէ, փախստական լինելու հետեւանքով, ռեւէ մէկը չէր կրնար իր աշխատանքով ապրիլ, անոր կուտային միայն ուտելիքի դրամ, որ մեծ բան մը չէր:

«Հայ Յեղափոխականի մը Յիշարակները», ք. հայրոք, Ռուբէն

26

[ՏԱՐՕՆԸ՝ 1890ԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԷՆ ՄԻՆՉԵՒ 1904]

Տակաւին Արարոյի ժամանակներէն, Դուրան-Բարձրաւանդակի շրջանին մէջ երկու ուղղութիւն գոյութիւն ունէր. մէկը կարելի է որակել՝

ժողովրդական-յեղափոխական, իսկ միար՝ ֆետալական-զինուորական: Այդ ուղղութիւնները զուգընթաց գոյութիւն կը պահէին մինչեւ վերջերը, երբեմն իրարու հակառակ գործելով, երբեմն ալ ներդաշնակ քալելով:

Առաջին ուղղութիւնը... այժմ, Սերոբի եւ Գուրգէնի մահէն ետք, կը վերակենդանանար յանձին Արմենակ-Հրայրի: Այս ուղղութեան հիմնական գաղափարն այն էր որ ժողովուրդն է միակ հիմքը ժողովրդական լայն շարժման մը, որուն համար ան պէտք է լրջօրէն պատրաստուի եւ կազդուրուի... Այդ ուղղութիւնը կը ջանար ստեղծել հզօր կազմակերպութիւն մը՝ իր ազատագրական նպատակները իրագործելու համար... Այսպէս մտածողները վնասակար կը գտնէին մասնակի կռիւներն ու ընդհարումները. ատոր համար ալ դէմ էին փախստականներու եւ ֆետալիներու ներկայութեան...

Այս ուղղութիւնը կը բխէր Դաշնակցութեան սկզբունքներէն եւ հիմնուած էր ժողովրդական ուժերու հանդէպ եղած հաւատին վրայ... Ժամանակի ամենէն աչքի ինկող մտաւորական եւ կուսակցական գործիչները այս ուղղութեան կը հետեւէին, բայց անոնց մէջ ամենէն հանգուածն ու նշանատրը Արմենակն էր: ...

Անոր օրով Դաշնակցութիւնը իրապէս կը դառնայ կրօն. եկեղեցիներու մէջ նորընծայ դաշնակցականները խաչի եւ սուրի վրայ կ'երդնուն: ... Արմենակ կը պահանջէ ըլլալ անձնագոհ. մահացու մեղք կը համարէ ո՛չ միայն դաւաճանութիւնը, այլեւ բացխօսիկութիւնը, անգաղտնապահութիւնը: Կը պահանջէ յանձն առնել յեղափոխական նահատակութիւնը... Անգամ կուսակցական շարքերու անհատական կեանքը կը ջանայ յեղաշրջել Արմենակ... Ան կ'ըսէ, թէ յեղափոխականը պիտի մեռնի կամ զնդակով, կամ կախաղանով, կամ բանտի մէջ, եթէ ան հաւատարիմ է իր տուած երդումին: Ամէն դաշնակցական պէտք է աչք առնէ վաղահաս մահը, որուն պատրաստ պիտի ըլլայ ամէն վայրկեան: Ինչի՞նչ պէտք անձնական ապահովութիւնն ու բարօրութիւնը, երբ յեղափոխական կեանքը ենթակայ է պատահականութեան: Ինչի՞ պէտք է նոյնիսկ անհատական կամ ընտանեկան սերը... ընդհակառակն, այդպիսի սեր մը միայն արգելք է ազատօրէն գործելու եւ հանգիստ մեռնելու...

Գիղական շորեր հագած՝ տերվիշի մը պէս, [Արմենակ] կը թափառի գիղէ գիղ. կը հմայէ ժողովուրդը եւ կը յաջողի կազմակերպել զայն վերէն մինչեւ վար, ինք դառնալով կազմակերպութեան կեդրոնը: Անգամ վատերը չեն համարձակիր ձեռք տալ այս խորհրդաւոր մարդուն, չեն յանդգնիր մատնել զայն կամ որեւէ վնաս հասցնել անոր...

[Արմենակն է], որ Սերոբի մահէն ետք շրջաններու մարմիններէն ժողով մը կը հրաւիրէ կազմակերպութեան դիրքը եւ ընելիքը նոր պայ-

մաններու մէջ որոշելու համար: Իր նպատակն էր յուսալքունը կասեցնել եւ զարկ տալ ժողովուրդի ներքին կազմակերպման, վերջ տալով միաժամանակ ֆետայիներու շրջուն խումբերու գոյութեան, գորարգելք կը նկատէր յեղափոխութեան բնականոն զարգացման: Այս ժողովին մէջ Արմենակ ճնշող մեծամասնութիւն մը շահեցաւ եւ յաջողեցաւ իր տեսակէտներու յաղթանակը ապահովել:

... Անդրանիկ կատարեալ հակապատկերն էր Արմենակի ..., հակառակ ըլլալով թէ՛ անոր սկզբունքներուն, եւ թէ գործելակերպին... Մինչ Արմենակ լայնօրէն կազմակերպուած ժողովրդական յեղափոխութեան կը հաւատար, Անդրանիկ ընդհակառակն՝ ժողովրդական կազմակերպութիւնները անվստահելի կը նկատէր ու իր ամբողջ յոյսը կը կապէր ընտրեալ ֆետայիներու յեղափոխական գործունէութեան հետ: Մինչ Արմենակ կը քարոզէր, թէ բոլոր յեղափոխականները՝ գործիչներն ու ֆետայիները սոսկ ծառաներն են ժողովուրդին եւ ժողովրդական կազմակերպութեան, Անդրանիկ ընդհակառակն կ'ըսէր, թէ ժողովուրդն է ֆետայիներուն համար, որոնք պէտք է գործեն բոլորովին ազատ ու անկախ ժողովուրդի կամքէն, մինչեւ որ հասնին իրենց մեծ նպատակին. ատկէ յետոյ է, որ ժողովուրդը պիտի օգտուի յեղափոխութեան բարիքներէն... Մինչ Արմենակ կը պաշտպանէր այն տեսակէտը, թէ երկրի եւ կուսակցութեան տէրը ժողովուրդն ընտրուած կոմիտէներն ու Կ. Կոմիտէները պիտի ըլլան, ըլլան անոնք պարզ քաղաքացիներ թէ ֆետայիներ՝ միեւնոյնն է, եւ բոլորը անխտիր, թէկուզ ամենէն նշանաւոր հերոսներն ու հեղինակութիւնները, անվերապահօրէն պիտի ենթարկուին այդ ընտրեալ մարմիններու կամքին,- Անդրանիկ ընդհակառակն կ'ըսէր, թէ իրենց տուններուն մէջ նստած կոմիտէները չեն կրնար ղեկավարել լեռներուն մէջ թափառող ֆետայիները. անոր կարծիքով կոմիտէները պիտի ըլլան ֆետայիներուն համար եւ ասոնց ենթակայ, իսկ ֆետայիներու պետին պիտի ենթարկուին թէ՛ բոլոր ֆետայիները եւ թէ՛ ամբողջ ժողովուրդը:

... Անբնական կացութեան վերջ տալու համար [է որ] Արմենակ ժողովի կը հրաւիրէ [քաղաքի եւ] Մշոյ դաշտի յեղափոխական առաջնորդներն ու կոմիտէի անդամները... [Երկրորդ ժողով մը՝ Սասնոյ բոլոր գիւղերու ներկայացուցիչներու եւ ֆետայիներու մեծ մասի հետ] տեղի կ'ունենայ Շէնիկի մէջ: Արմենակ կը պահանջէ խուսափիլ ամէն տեսակ արկածախնդրական քայլերէ ու ցնցումներէ եւ համբերութեամբ պատրաստուիլ ժողովրդական ուժեղ շարժում մը առաջ բերելու. համար: Բայց ֆետայիները... կը բողոքեն այդ մտքերուն դէմ: Անոնք կը պահանջեն, որ Արմենակը փախստական դառնայ եւ գործերը վարէ իրենց ուզածին պէս... Արմենակ խօսք կուտայ, որ այլեւս երբեք չվերադառնայ նստակեաց կեանքի, եթէ ֆետայիներն ալ խօսք

տան իրեն անպայմանօրէն ենթարկուելու իր կամքին: Եւ անմիջապէս կը պահանջէ, որ [անոնք վերջ տան իրենց գործունէութեան]:

... Ֆետայիները [կը գայրանան եւ կը փորձեն բռնաճարձ Արմենակին վրայ՝ հակառակ իր զսպութեան: Բայց գիղացիները կը զինաթափեն զանոնք:]

... Անդունդ բացուած էր ֆետայիներու եւ Արմենակի միջեւ: Ֆետայիները զինաթափուած էին, իսկ Արմենակը փախստական էր դարձած: Կառավարութիւնը այժմ է, որ կը հասկնար՝ ո՞վ է իսկական ղեկավարը Դուրան-Բարձրաւանդակի յեղափոխական ժողովուրդին...

Կուսակցութեան մէջ բացայայտ երկպառակութիւնները հարթելու համար ժողով մը կը գումարուի Դերգեվանք գիղի մէջ, ուր ... հաշտութեան եզր մը կը գտնուի. զէնքերը կը վերադարձուին ֆետայիներուն: Այսուհանդերձ Արմենակ լաւագոյնը կը նկատէ հեռանալ ղէպի Սալնոյ Չոր եւ Վասպուրական, եւ այն կողմերէն նոր ղեկավար մը գտնել Դուրան-Բարձրաւանդակի համար:

... Սինչ [այդ], Պարսկաստանի վրայով Վան կը հասնի Վահանը: Գրեթէ միաժամանակ, Վարդգէսի հրաւերով Արմենակ-Հրայրն ալ... կ'անցնի Վան: Տեղի կ'ունենայ ընկերներու կարեւոր խորհրդակցութիւն մը, որ կը մշակէ ընդհանուր ծրագիր ... եւ կը լիազօրէ Վահանն ու Հրայրը երթալ Դուրան-Բարձրաւանդակ՝ ղեկավարելու համար կուսակցական ընդհանուր գործերը:

... Վահանը, որ իր անցեալով կուլտուրական գործիչ մըն էր եւ մեղմ ու հանդարտ բնաւորութեան տէր, ամբողջովին կ'իրացնէ Հրայրի գաղափարները: Ան եւս այն համոզումն ունէր, որ ժողովուրդը տակաւին անպատրաստ է զէնքով անմիջապէս կռուելու կառավարութեան դէմ... Կը կանգնի այն տեսակէտի վրայ, որ պէտք է ամբողջովին ժողովուրդի հաւատը ղէպի իր բարոյական ու ֆիզիքական ուժը. ստեղծել ժողովրդական լայն ու խորունկ միութիւն մը՝ հիմնուած շահերու գիտակցութեան եւ ինքնապաշտպանութեան բնագոյի վրայ. պէտք է բարձրացնել ժողովուրդին բարոյական, ֆիզիքական եւ մտաւոր մակարդակը... բարելաւել անոր տնտեսութիւնը, նախապատրաստել ժողովուրդը զէնքով կռուելու կառավարութեան դէմ, բայց ոչ թէ միմակ, այլ միացած միւս հարեան ցեղերուն հետ:

... Եւ այն, ինչ որ Հրայրը չէր յաջողած իր կտրուկ միջոցներով, առանց մեծ դժուարութեան կ'իրականացնէ Վահան, անցնելով զինուորականներու գլուխը: Վահան կը վերցնէ զինուորական դիկտատուրան շատ խաղաղ ձեւով... Ան կը կարգադրէ, որ ֆետայիները ցրուին իրենց գիղերը, եւ ամէն մէկը իր հայրենի տան մէջ պատրաստուելով աննկատելի դառնայ կառավարութեան համար: Ատոնք նորէն կը մնան ֆետայիներ, բայց կը հաշուին իբր պահեստի ուժ:

Վահան պետք էր [դէպի Վասպուրականի շրջանը] հեռացնէր նա-
եւ կառավարութեան աչքի փուշ դարձած Գէորգ Չաուշը, Գուրան-
Բարձրաւանդակի մարմնով փոքր, բայց հոգիով եւ հռչակով մեծ այդ
մարդը...

Այսպէսով Վահանը կը քանդէ զինուորական գերիշխանութիւնը
Սասունի մէջ, իր անմիջական հսկողութեան տակ կ'առնէ փոքրաթիւ
ֆետայիները, եւ առանց աղմուկի կը պատապարտի անոնց հետ մի-
ասին Սասնոյ լեռներուն մէջ, օգտագործելով իր զինուորները իբրեւ
հսկիչ ուժեր զԷնքի պահեստներու եւ փոխադրութեանց պահպան-
ման...

«Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», գ. հասրոյ, Ռուբէն

27

[ՏԱՐՈՆԻ ԿԱՌՈՅՅՆԵՐՈՒ ԹՈՒԼԱՅՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ]

Գարմէնի [նամակին] լուրերը մտահոգիչ էին, երբ կը գրէր. *«Խան-
դավառ բազմութիւնները միացած են Առաջնորդարանի եւ մեր շուր-
ջը, բայց զարմանալիօրէն միակ հակայեղափոխական եւ անկար-
գապահ փարրը կը ներկայացնեն մեր նախկին շարքերը, մեր նախ-
կին ֆետայիները, մեր հերոս համարուածները. անոնք թէեւ խոչըն-
դոյր չեն հանդիսանար եղած կարգադրութեանց, բայց այդ կարգա-
դրութիւնները կեանք չեն առնէր եւ մեռած փառ կը մնան: Հին դաս-
փարսակութեան հերտեանք պիտի համարել նոր պայմաններին չը-
հանդուրժելը...»*

1906ին, Գարմէնը ձգած էր իր վեղարը եւ նետուած յեղափոխա-
կան ասպարէզ... Այս քայլը չէր կատարուեր անձնական հաշիւներէ...
Նրան թելադրողը այն գիտակցութիւնն էր, թէ հոգեւոր ասպարէզից
կայ աւելի լայն ասպարէզ հայրենիքին օգնելու համար: [Ուշ Երկիր
անցնելը] միշտ տուաւ Գարմէնին տեսականօրէն ծանօթանալու
Տարօնի գործերուն, բայց չունենալով հնարաւորութիւն անձամբ շրփ-
ուելու, իրերն ու մարդերը մնում էին նրա համար երեսակայական...
Նա յեղափոխական գործին մօտեցած էր դիւանագիտօրէն, եւ եր-
բեմն, ինչպէս կ'ըսեն վարդապետները, մատներու ծայրով, խրատով
ու դարձուածքներով: Հէնց այդ ձեւերն են, որ ինչքան ալ յարգելի եւ
ընդունուած լինեն այլ ասպարէզներու մէջ, անհասկնալի ու վնասա-

կար են յեղափոխական ասպարեզի մէջ, ուր գործին պէտք է մօտենալ այնպէս, որ գործը դողայ քեզմէ. մօտենալ պարզ, ուղիղ կերպով, ամբողջ հոգիով. ոչ միայն խօսելով ու համոզելով, այլ գործելով եւ անձնական օրինակով...

Սահմանադրութենէն յետոյ ալ Գարմէն գնաց իր սովորած ճամբայով: Հէնց այդ ճամբան տարաւ զայն սխալմունքներու եւ դժուարութիւններու ցանցին մէջ:

Այս կէտը լաւ հասկնալու համար, պէտք է [յիշել] թէ հայոց Առաջնորդարանը Տաճկաստանի, մանաւանդ Մուշի մէջ ամփոփումն էր եւ ղեկավարը ազգի մշակութային եւ հոգեկան բոլոր գործերուն:

[Մախապէս] Առաջնորդարանը չունէր իր որոշումները, բաղձանքները իրագործելու միջոցներ, ոչ նիւթական, ոչ վարչական: Անոր բոլոր հրահանգները կը մնային թուղթի վրայ, եւ կամ կ'օգտագործուէին այն չափով, որ կառավարութեան ձեռնտու էր: Ան իր զանգրածէն կտրուած մի մարմին էր, եւ եթէ շփում իսկ ունենար, կրնար միայն լսել եւ լսածը գեկուցանել: Ան բարոյական հեղինակութիւն կարող էր լինել, բայց մարմնաւոր իշխանութիւն՝ ոչ: Անդամալոյծ, լտող, խրատող, քարոզող, ձեւակերպող, որոշում տուող, հրահանգող, գեկուցող, բայց ոչ թէ իրագործող... Առաջնորդարանը դարձած էր զանգուածի աչքին մի աւելորդ կամ կաշկանդուած մարմին: Ժողովուրդը իր աչքը դարձուցած էր այլ կողմ՝ դէպի Կազմակերպութիւնը, որ քիչ կը խօսէր, բայց ինչ որ որոշէր՝ կ'իրագործէր, եւ կ'իրագործէր իր օգտին, ոչ թէ կառավարութեան: Մեր հմայքը մեծ էր, մեր ուժը՝ հզօր, եւ կարող էինք, անտեսելով իսկ ազգային մարմինները, ընել այն ինչ ցանկանայինք: Առաջնորդարանի Քաղաքական, Կրօնական Ժողովները, Ուսումնական, Դատաստանական, Վանական, Տնտեսական եւ այլ խորհուրդները կամայ-ակամայ պիտի ընէին այն ինչ իրենցից դուրս գտնուող Կազմակերպութիւնը կը թելադրէր, եթէ չէին ուզեր քարկոծուիլ ժողովուրդին կողմէ...

Այսպէս օրինակ, առանց Առաջնորդարանի ժողովներու գիտութեան ու մասնակցութեան, կը կազմէինք շրջանային ժողովներ, կ'անցընէինք որոշում, օրինակ՝ իւրաքանչիւր բնակելի վայրում, ուր 30 տնից աւելի բնակիչ կայ, ժողովրդական տուրքերով բանալ դպրոց, ստիպել որ ժողովուրդը անխտիր, Կիրակի օրերը պատարագէն ետք, քահանային գլխատրութեամբ եւ դաւուլ-գուռնայով, աշխատի դըպրոցական շէնքի շինութեան վրայ. բոլոր *վազրֆ* կալուածներու հատոյթը յատկացուի 50 առ հարիւր եկեղեցիին եւ 50 առ հարիւր դըպրոցին. վանքերու եկամուտով բացուի որբանոց եւ որոշ տոկոս ալ յատկացուի զինամթերքի. միլիթագիմութիւնը վերջ գտնէ եւ գիւղերն ու վանքերը իրենք գնեն *աշար*, տալով պահանջուած տուրքը, ա-

ռանց միլիթագիմներու միջամտութեան. դատերը տեսնուի՞ն գիւղական ընտրովի դատարաններում եւ կոմիտէներու ձեռք. առաջնորդ, վանահայր, քահանայ, ուսուցիչ եւայլն նշանակուի՞ն համաձայն գիւղի կամ շրջանի որոշման, ինչ որ կը նշանակէր մեր գիւղական կոմիտէներու կամ ենթակոմիտէներու որոշում, եւայլն, եւայլն:

Այս որոշումները կիրագործուէին արագ, առանց տատանման ու հակաճառութեան, քանի որ «կոմիտէի վճիռ» էր: Այս վճիռը անքննադատելի էր նաեւ Առաջնորդարանի կողմէ, քանի որ դրա ետեւը ուժ էր կանգնած: Այս ձեւը ի հարկէ բռնակալական էր, մենատիրական. բայց օգտաւէտ էր. բաւական էր միայն, որ վճիռը ըստ էութեան սխալ չլիներ, եւ գործադրուէր արագ ու անթերի:

*
* *

Հասկանալի պէտք է համարել [իին յեղափոխականների] ցասումը նոր դրութեան հանդէպ: Սահմանադրական շրջանին, յետաձրգելով մեր քաղաքական ձգտումներու իրագործումը՝ մենք հանգրստեան կոչած կը լինէինք մեր յեղափոխական ոգին, անորոշ ժամանակով: Հիմք ու նպատակ ունենալով Սահմանադրութեան պահպանումը եւ հայ ժողովուրդի կազդուրումը -մտաւորաւորապէս ինչպէս տնտեսապէս - մենք կը դառնայինք մշակութային միութիւն մը: Այս վարքագիծը պիտի փոխէր Դաշնակցութիւնը ներքնապէս եւ արտաքնապէս, նրա աշխատանքներու էութիւնն ու նրանց կիրառման մեթոտները... Մի խօսքով՝ Դաշնակցութիւնը կը կերպարանափոխուէր, մետամորֆոզի կ'ենթարկուէր...

... Գարմէն միացուց Առաջնորդարանի եւ կուսակցութեան աշխատանքները: Սահմանադրութեան առաջին տարին դիւրին էր այդ միութիւնը իրագործել, քանի որ խիստ ուժեղ էր Դաշնակցութիւնը: Բացի դրանից՝ արդէն Քաղաքական Ժողովի անդամներուն մեծամասնութիւնը դաշնակցականներ էին եւ Կեդրոնական Կոմիտէի համարեա սամբողջ կազմը կը գտնուէր ազգային ժողովներու մէջ: Առաջնորդական աթոռը թափուր էր, բայց կար փոխանորդ, Ս. Կարապետի վանահայր Վարդան վարդապետը, կամ նրան փոխարինող Ջորիկ գիւղի քահանայ Տէր Մուշեղը, երկուքն ալ դաշնակցական, առաջինը՝ Կ.Կ.ի անդամ: Այսպէտով, Գարմէն դարձաւ փաստական առաջնորդը, իսկ ազգային մարմինները՝ նրա գործակատարները:

... Առաջնորդարանն էր, որ պիտի մտածէր պետութեան բարեխնամութեան մասին, պիտի մտահոգուէր եկեղեցական, վանական, դպրոցական խնդիրներով, հսկէր նրանց կալուածներուն, կարգադրէր կրօնական, քաղաքացիական վէճերը, ուսուցիչներ գտնէր դրպ-

րոցներու, հոգար նրանց կարիքները, միջնորդ դառնար կառավարութեան մօտ՝ հարստահարեալներու պաշտպանութեան համար, եւն...

Առաջնորդարանը ոչինչ կորցրեց այս նոր դրութիւնից, ընդհակառակն՝ աւելի օգտուեց: Գարմէնը այնտեղ տարաւ իր էջմիածնական կրթութիւնը եւ կաթողիկոսական դիւանապետի փորձառութիւնը: Միւս կողմից՝ լինելով Դաշնակցութեան ներկայացուցիչը՝ իր հետ տարաւ Դաշնակցութեան բարոյական ու ֆիզիքական ուժը:

Գարմէն ... ջանացած էր ամէն կերպ վերջ տալ այս կամ այն հասանքի գերակշռութեան, համախմբել հասարակական ամէն խաւ Առաջնորդարանի հիմնարկութեան շուրջ եւ լծել գործի: Խիստ բարի եւ ըստ երեւոյթին անվիճելի: Բայց այդ նպատակին հասնելու համար, նա հարկադրուած պիտի լինէր պայքարիլ Դաշնակցութեան բացարձակ մեծամասնութեան դէմ, թէւ ինք Դաշնակցութեան ներկայացուցիչն էր, եւ արիեստականօրէն նուազեցնել դաշնակցականներու թիւը եւ ուժը ազգային մարմիններու մէջ. որովհետեւ եթէ ընտրութիւն կատարուէր այդ երկրում, առանց բացառութեան բոլոր ընտրուողները պիտի լինէին դաշնակցականներ... Գարմէն առանց ընտրութեան հրաւիրած էր ազգային մարմիններու մէջ տարբեր խաւերից տարբեր տրամադրութեան տէր մանր ու խոշոր հոսանքներու ներկայացուցիչներ: Դաշնակցութիւնը արիեստականօրէն ձգուած էր փոքրամասնութեան մէջ. թէւ տեղ ուներ..., բայց նա դրուած էր իր լիքը կուժով դատարկ ու մրոտ կճուճների կողքին: Սասնոյ Մեմալի Մանուկը, որ հոգին ու ըմբոստութեան ղեկավարը կը համարուէր Սասնոյ ժողովուրդի, բերուած դրուած էր կողքին Մշոյ Նազարէթ Էֆենտիի, որ կը ձայնակցէր կառավարութեան եւ Սասունի գոյութիւնը չարիք կը համարէր: Կառնենու Սկրտիչը, որ ամբողջ կեանքում Դաշնակցութեան շրջիկն էր եղած եւ կեանքը բանտերում մաշած, այժմ նստած էր Աբօ Մոսոյի կողքին, որին կը հետաքրքրէին միայն արշիւնը, չիթը, ոսկին... [կամ] Միսաք Էֆենտին, որին միակ բարեմասնութիւններն էին լեզուագարութիւնը, *Էնթրիկը*, ճարպիկութիւնը՝ դասաւորելու հարցերը ըստ անձնական շահերի...

Նոյն ձեւով էր կազմակերպուած Կրօնական ժողովը...

Այսպէսով դժգոհ էին Առաջնորդարանի մէջ հրաւիրուած աւանդապաշտ դաշնակցականները. դժգոհ էին մինչեւ յետին գիւղերի շարքայինները, անոնց խմբապետները, ենթակոմիտէները, անոնց կոմիտէները, այսինքն ողջ Կազմակերպութիւնը: Գոհ կ'երեսային միայն լեզուանի անհատներ, որոնք բախտով ինկած էին հաւասար իրաւունքի ու ղեկավարութեան մէջ մի հզօր Կուսակցութեան, եւ դառած մեծամիտ, բայց շողոքորթ: Անոնք որոշումներ, հրահանգներ կուտային, այս կամ այն գործի համար, ծրագրի դէգեր կը բարձրա-

նային, բայց իրագործումը չկար. կարծես առաջուան Կազմակերպութեան կամքը եւ ուժը կորած էին... Ոմանք կ'ըսէին՝ ուրեմն Գաշնակցութիւնը չէ եղած այն, որ կ'երեւակայէնք՝ կամք ու գործ, անհնարինը հնարաւոր դարձնող. ան խաբուսիկ է եղած: ... Ոչ ոք չէր ուզեր թափանցել այդ Կազմակերպութեան հոգեբանութեան մէջ: **Չէին հասկնար, որ անոր համար Առաջնորդարան, վանք, մշակոյթ՝ միայն պատուանդաններ էին եւ ոչ թէ նպատակ,** իսկ նպատակը՝ իր քաղաքական ձգտումներն էին, որոնք արգիլուած պտուղ էին դարձած... **Չէին հասկնար, որ ինք շնորհ բաժանող էր եւ ոչ թէ շնորհ վաստկող, Առաջնորդարանի մէջ իր ձայներով քուէարկող... Չէին հասկնար, որ ինք ծառայ չէ անհատների, ով ալ անոնք լինին, որ հրաւիրուի ու կատարէ ծրագիրները, որոնք իրմէ չեն բխիր:** Անոր մեխանիզմը ոչ թէ վերէն վար նշանակովի մարմիններ էին, ինչպէս պետական, ազգային մարմինների մօտ, այլ վարէն վեր ընտրուած մարմիններ, ներկայացուցիչներ, ժողովուրդի «ստորին» խաւերի կարիքները բաւարարող:

... Բաւ է այսքանը պարզելու մի երեւոյթ, որ չէր սպասուեր ոչ ոքի կողմէ, եւ զարմանք կը պատճառէր: Այս ... երեւոյթները ... կրնային ընդհանրացուիլ եւ դաս դառնալ բոլորին համար, կրնային հասարակական գործերի համար օրէնքներ տալ...

*
* *

Սահմանադրութեան սկզբնական շրջանում [ֆետայիները] մի երկու ամսի չափ արժանացան պատուի եւ փառքի, բայց շուտով դարձան աւելորդ իր, ժանգոտած հրացան՝ ձգուած մութ անկլինի մէջ: Կառավարութիւնը կը պահանջէր եւ Իթքիատը կը համոզէր. «*Հասկընալի էր ֆետայիների եւ մարտական խումբերի գոյութիւնը, երբ հին ռեժիմն էր: Այժմ սահմանադրութեան շրջանում նրանք պէտք է կամ զինաթափուիին ու դառնան գիւղացի, կամ մըրնեն զինուորական ու ոստիկանական կազմի մէջ, ինչպէս Էնվերի ու Նիսպի ֆետայիները: Կառավարութեան մէջ կառավարութիւնը կամ զինուորութեան մէջ զինուորութիւնը անհանդուրժելի է»:*

Այս առարկութիւնը տրամաբանական էր, բայց ճիշդ չէր: Կառավարութեան եւ Իթքիատի նպատակը չէր հայ մարտական ուժերը լծել պետական կառքին, այլ, պատրուակ բռնելով սահմանադրութիւնը, զինաթափել եւ առնականութիւնից զրկել հայ ժողովուրդը: Հայ ժողովուրդն ալ յոգնած էր. լաւ թէ վատ՝ մի նոր ռեժիմ էր եկած. մեծ յոյսեր կային. ո՛վ գիտէ, գուցէ ճիշդ էին թուրքերի ասածները. *թուի* ու *նասպիսսա* չունէինք, ի՞նչ պիտի ընէին այս ֆետայիները... կը

մտածելին հայերը եւ կամաց-կամաց երես կը դարձնէին ֆետայիներէն: Փա՛ռք Աստուծոյ, պլան-թալանը պակսած է, ամէն մարդ իր պոչը քաշած, առիթ չտանք, թող մեր ճժերը զինաթափ լինեն եւ պապենական բահն ու փետատը ձեռք առնեն: Խաղաղութիւն, զինաթափութիւն եւ կառավարութեան վստահութիւն նշանաբանները իշխող էին հոգիների վրայ:

Մարտական ուժերի տերն ու տիրականը պիտի լինէր Դաշնակցութիւնը. բայց ան պլ մտած էր ազգային գործերի մէջ, մաս էր դարձած Առաջնորդարանի, դաշնակից էր Իթթիհատի. քաղաքականութիւնը կը հարկադրէր «երես չտալ ֆետայիներին», ուժ չտալ մարտական կազմակերպութեան, ինչպէս սովոր էր Տարօնի աշխարհը:

Այս հանգամանքը առաջ բերած էր դժգոհների մի նոր դասակարգ. ազատութեան համար մարտնչողները, քրտինք-արիւն թափողները այսօր դարձած էին Սահմանադրութեան հակառակորդներ...

*

* * *

... Նոր «հերոս»ներ ելած էին, որ պէտք էր զատել անանուն հերոսներէն ... Պէտք էր եւ կուսակցութիւնը զտել իր մէջ մտած անհարազատ տարրերէն, ինչ որ կ'երեսայ շրջանային ժողովներու արձանագրութիւններէն...

Իբրեւ նմուշ բերենք Դուրանի Ովասիս շրջանի (քսան գիւղերու) ընկերական ժողովի որոշումներէն քանի մը հատուածներ.

- «1909 Ապրիլ: Երբ նահիկին ռեժիմի օրօք դրութիւնը աւելի ծանր էր, իւրաքանչիւր գիւղի մէջ 5-10, առաւելն 20 անչէ բաղկացած խումբեր կային: Բայց Կ. Կոմիտէի հրահանգով շրջանս եկաւ Ընկ. Շաւարշը եւ շրջանս կազմակերպեց իր վկայականին մէջ ցոյց արուած կազմակերպական նոր շեւի համաշայն: Բայց այդ կազմակերպական շեւը ցաւալիօրէն եւ ինքնաբերաբար յեղափոխութեան դուռը բաց արաւ մութ ուժերու եւ թայֆայական հովերով փարրոտողներու առաջ: Մեր փափաքն է, որ ներկայումս գիւղերու մէջ եղած խումբերը սոսկ գիւղացիական խումբեր ըլլան, իսկ դրանց մէջէն ընկրդիւն եւ կազմուիւն իսկական յեղափոխական խումբեր...

- «Սալնոյ Չորի (...) շրջանակային խորհրդակցական ժողովը, դէմ ըլլալով Կ. Կոմիտէի մշակած ծրագրին, որով 2000-5000 [սևդամ հաշուող] գիւղացիական միութիւններ ունեցող շրջանները կրնային դաշնակցական կոմիտէ սրեղծել, կը սահմանափակէ այդ թիւը 200-500ով միայն՝ նկատի առնելով յեղափոխական խումբերու թիւը...

- «Հարք-Ապահունիքի շրջանները... 1909 Յուլիսին, յանուն ներկայացուցչական ժողովի, Մարզպետի սպորագրութեամբ կը յայտարարեն.-

*Կազմակերպությունը թող լինի քանակով սակաւ, որակով լաւ:
Արարաւոր ... անհարկները հեռացնել կազմակերպութենէն:
Ներկայ քառասային կացութեան վերջ տալու է...»*

Քառասային կացութիւնը առաջացած էր անկէ՝ որ Գաշնակցութիւնը փառաբանող ժողովուրդը ամբողջութեամբ համարուած էր կուսակցական: Անկէ առաջ կազմուած գիւղացիական, բանուորական միութիւնները, որոնք համակիր էին կուսակցութեան, ստացած էին ոչ միայն իրենց վարչութիւնները ընտրելու եւ ընտրուելու իրաւունքը, այլեւ դարձած էին կուսակցութիւնը ներկայացնող մարմինները: Որով՝ կուսակցական շարքերը եւ մարմինները այլեւ դեր եւ անելիք չունէին եւ ոչ ալ կրնային ազդել այդ ընդհանուր համայնական կազմի ընթացքին, բարոյականութեան եւ գործերուն վրայ:

1909էն այդ հարցը հրատապ դարձաւ եւ, ինչպէս որ վերեւի մէջբերումներէն կը նկատուի, «*կուսակցութեան զորումի հարցը*» հիմնական աշխատանք էր դարձած:

Բայց կարելի՞ էր կուսակցութիւնը զտել, բիրեղացնել: Շատ դժուար հարց էր: ... քանակի բարձրացումը կատարուած էր ի հաշիւ որակի անկման: Եւ երբ օրկանիզմի մը մէջ կը մտնէ միբրոպը, ան կը չէզոքացուի շատ երկար ժամանակամիջոցում. կը վերջանայ վտանգաւոր ախտահանումով, վտանգաւոր անդամահատութեամբ, որ յաճախ մահաբեր կ'ըլլայ:

Մարգալետի ակնարկած մաքրագործման ձեւը ընդունուեցաւ եւ գործադրուեցաւ: Բայց այդ մաքրագործումը տեսց տարիներ, ինչ որ պատճառ պիտի դառնար ներքին ցնցումներու եւ պիտի յանգէր «համայնական» ձեւի հեղինակներէն Գարմէնի արտաքսման եւ բիրեղացումը հետապնդող Սիմոն Չաւարեանի վիատումին եւ հեռանալուն Գուրան-Բարձրաւանդակէն...

«Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», գ. հարոր, Ռուբէն

28

[Հ.Յ.Գ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՅՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ՊԱՀՈՒՆ ՈՒ ԱՆԿԷ ԵՏՔ]

Հ.Յ.Գ. Ընդհանուր ժողովը ընտրած էր Բիրոսն եօթը հոգուց եւ [ցուցմունք էր տուած] կուսակցութեան կանոնագրին մէջ մտցնելով 65րդ յօդուածը.-

«Կառավարութեան դաշնակցական անդամները միաժամանակ կուսակցական որեւէ մարմնի անդամ չեն կարող լինել»:

Ընդհանուր ժողովը, այս օրէնքը ընդունելով, փաստօրէն բիրոյական իրաւունքից զրկում էր Բիւրոյի չորս անդամներին [որոնք պետական պաշտօնով զբաղած էին], կամ դրանով հրահանգում էր նրանց թողնել պետական պաշտօնները եւ վերադառնալ Բիւրոյի կազմի մէջ: Բայց կարելի չեղաւ [նրանց Բիւրոյի մէջ յետ կանչել]...

*
* * *

[Ժողովը, ապա,] համաձայնեցնելու համար կուսակցական մեքենան պետական վարչական ձեւին եւ միաժամանակ վերջ տալու համար հատուածական վնասակար երեւոյթներին, որոշեց բարեփոխումներ մտցնել կուսակցական Կանոնագրի մէջ: ...Կազմակերպական Կանոնագրով որդեգրեց գիղական, թաղային, գաւառակային, գաւառային եւ նահանգային կազմակերպման ձեւը:

[Բայց, յատկապէս,] Բիւրոյի վրայ պարտականութիւն էր դրում հիմնովին վերակազմել Հայաստանի մէջ եղած կազմակերպութիւնը: Հէշտ էր որոշում տալը, բայց բաւական դժուար՝ կեանքի մէջ իրագործելը, մանաւանդ Երկրի կազմակերպութեանց վերաբերեալ կէտերը, [տաճկահայերի եւ ռուսահայերի միջեւ առկայ հակոտնեայ տրամադրութիւնների պատճառով]

... Ռուսահայ մասսան տաճկահայերին կը համարէր եկուոր, գաղթական... երբեմն եւ՝ բռն... Իսկ տաճկահայը, գլխաւորապէս Վանի եւ Պիթլիսի վիլայեթների ժողովուրդը, այն գիտակցութիւնն ունէր, որ ձեռք բերուած ազատութիւնն ու անկախութիւնը իւր արինի գնով եւ իւր աշխատանքով է վաստակուած, ու նախանձով կը դիտէր Նոր-Բայազէտի կամ Շիրակի ժողովուրդը, ապահով ու ազատ իր հայրենի օջախում, [բայց] որի մէջ դեռ ազատութեան ու անկախութեան գաղափարները չէին ամրապնդուած... Նա ոչ միայն առանձնացած հայրենակցական միութիւնների շուրջ էր հաւաքուած, ...այլեւ նրանց մեծամասնութիւնը, լինելով դաշնակցական, կազմակերպուած էր ըստ ծննդավայրերի... Այսպէս օրինակ, Մրգաստանի (Երեւանի նահանգ) Կեդր. Կոմիտէութեան մէջ զուգահեռաբար գտնուում էին նաեւ Վասպուրականի եւ Լեռնապարի Կեդր. Կոմիտէութիւնները, որոնք ունէին իրենց ենթակայ կոմիտէութիւններ եւ ենթակոմիտէութիւններ... Նրանք ունէին պաշտօնական օրգանը: ... Այս բացասական երեւոյթների մտահոգութիւնն էր [նաեւ], որ 9րդ Ընդհ. ժողովը ստիպեց որոշում կայացնելու... ստեղծելու միապաղաղ կազմակերպութիւն, կանոնագրական նոր յօդուածներով՝ յատկապէս ... Երկրի

(Տաճկահայաստանի) Կ. Կոմիտեների եւ Կոմիտեների վերաբերմամբ.-

ա) «Թող չլրայ մի Կեդրոնական Կոմիտէի սահմաններում մի այլ Կեդր. Կոմիտէի գոյութիւնը»:

բ) «Կ. Կ.ի սահմանների մէջ եղած բոլոր կոմիտէները պիտի ենթարկուին այդ շրջանի Կ. Կ.ին միայն»:

Վարչական ... բաժանումներ անելուց յետոյ ... Բիւրոյի առջեւ դրուած ամենադժուարին հարցը այդ բաժանումները հաստատել տալն էր իւրաքանչիւր շրջանի Շրջանային ժողովի կողմից: Պէտք էր նաեւ նոր կազմակերպութեան մասնակից անել անխտիր մեր բոլոր շարքերին, ընտրել տալ իւրաքանչիւր շրջանի համար միմիայն մէկ Կ. Կոմիտէութիւն. բոլոր ենթակոմիտէներին եւ կոմիտէներին ենթարկել նոր մարմիններին...

Այս դժուարին գործը յաջողուեց՝ առանց կուսակցական ներքին ցնցումների, շնորհիւ մի շարք գործիչների եռանդուն աշխատանքին, [այն տարրերի, որոնք հատուածականութիւնից բարձր էին կանգնած]... 1919ի վերջերին, միատեսակ եւ միաձոյլ էր կուսակցական կազմակերպութիւնը. այլեւ չկային թուրքահայ կամ ռուսահայ կազմակերպութիւնները, որոնք կը ջլատէին պետական եւ թէ կուսակցական գործերը...

[Հին մարմինների մէկ մասի վերացումով եւ միակ Բիւրոյի ստեղծումով առաջացած] կեդրոնացումը ուներ իւր բացասական կողմերը, մասամբ նուազեցնելով նախաձեռնութիւնը մարմինների, եւ դժուարացնելով նոր Կ. Կոմիտէների աշխատանքները, որոնց ենթակայ մարմինները, իրենց անդամների հոծ բազմութեամբ, ատելի ուշադրութիւն կը պահանջէին: Բայց միւս կողմից՝ դա ուներ իւր դրական կողմերը.-

- Կուսակցական մեքենան դարձած էր ատելի պարզ. Բիւրօն դիւրութիւն ուներ ատելի մօտէն հսկելու ատելի փոքրաքանակ մարմինների վրայ.

- Գործի նախաձեռնութիւնը անցնում էր մասամբ Կ. Կոմիտէներին. ասոնք ատելի կշիռ պիտի ունենային, ատելի շատ գործ պիտի ստեղծէին...

- Հատուածական տրամադրութեանց հիմքը քանդուած էր.

- Հնարաւոր էր կուսակցութեան բոլոր շարքերին մի ուղղութեամբ շարժել եւ արագօրէն գործի լծել:

... Ընդհանուր ժողովի [կանոնագրից արուած հազուադէպ շեղումների կարգին] երկաթուղիների էքստերիտորեալ Կ. Կոմիտէի ստեղծումը, ... հարկադրաբար առաջ էր եկած կեանքի պահանջնե-

րից եւ այդ շեղումն էր որ կարողացաւ միջոց տալ Բիւրոյին մօտից հսկելու եւ ղեկավարելու բանուորական կեանքը Հայաստանում...

... Երեք Շրջանային Ժողովները մի անգամ եւս քննած եւ հաստատած էին Ընդհ. ժողովի օրակարգերը... Մեր շարքերի քանակը ընդլայնում էր ըստ Կանոնագրի սահմանափակումների: Գաշնակցական լինելու պատիւը ստանալու համար՝ սահմանափակումները անհրաժեշտ էին, որ մեր կուսակցութեան ծոցը չներխուժեն ամբոխը եւ կասկածելի մարդիկ, որոնց առաջքն առնելը խիստ դժուար էր...

Միաձոյլ կազմակերպութիւն առաջ բերելու համար, բանաւոր եւ մանաւանդ գրաւոր քարոզչութիւնը փոքր դեր չունէին: Գլխաւոր ուղղութիւնը ստացում էր Երեւանից, «Յառաջ» թերթից, որ Բիւրոյի անմիջական հսկողութեան տակն էր: Հայաստանի ու Վրաստանի դաշնակցական մամուլը խոշոր գիծերով գնում էր «Յառաջ»ի ուղղութեամբ: Որոշ շեղումներ կային «Յառաջ»ի եւ Թիֆլիսի «Աշխատաւոր»ի [միջեւ] ... Թիֆլիսի մեր մամուլը որոշ հարցերի համար ... վերապահութիւն ունէր, եւ նա այդ չէր թաքցնում... Պիտի ասել, որ մեր մամուլը քննադատական յօդուածներ կ'ունենար ... եւ մեր կառավարութեան վերաբերեալ: Բայց այդ բոլորը արելի ինքնագնահատման, ինքնաքննադատման բնոյթ ունէին, քան խոր սկզբունքային տարակարծութիւնները. ուստի այդ ուղղութեամբ մամուլի կաշկանդուած չլինելը արելի կագողորիչ նշանակութիւն ունէր, քան թէ քայքայիչ...

*
* *

Կազմակերպական կարեւոր աշխատանքներից պիտի համարել, նախապատրաստական շրջանում, մարտական խմբերի կազմակերպումը: Արդէն Ընդհ. ժողովն էլ յատուկ ուշադրութիւն էր դարձրած կուսակցական ֆիզիքական ուժի կազմակերպման վրայ եւ նա հետեւեալ կէտերն էր մտցրած կանոնագրի մէջ.-

«138. Յեղափոխական շրջաններում, իր շեռնարկների յաջող իրագործման նպատակով, կուսակցութիւնը կազմակերպում է մարտական խմբեր դաշնակցական բնկերներից:

139. Մարտական խմբերը ենթարկւում են տեղական մարմինների եւ Բիւրոյի տրուած հրահանգներին:

140. Մարտական խմբերի իւրաքանչիւր անդամ պարտաւոր է ապրել սեփական միջոցներով, ունենալով սեփական զէնք եւ միշտ պարտասար լինել յեղափոխական շեռնարկների համար:

141. Մարտական խմբի անդամները իրենց յանձնուած գործն իրագործելիս՝ սպրտարի միջոց ստանում են կուսակցութիւնից:»

Կանոնագրի այս կետերն իրագործել կարելու էր երկու տեսակետով. մեկ՝ որ կազմակերպելով ցրիւ եկած մարտական խմբերը եւ մեր հին ֆետալիները, որոնք կուսակցութեան յենարաններն են եղած, կ'արգիլէինք որ սայթաքումներ ունենան. երկրորդ՝ որ թէ՛ կուսակցութեան եւ թէ՛ պետութեան ամրապնդման համար անհրաժեշտ էին այդ մարտական ուժերի բարոյական եւ ֆիզիքական կարողութիւնները: Պիտի ասել, որ մեր կուսակցութեան այդ դժբախտ դասը, որ յեղափոխական ամենավտանգաւոր եւ դժուարին գործերն է տարած, ամենահալածուածն էր մեր պետական կեանքի ընթացքում: Այդ ընկերները ամենահաւատարիմներն էին մեր կուսակցութեան, աւելի շուտ հաւատացեալներն էին... այդ իսկ պատճառով արհամարհում եւ հալածում էին մեր հակառակորդների կողմից, որով հետեւ եթէ քանդուէր մեր կուսակցութեան այդ ամուր պատուանդանը, պիտի քանդուէր, եթէ ոչ Դաշնակցութիւնը, գոնէ նրա հօգրութիւնը: Դժբախտաբար, մեր շարքերից եւս նրանց արհամարհողները պակաս չէին: Ոմանք, չափելով այս կամ այն անհատի չարագործութիւններով եւ աւազակութիւններով, կ'ընդհանրացնէին երեւոյթները եւ կը մոռանային մեր մարտական ուժերի իսկական արժէքը: Այնքան առաջ էր գնացել այդ թիր հասկացողութիւնը, որ նրանք, որ պետութիւնը իրենց արեան գնով էին ստեղծած, կը համարուէին հակապետական: Բայց հետագան ցոյց տուեց, որ չարաչար կը սխալէին այդպիսիք, քանի որ այդ ուժերն էին որ թէ՛ կուսակցութիւնը եւ թէ՛ պետութիւնը փրկեցին Մայիսեան շարժումից եւ նրանք էին նորից, որ, Փետրուարին, կացինների տակից ազատեցին իրենց հալածուած ընկերներին:

... [Կազմակերպուած շարքերէն դուրս, ոչ-կուսակցական մեծ մասսան] պատրաստելու, շարժելու եւ հանրային գործի լծելու համար, կուսակցութիւնը ձեռնարկում է անկուսակցական Միութիւնների կազմակերպման, որոնց, մասնակցող մեր կազմակերպուած ընկերների միջոցով, փաստօրէն ինքն է ուղղութիւն եւ ընթացք տրտողը: Ընդհանուր ժողովը որոշած էր միութիւնների մասին.-

«142. Միութիւնները լինում են գիղացիական, արհեստակցական, կանանց, կարմիր խաչի, ուսանողական, աշակերտական եւն.:

143. Արհեստակցական եւ գիղացիական միութիւնները կազմում են ընդհանուր անկուսակցական միութիւնների դաշնակցական հարուածները:»

Ինչպէս տեսնում ենք, Ընդհանուր ժողովը հասկացած էր այդ միութեանց կարելու նշանակութիւնը եւ յստակ հրահանգներ տուած այդ միութեանց բնոյթի մասին... Բայց մեր ուշադրութիւնը կեղրոնացած լինելով զուտ կուսակցական շարքերի կազմակերպման

վրայ, հարկ եղած չափով չզբաղուեցինք այդ խայտաբղէտ միութիւններով եւ նրանց ղեկավարութիւնը յանձնուեց մեր երկրորդական ընկերներին, որոնց կուսակցական կացութիւնը խիստ կասկածելի էր ...

*
* * *

Կուսակցական բարձրագոյն ժողովը, մի կողմից պատուիրելով որ պէտք է ուժեղ կազմակերպութիւն ստեղծել եւ այդ կազմակերպութեամբ է որ պիտի հասնի իր նպատակներին, միւս կողմից հրահանգում էր պետական մեխանիզմով բաւարարուել: Կուսակցութիւնը պիտի յենարան դառնար կառավարութեան ու խորհրդարանին, նրանց աւելի շուտ պիտի դիտէր, քան թէ ուղղութիւն տար եւ վարէր: Դաշնակցութիւնը, կանգնած խորհրդարանականութեան սկզբունքի վրայ, ... իր ֆրակցիայի միջոցով պիտի անցկացներ այն բոլոր սկըզբունքները, որոնք համապատասխան էին իր նպատակներին... Կառավարութիւնը, որ էր միակ գործադրողը բոլոր օրէնքների եւ նպատակների, ազատ էր կացուցում կուսակցութիւնից անմիջականօրէն: [Ու] չնայելով որ Հայաստանում պետութիւնը եւ խորհրդարանը մեծաւ մասամբ կամ ամբողջապէս կը գտնուէին դաշնակցականների ձեռքը, բայց Դաշնակցութիւնը դժգոհ էր թէ խորհրդարանից, եւ թէ կառավարութիւնից...

... Մեր կանոնագիրը պայմանագրում էր.

«Բիւրօն հսկում է, որ ֆրակցիաները չշեղուեն Ընդհանուր ժողովի, Կոնֆերանսի եւ համապատասխան ռայոնական ժողովի որոշումներից:

«Ընդհանուր ժողովի, Կոնֆերանսի եւ համապատասխան ռայոնական ժողովի կողմից չնախատեսուած հարցերում պարլամենտական ֆրակցիաները ղեկավարում են Բիւրոյի հրահանգներով»:

Այսպէս պարզ կ'որոշուէր Բիւրոյի եւ ֆրակցիաների յարաբերութիւնը, ենթարկելով ֆրակցիաները Բիւրոյին, մինչ նոյն յստակութիւնը չկայ կանոնագրի մէջ Բիւրոյի եւ Կառավարութեան միջեւ. այս վերջինը պատասխանատու էր ֆրակցիայի առաջ եւ նրա միջոցով միայն՝ Բիւրոյին:

... Բայց այս ձեւը ըստ էութեան առաջ էր բերում աւելորդ ժամավաճառութիւն, ֆրակցիայի ամբողջականութեան քայքայում եւ բաժանման վտանգ՝ կուսակցութեան եւ կառավարութեան միջեւ:

Պարզեմ միտքս: Կառավարութիւնը անմիջականօրէն պատասխանատու լինելով ֆրակցիային, որ ըսել է խորհրդարանի առջեւ, եւ ֆրակցիան անմիջականօրէն պատասխանատու լինելով Բիւրոյի առջեւ, որ ըսել է Դաշնակցութեան - այն բոլոր խնդիրները, դիտողութիւնները ու բողոքները, որ պիտի ունենար Բիւրօն կառավարու-

թեան հանդէպ (եւ փոխադարձաբար), բոլոր իրարու բախող հրատապ հարցերը՝ պիտի անցնէին ֆրակցիայի միջոցով: Այդպիսով՝ ֆրակցիան, որ իբր թէ պիտի լինէր կուսակցութեան կամակատար մի օրկան, դառնում էր կառավարութեան եւ Բիւրոյի միջեւ մրցման ասպարէզ, մի խողովակ երկու գործադիր մարմինների միջեւ: Նա դառնում էր աւելի արժէքաւոր քան Բիւրօն եւ կուսակցութիւնը, եւ աւելի բարձր՝ քան կառավարութիւնը: Բնականաբար, Բիւրօն պիտի ջանար կուսակցական կամքը թելադրել ֆրակցիային եւ աշխատէր ամբողջ կազմով պահել իր ազդեցութեան ներքոյ, որպէսզի նրա միջոցով ուղղութիւն տայ կառավարութեան: Նոյնքան բնական կերպով, կառավարութիւնը, խորհրդարանում իր դիրքը ապահովելու համար, գերադասելու էր ֆրակցիայի մէջ ունենալ իր խմբակցութիւնները իբրեւ յենարան, եթէ անհնար լինէր ֆրակցիայի ամբողջութեան սիրտն ու վստահութիւնը շահել:

Դրա հետեւանօք էր, որ կառավարութիւնը երբեմն նախարարական պաշտօններով կը ջանար սիրաշահիլ [երկրորդական դէմքեր՝ արհեստակցական եւայլն միութիւններէ, որոնց կուսակցական կացութիւնը խիստ կասկածելի էր...]: Իսկ Բիւրօն յաճախ, երբ կը տեսնէր որ ֆրակցիայի ընթացքը չի համապատասխանում իր տեսակետներին, գալիս էր իր վեթոյի իրաւունքով եւ այդ հարկադրանքի տակ թէւ լսում էր, սակայն վնասում էր կուսակցութեան եւ պետութեան վարկին:

Այս հանգամանքների վրայ ծանրանալուս պատճառն այն է, որ ցոյց տամ ստեղծուած դրութեան բուն պատճառը: Ըստ իս, այդ դրութեան ստեղծուիլը պիտի որոնել միայն մեր կանոնագրի անորոշութեան եւ անգործնականութեան մէջ, որի վրայ պիտի լուրջ ուշադրութիւն դարձնել, եթէ կը ցանկանք հետագային այդ փորձառութիւններից օգտուել: Եղած խառնաշփոթութիւնը աւելի ակնբախ է դառնում, երբ մենք անդրադառնանք այդ հիւանդոտ յարաբերութեանց հետեւանքներին: Հայաստանում փաստօրէն երկու ուժեր կային. կառավարութիւնը՝ իր փայլով ու մեխանիզմով, եւ Դաշնակցութիւնը՝ իր մասսայով, հեղինակութեամբ եւ ուժով: Կառավարութիւնը, յենուելով խորհրդարանական սկզբունքների վրայ, այդպիսի մի յեղափոխական վայրկեանում, առանց հաշուի առնելու Դաշնակցութեան ցանկութիւններն ու պահանջները, հեռացնում էր իրանից կուսակցութիւնը, ու թէւ խորհրդարանում երբեմն ծափահարում էր, բայց ըստ էութեան մեր շարքերի մէջ [սուռացացնում] էր անտարբերութիւն եւ անվստահութիւն, որ յաճախ արձագանգ էր գտնում խորհրդարանի ու ֆրակցիայի ամբիոններից: Խորենիներ, Նաւասարդեաններ, ըմբոստանում էին Բիւրոյի «համ-

բերութեան» տակտիկայի դէմ եւ կատարեալ ընդդիմադրութիւն էին դարձած կառավարութեան համար... Այս դժգոհութիւնները, որ կ'արտայայտուէին խուլ արձագանգն էին մեր կուսակցական շարքերի տրամադրութեանց: Ի վերջոյ, այնքան էին ծաւալուած դժգոհութիւնները՝ որ կուսակցական մասսաների տրամադրութեանց ենթարկուելով, նոյնիսկ Վրացեան իր խմբագրականներով քննադատի դիրք էր առած «Յառաջ» թերթում, թէն նա ջատագովներից էր «պետական» սկզբունքների, եւ նրա շնորհիւ էր, որ Ընդհանուր ժողովը անորոշութեան մէջ ձգած էր Բիւրոյի եւ կառավարութեան, Բիւրոյի եւ խորհրդարանի վերաբերող յօդուածները:

Կուսակցական ընկերների հրապարակային բողոքները կուսակցական էտիկայի դէմ կարելի է համարել, բայց կուսակցական եւ պետական շահերից էին թելադրուած եւ հեռու էին անձնականութիւնից: Նախ՝ նրանց մէջ կը խօսէր կուսակցական եւ երբեմնի յեղափոխական խիղճը, եւ երկրորդ՝ յեղափոխական ներկան մոռացնել էր տալիս գրքերում կարդացած խորհրդարանականութիւնը եւ «պետական» համարուած ձեւերն ու ընդունուած սովորոյթները: Դրան ուժ էին տալիս եւ մեր ներքին, արտաքին, զինուորական, տնտեսական եւ այլ ասպարէզներում այն անհրաժեշտ պահանջները, որոնց անմիջական լուծումը հրամայական էր վճռականօրէն, բայց որոնց լուծման համար կառավարութիւնը անկարող էր, ո՛չ իր պետական մեխանիզմով, եւ ոչ էլ իր չափուած օրէնքներով՝ ըստ ռուսական դարմանների: Այդ բոլորը միացած պատրաստում էին հողը Խատիսեանի կառավարութեան հեռացման եւ յեղափոխական թափի ու գործունէութեան...

«Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», Է. հալոյոր, Ռուբէն

29

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 11ԲԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՒՄ

Հ. Յ. Դ. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐՑԸ

Իր գործունութեան պայմանների դժուարութեամբ կարելի է ասել ոչ մի կուսակցութիւն չի կարող համեմատուել Դաշնակցութեան հետ: Ոչ մէկը չէ ունեցել Հ. Յ. Դաշնակցութեան տարածուն վիճակը՝ կապի պահպանութեան բազմապիսի դժուարութիւններով՝ ինչպէս եւ չէ ունեցել Դաշնակցութեան պատրաստակամութիւնը՝ անվերապահօ-

րէն գոհաբերելու առաջադրուած նպատակների համար - մի պատրաստակամութիւն, որ կատաղեցնում է նրա բոլոր թշնամիներին եւ բացառիկ հալածանքների դրդում մեր կուսակցութեան դէմ:

Այս կրկնակի դժուարութիւնները յաճախ արգելք են հանդիսացել, որ Հ. Յ. Գաշնակցութեան Ընդհանուր Ժողովները որոշած ժամանակին գումարուեն: 11րդ Ընդհանուր Ժողովն եւս նոյն պատճառներով սահմանուած ժամանակից երկու տարի ուշ գումարուեց:

Սեր մարմիններից եւ ընկերներից ոմանք հարց էին դրել առաջ բերելու Գաշնակցութեան կամքը ներկայացնող մի մարմին, Հ. Յ. Գաշնակցութեան Խորհուրդ անունով, որի դերը պէտք է լինէր Ընդհանուր Ժողովի անունից գործունէութեան հրահանգ տալ Բիւրոյին այն հարցերում, որոնք Ընդհանուր Ժողովի իրաւասութեանն են վերաբերում: Սահմանափակ թուով անդամներ ունեցող եւ դիրաշարժ Խորհուրդը, հարց դնողների կարծիքով, կը թեթեւացնէր Բիւրոյի գործը, երբ վերջինս Ընդ. Ժողովի որոշումներից շեղուելու կամ ծանր պատասխանատուութիւն հրաւիրող որոշում կայացնելու հարկադրանքի առաջ զգար ինքզինքը:

Ընդհանուր Ժողովը հանգամանօրէն քննեց այս հարցը, բայց նպատակայարմար չնկատեց նրան դրական լուծում տալ: Ընդհանուր Ժողովը չէր անգիտանում, ի հարկէ, լրջութիւնը այն պատճառաբանութեան, որ ներկայացնում էին Հ. Յ. Գաշնակցութեան Խորհրդի կողմնակիցները, բայց նա հաշուի էր առնում եւ այն ընկերների կարծիքը, որոնք պնդում էին, թէ Խորհրդի գոյութիւնը կը թուլացնի Բիւրոյի դիրքը կուսակցութեան մէջ, կը կաշկանդի նրա նախածեռնութեան ոգին եւ կը թուլացնի վճռական վայրկեաններին պատասխանատուութիւն ստանձնելու կամքը:

Սերժելով հանդերձ Հ. Յ. Գ. Խորհրդի առաջարկը՝ Ընդհանուր Ժողովը ատելորդ չնկատեց մի քանի թելադրութիւններ անել Բիւրոյին, որոնցով սա կարող է ղեկավարուել այն պարագաներում, որոնց համար Խորհրդի պահանջն էր առաջադրում ոմանց կողմից:

ԵՐԿՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Գաշնակցութեան կուսակցական գործունէութեան խարխալը Երկիրն է եւ, բնականաբար, Երկրի կազմակերպութեան խընդիրները կարեւոր տեղ պէտք է բռնէին Ընդհանուր Ժողովի օրակարգի մէջ:

10րդ Ընդ. Ժողովը Երկրի կազմակերպութեան մասին մի շարք որոշումներ էր հանել, որոնցից մի քանիսը Կազմակերպական Կանոնների յօդուածներ դարձան, իսկ մնացածները պիտի գործադրը-

ւէին ներքին հրահանգների կարգով: Սակայն, յետագայ տարիների փորձը ցոյց տուեց, որ այդ որոշումները չեն համապատասխանում այն առարկայական պայմաններին, որոնց մէջ մեր կուսակցական աշխատանքներն առաջ են տարում Երկրում: Չեկայի *պրովոկասիոն*ները, բոլշեիկների ստեղծած բարքերը, վերջապէս, Երկրում մեր հետապնդած քաղաքական պահանջների իւրայատուկ բնոյթը - այս բոլորը անհրաժեշտ էին դարձնում հիմնական վերաքննութեան ենթարկելու Երկրի կազմակերպութեան ձեւը, մարմինների իրաւասութիւնը եւն.:

Հասկնալի պատճառներով մենք չենք կարող այստեղ վերլուծութեան ենթարկել օրակարգի այս կէտի մասին արտայայտուած տեսակէտները եւ հանած որոշումները: Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ այդ որոշումներն ազդակ են Երկրի մեր կազմակերպութիւնը դարձնելու աւելի՝ ճկուն, աւելի դիմացկուն եւ աւելի՝ վճռական մեր քաղաքական առաջադրութիւնների հետապնդման գործում:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

«Արտասահմանի մեր կազմակերպական շրջաններն աչքի են ընկնում իրենց խայրաբղէպութեամբ: Նրանցից իւրաքանչիւրն ունի իր ներքին կանոնագիրը, որի մէջ, մասամբ ընդհանուր Կազմակերպական Կանոնների հեղեղութեամբ, մասամբ էլ տեղական հասկացողութիւններով ճշդուած են կազմակերպական սկզբունքները, եղանակները եւ փոխարաբերութիւնները»:

Առաջին հերթին այս հարցադրութեամբ էր ներկայացուած արտասահմանեան կազմակերպութեան խնդիրը Ընդհանուր Ժողովին: Վիճաբանութիւններն այս հարցի շուրջը բաւական բուռն էին: Ընկերներից ոմանք, ելնելով ապակենտրոնացման սկզբունքից, անպատեհութիւն չէին տեսնում այն հանգամանքի մէջ, որ ներքին կանոնագրերը իրարից տարբերոււմ են: Ուրիշները, մազաչափ անգամ չշեղելով ապակենտրոնացման սկզբունքից, գտնում էին, որ այդ ըսկզբունքը բնաւ անհրաժեշտ չէ դարձնում, որ ներքին կանոնագրերը հիմնական խնդիրներում ըստ կամս շեղումներ կատարեն ընդհանուր Կազմ. Կանոնների հիմնական տրամադրութիւններից:

Ընդհանուր Ժողովը որդեգրեց այս երկրորդ տեսակէտը եւ յանձնարարեց Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյին հետամնտ լինել, որ ներքին կանոնագրերի մէջ կատարուեն այն փոփոխութիւններն ու սրբագրութիւնները, որոնք անհրաժեշտ են, որպէսզի նրանք ներդաշնակուեն մեր ընդհանուր Կազմակերպական Կանոններին եւ անհարկի պէսայխութիւններ չառաջացնեն մեր կազմակերպական կեանքում:

Արտասահմանեան կազմակերպութեան հարցի քննութեան ժամանակ Ընդհանուր Ժողովը կանգ առաւ եւս մի կարեւոր թերութեան վրայ: Դա այն է, որ մեր կազմակերպական կեանքը գրեթէ ոչ մի միտում չէ ցոյց տալիս արդիանալու, ժամանակակից պայմաններին համապատասխան ձեւեր առնելու: Մեր կուսակցութիւնը կառչած է մնում կազմակերպական այն հին եղանակներին եւ միջոցներին, որոնք մշակուել են իննսունական թուականներին, երբ գաղափարական մոլեռանդութիւնն ու կոյր հաւատը բաւական էին նկատուում մարդկանց իրար շողկապելու եւ հաւաքական աշխատանքի մղելու համար:

Այս կազմակերպական յետամնացութիւնը Դաշնակցութեան գաղափարական ոյժի լաւագոյն ապացոյցն է հանդիսանում, ի հարկէ: Երբ այսօր իսկ Խանասորի արշաւանքը, Բանկ Օտտոմանի ցոյցը եւ մեր ազատագրական պայքարի միւս հերոսութիւնները, որոնք արդէն պատմութեան սեփականութիւն են դարձած, բաւական են նկատուում հայ աշխատատուր զանգուածներին Դաշնակցութեան դրօշի տակ պահելու համար, այդ ցոյց է տալիս, որ Դաշնակցութեան գաղափարներն ու գործերը շարունակուում են տիրականօրէն իշխել հայ ժողովրդի մտքի եւ սրտի վրայ:

Սակայն, գիտակցելով հանդերձ Դաշնակցութեան գաղափարական ուժի այս հմայիչ եւ շողկապող ազդեցութիւնը՝ Ընդհանուր Ժողովը չէր կարող անտես առնել, որ մեր գործունէութեան պայմանները հիմնապէս փոխուած են. հետեւաբար եւ անհրաժեշտ է նոր պայմաններին համապատասխան ձեւ եւ բովանդակութիւն տալ մեր կազմակերպական կեանքին արտասահմանում:

Այդ նոր ձեւերն ու բովանդակութիւնը գտնելու դժուարութիւնները մեծ չեն: Մեր կազմակերպական բոլոր շրջաններում գործող օտար կուսակցութիւնները, եւ առաջին հերթին ընկերվարական կուսակցութիւնները, արդէն մշակել են եւ շարունակ մշակուում են հաւաքական ձեռնարկների ծրագրեր - սկսած ընկերվարական զբօսանքներից եւ մարզական վարժութիւններից մինչեւ փոխադարձ օգնութեան, տնտեսական գործակցութեան, մշակութային յառաջացման եւ ընդհանրապէս մտատուր զարգացման ձեռնարկները - որոնք իրենց ամբողջութեան մէջ գործօն բովանդակութիւն են տալիս կազմակերպութեանը եւ կենդանի շողախ հանդիսանում նրա անդամների միջեւ: Մեզ մնում է միայն ծանօթանալ այդ միջոցներին եւ ընտրել նրանցից այն, ինչ որ յարմար է մեր կուսակցութեան առանձնա-յատուկ պայմաններին:

Ըստ ինքեան հասկնալի է, որ յիշեալ միջոցների ընտրութեան եւ կիրառման ժամանակ մենք մի բոպէ իսկ աչքաթող չպէտք է անենք, որ Դաշնակցութիւնը յեղափոխական կուսակցութիւն է եւ միշտ

պէտք է պատրաստ լինի դիմագրաւելու հայ ժողովրդի քաղաքական պահանջներին նիւթական, բարոյական եւ ֆիզիքական ծանր գոհորութիւններով: Սրա համար էլ Ընդհանուր Ժողովը, արտասահմանեան մեր կազմակերպութիւնն արդիացնելու որոշում տալով հանդերձ, մարմինների յատուկ ուշադրութիւնը հրաւիրեց կուսակցութեան յեղափոխական աւանդութիւնները եւ մասնաւորապէս նրա մարտական ոգին կենդանի պահելու պահանջի վրայ: Այս պահանջը բխում է Հ. Յ. Գաշնակցութեան էութիւնից եւ ոչ մի կազմակերպական նորմուծութեամբ չի կարող անտես առնուել...

Ա. Չամալեան, «Դրօշակ», քթ. 4-5 եւ 8, 1929

30

ԵՐԻՏԱՍԱՐԳ ՍԵՐՈՒՆԴԻ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

... Հ.Յ. Գաշնակցութիւնը իր շարքերուն մէջ մտնող կամ կուսակցութեան քաղաքական եւ յեղափոխական իդէալներուն համակրող պատանիներու եւ երիտասարդներու յեղափոխական դաստիարակութեան խնդիրը չի կրնար թողնել յետագային ու չի կրնար սպասել, որ հայկական դպրոցները կանոնաւորուին, միջնակարգերու ցանց մը հիմնուի, ուսանողներ խոնուին եւրոպական կեդրոններու մէջ, եւ ապա ձեռնարկէ այդ սերունդէն պատրաստել այն գաղափարական ու յեղափոխական սերունդը, որ աստիճանաբար պիտի երիտասարդացնէ մեր կազմակերպութիւնը եւ փորձի ու գործնական աշխատանքի բովէն անցած՝ դեկալարող ջիղը դառնայ մեր կուսակցութեան: Սենք ստիպուած ենք մօտենալ նոր սերունդին այնպէս, ինչպէս որ ան գոյութիւն ունի:... Ներկայ անցողական շրջանը եթէ մեզմէ կը պահանջէ աւելի լարուած ու աւելի բազմակողմանի աշխատանք, միեւնոյն ժամանակ մեզի [կընձեռէ] մեծազանգըւած ատաղձ մը, մտայնութեամբ՝ աւելի բորբոքուած, ու իր կեանքով՝ աւելի ատակ յեղափոխական հակումներու:

Հ.Յ. Գաշնակցութիւնը իր գաղափարաբանութեամբ եւ գործօն քաղաքական շարժումներով ինքնին քաղաքական-յեղափոխական դպրոց մըն է: Վերակազմութեան ու վերագնահատութեան այս վերջին 7-8 տարիներու ընթացքին, Գաշնակցութիւնը կրցած է իր բեմերով, մամուլով եւ զանազան հրատարակութիւններով հոծ զանգըւածները դաստիարակել ազգային-քաղաքական եւ հասարակական-յեղափոխական իդէալներով եւ ստեղծել ընդհանուր մտածո-

դուքին մը հայութեան կենսական ձգտումներու շուրջ: Սակայն, այս գնահատելի կազմակերպական ընդհանուր աշխատանքին համընթաց, պէտք եղած եռանդը չէ թափուած երիտասարդ սերունդի կուսակցական դաստիարակութեան վրայ: ... Հասարակական կեանքը ղեկավարող սերունդի մը կողքին բարձրանալ, հասուննալ ու օր մըն ալ այդ յոգնած սերունդին տեղը գրաւել կարողանալու համար, անհրաժեշտ է պատրաստուիլ մտաւորապէս, հոգեպէս եւ նկարագրով: Իսկ այդ պատրաստութիւնը պէտք է սկսել պատանի եւ երիտասարդ տարիքէն, որովհետեւ գաղափարական եւ յեղափոխական նկարագրի հիմքերը այդ տարիքին կը նետուին:

Հսկայ վերիվայրումներու եւ չտեսնուած պայքարներու շրջան մը բողոքելէ ետք, մեր կորուստներու շարանը մեծ է: Պայքարի բովէն անցած սերունդ մը, Երկրի մէջ եւ Երկրէն դուրս, այսօր լծուած է հայոց ազատագրական-յեղափոխական գործին եւ դեռ կ'ապրի պատերազմական հեիհեւ կեանք մը: Այս շարժուն ու հետքոտ կեանքի ընթացքին, Դաշնակցութեան մարմինները լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնեն երիտասարդ սերունդի յեղափոխական դաստիարակութեան վրայ, սիստեմատիկ ու յարատեւ աշխատանքով մը պատրաստելու այն սերունդը, որ մեր վաղուան կեանքը վարելու կոչուած է: **Մեր մարմինները պէտք է գիտակցեն, որ իրենց հարիւրաւոր եւ հազարաւոր բնկերները կազմ ու պատրաստ պահելու, կազմակերպական մեքենան լարուած տանելու եւ մամուլն ու գրակալութիւնը լայնօրէն տարածելու աշխատանքներուն չափ կարելոր աշխատանք մըն է տասնեակ մը պատանիներ ու երիտասարդներ քով քովի բերել, անոնց հոգիի մէջ բռնկցնել յեղափոխական կրակը ու զոհողութեան, յանդգնութեան եւ տոկունութեան նկարագիր մը անոնց ներարկելը:**

Աշխարհի չորս կողմը ցրուած Դաշնակցական մարմինները հազարաւոր պատանիներու հետ գործ պիտի ունենան, բայց այդ հազարներէն հազիւ տասնեակներ միայն դուրս պիտի գան գաղափարական մարդիկ, որոնք յեղափոխութեան փշոտ ճանապարհի վրայ պատրաստ պիտի ըլլան իրենց կեանքը զոհելու յանուն հայ ժողովրդի ազատութեան եւ վերածնութեան, ու դառնան ղեկավարները կուսակցութեան մը, որ իր ... հարուստ յեղափոխական անցեալը անոնց ժառանգութիւն պիտի թողնէ: **Հենց այդ քիչ թով երիտասարդներն են, որ մեզի պէտք են:** Անոնք իրենց աննկուն հաստքով, գերագոյն զոհողութեան գիտակցութեամբ, յեղափոխական մտաւոր եւ գործնական պատրաստութեամբ պիտի դառնան այն մըդիչ ուժերը, որոնց պիտի հետեւեն հազարաւորներ դէպի մեր նպատակներու իրականացումը:

Առանց այս հոգատար աշխատանքին, 5-10 տարի յետոյ մենք

պիտի ունենանք թույլ շատ բայց որակով միջակ ղեկավար նոր սերունդ մը, տարբեր կրթութեամբ, տարբեր նկարագրով եւ, մանաւանդ, տարբեր դաշնակցական հոգեբանութեամբ մը, որ անմիջական ու հարազատ շարունակութիւնը պիտի չըլլայ անցնող ... իրարայայջորդ այնքան գաղափարական սերունդներուն: Անշուշտ, ժամանակներն ու փոփոխտող պայմանները շատ բան կրնան սովորեցնել նոր սերունդին. խնդիրը շատ ծանօթութեան եւ բազմաթիւ միջավայրերուն յարմարուելու անհրաժեշտութեան մասին չէ, այլ Դաշնակցութեան էութեան իրացման: Դաշնակցութեան էութիւնը (իր բոլոր առաքինի կողմերով) պէտք է իւրացուի հարազատօրէն: Վաղուան ղեկավարութեան կոչումն ունեցող երիտասարդը հարիւրին հարիւր դաշնակցական պէտք է ըլլայ: Ան զինուած պէտք է ըլլայ մտքով (պիտի ուսումնասիրէ Դաշնակցութեան պատմութիւնը, ծրագիրը, կանոնագիրը եւ, առհասարակ, յեղափոխական-հասարակագիտական գրականութիւնը): Ան պիտի մարմնաւորէ յեղափոխական այն նկարագիրը, որ յատուկ է Դաշնակցութեան (կատարեալ մաքրութիւն եւ շիտակութիւն հասարակական կեանքի մէջ, անձնագոհութիւն մինչեւ մահ, մոլեռանդ հաւատք դէպի մեր իդէալները եւ հրաժարում անձնական բարեկեցութենէ): Ան պիտի ըլլայ միշտ պատրաստ զինուոր մը Դաշնակցութեան համար, ամէն տեղ ու ամէն պայմաններու մէջ գործելու: Այս էական գիծերուն վրայ կ'աւելնայ ընդհանուր զարգացումը, գործօն կեանքի աստիճանական փորձառութիւնը, յարատեւ պայքարի քուրան, ուր կը կազմաւորուի յեղափոխական մարդը, դաշնակցական անձնագոհ (Ֆետայի՝ լայն առումով) տիպը:

Ահա, այս քիչերը պատրաստելու աշխատանքն է որ Դաշնակցութեան 11րդ Ընդհանուր Ժողովը իր մէկ որոշումով կը յանձնարարէ մեր մարմիններուն: Մեր մարմինները, գործիչները, մամուլի ղեկավարները եւ առհասարակ՝ դաշնակցական ղեկավար մտաւորականութիւնը իրենց անյետաձգելի պարտականութիւնը պիտի համարեն մօտենալու նոր սերունդին, ըլլայ ան աշակերտ թէ ուսանող, որք թէ բարեկեցիկ ընտանիքի զաւակ, բանուոր թէ զհողացի, զանազան միութիւններու անդամ թէ ինքնագլուխ ու աշխարհէ կտրուած, ու ամէն ջանք պիտի թափեն մտաւորապէս եւ հոգեպէս դաստիարակելու այդ երիտասարդութիւնը: Դժուարութիւնները շատ են, բայց վստահօրէն կարելի է ըսել, որ վատնուած աշխատանքը հարիւրին հինգ համեմատութեամբ արդիւնք պիտի տայ. իսկ այդ՝ ինքնին յաջողութիւն է: Մնացած 95 առ հարիւրը պիտի մնայ խանդավառ տարր մը, տարուած մեր մտայնութենէն, ու պիտի գայ զօրացնել մեր շարքերը, զանգուածային պայքարը շարունակելու համար: ...

Ներկայ երիտասարդ սերունդի յեղափոխական դաստիարակութեան գործին [լծուելու պահուն,] պէտք է նկատի առնել [նախատեսել] կարգ մը ... դժուարութիւններ. նախ՝ զարգացման պակասը, որով բացի յեղափոխական դաստիարակութենէ, ուշադրութիւն պէտք է դարձուի ընդհանուր զարգացման վրայ. երկրորդ՝ միջավայրի տարբերութիւնը. օրինակ, այսօր ամերիկահայութիւնը ունի նոր սերունդ մը, որ ընդհանուր զարգացում ունի, բայց միայն անգլերէն գիտէ եւ անձանօթ է մեր ազգային կեանքին. միւս գաղութներն ալ առաւել կամ պակաս իրենց միջավայրի ապրումներն ունին. ուստի ստիպուած ենք տեղական պայմաններու համեմատ շարժուել: ...

Վերջ պէտք է տալ այն մտայնութեան, որ սկսած է ընդհանրանալ, թէ նոր սերունդը կ'ուժանայ. նախ՝ մենք կատարենք մեր պարտականութիւնը, յետոյ քննադատենք ուժացողները: Վստահօրէն կարելի է ըսել, որ այդ ուժանալու ճամբու վրայ գտնուող հոծ բանակէն բաւական մեծ թիով վաշտեր մեր կողմը պիտի անցնեն եւ դառնան մեր դրօշակիրները:

Բացի միջավայրի եւ կրթութեան տարբերութիւններէն, ներկայ երիտասարդ սերունդը նկարագրի տարբեր պատկեր մը ունի: ... Հիմա 15-20 տարեկան պատանիներն ու երիտասարդները, կեանքի բազմաթիւ փորձանքներէն անցնելով, գերազանցապէս ազդուած են մարդկային անարդարութեան շարիքներէն, [ու] կեանքի ինքնապաշտպանութեան բնագոյն տարուած՝ ճկուն են, պայքարի եւ կռիւի կարող են դիմանալ եւ վտանգը կ'արհամարհեն: Սակայն, **այս դիմացկուն նկարագրին հետ՝ իւրացուցած են շարք մը բացասական կողմեր. օրինակ, խոր հաւատքը անոնց մէջ սարսած է, կեանքի դառն փորձը գրեթէ բոլոր սրբութիւններն անոնց սրտերէն սրբեր տարեր է:** Այս պարագաները նկատի առնելով՝ մեծ ուշադրութիւն պէտք է դարձնել այս վերջին յատկութիւններուն վրայ: Պատանիներու եւ երիտասարդներու հոգու մէջ **պէտք է վերականգնել յեղափոխական-հասարակական իդէալներու սրբութեան ըմբռնումը:** ...

Կ. Մասունի, «Դրօշակ», ք. 6-7, 1929

31

ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

Հ.3. Գաշնակցութիւնը ոչ միայն բովանդակ հայ կեանքի մէջ, այլ վստահօրէն կարելի է ըսել՝ ամբողջ միջազգային յեղափոխական շարժման մէջ ինքնայատուկ բարոյական դպրոց մը եղած է, եւ կան-

գուն կը մնայ այդ բարոյականի ամուր պատուանդաններուն վրայ: Եթէ ուշի ուշով քննենք մեր կուսակցութեան անցեալը, կատարուած դէպքերը, հերոսացած դէմքերը, մեր յաղթանակներն ու պարտութիւնները, մեր կուսակցութեան ներքին կազմակերպութեան զարգացումը իր ելեւէջներով,- պիտի տեսնենք, որ հիմնական զաղափարը, շրջապատը եւ զանազան պայմանները մոլիչ ոյժ հանդիսացած են: Բայց անոնց մէջ աւելի խոր, անքննելի ազդակ մը գոյութիւն ունեցած է, որ Դաշնակցութեան էութեանը տուած է գերմարդկային նկարագիր մը. ինչ որ կը կոչեն *Դաշնակցութեան բարոյականը*: Հօր ու անխոցելի ուժ մը, այդ բարոյականը, որ ահա, [տասնամեակներու] յարաճուն զարգացումով, հազարաւոր անհատներէն եւ *գործքերէն* կաթիլ-կաթիլ թորած, բիրեղացած եւ ընդհանուր աւազանի մէջ կուտակուած, իր հաւաքական ալիքովը մեծցած՝ ինքնարժէք ազդակ մը դարձած է, հախ՝ մեր կուսակցութեան ներքին կեանքին, եւ ապա՝ անոր արտաքին արտայայտութեան համար: Մէկ խօսքով, եթէ վերլուծենք մեր կուսակցութեան մարմին տուող ազդակները, **պիտի գրանենք նպաստը (գործը) եւ բարոյականը հաւասարագոր իրարու, նոյնիսկ իրար լրացնող**: Մնացած ազդակները օժանդակ հանգամանք ունին: Այդպէս էր որ Դաշնակցութեան նպատակը *Սուրբ Գործ* անունը կրեց, ու այդ գործին հաւասար՝ *սրբազան բարոյական* մը կերտուեցաւ եւ փոխանցուեցաւ յաջորդական սերունդներուն: Եթէ գործին սրբութիւնը նախապայմանն էր մեծ բարոյականի մը կերտման, այդ բարոյականի զարգացումն ու ինքնայատուկ բնոյթը Դաշնակցութեան անհատական եւ հաւաքական կամքէն կը բխէր: Դաշնակցութիւնը, առաջին օրէն սկսած, ֆիզիքապէս կը ծիրեր՝ բարոյական հսկայ հասակ մը ունենալու համար ... Դաշնակցութեան գործը եւ բարոյականը, հաւասարագոր եւ անքակտելի, իրարու շաղկապուած են: Այդ գործը եւ բարոյականը միասին մարմնացած են Դաշնակցութեան կազմակերպութեան մէջ: ... Դաշնակցութեան կազմակերպութեան ներքին ուժը այդ բարոյականին վրայ հիմնուած է: Անոր շնորհիւ է որ մեր կազմակերպութիւնը չի փտիր եւ յեղեղուկ ձեւափոխութիւններու չի ենթարկուիր: ... Ան մշտանորոգ է, միշտ նոյն կենսատու աւիշին շուրջ ...

Վերջապէս, ի՞նչ է Դաշնակցութեան բարոյականը: ... **Իր ամբողջութեանը մէջ՝ Դաշնակցութեան պատմութեան հոգեբանութիւնն է** (եթէ կարելի է այսպէս ըսել). Դաշնակցութեան խորհուրդն է, անգիր օրէնքը, անհատական եւ հաւաքական կշիռը, հերոսութիւններու, անձնագոհութեան, դժնդակ աշխատանքի, ինքնաժխտումի, կարգապահութեան, ընկերասիրութեան, պայծառ գիտակցութեան չափանիշն է:...

... Բարոյականը բռնի բռունցք մը չէ մեր կուսակցութեան համար,

թէւ աւելի զօրատր է, քան որեւէ ֆիզիքական բռունցք: Մեր ներքին կեանքին մէջ, Դաշնակցութիւնը շատ քիչ անգամ ֆիզիքական ուժին դիմած է գերագոյն արդարութիւն մը ընելու յեղափոխական բարոյականին: Ընդհանրապէս, Դաշնակցութեան յեղափոխական ոգին բաւականացած է միայն *ծուռ նայուածք* մը ուղղել դէպի այն մարդիկ, որ Դաշնակցութեան բարոյական ցանկապատը կ'անցնէին: Ու այդ՝ գնդակահարութեան չափ ծանր կշռած է: Այս աներեւոյթ աստիճանացոյց սլաքը մեր ներքին կեանքը ղեկավարած է:

Դաշնակցութեան դարբնոցը, ուրկէ հարիւր հազար մարդիկ անցած են, իր ջերմութիւնը ստացած է այս բարոյականէն, եւ դաշնակցական կազմը, կռանուած ու նորոգուած՝ դուրս եկած է հայ կեանքին մէջ: Եթէ հայ ժողովուրդի գերագոյն նպատակներուն համար՝ անհրաժեշտ եւ կենսական ոյժ մըն է Հ.Յ. Դաշնակցութիւնը, դաշնակցական կազմի համար ամենէն կարեւոր եւ կենսական տարրը իր յեղափոխական բարոյականն է: Այսօր, մեր կազմակերպութեան ամուր շաղախը դարձեալ հին յեղափոխական բարոյականն է:

... Հին շրջաններուն, յեղափոխական բարոյականի ըմբռնումը խստօրէն բացարձակ էր, եւ մեր բոլոր գործերուն մէջ՝ տիրական: Մեր կազմակերպութեան ներքին կեանքի մաքրութեան, կարգապահութեան եւ անշահախնդիր անձնագոհութեան համար յեղափոխական այդ բարոյականը վերանորոգիչ եւ կազդուրիչ գլխատր ազդակ մըն էր, եւ այդպէս ալ կը մնայ այժմ:

Դէպի Դաշնակցութեան հին եւ խարագոյն բարոյականը, յեղափոխական բիւրեղ եւ ինքնայատուկ նկարագիր մը, որ ջոկովի է Դաշնակցութեան համար - ասի՛ մեր Օրուան կարգախօսը:

Ինչո՞ւ այս հրաւերը: Պարզաբանենք մեր մտահոգութիւնը:

Մեր կուսակցութեան կեանքը երկու երեսներ ունի, յեղափոխական կռիւի եւ խաղաղութեան շրջաններով գունաւորուած: Դաշնակցութիւնը, ընդհանրապէս, գործօն կռիւներ եւ փոթորկալի շարժումներ ղեկավարած է: Ընդմիջաբար, ունեցած է դադարի եւ հասարակական խաղաղ եւ լայն աշխատանքի շրջաններ: Այս դադարները, երբեմն հարկադրական, նախապատրաստութեան, **ինքնամփոփման եւ սպասման շրջաններ դարձած են մեր կուսակցութեան պատմութեան համար:** Խաղաղ աշխատանքի եւ լայն հասարակական գործունէութեան շրջանները միշտ յաջողոյցած են՝ յաջողած յեղափոխական շարժումներու, այս կամ այն հատուածի մէջ, թոյլ տալով որ Դաշնակցութիւնը գործէ որպէս յայտնի քաղաքական կազմակերպութիւն մը (1905-8 եւ 1917ին՝ Կովկաս, 1908-1914՝ Թիւրքիա):

Դաշնակցութեան քաղաքական եւ յեղափոխական գործօն կեանքը այնքան մեծ թափով ընթացած է, որ այդ նկարագրով թըր-

ծըրած մեր կուսակցական կազմը դադարի եւ խաղաղութեան ժամանակաշրջանները **միշտ ալ թերի գնահատած եւ կորսուած ժամանակ մը նկատած է...**

Դաշնակցութեան բարոյականն է, որ շաղախ հանդիսացած է մէկտեղելու Դաշնակցութեան զինուորական եւ մտաւոր ուժերը, ֆետային եւ գաղտնի գործիչը, ազատ երկնքի տակ գործող տեսաբանը եւ պրոպագանդիստը, ծայրայեղ ընկերվարականը եւ լեռներու վրայ կռուող ազատատենչ անգրագէտը: Դաշնակցութեան բարոյականն է որ կրցած է մեր կազմակերպութեան ֆիզիքական ուժը միացնել անոր մտաւոր ուժին, կուռ ամբողջութիւն մը ստեղծելով հայ իրականութեան մէջ:...

Դիտուած է որ, ընդհանրապէս, գործօն յեղափոխութեան շրջանին, երբ դաշնակցական ֆիզիքական կազմը իր կեանքն իսկ գոհողութեան սեղանին վրայ կը դնէր, յեղափոխական բարոյականը ուռճանալով իր գագաթնակէտին հասած է, դառնալով միս եւ արիւն մեր ամբողջ կազմին: Բարոյական ոգին, ամէն տեղ եւ ամէն քայլափոխի, բոլորի համար առաջնորդ եւ ուղեցոյց եղած է: Սինչդեռ խաղաղութեան եւ սպասման ժամանակաշրջաններուն, Դաշնակցութեան կազմը աւելի կ'ընդարձակուի, եւ խաղաղ գործունէութեան ասպարէզները կը շատնան, անհատական նախասիրութիւններն ու կրքերը նոր ճանապարհներ կը գտնեն դրսեւորուելու համար. նուազ գոհողութիւններով՝ առաւելագոյն փառքի հասնելու տենչանքը թեւ կ'առնէ. զանգուածները, հեռու իրենց կեանքը զոհ բերելէ յեղափոխական մեծ գործին, կը յծուին իրենց շրջապատի առօրեայ եւ կողմնակի աշխատանքներուն, [եւ քշուելով] տեղական փոքր հաշիւներէ եւ կիրքերէ՝ իսկական յեղափոխական աշխատանքը կը փոխարինեն բազմապիսի ժխտով մը: Այս պարագաներուն մէջ, **Դաշնակցութիւնը տառապած է շարք մը երեւոյթներէ, որոնք մեր կուսակցութեան բարոյական կնիքը չէին կրեր** եւ չէին նպաստեր կազմակերպութեան ուժերը կեդրոնացնելու, քաղաքական միտքը դաստիարակելու եւ բարոյական հմայքը բարձրացնելու: Այս ... բարոյական թերացումներու ... դէմ հրապարակ կուգար Դաշնակցութեան կուտակուած հին բարոյականը՝ ամուր պահելու կազմակերպութեան ողնաշարը եւ վերականգնելու կուսակցութեան յեղափոխական շիտակ դիմագիծը: Նախապատրաստութեան շրջանը տակաւին չբլոտրած, Դաշնակցութիւնը հարկադրուած՝ կ'իջնէր գործօն յեղափոխութեան ասպարէզը, մաքրող ու գտող անձնագոհութեան ճանապարհը կը բռնէր, ուր **անբարոյականութիւնը կը մեռնէր, կը չքանար, կամ կը սմբէր: Իսկ բարոյական մթնոլորտը կը դառնար տիրական:**

Խօսքը մասնաւորելով ներկայ տասնամեակին վրայ, պէտք է ըսենք, որ Դաշնակցութիւնը, դէպքերու հարկադրանքով, սպասողա-

կան եւ նախապատրաստական մեծ շրջան մը կը բոլորէ, մանաւանդ եթէ նկատի առնենք **միայն տարագիր զանգուածներու մէջ կազմը-ւած Կեդր. Կոմիտէները**: Այս Կեդր. Կոմիտէներու բնոյթը վերջին տասնամեակին հիմնապէս փոխուած է: [Նախապէս, այդ փոքրաթիւ] մարմինները Երկրի յեղափոխական գործին օժանդակելու կոչումն ունէին: Մինչդեռ հիմա, [բազմացած, **տարագրութեան**] **Կեդր. Կոմիտէները կազմակերպութեան գործօն մասնիկներն են**: Տասնամեակէն աւելի է, որ արտասահմանի դաշնակցական այս մարմինները հոծ երիտասարդութիւնն իրենց ծոցին մէջ կ'առնեն [, անոր քաղաքական դաստիարակութիւն կուտան,] եւ համբերութեամբ կը սպասեն քաղաքական-յեղափոխական մեծ դէպքերուն. բայց միեւնոյն ժամանակ, որպէս ուժեղ եւ կենսունակ կազմակերպութիւն, անոնք կը մասնակցին հանրային բազմապիսի ձեռնարկներու:

Արդ, այս ժամանակաշրջանը, մէկ կողմէ իր սպասողական բնոյթով, միւս կողմէ իր զանգուածային եւ հանրային բազմապիսի արտայայտութեամբ, **փորշութեան շրջան մըն է**: Մեր շարքերը ոչ միայն մտքով եւ բազուկով պէտք է պատրաստուին ապագայ կարելիութիւնները դիմագրաւելու, այլ **դաշնակցականօրէն պէտք է լաւ թրծը-փն**: Այստեղ է որ Դաշնակցութեան հին բարոյականը պէտք է ոգեկոչուի եւ ամենէն ամուր հիմքը կազմէ մեր ներկայ կազմակերպութիւններուն, միս եւ արիւն դառնայ մեր բոլոր հին եւ նոր ընկերներուն, որպէսզի մեր ... ժառանգական բարոյական դիմագիծը շխաթարուի:

Կ. Սասունի, «Դրօշակ», ք. 11, 1931

32

ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՊԱԿԵԳՐՈՆԱՅՈՒՄԸ ՍՓԻՌՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԵՒ ԴԷՄ

... 1922էն սկսեալ, Հ.Յ.Դաշնակցութիւնը Սփիւռքի մէջ ապրող աշխարհացրիւ հայութեան ծոցին մէջ արագօրէն արմատներ կը նետէր, կը կազմակերպուէր ու կը գործէր իր հին ծրագրով ու կազմակերպական կանոնագրով, որ աստիճանաբար որոշ փոփոխութեանց կ'ենթարկուէր, սակայն ոչ մէկ պարագայի հիմնական ձեւով, այլ միշտ ալ փոքր յաւելումներով, յապաւումներով, պայմաններուն յարմարեցումներով, եւ անվթար կը պահէր Հ.Յ.Դաշնակցութեան կառույցը, որուն հիմքին մէջ **ներկայ է ապակեղորոնցումը**:

Սակայն, տարիներու թաալումին հետ տեղի կ'ունենար այնպիսի հողվոյթ մը, որ կրնար Գաշնակցութիւնը հեռացնել իր ապակեղ-րոնացման սկզբունքներէն. եւ կամ կրնար, ձեռին մէջ պահպանելով հանդերձ զայն, իրականութեան մէջ հեռանալ անկէ:

Հողվոյթը, որուն կ'ակնարկենք, կեանքի պայմաններուն հող-վոյթն է: Եղեռնը, Հայկական Բարձրասնոյսի դատարկումը իր հա-զարամեակներու բնակիչներէն, Հայաստանի Հանրապետութեան հռչակումը, անոր կարճատեւ կեանքէն ետք՝ խորհրդայնացումը, նոր կարգերուն ժխտական կեցուածքը Հ.Յ.Գաշնակցութեան եւ ընդ-հանրապէս ազգային, ազգայնական ապրումներուն դէմ (գէթ մինչեւ Բ. Համաշխարհային պատերազմը) գաղութահայութեան կեանքի պայմաններուն անմիջական կազմակերպման հրամայական անհրաժեշտութիւնները կ'ընէին այնպէս, որ հետզհետէ կը նուազըր յեղափոխական գործունէութեան կարելիութիւնը, կ'աւելնար ազգա-յին, ազգապահպանման գործունէութեան կարելիութիւնը, մասամբ ալ՝ քաղաքական գործունէութեանց կարելիութիւնը: Հետեա՞նքը՝ Հ.Յ.Գաշնակցութեան հոծ շարքերը հետզհետէ աւելի ու աւելի կը գրկուէին անցեալին գոյութիւն ունեցած եւ իրենց տեղական մարմին-ներուն կողմէ կազմակերպուած յեղափոխական գործունէութիւն-ներէն, որոնց մէջ մահուան վտանգը մշտական ներկայութիւն մըն էր, կեանքի գոհաբերումին յանձնառութիւնը անմիջականօրէն գոր-ծադրելի էր, ինչ որ զիրենք կը վերածէր բարոյական պարտաւորու-թեանց ենթարկուած, յեղափոխականի հանգամանքովն իսկ որեւէ իրաւունքի ու պահանջի հարց չունեցող, միայն հոգեկան բարար-րութեամբ գոհացող ընտրեալներու, որոնց համար կուսակցութեան կամքը ... ամենուրեք, մշտապէս պարտադիր իրողութիւն մըն էր, գոր իրականացնելու համար ... սեփական ներքին մղումով իսկ գործադրելու միջոցները կը փնտռէին եւ ամէն ինչ գոհելով՝ կ'իրականացնէին: Այդ կարելիութիւններէն զրկուած, ... կը սկսէին վերէն եկող հրահանգներու սպասել կամ ալ պարզապէս վերէն սպա-սել գործունէութիւնը:

Միւրեքեան պայմանները, իրարմէ հեռու եւ շատ այլազան պայ-մաններու տակ ապրող գաղութներով, մեծապէս պէտք է նպաստէին ապակեղրոնացման սկզբունքի գործադրութեան: Եւ սակայն կը պա-տահէր հակառակը. յաճախ կազմակերպական հեռաւոր միա-ւորներ, «Կենտրոն»էն ուղղութիւն մը, հրահանգ մը չստանալով, ի-րենք զիրենք լքուած կը զգային, մասամբ՝ կորսուած. ու կը սկսէր նուազի գործունէութեան թափը: Ասոր իբրեւ հետեւանք «Կենտ-րոն»ներն ալ կը սկսէին մտածել աւելի կեղրոնացեալ ձեւով դեկա-վարելու եղանակներ որդեգրելու մասին:

... Վ. Նասասարդեանի «Գաղափարների Ոգին» գիրքը ... 1955ի

ԺՁ. Ընդհանուր Ժողովին [ոմանց կողմէ մեղադրուեցաւ իբր նման հողվոյթի մը արտայայտիչը] ...

Վ. Նաւասարդեանի գիրքը սակայն իր մէջ կը պարունակէ, միաժամանակ, բարարար տուեալ՝ Հ. Յ. Գաշնակցութեան ապակեդրոնացման ըմբռնումը հաստատող ...

... Կեանքի նոր տուեալներու ճնշումին տակ, Հ. Յ. Գաշնակցութեան կազմակերպութիւնը, հակառակ իր համահայկական նպատակներով գործունէութեան, հակառակ իր աւանդութեանց, հակառակ մինչեւ անգամ իր կառոյցին, որ կը շարունակէր խարսխուած մնալ ապակեդրոնացման սկզբունքին վրայ, թաւալող տարիներու ընթացքին, աստիճանաբար [կը դառնար] ոչ թէ ԿԵԴՐՈՆԱՅՄԱՆ, ... այլ [դաշնակցական] ապակեդրոնացման ... աղօտացումին, տարտամացումին, իր բարոյական պարունակութենէն մասամբ դատարկումին, ինչ որ կուսակցական անջատ միաւորները կը վերածէր ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ, մինչ ապակեդրոնացման դաշնակցական ըմբռնումին համաձայն անոնք պէտք է ըլլային ընդհանրական նպատակները տեղոյն վրայ հետապնդող մարմիններ:

Տեղայնութեան մտածողութիւնն ու պարունակները այնքան կը շեշտուէին, որ կը պատահէր մինչեւ անգամ որ կուսակցական բարքերը փոփոխութեան ենթարկուէին որոշ շրջաններու մէջ եւ ստանային, տեղ-տեղ, նոր դիմագիծ, նոր բնութագիծ, բոլորովին հեռանալով սկզբնական այն ըմբռնումէն՝ թէ *«Յեղափոխական գործին մէջ իրատունքի եւ պահանջի խնդիր չի կրնար ըլլալ, այլ միմիայն բարոյական պարտաւորութեան ու բարարարութեան խնդիր»*։ Ըմբռնում՝ որ հիմնաքարն է Հ.Յ.Գաշնակցութեան կողմէ որդեգրուած ապակեդրոնացման սկզբունքին:

Այդպիսի փոփոխութիւն դիրութեամբ տեղի կ'ունենար մանաւանդ այն պատճառով, որ հայկական բարձրաւանդակին վրայ հայ ժողովորդի ազատագրման համար անցեալին մղուած յեղափոխական պայքարը կարելի չէր շարունակել անցեալի եղանակներով, քանի որ դատարկուած բարձրաւանդակին ու աշխարհացրի դարձած հայութեան միջեւ յարաբերութեան կարելիութիւնները հիմնական փոփոխութեանց ենթարկուած էին:

Կեանքի հոսանքին հետեւիլը եթէ բնական երեւոյթ է ժողովրդական զանգուածներու համար, բնական չի կրնար ըլլալ քաղաքական-յեղափոխական կուսակցութեան մը համար, որուն յեղափոխական մտայնութիւնն իսկ ինքնին կը նշանակէ արդէն ծառայում՝ գոյութիւն ունեցող պայմաններուն դէմ, աւելի լաւ, աւելի արդար պայմաններ առաջացանելու վճռակամութեամբ, հարկ եղած պարագային մինչեւ անգամ արեան ճամբով, կեանքի զոհաբերութեամբ:

Ապա ուրեմն, սփիռքեան պայմաններու ազդեցութեան տակ

Հ. Յ. Գ. Բիրոն, 1964ին, իր թիւ 19 շրջաբերականով 18րդ Ընդհ. Ժողովին կողմէ ընդունուած եւ յանձնարարուած այս բանաձեւումը կը փոխանցէր բոլոր ընկերներուն:

«... Հ.Յ. Դաշնակցութեան կազմակերպական կառոյցը իր վերջնական եւ առողջ շեւտորումը ստացաւ հայրենի հողին վրայ յեղափոխական եռուն գործունէութեան ընթացքին, դաշնակցական ընկերներու զոհաբերութեանց որպէս պասկում:

«Կեանքը ցոյց տուաւ, որ ուղիղ էր Դաշնակցութեան կազմակերպական շեւր, որուն հիմնական առակցքը կը կազմէն ԱՊԱԿԵԴՐՈՆԱՅՈՒՄԸ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ: Այս երկու տարրերն են, որոնք լաւ ըմբռնուելով եւ ուղիղ գործադրուելով, բերած են անցեալին, կրնան միշտ բերել մեր կուսակցութեան, պէտք եղած ուժը՝ առողջ ու րոկուն հիմներու վրայ հաստատուած:

«Սկզբունքները, զադափարները արժէք կը դառնան ԵՐԲ ՉԱՆՈՆՔ ԳՈՐԾԱԳՐՈՂՆԵՐԸ ՉԵՆ ՇԵՂԻՐ ԱՆՈՆՑՄԷ, կը մնան պէտք եղած բարձրութեան վրայ, պէտք եղած ուղիղ ճամբուն վրայ: Երբ շեղումներ թոյլ տրուին սկզբունքներէն ու զադափարներէն այսօր, հո՛ւ, սեփական գործելակերպին համար, կեանքը կը պարտադրէ որ նոյն շեղումները կրկնուին նաեւ վաղը, նաեւ ա՛յլ րեդ, նաեւ ուրիշին համար, ուրիշին կողմէ: Եւ այդ շեւտով, աստիճանաբար կրնայ կորսուիլ կազմակերպութեան առողջ դիմագիծը, եւ րեդը կրնայ բռնել ազաւաղում մէկ պատկերը, ուրուագիծ մը միայն:

«Ահա թէ ինչո՛ւ Հ. Յ. Դաշնակցութեան 18րդ Ընդհանուր Ժողովը յարակ որոշումներ տուաւ կազմակերպութեան կառոյցի ամրապնդման համար. եւ պարտականութիւն դրաւ Հ. Յ. Գ. Բիրոյին վրայ ՏԵԻԱԲԱՐ ՀՍԿԵԼՈՒ, ՏԵԻԱԲԱՐ ՀԵՏԱՍՈՒՏ ԸԼԼԱԼՈՒ, որ ամէն րեդ, եւ ՄԻՇՏ ԲԱՐՉՐ ՄՆԱՆ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, կազմակերպութեան կարգապահութիւնը, կառոյցը, ընկերական ոգին ու սերը»:

«... Կուսակցական միատրները պէտք չէ սպասեն, որ իրենցմէ դուրս, իրենցմէ վեր մարմիններ հրահանգեն ամէն օր, ամէն րոպէ եւ իրենք ըստ այնմ գործեն. արիկա պիտի ըլլար չափէն աւելի կեդրոնացում:

«Կուսակցական զանազան միատրները իրենք պէտք է գիրակցին իրենց ... պարտականութեանց. պէտք է անդրադառնան որ իրենց կեցումաձեւը, գործունէութենէն եւ ուժէն կախում է ամբողջ կազմակերպութեան կեցումաձեւը, ուժը, դիմագիծը եւ արոք համար՝ ամբողջական փարոմով պէտք է անցնին շինարար, կառուցող, ուժը ամելցնող, շարքերն ու շրջապարը դաստիարակող աշխատանքի եւ իրենց շրջանի կուսակցական, ազգային, հասարակական կեանքը դեկավարեն Դաշնակցութեան գծած ճանապարհով»:

«... Դաշնակցութեան ուժին զաղդակիքը իր ընկերներուն ու մարմիններուն բարոյական ըմբռնումին մէջ է: Ամէն մէկ շարքային ընկեր, իր ազատ կամքով եկած Դաշնակցութեան ընդհանրէն ներս, ունի իր ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, որոնցմէ երբեք չշեղիլը իր պարտականութիւնն է:

«Ապակեղրոնացունը ԻՐԱՒՈՒՆՔԻ ՀԱՐՅ ՉԷ, այլ լաւագոյն գործունէութեան մը հասնելու ճամբայ: Այդ ձեւը իր լաւագոյն արժէքատրուը կը ստանայ միայն այն պարագային, երբ դաշնակցական ընկերներն ու մարմինները իրենց ԱՄԷՆ ՃԻԳԸ ԿԸ ԹԱՓԵՆ, իրականացնելու համար մարմիններու եւ ժողովներու որոշումները, եւ ԱՆԽԱՒՏ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ կանոնագրային պահանջներն ու ԸՆԿԵՐԱԿԱՆ ՍԷՐՆ ՈՒ ՈԳԻՆ: Իսկ արիկա կարելի է իրականացնել միայն այն պարագային, ԵՐԲ ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆԸ ՈՉ ԹԷ ԿԸ ՄՏԱԾԷ ԻՐ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ, ԱՅԼ ԻՐ ՊԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆՑ ՄԱՍԻՆ: Ամբողջական գոհաբերութիւնն է դաշնակցականի գերագոյն իրաւունքը, եւ այդպէս է, այդ ըմբռնումով է որ Դաշնակցութիւնը դարձած է հզօր կազմակերպութիւն: Նոյն ճանապարհին հետեւելով է միայն, որ ան կրնայ մնալ ուժեղ, եւ ԼՐԻԻ ԿԱՏԱՐԵԼ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԳԻ ՀԱՆԳԷՊ»:

Հ.Յ.Գ. Բիւրոն այդ շրջաբերականին կցած է նաեւ մարմիններու ուղղուած նամակ մը, ուր կ'ըսուի թէ դրկուող թիւ 19 շրջաբերականը չի դրկուիր պարզապէս իբրեւ ստածումի մը փոխանցումը ընկերներուն, այլ նաեւ իբրեւ հրահանգ, որ պէտք է բոլորի սեփականութիւնը դառնայ: Այդ նամակով մարմիններէն պահանջուած է, որ Ընդդ. Ժողովի բանաձեւումը խումբերուն փոխանցելու ատեն ճիգ թափուի, որ խումբերը յատուկ ուշադրութիւն դարձնեն արծարծուած միտքերուն եւ զանոնք ընդունին որպէս գործադրելի պարտաւորութիւն:

... Իւրաքանչիւր ժողով, մարմին, ընկեր ամէն անգամ որ ինքզինք կը գտնէ Դաշնակցութեան տուած որոշումներուն հետ դէմ յանդիման, ինքզինք կը զգայ բարոյական պարտաւորութեանը տակ այդ որոշումները գործադրելու համար ամէն ճիգ թափելու: Որովհետեւ ան կը գիտակցի, պէտք է գիտակցի, թէ **իրմով, անհատ դաշնակցականէն սկսելով է**, որ կը կերտուի Հ. Յ. Դաշնակցութեան ուժը ...

... Եթէ սակայն պատահի, որ ընկերներ, մարմիններ, ժողովներ, կամ շրջան մը, «տեղական պայմաններ» նախադասութեան ետին ապաստանելով չկատարեն իրենց բարոյական պարտաւորութիւնը, չբերեն իրենց կուսակցութեան իրենց ամբողջ ու անկեղծ ճիգը, իրականացնելու համար կուսակցութեան որոշումները, այդ պարագային որդեգրած կ'ըլլան «ինքնիշխան», մինչեւ իսկ «անիշխանա-

կան» միատրի մը գործելակերպ, ինչ որ շատ հեռու է ապակեդրոնացման սկզբունքէն, զայն քանդող է նոյնիսկ ...

... Կրնայ պատահիլ, ու պատահած է, որ կարգ մը որոշումներու գործադրութիւնը, շրջանի մը տեղական բացառիկ պայմաններուն բերումով անկարելի համարուի տեղոյն պատասխանատու մարմնին կողմէ. կրնայ պատահիլ մինչեւ անգամ որ անոր գործադրութեան հետեւանքները այնքան աղէտալի համարուին, որ այդ ղեկավարութիւնը այս անգամ գտնուի նման որոշումի մը գործադրութեան յանձնառութիւնը մերժելու բարոյական պարտաւորութեան տակ:

Նման պատասխանատութիւններ սակայն թեթեօրէն չէ որ կարելի է ստանձնել ... , այս կամ այն որոշումը «տեղական պայմաններուն անհամապատասխան» համարելով չգործադրելու համար զայն: Նման պատասխանատութիւններ ստանձնող մարմինը կամ ժողովը պարտի իրական տուեալներու լուրջ վերլուծում մը կատարելով արձանագրել այն բոլոր պատճառները, այն բոլոր ծանր հետեւանքները, որոնք զինք կը մղեն ընդդիմանալու այս կամ այն որոշումի գործադրութեան, իր շրջանին մէջ: Չի բաւեր ատիկա ալ: Պէտք է նաեւ զիտակցիլ, թէ ապակեդրոնացման հիմունքով նման մերժում մը կրնայ գերադաս ժողովին կամ մարմնին կողմէ համարուիլ անկարգապահական կեցուածք, հետեւաբար նաեւ կարգապահական տնօրինումներու ենթակայ: Անհրաժեշտ է ի յառաջագունէ ընդունիլ, թէ նման պարագայի մը, կարգապահական տնօրինումներու չենթարկուող մարմինը պարտի լուռ ու մունջ տանիլ իրեն համար սահմանուած պատիժը, եթէ պատիժ մը տրուած ըլլայ. եւ ոչ թէ խըժբըծանքի, մեղադրանքի նիւթ դարձնէ այն մարմինը, որ ... կարգապահական միջոցառումներու դիմած է չենթարկուող մարմնին հանդէպ: ... Նման մեղադրանքներ կարելի է անշուշտ կատարել որեւէ մարմնի հասցէին, սակայն [միայն] այն ժողովին առջեւ, որ հաշուառու է այդ մարմնէն ...

*
* *

Հ.Յ.Գ. 19րդ Ընդի. Ժողովին (1967), ապակեդրոնացման հարցին հետ կապուած որոշում մը չէ տրուած: Կը թուի թէ նախորդ, Ընդի. Ժողովի կողմէ կատարուած բանաձեւումը եւ անոր շարքերուն փոխանցումը բաւարարած է 19րդ Ընդի. Ժողովը:

20րդ Ընդի. Ժողովի (1972) որոշումներուն մէջ կրկին կարելի է հանդիպիլ Դաշնակցութեան ապակեդրոնացման հետ կապ ունեցող յիշեցումներու, որոշումներու ...

«... ը.- Մեր կազմակերպութեան ապակեդրոնական ու ժողովըր-

դավարական կառոյցը թոյլ կու տայ որ զանազան շրջաններն ու կազմերը գործեն ըստ իրենց պայմաններում. սակայն ապակեղրոնացում եւ ժողովրդավարութիւն համագոր չեն անիշխանութեան կամ ինքնիշխանութեան, այլ անոնք կը ձգտին սրբեղծել կարելիութիւններ՝ որպէսզի առանց կաշկանդումի, կազմակերպութիւն եւ անհայր կարողանան իրենց միջավայրի, կարելիութեանց ու պայմաններու համեմար կարարել իրենց լաւագոյնը՝ ընդհանրական նպատակի մը իրագործման համար: Ապակեղրոնացում եւ ժողովրդավարական դրութիւն չեն նշանակեր նաեւ շեղում Հ.Յ.Դ. Կազմակերպական Կանոններու, Ընդհանուր Ժողովի որոշումներու եւ ընկերական ու բարոյական աւանդութիւններու հիմնական ուղղութիւններէն:

թ.- «Մեր կազմակերպութեան ժողովրդավարական դրութեան իսկ բերմամբ, անհայրին ընդհանրական գործին բերումած որակական կամ քանակական արդիւնքին մէջ չի կայանար անհայրին արժէքը, այլ այդ արժէքը կը կայանայ անհայրի կարողական փոռայններուն ամբողջական նուիրաբերումին մէջ. այս հիման վրայ է որ մեր կազմակերպութիւնը պէտք է գնահատել իր ընկերները:

ժ.- «Բիւրոն, իբրեւ գործադիրը մեր ընդհանրական որոշումներուն, պէտք է դառնայ ամէնօրեայ ներկայութիւն մեր կազմակերպութեան կեանքին մէջ եւ համադրող ուժ՝ ապակեղրոնացման հիման վրայ գործող մեր մարմիններուն համար: Բիւրոն պէտք է նաեւ հսկէ որ անվթար պահուիւն մեր կազմակերպութեան կանոնական հիմնական սկզբունքները, բարքերը, աւանդութիւնները՝ բոլոր շրջաններուն մէջ»:

Նոյն սահմանումներն են որ կը յիշեցուին, նոյն մտահոգութեանց արտայայտութիւններն են որ երեւան կու գան ... «*ընդհանրական նպատակի մը իրագործման*» հրամայականը՝ տեղական միջավայրերու եւ կարելիութեանց նկատառումով անշուշտ. Դաշնակցութեան բարքերը, աւանդութիւնները, կանոնական հիմնական սկզբունքները ամէնուրեք անխախտ պահելու անհրաժեշտութիւնը ...

Ներկայիս, Սփիւռքի զանազան գաղութներուն մէջ գործող կազմակերպական միաւորները, անհատ դաշնակցականները, ժողովներն ու մարմինները անհրաժեշտ է որ իրենց ամրակուռ խարխիւր դարձնեն Դաշնակցութեան ապակեղրոնացման սկզբունքը, միշտ յիշելով թէ ան կը նշանակէ, տեղական պայմաններու սահմաններուն մէջ, ընդհանրական նպատակներուն ծառայել, ամբողջական նուիրումով, բարոյական պարտաւորութեանց բարձր գիտակցութեամբ. միաժամանակ ստանձնելով առաջնորդող կուսակցութեան մը վիճակուած բոլոր պատասխանատուութիւնները ...

Բ. Փափազեան, «Ազդակ-Շարքօրեակ-Դրօշակ»,
Ը. փարի, թ. 37-38

ԿԱՌՈՅՑ ԵՒ ԿԱՆՈՆԱԳԻՐ - ԸՆԴՀԱՆՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ
(21ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ, 1977)

Նկատի ունենալով ընդհանրապես մեր կուսակցության կառույցի անցեալ ու ներկայ տարբերակները, գործունեության դաշտերն ու ձևերը, ինչպես մեր ներկայ մականակներն ու պայմանները, կազմակերպական կառույցի մասին 21րդ Ընդհ. ժողովը կ'ընէ սկզբունքային հետեւեալ կարգ մը հաստատումները.-

1. Կազմակերպական ապակեղորոնացումը եղած է ցարդ, եւ պէտք է մնայ այսուհետեւ, մեր կուսակցական կառույցի եւ գործելակերպի հիմնական ձևը: Ան ոչ միայն յեղափոխական-բարոյական հիմք ունեցող եւ մեզի համար անանդութիւն դարձած դրութիւն է, այլ նաեւ միշտ ստեղծած է եւ այսուհետեւ ալ կ'ընայ ստեղծել պատասխանատուութեան զիտակցութիւն ունեցող, կենդանի եւ գործօն մարմիններու ուժական համակարգ մը: Եւ առաւել էս մեր ներկայ իրականութեան մէջ, երբ այնքան տարբեր են յաճախ քաղաքական, ընկերային եւ տնտեսական այն պայմանները՝ որոնց մէջ գործելու կոչուած են զանազան երկիրներու մեր շարքերն ու մարմինները, կազմակերպական ապակեղորոնացումը արդիւնաւէտ գործունեութեան յարմարագոյն դրութիւնն է:

2. Մեր կուսակցութեան համար նոյնքան հիմնական եւ նոյնքան անանդութիւն դարձած ըմբռնում եւ սկզբունք է սակայն՝ դաշնակցական մարդոց եւ մարմիններու գաղափարական-բարոյական կեղորոնացումը: Դաշնակցութեան գաղափարական-բարոյական նոյնանման մթնոլորտն է որ, տարբեր երկիրներու տակ եւ յաճախ բոլորովին տարբեր պայմաններու մէջ, կը ստեղծէ դաշնակցական մտածողութիւն, դաշնակցական որոշումներ, դաշնակցական գործ, գործելու դաշնակցական եղանակ եւ դաշնակցականօրէն գործող մարդիկ: Սրբութեան նման՝ պէտք է անաղարտ պահել մեր գաղափարական եւ բարոյական ըմբռնումներու կեղորոնացեալ այդ դրութիւնը, առանց որուն մեր կազմակերպական ապակեղորոնացումը մեզ կրնայ վերածել իրարմէ հետզհետէ հեռացող, իրարմէ հետզհետէ տարբերող շրջաններու եւ մարմիններու կեղորոնախոյս եւ անճանաչելի ամբողջութեան մը:

3. Ընդունելի ու փափարելի է նաեւ կուսակցական մարմիններու մէջ որդեգրել, ամէնուրեք ուր ցարդ եղած չէ, որոշ մարզերու մէջ լայն իրատեսութիւններով օժտուած ենթամարմիններով, դիւաններով կամ յանձնախումբերով աշխատելու դրութիւնը, առաւելագոյնս օգտագործելով մասնագէտ ու ատակ տարրերը...

4. Հ.Յ.Դ. Բիւրօն Կուսակցութեան գերագոյն գործադիր մարմինն է: Անոր կը պատկանի Դաշնակցութեան քաղաքականութեան ընդհանուր ղեկավարութիւնը: Ան կը հսկէ, որ ժողովներու եւ մարմիններու որոշումներն ու գործերը չհակասեն Դաշնակցութեան Ծրագրին, Կազմակերպական Կանոններուն եւ Ընդհանուր ժողովի որոշումներուն: Ան գերագոյն պահակն է Դաշնակցութեան գաղափարաբանութեան եւ բարոյական ըմբռնումներուն: ... Բիւրօն կը գործէ Կանոնագրով մախատեսելի աշխատանքի բաժանման դրութեամբ, մնալով հանդերձ հաւաքաբար պատասխանատու իր բոլոր գործերու համար:

2. ԿԱՌՈՅՑԻ ՏԻՊԵՐ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱՇՐՋԱՆՆԵՐ

33

[ԱՏՐՊԱՏԱԿԱՆԸ՝ 1890ԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ]

Շատ կարճ ժամանակամիջոցում, ողջ Պարսկաստանի մէջ մեծատիրութեան հասնող գերակայութիւն ձեռք բերեց Դաշնակցութիւնը շնորհիւ Ռոստոմի, որ գողթնեցի լինելով՝ ծանօթ էր այդ երկրին եւ շնորհիւ Յովնան Դաւթեանին, որ դարաստաղցի (Պարսկաստան) էր, Շուշի կրթուած:

Դաշնակցութեան այս երկու հիմնադիրներու մասին շատ քիչ բան գիտենք եւ մեր գիտցածն ալ ընդհանուր խօսքեր են: Յովնանին հագիւ անունը գիտենք, թէ եւ անոր եւ Ռոստոմի կազմած ծրագիրն ու կանոնագիրը Աւետարանի պէս անգիր գիտենք: Այս տարօրինակ հիմնադիրները ուրուականների պէս կ'երեւային Պարսկաստանի տարբեր վայրերու մէջ եւ յետոյ կը կորսուէին: Հրապարակ չէին ելլեր եւ ոչ կը քարոզէին, ոչ կը վիճէին եւ ոչ ալ կը գրէին: Միայն թէ՛ ուր որ անոնք կ'այցելէին, իրենց ետեւէն կեանքը կ'եռար, Դաշնակցութեան նորաստեղծ կազմակերպութիւն մը առաջ կու գար եւ Արմենական ու Հնչակեան կուսակցութիւնները կը հալէին, կը չքանային գարնան ձիւներու նման: Պատճառը այդ արագ եւ շշմեցուցիչ յաջողութեան՝ այդ տարօրինակ վարպետներու գործին եւ մեր նպատակներուն մօտենալու ձեւին մէջն էր:

«Մենք կարողիկոս չենք, որ քարոզիչ, վարդապետ, տէրտէր ունենանք: Մենք կառավարութիւն չունինք, որ պարտադիր օրէնքներ տանք: Մեր մէջ ոչ աղա, ոչ ծառայ կայ, որ հրաման եւ պարտադրու-

թինն սպասենք: Մենք՝ բոլորս հաւասար ենք, առանց սեռի, տարիքի, դասանանքի, դասի, ծառայութեանց եւ գոհողութեանց խարտիքեան: Մենք այս Դաշնակցութեան ծրագիրը, որ քանի մը էջ է, կարդացի՞նք եւ հաւատարացեալ դարձանք: Դուք մեզմէ աւելի ուսումով եւ խելացի՝ կը խնդրենք կարդաք եւ եթէ սխալ է, մեզ տարհամոզէք, իսկ եթէ ճիշդ է, դառնաք մեզի պէս հաւատարացեալ ու մեզ այդ մասին տեղեկացրուէք: Այս ալ կանոնագիրն է, որ ցրուած է հաւատարացեալներուն՝ եղբայրութիւն մը, ոյժ մը, կազմելու համար: Արդ՝ մենք կեդրոն չունինք, դուք էք բուն դեկավարը: Մենք չունինք ոչ թագաւոր, ոչ իշխանութիւն, ոչ հեղինակութիւն, ոչ միջամտութիւն: Այդ բոլորի դերը չեզոք կը պատկանի: Մենք չունինք իւրաքանչիւր վայրի համար գործունէութեան պարտադիր նահապօժ: Այդ կախուած է չեզմէ եւ չեր նահաստէնութենէն: Դո՛ւք պէտք է որոշէք չեր ընելիքները տեղի պայմաններուն համայն: Մենք չունինք նիւթակաւ, ֆիզիքակաւ եւ այլ պարտադիր չենք: Այդ որոշողը չեր եղբայրութիւնը պէտք է լինի: Քանի որ այս բոլորը չեզ կը վերաբերի եւ դուք անկախ էք, չեր տուած որոշումները չեզի համար պարտադիր պէտք է լինեն, իսկ մեզի համար՝ անհաստատելի օրէնք: Միայն մէկ բան պարտադիր է՝ ընդունիլ յեղափոխականներու ծրագիրը եւ կանոնագիրը անփոփոխ, ընդունիլ կամովին եւ ուխտել անոնց հաւատարմի մնալ»...

Այդ անվերապահ վստահութիւնը հանդէպ ուխտեալներուն, այդ ապակեդրոն ձեւը՝ սպանիչ էին հեղինակութեանց հմայքի վրայ յենուած կեդրոնաձիգ կուսակցութեանց համար, ինչպէս էին Արմենականութիւնը եւ Հնչակեանութիւնը: Կեդրոնաձիգ Հնչակեան կուսակցութիւնը արագօրէն տեղի կու տար ապակեդրոն նորածին Դաշնակցութեան առջեւ: Արմենական կուսակցութիւնը, Դաշնակցութեան երեւնալուն պէս, հալեցաւ անոր մէջ:

Դաշնակցութիւնը իր կազմի անդամներուն բոլոր մասերով կը շնչէր ու կը մտածէր, եւ իբր հետեւանք ատոր՝ սունկի պէս կը բուսնէին դաշնակցական կորիզները ինքնաբերաբար, իրենց բազմատեսակ ձեռնարկներով, դպրոցներով, զինական գործարաններով եւ.: Փաստօրէն Բիւրօն մէկ գործ ունէր ընելիք միայն, այն է՝ կապել տարբեր վայրերու կորիզները իրարու հետ եւ անոնց նախաձեռնութիւնները մէկ հունի մէջ բերել:

Այդ ձեւի կազմակերպութիւնը պարտական ենք ամենէն առաջ Յովնանին եւ յետոյ Ռոստոմին: Եւ ասիկա կը տանէր նախաձեռնութեան, յաղթութեան եւ գաղափարների տարածման. [ո՛չ] անիշխանութեան, այլ իշխանութեան ապակեդրոնացման: Այդ ապակեդրոն մարմինները «մասնաճիւղեր» չէին, այլ փաստօրէն անկախ միաւորներ, իրարու միացած՝ Դաշնակցութեամբ եւ անոր ընդհանուր

նպատակներով: Եւ ասիկա սպանիչ եղաւ միւս կազմակերպութեանց համար եւ պատճառ եղաւ նոր կուսակցութեան հզօրացման ու ծաւալման:

«Հայ Յեղափոխականի մը Յիշարակները», ք. հարոր, Ռուբէն

34

[ԿԱՐՍԻ ՀՆՈՅԸ՝ 1904ԻՆ]

Մերգէյի եւ միւս ընկերների միջոցով եւ ծանօթացայ Կարսի շըրջանի մեր ամբողջ կազմակերպութեան մեքենականութեան եւ անցուդարձի հետ: Աւելորդ չեմ համարեր այստեղ ներկայացնել Կարսի կազմակերպական ձեւը... որ հետեւեալն էր.-

Քաղաքը բաժնուած էր քաղաքամասերու, որոնց մէջ գտնուող ուխտեալ կուսակցականները բաժնուած էին խումբերու, ըստ տարիքի եւ ըստ խումբի ցանկութեան: Խումբի անդամները կը ճանչնային զիրար եւ կանոնաւոր ժողովներ կ'ունենային, դասախօսութեանց ներկայ կ'ըլլային, անդամավճար կուտային եւ կ'իրագործէին Ենթակոմիտէին հրահանգները: Մէկ խումբի անդամը չէր ճանչնար ուրիշ խումբերու անդամները: Իրարմէ գաղտնի էին եւ շաղկապուած էին Ենթակոմիտէով: Անոնց մէջ չկային կիներ: Բայց կիները այրերու նման կազմակերպուած էին եւ Կարմիր Խաչի դերը կը կատարէին: Անոնք ունէին իրենց առանձին վարչութիւնները, որ առաւելապէս դրամ, աշխատանք եւ եկամտի աղբիւրներ կը ստեղծէին կուսակցութեան անդամներուն համար:

Նիւթական գոհաբերութիւնը մրցման առարկայ էր: Ժլատութիւնը համարժէք էր հայութենէ դուրս լինելուն: Եւ ամէն մէկը իր ուժերէն վեր կ'ուզէր գոհաբերել, կը գոհեր աւելին քան պէտք էր, ինչ որ կը չափաւորէին ղեկավարները:

... Գիւղերու կազմակերպական ձեւը քիչ մը տարբեր էր... Գիւղի ամբողջ համայնքը կ'ընտրէր երեք հոգիւնոց ենթակոմիտէ մը, որ գիւղի բարձրագոյն իշխանութիւնն էր: [Ան ստանձնած էր դատաստանական (ոչ մէկ դատ կը հասներ ռուս պետական դատարանի...) եւ դպրոցական գործերը, կուսակցական տուրքի գանձումը, Տաճկահայաստանի գաղթականները, ինչպէս եւ զինամթերքն ու անցնող խումբերը պահելու ընդունումը]:

Գաւառի գիւղերը իրենց ներկայացուցիչներով կ'ընտրէին Շրջա-

նի կոմիտեն, որ Ենթակոմիտեությանց անմիջական բարձր վարչութիւնն էր: Անոր տրամադրութեան տակ էր Կ. Կոմիտէի կողմէ նշանակուած Շրջանի շրջիկ գործիչը, որ կը կատարէր կամ կատարել կուտար Կոմիտէի որոշումները եւ ընդդիմացողները կարգի կը հրաւիրէր: Շրջիկի տրամադրութեան տակ էին առաւելն երկու զինուածներ:

... Հետաքրքրական էր մէկ այլ հակասական երեւոյթ, որ մինչեւ օրս չեմ կարողացած ըմբռնել իր խորքով: Կ. Կոմիտեն շրջանի վերին դեկավարն էր, անոր անունով կը կատարուէին բոլոր գործերը: Բայց ինք աներեւոյթ էր: Այդ միայն զգուշութեան հետեւանք չէր, այլ ունէր եւ այլ իմաստ:

... Կարսի Կ. Կոմիտէի ընտրութեան մէկ անգամ ներկայ եղայ եւ այլեւս ոչ մէկ տեղ նոյնը չտեսայ: ... Շրջանային Պատգամատրական Ժողովը գումարուած էր ընդհանուր կարգով, ըստ կանոնագրի: Սիւայն թէ, քանի որ Կ. Կոմիտեն, թէեւ կազմուած էր 7 անձերէ, բայց մէկ անձ էր իբր Կ. Կոմիտէ, եւ քանի որ ինքը գաղտնի մարմին էր ու գաղտնի մնալով գործած էր իր նշանակած գործիչներու միջոցով, ուրեմն ան կը շարունակէր բացակայ մնալ Շրջանային Ժողովէն:

Երկու գլխատր զեկուցում հաշուական եւ գործի՝ ներկայացուած էր, հաստատուած Կ. Կոմիտէի կնիքով: Կ. Կոմիտեն իր փոխարէն ներկայացուցիչ էր կարգած Յակոբը (Չիլիմգարեան) եւ Սերգէյը [յետագայ Արամը], որոնք իր գործիչներն էին: Անոնք միաժամանակ հրաժարական տուին եւ նոր Կ. Կոմիտէ ընտրել պահանջեցին:

Սովորական ձեւով, բացակայ Կ. Կոմիտէի քննադատութիւններ եղան: Բայց պաշտպանողը ինքը չէր, այլ պատգամատրները կամ գործիչ-ներկայացուցիչները, որոնք կուտային լրացուցիչ տեղեկութիւններ եւս եղած հարցումներուն:

... Ընտրութիւնները, ըստ սովորականի, համաձայն կանոնագրի էին, բայց կային մանրամասնութիւններ, որոնք յատուկ էին Կարսի:

Առաջին հերթին, Կ. Կոմիտէի թեկնածուի անձով չէին հետաքրքրուեր, այլ անոր սերունդով: Ովքե՞ր էին թեկնածուի մայրը, հայրը, անոնց մամը, պապը... Երկրորդ հերթին՝ կը քրքրէին թեկնածուի ընտանիքը, անոր [անձնական] կեանքը... Երրորդ հերթին միայն կը քննէին թեկնածուներու անձնական եւ կուսակցական յատկութիւնները: Անոնք պէտք չէ լինէին գործազուրկ. ընդհակառակն, պէտք է ունենային իրենց հաստատուն գործը, պաշտօնը: Առնուազն ինքնաբաւ պէտք է լինէին:

... Թեկնածուները կ'ընտրուէին առանց նկատի առնելու ծննդեան վայրը, դիրքը եւ դասը: [Բայց մէկը առաջարկեց ու համոզեց, որ Կ. Կոմիտեն ընտրուի իբր «*ազգը կազմող եօթը գոյներու ծխածան*»]:

Իրօք որ ձայները այդ ուղղութեամբ կեղդոնացան.- Նորհատեան (կարսեցի), ուսուցչական-մշակութային գոյնէն. Մեւ Կարօ (ախալքալաքցի), գործաւոր-բանուորներու գոյնէն. Երուանդ (ախալքալաքցի), առեւտրականներու գոյնէն. Բզնունի (կարծեմ կարսեցի), պետական պաշտօնութեան գոյնէն. բժ. Գազանջեան (ախալքալաքցի), ազատ ասպարէզի գոյնէն. Մխշոնց Մարգար (կարսեցի), մանր առեւտրական, գիւղացիական գոյնէն:

... Չարմանք յայտնեցի, թէ՛ ինչո՞ւ [չընտրուեցան Տուրբախը, կամ Յակոբը եւ Մերգէլը]: Յակոբը ժպտալով պատասխանեց.

- Չարմանում ես, որովհետեւ չես հասկանում Կ. Կոմիտէի էութիւնը: [Կ. Կոմիտէն փեթակի մայր մեղուի նման է]... Կ. Կոմիտէի անդամները հերոս լինելու հնարաւորութիւնը եւ պարտականութիւնը չունին: Նախ՝ գաղտնի պէտք է լինեն: Եւ յետոյ՝ նրանք են որ հազարներով պէտք է ստեղծեն Տուրբախի նմանները: Ասում ես՝ ինձ եւ Մերգէլին թողած, ուրիշներին առաջ կը գցենք: Այդ լաւ է: Մենք այսօր կանք, վաղը չկանք, եւ գործի վրայ էլ պիտի վերջանանք: Բայց ո՞վ պիտի լինի մեզանից աւելի լաւ եւ շատ աշխատաւորներ ստեղծողը: Եթէ Կ. Կոմիտէն հասկանայ իր դերը եւ ուրիշ բաների չխառնուի, եթէ նա իր հսկիչները ածէ եւ կամք ունենայ կառավարելու՝ առանց երկպառակութեան, նա կ'արդարացնէ իր գոյութիւնը, եւ ամէն ինչ յարատեւ եւ լաւ կը գնայ: Այս կը լինի, երբ նա մի անձ դառնայ:

*

* *

Քաղաքը եւ նահանգի գիւղերը բաժնուած էին կոմիտէութեանց, ենթակոմիտէութեանց եւ խումբերու, որոնք իրենց ցածից վեր բարձրացող մարմիններով կը նմանէին բուրգի մը: Այդ բուրգին կատարը անշօշափելի, գաղտնի Կ. Կոմիտէն էր: Ասոնք օրէնսդիր, վարչական, **ընտրովի** մարմիններն էին:

Քանի որ Կ. Կոմիտէն գաղտնի էր, [շրջիկներու նշանակովի ցանցըն էր կապը անոր.] ժողովուրդին եւ շարքերուն միջեւ: [Շրջիկները] կը կատարէին [Կ. Կոմիտէին] հրահանգները եւ կ'իրագործէին անոր որոշումները: Այն գործերը կամ որոշումները, որ յաջող էին, Կ. Կոմիտէին կը վերագրէին: Չախողութեան պարագային կը յայտարարէին, որ **իբեկ** սխալն է եղած եւ վերաքննելի է, քանի որ Կ. Կոմիտէն չէր քննած:

[Շրջիկ գործիչներու պարտականութիւնն էր նաեւ] վարժուիլ նոր ապրելակերպին, ճամբորդել երկաթուղու երրորդ կարգով, ձիով կամ ոտքով, ապրիլ ժողովուրդի մէջ, անոր ամենէն աղքատ դասի եւ չարքաշ զինուորի կեանքով, զրկուած ամէն վայելքէ: [Անոնց] ցանցը

նօսք էր ... մտաւորականներ էին, միջնակարգէն բարձր կրթութիւն ունէին. իրենց ուղեկից 2-5 զինուորներով, որոնք ընդհանրապէս անուն հանած եւ լաւ ատրճանակ ու դանակ բանեցնող անձեր էին:

[Կուսակցական կառոյց, Կ. Կոմիտէի եւ իր գործիչներու աշխատանքը.- Ամբողջ ժողովուրդին վերաբերող գործերէն՝ դատարանի ու պատիժներու, եկեղեցական-դպրոցական գործերու մասին. ապա՝ բուն կուսակցական կառոյցի առնչուող գործերը].-

Գործիչներու հիմնական պարտականութիւններէն մէկն էր կուսակցական տուրքերու գանձումը եւ եկամուտներու յաւելումը: Ատր կուտային, բացի նիւթականէն, նաեւ բարոյական նշանակութիւն:

Ով իրեն Դ-աշնակցական համարէր, կուսակցական տուրքի ենթակայ էր: Տուրքն էր հիմնական եկամուտը, չափանիշը պարտականութեանց ըմբռնման: ... Համաչափ չէր, այլ ըստ կարողութեան [ոեւէ մէկուն հաստատ եկամուտին 1%-3%ը չէր անցներ: Քանակը որոշողը... վճարողի խումբի կամ ենթակոմիտէութեան ընկերներն էին]:

Գործիչին համար, երբ գանձումներ կը կատարուէին, անձնատրութիւններ գոյութիւն չունէին: Ան ենթակոմիտէի կամ խումբի ներկայացուցած ցանկին եւ հաստատած տուրքին գումարը կը ստանար. բուն գանձողը ենթակոմիտէն կամ խումբն էր անհատներէն:

Չվճարողները դուրս կը նկատուէին շարքերէն: Աւելի վճարողներուն գումարները՝ նուէր անուան տակ կը ներկայացուէին:

Շարքայիններու թիւը հազիւ 1-2%ը լինէր բնակչութեան: Անոնց [տուրքերու գումարը] չնչին էր համեմատած կուսակցութեան ընդհանուր եկամուտին հետ: Այդ թուական սահմանափակութեան մէջ կը համրուէր անոր որակը, որովհետեւ ան էր կայունը եւ անվոփոխը. կուսակցութեան կայունութիւնը պահողը եւ կենդանութիւն տուողը, [մինչ] գանգուածը շարքերէ դուրս էր: 1904ին այդ գանգուածի թիւը բնակչութեան շուրջ 80%ն էր, եւ կը տատանուէր իր տրամադրութեամբ, կ'ելլէր ու կ'իջնէր քանակով: Այդ կախումը էր մէկ կողմէ շարքայիններու աշխատանքէն, միւս կողմէ՝ արտաքին վիճակէն: Եկամուտի քանակը 90%ով կուգար այս գանգուածէն՝ ... հանդէսներէ, նուէրներէ, հանգանակութիւններէ, տուգանքներէ եւայլն: Եկամուտն ալ կը տատանէր գանգուածի տրամադրութեան պէս:

Կարսի շրջանի եկամտային այս ձեւը արժէքատու էր անոր համար, որովհետեւ այնտեղէն անցնող եւ Երկիր մտնող գործիչները ընդօրինակեցին զայն եւ մուծեցին Երկիր:

Ծախքերը եւ գէնքի գնումները.- Այս գործերն ալ կը ծանրանային շրջանի գործիչներուն վրայ, որոնց առանցքը Յակոբն (Չիլին-գարեան) էր 1904ին:

Նահանգի եւ քաղաքի համար շարունակ կը պահուէին 15-20 զինուորներ եւ միջին հաշուով 5 գործիչներ: Բայց Յակոբը, ի հարկէ Կ. Կոմիտէի անունով, կրցած էր կարգեր հաստատել, որ այդ առանց ծախսի լինի: Անոր «օրէնքներն» էին.- ա) Գործիչը կամ զինուորը, որ ուխտած է իր կեանքը նուիրել ազգին, դրամ պէտք չէ ունենայ, ռոճիկի կամ այլ անուան տակ: Եթէ դրամ ստանայ, այդ համագոր է իր արիւնը ծախելու: ք) Ազգին ամէն տունը իր տունն է. եւ այդ տունը, որ իր դռները կը գոցէ եւ հիւր չընդունիր իր համար զոհուողին՝ հայ չէ: գ) Այս զոհերը ատելի խեղճերուն համար են. ուստի գործիչը, զինուորը պէտք է գերադասեն աղքատներուն տները հիւր լինել եւ անոնց «հացը կտրել», քան կարողութիւն ունեցողներուն: Հիւրընկալը անօթի է, դուն ալ անոր հետ անօթի պէտք է մնաս:

Այս սկզբունքներով բոլոր ծախքերը կը վերանային: Շեղումներ կը լինէին միայն քաղաքի մէջ, ուր, օրը 20 կոպէկէն ատելի չծախսելու պայմանով, կը վճարուէին ծախսերը:

Կուսակցական եկամտոսին 80%ը կ'երթար զէնքի եւ փամփուշտի գնման: Անոնցմով կը լեցուէին պահեստները, որոնք Երկիր ճամբելու համար էին: ... Բոլոր ներելի եւ աններելի միջոցներով զինամթերք կը հաւաքուէր Կարսի մէջ:

Փրոփականող.- Այս գործն ալ ծանրացած էր գործիչներուն, շրջիկներուն վրայ: Գրաւոր փրոփականտ գոյութիւն չունէր այդ թուին... 1904ի իմ շրջապատը կ'առաջնորդուէր ժողովրդական հոսանքին զարկը դիտելով, իսկ անոր տեսութիւնները աղբիւր ունէին գործը եւ կեանքը: Ընթերցանութիւնը խիստ նուազ էր:

... Մամուլին ուժ չէինք տար եւ ոչ ալ անոր լաւին ու վատին ականջ կուտայինք: ... Այդպէս լինելով հանդերձ, Ծրագիր եւ Կանոնագիր անգիր գիտէինք եւ Բիւրոյի ու Կ. Կոմիտէներու շրջաբերականները ուշադրութեամբ կը կարդայինք ու կը վերլուծէինք ամենքին համար:

Փրոփականտի գլխաւոր միջոցը բերանացի քարոզչութիւնն էր, որ մատչելի եւ հասկնալի էր ամենքին: Ան կը կատարուէր մէկ կողմէ աշուղներու եւ միւս կողմէ՝ մտատրական քարոզիչներու միջոցով:

Աշուղներու արժէքը չէ գնահատուած, թէեւ անոնց շնորհիւ է որ մեր ժողովրդական զանգուածը իր քնէն արթնցար եւ մտածել սկսար... [Գալով քարոզիչներուն,] Կարսը տեսած էր անցորդ եւ մնայուն շատ քարոզիչներ, զորս կը յիշէր: [Կը հետեւին անունները Ռոստոմի, Գ. Խաժակի, Ն. Աղբալեանի, Ա. Վռամեանի, Եգոր Առտամեան-Մեմակի եւ տեղացի ղեկավար-մտատրական Հ. Նորիատեանի:]

... Երբ ես Կարս եկայ, որպէս փրոփականտի կեդրոնական ղեմք մնացեր էր Սերգէյը, շրջապատուած ինձպէսներով, որոնց լեզուն փայտ կը կտրէր [երբ պէտք էր խօսիլ զանգուածին]: Ուստի լաւ էր,

որ մենք լռեինք եւ փրոփականտի գործը ձգեինք Սերգեյին.. [որ] բոլոր գիշերները ժողովներ ունէր հարսանիքի, նշանուքի, կնունքի կամ այլ պատրուակներու տակ ու 100-300 հրաւիրեալներով:

... Երբ այս բոլոր գործերը կը կատարուէին գործիչներու միջոցով, բնականաբար հարց կը ծագի, թէ ի՞նչ էր դերը Կ. Կոմիտէին... Գործիչներու գլխաւոր աշխատանքներու թումնէն հասկնալի է, որ [անոնք] ընդհանրապէս բոլոր աշխատանքները կը կատարէին, իսկ ինքը կարծես գոյութիւն չուներ, կամ մէկ խորհրդանշական, անանձն վարչութիւն մըն էր, պատուակալ նախագահի նման: Այդ այդպէս էր երեւութապէս, բայց այդպէս չէր իրականին մէջ, քանի որ անոր ձեռքն էր գործիչները եւ բոլոր զինուորներն ու աշխատողները կարգի հրաւիրելու եւ պատժելու կարողութիւնը..

Ինչպէս ըսի, Կ. Կոմիտէն կ'ընտրուէր եւ աշխարհէն կը կտրուէր: Գործերու յղացումը, կարգի հաստատումը եւ կամք ունենալը ամբողջովին Կ. Կոմիտէին չէին պատկաներ, թէւ ինքն էր այդ բոլորի մարմնացումը: Ատոնք կը կազմաւորուէին ցածէն վեր բարձրացող խումբերու, ենթակոմիտէներու բաղձանքներէն, յղացումներէն, որոնք կը խտանային կոմիտէութեան մէջ, իսկ ինքը՝ յենուած լինելով կոմիտէութեանց վրայ եւ անոնց հետ ուղղակի կապ ունենալով, պարտաւոր էր իւրացնելու անոնց հաւաքական կամքը, յղացումը, կարգը: Այդ էր պատճառը, որ մենատիրութիւն չէր կարող լինել Կ. Կոմիտէի կողմէ, թէւ ձեռով ան կը գործէր իբր այդպիսին:

Միւս կողմէ, Կ. Կոմիտէի նշանակած բոլոր գործիչները, շրջիկները, զինուորները միայն մէկ պարտականութիւն ունէին, այն է՝ անոր կամքը իրագործել, անկարգները կարգի հրաւիրել, անոր յղացումները ի կատար ածել, ինչպէս որ կ'ընեն մեղուանոցի աշխատատիրները կամ բանակի զինուորները:

Ուժը, կորովը անանուն հաւաքականութեան մէջ էր: Ան կախուած չէր անհատի մը փայլէն, որուն խաւարումը յաճախ պատճառ կը դառնայ ամբողջի խաւարման:

«Նայ Յեղափոխականի մը Յիշարակները», ա. հայրոր, Ռուբէն

35

[ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԸ՝ 1905ԻՆ]

Յակոբ Չիլիզգարեանը, որ զիմրեցի էր, ... մեզ առաջնորդեց տուն մը, ուր մարդիկ կ'ելլէին ու կը մտնէին, կարծես «բիթ բազար» լինէր: Դրան առջեւ կը խօսէին բարձր, իսկ սրահներուն մէջ փսփսուքով:

Գահլիճը մտանք, լուռ էին ամենքը, կարծես նորահարս լինեին: Սեղան մը կար հոն դրուած, չորս կողմը խառն ի խուռն նստած էին մարդիկ, իսկ անոնց կեդրոնը՝ «կոլա շապիկ» փողկապով գեղեցկադէմ մարդ մը, որուն Վահան Ջալլաթեան անունը տոհմն:

Մենք որ ներս մտանք, ոտքի ելան եւ «Վա՛յ բարով եկաք» ըսելով տեղ հրամցուցին: Վահանը իր աջ ու ձախ կողքերը առաւ Սերգէյն ու Յակոբը: Չիս չէր ճանչնար: Ոտքի մնացի, բայց ինձ ալ անկիւն մը տեղ ճարեցին:

- Ներեցէ՛ք մեզի, մէկ ժամ չի տեսեր այս բարեկամներուն գործերը վերջացնելը: Օրը երկու ժամ հոս կը ժամադրուինք, որ փողոցէն, խանութէն, սրճարանէն ազատինք եւ գործերը հանգիստ կերպով տեսնանք,- բացատրեց Վահանը: Դառնալով հերթի սպասողներուն, ըսաւ. «Կարճ խօսեցէ՛ք եւ հերթով մօտիկցէ՛ք»:

Իրարու ետեւէ կը մօտենային կոմիտներու, ենթակոմիտներու ներկայացուցիչները: Հաշուեփակի էին եկած: Իրենց ծոցէն կը հանէին հաշուեկշիռները եւ կը ներկայացնէին, գրպանէն կը հանէին դրամները եւ կը հաշուէին ու ժամանակաւոր ստացագիր մը կ'ամսէին մինչեւ հաշիւներու ստուգումը, երբոր կարմիր կնիքով ստացագիր պիտի առնէին:

Անոնց յաջորդեցին զեկուցում տուողները, խնդրատուները, այլեւայլ գործերով եկածները, որոնց ամէն մէկուն կարճ պատասխաններով կը բարարարէին եւ կամ նոր ժամադրութիւններ կուտային գիշերուան համար:

... [Ի վերջոյ] Վահան Ջալլաթեանը իր դերը յանձնեց իր ընկերներէն մէկուն, որուն անունը չեմ յիշեր, եւ մեզ հրաւիրեց կողքի սենեակը սուրճ խմելու: Ոգեւորուած, ան ներկայացուց շրջանի կացութիւնը: Թէեւ ամէն բանի մէջ իր դերը կը մատնանշէր, բայց ընդհանուր առմամբ կ'երեւար, որ Գիւմրիի կուսակցական այս շրջանը իր վերելքին մէջն էր եւ իր զանգուածը կը շնչէր եւ կ'ապրէր Կ. Կոմիտէի միջոցով:

Ոչ մէկ տարբերութիւն չէի տեսներ Կարսի եւ Գիւմրիի միջեւ: Քաղաքը բաժնուած էր թաղամասերու, շրջանները՝ շրջանակներու, շրջանակները եւ թաղամասերը՝ խումբերու: ... Նոյնը՝ ինչ որ Կարսի մէջ - կառավարութիւն մը հայկական՝ ռուս կառավարութեան մէջ. առաջինը՝ իրական, երկրորդը՝ ձեւական:

... Ըստ իս, տարբերութիւնը կը մնար միայն այն, որ Կարսը սահմանային շրջան էր, եւ հոն կային սահմանային կոիւներ եւ անոնց մասնակցող զինուորներ, իսկ եթէ հոս՝ Գիւմրիի մէջ, այդ չկար, աստոր փոխարէն ան այդ կոիւներուն ռազմամթերք եւ այլ նիւթեր մատակարարող վայրն էր:

Յակոբ Չիլինգարեանը գոհ էր, որ իր բնագաւառը սեսերես շրջան

մը չէր: Ես այնքան խանդավառ էի Վահանի տեղեկութիւններով, որ քիչ կը մնար ելլի գայն համբուրելու:

Բայց Վահանի համար, իմ եւ Յակոբի գնահատումները կարեւոր չէին. կարեւորը Սերգէյի գնահատութիւնը վաստկելն էր, որովհետեւ Սերգէյը դարձած էր Կարսի նահանգի կուռքը: Վահան գայն կը դիտէր եւ անոր տպաւորութիւնը կ'ուզէր հասկնալ: Բայց Սերգէյը գետին կը նայէր եւ բան չէր հասկցներ: Վերջապէս, լեզու ելաւ եւ հարցոյց.

- Մենք ինչացո՞ւ ենք, որ մեզ այդ լաւ բաները կը պատմես:

- Որ դուք հասկնաք դրութիւնը. հարեւան շրջան ենք:

- Ըստ իս՝ շատ լաւ չէ՞ ձեր վիճակը: Դու Կ. Կոմիտէի անդամ ես, վտանգաւոր է Կ. Կոմիտէի մէկ անդամի համար իրեն ցուցադրելը: Այդ կրնան ընել գործիչները: Մի՞թէ հոս ուրիշ մարդ չկայ, որ դու եւ քու ընկերները հրապարակ էք նետուած:

- Հասկցայ,- վիրաւորուած պատասխանեց Վահանը,- մենք Կարսի Կ. Կոմիտէ չենք որ դաւուր կախենք մեր վզէն եւ չոմբախը տանք գործիչներուն ձեռքը: Մեր գործը մեր ձեռքով կ'ընենք: Մենք ոչ ծոյլ ենք եւ ոչ ալ վախկոտ:

- Կը սխալիս, ծուլութեան կամ վախկոտութեան հարց չկայ, այլ Կ. Կոմիտէի ապահովութեան: Ձուկը գլխէն կը բռնուի, իսկ դուք ձեր գլուխը կը ցուցադրէք եւ կը վտանգէք ամբողջ կազմակերպութիւնը:

- Այդպէս բան չկայ: Կարսում խառն է ազգաբնակչութիւնը, հոս անխառն է: Ձեր տանը գող կայ, հոս բնաւ չկայ: Հոս կարիք չկայ աչկապուկ խաղալու:

Սերգէյը լսեց դժգոհութեամբ, չպատասխանեց, բայց քթի տակ կ'ըսէր. «Ես չեմ հասկնար՝ թէ այս մարդկանց որոնածն ի՞նչ է»:

Երբ բաժնուեցանք Վահանէն եւ մնացինք Յակոբին հետ, որ ինձ նման հիացած էր Ջալալաբեանին վրայ, Սերգէյը ըսաւ.

- Կարսի մէջ ունինք Պլօ թագաւորը, որ սիրելի է, որովհետեւ իր լոպպագութեամբ իրեն վնաս կը բերէ, իսկ կուսակցութեան՝ օգուտ: Ան մանուկ մըն է, ոչինչ չի փնտռեր, բացի իր վրայ ուշադրութիւն գրաւելէ եւ *աֆարրըս* փաղաքշութիւնը վաստկելէ: Ձեր Վահանը այլ ապրանք է: Մութ է անոր որոնածը: Ձեզ վտանգ կայ: Օր առաջ անկէ ազատիլը բարիք է:

Սերգէյի այս կարծիքներէն դժգոհ էր Յակոբը: Ես ալ տարօրինակ կը գտնէի Սերգէյի բացասական վերաբերմունքը: Մի՞թէ Սերգէյը անոնցմէ է, որոնք՝ ով ալ որ փայլի, ով ալ որ թափ ու եռանդ ցոյց տայ, անոր գլխուն կը զարնէ: Ըսի իրեն իմ կարծիքը, որ շատ վիրաւորեց զինք: Դառնացած պատասխանեց.

- Լաւ, թո՛ղ ձեր ըսածը լինի, անոր կաշին *դարսիսանաս* (խաղախորդարան) կը ճանչնանք:

Անցան մէկ թէ երկու տարի: Կովկասէն եկողները պատմեցին, որ ին հիացմունքի առարկայ Վահան Չալաքեանը հարուստի մը տղայ է փախցուցած՝ դրամ կորզելու համար: Կուսակցութեան ահաբեկման վախէն՝ ան փախած կորսուած է Ռուսիոյ խորքերը: Չարմացայ, շատ յուզուեցայ եւ գոջացի, որ անտեղի կերպով վիրատրած էի Սերգէյը: Գրեցի անոր այդ մասին...

«Հայ Յեղափոխականի մը Յիշարկները», ա. հայրոր, Ռուբէն

36

[ՏԱՐՕՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ, 1906]

Յաճախ չի պատահիր, որ ֆետայիները իրենց գլխատրներուն հետ տեղ մը հաւաքուին. բայց եթէ հաւաքուին, կ'ան կռուի համար է եւ կ'ամ ժողով կազմելու, որպէսզի որոշեն իրենց ընելիքը: Նախ կը գումարուի փոքր ժողով մը, որուն կը մասնակցին խմբապետները, տասնապետները եւ ամենահին վաստակատու ֆետայիները: Այս ժողովին մէջ կ'որոշուին բոլոր խնդիրները: Ասկէ ետք կը գումարուի ընդհանուր ժողովը, ուր հարցերը կը դրուին գրեթէ հրահանգի ձեւի տակ առ ի գիտութիւն եւ առ ի կարգադրութիւն, թէեւ կարծիքներ ու դիտողութիւններ կը լսուին:

Գլըլաղաճի զինուորական ժողովին մէջ դրուած հարցերը թէեւ ժողովրդական ընդհանուր խնդիրներ էին, բայց առաւելապէս կը վերաբերէին ֆետայիներուն: Թունեք կայացած հիմնական որոշումները.-

Առաջին.- Նկատի ունենալով, որ կուսակցութիւնը բաւականաչափ նիւթական միջոցներ չունի եւ ժողովուրդը հին ժամանակներէն իր պարտքն է համարած կերակրել ֆետայիները, որ ժողովուրդի ասանդական հիւրասիրութեան դէմ է փոր մը հացը դրամով գնել՝ ինչպէս Վանի մէջ, որ անհրաժեշտ է ժողովուրդի մէջ խորացնել անձնագոհութեան եւ գոհողութեան ոգին, եւ որ ցարդ ֆետային նկատուած է ժողովուրդի տան հարազատ զաւակ, ուստի պէտք է որ ֆետային իր ապրուստին համար դրամ չծախսէ:

Ան պիտի ապրի այն տունը, ուր հիւր կը մնայ եւ այն գիւղի հաշտոյն, որու սահմաններու մէջ իջեանած է քանի մը օրով: Ան պիտի ուտէ այն՝ ինչ որ կը բերեն գիւղացիները եւ պիտի չապրի արեւի լաւ քան գիւղացին: Այն ֆետային, որ զինք հիւրընկալող գիւղին կ'ամ

գիւղացիի տան վրայ կը բռնանայ, եւ իրեն համար յատուկ կերակուր պատրաստել կուտայ եւ այսպէսով գիւղացիին դժգոհութեան պատճառ կը հանդիսանայ, ֆետայի չէ, այլ *աշխիս*: Այսպիսիները կը պատժուին զինաթափութեամբ, աքսորով կամ գնդակահարութեամբ:

Երկրորդ.- Ֆետայիները որեւէ ծախք պիտի չունենան: Անոնց բացառիկ ծախսը խմբապետը պիտի հոգայ: Այս պատճառով, ֆետայիները դրամ պիտի չունենան: Ասկէ գատ, ֆետայի չունի որեւէ սեփականութիւն, նոյնիսկ հայր ու մայր, կին ու երեխայ: Ան պիտի մոռնայ ամէն ինչ եւ պիտի ճանչնայ միայն իր հրացանը, իր մեծատորը եւ ժողովուրդը, որուն համար պիտի մեռնի:

Երրորդ.- Ֆետային ստեղծուած է աղքատին համար. ուստի պիտի գերադասէ իջեւանիլ աղքատի տունը եւ կամ պիտի շարժի գիւղի խմբապետին ցուցմունքով: Ան պիտի պատուէ աղքատը՝ անոր հետ բաժնելով չոր կըլկըլը...

Չորրորդ.- Քանի որ ժամանակը հասունցած չէ կռիւ ընելու, եւ անհրաժեշտ են ժողովուրդի հանգիստն ու յեղափոխական գործի նախապատրաստական աշխատանքները, ուստի ֆետային պիտի մնայ գիւղի կամ լեռներու թաքստոցներուն մէջ: Բայց եթէ թշնամին գտնէ զինք, այն ատեն պարտաւոր է կամ կորուով ազատիլ, եւ կամ սպաննուիլ...

... Եղան նաեւ բազմաթիւ ուրիշ մանր-մունր գործնական հարցեր, որ այստեղ թուել կարեւոր չեն նկատեր: Միայն յիշեմ, որ այս ժողովին մէջ որոշուեցաւ, որ բոլոր զինուորական-մարտական խնդիրները պիտի ղեկավարէ Գէորգ-Չառուշը, իսկ ինծի յանձնուեցան տնտեսական եւ ժողովրդական գործերը:

*

* *

... [Ուրեմն] Գէորգը իմ վրայ ձգեց Դուրան-Բարձրաւանդակի վերակազմութեան գործը, մատնանշելով այն [վերերանները], որոնք մինչեւ այժմ հանդիսացած էին կուսակցութեան սիւները:

... Ուղղակի տանջանք է Դուրանի գործիչ ըլլալը. օրական հարիւրէ աւելի խնդիրներ ու նամակներ կուգան եւ գրեթէ նոյնքան մարդիկ կ'որոնեն քեզ տեսնելու: Ասոնք կուգան Դուրան-Բարձրաւանդակի բոլոր կողմերէն, կարծես մեր 200.000 ժողովուրդը ձեռները բացած եւ աչքերը յառած վրադ է ինկած: Ամենէն դատարկ խնդիրէն մինչեւ ամենէն կենսականը քեզի կը բերեն: ... Այս բոլորը խիստ ջղայնացուցիչ է: Եթէ ապահով վիճակի մէջ ըլլաս, դեռ փառք Աստուծոյ. բայց փուշերու վրայ ես նստած, յամալս անօթի եւ մահուան երկիւղը գլխուդ վերեւ կախ: Զօրքը կուգայ քեզ որոնելու, պարտաւոր

ես տեղափոխուի: Խնդրարկուներն ալ չես կարող աննկատ թողուլ. իրաքանչիւրին պէտք է խաթրը առնես եւ պատասխան տաս կամ մի փոքր նամակ գրես:

Այս ծանր կացութենէն ելք մը գտնելու մտքով, Գեորգի հետ մտածեցինք Դուրան-Բարձրաւանդակի բոլոր կողմերէն ընդհանուր ժողովի հրաւիրել եւ ընդհանուր ձեւ մը գտնել գործնականութեան համար: [Մանաւանդ որ] երկարատեանէ իվեր ժողով չէր կայացած եւ շարունակական կոիւներու պատճառով շատ շրջաններու կազմակերպական մեքենան խանգարուած էր:

Նախնական խորհրդակցութիւն մը կատարեցի [ասոնց] հետ: Ծրագիր կազմեցինք շրջանային ժողով գումարելու ձեւի ու օրակարգի մասին: Բոլոր այն գիւղերը, ուր խումբեր ունինք, պիտի ուղարկեն իրենց ներկայացուցիչները. բոլոր այն տեղերը, որոնք կազմալուծուած են, պիտի ներկայացուին տեղական հին գործիչները ղրկելով... Մշակեցինք նաեւ օրակարգ, եւ միտքերու փոխանակութենէ մը ետք՝ համաձայնութիւն կայացաւ դրուած հարցերու մասին:

Ընդհանուր գիծերով՝ Հրայրի դրած հիմունքներն էին, որ պիտի վերականգնէինք, մանաւանդ որ հանգուցեալ մեծ գործիչին ուղղութիւնը կը համապատասխանէր ստեղծուած դրութեան, եւ մեծ մասի համակրանքը այդ կողմն էր: Գեորգ Չաւուշ եւս, կեանքի դառն փորձերէն ազդուած, հակած էր դէպի լայն ժողովրդական կազմակերպութիւն եւ կ'ըմբռնէր ցուցական ու մարտական գործունէութեան անյարմարութիւնը այժմեան պայմաններու մէջ:

*
* * *

Ս. Կարապետի լեռներուն մէջ էր ժողովատեղին... Ահա կուգան, մէկիկ-մէկիկ կամ հինգով ու տասով, ձիաւոր ու ոտաւոր. կուգան գիշերուան մութին կամ արշալոյսին եւ կը բարձրանան անմարդաբնակ լեռը... Բոլորն ալ կոշտ-կոպիտ գիւղացիներ են արեւահար դէմքերով, գլուխնին զարդարուած Մուշի ու Սասունի արախշինով: Հեռու Պուլսանըխէն, Խնուսէն եկողներն ունին գլուխնին քրտական սպիտակ քոլոզ: Բոլորի մէջքին կամ վիզէն կախուած են փամփրջտակալները, իսկ ձեռքերնին կամ ուտերնին զանազան հրացաններ - չախմախլու, մարթին, մոսին... Կարծես ժողովականներ չեն, այլ ֆետայիներու անկանոն խումբեր... Փայտերով օճախ կը վառի ու կերակուր կը պատրաստուի իրենց բերած ուտելիքներէն. անտառի սօսիները կը ծառայեն իբրեւ ժողովարահի պատեր, իսկ բաց երկինքը՝ որպէս առաստաղ:

Շատեր չեն գիտեր նոյնիսկ, թէ ինչու համար են կանչուած. այս

Դուք լաւ գիտէք, որ միևնակ էի եւ բեզարած եւ, թողէք փշուր մը գլուխըս փրկչականայ: Չեզմէ կը ինդդեմ ասկէ յետ էսս իմ ախպօր աջքի լոյս դարչուք, բոլոր գործերը էնոր վիզ փաթթէք. կը փեսնէք խորդ (երկիրասարդ) է եւ ուժով կ'երեւնայ. թէ որ յոգնեցաւ՝ ես միշտ պատրաստ եմ իմրատը հասնելու: Մէկ էլ մի բան ասեմ. ինչ որ վճռէք՝ ինծի դաստուլ է»:

Ժողովականները Գեորգի խօսքերը կուլ կուտային կարծես. եւ անոնց նայուածքներէն յայտնի էր, թէ որքան կը սիրեն այդ մեծ մարդը ու կ'ակնածին անկէ:

Հերթը ինծի էր եկած խօսք առնելու: Բաներ մը ըսի ասկէ անկէ. կը տեսնէի, որ չեն յօրանջեր, թէւ կարծեմ շատերը չհասկցան ըսածներս, քանի Մուշի բարբառը այդ ատեն սորված չէի: Ժողովը փակեցի երկու գրագէտ ընկերներ՝ Վարդենիսի Մարտիրոսը եւ Հրայրի եղբայր Մանուկը քարտուղար նշանակելով: Յրուեցան եւ սկսան խումբ-խումբ կծիկներ կազմել վառուղ օճախներուն շուրջ...

Եօթը օր է յատկացուած ժողովին համար. արդէն երկուքը անցաւ: Ուստի վաղ առաւօտեան սկսանք գործի:

Օրակարգի գլխաւոր հարցերը հետեւեալ ձեւով լուծուեցան.-

1. ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Այս հարցի համար նախապէս կազմած էի գրաւոր զեկուցում եւ առաջարկներ, զորս դրինք ժողովին ի հաստատում:

Որոշումներ.-

ա) Կուսակցական եւ ժողովրդական կազմակերպութեան միատուն է գիտը եւ քաղաքի մէջ՝ թաղը:

բ) Մարտական խումբ.- Իւրաքանչիւր գիւղի մէջ կը կազմակերպուի մարտական խումբ 5-30 անդամներով: Մարտական խումբի անդամ կրնան ըլլալ անոնք, որոնք եղած են օժանդակ խումբի մէջ եւ կամ գիւղի ամենավստահելի, քաջ ու փորձուած ընկերներն են: Անոնք պիտի ունենան իրենց զէնքն ու փամփուշտները՝ առնուազն 50 հատ: Խումբի նոր անդամը կ'ընդունուի խումբի հաւանութեամբ եւ անոր միջոցով ալ կրնայ հեռացուիլ: Ունի իր խմբապետը, ընտրուած, եւ տասնապետները: Ունի իր պահարանները թէ՛ մարդ եւ թէ՛ զէնք պահելու: Միայն խմբապետն ու իր նշանակած պահարանապետները զիտեն պահարանի վայրը... Մարտական խումբը տրամադրելի է Դուրան-Բարձրաւանդակի Պատասխանատու Մարմնին եւ անոր հրահանգով պիտի թողու իր տունն ու տեղը եւ երթայ կռուելու եւ այլ գործերու համար: Խումբի բոլոր անդամները պիտի ունենան ամսավճարներ, որոնց ամբողջը պիտի յատկացուի

փամփուշտի ու հրացանի գնման, խումբի համար իբրև պաշար: Իբր գիւղի ամենավատահեղի մասը, խումբը կազմակերպուած կերպով եւ առանց տատանումի պիտի գործադրէ Պատասխանատու Մարմնէն սկսած մինչեւ շրջանի կոմիտէի բոլոր հրահանգներն ու կարգադրութիւնները: Գիւղի առօրեայ գործերուն պիտի միջամուխ ըլլայ իբրեւ գիւղացի եւ պիտի ջանայ իր քայլերը համապատասխան դարձնել կուսակցութեան ընդհանուր ուղղութեան:

զ) Օժանդակ խումբ.- Այս խումբը կազմուած է գիւղի դեռ անփորձ երիտասարդներէն, որոնք դաստիարակուելով օժանդակ խումբի մէջ եւ փորձութեանց ենթարկուելով յետագային կարող են մտնել մարտական խումբի մէջ...

... **զ) Շրջանի կոմիտէ.-** Մարտական եւ Օժանդակ խումբերու խմբապետները շրջանի բոլոր գիւղերէն հաւաքուելով՝ կ'ընտրեն Շրջանի կոմիտէն, որ ղեկավարն ու պատասխանատուն է շրջանի բոլոր ժողովրդական ու կուսակցական գործերուն:

է) Կեդրոնական կոմիտէ.- Մի քանի շրջաններու կոմիտէները հաւաքուելով կ'ընտրեն Կեդր. Կոմիտէն, որ ղեկավարն է իրեն ենթակայ բոլոր շրջաններու կոմիտէներուն:

ը) Պատասխանատու Մարմին.- Պատասխանատու Մարմին կը կազմուի Դաշնակցութեան ներկայացուցիչներէն, որոնք իրենց կողմէ կ'ընտրեն երկու ընկեր եւ անոնց հետ կը խորհրդակցին: Բոլոր մարմինները, ֆետայիներէն մինչեւ Կ.Կ., պիտի ենթարկուին պատասխանատու Մարմինն, եւ պիտի կատարեն անոր հրահանգները անփոփոխ: Հրահանգները գործադրելէ ետք է, որ կրնան բողոքել Բիւրոյին կամ երկու Կ. Կոմիտէութեան շրջաններու Ընդհանուր Ժողովին:

թ) Շրջաններու բաժանում.- Դուրան-Բարձրաւանդակը կը բաժնուի երկու Կ. Կոմիտէութեան.

- Տարոսեան լեռնաշղթայէն հարաւ՝ Բարձրաւանդակի շրջան.

- Տարոսեան լեռնաշղթայէն հիւսիս՝ Դուրանի շրջան:

[Բարձրաւանդակի 10 եւ Դուրանի 13 կոմիտէութիւնները իւրաքանչիւրը 5 էն մինչեւ 60 հայ գիւղեր կը պարունակէին (ազգաբնակչութիւն՝ իւրաքանչիւրը՝ 3000 էն մինչեւ 32000):]

... Բացի վերոյիշեալ կոմիտէութիւններէն, Դուրանի Կ. Կոմիտէն եւ Պատասխանատու Մարմինը պարտին կազմակերպել երեսի վրայ թողուած հետեւեալ գաւառները.- Կինճ, Քղի, Ճապաղջուր, Էրզրում, Բասէն, Ալաշկերտ եւ Սդերդ:

Ասոցմէ զատ յատուկ տեղ տրուեցաւ նաեւ Մուշի բանտարկեալներուն: Բանտի մէջ Դուրան-Բարձրաւանդակի կարետը գործիչներէն՝ 400 է աւելի ընկերներ կային: Ասոնք պիտի ունենան իրենց

մեկուսի բանտի կոմիտեն, որ ուղղակի կապ պիտի պահե Պատասխանատու Մարմնի հետ:

Այս որոշումները, որոնք յետագային կազմեցին հիմքը կազմակերպութեան, նորութիւն չէին ժողովականներուն համար, քանի որ գրեթէ կը նոյնանային Գորգէնի ու Հրայրի ժամանակ եղած կազմակերպութեան հետ: Փոքր փոփոխութիւնները, զորս բերած էի Կարսի եւ Վանի կազմակերպութեանց օրինակէն, ժողովականներու կողմէ ընդունուեցան առանց մեծ դժուարութեան:

2. ՍԱՐՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԵՐ ՈՒ ՖԵՏԱՅԻՆԵՐ

Որոշուեցաւ. Իւրաքանչիւր կոմիտեական շրջան, բացի իր գիղերու մարտական խումբերէն, պիտի ունենայ ամբողջ շրջանի համար մարտական խումբ մը՝ կոմիտէի տրամադրութեան տակ ու անոր մէկ անդամին հրամանատարութեան ներքեւ: Այս մարտական խումբը կը կոչուի շրջանի թռուցիկ խումբ, կազմուած շրջանի ամենահաստարիմ ու փորձուած զինուորներէն, որոնք իրենց հերթին պիտի կարողանային ամէն մէկը ղեկավար հանդիսանալ տեղական մարտական խումբերուն, երկրի տագնապի եւ կռուի ժամանակ:

Թռուցիկ խումբը, գտնուելով կոմիտէի տրամադրութեան տակ, պիտի գործէր անոր ցուցմունքով եւ ինքնազուխ որեւէ քայլ պիտի չառնէր: Այս խումբը կը հաւաքուի միայն կոմիտէի հրահանգով, իսկ միւս ժամանակները ամէն մէկը կը զբաղի իր անձնական գործով: Չուտ զինուորական գործերու մէջ՝ թռուցիկ խումբի ղեկավարին (որ միաժամանակ շրջանի կոմիտէի անդամ էր) պիտի ենթարկուին բոլոր տեղական մարտական խումբերը. իսկ իրենք ալ իրենց կարգին պիտի ենթարկուին, զուտ զինուորական գործերու մէջ, քանի մը շրջաններու համար որոշուած ֆետայիներու խումբի ղեկավարին:

2-4 կոմիտեական շրջանի համար կը նշանակուի մէկ ֆետայիներու խումբ, 10-15 հոգիէ բաղկացած, յայտնի ղեկավարի մը հրամանատարութեան տակ: Չուտ զինուորական գործերու համար ասոնց կ'ենթարկուին շրջաններու մարտական թռուցիկ խումբերը եւ գիղական մարտական խումբերը. իսկ իրենք անմիջականօրէն կ'ենթարկուին Պատասխանատու Մարմնին:

Ասոնք իրաւունք չունին խառնուելու վարչական գործերու, ինչպէս նաեւ պիտի չմիջամտեն ժողովրդական գործերու, բացի եթէ այդ մասին գրաւոր խնդիր ու պահանջ ունին Կ. Կոմիտէներէն, շրջանի կոմիտէներէն կամ Պատասխանատու Մարմնէն: Իրենց գործն է միայն զինավարժութիւն, յեղափոխական պատմութիւններ ընել մարտական խումբերուն եւ, եթէ շրջաններուն վտանգ սպառնայ, ուժ կազմակերպել թռուցիկ ու մարտական խումբերէն ու դիմադրել:

3.ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍ. ՎԻՃԱԿԻ ԿԱՐԳԱԽՈՐՈՒՄԸ

ա) Գիւղական մարտական խումբերու վրայ ըստ կարողութեան անդամավճար դնել. գոյացած ամբողջ հասոյթը պիտի ծախսուի միայն մարտական խումբին ռազմական միջոցներ հայթայթելու:

բ) Օժանդակ խումբերու անդամները պիտի տան ամսավճարներ, որոնց 25 առ հարիւր կը մտնէ Պատասխանատու Մարմնի գանձարկը՝ ծախսուելու ֆետայիներու ռազմական պէտքերուն, 50 առ հարիւրը խումբի համար զէնք գնելու եւ 25 առ հարիւրը շրջանի թռուցիկ խումբի եւ կոմիտէի ծախսերուն համար:

գ) Գիւղացիները ազատ են որեւէ տուրքէ, բայց տարին անգամ մը Պ.Մ.ին թոյլատուութեամբ եւ կնքուած վկայականով հանգանակութիւն կը կատարուի, որուն արդիւնքին 50 առ հարիւր կը յատկացուի գիւղի դպրոցին, բանտարկեալներուն եւ այլ գիւղական կարիքներու, 25 առ հարիւրը՝ շրջանի խումբերուն եւ 25 առ հարիւրը՝ Պ.Մ.ին:

դ) Տուգանքներն ու նուէրները ամբողջապէս կը դրուին Պ.Մ.ի տրամադրութեան տակ, գործածուելու ընդհանուր կուսակցական կարիքներու համար:

ե) Բացարձակապէս արգիլուած է վերոյիշեալ ձեւերէն դուրս տուգանք, տուրք, հանգանակութիւն կամ նուէր առնել: Բայց կը թոյլատրուի ստեղծել գիւղական ու շրջաններու յատուկ ֆոնտեր՝ կրթական, համայնական եւ այլ նպատակներով, նոյնպէս յատուկ ֆոնտ՝ պայքարելու կառավարութեան դէմ դրամի միջոցով:

Բայց այս բոլոր ֆոնտերը պիտի ստեղծուին Պ.Մ.ի գիտակցութեամբ եւ գործածուին միայն իրենց նպատակին: Օրինակ՝ կը հրահանգուի գիւղի *աշարը* համայնքով առնել. բայց շահը պիտի երթայ գիւղին կամ կալուած գնելու, կամ կաշառք տալու, կամ դպրոցի, կամ վանքի եւ նման նպատակներու, զորս գիւղը կ'որոշէ: Կը հրահանգուի համայնական արտեր ցանել, բայց շահը պիտի երթայ համայնքին:

զ) Արտասահմանէն եկած օժանդակութիւնը պիտի յատկացուի միայն ընդհանուր պէտքերուն եւ ֆետայիներու ծախքերուն:

է) Ժողովուրդը եւ խումբերը պարտաւոր են անվարձ աշխատիլ ու կերակրել ֆետայիները, փախստականներն ու ղեկավարները, հոգալով ասոնց մի փոր հացը առանց դրամի: Այսպիսիները անվարձ ծառայող ըլլալով՝ հիւրն են Աստուծոյ, ուստի պիտի բաւականանան ինչով որ գիւղացիները կը հիւրասիրեն: Աւելի պահանջել կ'արգիլուի, իսկ «մի փոր հաց խնայողը՝ ազգ չէ»:

ը) Բոլորին կ'արգիլուի դրամով աշխատիլ ու վարձք ստանալը: Բոլորին կ'արգիլուի դրամով ապրիլը, ծախսելը ուտելիքի, վառելիքի կամ տան վարձքի համար: Հագուստի ու զէնքի ծախսերն են միայն որ պիտի հոգացուին ընդհանուր եկամուտներէն:

«Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», գ. հարոր, Ռուբէն

Վ.Յ.Գ. ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

[Արհեստակցական միութիւնները անհրաժեշտ են ու օգտակար] աշխատատր դասակարգի համար, եթէ միայն կազմակերպուած են ցանկալի ձեւով եւ սոցիալիստական որոշ կուսակցութեան հովանաւորութեան տակ:

... Այժմ մեզ մնում է առանձնապէս կովկասեան իրականութիւնն աչքի առաջ ունենալով՝ պարզել, թէ ի՞նչպէս պէտք է սկսել գործը, ի՞նչպէս պէտք է շաղկապել բազմաթիւ աշխատատրներին միմեանց հետ:

... Յաշոյղութեան ամենագլխատր գրաւականը աշխատատրների գիտակցութիւնն է: Հէնց այդ պատճառով էլ պէտք է մտնել նրանց շարքերը, պարզել-բաց անել սոցիալական մեծ չարիքի արմատը, կեղեքող դասակարգի ու նրան հովանաւորող բռնակալ կառավարութեան սանձարձակ շահագործումն ու ճնշումը եւ այդ բոլորին վերջ տալու համար անհրաժեշտ միութիւնը՝ համերաշխ ջանքերով ընդհանուր թշնամիների-հարստահարիչների դէմ մաքառելու նպատակով:

Այդպիսով հէնց որ մի որեւէ գործարանում կամ արհեստանոցում կազմուեց գաղափարակիցների նոյնիսկ մի փոքրիկ խմբակ, նրանք իսկոյն միջամուխ պէտք է լինեն գործին՝ ընդհանուր եւ մասնակի խմբական ժողովներ նշանակեն, հաւաքեն բոլոր ընկերներին, խորհրդակցեն նրանց հետ, պարզեն արհեստակցական միութեան անհրաժեշտութիւնը եւ առանց տատանուելու հիմք դնեն նրա գոյութեանը:

... Պարզ է, ի հարկէ, որ շահագործող «խազէլիները»-կապիտալիստները երբեք չեն ուզենայ, որ իրանց բանուորները, արհեստատրները միանան, որովհետեւ շատ լաւ գիտեն, թէ այդ միութեան ուժը իրանց դէմ է ուղղուելու ... դրանք ամէն կերպ կ'աշխատեն պոտորել միամիտների մտքերը, սուտ ու սխալ պատկեր տալ «արհեստակցական միութիւնների» մասին եւ այդպիսով ջլատել նրանց ուժը:

Բայց տգէտ ու մոլորուած ընկերների սառնութիւնը, չարամիտների գաղտնի ու յայտնի ռոնձգութիւնները - այդ բոլորն էլ երբեք չպէտք է վիատեցնէ գիտակից աշխատատրներին ու նրանց ղեկավարներին... Որքան էլ սակաւաթիւ լինեն նորահաստատ «միութեան» անդամները, որքան էլ դժուարութիւնների հանդիպեն նրանք, բայց եւ այնպէս առանց յուսահատուելու պէտք է շարունակեն իրանց սկսած գործը, որովհետեւ ազատութիւնն ու հաւասարութիւնն է այդ գործի

նշանաբանը եւ նրանն է վերջնական փառաւոր յաղթանակը: Մոլորուած ու յռեւտես ընկերները կամաց-կամաց կը հասկանան իրանց շահերը եւ կը գան, կը համախմբուեն միութեան դրօշակի տակ:

... Միութիւն կազմակերպելիս ամէն կերպ պէտք է աշխատել գրաւելու, համոզելու եւ միացնելու միեւնոյն արհեստի բոլոր աշխատատեղերին առանց կրօնի ու ազգի խտրութեան ... Արհեստատրները, ինչ ազգի ու դաւանանքի էլ պատկանեն, այնուամենայնիւ միատեսակ ցաւերով ու ձգտումներով շաղկապուած եղբայրներ են, ուստի եւ համերաշխօրէն, միացած ուժերով պէտք է պաշտպանեն իրանց դասակարգային շահերը:

Որքան մեզ յայտնի է, Հ.Յ.Դ-աշնակցութիւնն էլ այդ սկզբունքով ղեկավարուելով, իր միութիւնների մէջ ամենայն քաջալերութեամբ ընդունում է եւ ուրիշ ազգութեան աշխատատեղերի, եթէ նրանք ծանօթանալով կուսակցութեան ծրագրի հետ, տալիս են իրանց հաւանութիւնն ու համաձայնութիւնը: Այսպէս օրինակ, Թիֆլիսի դաշնակցական արհեստակցական միութիւններից մի քանիսում հայ անդամների շարքերում կան նաեւ սակաւաթիւ թուրքեր (օր. Ադիլխանովի գործարանում), ռուսներ, վրացիներ ու հրէաներ:

Պարզ է, ի հարկէ, որ ժամանակի ընթացքում այդ օտարազգիների թիւը կարող է աւելի եւս մեծանալ, որովհետեւ նրանք գործով կը տեսնեն ու կը համոզուեն, որ Հ.Յ.Դ-աշնակցութիւնը «նեղ ազգային» կուսակցութիւն չէ «Հայոց քաղաւորութիւն» ստեղծելու տենչերով՝ ինչպէս ասում են գրպարտիչ լեզուներն ու գրչակները, այլ սոցիալիստական մի կազմակերպութիւն, որը դաւանում է համամարդկային զաղափարներ... Հայ աշխատատեղերը, Դ-աշնակցութեան դրօշակի տակ կազմակերպելով իրանց միութիւնը, չպէտք է խորշեն, հեռանան իրանց օտարազգի ընկերներից, այլ ընդհակառակը նրանց պէտք է բացատրեն-պարզեն Դ-աշնակցութեան ծրագիրն ու ձգտումները, եւ դրանով հնարաւորութիւն տան աւելի մօտենալու, իսկ ցանկացած դէպքում մոյնիսկ մասնակցելու դաշնակցական միութեան մէջ:

Ազգային հարցից յետոյ երկրորդ-գործնական նշանակութիւն ունեցողը կուսակցական հարցն է:

Ի՞նչ անել, ի՞նչպէս կազմակերպել, երբ միեւնոյն արհեստի կամ գործարանի աշխատատեղերը տարբեր համոզմունքների, քաղաքական տարբեր դաւանանքների տէր են, օրինակ մի մարդ դաշնակցականներ են, իսկ միւս մասը՝ սոցիալ-դեմոկրատներ:

Այդ դէպքում դրանց կարելի է կազմակերպել առանձին-առանձին, բայց միեւնոյն ժամանակ աշխատելով, որ ընդհանուր խնդիրներում (գործադուլ, տնտեսական պահանջներ եւայլն) տարբեր կու-

սակցութիւնների ղեկավարութեամբ գործող այդ միութիւնները որոշ համաձայնութեան զան եւ համերաշխօրէն գործեն:

Հ.Յ.Գ. ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1907)

Ի նկատի ունենալով՝

1. որ աշխատատու դասակարգը իր տնտեսական շահերը պաշտպանելու համար պէտք է ունենայ որոշ քաղաքականութիւն եւ դա կարող է լինել միայն սոցիալիստական, որովհետեւ միայն սոցիալիզմը ընդունակ է վերջ տալու բոլոր տեսակի շահագործումներին ու անհաւասարութիւններին,

2. որ այդ իսկ պատճառով աշխատատուների տնտեսական կազմակերպութիւններն եւս կապուած պէտք է լինին սոցիալիստական կուսակցութիւնների հետ,

3. որ այդ սկզբունքով կազմակերպուած դաշնակցական միութիւնների անցեալի փորձը իր դրական հետեւանքներով աւելի եւս շեշտուած է վերոյիշեալ իրողութիւնը,

4. որ տարբեր ազգութիւնների աշխատատուները, ապրելով միեւնոյն իրականութեան մէջ, շրջապատուած լինելով նոյն պայմաններով, պէտք է միշտ համերաշխօրէն պաշտպանեն իրենց շահերը:

Հ.Յ.Գ. Կովկասեան խորհրդաժողովը ընդունում է արհեստակցական միութիւնների կուսակցական լինելու նպատակայարմարութիւնը, եւ նրանց զարգացման աւելի զարկ տալու, ինչպէս նաեւ տարբեր ազգութեան աշխատատուների մերձեցման նպաստելու համար, ցանկալի է համարում՝

1. Կազմակերպել արհեստակցական միութիւնները կուսակցական սկզբունքով եւ կապել Հ.Յ.Գ-աշնակցութեան հետ.

2. Ձգտել այդ միութիւնները կապել միւս միութիւնների հետ ֆեդերատիւ կապերով.

3. Գաշնակցական արհեստակցան միութիւնների մէջ կազմակերպել նաեւ օտարազգի աշխատատուներին, եթէ նրանք ընդունում են կուսակցութեան ծրագիրն ու գործելակերպը.

4. Միութիւնների մէջ ընդունուած օտարազգի աշխատատուներից կազմել առանձին խմբակներ, ներքին կատարեալ ինքնուրոյնութեամբ եւ ֆեդերատիւ կապերով կապուած նոյն միութեան միւս աշխատատուների հետ.

5. Ամէն կերպ հովանաւորել միութեան բոլոր անդամների ազգային-կուլտուրական իրաւունքները եւ պահպանել լեզուների իրաւահաւասարութիւն թէ՛ գրաւոր եւ թէ՛ բանաւոր պրոպականդի մէջ.

6. Ձգտել միութիւնների մէջ եղած օտարազգի խմբակները միացնելու նոյն ազգութեան այն սոցիալիստական կուսակցութեան հետ, որը իր աշխարհայեցողութեամբ մօտ է Հ.Յ.Գ-աշնակցութեան, նախօրօք որոշելով այդպիսի սոցիալիստական կուսակցութիւնների յարաբերութիւնները ֆեդերատիւ հիմքերով:

Որքան էլ որ ցանկալի չլինի նոյն արհեստի աշխատատուների զատ-զատ միութիւններ կազմելը, բայց եւ այնպէս միայն պլատոնական ցանկութեամբ կամ «անկուսակցականութիւն» կոչուող ինքնախաբէութեամբ երբեք չի կարելի դրա առաջն առնել:

Միութեան անդամների տարբեր համոզմունքներն ու կուսակցական դաւանանքները իրաքանչիւր հարցում, իրաքանչիւր քայլափոխում անխուսափելիօրէն կը բախուեն միմեանց: Անկուսակցական քողը շատ անգամ կարող է նոյնիսկ աւելի արագացնել այդ բախումը եւ դժուարացնել համերաշխութիւնն ու համաձայնութիւնը: Այն ինչ եթէ հէնց սկզբից գտուած ու ծրագրաորոշուած լինեն տարբեր հոսանքները, այն ժամանակ աւելի հեշտ ու դիւրին կը լինի նրանց բանակցելն ու համաձայնութեան գալը ձեռնահաս մարմինների միջոցով:

Հէնց մեր կովկասեան իրականութիւնը պերճախօս փաստերով այդ է հաստատում: Ինչպէս յայտնի է՝ մեզանում 1906 թուականից սկսած արհեստակցական շարժման մէջ երկու հակադիր հոսանք է նկատում: Մէկը կուսակցական նշանաբանով՝ Հ.Յ.Գաշնակցութեան ղեկավարութեամբ, իսկ միւսը՝ անկուսակցական, սոցիալ-դեմոկրատական:

Եւ այդպիսով՝ թէ՛ Թիֆլիսում եւ թէ գաւառական քաղաքներում կազմակերպուել են մի շարք արհեստակցական միութիւններ: Միայն Թիֆլիսում դաշնակցական արհեստակցական միութիւնների թիւը արդէն 20ից աւելի է. բազմաթիւ են նաեւ անկուսակցական-սոց. դեմոկրատիական միութիւնները: Այսպէս օրինակ՝ կայ դերձակների 2 արհեստակցական միութիւն, մէկը՝ դաշնակցական, միւսը անկուսակցական-սոց. դեմոկրատիական: Նոյնը՝ կօշկակարների, հացթուխների, գործակատարների, տրամվայի, երկաթուղիական եւ գործարանային ու այլ արհեստանոցային բանուորների վերաբերմամբ:

Այո՛, տարբեր կուսակցութիւնների հովանաւորութեան տակ են եղել այդ միութիւնները, բայց եւ այնպէս ընդհանուր-տնտեսական հարցերում միշտ էլ հնարատր է եղել փոխադարձ համաձայնութիւն կայացնել եւ համերաշխ ուժերով դուրս գալ ընդդէմ կապիտալիստների՝ շահագործող տէրերի:

Այս կամ այն արհեստակցական միութիւնը մի որեւէ պահանջ մշակելուց յետոյ միշտ էլ յայտնել է արհեստակից միւս միութեանը եւ կայացրել է համաձայնութիւն, ապա երկու միութիւնների ներկայացուցիչներից կազմուել է խառն «գործադիր բիւրօ», որը եւ իբրեւ այդ արհեստի ամբողջ բանուորութեան ներկայացուցիչ՝ վարել է բանակցութիւններ, ղեկավարել է գործադուլներ: ... Այսպէս են առաջ տարուել այն մի շարք տնտեսական գործադուլները Թիֆլիսում, որոնք գրեթէ բոլորն էլ յաջողութեամբ են պսակուել:

Գաշնակցական եւ սոց. դեմոկրատիական այդպիսի խառը «բիւրօն» էր ղեկավարում նաեւ Թիֆլիսի ծխախոտագործարանների բանուորների հսկայական գործադուլը, որ երկու ամսից աւելի տեւեց եւ դարձեալ յաղթանակով վերջացաւ:

Ուրեմն արհեստակցական միութիւնների կուսակցականութիւնը երբեք այնպիսի ջլատում ու վնաս չի պատճառում, ինչպէս աշխատում են հաւատացնել սոց.-դեմոկրատները:

Գրեթէ միշտ էլ հնարաւոր է համաձայնութիւն կայացնելը, իսկ երբ հարցը տարբեր համոզմունքների, կուսակցական տարբեր դասանանքների պատճառով միատեսակ հաւանութիւն չի գտնում երկուսի կողմից էլ, այն ժամանակ իրաքանչիւրն ազատ է իր ուզած ձեւով ու ծրագրով գործելու, քանի որ ունի իր ուրոյն կազմակերպութիւնը, դեկավարող մարմիններն ու կասսան: Այդպիսի ազատութիւնն էլ բացի օգուտից վնաս չէ կարող բերել համերաշխութեան գործին, որովհետեւ աշխատաւորների մի մասի համոզմունքների ու ձրգտումների ճնշումով չէ, որ միւս մասը կարող է համերաշխութեանը նպաստել, այլ նրանց ազատ արտայայտութեան հնարաւորութիւն տալով:

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հ.Յ.Գ. կովկ. ռայոնական խորհրդաժողովը, քննելով գիւղացիական միութիւնների հարցը, որոշեց՝ գիւղացիական խաւերում գործելիս՝ առաջնորդուել հետեւեալ սկզբունքներով.-

...

... Դ. Կազմակերպութիւն

- Գիւղացիական մարմինները կազմակերպելիս, սկսել գիտակիցների խմբերից, որոնց միջոցով վերը նշանակած ձեռնարկների իրականացման, ինչպէս եւ ընդհանուր կազմակերպական նպատակների համար կազմել աշխատաւոր գիւղացիութիւնից գիւղացիական միութիւն իր յատուկ վարչութեամբ: Գիւղացիական միութիւնը հանդիսանում է կազմակերպական առաջին աստիճանը: Միեւնոյն շրջանի գիւղացիական միութիւնների ներկայացուցիչներից կազմում են պարբերաբար շրջանային խորհուրդներ, որոնց որոշումները կ'իրագործեն գիւղացիական միութիւնների վարչութիւնները: Գիւղացիական միութիւնները ընտրում են ներկայացուցչական սիստեմով յեղափոխական շրջանային կոմիտէ, որ եւ կապում է միութիւնները ռայոնի Կենտր. կոմիտէի հետ:

Գիւղացիական միութեան անդամները վճարում են անդամավճարներ, որոնց կէտը յատկացում է տեղական միութեան պէտքերին, իսկ միւս կէտը յատկացում է ընդհանուր կազմակերպական պէտքերի համար:

Ահա այդպէս ուրեմն դաշնակցական բանուորները, որտեղ որ հնարաւոր է, պէտք է աշխատեն իրանց արհեստակից բոլոր ընկերներից համախմբել Հ.Յ.Գ-աշնակցութեան դրօշակի տակ եւ նրա ծրագրով «արհեստակցական միութիւն» կազմել: Իսկ այնտեղեւորում, որտեղ կան ուրիշ կուսակցութեան հետեւողներ, դաշնակցականները նոյնպէս առանց դանդաղելու եւ կասկածելու պէտք է համախմբուեն

ու կազմեն իրանց միութիւնը, թողնելով որ միս ընկերներն էլ իրանց ցանկացած ծրագրով կազմակերպուեն: Բայց այդ միեւնոյն ժամանակ միշտ պէտք է աշխատել համերաշխութեան սերտ կապ հաստատելու...

«Արհեստակցական Միութիւններ», Ե. Թովչեան

III. ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ

38

[Հ.Յ.Գ. ԾՐԱԳԻՐ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ - 1892]

«Դաշնակցութիւնն» անցեալի փորձից համոզուեց, որ յեղափոխական գործում չի կարող լինել իրատունքի եւ պահանջի խնդիր, այլ միմիայն բարոյական պարտաւորութեան եւ բաւարարութեան խնդիր: Ահա այս հիման վրայ Դաշնակցութեան ընդհանուր ժողովն ընդունեց կազմակերպութեան մէջ մտցնել ապակենտրոնացման սկզբունքը, որն աւելի է համապատասխանում ընկերական, բարոյական յեղափոխական գործին եւ որն անցեալում կիսով չափ գործադրուել էր: Այս սկզբունքով գործող կոմիտէտներին կապում, միացնում է ընդհանուր ժողովը, որը մշակել է ներկայ ծրագիրը, որի վճիռները պարտաւորեցուցիչ են բոլորի համար եւ որը միայն ինքն է կարող փոփոխութիւն մտցնել ծրագրի մէջ:

Կազմակերպութիւնն հետեւեալ ձեւն է ընդունում.-

1. Բոլոր կոմիտէտները թէ՛ քաղաքներում եւ թէ՛ գիւղերում իրենց ներքին գործերը վարում են անկախ, ինքուրոյն կերպով:
2. Գաւառական մի քանի խմբեր միանում եւ կազմում են մի մարմին (րայոն, շրջան), որն ունի իր կենտրոնական կոմիտէտը:
3. Եթէ Տաճկահայաստանի սահմանակից գիւղերում խմբեր չկան, կենտրոնական կոմիտէտի գործը տարածւում է սահմանից դուրս:
4. Իւրաքանչիւր անդամ ենթարկւում է այն կոմիտէտին, որի մէջ գտնուում է (խմբական եւ ոչ անհատական ապակենտրոնացում):

5. Կոմիտէտ չեղած տեղում Դաշնակցութեան անդամը գործում է անկախ, կապ պահպանելով մօտակայ կոմիտէտի հետ:

6. Դաշնակցական կոմիտէտների եւ անդամների համար ընդունում է խիստ ընկերական դատաստան:

7. Որեւէ կոմիտէտի անդամի սխալը կամ գեղծումը քննում է ինքը կոմիտէտը, իսկ ամբողջ կոմիտէտինը՝ իր շրջակայ կոմիտէտների ներկայացուցիչները: Ծանրակշիռ դէպքերում, երբ հարեւան կոմիտէտներն անձեռնհաս են վճիռ կայացնելու, քննութիւնը կատարում է ընդհանուր ժողովը:

*

Կոմիտէտներն իրենց բոլոր կարելի տեղեկութիւնները՝ թէ՛ գործունէութեան եւ թէ՛ պահանջի մասին ուղարկում են պարբերաբար այն հիմնարկութեանը, որը կոչում է բիւրօ: Այդպիսի բիւրօ առայժմ ընդունում է երկուսը... Իւրաքանչիւր բիւրօ, ստանալով վերոյիշեալ գրաւոր տեղեկութիւնները, հաղորդում է թէ՛ միւս բիւրօներին, եւ թէ՛ իր շրջանի կոմիտէտներին: Այն տեղեկութիւնները, որոնք հարկաւոր են խմբագրութեանը, բիւրօները անյապաղ ուղարկում են նրան: Բիւրօներում ամփոփուած տեղեկութիւններից կարելի է գաղափար կազմել յեղափոխական գործի դրութեան եւ ընթացքի մասին: Բիւրօներն անյապաղ հաղորդում են, ինչ որ հարկաւորն է, կոմիտէտների բոլոր պահանջների մասին:

Ծանօթ. - Եթէ մի որեւէ ուրիշ կէտր գործունէութեան տեսակէտից մեծ նշանակութիւն ստանայ, նա եւս կ'ունենայ բիւրօ:

*

Իւրաքանչիւր կոմիտէտ, հաւաքած նպաստներով իր տեղական կարիքներին բաւարարութիւն տալուց յետոյ, աւելորդ գումարն ուղարկում է կենտրոնական կասսան:

Դրամական բոլոր հաշիւները կենտրոնանում են բիւրօներում:

Իւրաքանչիւր կոմիտէտ պարտաւոր է ամիսը մի անգամ հաշիւ ներկայացնել այն բիւրոյին, որի հետ կապուած է նա: Ծախքի հաշիւը ծայրայեղ դէպքում կարելի է յետաձգել միւնչեւ երեք ամիս:

*

Դաշնակցութիւնն ունի իր օրգանը «Դրօշակ» անունով: «Դրօշակ»ը պիտի լինի անկեղծ արտայայտող, թարգման հայ յեղափոխական կեանքի, երեւոյթների: Նորա մէջ պիտի շօշափուի տնտեսական, հասարակական, քաղաքական խնդիրներ՝ համաձայն Դաշնակցութեան ծրագրած ուղղութեան: Կը հրատարակուին նաեւ ժողովրդական ու գիտական-սոցիալիստական գրուածքներ:

Իւրաքանչիւր կոմիտէտ կարող է հրատարակել կարելի դէպքերում «թռուցիկ թերթեր»:

«Դրօշակ», Մեպր. 1894

Հ.Յ.Գ. Բ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ (1898)

... ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ.-

Կազմակերպության հիմնական սկզբունքի, այն է ապակեդրոնացման կամ կեդրոնացումի մասին գրեթե վիճաբանութիւն տեղի չունեցաւ, որովհետեւ Ժողովը ուրախութեամբ հաստատեց, որ Դաշնակցութիւնն իր վեց տարուան յարաճուն գործունէութիւնը մասամբ կը պարտի ապակեդրոն դրութեան, որ մէկ կողմէն առաջ բերած է նախաձեռնութեան ոգի եւ պատասխանատութեան գիտակցութիւն եւ միւս կողմէն ձեւական շղթաներու մէջ չկաշկանդելով Դաշնակցական մարմինները՝ թոյլ տըւած է իւրաքանչիւրին անկախ զարգանալու գործի շահերու եւ տեղական պայմաններու համաձայն:

Ժողովը որոշեց, հետեւաբար, ընդունել եւ վաւերացնել, իբրեւ լրացում ծրագրի կազմակերպութեան վերաբերեալ յօդուածներուն, այն ձեւերը եւ յարաբերութիւնները միայն, որոնք կեանքի եւ գործի պայմանները ընդհանրացուցած էին արդէն եւ կամ պահանջ դարձուցած մեր կազմակերպութեան մէջ:

Իր այդ աշխատութեան ատեն Ժողովը կանգ առաւ գլխատրապէս հետեւեալ չորս կէտերուն վրայ.-

1. Ընդունել այն տարբերութիւնը, որ իրապէս գոյութիւն ունի Թուրքիոյ եւ Թուրքիայէն դուրս գտնուող կոմիտէներու կազմութեան եւ գործունէութեան եղանակին մէջ, այն է՝ առաջիններուն մէջ տիրող դաւադրական գործունէութեան հիմունքն են, որ անխուսափելի կերպով սահմանափակած են զիրար ճանաչումի եւ ընտրական սկզբունքի կիրառութիւնը երկրին մէջ:

2. Կատարելապէս ապահովելու համար վճռած ձեռնարկներու յաջողութիւնը (կեդրոնացում, ցոյց), Ժողովը որոշեց լայն ինքնօրէնութիւն տալ այդ ձեռնարկները վարող մարմիններուն պատասխանատու ճանչնալով անոնք՝ իրենց յանձնուած գործին համար: Այդ մարմինները որոշուեցաւ ընտրել Ժողովի կողմէն եւ անուանել «Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէ»ներ:

3. Նկատելով, որ Դաշնակցութիւնը հետզհետէ աւելի ընդարձակելով իր գործունէութիւնը թէ՛ Արտասահմանի եւ թէ՛ Փոքր Ասիոյ մէջ, ինքնին ծագած է արտասահմանեան Բիւրոյի մը պէտքը, որու դերը իրերու բնական բերումով կատարած է ցարդ խմբագրութիւնը, Ժողովը որոշեց՝ ընդունելով կեանքի գործնական պահանջներէ բխած այդ երեւոյթը, զօրացնել խմբագրութիւնը եւ յայտարարել Արեւմտեան Բիւրո:

ՀԱՏՈՒԱԾ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԷ ՄԸ (Ս. Զաւարեանի ձեռագրով)

Դաշնակցութեան որոշումները կատարելու պարտականութիւնը դուրս է անբողջ կազմակերպութեան վրայ առանձին անհատից, խմբից, կոմիտէից սկսած մինչեւ Կենտր. Կոմիտէն, Բիւրօներն ու Պատասխ. Մարմինները:

Ամեն մարմին իրա շրջանին վերաբերեալ գործերը կատարում է իր պատասխանատուութեամբ. եթէ որեւէ ձեռնարկութեան ազդեցութիւնը դուրս է գալիս մարմնի շրջանից, կամ ձեռնարկութիւնը կատարելու համար անհրաժեշտ է հարեանանների ու միւս մարմինների աջակցութիւնը, այդ պարագայում գործող մարմինը դիմում է հարեան ատելի լայն շրջան ունեցող մարմիններին:

Այդ շրջանների վճիռները կայացում են ձայների մեծամասնութեամբ: Երբ որեւէ խմբի, կամ Բիւրոյի, կամ Պատ. Մարմնի կողմից անհրաժեշտ է գտնուում ձեռնարկել որեւէ գործի մարմնի անդամների մասնակցութեամբ, ամեն մէկի վրայ պարտականութիւն է դրուում ենթարկուել ընկերների 2/3ի ձայներին: Ծայրայեղ պարագաներում ձեռնարկուելիք գործի համար յարմարագոյնը որոշում է վիճակով:

Դաշնակցութեան մէջ, անհատներից, խմբերից եւ կոմիտէներից սկսած մինչեւ Բիւրօ եւ Պատ. Մարմին, չկայ խնդիր իրաւունքի ու իշխանութեան, այլ միմիայն պատասխանատուութեան եւ պատրաստակամութեան կատարելու կազմակ. որոշումներն ու ընկերների խնդիրները: Պարզ է, որ քանի անհատը ու այս կամ այն մարմինը ատելի անձնուէր ու արդիւնատէտ կերպով է կատարել իրա վրայ դրուած պարտականութիւնը, այնքան նա ատելի կը վայելէ ընկերների յարգանքն ու հաւատը, այնքան նա ատելի համապատասխան կը համարուի ատելի լայն շրջանի գործերը տանելու:

Երբ այս կամ այն անցանկալի գործերի ու դրութեան շնորհիւ խզում են եւ դադարում են ընկերական լինելուց այս կամ այն մարմնի անդամների ու կամ անբողջ մարմինների յարաբերութիւնները եւ անկարելի է հարցերը պարզել, թիւրիմացութիւնները լուծել ու չարիքի առաջը առնել միջնորդ ընկերական դատաստանի միջոցաւ, այդ պարագաներում ամեն մարմին դառնում է դատաստանական ատեան իրա ընկերոջ կամ ուրիշի վերաբերմամբ եւ տալիս որոշում 2/3 ձայների մեծամասնութեամբ:

Պատժի ծայրայեղ աստիճանները (սպանութիւն ու կազմակերպութիւնից հեռացնելը) որեւէ մարմնի կողմից կարող են տրուել միմիայն դատապարտուող մարմնից ատելի լայն շրջան ունեցող մարմնի համաձայնութեամբ, որը արդարութիւնը պաշտպանած լինելու համար կամ ինքը կը քննէ գործը, կամ դրա անելը կը յանձնէ ուրիշ քննիչ դատաստանական ատեանի:

Դատաստանական մարմինների վրայ պարտք է դրուում մեղադրուողի շահերը պաշտպանել կարելի եղած միջոցներով՝ չնոռնալով, որ յեղափոխական գործի էտիկայի հետ միասին կայ եւ ընդհանուր բարձր արդարութեան ձայնը, որոնք հաւասարապէս պարտաւորեցուցիչ են ամբողջ Դաշնակցութեան համար:

4. Նկատելով, որ Ընդհանուր Ժողովի բացակայութեանը միշտ պէտք զգացուած է ունենալ մարմին մը, որ ձեռնհասութիւն եւ իրաւունք ունենայ Դաշնակցութիւնը ներկայացնելու օտարներու առջեւ. նկատելով որ կան եւ բացառիկ պարագաներ, երբ անհրաժեշտ է ստիպողաբար վճիռ մը տալ կամ քայլ մը ընել Դաշնակցութեան կողմէ, բայց երբ հնար չկայ Ընդհանուր Ժողով գումարելու, Ժողովը վճռեց այդ իրաւունքը տալ «Դաշնակցութեան Կամբը Ներկայացնող Մարմին» անուան տակ երկու Բիւրօներուն եւ Պատասխ. Կեդր. Կոմիտէներուն հաւաքաբար...

Հ.Յ.Ղ. Դիւան, ք. հայրոք

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ԺՈՂՈՎ

1. ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՒՐՈՅԻ ՇՐՋԱՆԻ ԺՈՂՈՎ

Ժողովի առաջին նիստը կայացաւ 1899 թ. Յունուարի 16ին, եւ յաջորդաբար տասնեւվեց նիստ ունենալուց ու առաջարկուած հարցերը վճռելուց յետոյ փակուեց այսօր՝ 26 Յունուարի 1899 թ.:

Շրջանական անդամներից ներկայ եղան Ջրաբերդի, Ոսկանապատի¹ Կեդրոնական Կոմիտէների ներկայացուցիչները, իսկ Ծովափը¹ իրա կարծիքները հաղորդել էր գրատր, որոնք ուշադրութեան առնուեցան հարցերի քննութեան միջոցին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԲԱԾ ՈՒ ՎՃՈՌԻԱԾ ՀԱՐՅԵՐ

1. Որովհետեւ Շամիրամի³ պատասխանատու Կեդրոնական Կոմիտէի համար Ընդհանուր Ժողովի ընտրած անդամներից Տորքը՝ Երկիր մտնելուց յետոյ ձերբակալուել ու բանտարկուել էր, ու նրան յաջորդող դեռ եւս չէ ընտրուած, որովհետեւ Սինարէթից³ Շամիրամ կատարուած վերջին փոխադրութիւններից մին ու փոխադրիչ խումբը վտանգի ենթարկուած լինելու եւ Սինարէթի Մարմնի լրացուցիչ ընտրութիւնը կատարուած չլինելու պատճառով փոխադրութեան գործը դադարեցուել է Սինարէթի Մարմնի կողմից,

- Որոշուեց Շամիրամի Մարմնին լրացուցիչ անդամ առաջարկել եւ ուղարկել Սօսին, եւ յանձնարարել Սինարէթի Մարմնին, որ Երկրի գործօն ընկերների խորհրդակցութեամբ կազմեն Շամիրամի գոնէ առժամանակեայ Պատասխանատու Մարմինը, եւ շարունակել տան փոխադրութեան գործը:

2. Կեդրոնացման վայրերից Բարձրաւանդակի³ Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէի համար Ընդհանուր Ժողովի ընտրած անդամներից Վարդանը հրաժարած ու Մաքոն⁴ Երկրում ձերբակալուելով բանտարկուած լինելով, համաձայն Ընդհանուր Ժողովի մշակած կանոնադրութեան «Կազմակերպութիւն Թուրքիայէ դուրս» բաժնի «Պատասխանատու Կեդրոնական Կոմիտէ»ների կազմութեան պատկանող մասի Տրդ յօդուածի, Բարձրաւանդակի մնացած ընկերների հաւանութեան ենթարկելու թէութեամբ՝ նոյն Պատասխանատու Կեդր. Կոմիտէի լրացուցիչ անդամ ընտրուեցին

I. Քեռի՝ 4 ձայնով (2 ձայն հակառակ, մինը ձեռնպահ),

II. Գիսակ՝ 5 » (2 ձայն ձեռնպահ),

III. Լեւոն (Կ.)՝ 6 » (1 ձայն ձեռնպահ)՝,

որոնց ընտրութիւնը, ըստ վերոյիշեալ յօդուածի գորութեան, վերջնական կը լինի երբ Երկրի մնացորդ ընկերները իրանց հաւանութիւնը գրատը կը յայտնեն:

Բայց աչքի առաջ ունենալով, որ կեդրոնացումի նախապատրաստական գործը արդէն սկսուել է եւ Երկրի մնացորդ ընկերներից շարունակ պահանջ դրում է իրանց գործակից դրկելու,

- Որոշուեց Բիւրոյի հաւանութիւնը ստացած վերոյիշեալ անձերին որքան կարելի է շուտ ուղարկել Բարձրաւանդակ:

Որոշուեց նաեւ, որ բացի սրանից, երբ հնարատրութիւն լինի, նոյն Պատասխանատու Կեդր. Կոմիտէի հաւանութիւնը ստանալու թուփեամբ, ընտրել եւ ուղարկել մի ուրիշ ինտելիգենտ լրացուցիչ ընկեր՝ որը գործի մեծութեան եւ դժուարութիւնների համապատասխանող բոլոր յատկութիւններն ու առաւելութիւնները ունենայ:

3. Որովհետեւ Արեւել. Բիւրոյի ընտրուած անդամների անձնական ու ընտանեկան նիւթականի պահանջները ու պայմանները չեն թոյլատրում անձնական պարապմունքներից ազատ լինելով ծանրաբեռնուել կազմակերպութեան միջոցների վրայ,

Որովհետեւ անդամների անձնական զբաղումները գրաւելով ժամանակի կարելուր մասը՝ եւ երբեմն ոմանք բացակայելու ստիպուելով, անդամների մէջ աշխատութեան բաժանումը բաւարար սահմանի մէջ պահել հնարատր չի լինում, որով եւ յարաբերութիւնները ձգձգում ու ընդհանուր գործը տուժում է,

- Այս անպատեհութիւններին դարձան տանելու համար առաջարկուած ձեւերից յարմարագոյն համարուեց շրջանների բաժանումը, այն է՝ Արեւել. Բիւրոյի շրջանները բաժանելով անդամների մէջ, ամէն մէկ շրջանի յարաբերական եւ կազմակերպական գործը յանձնել եւ յատկացրնել վիճակուած անդամին, բայց յամենայն դէպս, պատասխանատու եւ Բիւրոյի կարգադրութեան վերապահուած հարցերը միշտ ենթարկել Բիւրոյի քննութեան ու որոշման:

Այս հիման վրայ բաժանումը կատարուեց հետեւեալ կերպով.-

Ա.՝ ու Վրէժտանի՝³, Շամիրամի շրջանները Սուրէնին,

Բ. Ջրաբերդի շրջանն ու զինապահեստական գործը Մարտին,

Գ. Նաւահանգստի շրջանի ու արտասահմանեան բանակցութեան գործը Սմբատ Օհանեանին,

Դ. Ոսկանապատի, Հիւս. Սարերի, Եկեղեցիի շրջանները «Լալվա-ր»ին եւ Նիթրային⁶:

Անխուսափելի ու անյետաձգելի պարտականութիւն ընդունուեց, որ

մէն մի շրջանի անդամ, ըստ շրջանի պահանջի, տարեկան մաքսիմում մինչեւ երեք ամսուայ համար, իրա անձնակազմի նիւթական պայմանները գոհելով, իրան վիճակուած շրջանի մէջ շրջի կազմակերպութիւնը ուժեղացնելու, կենդանացնելու եւ ամրապնդելու համար:

Որոշուեց յանձնարարել Սարուստանի³ բոլոր Կեդր. Կոմիտէներին՝ որ նրանք էլ իրանց շրջանի համար տյն, կամ նպատակայարմար այլ ուղղութեան հետեւելու աշխատին:

Որպէսզի Դաշնակցութեան գործօն անդամների թիւը ստուարանայ եւ նրանք փորձառութիւնով պատրաստուին գործօն մարմիններին օժանդակելու, եւ ի հարկին նրանց փոխարինելու,

- Որոշուեց որ Բիւրոյի անդամներ աշխատին իրանց օժանդակ ընկերներ գտնելու, որոնք կը հրաւիրուին նաեւ Բիւրոյի նիստերին խորհրդակցական ձայնով, եւ միշտ գիտակից կ'անուին կազմակերպութեան ընթացիկ գործառնութիւններին ու հարցերին,

- Որոշուեց յանձնարարել Սարուստանի բոլոր Կեդր. Կոմիտէներին, որ իրանք եւս աշխատեն իրագործել տյն ուղղութիւնը:

4. Դաշնակցութիւնը իրա գոյութեան ընթացքում առիթ չէր ունեցել *բիւրժէք* կազմելու, բայց որովհետեւ Դաշնակցութեան գործունէութիւնը ընդարձակուել ու Երկրի յեղափոխական տարրը բազմապատկուելով հասունացել էր բուն ապստամբական կէտեր որոշելու եւ կեդրոնանալու համար, որի ծրագրուած իրագործումը գոնեա՝ մօտաւորապէս չափուած պէտք է լինի գործի պահանջի նուազագոյն աստիճանի հետ, որի համեմատութեամբ ստիպուած լինելու են Դաշնակցութեան բոլոր Մարմինները իրանց ուժերը սպառելու եւ բաւականութիւն տալու,

- Ուստի, ըստ այնմ որոշուեց կազմել բիւրժէքը՝ որը կայացաւ հետեւեալ կերպով (միայն թուանշանների կազմութեան պարագայում 1ի դէմ 6 ձայնով, իսկ սկզբունքով բիւրժէք կազմելու վերաբերութեամբ միաձայնութեամբ, կամ որ նոյնն է՝ 7 ձայնով)։

ԲԻՒՏԺԷԹ

Բարձրաւանդակի կեդրոնացման համար ներմուծել առնուազն 1500 հրացան, որոնց մինչեւ կեդրոնացման վայրը հասցնելու համար լինելիք փոխադրութեան եւ այլ զանազան ծախքերը ու մասնակի կորուստները հաշուելով, կեդրոնացման վայրում մէն մի հրացանի արժէքը մօտաւորապէս 70 թուրքի ենթադրելով՝

$$1500 \times 70 =$$

$$105.000$$

Նոյն քանակութեամբ հրացանների համար՝ գոնէ մէկ միլիոն (1.000.000) փամփուշտ ներմուծել անհրաժեշտ նկատելով, եւ որոնց փո-

խաղրութեան եւ այլ ծախքերը հրացանների վերաբերմամբ ընդունուած որակի եւ քանակի համեմատութեամբ հաշուելով, կեդրոնացման վայրում ամէն մէկ 100 փամփուշտի արժէքը մօտաւորապէս ենթադրուեց 10 րուբլի, որով՝ $10.000 \times 10 = 100.000$

Բացի հրացանից եւ փամփուշտից, զանազան կարգի եւ տեսակի անհրաժեշտ ռազմամթերքների եւ ծախքերի համար՝ 25.000 ր.
 Չինակիցների եւ մարտախմբերի պաշարի համար՝ 70.000 ր.
 Գումար՝ 300.000 ր.

Լեռնավայրի՝ կեդրոնացումի համար նոյն հաշուով՝ 300.000

Շամիրի կիսակեդրոնացման համար՝ 50.000

Կռուածաղկի՝ կեդրոնացման համար՝ 50.000

Երկրում կազմուելիք թռուցիկ հրոսախմբերի եւ առհասարակ ամէն կողմ կազմուելիք մարզական խմբերի կազմութեան նպաստելու համար՝ 150.000 ր.

Կազմակերպութեան մարմինների, գործօն անդամների, խմբագրութեան, հրատարակութիւնների եւն. ծախսերի համար՝ 100.000

Աննախատեսելի բացառիկ ծախքերի համար՝ 50.000

Գումար՝ 1.000.000

Որովհետեւ ծախքերի այս նախագծից Կռուածաղկի ու Լեռնավայրի բաժինները պատկանում են Արեւմտեան Բիւրոյի շրջանին, որոշուեց նոյն շրջանի նախագիծը ենթարկել նոյն Բիւրոյի հայեցողութեանը, որ եթէ փոփոխութիւն մտցնի, այդ փոփոխութիւնը առանձինն հաղորդէ Արեւել. Բիւրոյի Կեդր. Կոմիտէներին:

Սոյն նախագիծը Արեւմտ. Բիւրոյին ներկայացնելով հանդերձ, որոշուեց քանակութեամբ մօտաւորապէս ճշդել ու իմանալ, թէ Արեւմտ. Բիւրոն ի՞նչ չափով պիտի կարողանայ մասնակցել իրա շրջանի կամ Գաշնակցութեան ընդհանուր ծախուց մօտաւորապէս ենթադրեալ նուազագոյն քանակին:

Այնուամենայնիւ անցեալի փորձառութեան վրայ հիմնուելով ընդունուեց, թէ մարզական ու թռուցիկ խմբերի համար նախագծուած ծախքերից՝ 100.000 ր.

Կազմակերպական ծախքերից՝ 50.000 ր.

Չնախատեսուած ծախքերից՝ 25.000 ր.

175.000 ր.

Արեւմտ. Բիւրոյի շրջանի կեդրոնացումի ծախքերից՝ 175.000 ր.

350.000 ր.

վիճակուելու եւ ծանրանալու է Արեւել. Բիւրոյի շրջանների վերայ. սոյն գումարի վերայ աւելացնելով Արեւելեան Բիւրոյի երկու կեդրոնացման յատուկ ծախքերը 350.000 ր.

Գումար՝ 700.000 ր.

Հետեւաբար եօթ հարիւր հազար րուբլի Արեւելեան Բիւրոյի շրջանները ստիպուած են լինելու հայթայթելու:

Ուստի սոյն ընդհանուր գումարը միաձայնութեամբ յարմար դատուեց հետեւեալ կերպով բաշխել Բիւրոյի շրջաններին.—

Սարուստանի կեդրոնական շրջանին (Մեծ Քաղաք)	50.000 ռ.
Նաւահանգստի	» » 50.000 ռ.
Ոսկանապատի	» » 350.000 ռ.
Հիւսիսային Սարերի	» » 100.000 ռ.
(Շ) Ապառաժ	» » 30.000 ռ.
(Ե) Սրգաստան	» » 30.000 ռ.
Ջրաբերդիկի	» » 20.000 ռ.
Վրէժստանի	» » 20.000 ռ.
Եկեղեցիի	» » 50.000 ռ.
Գումար`	700.000 ռ.,

որի համաձայն որոշուեց յանձնարարել եւ խնդրել պատկանեալ շրջաններին, որ առաջարկուած յայտնի միջոցներով ամէն ջանք գործ դնեն իրանց մասը հայթայթելու համար:

Սոյն շրջաններից դուրս մնացած Ամերիկայի, Եւրոպայի, Եգիպտոսի, Բուլղարիայի եւ Արեւմտեան Տաճկաստանի շրջանների բաշխումը կատարելու համար բնականաբար որոշուեց դիմել Արեւմտեան Բիւրոյին:

5. Որովհետեւ մեզանում հայ ժողովուրդի զանազան խաւերի մէջ առհասարակ տիրած սառնութիւնը կամ ռէակցիան ծնունդ չէ միայն Կազմակերպութեան զանազան աստիճանի Մարմինների թոյլ լինելուց, այլ բնական հետեւանքն է ձախողութիւնների եւ քաղաքական պայմանների` որոնք իրանց ազդեցութիւնը ունեցած են նոյնիսկ սիրողներից բաղկացած կազմակերպութեան մի քանի մարմինների վերայ, մինչդեռ այդպիսի ձախողութիւններ ու քաղաքական պայմաններ առաջ են եկել բոլոր ազգերի յեղափոխական կեանքի ու պատմութեան մէջ, որոնք ո՛չ երկարատեւ կարող են լինել` եւ ոչ էլ հաւատի կորստեան ու գոյութեան կռուէն հրաժարուելու պատճառ,

ա. Որոշուեց յանձնարարել եւ շեշտել կազմակերպութեան Արեւելեան Բիւրոյի շրջանի բոլոր Մարմիններին, որ սիստեմաբար իրագործեն փոքրականտի բոլոր կարելի միջոցները` որոնք կազմակերպութեան հիմնական ծրագրով բնորոշուած են ու ծագում են տեղական պայմաններից:

բ. Որոշուեց յանձնարարել ու շեշտել այն անյետաձգելի պարտաւորութեան իրագործումի մասին, որով Ընդհանուր Ժողովը պարտաւորեցրել է Դաշնակցութեան բոլոր Մարմիններին` մարզական խմբեր կազմելու եւ ընդհանրացնելու համար:

գ. Աչքի առաջ ունենալով որ հայ-բուրժուազիական դասակարգի մէջ տարաբախտաբար գտնուում է դեռ եւս` նիւթապէս ուժեղ մի փոքրա-

մասնութիւն՝ որը ո՛չ միայն ռեւիզէ կերպով գործնականապէս չէ յայտնած իրա համակրութիւնը կամ օգնութիւնը հայկական յեղափոխական գործին՝ այլ եւ պատրուակներով անարգելու իսկ յանդգնութիւնը ցոյց է տալիս,

Աչքի առաջ ունենալով որ կեդրոնացման երկու վայրերի՝ Բարձրաւանդակի եւ Լեռնավայրի մէջ սով է տիրում,

Աչքի առաջ ունենալով որ այդ սովատանջ վայրերի ժողովրդին որեւէ կերպով նպաստ հասցնելը ո՛չ միայն կը նպաստէ յեղափոխական գործին՝ այլ եւ ընդհանուր հայկական ինքնաճանաչութեան միտքը մշակելով կ'ազդէ զգացումների վերայ,

Եւ ենթադրելով որ բուրժուազիայի այդ դասակարգը՝ որքան էլ անհամակիր ու աննպաստ լինի յեղափոխութեան, թերեւս չկարենայ զուտ բարեգործական ինչպիսիսն է սովեալին հաց տալ, դիմումներին անհետեանք թողուլ,

Աչքի առաջ ունենալով միեւնոյն ժամանակ, որ Դաշնակցութեան Մարմինները չեն կարող ոչ ուղղակի բարեգործական գործի ձեռնարկել եւ ոչ էլ զուտ բարեգործական անունով կամ այլ պատրուակով յեղափոխութեան նպաստի դիմումներ անել, բայց եւ այնպէս Մարմինների մէջ կը գտնուին անհատներ՝ որոնք անձնական կապերի եւ յարաբերութիւնների շնորհիւ կը կարողանան գտնել միջնորդներ, որոնց թելադրելու [նախաձեռնութիւնը] կ'ունենան ակնարկուած բուրժուազիական տարրի մէջ սովեալների համար ժողովարարութիւն կատարելու,

- Որոշուեց յանձնարարել Արեւել. Բիւրոյի շրջանի բոլոր Մարմիններին, որ իրանց անդամներից վերոյիշեալ յատկութիւնը եւ յարմարութիւնը ունեցողներ անձնապէս հետամուտ լինին այդ *խնդիրները* իրագործելու:

դ. Որովհետեւ Դաշնակցութիւնը կեդրոնացման վայրերում եւ ի մասնաւորի Բարձրաւանդակում եւ Լեռնավայրում իրա զինակիցներին եւ մարտախմբերին ոչ միայն ռազմական մթերք՝ այլ եւ երկրի տնտեսական պայմաններից ստիպուած, նրանց պաշարն էլ մատակարարելու, հայթայթելու կամ նպաստելու պարտաւորութիւնն է վերցրած, որը կրկնապատկուած է Դաշնակցութեան նիւթական միջոցների սպառումը, եւ որի մասին, հաւանականաբար, միջին ու բուրժուազիական դասակարգերը անտեղեակ են, եւ որոնք թերեւս արելի համակիր վերաբերուէին Դաշնակցութեան՝ եթէ տեղեկանային գործունէութեան ու նիւթական գոհողութեան այս եղանակի հետ,

- Որոշուեց յանձնարարել շրջանի բոլոր մարմիններին, որ ժողովարարութեան միջոցին պէտք տեսնուած դասակարգերի եւ անհատների պարզաբանեն Դաշնակցութեան գործունէութեան այս կարգի մանրամասնութիւնները:

ե. Ինչպէս տեսնուեց իրա կարգին, Դաշնակցութեան եւ յեղափոխա-

կան գործի բուն Երկրի մէջ ստացած ծաւալի եւ նպատակի յաջողութեան պահանջի համեմատութեամբ՝ Ընդհանուր Ժողովի ծրագրած կեդրոնացումները ամենանուագագոյն մինիմումի չափով հնգապատիկ անելի նիւթական միջոցների են կարօտ քան Դաշնակցութեան ամենայաջող տարիների մուտքի գումարը,

Եւ աչքի առաջ ունենալով որ նոյնիսկ առանց ժամանակի պայմանի, կեդրոնացումների յաջողութիւնը կախուած է կանխաւ կատարուելիք անյետաձգելի նախապատրաստութիւններից ու նիւթական կարելոր գումարների սպառումներից,

Աչքի առաջ ունենալով որ այդ նիւթական կարելոր միջոցների հայթայթումը թերեւս չյաջողուի առաջադրուած խաղաղ միջոցներով,

- Գլխատրաբար Ջրաբերդի շրջանի ներկայացուցչի կողմից առաջարկ տրուեց սուր միջոցների դիմել:

Բայց, որովհետեւ մեծամասնութիւնը չէր կարողանում խղճի հանդարտութեամբ, հաստատել թէ բոլոր հնարաւոր խաղաղ միջոցները իրագործուել եւ անյաջող սպառուել են,

Որովհետեւ սուր միջոցի՝ այսինքն տեռորի գործադրութիւնը վերապահուել է Ընդհանուր Ժողովի կողմից ամենաձայրայեղ եւ յուսահատական դէպքում,

Որոշուեց չորսից մինչեւ վեց ամիս անպայման աշխատել ծանուցեալ խաղաղ միջոցների իրագործումին, եւ նոյն ժամանակամիջոցում, եթէ Դաշնակցութեան նիւթական միջոցները ցանկացուած ծաւալն ու յաջողութիւնը չեն ստացել, այն ատեն միայն Բիւրոյի շրջանական երկրորդ ժողովը գումարելով կատարել գործունէութեան հաշուետուութիւնը եւ արդիւնքի համաձայն վճռել յանձնարարել կոմիտէներին Ընդհանուր Ժողովի արտօնած ձայրայեղ միջոցը իրագործելու, ուր որ անհրաժեշտ է համարուած (Տի դէմ 2 ձայն):

«Նիւթեր Հ.Յ.Դ. Պատմութեան համար», ք. հայրոր

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.-

1. Ջրաբերդ, Ոսկանապատ եւ Ծովափ՝ կազմակերպական ծածկա-տեղանուններ. յաջորդաբար՝ Կարս, Պարսու եւ Տրապիզոն:

2. Գործիչ՝ բուն անունով Յովի. Աչրգկէօզեան:

3. Շրջաններ.- Շամիր(ամ)՝ Վասպուրական. Մինարեք՝ Սալմաստ. Բարձրաւանդակ՝ Սասուն. Վրէժտան՝ Թաւրիզ. Սարուստան՝ Ռուսաստան (հոս՝ Արեւելեան Բիւրոյի կովկասեան շրջաններ). Լեռնավայր՝ Կիլիկիա. Կռուածաղիկ՝ Պոլիս:

4. Սաքօ՝ Սեւքարեցի Սաքօն է. Վարդան՝ Խանասորի Վարդանը (Մեիրապեան):

5. Ծանօթ մարտա-ծածկանուններէն.- Քեռի՝ Տերսիմի, Ռուք. Շիշմանեան. Գիսակ՝ Վարդգէս Մերենկիլեան:

6. Նոյն.- Ս(մբատ) Օհանեան՝ Միմոն Չաւարեան. Լավար՝ Աւետիք Սահակեան (Հայր Աբրահամ). Նիթրա՝ Յարութիւն Շահիկեան:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ ՑՈՒՑԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

Երրորդ Ընդհանուր Ժողովի կողմից ընտրուած Յուցական Պատ(ասխանատու) Մարմինը՝ գումարուելով Պիրեայում Յուլիսի 17ից մինչև Օգոստ(ոս) 10ը, մի շարք նիստերում (բացակայ էր ընկեր Թորգոմը, որ արդէն մտել էր Վիշապ), իմիջի այլոց՝ մշակեց հետեւեալ ներքին կանոնագիրը, իբրեւ մի փոքրիկ ընդհանուր հրահանգ՝ ընկերների փոխադարձյարաբերութեան եւ գործի մի քանի պահանջների վերաբերմամբ: Ի նկատի ունենալով սակայն, որ Երկրի արդի պայմանները Պատ(ասխանատու) Մարմնիս ծանօթ են շատ թերի կերպով, իսկ այս կանոնագրութիւնը, որը վերաբերում է ներսի գործունէութեանը, կազմուած է դրսում եւ հետեւաբար կարող է շատ կէտերում բոլորովին անհամապատասխան գտնուել իրերի իսկական դրութեանը, ուստի այս կանոնագրութեան առաջ քան պարտաորեցուցիչ համարուելը՝ անհրաժեշտ է որ վերստուգուի Մարմնի կողմից, երբ նա գտնուելիս կը լինի արդէն գործի վայրում եւ մօտից ծանօթացած կը լինի տեղական պայմաններին:

Յուցական Պատասխանատու Մարմին

Յօդ. 1.- Յուցական Պատ(ասխանատու) Մարմինը բաղկացած լինելով Ընդհանուր Ժողովում ընտրուած հինգ անդամներից, ինքը հրաւիրում է նաեւ օժանդակ ընկերներ կամ որոշ ձեռնարկների համար կազմակերպում է առանձին գործադիր կոմիտէներ:

Յօդ. 2.- Յուցական բոլոր ձեռնարկները եւ դրանց գործադրութեան ծրագիրները մշակում է Պատասխանատու Մարմինը՝ համաձայն Ընդհանուր Ժողովի կողմից նրան տրուած լիազօրութեան: Իսկ Վիշապում, բացի դրանից, Պատասխ(անատու) Մարմինն է, որ իր անմիջական մասնակցութեամբ ղեկավարում է ձեռնարկները:

Յօդ. 3.- Յուցական Պատասխանատու Մարմինը պարտաւոր է, համաձայն Ընդհանուր Ժողովի որոշման, ամէն ճիգ թափել իր ստանձնած գործը կատարելու ներկայ 1904 թուականի ընթացքում եւ չէտաձգել՝ առանց ամենայարգելի պատճառների կամ ակներեւ անհնարութեան առաջ կանգնած լինելու, 1905 թուականին:

Յօդ. 4.- Պատասխանատու Մարմինը իր անդամներից կամ օժանդակ ընկերներից մէկին թողնում է սահմանակից որեւէ ազատ վայրում՝

ընկերների եւ իրերի փոխադրութեան, Մարմնի յարաբերութիւնները դրսի աշխարհի հետ դիւրացնելու եւ ի հարկին՝ գործի վայրում ընկերների պակասը լրացնելու համար:

Յօդ. 5.- Եթէ Պատասխանատու Մարմնի անդամներից ներսը գրանցուող ընկերների թիւը այս կամ այն պատճառով միայն երկուսը մնայ՝ դրանք լրացնում են իրենց կազմը համաձայն Ընդհանուր Ժողովի կողմէ ընդունուած կազմակերպական կանոններին:

Գործադիր Կոմիտէ

Յօդ. 6.- Պատասխանատու Մարմինը հարկաւոր դէպքերում (օրինակ՝ Ոսկեհանք, Մակերոնացիների հետ միացած գործունէութիւն, Փոքորիկ տայլն) կարող է այս կամ այն ձեռնարկի ամբողջ գործադրութիւնը յանձնարարել օժանդակ ընկերներից բացառապէս կամ օժանդակ ընկերներից եւ իր անդամներից խառն կազմուած գործադիր կոմիտէների:

Յօդ. 7.- Գործադիր կոմիտէները անկախ են իրենց գործին վերաբերեալ բոլոր յետագայ խնդիրներում, բացի նրանց անելիքներն եւ վերջիններիս ժամանակին վերաբերեալ հարցերը, որոնք վճռուած են համաձայնութեամբ Պատասխանատու Մարմնի:

Յօդ. 8.- Գործադիր Կոմիտէն դրամական միջոցներ ստանում է միայն Պատասխանատու Մարմնուց եւ իր շրջանից դուրս անյայտ է մնում կազմակերպութեան բոլոր միւս մարմիններին:

Օժանդակ Ընկերներ

Յօդ. 9.- Օժանդակ Ընկերները աջակցելով գործին՝ կարող են նոյնիսկ մինչեւ վերջին րոպէն չիմանալ Պատասխանատու Մարմնի կողմից ծրագրուած ձեռնարկների բնոյթը եւ առհասարակ ենթարկուած են Պատասխանատու Մարմնու բոլոր որոշումներին, ինչպէս դրանց ենթարկուած է Պատասխանատու Մարմնի իւրաքանչիւր անդամը:

Յօդ. 10.- Օժանդակ Ընկերները ի հարկին կարող են հրաւիրուել Պատասխանատու Մարմնի կողմից իւր նիստերին՝ խորհրդակցական ձայնով:

Յօդ. 11.- Իւրաքանչիւր օժանդակ ընկեր պահպանում է իր կապը Յուցական Մարմնի հետ այն ընկերոջ միջնորդութեամբ, որի միջոցով հրաւիրուել է գործի եւ անձանօթ է մնում միւս ընկերների հետ:

Յօդ. 12.- Ոեւէ ընկերոջ մէջ նկատուած ցանկութիւն՝ կողմնակի միջոցներով անպատճառ թափանցելու իրենից բազմուած մի գաղտնիք, կամ իրեն վստահուած մի գաղտնիք ուրիշին յայտնելու անհոգութիւնը՝ կը համարուի դատապարտելի վարմունք:

Ընդհանուր

Յօդ. 13.- Թե՛ Պատասխանատու Մարմնի եւ թէ գործադիր կոմիտեների մէջ մեծամասնութեան ձայնը որոշում է բոլոր խնդիրները: Բացառութիւն է կազմում միայն գլխատըր ձեռնարկի գործնական ձեւը, որը պէտք է վճռուի տեղումը գտնուող պատասխանատու ընկերների միաձայն հաւանութեամբ:

Յօդ. 14.- Ոչ մի ընկեր (պատասխանատու կամ օժանդակ) իրաւունք չունի գործի վայրից հեռանալու՝ ինքն իրեն կասկածուած կամ վտանգրած նկատելով՝ մինչեւ այդ մասին առանձին որոշում չընդունուի պատկանեալ մարմնի կողմից: Պատ(ասխանատու) Մարմնի եւ գործադիր կոմիտեի անդամները, երբ հեռանում են իրենց մարմինների ուրշմամբ, շարունակում են համարուել այդ մարմինների անդամ:

Յօդ. 15.- Թե՛ Պատասխանատու Մարմնի անդամները եւ թէ օժանդակ ընկերները գործի վայրը գտնուած օրից, իբրեւ անհատներ, կտրում են դրսի աշխարհի հետ ամէն տեսակ յարաբերութիւններ՝ թէ՛ անձնական եւ թէ՛ գործի վերաբերմամբ: Վերջին կարգի յարաբերութիւնները վերապահում են միայն Պատասխանատու եւ գործադիր մարմիններին:

Յօդ. 16.- Պատասխ(անատու) Մարմնի իւրաքանչիւր անդամը գործի եւ իր հետ կապուած օժանդակ ընկերների պէտքերի համար՝ իր ձեռքի տակ ունի մշտական 1000 ֆր.: Բացի դրանից՝ թէ՛ Պատասխանատու եւ թէ՛ օժանակ ընկերները, իրենց անձնական ապահովութեան համար, ունեն մօտները անձեռնմխելի՝ 200 ֆր.: Գործադիր կոմիտեների անդամների վերաբերմամբ՝ ի՛նքը գործադիր կոմիտեն է վճռում, բացի յիշեալ 200 ֆր.ից, որքան գումար թողնել իր անդամներից իւրաքանչիւրի տրամադրութեան տակ: Հարկատըր գումարները պահում են Պատասխ(անատու) Մարմնի կամ գործադիր կոմիտեի գանձապետներին մօտ:

Յօդ. 17.- Հեռագրով դրամ կարող է պահանջել պատշաճ մարմիններից միայն Պատասխանատու Մարմինը, իսկ վերջինից՝ գործադիր կոմիտեն: Անհատ անդամներ թէ՛ մէկում եւ թէ՛ միւսում այդ իրաւունքը չունեն: Բացառիկ դէպքերում միայն, երբ ընկերները ցրուած լինեն, Պատ(ասխանատու) Մարմնի անհատ-անդամը իր ստորագրութեամբ կարող է հեռագրով դրամ պահանջել դրսից 1000ֆր.ի չափ: Այդ գումարից անցնող իւրաքանչիւր պահանջ՝ Պատ(ասխանատու) Մարմնի անհատ անդամը պարտատըր է հիմնաւորել նամակով գրած պատշաճ բացատրութիւններով:

Յօդ. 18.- Գործի վայրում բոլոր ընկերները իրենց ժողովներից եւ պայմանաւորուած տեսակցութիւններից դուրս՝ իրար անձամօք են: Կարելւոր դէպքերի համար ունեն սակայն պայմանական նշաններ, որոնք մշակում են տարբեր ձեւերով ընկերների ջուկ-ջուկ խմբերում, որպէսզի մի խմբի նշանները անյայտ մնան միւս խմբերին:

Յօդ. 19.- Եթէ Պատ(ասխանատու) Մարմնի եւ գործադիր կոմիտէի ռեւէ ընկեր չի համակերպում իր մարմնի որոշումներին եւ իր բռնած դիրքով ակններեւ խանգարում է գործի կանոնաւոր ընթացքը, նա - համաձայն կազմակերպական ընդ(հանուր) կանոնների- պարտաւոր է իր գործունէութեան համար ուրիշ վայր ընտրել: Այդպիսի առաջարկ մի ընկերոջ սակայն՝ կարելի է անել միայն պատկանեալ մարմնի միւս ընկերների միաձայն որոշմամբ:

Յօդ. 20.- Պատասխանատու Մարմինը եւ գործադիր կոմիտէները կարող են ի հարկին ուժեղացնել իրենց կազմը տեղական կամ դրսից հրախրուած նոր ընկերներով:

10 Օգոստ(ոս) 904, Աթէնք

*ՅՈՒՅԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ԷԼԼԷՆ [Բ. Միքայէլեան]*

42

ՀՅԳ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ (1906)

[ՇԱՐՔԵՐՈՒ ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹԻՒՆ, ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՎԻՃԱ-
ԿԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ - ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԲԱՆԱԶԵԿԵՐ]
(17րդ նիստ, 6 Ապրիլի երեկոյ)

*Նախագահում է Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներ(կայացուցիչ) Հ(ամօ) Օ(հանջանեան): - Որոշում է վաշխառուների դէմ կռուելու գործը թող-
նել րեղական մարմիններին: - Դրում է [ՀՅԳ-շարքերու մաս կազմելու
համար] նուազագոյն պահանջների հարցը:*

Նախագահ Համօ Օհանջանեան.- Առաջարկում եմ յայտնել մար-
մինների կարծիքները:

Ռսկանապատի՛ ներ(կայացուցիչ).- Մեր բանաձեւն է.- «**Դաշնակ-
ցական համարում է նա, ով ընդունում է Դաշնակցութեան ծրագիրն
ու փակփիկը եւ իր քաղաքացիական պարտականութիւնները կապա-
րում է Դաշնակցութեան ծրագրի պահանջների համեմապ:**»

Այդպիսիներին է վերապահում ընտրուելու եւ ընտրելու իրաւունքը.
իսկ այն անհատները, որոնք ծրագիրն ընդունելով հանդերձ՝ չեն ենթար-
կըւում կեանքում նրա պահանջներին եւ ծրագրին համակրելով միայն
նիւթական օգնութիւն են հասցնում, բոլոր այդպիսիները համարում են
օժանդակողներ եւ ձայնատուութեան եւ ընտրուելու չեն մասնակցում:

Մրգաստան².- Իւրաքանչիւր անհատ, երբ ընդունում է Դաշն(ակցու-
թեան) ծրագրի հիմունքները եւ նոյն ծրագրի պահանջին համաձայն
ընտրում է խմբի անդամ, իրատուճք ունի ընտրուելու անխտիր ամէն մի
դաշն(ակցական) մարմնի մէջ:

Ռոստոմ.- Ծիշդ է որ կազմակերպութիւնը ներկայացնում է բաբելոն-
եան խառնակութիւն, բայց այժմս վաղաժամ է դեռ այս հարցը արմա-
տական կերպով վճռելու համար, հակառակ պարագայում եղածների
3/4ը կը կորցնենք: Դաշ(նակցական) խմբերի մէջ մտնողները անդամ
են, բայց ընտրուելու համար պէտք է ի նկատի առնել այդպիսիների
ակտիւ գործունէութեան պատրաստակամութիւնը եւ ընդունակութիւնը:

Չրաբերդի³ ներ(կայացուցիչ).- Կոմիտէի անդամ լինելու համար
[հարկ է որ ենթական] նախապէս գիտակցական դաշնակցական որոշ
անցեալ ունենայ: Անհրաժեշտ է բազային պատկանել, Դաշն(ակցու-
թեան) սկզբունքի դաւանումը, յեղափոխութեանը շիտակութիւնը. իսկ
բազայից դուրս գտնուածների համար, իբրեւ անվստահելիների՝ պա-
հանջն խիստ է դուրս:

Ռսկանապատի ներ(կայացուցիչ).- Մեր Սեւ-Քաղաքի կոմիտէն լռու-
թեան է մատնել այդ հարցը, իսկ ենթակոմիտէն ասում է՝ ակտիւի համար
լինել խիստ, իսկ օժանդակողի համար մեղմ:

Ժլատի⁴ ներ(կայացուցիչ).- Բանաձեւ չէ բերուած, բայց այսպիսի
մի որոշում եղաւ,- ով չի ընդունում նախագիծը եւ ծրագիրը եւ տակտիկը,
նա չի համարում դաշնակցական:

Քարի⁵ ներ(կայացուցիչ).- Թէպէտ բանաձեւ չեմ բերել, բայց մեզա-
նում հասարակութեան մէջ երկուքի են բաժանուած՝ հին եւ նոր դաշ-
նակցականներ:

Գանձակ.- Նրանք որոնք պարտաւորեցուցիչ են համարում ծրագիրը՝
նրանք ակտիւ, իսկ որոնք ոչ՝ օժանդակող:

[ԸՆՆԱՐԿՈՒՄ ԸՍՏ ԷՈՒԹԵԱՆ. ԱՆԳԱՍԱԿՅՈՒՄ ԸՍՏ ՏՈՒՐՔԻ՞...]

Հ(ամօ) Օ(հանջանեան), Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներ(կայացուցիչ).-
Այժմս անցնենք ըստ էութեան [քննարկման]: Մինչ այժմ նրանք եղել
են դաշն(ակցական) որ տուել են որոշ տուրք. (օրինակ)՝ ամբողջ գիւղեր,
գիւղը ամբողջովին դաշնակցական: Այսպէս՝ Կարսի, Ալեքսանդրապոլի
շրջանում, Երեւանի շրջանում, թէպէտ խմբային է եղել, բայց ցենզ չի-
նելու պատճառով դարձեալ նոյնն է առաջացել: Իսկայէն առաջացել
է հայ ժողովուրդ: Գարսում Աղաբաբեանի ծրագիրը յիշում էք, որ մտա-
ծում էր կազմել հայկական պարլամենտ,- դա ունէր իր առաւելութիւն-
ները ու պակասութիւնները:

Ոսկանապատի ներկայացուցիչ).- Շնորհիւ այն հանգամանքի որ մենք մինչեւ այժմ քաղաքական կռուի չենք մասնակցել, այլ եղել ենք ինքնապաշտպանական կարածական խնդրում եւայլն, կուսակցութիւնը լուծուել է ժողովրդի մէջ: Սակայն, որպէսզի կարելի (լինի) շարունակել, ոսնձգութիւններ եղել են նոյնիսկ կառավ(արութեան) կողմից բուրժուաներին իրենց ձեռք վերցնելու կ(ոմիտ)ի կազմ եւ ղեկավարելու(°):

Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներկայացուցիչ).- Ժողովականները առաջարկում են խօսել մանրամասն այդ դէպքի մասին:

Քարի ներկայացուցիչ).- ես ասեմ,- Կրքմ Գրէյն է ասել Ալեքսանդրապոլի քաղաքագլխին թէ դուք էք մեղաւոր, մտք կազմի մէջ եւ ղեկավարէք: Նա յետոյ սկսեց աշխատել այդ ուղղութեամբ, բայց միջոցներ ձեռք առնուեցին:

Ոսկանապատի ներկայացուցիչ).- Մենք որ գործնականի մասին մտցրել ենք(°), շատ անհրաժեշտ է որ Դաշնակցութեան որոշումներով անպատճառ ղեկավարուէ(°): Նրանք որոնք ընդունում են Դաշն(ակցութեան) ծրագիրը եւ տակտիկը, նրանք նոր ցենզի այլեւս կարիք չունեն. որ նա անցեալ ունենայ, սխալ է. կարող է մէկը անցեալ չունենայ, բայց իր համոզմունքների համար ընտրուէ, իսկ միւս անցեալ ունեցողը՝ ոչ: Հաւասարապէս պէտք է ընտրուեն: Տուրք էինք մենք դրել, այսինքն դրամական ցենզը նշանակուել է ցենզ կուսակցական,- ի հարկէ սխալ (է): Հարուստ խաւերը որոնք որոշ էտապ մեզ հետ կը գան (տաճկահայկական հարց), դրանք այժմ մեզ հետ են, վաղը կը հեռանան: Նրանք որոնք ծրագիրն են ընդունում եւ տակտիկը՝ իսկական (դաշնակցականներ պէտք է նկատուեն), իսկ նրանք որոնք դրամական օժանդակութիւն են տալիս միայն՝ օժանդակողներ:

[ԸՍՏ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԱՄՔՈՂՋԱԿԱՆ-ԱՆԿԵՂԾ ՅԱՐՈՒՄԻ՞...]

Գարեգին Խաժակ).- Նրանք որոնք ծրագիրն ընդունում են եւ ենթարկւում են դաշնակցական տակտիկային:

Արեւ(ել.) Բ(իւրոյ)ի ներկայացուցիչ).- Այստեղ դրուած է արդէն այդ:

Ոսկանապատի ներկայացուցիչ).- Դնենք Ոսկանապատի բանաձեւը:

Մրգաստան).- Այժմ ուրեմն պէտք է քայքայենք կազմակերպութիւնները. մեր գիւղերում հիմա ինչ որ ասենք նրանք չեն ընդդիմանայ, կը համաձայնուեն. ի հարկէ կը լինեն անհատ բուրժուա բացառութիւններ. բայց եթէ մենք դրանց դուրս գցեցինք, հնչակեանները ներս կը մտնեն եւ այստեղ առաջ կը գայ յիմար դրութիւն: Մի գիւղում դաշն(ակցականներ) եւ հնչ(ակեաններ) (որ գտնուեն), անպատճառ կռիւ (կը լինի), մարդ ուղղակի կը զգուի:

Արշակ⁶.- Նա ով ընդունում է ծրագիրը եւ իր քաղաքացիական պարտականութիւնը կատարում է համաձայն ծրագրի եւ տակտիկայի, նա կարող է ընտրուել. բայց ո՞վ պէտք է ընտրէ: Մի շարք ֆորմուլաներ գրել հեշտ է, բայց սպասեցէք: Դուք ասում էք, թէ (որոշ վայրերում) նոյնիսկ կ(ոմիտ)էն ոչ սոցիալիստ է: Դուք գործնականը ցոյց տուէք: [ԹԷ՞ ՊԱՇՏՕՆԱՅԻՆ «ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒՒ» ՀԻՄՄԱԲ]

Ռ-ոստոմ.- Մենք նախ պէտք է ֆունկցիաները որոշենք. երբ որոշենք, գտումը ինքնըստիներեան առաջ կը գայ: Խնդիրը նրանումն է, որ այժմս կան հայ-թուրքական ընդհարումները: Դաշն(ակցութեան) կազմի մէջ կան ներկայումս մարդիկ, որոնք այդ ցենզը չեն տալիս..., ծրագրով էլ բողոքովին չեն հետաքրքրում, բայց շատ անհրաժեշտ են: Գանձակում ախպէս դրուեց,- եթէ մենք ֆունկցիաները բաժանենք, զինուորներին տանք առանձին ինքնուրոյնութիւն, առաջ կը գայ գտումը: Այն զիւղերը որտեղ ամբողջովին դաշն(ակցական) են, այնտեղ պիտի առաջ բերել նոր հիմունքների վրայ(°): Ենթադրենք մի զիւղ կազմակերպուած է ինքնապաշտպանական, ընտրել է(°) մի քանի բէկեր, կառավարիչներ: Զուգընթացաբար կազմակերպենք նոր հիմունքների վրայ եւ ասում են՝ կը գտունեմ կարճ ժամանակում:

Արեւ(ել) Բ(իւրոյ)ի ներ(կայացուցիչ).- Ուրեմն այդ դէպքում պէտք է միսն էլ մնայ:

Ռ-ոստոմ.- Այո, կը մնայ, բայց այստեղ մեր դէմ չեն գայ հնչակեաններ. բացի դրանից եւ դէմ կը գնանք մի ուրիշ տարրի՝ կառավարչականի: Այս էր պատճառը որ մենք գտանք որ պէտք է բաժանել սեկցիաների: Պէտք է օգտուել Դաշն(ակցութեան) հեղինակութիւնից:

Գարեգին Խաժակ.- Ռ-ոստոմն ասաց, որ պէտք է օգտուել Դաշն(ակցութեան) հեղինակութիւնից եւ կազմակերպութեան մէջ մի կազմակերպութիւն ստեղծել:

Ռ-ոստոմ.- Մահմ(անադրականները) եւ Ռ-անկ(ավար)ներն⁶ էլ գտում են. արդէն կայ ծերակոյտ, դա նրանց բաժինն է:

Արշակ.- Քաղաքներում ի՞նչ պիտի անենք:

Ռ-ոստոմ.- Քաղաքներում առանձին վտանգ չկայ, արդէն կազմալուծում են հները եւ կազմակերպում են նորերը, այնպէս որ մենք կ'ունենանք դաշնակցական բազան:

Ռսկանապատի ներ(կայացուցիչ).- Երբ մենք մի նոր քայլ մտածում էինք անել, առաջ էին բերում հայ-թուրքական ընդհարումները: Այժմս էլ գտման խնդրում Մրգաստանի ներ(կայացուցիչը) հնչակեաններին առաջ է բերում եւ զարմանալի է որ Գարեգին Խաժակն էլ համաձայնում է եւ առաջարկում է կոնգրոմերատը պահել, քանի կան հայ-թուրքական ընդհարումներ, քանի կայ տաճկահայկական դատ: Հնչակեանները մի րոպէ ընդունենք այդպէս դաւաճան, այն ժամանակ մենք կը կռուենք իբրեւ վաշխառուների կազմակերպութեան հետ:

Մրգաստանի ներ(կայացուցիչ).- Բայց ամբողջ գիտն է մնում:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).- Մենք կազմակերպում ենք սակահողերին, ուրեմն կը մնան վաշխառուները: Ռոստոմն ասում է այն զինուորների մասին, որոնք իրենց կեանքն են զոհում. բայց եթե Ռոստոմը խօսում է ամեն մի զինուորի մասին, որ զենք վերցրել է ինքնապաշտպանական գործի համար, որ կատարեալ անգիտակից են, ես ասում եմ նրանց պէտք է ազատել: Թերեւս կարելի լինէր թոյլ տալ զիտակից զինուորների մասին, որ գնում են Տաճկահայաստան: Այդ ուղղութեամբ Բագում մենք որոշում ենք առել: Սի ուրիշ բան՝ կարող են ծրագրի մանրամասնութիւնները չհասկանալ, բայց ընդհանուր ոգին ըմբռնել, նրանց մաքրութիւնից պէտք է օգտուել եւ կրթել: Սի բան ես մոռացայ, մեզանում կան մարդիկ որ բանուոր(ական) խնդրին վատ են վերաբերում: Բայց պէտք է ասել, որ նրանց մէջ կայ սոցիալատական տեսակետը, միայն փաստած: Այնպէս որ ընկերների մէջ էական սկզբունքային տարբերութիւն ունեցողներ քիչ կան: Գործունէութիւնը կեանքի մէջ՝ *կրիպտերիում* կը լինի գտման, որ մենք չխաբուենք:

Ժլատ.- Իսկ նրա՞նք, որոնք տաճկահայկական դատի համար միայն մտնում են:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).- Մենք նրանց չենք ընդունում, պէտք է այստեղի նախագիծն էլ ընդունեն, եթե ոչ՝ գնան Տաճկահայաստան:

Միքայէլ 3.⁷.- *Դիւցիպլինայի* մասին, այդտեղ թում է որ ձեւակերպումը սխալ է դրուած: Եթէ հին ծրագրի մասին է խօսքը, այդ ծրագրի հողի վրայ մենք դիմադրութեան չենք կարող հանդիպել, բայց եթէ նախագծի մասին էք ասում, այն ժամանակ ինձ թում է, որ այդ նախագիծը կուսակցական չէ, պէտք է Ընդհանուր Ժողովը վաւերացնէ:

Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներ(կայացուցիչ).- Սա նոյնացման հարց է, ինչպէս եւ տակտիկան, սա կարծիք է Ռայոնական Ժողովի. կարող է իր շրջանի համար պարտաւորեցուցիչ ըլլալ:

Միքայէլ.- Ես առաջարկում եմ առանձին խորհրդակցութեան առարկայ դարձնել:

Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներ(կայացուցիչ).- Այժմս քննենք, յետոյ խօսենք այդ տեսակետից:

[ՇԱՐՔԵՐՈՒ ՉՏԱՆ ԱՅԼ ՃԱՄԲԱՆԵՐ]

Չրաբերդի ներ(կայացուցիչ).- Նախ պէտք է քննենք պատճառները այդ կոնգրամերատի առաջանալուն: Մենք տաճկահայկական դատում որոշ յեղ(ափոխական) գործ ենք կատարել. մա ով կարող է եղել՝ ընտրուել է: Սա պատճառներից մէկն է: Այժմս էլ այդպիսի մի բան են առա-

ջարկում՝ սեկցիաների բաժանել, ասում է Ռոստոմը, եւ կարծում է թէ կը փրկէ այդ, կը գտէ: Առանձին սեկցիա կազմել զինուորներից, ըստ իս շատ սխալ կը լինէր: Չտու՛մը կը լինի ի հարկէ, բայց արագացնելու համար հարկատուր է որոշ միջոցներ ձեռք առնել: Խօսքս մեր ընկերների մասին է, Կենտր. Կոմիտեների անդամների եւայլն: Հարկատուր է հենց այժմեանից հեռացնել:

Մեծ-Քաղաքի* ներ(կայացուցիչ).- Ես կարծում եմ ժողովի որոշումները նշանակութիւն ունեն այն չափով, ինչ չափով նրանք կ'իրականանան կեանքում: Ջրաբերդի ներ(կայացուցիչ)ը շեշտում է՝ թէ ինչ պատճառներից է եղել որ Դաշն(ակութեան) մէջ մտել են ոչ-յեղ(ափոխական) տարրեր: Հենց այդ պատճառներն է որ պէտք է աչքի առաջ ունենալ: Երեւակայենք մի գիտ, ուր շարունակում են մի քանի ամիս հայ-թուրքական ընդհարումները, հիմա այդտեղ զինուորներին զենք բաժանել չե՞նք կարող:

Ոսկանապատի ընկեր.- Չայն չենք տայ:

Մեծ-քաղաքի ներ(կայացուցիչ).- Կռուի ժամանակ ձայնի խնդիր չի կարող լինել, եթէ լինում է հոտառութիւն ունեցող մի վաշխառու, որի ձայնը պէտք է կշիռ ունենայ՝ կը տան: Բացառիկ պայմանները բացառիկ դրութիւն են առաջացրել, պէտք է հետեւանքն էլ աչքի առաջ ունենալ. կարող ենք ընդունել՝ եւ կը կազմալուծուեն, յետոյ նորից գործեր(°): Սենք ասում ենք գիտը դաշն(ակցական) է, կոմիտէի մեղքն է որ տուել է տարերային կերպարանք: Դուք վաշխառու էք ասում. նրան դուք ցոյց էք տալիս ծրագիրը, յետոյ պէտք է հսկել որ այդ նպատակի ու տակտի մէջ չշեղուի եւ մենք իրաւունք չունենք նրանց մերժելու: Սեկցիաների բաժանուելուն ես հակառակ եմ: Ես ասում եմ, հարկատուր է պրոպագանդ եւ գտումը ինքնըստինքեան առաջ կը գայ: Բուրժուա է մտնում, մի թողնէք: Ուրեմն Դաշն(ակցութեան) անդամ կարող է համարուել նա՝ ով ընդունում է ծրագիրը եւ նախագիծը եւ ենթարկում է տակտիկային: Եւ ես շեշտում եմ Միքայէլի դէմ, գտում առաջ կը գայ:

Միքայէլ.- Ես գտման մասին եմ ասում. արդեօք իրաւունք ունե՞նք առանց Խորհրդի, այդ հողի վրայ դնել:

Ա.(ետիք) Ս(ահակեան)°.- Նուազագոյն պահանջները ինչպէ՞ս ես մասսայում իրագործում, ինչպէ՞ս ես գիւղացուն բացատրում:

Մեծ-Քաղաքի ներ(կայացուցիչ).- Գործով. երբ ես հողաբաժանում եմ առաջարկում, վաշխառուները կը տեսնեն՝ որ իրենք հեռանալու են:

Ա.(ետիք) Ս(ահակեան).- Վաղը ընտրութիւններ են լինում, ինչպէ՞ս ես ձայն տալիս:

Մեծ-Քաղաքի ներ(կայացուցիչ).- Ես ասացի, որ պիտի խմբական կազմակերպութիւն լինի:

Արեւ(ելեան) Բ(իւրոյ)ի ներ(կայացուցիչ).- Ես որ հարցը դրի՝ ասացի, որ այն երեւոյթը՝ որ Դաշն(ակցութեան) մէջ ժողովուրդը ամբողջական

մտել է, ունի իր առաելութիւնները: Երբ մենք կալուածական ինքնապաշտպանութեան յաջողութիւն ունեցանք, որա պատճառը հենց այդ էր: Ահա մենք պիտի պահենք այդ առաելութիւնները: Մեր ծրագրում ցոյց է տրուած բազա: Ես կարծում եմ, որ այդ բազային մենք խիստ չպէտք է դնենք պահանջները, եթէ նոյնիսկ անգիտակ են, պէտք է ընդունենք, որովհետեւ նա ըստ էութեան մերն է. իսկ մենք պէտք է խիստ պահանջներ դնենք մնացած տարրերին՝ ինտելիգենցիային: Ուրեմն ժողովրդի վերաբերմամբ մենք չպէտք է դնենք այդ պահանջները: Պէտք է վաշխառուները, ի հարկէ, դուրս մղել: Այսպէս պէտք է անենք որ մնանք ժողովրդական, հակառակ դէպքում մենք կը լինենք սեկցիա: Դա է որ զանազանում է մեզ Ս.Դ.ներից: Բոյկոտը յաջող տարուեց կալուածքների ժամանակ, ասում եմ՝ դրանից էր որ եղաւ:

Ռոստոմ.- Երբ մի կուսակցութիւն կազմում է, զուտ գաղափարական հողի վրայ, դնում է իր բազան: Դաշն(ակցութիւնը) տարօրինակ կերպով է կազմուել: Դաշն(ակցութիւնը) 90ական բուականին երբ առաջ եկաւ՝ նա մի դաշն(ակցութիւն) էր, այնտեղ ընդունուեցին ամէն տեսակի տարրեր: Բայց մի տարուց յետոյ գտումը ինքնըստիներեան առաջ եկաւ: Յեղ(ափոխական) ճանապարհը ինքը գտեց: Մեր պահանջները ի՞նչ էին, որոշ գոհողութիւն, համարձակութիւն, ուրիշ ոչինչ: Պատասխանատու դերերը ընկան այն անձնատրութիւնների վրայ, որոնք աւելի գոհող էին: Այժմ մենք գտումը (եթէ) կատարենք այնպէս ինչպէս Ջրաբերդի ներ(կայացուցիչ)ը ասում է՝ չգիտեմ ինչ կը մնայ: Ես ասում եմ, մեր նուագագոյն պահանջները դնում ենք Մեծ Բաղաքի ներ(կայացուցչ)ի ասածի պէս. մենք այս ենք ասում որ լինի Դաշն(ակցութիւն), միայն մեզ չխանգարեն(°): Գործնական ճանապարհ՝ ես ասում եմ սեկցիաների բաժանումը: Այս ըրալէիս ինքնապաշտպանութեան գործը, որ ծանրացել է մեզ վրայ, պէտք է ի նկատի առնենք: Մրանք անկախ չեն լինելու: Սեկցիաների է բաժանուած Դաշն(ակցութիւն)ը եւ այժմս,- կազմակերպչական, զինուորական, պրոպագանդայի, որոնք իրենց ներկայացուցիչներով կապուած են: Ինքնապաշտպանութիւնը զուտ մեր գործը չպիտի լինի: Դաշնակցական կազմակերպութեան պարտականութիւնն է դա դարձնել ժողովրդական միլիցիա, կրթել, կազմակերպել եւ բաց թողնել: Շուշում մենք փորձ արինք բաժանել, բայց դժբախտաբար յաջողութիւն չունեցաւ. բայց չպէտք է յուսահատուենք:

Միքայէլ.- Ֆունկցիաների բաժանելը ի՞նչպէս ես թոյլ տալիս: Այդ բաժանումը մասերը կարող են այն տեսակ բան թոյլ տալ, որ դէմ լինի ծրագրին:

Ռոստոմ.- Նա ընդհանուր համաձայնութեամբ է լինելու:

Յովնան.- Մեծ-Բաղաքի ներ(կայացուցչ)ի առաջարկութիւնը ամէն մի յեղ(ափոխական) կազմակերպութեան մէջ կայ. բայց ինչո՞ւ Դաշն(ակցութեան) մէջ այդպէս չէ: Պարզ է, պէտք է գտել: Գանք գործնա-

կանին: Սկսենք Կենտր. Կ(ոմիտներ)ից. կը տեսնենք որ այդտեղ կայ մի ստուար թիւ որ պէտք է դուրս մղել, ենթակոմիտներինց՝ աւելի, խըմբերից՝ աւելի եւս. բան չի մնայ: Միակ բանը, ինձ թում է, որ կարող ենք առաջ բերել, աչքի առաջ ունենալով ինքնապաշտպանական գործը, որից մենք չպէտք է ձեռք վերցնենք,- վաշխառուներին մենք պէտք է վանենք, իսկ միւս մասսան պէտք է կրթենք:

Ա(ետիք) Ս(ահակեան).- Յենգի հարցը երկար պատմութիւն ունի մեր կազմակերպութեան մէջ. 10 տարի առաջ դրուած է եղել, բայց մենք չենք կարողացել առաջ տանել, եղել են այլ եւ այլ պատճառներ: Միւս պատճառն այդ է որ մեր ժողովուրդը յեղ(ափոխական) չէ: Ես այս կ'ասեմ,- միանգամայն ձայն կը տայի եթէ վերելից մինչեւ ներքեւ միապաղաղ շարքեր ունենայինք, բայց այդ չկայ եւ ես անկարելի եմ գտնում պահանջը ընդհանուր դարձնել. այժմ մեզ հետ է ժողովուրդը, որովհետեւ զարկող հանգամանքներ կան, բայց եթէ ասում ես՝ պիտի վերելից ներքեւ տանենք, ժողովուրդը մեզ հետ չի լինի.- բայց մեր գործը պիտի լինի ժողովրդի գործը: Թէպէտ բիրեղացած կը լինենք, ես չեմ կարողանում համաձայնել այն բանի հետ, որ Դաշն(ակցութիւնը) ներկայումս ներկայացնէ այնպիսի կազմակերպութիւն, ինչպիսին հայ Սոցիալ Դեմոկրատիան է. հետեւապէս քանի որ մասսան գիտակցական չէ, չէ կապուած մեզ հետ ծրագրով, այդ պահանջը աննպատակայարմար կը լինի դնել, եւ ես կարծում եմ, բաւական է մեզ: Պրոպագանդայի բացակայութիւնն է պատճառ, որ մութ անձնատրութիւններ են մտնում. այժմս պէտք է ամէն կերպ այշխատենք կազմի մէջ մտցնել յեղ(ափոխական) անցեալ ունեցողներին: Այս տեսակ պահանջ դնելը նշանակում է պառակտում առաջ բերել, դրանից կ'օգտուեն հնչակեանները, սոց(իալ) դեմ(ոկրատ)-ները: Ռոստոմի առաջարկը հարցը չի վճռում: Էութիւնը այս է, ձայն չունենան. բայց Ռոստոմի առաջարկով՝ առանձին սեկցիա կազմել, ուրեմն ձայն ունենան: Յետոյ՝ ինձ վախեցնում է միլիտարիզմը գաւառներում. տեսէք թէ ինչ է կատարում,- զինուորականները ամէն տեղ իշխում են եւ այդ բաժանումը կը վնասէ: Ռսկանապատի ներ(կայացուցչ)ի դըրած պահանջը մեղ շրջանների համար ընդունելի է ընտրութիւնների միջոցով, իսկ մասսաների վերաբարմամբ՝ անհնար:

Քարի ներ(կայացուցիչ).- Ի՞նչ կ'անէք, եթէ ժողովուրդը յայտնում է(՞) որ նախագծի կողմը եղողներին չենք ընդունում:

Ա(ետիք) Ս(ահակեան).- Նախագիծ չպէտք է դնել, պէտք է կապել ծրագրին:

Գարեգին Խաժակ.- Ա(ետիք) Ս(ահակեան)ն ինչպէս ասում է՝ գնացել է Քար, մասնակցել է ընտրութիւններին եւ գօռով ընտրել է տուել իր ուզածներին: Ես կարծում եմ հարցը աւելի խորն է, 15-16 տարի ժամանակ մենք եղել ենք օրգանիզացիա եւ այդ տեսակէտից մենք տարել ենք մեր գործը, պրոպագանդ չենք արել, որովհետեւ ո՞ւմ պէտք է ա-

նեխնք: Մենք աշխատել ենք հարուստներին մտցնել փողի համար, այն ժամանակ հարկատու էր կռուելու ոգին բարձրացնել. քայց այժմ մենք մեզ կուսակցություն ենք յայտարարում, եւ մենք պիտի ունենանք երկու նպատակ,- բիրեղացում եւ ապա՝ մեր բազայի տարածումը: Այժմ մեր ձեռքում է ամբողջ կոնգլոմերատը. դրան պէտք է մօտենանք անդամահատելով, միայն տակտով, զգուշութեամբ. եթէ խիստ լինենք՝ կը քայքայուենք: Այժմ դասակարգային հողի վրայ ենք կանգնում, պէտք է քարոզենք, մի քանի ակտեր կատարենք, հետը եւ գտումը: Խօսքի պրոպագանդը պէտք է ուղղենք մեր բազաներին, իսկ միւսներին հեռացնենք յեղ(ափոխական) ակտերով: Պէտք է կոնգլոմերատը պահենք, մղենք պրոպագանդ թէ՛ բանաւոր եւ թէ փաստացի: Ես համաձայն եմ Ռսկանապատի բանաձեւին, միայն խիստ չգործածել, որպէսզի Տաճկահայաստանի համար եղող բազան չփախչի:

Մրգաստանի ներկայացուցիչ.- Առաջ պահանջում էր յեղ(ափոխական) լինել, իսկ այժմս ե՛ր այն՝ որ պէտք է տեսակէտ ունենայ: Այն մասսան որ մերն է, պէտք է մնայ: Քայքայման վտանգ չեմ տեսնում, հարկատու է գտել ներքեւից:

Չրաբերդի ներկայացուցիչ.- Ես կ'ուզենայի որ անհատ հակայեղափոխականների դէմ գտման խիստ միջոցներ առնուեն: Ընտրութիւններին խիստ ուշադրութիւն պէտք է դարձնել: Սեկցիական բաժանումը ունի անպայման իր առաւելութիւնները: Դա անպայման նպաստում է գտման: Ես կ'ուզէի, որ այդ սեկցիաների բաժանումով՝ զինուորական սեկցիան կենտրոնացուէր:

Ալ(ետիք) Ս(ահակեան).- Ալեքսանդրապոլի ընտրութիւններում ոչ մի բռնութիւն չէ եղել:

Անտոն՝.- Սկզբից գտման խնդիր է եղել՝ որ նրա՛նք լինեն իսկական, որոնք առաջին պահանջին կը գնային Երկիր: Ընկերները որ վախենում են, թէ եթէ գտման հարցը մտցուի մեր շրջանները կը պակասեն՝ սխալուում են: Գիւղացիութիւնը 90 առ հարիւր, բանուորները, արհեստաւորները, նոյնիսկ փոքր վաճառականները կը մնան: Այնպէս որ գտումը չի վնասի: Ժողովուրդը նշանակութիւն կ'ունենար, եթէ կարող լինէր կառավարել. (Գերմ. Սոց(իալիստները) 3 միլիոն ձայն ունեն): (Պէտք է) որ մենք ղեկը պահենք գիտակից մարդոց ձեռքը. դրա պատճառներից մէկը այն է, որ ծրագրում որոշ չէ ասուած, ասուած է՝ *«համաշայն իրարած զոհաբերութիւնների»*: Պակաս է. պահանջները որոշակի դարձրնենք: Ընդունենք մի այն տեսակի բանաձեւ, գուցէ փոխենք՝ սեկցիաներ էլ կը նպաստեն(°): Պէտք է դնել՝ *«նա, ով ձրիակեր է, նա չի կարող լինել դաճակցական»*: Մտցնել *«չարարատրուած եւ բարոյական բարչրութեան վրայ կանգնած»* (ոչ միայն) ծրագիրը ընդունեն, այլ եւ ակտիւ մասնակցութիւն ունենան. իսկ մնացածները պէտք է կոշուիւն օժանդակող:

Աւետիք Ս(ահակեան).- Այստեղ մի տրամադրութիւն է նկատուում, ուզում են ամէն բան կերպարանափոխել: Անտոնը ասում է 95 առ հարիւր գիտացիութիւն մեր կողմն է, սխալում է: Դեռ հարց է՝ թէ ծրագիրները եթէ դրուեն, Ս.Գ.Երի՞ (Սոցիալ Դեմոկրատների ՞) կը յարեն՞ թէ մեզ:

Արշակ.- Չտու՞մը պետք է սկսել ներքեւից: Անորոշ տերմիններ չպետք է մտցնել: Քանի որոշ է մեր բազան, եթէ այստեղից պրոպագանդ սկսենք, բիրեղացումը ինքնըստինքեան առաջ կը գայ: Պէտք է հիմքով դեզինֆեկցիա անել, իսկ ճնշում բարձր մարմինների վրայ՝ դա դժգոհութիւն առաջ կը բերէ:

Առաջարկում են բանաշեւեր:

18րդ նիստ, 7 Ապրիլի առաւօտեան

Ժողովի սկզբում նահապետի առաջարկեց բանաշեւեր տալ [ՀՅԴ շարքերու մաս կազմելու համար] նուազագոյն պահանջների համար: Առաջարկուեցին երեք բանաշեւեր.- ընկ. Մարտիրոսի՛, Անրոնի եւ Եղիշէի՛:

Ընդունուեց ընկեր Եղիշէի բանաշեւը:

«Դաշնակցութեան անդամ կարող են լինել այն անհայրները, որոնք ընդունելով Դաշնակցութեան ծրագիրն ու փակփիկան եւ ղեկավարուելով նրանցով աշխատում են իրականացնել այդ ծրագիրը իրենց կեանքում, այսինքն վճարում են իրենց հասոյթից 2ից 5 առ հարիւրը, պրոպագանդ են մղում, զինուորութիւն են անում, մասնակցում են կօօպերափիւ, պրոֆեսիոնալ եւ այլ դաշնակցական միութիւնների մէջ: Իսկ այն անհայրները, որոնք ծրագիրը ընդունելով հանդերձ, կեանքում չեն ղեկավարում նրա պահանջներով եւ միայն նիւթական օժանդակութիւն են հասցնում, համարում են օժանդակողներ եւ համակրողներ եւ չայնապրոտեան ու ընդրուելու իրաւունք չունին:

Ռայոնական ժողովը յիշեցնում է Մարմիններին, որ այն դաշնակցական անհայրները, որոնք արապատւում են իրենց վապր վարքի համար, այն է խաբէրայութեան, զեղծումների եւ մասնաւանդ կազմակերպութեան դրամները շռայլ ծախսելու մէջ, անպայման պատժուում են եւ հեռացում են Դաշնակցութեան շարքերից»:

Այդ բանաշեւը ընդունուելուց յետոյ քննութեան է դրում պրոպագանդայի հարցը:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).-Քանի որ պրոպագանդայի հարցը բարդ է եւ երկար ժամանակ պահանջում, ցանկալի է առանց ընդհատումների քննել այդ հարցը: Առաջարկում եմ թողնել երեկոյեան նիստին:

Սկսում եմ զեկուցումները:

Թմբուկ¹⁰.- Մեզ մօտ պրոպագանդան շատ թոյլ է առաջ տարուել: Որ պրոպագանդան ամէն տեղ յաջողութեամբ տարուի, անհրաժեշտ է կազմել մի մնայուն մարմին, որ կազմէր մի սիստեմատիկ ծրագիր դասախօսութիւնների համար, որից զուրկ են այժմս պրոպագանդիստ ընկերները: Եթէ այդ ծրագիրը կազմուի եւ ցրուի, պրոպագանդան յաջող կ'երթայ, եւ մենք կ'ունենանք գիտակից շարքեր: Մեր պրոպագանդան պատել է ուսումնարանների շուրջը, աշխատել ենք հասկացնել ժողովրդի լուսաւորութեան անհրաժեշտութիւնը: Խօսուել է կառավարութեան քաղաքականութեան եւ մեր հարեւան ազգերի մասին: Ուշադրութիւն է դարձրած եւ վաշխառուների վրայ:

Ընկ. Կարօ⁵ (Քար).- Մեզ մօտ պրոպագանդան ազգային հողի վրայ է տարուել: Ժխտել ենք դասակարգային կռիւր: Նախագիծը կազմուելուց յետոյ մեր դիրքը փոխուել է: Մենք ունեցել ենք պրոպագանդիստ ուսանողներ, որոնք նախագծով են առաջնորդուել իրենց պրոպագանդայի գործում: Այդպիսի պրոպագանդ առաջ է բերել յուզում, բացուել է մի վիճակ մեր եւ ժողովրդի մէջ: Մեզ հարկաւոր են երկու պրոպագանդիստներ: Պրոպ(ագանդիստների) դպրոցը պէտք է շարունակել:

Ընկ. Ստ. (Չրաբերդ)³.- Մեզանում էլ նոյնն է, ինչ Քարում: Մեզանում կազմակերպուած են համայնքները, ամէն մի գիւղում մի ենթակոմիտէ ունենք, 10 գիւղի վրայ մի կոմիտէ: Յեղ(ափոխական) գիտակցութիւնը բացակայում է: Պէտք է հիմնել մի շաբաթաթերթ:

Ոսկանապատ.- Մեզ մօտ պրոպ(ագանդան) երկու ուղղութեամբ է կատարում: Գ-աւառում զինուորական ուժեր են, հետեւաբար պրոպ(ագանդան) շատ թոյլ է, համարեա թէ բացակայում է: Բագուն ունի պրոպագանդիստներ, բացի դրանցից կան ման աշակերտներ, որոնք կարող են եւ ցանկանում են պրոպ(ագանդա)յով զբաղուել: Մեր կարծիքով (կան կենտրոններ) եթէ մեր թէորետիկ ընկերները շրջեն մեր գաւառական կենտրոնները եւ այնտեղ կարդան մի շարք դասախօսութիւններ, մէկ կատարած(՞) կը լինի: Պէտք է հիմնել տեղն ու տեղը կուրսեր, որոնք օգնութեան կը գան մեր պրոպագանդիստ ընկերներին եւ կը լուսաբանեն շատ մութ հարցեր: Մեր պրոպագանդիստներին պէտք է տալ մի ուղեցոյց: Թող կազմուի մի ժողով բանուորական վայրերից եկած մեր ընկերներից եւ թէորետիկներից եւ դա կազմի մի կոմսպէկտ: Գ-ա չափազանց կարեւոր բան է:

Ընկ. Արքահամ¹¹.- Բազում հնարատրություն չէ ունեցել զբաղուել գաւառով. այդ հնարատր էլ չէ նրա համար: Ընկերները կլսանում են եւ հազիւ բարարարութիւն են տալիս տեղական պահանջներին. Բազուի շրջանը պէտք է բաժանել: Այլ կերպ՝ գաւառի գործը միշտ կը կաղայ:

Ընկ. Ստեփան (Բալախանի).- Բաժանման հարցը վերջին Շրջ. Ժողովին էր դրուած, բայց չանցաւ: Երբեք նաւթադաշտը եւ գաւառը չեն կարող միասին գնալ. նաւթադաշտը մշտավառ մի կաթայ է, նա ունի միանգամայն տարբեր պահանջներ: Բաժանումը անհրաժեշտ է:

Ընկ. Ստեփան¹² (Այգեստանցի).- Մեզ մօտ պրոպ(ագանդ)ան ինքնապաշտպանութեան շուրջն է եղել: Գաւառ շրջել են կոմիտէի անդամները եւ Բիւրոյի անդամը: Մինչ(եւ) հայ-թուրքական ընդհ(արումները)՝ պրոպ(ագանդ)ան տարուել է Ռուսաստանի ազատագրական գործի շուրջ: Քարոզուել է համերաշխութիւն թուրքերի հետ: Գասակարգային հողի վրայ պրոպագանդան չի արուած. շատ քիչ չափերով է արուած քաղաքում: Պրոպագանդիստների կարիք կայ: Անհրաժեշտ է հրատարակել մի թերթ եւ բրոշխուրներ: Ուշադրութիւն պէտք է դարձնենք մեր դպրոցների վրայ, անհրաժեշտ է որ մեր ազդեցութեան տակ լինեն դըպրոցները: Ուսուցիչները, եթէ լինեն մեր ընկերներից, կարող են պրոպագանդիստների դեր կատարել:

Ընկեր Սարգիս².- Երեսնում 8 շրջիկ են եղել, շրջել են զինուորներով, կատարել են դատավարութիւն, ծեծ: Կազմակերպութիւնը մեծ ծաւալ է ստացել: Գաւառում ժողովուրդը տեռորիկացիայի է ենթարկուել: Վախեցնելը միջոց է ծառայել կազմակերպութեան համար: Երբ գաւառ գնացին մեր երիտասարդ ընկ(երները) եւ սկսեցին յեղափոխական դասակարգային պրոպագանդ, գիղացիք ապշում-գարմանում էին: Նրանց համար դա նոր բան էր: Ժողովուրդը սկզբում փախչում էր, կարծելով որ փող պիտի հաւաքենք եւ ծեծենք, բայց յետոյ գալիս էին եւ հետաքրքրութեամբ լսում: Երեսնում կազմուել է պրոպագանդայի համար մի յատուկ սեկցիա, որի մէջ կայ Կենտր. Կոմ(իտէի) ներկայացուցիչը: Ծրագրում էին մի շարք դասախօսութիւններ: Չյաջողուեցին, որովհետեւ պատրաստ մարդիկ չկային: Գպրոցները ոչինչ չեն տայ: Արիեստական բան է, մտքի թափանցում եւ գիտակցութեան արթնացում է հարկատր, պէտք է հեղեղել գրականութեամբ գաւառը: Գիտակցութիւն զարթեցնելու միակ միջոցն է դա: Քաղաքում պրոպագանդան ատելի լաւ հիմքերի վրայ է դրուած. լոյս են տեսել թռուցիկներ, քաղաքական պահանջների լուսաբանութեամբ:

Ժլատ.- Մենք եղել ենք մի շահագործող կուսակցութիւն: Մասսայից առել ենք այն՝ ինչ հնարատր է եղել: Բայց ոչինչ չենք տուել: Մեր գործը եղել է Ձիֆունը, այդ էլ կատարել են եկուոր ընկերներ, տեղացիք մասնակցութիւն չեն ունեցել: Ռուսաց յեղափոխական շարժումը արթնացրեց եւ տեղական ժողովուրդը. նա եւս սկսեց հասկանալ, թէ ինչ է կա-

տարում իր շուրջը: Շրջանային Ժողովը որոշել է ունենալ երկու պրոպագանդիստ ընկերներ, գրադարաններ: Մեր պրոպագանդիստները պետք է իմանան եւ ռուսերէն: Սպասում էինք որ «Յառաջ»ը կը պարզէ ֆիզիոնոմիան, նա էլ ոչինչ չտուեց: Պէտք է պարզել մեր ֆիզիոնոմիան:

Ընկ. Համազասպ¹³.- Շուրջում կազմակերպութիւններ երեսն են եկել 1903թ. եկեղեցական կալուածքների դէպքից յետոյ: Պրոպագանդիստ ընկեր չենք ունեցել: Անհրաժեշտ են փորձում ուժեր, որոնց ձեռքի տակ գործեն երիտասարդները: Գրականութիւնը անհրաժեշտ է:

Ընկեր Արպուտ լրացնում է ընկ. Համազասպի ասածները:

Ընկ. Ռոստոմ.- Հայ-թուրքական ընդհարումները խեղդել են պրոպագանդայի ուժը եւ առաջ քաշել զինուորական ուժեր, կոմիտէները դադարում էին միստեր ունենալ(ուց): Հենց այդ պատճառով էլ սեկցիաներ առաջ եկան: Այժմս պրոպագանդայի գործը լաւ հիմքերի վրայ է դրուած:

Նալբանդ¹⁴.- Նալբանդում կան տեղական եւ եկուոր տարրեր. տեղացիները եկուորների վրայ նայում են իբրեւ պահապանների վրայ: Ջարդերի ժամանակ այսպէս էլ եղաւ, եկուորներից 350 զինուած մարդ դուրս եկաւ: Մեզ մօտ բանուորներ չկան: Լինում են շաբաթական ժողովներ, այժմս ունենք չորս դասախօս. պէտք է ուշադրութիւն դարձնել գրականութեան վրայ: Մենք մտադիր էինք թերթ հրատարակել, արդէն որ հարկն էր՝ դիմում արուած է:

Ընկ. Եղիշէ⁸.- Պրոպ(ագանդիստ) չենք ունեցել, ունեցել ենք շրջիկներ: Չինուորական գործով զբաղուած ենք եղել: Եղել են դէպքեր, երբ կոմիտէներն անգամ արել են հակայեղափոխական քայլեր, - ծեծ, պատիժներ եւայլն: Այժմս սկսուել է պրոպ(ագանդա) դասակարգային հողի վրայ: Պրոպագանդիստներից ցենզ է հարկաւոր պահանջել: Պրոպագանդիստները տարբեր սիստեմով են առաջնորդում: Անհրաժեշտ է նմանութիւն մտցնել: Գրականութիւնը անհրաժեշտ է, անյետաձգելի պահանջ է:

Ընկ. Մուրատ¹⁵.- Այստեղ ճգնում են սեւացնել մեր անցեալ գործունէութիւնը: Ազգային գիտակցութիւնը որ մենք զարթեցրել ենք ժողովրդի մէջ, տուել է իր օգուտները: Ժողովուրդը կռուել է պաշտօնէութեան դէմ, աւագակների դէմ, եւայլն:

Ընկ. Վահան.- Ես միանում եմ ընկ. Մուրատին եւ պնդում եմ, որ մեր գործունէութիւնը տուել է իր աշկարա օգուտները:

Ընկ. Ստեփան (Քալախանի).- Մենք զանազան քաղաքներում ունենք համախորհուրդ ընկերներ, որոնք իրենց պրոպագանդայում առաջնորդում են նախագծով: Անհրաժեշտ է դրանց պարբերաբար համայնքել եւ լուսաբանել մութ հարցերը: Ես կ'առաջարկէի Յունիսին գումարել առանձին համագումար:

Ընկ. Հ(ամօ) Օ(հանջանեան).- Մենք պրոպագանդայով չենք զբաղ-

ուել, ասում են բոլորը, դա չափազանցութիւն է: Մենք եղել ենք գործնական կուսակցութիւն: Պրոպ(ագանդային) նշանակութիւն չենք տուել: Ջէնքի գործը կլանում է մեր թէորետիկ ուժերն անգամ, մենք ունենք գէնքի բիւջէ, պէտք է ունենանք նաեւ պրոպ(ագանդայի) բիւջէ: Պէտք է հիմնել մի կենտրոնական մարմին, որ զբաղուելու է միայն պրոպագանդայի գործով: Բոլոր կուսակցութիւնները այդ ունեն, պէտք է այդ գործին յատկացնել մի խոշոր գումար: Բացի «Յառաջ»-ից՝ պէտք է ունենալ տեղական թերթեր, անհրաժեշտ է հրատարակել մի *դիսկուսիոն* թերթ:

Ընկ. Միշա.- Կենտրոնական Կոմիտէն ուղարկել է գաւառ 40 շրջիկ: Դասախօսութիւններ եղել են: Ուշադրութիւն չի դարձում աշակերտութեան վրայ: Պէտք է ուշադրութեան առնել Ներսիսեան դպրոցը, որ պէտք է տայ մեզ ուսուցիչներ: Շրջիկներին պէտք է ապահովել:

Ընկ. Միքայէլ.- Ողորմելի վիճակի մէջ ենք գտնում: Օրուայ այրող հոգսերը անհնարին են դարձնում պրոպագանդայով զբաղուել: Որքան էլ աննպաստ լինեն կեանքի պայմանները, աշխատելու ենք վերջ տալ այդ անկերպարան վիճակին: Պէտք է ուժ տալ գրականութեան, հիմնել պրոպագանդայի համար դպրոցներ: Թերթը պէտք է ուժեղացնել:

Ընկ. Ստեփան (Չրաբերդ).- Միանում են Համոյի առաջարկին, - Ռայոնական Ժողովի որոշումները թղթի վրայ են մնում, Կենտր. Կոմ(իտէների) անդամներն անգամ չեն կարդում որոշումները: Որ պրոպագանդան լաւ հիմքերի վրայ չէ դրուած, դա ունի իր պատճառները: Մեր պրոպագանդիստները լաւ պրոպագանդիստներ չեն, հետեւաբար եւ բարոյական բնատրոփին(°) չեն ստանում: Պատահել են դէպքեր՝ որ ենթակոմիտէներ դուրս են անում իրենց չուզած մարդուն: Մեր դաւանանքը պարզ է, այդ էլ՝ երկրորդ պատուհասը(°): Երրորդը՝ պաշտօնականութիւնը մեր մէջ:

Ընկ. Կարօ.- Իմ կարծիքով պէտք է ուշադրութիւն դարձնել գրագիտութեան վրայ: Դպրոցները պէտք է աշխատել մեր ձեռք ձգել: Հենց օգտուել Էջմիածնի համաժողովից եւ անցկացնել մեր ծրագիրը:

Ընկ. Ստ. Տ(եր Սկրոյ)եան.- Պէտք է նպաստել ժողովրդի լուսաւորութեան գործին, պարտադիր դարձնել գրագիտութիւնը: Պէտք է աշխատել միջոցներ հայթայթել ժողովրդի լուսաւորութեան գործի համար: Այդ նպատակով կարելի է դիմել Մանթաշեանին եւ ամէն մի բուրժուայի: Պէտք է միջամտել Էջմիածնի համաժողովին: Կռուել պէտք է կղերական ոգու դէմ, դուրս վանել նրան մեր դպրոցներից: Առաջարկել մեր ծրագիրը եւ ընդունել տալ: Պէտք է ուշադրութիւն դարձնել մեր մայրենի լեզուի տարածման վրայ:

Ընկ. [Գ.] Խաժակ.- Մի գործնական միջոց առաջարկեմ: Ամառը հրաւիրել գաւառից ուսուցիչներին եւ երկու ամսեայ կուրսեր հիմնել դրանց համար. այդ շատ անհրաժեշտ է:

Ընկ. Յոնան.- Ուսումնարաններում պետք է տեղադրել մեր ընկեր-
ների: Հոգաբարձուների ընտրության պետք է մասնակցել. դա կ'ունե-
նայ քաղաքական կրթիչ նշանակությին:

Ընկ. Մարտիրոս'- Դրպոցական գործի մեջ մենք չպետք է խառնը-
լենք. կը հիմնենք դիկտատուրա, որը միանգամայն վնասակար է: Դրպ-
րոցները չի կարելի կուսակցական դարձնել, դա հակամանկավար-
ժական քայլ կը լինի, որ եւ կը խանգարէ մանուկ սերնդի կրթութեան
գործին: Դպրոցները պետք է կառավարուեն ժողովրդի կողմից քառան-
դամ ֆորմուլայի սիստեմով ընտրուած մի Մարմնից: Հոգեւորականու-
թիւնը չպետք է տիրապետող հանդիսանայ, այլ նա պետք է ենթարկուի
ժողովրդի կամքին:

Ընկ. Աբրահամ.- Եթէ մենք դատավարութիւնից հրաժարում ենք,
այդ անում ենք ոչ թէ վատ լինելու պատճառով, այլ մարդ չունենալու
պատճառով: Ուսումնարանների գործի մեջ պետք է խառնուենք, այդ
կարող ենք անել: Կ'առաջարկէի կազմել մի նախագիծ եւ ներկայացնել
Էջմիածնի համաժողովին, որին թէկուզ եւ բռնի ուժով ընդունել տալ
մեր նախագիծը:

*Ժողովը փակուեց ժամը 3ին: Բանաչեւեր առաջարկելը մնաց յա-
ջորդ ժողովին:*

[ԸՍՐՈՉՉՈՒԹԻԻՆ (շար.)]

19րդ նիստ, երեկոյեան ժամը 7ին

Վիճարանութիւնները պտրում են պրոպ(ագանդ)այի շուրջը:

*Ոսկանապար յարմար է գրկում, որ Մեծ-Բաղաքի թէորեպիկոս
ընկերները այցելեն գաւառական քաղաքները, եւ որոշ ժամանակամի-
ջոցում պարապելով գիւղական բանիւմաց երիտասարդների որոշ թուի
հետ, պրոպագանդիստներ պարտաւորեն շրջանի համար:*

Ընկ. Լիպ.¹⁶- Նոյնպէս անհրաժեշտ է այդ խնդիրը. ու ... թէւ այդ
խնդրումն էլ ապակենտրոնացման սիստեմով պիտի առաջնորդուել,
բայց եւ այնպէս գերադասելի է, որ բոլոր այդպիսի ճիւղերը գլխաւոր-
ուէին մի գլխաւոր Մարմնի ցուցմունքներով, որը պիտի լինի Բիւրոն կամ
նրա անդամներից մէկը:

Ընկ. Մրգաստան.- Թող Բիւրոն մի մարմին կազմէ Խմբագրութեան
կից, որը մի միայն պրոպագանդայով զբաղուէ. այդ մարմինը բաղ-
կացած կը լինի երեք անդամներից, առնուազն:

Նախագահը.- Ձեռակերպում է այսպէս. - «*Այդ մարմինը հրատիրում
է Բիւրոն, այլեւ կազմում է ընդհանուր ուղեցոյց, պրոպագանդիստներ
է ողարկում զանազան կողմեր ըստ պահանջի, եւ այլն*»:

Ռ-նստում.- Իմ կարծիքով, քանի որ մենք առայժմ զուտ դաշնակցական հայեցակետ չունենք, յարմար կը լիներ նախ մի ընդհանուր հայեցակետ մշակել եւ ապա սկսել կազմեր հաստատել զանազան կետերում՝ պրոպագանդային դասընթացքներ հիմնելու տեսակետից, որպէսզի մի ընդհանուր սխտեմով առաջ տարուէր այդ գործը: Այդ ֆունկցիան սկըզբից եւ եթ չի կարող անկախ գործել, այլ անհրաժեշտ է կապել թերթի Խմբագրութեան: Անհրաժեշտ է նոյնպէս թռուցիկ դասախօսութիւններ կազմել:

Ռսկանապատի ներկայացուցիչ.- Ռ-նստում)ի վերջին առաջարկը այնքան էլ նպատակայարմար չէ. հարցը նրանումն է որ թռուցիկ դասախօսութիւններով չի կարելի մի որոշ աշխարհայեցակետ պատուաստել, այլ պէտք է մի քանի սխտեմատիկ դասախօսութիւններով որոշ գաղափար, որոշ համոզմունք առաջացնել մեր պատրաստուող պրոպագանդիստների մէջ:

Ե(ղիշէ) Թ(ովճեան).- Ռ-նստում)ի առաջարկը գործնական չէ. նա ասում է որ պրոպագանդայի եւ Խմբագրութեան մարմինները միասին լինեն. ես կարծում եմ՝ գործի օգտակարութեան տեսակետից անկախ մի մարմին լինի նա, կարիք եղած դէպքում զանազան մարմինների խորհրդակցութեան դիմի, բայց իր գործունէութեան մէջ անկախ լինի: Մենք զանգատում ենք որ պատրաստի պրոպագանդիստներ չունենք: Բայց մենք այդ ուղղութեամբ գործնական քայլեր չենք արել. այդ մարմնի տրամադրութեան տակ պէտք է լինի որոշ քիւղջէ: (Անհրաժեշտ է) ամէն մի մարմին մասնագիտական դարձնել: Միանում եմ Սարգսի (Մրգ. ներկ.) առաջարկին, որ Խմբագրութեան կից մի մարմին լինի երեք հոգուց բաղկացած, եւ միաժամանակ ամէն մի Կենտր. Կոմիտէի կից մի-մի պրոպագանդայի մարմին:

Ընկ. Լիպ(արհարք) նոյն միտքն է արծարծում, որ պէտք է Խմբագրութիւնը գալը լինի եւ պրոպագանդային մարմինը՝ գալը. այդ մարմինը միշտ կենտրոնում պիտի լինի եւ մարդիկ պատրաստը գաւառների համար:

Չրաք(երդի) (ներկայացուցիչ).- Աշխատանքի բաժանումը այն առաւելութիւնն ունի, որ պատասխանատուութեան հարցն է մէջտեղ գալիս. ոչ միայն ունենանք առանձին մարմիններ, այլ եւ այդ մարմինների մէջ էլ պէտք է մտցնել պարտականութիւնների ներքին բաժանում եւ պատասխանատուութիւն:

Ե(ղիշէ) Թ(ովճեան).- Կեանքը ճանաչելու համար հարկաւոր չէ անպատճառ որ մարդ գաւառ գնայ. Խմբագրութիւնն աւելի միջոցներ ունի կեանքի մէջ կատարուած բոլոր երեւոյթներին ծանօթանալու, իր ստացած բազմատեսակ թղթակցութիւններով. միայն անհրաժեշտ է որ իւրաքանչիւր բաժնի ղեկավար մասնագէտ լինի եւ տեղողական. մի

մարդ չի կարող թե՛ պրոպագանդայով զբաղուել եւ թէ խմբագրութեան մէջ լինել, երկու կողմն էլ կը տուժեն. մենք շարունակ կրկնում ենք որ գտենք Մարմինները, աշխատանքի բաժանում մտցնենք եւ այնուամենայնիւ ցանկանում ենք բոլոր ֆունկցիաները ի մի կենտրոնացնել:

Մրգաստանի ներ(կայացուցիչ)ը միանում է այն չայներին, որոնք կողմնակից են Խմբագրութեան կից պրոպագանդայի մարմին կազմելուն, որը միմիայն պրոպագանդայի գործով զբաղուի:

Լիպ(արիս).- Եթէ երկու մարմին միացած լինի, այն ժամանակ մենք ժուրնալիստ չենք ունենայ:

Հ(ամօ) Օ(հանջանեան).- Ես թերթի վրայ նայում եմ այլ կերպ, քան Լիպարիստը եւ Թոփճեանը. նրանք թերթի գոյութիւնը հասկանում են այնպէս՝ որ նա պէտք է մրցէ «Մշակ»ի եւ այլ թերթերի հետ: Ոչ, այդպէս չէ, մեր թերթը պէտք է բաւարարութիւն տայ մեր աշխատատը մասսային եւ այդ ուղղութեամբ էլ պիտի տարուի: Քանի որ մեր թերթը Գ-աշնակցութեան օրգանը պիտի լինի, այն ժամանակ մեզ հարկաւոր չեն գուտ ժուրնալիստներ, այլ յեղափոխական մարդիկ, որոնք կարողանային արտայայտել իրենց միտքը թերթի միջոցով, եւ հող պատրաստէին մեր մասսաների մէջ: Ամբողջ պրոպագանդայի գործը պիտի լինի Խմբագրութեան ձեռքում, որոնք պարբերաբար գաւառներ պիտի դուրս գան, առնուազն երկու ամսով:

Բժ. Թաղ(էոսեան ՝).- Պրոպագանդայի համար հարկաւոր է յատուկ սեկցիա ունենալ. այդպիսի մի մարմին հնարաւորութիւն կ'ունենայ անմիջապէս արձագանգ տալ գաւառի պահանջներին, պրոպագանդայի տեսակէտից:

Անտոն.- Չի կարելի պրոպագանդայի խնդրին մասին ընդհանուր որոշում տալ առանց թերթի մասին խօսելու: Ըստ իս հարցը լուծում կը ստանայ այն ժամանակ, երբ թերթի մասին կը խօսենք եւ որոշում կը կայացնենք: Եթէ մենք այնքան ուժեր ունենայինք, որ կարողանայինք մեր բոլոր պահանջներին բաւարարութիւն տալ, այն ժամանակ շատ հեշտ կը լինէր խնդրի լուծում տալը, բայց այդպէս չէ դժբախտաբար:

Միքայէլ.- Խմբագրութիւնը պէտք է անկախ լինի. ցանկալի է ի հարկէ որ նրա անդամները այցելեն գաւառները. իմ պահանջները աւելի են թերթից: Այն ձեւով ինչ ձեւով Համոն է առաջարկում հրատարակել թերթը, ինձ թում է, թէ ոչ մի, այլ մի քանի թերթեր պիտի հրատարակուեն որպէսզի բաւարարութիւն տրուի մեր բոլոր ընթերցողներին: Մեր թերթը չի կարող սահմանափակուել այդպիսի նեղ պայմաններով: Նա պէտք է մրցէ միւս բոլոր թերթերի հետ, եւ բարձր լինի բոլորից: Մենք մեր բոլոր ուժերը լարենք ամէն օր նորանոր թարմ յօդուածներով թերթը հետաքրքիր դարձնելու:

Աւետիք) Ս(ահակեան).- Ես կը ցանկայի որ պրոպագանդայի սեկցիան լինէր Բիւրոյի մէջ:

Նախագահ.- Հարցը ուրեմն դնենք քուէարկութեան:

Անտոն.- Նորից շեշտում եմ, որ առանց թերթի մասին խօսելու, չի կարելի անցնել պրոպագանդայի գործը որոշելուն:

Ժողովը որոշում է հարցը քուէարկութեան ենթարկել: Եօթ ձայնով առաջարկում է՝ «Պրոպագանդայի գործը փանելու եւ ղեկավարելու համար, լինի մի մարմին իր սպորտաթամումներով - թերթ, բրոշիւրներ եւ բան(ուորական) պրոպագանդա» որը չի անցնում: Նոյնպէս եօթ ձայնով ընդունում է զայր-զայր մարմինների անհրաժեշտութիւնը: Հաւասարութեան պարճառով, հարցը բաց է մնում:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).- Եթէ հարցը դրուէր այսպէս, որ Բիւրոն է պատասխանատու թէ՛ թերթի եւ թէ պրոպագանդի գործին, այն ժամանակ կարելի էր թողնել, որ Բիւրոն իր հայեցողութեամբ կազմէր այդ մարմինը:

Ռոստոմ.- Ինձ թում է թէ այն մարդիկ, որոնք զատ-զատ մարմինների կողմնակից են, ուզում են անգիտանալ իրականութիւնը: Անկախ մարմինները կարող են տարբեր ուղղութիւններով տանել իրենց գործը, ո՞վ պէտք է դրանց ղեկավարէ:

[... ԵՒ ՍԱՄՈՒԼ]

Նախագահը, յերաշգելով պրոպագանդայի հարցը ձայների հաւասարութեան պարճառով, անցնում է թերթի հարցին:

Ոսկանապատի ներ(կայացուցիչ).- «Յառաջ»ը երբ հիմնուեց, ես եւ ընկերներս որոշ բան էինք սպասում նրանից. ես գոնէ սպասում էի որ նա պրոպագանդ կը սկսի Դաշն(ակցութեան) Ծրագրի եւ մանաւանդ նախագծի ոգով. «Յառաջ»ը միանգամայն լռութիւն էր պահում այդ տեսակէտից: Ընկերները պատճառաբանում են որ նրանք Ծրագրի, ֆեդերացիայի մասին յօդուածներ չեն գրել, վախենալով թերթի փակումից, բայց նոյնպէս չեն տպուել այնպիսի յօդուածներ, որոնք կարելի էր տպել, օր՝ ագրարային, տնտեսական եւն.: Ես գտնում եմ որ թերթը չէ կատարել իր դերը: «Յառաջ»ը պտտուել է երկու գլխատր հարցի շուրջ. թուրք-հայկական խնդիրը եւ պետական Դուման: «Յառաջ»ը տնտեսական, գիտական եւ փիլիսոփայական յօդուածներ չէ տուել. մենք համարում ենք մեզ աշխատատր դասերի պաշտպան, բայց այդ տեսակէտից «Յառաջ»ը շատ քիչ բան է արել, եւ այդ ուղղութեամբ յօդուածները տպագրուել են միշտ 4րդ երեսում, մինչդեռ առաջին երեսում պիտի լինէին: «Յառաջ»ի թղթակցութիւնների մեծամասնութիւնը գրում էր շովինիստական ոգով թուրքերի մասին, այնպիսի ասացուածքներ էին տպագրը-

ում, որ նոյնիսկ հակասում է մեր սկզբունքներին, որ յաւակնութիւն ունենք աշխատատր դասակարգի պաշտպան անուանել մեզ: Երկու ուղղութիւն է ունեցել թերթը, մէկը մշակական ոգով թղթակցութիւններ եւ լուրեր գրելը, միւս կողմից Դաշնակցութեան շահերը պաշտպանելու յաւակնութիւն ունենալով(°): Խմբագրութիւնը այնպիսի ուժեղ յօդուածներ է տպել, որ զարմացել ենք թէ ինչու՛ չեն փակուի թերթը, բայց նոյն Խմբագրութիւնը կրճատում է նոյնանման յօդուածները, երբ գրողը գաւառացի է եղել:

Մենք ցանկանում ենք որ «Յառաջ»ը գիտական-փիլիսոփայական եւ տնտեսական բովանդակութեամբ յօդուածներ տայ շաբաթական մի անգամ: Գաւառներում տեղական թերթեր հրատարակելու համար ուժերը շատ քիչ են եւ յարմարութիւններ չունենք: Այդ նկատի առնելով, ցանկալի էր որ Դաշնակցութիւնը Կովկասում ունենար իր անկեղալ թերթը, որը բաւարարութիւն տար Դաշնակցութեան բոլոր մարմիններին եւ որը զուտ յեղափոխական հարցերին արծազանգ տար:

Մեծ Քաղաք, Եղիշէ.- Ես կը տամ մի գեկուցում թերթի սկզբնաւորութեան եւ հետեւանքի մասին, որպէսզի պարզ լինի խնդիրը ձեզ համար:

Թերթի սկիզբը դրուեց լրատուներից եւ հենց այդ լրատուներից պարզուեց Դաշնակցութեան ֆիզիոնոմիան: Մենք սկզբում այնպիսի կարծիք ունէինք, որ ամէն տեղից մեր Մարմինները կը հեղեղեն մեզ թղթակցութիւններով, լուրերով, որ որեւէ թերթ մտքովն անգամ չի անցնի մեզ հետ մրցել. բայց յուսախաբութեան մէջ ընկանք. իմ ձեռքով անցել է ոչ կուսակցական «Արշալոյս»ի բոլոր նիւթը, որը երկու անգամ աւելի էր լինում «Յառաջ»ի թղթակցութիւններից: Մեր Մարմինները մեզ թղթակցութիւն չեն ուղարկում: Աշխատակիցները ոչ մի աջակցութիւն չեն ցոյց տալիս, երբեմն թերթի 3/4ը մի մարդու գրչի տակից է դուրս եկել: Գալով ուղղութեան, Դաշնակցութիւնը ոչ մի որոշ դեկլավարող սկզբունք չէ ունեցել թէ՛ նախագծի եւ թէ այլ սկզբունքային խնդիրների վերաբերմամբ. եղել են նախադասութիւններ, որոշ կէտեր, որը նոյնիսկ կազմողների կողմից միանման կարծիքներով չեն ընդունուել: Ֆեդերացիայի մասին չէ գրուել, Խմբագրութիւնից անկախ պատճառներով: Ոսկանապատի ընկերոջ ասած շովինիզմը չէ եղել թերթի մէջ, այլ իրողութիւն է գրուել, մենք չենք կարող փաստերը աղաւաղել յանուն ազգերի համերաշխութեան: Սկըզբունքային անորոշութիւնը պատճառ է եղել որ զանազան հարցերի մասին չէ գրուել: Նոյնիսկ պետական Դումայի վերաբերմամբ կարծիք յայտնելը շնորհիւ (պատճառաւ) կազմակերպութեան շաբաթներով յետաձգում էր, որովհետեւ մենք դեկլավարող սկզբունք չունէինք:

Լիպ(արխա).- Մեր կազմակերպութիւնը փիլիսոփայական աշխարհայեացք չէ ունեցել, որի հիման վրայ էլ մարդ դժուարանում է յօդուածներ գրել:

Այգեստանի ներկայացուցիչ.- Այն յարձակման, որի ենթակայ է թերթը, արժանի չէ, քանի որ նա գոյություն ունի ընդամենը մի երեք ամիս: Աչքի առաջ ունենալով որ թերթի ընթերցողների 40-50 առ հարիւրը գաւառացիներն են, պէտք է աշխատել մատչելի դարձնել ժողովրդական մասսաներին, պէտք է աշխատել գաւառական կեանքից պատկերներ գրել, որ հետաքրքրեն եւ կրթիչ նշանակութիւն ունենան գաւառի համար. հարկատր է յարաբերութիւն եւ միջոցներ տալ գաւառական թղթակիցներին, որպէսզի լուրերը իսկոյն հեռագրով հաղորդեն:

Ժլարի ներկայացուցիչը, կրկնելով նոյն յարձակումները ինչ որ Ոսկանապարի ներկայացուցիչն էր արել, ակեյացնում է.- Մեծ-Քաղաքի ներկայացուցիչ) Եղիշէն ասում էր, թէ Դաշնակցութեան ուղղութեան մասին չէ գրուել, վախենալով որ կառավարութիւնը կը փակէ թերթը եւ կարտերը բաց կը լինեն. ուրեմն այն ժամանակ չդիմենք որեւէ յեղափոխական գործունէութեան, մեր կարտերը բաց չանելու համար. մենք չունենանք այն թերթը որ կարողանայինք ասել՝ ահա՛ մեր պատկերը. «Յառաջ»ը ոչինչ չէ տուել մեզ. ես կ'առաջարկէի ունենալ ոչ-լեզալ թերթ, որը ղեկավարուէր կուսակցական ուղղութեամբ:

Արեւելեան Բ(իւրոյ)ի ներկայացուցիչ.- Ուզում եմ շեշտել, որ թերթը պէտք է դարձնել պրոպագանդայի միջոց. մինչեւ հիմա այդ ուղղութեամբ թղթակցութիւնները չեն տպուել, առարկելով որ ոճը հասարակ է եւայլն: Մենք պէտք է ունենանք մեր բազան, որը արեւի կարիք ունի մատչելի ձեւի ու ոճի: Անհրաժեշտ է վիճաբանական շարաքաթերթ ունենալ, որտեղ կը լուսաբանուէին զանազան հարցեր:

Չրաք(երդի) (ներկայացուցիչ).- Եթէ թերթը պիտի ծառայէ պրոպագանդայի համար, այն ժամանակ միանգամայն անպէտք է այժմեան թերթը, իսկ եթէ թերթի ձեւը փոխենք, այն ժամանակ կը զրկուենք հասարակական կարծիք վաստկելու աղբիւրից: Մենք շարունակ մեծամտօրէն(°) կրկնել ենք թէ ուժեր չունենք. գաւառներից շարունակ պահանջել են թերթեր հիմնել, որ գուցէ այդպիսով կարողանայինք ուժեր ստեղծել: Որպէսզի այսուհետեւ բոլոր թերութիւնների պատասխանատու մարմին լինի, դրա համար էլ պնդում եմ, որ թերթի Խմբագրութիւնը զատ լինի, պրոպագանդայի մարմինը՝ զատ:

Միքայէլ.- Ես մտադիր չեմ ներբողներ կարդալ «Յառաջ»ին, բայց պէտք է նկատել որ ընկերների յարձակումների մէջ կար մի խոշոր չափազանցութիւն: Երբ մեր իրականութեան մէջ արիւն է հոսում, գիւղեր են արերում, մեզնից պահանջում են որ փիլիսոփայութեան եւ գիտութեան մասին գրուէր. մենք որքան կարողացանք ծանօթանալ, ընդհակառակը «Յառաջ»ը բոլոր շրջաններում լաւ ընդունելութիւն է գտել. բացի դրանից պէտք է նկատի ունենանք, որ ընդամենը 50-60 համար է լոյս տեսել, ուրեմն այդքան խստապահանջ չի կարելի լինել:

Անտոն.- Մանրամասնութիւնների մէջ չեմ մտնում. ես կ'առաջարկէի

որ մեր գաւառական թղթակիցներն էլ վարձատրուէին այն չափով, ինչ չափով Խմբագրութեան անդամները, ի հարկէ ստորաբաժանումներով: Մինչեւ այժմ, «Յառաջ»ը չի տուել ըստ իս էական խնդիրների մասին այն՝ ինչ որ պիտի տար: Ասում ենք՝ պաշտպանել է ազգային խնդիրը, բայց դա անում են եւ միւս թերթերը: «Յառաջ»ը չի եղել Դաշնակցութեան բերան, այլ ձեւակերպուած «Մշակ»: «Յառաջ»ը շարունակ իր յարձակողական յօդուածներով թէ՛ երիտասարդ թուրքերի, թէ՛ վրացիների եւ թէ կովկասեան թուրքերի դէմ, փոխանակ ջուր ածելու կրակի վրայ, կարծես ուզում էր իւր ածել, եւ եթէ աշայէս շարունակելու լինի, մենք թերեւս նոր-նոր ընդհարումների դուռ բանանք նաեւ վրացիների հետ: Նոյնը կ'ստեն թուրք-հայկական պատգամատրութեան վերաբերմամբ գրուած յօդուածների նկատմամբ,- սկզբում Խատիսեանի ճառը ոգետրութեամբ տպւում էր, յետոյ ընկերների ճնշումների տակ, սկսում է հակառակ կարծիք յայտնել:

Ըստ իս թերթը՝ իբրեւ օրգան Դաշնակցութեան, ոչ թէ միայն հայելի պիտի լինէր, այլեւ ուղեցոյց: Մենք ասում ենք որոշ աշխարհայեացք չունենք. եւ ո՞վ պէտք է այդ աշխարհայեացքը ստեղծէր, ուղեցոյց լինէր, եթէ ոչ՝ թերթը:

Այն առարկութիւնները, որ իբր թէ մեր քաղաքական դաւանանքի մասին չի գրուել, որովհետեւ վախեցել են փակուելուց, դա լոկ պատճառաբանութիւն է, ուրիշ թերթեր գրել են այդ ուղղութեամբ եւ չեն փակուել:

Մեր նպատակը չէ թերթ ունենալ թերթի՝ համար, այլ թերթ՝ (որ) պէտք է արտայայտէր մեր դաւանանքը, եւ փակումից պիտի չվախենայինք:

Թերթը չէ ունեցել այն բազմակողմանիութիւնը, որին սպասում էինք: Եթէ մեր ներկայ ուժերով չենք կարող մի թերթ ղեկավարել, հետեւապէս չենք կարող մի քանի օրգաններ ղեկավարել, որի առաջարկը դնում են ընկերներից մի քանիսը:

Առարկում էին թէ գաւառներից թղթակցութիւններ չեն ստանում. դա ո՞ւմ մեղքն է, եթէ ոչ նոյն Խմբագրութեան, որը պէտք է նախօրօք կազմեր (թղթակիցներ^օ) հաստատէր գաւառներում. ամէնից շատ թերթը կաղում է բազմակողմանիութեան տեսակէտից:

Թերթը կազմակերպութեան կենտրոնը եւ բերանն է. իսկ ո՞վ պիտի կազմէ Դաշնակցութեան կենտրոնը, եթէ ոչ ամենահասունացած յեղ(ափոխական) ուժերը: Նրա դէկը կամ պէտք է յանձնել Բիւրոյին, եթէ վերջինս ընտրուած է այդ ֆունկցիայի համար, կամ Ռայոնական Ժողովը ընտրելու է մի յատուկ Մարմին, եւ կամ Կենտրոնական Կոմիտէները մի-մի ներկայացուցիչ կ'ընտրեն՝ թերթը ղեկավարելու համար:

Ռ-ստում. - Թերթի մէջ փիլիսոփայական եւ գիտական խնդիրներ չեն կարող գրուել, այլ պէտք է գուտ պրոպագանդայի գործ ղեկավարէ եւ լրատուի դերում լինի: Մենք պէտք է ունենանք մի (ուրիշ) այնպիսի օրգան, որտեղ կարողանայինք լրիւ գիտական-փիլիսոփայական յօդ-

ուածներ գրել: Երբ «Յառաջ»ը սկսեց լոյս տեսնել, կարծես խմբագրական կազմը օտարացաւ կազմակերպութիւնից: Մեր խմբագիրները պէտք է ամենասերտ կերպով կապուած լինեն կազմակերպութեան առօրեայ գործերին:

Մեծ Քաղաքի ներ(կայացուցիչ) Եղիշէ.- Այստեղ ընկերները իրենց միակողմանի եւ չափազանց ծայրայեղ եզրակացութիւններով այնպիսի կարծիքներ են առաջ բերում, որ կարելի է եզրակացնել թէ «Յառաջ»ը մի անելորդ թերթ է, որ պէտք է վաղուանից եւ եթ փակել, քանի որ նա անպէտք է: Դաշնակցութեան բազան (մասսան) բոլորովին ուրիշ կարծիք ունի «Յառաջ»ի մասին, քան այստեղի ընկերները: Ասացին, որ թերթը ընդունելութիւն չգտաւ, այդպէս ասել՝ կը նշանակէ ծանօթ չլինել իրականութեան: Ընդհակառակը ամենայն օր գաւառներից շարունակ թղթակցութիւններ են ստացում, որտեղ «Յառաջ»ին «պաշտելի» մակդիրներով են բնորոշում:

Անտոնը այնպիսի խօսքեր ասաց, որ կարծես մենք ոճրագործներ ենք, որ ցանկացել ենք ընդհարումներ առաջ բերել. մենք չենք սոփեստութեան դիմել, թերթի դեկլարող սկզբունքը ճշմարտութիւնն է, եւ մենք խօսել ենք ըստ էութեան. մենք շովինիստութիւն չենք արել, երբ երեսն ենք հանել ճշմարտութիւնը: Անտոնը ասաց, որ ոչ թէ անորոշութիւնն է եղել (պատճառը) որ նախագծային հարցերի մասին չէ գրուել, այլ անձեռնհասութիւնը.- մենք հանճարներ չենք, բայց կ'ասենք որ եթէ հենց մեր այս Ռայոնական Ժողովի վրայ մի ակնարկ ձգենք, կը տեսնենք արելի քան անորոշութիւն. զանազան Կենտր. Կոմիտէների տարբեր գործողութիւնները գալիս են ապացուցելու ասածներս:

Անտոնի ասածներից կարելի է եզրակացնել, որ թերթն է մեղաւոր, որ գաւառներից կապեր չեն եղել.- բայց դա կազմակերպութեան ընդհանուր թերութիւնն է, որը տարիներից ի վեր գոյութիւն ունի: Խմբագրութեան հասցէին այն արտայայտութիւնները, որ իբր թէ խմբագիրները ձգտել են փառքի, արելի քան անհիմն եւ անարդար է.- որ մեր մէջ փառասիրութիւն չէ եղել, ապացոյց այն՝ որ յօդուածների տակ երկար ժամանակ ստորագրութիւն չէր լինում:

Ռոստոմը դուրս բերեց որ Խմբագրութիւնը զատուած է եղել, դա եւս անհիմն է: Ես եղել եմ եւ խմբագիր եւ մասնակցել եմ կազմակերպական գործերին ոչ պակաս քան միւսները, նոյնիսկ արելի շատ քան միւսները:

Պահանջում են որ գիտական-փիլիսոփայական յօդուածներ տըպենք, բայց հաւատացած եղէք որ եթէ մեր գաւառներում արիւնասիրութիւններ կատարուած ժամանակ, մենք զանազան գիտական-փիլիսոփայական յօդուածներ տպենք, մեր ընթերցողների 9-10ը անեծքի կ'արժանացնէ մեզ:

«Նիւրեր Հ.Յ.Դ. Պարմութեան համար», բ. հարորդ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.-

(Տեղեկութիւնները, մեծ մասամբ, կուգան «Նիւթեր»-ու խմբագրութենէն (Հ. Տասնապետեան)

1. Պաքուի շրջան. ներկայացուցիչը՝ հաւանաբար աւելի վար Մարտիրոս անունով նշուող Սաֆօն (Մարտիրոս Մարգարեան):
2. Երեւանի շրջան. ներկայացուցիչը՝ հաւանաբար աւելի վար նշուած Սարգիսն է (Օհանջեանեան):
3. Կարսի շրջան. ներկայացուցիչը (այլ նիստի՝ նշուած իբր «վարժապետ») Համազասպ Նորհատեանը: Նոյն շրջանէն՝ նաեւ երկրորդ գործիչ մը՝ Ջրաբերդի Ստեփան:
4. Ժլատ՝ կազմակերպ. տեղանուն հիւսիսային Կովկասի համար: Ներկայացուցիչին ինքնութիւնը չի բացայայտուիր արձանագրութիւններէն:
5. Ալեքսանդրապոլի շրջան: Ներկայացուցիչին ինքնութիւնը չի բացայայտուիր արձանագրութիւններէն. կրնայ ըլլալ աւելի վար նշուած Կարօն, նոյն շրջանէն:
6. Ինքնութիւնը անորոշ. եթէ իսկական անունն է, Արշակ Թադէոսեան՝:
- 6բ. Խօսքը ռուս քաղաքական հոսանքներու մասին է:
7. Սիքայէլ Վարանդեան:
8. Թիֆլիս.- Յայտնօրէն՝ Եղիշէ Թովչեանը:
9. Ծանօթ՝ նաեւ Հայր Աբրահամ անունով: Անտոնը՝ Սիմոն Ջաւարեանը:
10. Թմբուկ՝ Ախաբալաքի շրջան:
11. Աբրահամ Գիլիսանդանեան, Պաքուի երիտասարդ գործիչ:
12. Հաւանաբար աւելի վար նշուած Ստեփան Տէր-Մկրտչեանը, Գանձակէն, նաեւ Արեւելեան Բիւրոյի անդամ:
13. Համազասպ Սրուանձտեան, Շուշի հաստատուած, հրամանատար հայ-թաթարական կռիւներու մէջ (Ասկերանի ճակատամարտ):
14. Նոր-Նախիջեան: Ներկայացուցիչին ինքնութիւնը՝ անորոշ (Ս. Վրացեան՝):
15. Յաջորդաբար՝ Սեբաստացի Մուրատ եւ Յոնան Գաթեան:
16. Լիպարիտ Նազարեանց:

**[ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Գ. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՅՐԳ-
ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ - 1906]**

Նիստ ա.- 25.06.1906

ԸՆԿԵՐՆԵՐ.- 1. Մարգիս. 2. Ռուբէն. 3. Արամ. 4. Տիգրան. 5. Իշխան.
6. Մալխաս. 7. Սալման. 8. Վաթան. 9. Վարդան (բացակայ)¹

ՕՐԱԿԱՐԳ.- 1. Նոր ընկերներ կանչելու խնդիրը. 2. Սարիատի եւ այլ
վայրերու խնդիրը

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. Նկատի ունենալով, որ Սասունի դէպքերից յետոյ Գաշտի դրու-
թիւնը վատացել է, որոշուեցաւ ընկեր Ռուբէնին ուղարկել այնտեղ, որ
աշխատի խոհեմութեամբ, Գէորգ Չաուշի եւ Տատրակի² հետ խոր-
հրդակցելով, չարիքը չէզոքացնել, ժողովրդի վիճակը բարելաւել եւ
պարբերաբար տեղեկութիւններ տալ մեզ, Երկրի դրութեան, իր արածի
եւ անելիքի մասին, որպէսզի տեղեակ լինենք այնտեղի իրականութեան
եւ խորհենք յայագայի մասին: Ռուբէնը իր հետ պիտի վերցնի առայժմ
50 լիրա: Որոշուեցաւ նոյնպէս առաջին պատեհ վայրկեանին մարդ ու-
ղարկել կազմակերպելու Սալմոյ Չորի շրջանը:

Ի նկատի ունենալով որ Տիարպեքիի եւ Բարձրաբերդի³ շրջաննե-
րում անհրաժեշտութիւն կայ կազմակերպելու, որոշուեց առաջարկել
Բիւրոյին մարդիկ ուղարկելու այդ շրջանները:

2. Նկատելով որ ընկերների կարիք կայ տեղս եւ բաւական թուով
ցանկութիւն յայտնող ընկերներ կան Երկիր մտնելու, որոշուեցաւ Երկիր
հրախրել հետեւեալ ընկերները՝ 1. Տոքթ. Ստեփան, 2. Վահան⁴, 3. Նիկա-
լայ, 4. Մամիկոն, 5. Սուրեն Մալխասեան, 6. Գրիգոր եւ Յարութիւն Տէր
Յովհաննէսեան (Բարսումեցի): Սրանցից առաջին երկուսը՝ Տոքթոր եւ
Վահան, կը ճանաչուին Երկրի մարմնի իբր հաւասար ընկեր, իսկ միւս-
ները միայն իբր եւ օժանդակ ընկերներ:

Նիստ ք.- 26.06 - Նախորդ ժողովի ընկերները՝ բոլորը ներկայ:

ՕՐԱԿԱՐԳ - 1. Պատասխանատու Մարմնի խնդիրը եւ ընկերների դասաւորումը. 2. Խորհրդի վճիռը դրամական եւ զինական

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. Միեւնոյն վայրում երկու անջատ մարմինների իրարից անկախ գործունէութիւնը տակտիկայի աննմանութեան եւ այլ խնդիրների վերաբերմամբ անհամաձայնութիւն չառաջացնելու համար, տեղական մարմինների կողմից առաջարկուած էր Խորհրդին պատասխանատու մարմին կազմելու խնդիրը: Խորհուրդը ըստ Երկրի ընկերների ցանկութեան պատասխանատու մարմին կազմելը թողել էր Երկրի երկու մարմիններին, իսկ իւր կողմից նշանակել էր Սարգիսին: Այդ մարմինը պիտի գործէր Խորհուրդի կողմից ընդգծած որոշ սահմաններում, ինչպէս յարաբերութիւն պահել երկու Կ. Կոմիտէների միջեւ եւ դրսի մարմինների հետ, դրամական եւ զինական բաշխումներ կատարել եւ հսկել որ մարմինների գործունէութիւնը մնայ Դաշնակցութեան Ծրագրի շրջանում: Ժողովը նպատակայարմար չհամարեց առանց այն էլ ոչ լրի կազմերի - Կոմիտէների ուժերը ջլատել եւ կազմել մի երրորդ մարմին, այնպիսի իրաւունքներով, որը կը կատարեն նաեւ Կ. Կոմիտէները անջատ կամ իրար խորհրդակցութեամբ: Տեղի ունեցան զանազան թեր ու դէմ կարծիքներ. առաջարկուեցան հետեւեալ բանաձեւերը՝ ա) մի մարմին հինգ հոգուց ընտրովի եւ պիտի լուծուին Կ. Կոմիտէները: բ) Մի մարմին Երկրի ներկայ բոլոր ընկերներով: գ) Պահել երկու Կ. Կոմիտէները՝ աւելի ուժեղացած եւ դ) Պատասխանատու մարմին՝ Խորհրդի ընդգծած ձեւով՝ պահելով Կ. Կոմիտէները:

Մրանցից բուժարկութեամբ մեծամասնութեան կողմից մերժուեցաւ ա.ը, իբրեւ Երկրի մէջ դիկտատուրա ստեղծող ձեւ. ընդունուեց երկրորդը՝ մի մարմին Երկրի բոլոր ընկերներից. բայց յետոյ ի նկատի ունենալով տեխնիկական անյարմարութիւնները եւ ընկերների բաժանման մէջ անհամաձայնութիւններ, առաջարկուեցաւ եւ ընդունուեցաւ երկու Կ. Կոմիտէ ուժեղացած ձեւով, որոնք պիտի վարեն իրենց շրջանի գործերը Ռայոնական ժողովի ընդգծած սահմաններում, մինչեւ հետագայ գումարուելիք Ընդհ. Ժողովի կարգադրութիւնը: Լեռնապարի Կ. Կոմիտէի անդամներ որոշուեցան Իշխան, Սարգիս եւ Վարդան, իսկ Շամ մնացին Արամ, Տիգրան, Մալխաս, Սալման եւ Վաթան:

2. Խորհրդի որոշած դրամական ռազմական բիւջէի մասին որոշուեցաւ 15,000 թղմ. կազմակերպական դրամը կիսել հաւասար կերպով Լեռնապարի եւ Շամի միջեւ, իսկ ռազմամթերքի դրամը եւ փոխադրածի

երկու-երրորդ մասը մնայ Շամ, իսկ մէկ-երրորդը ուղարկուի Լեռնապար: Առայժմ այսպէս բաժանուեց, թողնելով վերջնական բաժանումը ապագայ Ընդհ. Ժողովի կամ կազմուելիք Պատասխանատու մարմնի որոշման: Այս տեսակ բաժանման ձեւը առաջարկեց Իշխանը ի նկատի ունենալով, որ այս ձեւով աւելի հաւանականութիւն կայ կրկին նպատակայարմար կերպով բաժանելու:

Նիստ գ. - 27. 06 - Բոլոր ընկերները՝ ներկայ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընդհ. Ժողովին մասնակցելը. 2. Ձէնքի գնման գործը. 3. Քաղաքական կոմիտէ եւ խմբեր. 4. Արմենականներ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. Գեկտեմբերին գումարուելիք Ընդհ. Ժողովին իբր պատգամաւոր որոշուեցաւ առայժմ Իշխանը՝ Լեռնապարի կողմից, Արամը՝ Շամից եւ Սալմանը՝ իբր Երկրացի, բայց վերջնական որոշումը թողուեցաւ Հոկտեմբերին գումարուելիք չորրորդ Ռայոնական ժողովին: Ընդհ. Ժողովին մանրամասն եւ հսկումանօրէն տեղեկագիր ներկայացնելու համար որոշուեցան ընդհանուր գծերը երկու շրջանի համար, որպէսզի այժմուանից աշխատանքները սկսին:

2. Ի նկատի ունենալով առհասարակ Երկրի եւ մասնաւորապէս քաղաքի զինման գործի անհրաժեշտութիւնը, որոշուեցաւ անխտիր կերպով քաջալերել զէնքի գնումը, թէ՛ կազմակերպուած խմբերին եւ թէ՛ չէզոք ու համակիր անդամներին՝ պահելով միշտ հերթական սիստեմը: Այս որոշման համաձայն չէին Իշխանը, Ռուբէնն ու Սալխասը, որոնք կարծում էին թէ պէտք է առաջնութիւն տալ կազմակերպուած խմբերի պահանջներին:

3. Նկատելով ժողովուրդի զէնքի եւ ռազմամթերքի պահանջի հետըզհետէ լայն ծաւալ ստանալը, որոշուեցաւ լուրջ ուշադրութիւն դարձնել Ձէնքի կոմիսիայի գործունէութեան վրայ եւ նորա գործունէութիւնը հետզհետէ ընդլայնել, զէնքի վաճառականութեան հրապարակը մեծացնելով: Բացի այդ կոմիսիայից, որոշուեցաւ ձեռնարկել նաեւ այլ միջոցների, մասնաւոր ժողովրդեան փամփուշտ հայթայթելու համար. այս մասին Արամը պէտք է աշխատի զէնք բերող եւ կոմիսիային վաճառող քիւրտերի հետ պայմանաւորուել որոշ գրաւակաւ առնելով նրանցից, որպէսզի դրանք գնան Վրէժից մեր այստեղի ընկերների ձեռքով գնումներ կատարեն եւ բերեն այստեղ յանձնեն, որոշ դարձեալ պայմա-

նատրուած շահ ստանալով: Այդ մասին պէտք է գրուի նաեւ Վրէժի յարմար ընկերներին:

4. Քաղաքի խմբերի մէջ եղած ընդունակ երիտասարդների վրայ լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնել, առաջ քաշել եւ որոշ ուղղութեամբ փրոփականտայով եւ ընթերցանութեամբ պատրաստել ապագայ գործիչներ. իսկ զինուորութեան ընդունակ երիտասարդներից կազմել զուտ զինուորական խմբեր եւ դրանց հետ պարապել այդ ուղղութեամբ: Քաղաքային կոմիտէին պէտք է աստիճանաբար ծանօթացնել բոլոր քաղաքային գործերին եւ նորա գործունէութեան սահմանները ընդլայնել, յանձնելով նորան ամբողջ քաղաքի եւ մօտիկ շրջանի գործերը:

5. Ի նկատի ունենալով, որ Տաճկաստանում յեղափոխական տարբեր կուսակցութիւնների գոյութիւնը չարիք է, իսկ ներկայ հանգամանքներում Արմենականների գոյութիւնը լոկ թիրիմացութիւն, որոշուեցաւ քաղաքում գոյութիւն պահող Արմենականները ժամանակի ընթացքում խաղաղ փրոփականտայով քաշել Դաշնակցութեան մէջ: Իսկ եթէ նրանք դուրս գալով քաղաքից կուսակցական կռիւներ առաջացնելով սկսեւն ոտնձգութիւններ անել այն գիւղերում ու գաւառներում, ուր Դաշնակցութիւնը արդէն կազմակերպուած է, նախ պէտք է աշխատել խաղաղ միջոցներով ատելութիւնների առաջն առնել, իսկ եթէ խաղաղ միջոցները չբաւականանան, իբրեւ փոքրագոյն չարիք, պէտք է դիմել բռնի ուժի, զինաթափ անելով դրանց:

Նիստ դ. - 29.06 - Բոլոր ընկերները՝ ներկայ:

ՕՐԱԿԱՐԳ.

1. Արտասահմանի յարաբերութիւնը եւ փոխադրութիւնը. 2. Լեզալ հաստատութիւնների վերահսկողութիւն եւ դատական խնդիր. 3. Գիւղացիների եւ առհասարակ գաղթականների փոխադրած դրամների խնդիր. 4. Բանտի ընկերների հետ յարաբերութիւն պահել եւ պահանջներին բաւարարութիւն տալ:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. Ի նկատի ունենալով, որ արտասահմանեան յարաբերութիւնները եթէ միայն մի կոմիտէ պահէ, անկարելիութիւն կայ յեղափոխական պայմաններու շնորհիւ մշտական խորհրդակցութիւնների, ուստի որոշուեցաւ իւրաքանչիւր Կ. Կոմիտէ անկախ կերպով յարաբերութիւն պահպանել արտասահմանի հետ, պարբերաբար թղթակցի եւ պաշտօնական

օրգաններին. փոխադրությունը պետք է կատարել Շամի [Կ.] կոմիտեն:

2. Ի նկատի ունենալով, որ հասարակական գործերը կը կեդրոնանան հետզհետե՛լ յեղափոխութեան ձեռքը, ուստի որոշուեցաւ հսկել լեզալ հաստատութիւնների վրայ, միայն աշխատել ընդհանուր ուղղութիւն տալ վանքերի կառավարութեանց եղանակին, ուսումնարանների, առաջնորդարանի, թաղականութեանց եւայլն... Առհասարակ չկանուել լեզալ հասարակական գործերով ի վնաս յեղափոխական գործին:

Գատական խնդիրները, իբրեւ անհրաժեշտութիւն, որոշուեցաւ գաւառներում գոնե՛ պահել յեղափոխութեան ձեռքին, ուստի պետք է շարունակեն դատական մարմինները իրենց գործունէութիւնը, վճռելով միայն նոր խնդիրները. իսկ 96ից առաջ պարտք կամ պահանջ քաղաքացու եւ գիւղացու միջեւ այսուհետեւ ճանաչելու չէ, ի նկատի ունենալով, որ կարգ մը սնանկացած քաղաքացի վաճառականներ մերժում են իրենց պարտքը վճարել գիւղացի պահանջատէրերին, իսկ անոնք կառավարութեան միջոցով գանձում են գիւղացիներից ունեցած ստանալիքները: Նկատելով որ քաղաքի դատերը զուր ժամանակ են խլում եւ կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրում, որոշուեցաւ ամբողջովին թողնել թաղականութիւններին եւ նրանց վճիռը համարել վերջնական:

3. Արտասահմանից ժողովրդական դրամ փոխադրող վաճառականները, երբ ուշացնում են վճարել, ամէն անգամ խիստ պետք է միջամտել եւ պահանջատէրերին բաւարարութիւն տալ:

4. Բանտի ընկերների պահանջներին պետք է աշխատել բաւարարութիւն տալ, նրանց հետ յարաբերութիւն պահպանել, հսկել դատավարութեան վրայ եւ միշտ ուղղութիւն տալ վտանգուած ընկերների դատերին, ազդելով դատաւորների վրայ՝ սպառնալիքով, կաշառքներով եւ այլ միջոցներով: Այս գործի վերահսկողութիւնը յանձնուեց Վաթսանին:

Նիստ ե. - 30.06 - Բոլոր ընկերները՝ ներկայ:

ՕՐԱԿԱՐԳ - 1. Ձինատրումն եւ ժողովրդական զինուորագրութիւն. 2. Գաւառական, զինուորական եւ կամատրների կանոնների մշակումը. 3. Կազմակերպական բիւտջէն Երկրի:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1.- Շամի եւ Լեռնապարի գաւառական-գիւղական կազմակերպութեան մէջ ժողովը նկատեց տարբերութիւններ, չնայած, որ երկու վայրերու մէջ գիւղական կազմակերպութիւնը համայնական է, ամբողջ գիւղը կազմակերպուել է, բայց այն տարբերութեամբ որ Լեռնապարի համար

գնումը գեները գտնում են կազմակերպության տրամադրության տակ, կազմակերպության միջոցով գնումը գեները համարում են համայնական, իսկ Շամի շրջանում խմբական գեներըից գատ կան եւ անհատական գեներ: Այդ մասին որոշուեցաւ ամբողջ Վասպուրականի շրջանի կազմակերպութիւնը միօրինակութեան վերածել եւ ժողովը աւելի նպատակաշարժար համարեց Լեռնապարի կազմակերպչական սիւտեմը, որովհետեւ այդ պարագային կազմակերպութիւնը կարող է պետք եղած ժամանակ շրջանի ամբողջ ուժերը դասաւորել այնպէս՝ ինչպէս ինքն է ցանկանում: Ուստի որոշուեցաւ Շամի շրջանի անհատական եւ խմբական գեները համայնացնել: Համայնքը պարտական է մասնակցել գեների, դրամի հայթայթման, զինուորների եւ սուրհանդակների պահպանման եւ փոխադրութեան. սրան կից իւրաքանչիւր գիւղում պետք է կազմակերպել թռուցիկ եւ ինքնապաշտպանութեան խմբեր, իսկ վերջիններից դուրս մնացած անհատները իբր նպաստող անդամներ՝ ամսականներ են տալու: Ամսականները հաւաքում են շրջանի ենթակոմիտէի կասսան եւ դրանով գնում կազմակերպական լաւ գեներ: Այդ գեները դրում են ենթակոմիտէի տրամադրութեան տակ:

2.- Ի նկատի ունենալով որ ներքին կանոնագրութեան կարիք կայ եւ եղածները լրիւ չեն, որոշուեցաւ երեք հոգի՝ Իշխան, Տիգրան եւ Արամ մինչ մի ամիս նիւթեր ժողովեն եւ միասին կազմեն գաւառական, զինուորական եւ կամաւորների կանոնագրութիւնը եւ ապա ներկայացնեն Հոկտեմբերին գումարուելիք Ռայոնական ժողովին ի հաստատութիւն:

3.- Որոշուեցաւ երկու շրջանի համար ունենալ մինիմում 500 ոսկու գուտ կազմակերպական բիւտջէ, որ հայթայթելու է հետեւեալ աղբիւրներից.- հանգանակութիւններ, կամաւոր նուէրներ, տուգանքներ, քաղաքի խմբերի մուտքի մէկ-չորրորդը, եւայլն: Հաւասար կերպով տալու են երկու շրջանները:

Նիստ գ. - 1.07 - Բոլոր ընկերները՝ ներկայ:

ՕՐԱԿԱՐԳ - 1. Օտար տարրերի հետ յարաբերութեան խնդիր. 2. Կարգադրութիւն Շամի շրջանի գաւառների մասին. 3. Գործունէութեան ընդհանուր տակտիկա երկու վայրերում:

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1.- Զիւրտերի հետ մեր ունեցած յարաբերութիւնը ցոյց է տուել, որ նրանց աղաները ոչ մի քաղաքական իտեալ չունին, մեզ մօտենում են միայն մասնակի (փեշքէշ, նուէր, կառավարութեան առաջ միջամտել

եւայլն...) միտումներով, ուստի նրանց համար էլ յարաբերելը թանգ է նստում թէ՛ մեզ եւ թէ մասնատրապէս ժողովրդի վրայ. վճռուեցաւ միայն փոխադրութեան եւ նման գործնական խնդիրների համար կապ ու յարաբերութիւն ունենալ մասնատր քրտերի ու դոլամների հետ, վարձով ու փեշքէշներով նրանց շահագործելու համար:

Պէտք է աշխատել թուրք աշխատատր ժողովրդի եւ զօրքի մէջ յեղափոխական տրամադրութիւն ստեղծել թռուցիկներով, մասնատր տեսակցութիւններով եւ նման միջոցներով:

2.- Շամի գաւառների մասին որոշուեցաւ՝ առայժմ Տիգրանը գնայ Թիմար մինչեւ մի ամիս կազմակերպէ որքան հնարատր է գծուած ուղղութեամբ, ապա վերադառնայ ու Մալխասի հետ գնայ Հայոց Ձոր, մօտ մէկ ամսուայ չափ միասին պտտեն մինչեւ Մալխասը ծանօթանայ գործերին, ապա Տիգրանը կը վերադառնայ, իսկ Մալխասը կը մնայ Հայոց Ձորում: Քաջբերումեաց եւ Բզնումեաց հետ առայժմ պէտք է յարաբերութիւն պահել եւ աշխատել ազատ ընկերներ ուղարկել ուսումնասիրելու:

Քաղաքի շուրջը գտնուած եւ եզիտ նահանգների գիւղերը դարձեալ պէտք է մնան Յարութիւնի ձեռքի տակ. մեզանից մէկը գնայ նրա հետ շրջելու եւ իմանալու թէ կազմակերպութիւնը ինչ աստիճանի յաջող է:

3.- Շեշտելով անցեալ տարուայ ա. Ռայոնական ժողովի որոշման այն կէտը, թէ պէտք է խուսափել ամէն մի ընդհարումներից եւ զանազան գործին բացա[ս]աբար ազդող պարագաներից, ինչպէս են ընդհարումներ, դատական խնդիրներ, աղմկալի տեռորներ եւն., որոնք կարող են ազդել կառավարութեան վրայ եւ առաջ բերել գործը վիժեցնող պարագաներ: 4րդ Ռայոնական ժողովը վաւերացնում է այդ եւ որոշում՝ այսուհետեւ էլ շարունակել գործունէութիւնը նոյն ուղղութեամբ, պատասխանատու ճանաչելով Ռայոնական ժողովի առաջ այն մարմինը կամ անհատը, որի շրջանում կամ որի միջոցաւ այդ վերոյիշեալ գործը վիժեցնելու բնատրութիւն ունեցող երեւոյթները [պարզուած են]:

1.7.1906

(Իսկականի վրայ ստորագրուած է)

ՍԱՐԳԻՍ, ԱՐԱՄ, ԻՇԽԱՆ, ՄԱԼԽԱՍ, ՎԱՌՄԱՆ, ՌՈՒԲԷՆ, ՍԱԼ-ՄԱՆ ԵՒ ՏԻԳՐԱՆ

«Հայ Յեղափոխականի մը Յիշատակները», ք. հայտոր, Ռուբէն

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.-

1. Սարգիսը՝ Օտապաշեան-Բարսեղեանն է, Վանայ Սարգիսը, Տիգրանը՝ բուն անունով՝ Յարութիւն (Կողբեցի). Մալմանը՝ Համազասպ Բաղէշեան. Վաթանը՝ Դեւոնը Մելոյեան. Վարդանը՝ Վարդան Շահպազը:

2. Տատրակը՝ Մշոյ Գեղամը (Տէր Կարապետեան):

3. Բարձրաբերդը՝ Կարինի, իսկ Մալոյ Ձորը՝ Բաղէշի շրջաններ:

4. Անուններէն՝ Վահանը Փափագեանն է, Կոմսը:

Հ.Յ.Գ. ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1907)

... ԱՐՎԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՍԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի նկատի ունենալով՝

1. որ աշխատատեղի դասակարգը իր տնտեսական շահերը պաշտպանելու համար պետք է ունենայ որոշ քաղաքականություն եւ դա կարող է լինել միայն սոցիալիստական, որովհետեւ միայն սոցիալիզմն է, որ ընդունակ է վերջ տալու բոլոր տեսակի շահագործումներին ու անհասարտություններին,

2. որ այդ իսկ պատճառով աշխատատեղի տնտեսական կազմակերպություններն եւս կապուած պետք է լինին սոցիալիստական կուսակցությունների հետ,

3. որ այդ սկզբունքով կազմակերպուած դաշնակցական միությունների անցեալի փորձը իր դրական հետեւանքներով աւելի եւս շեշտում է վերոյիշեալ իրողութիւնը,

4. որ տարբեր ազգությունների աշխատատեղերը, ապրելով միեւնոյն իրականութեան մէջ, շրջապատուած լինելով նոյն պայմաններով, պետք է միշտ համերաշխօրէն պաշտպանեն իրենց շահերը:

Հ.Յ.Գ. Կովկասեան ռայոնական խորհրդաժողովը ընդունում է արհեստակցական միությունների կուսակցական լինելու նպատակայարմարութիւնը, եւ նրանց զարգացման աւելի զարկ տալու, ինչպէս նաեւ տարբեր ազգութեան աշխատատեղերի մերձեցման նպաստելու համար, ցանկալի է համարում՝

1. Կազմակերպել արհեստակցական միությունները կուսակցական սկզբունքով եւ կապել Հ.Յ.Գ-աշնակցութեան հետ.

2. Ձգտել այդ միությունները կապել միւս միությունների հետ ֆեդերատիւ կապերով.

3. Դաշնակցական արհեստակցան միությունների մէջ կազմակերպել նաեւ օտարազգի աշխատատեղերին, եթէ նրանք ընդունում են կուսակցութեան ծրագիրն ու գործելակերպը.

4. Միությունների մէջ ընդունուած օտարազգի աշխատատեղերից կազմել առանձին խմբակներ, ներքին կատարեալ ինքնուրոյնութեամբ եւ ֆեդերատիւ կապերով կապուած նոյն միութեան միւս աշխատատեղերի հետ.

5. Ամեն կերպ հովանաւորել միութեան բոլոր անդամների ազգային-կուլտուրական իրաւունքները եւ պահպանել լեզուների իրաւահաւասարութիւն թե՛ գրաւոր եւ թե՛ բանաւոր պրոպականդի մէջ:

6. Չգտել միութիւնների մէջ եղած օտարազգի խմբակները միացնելու նոյն ազգութեան այն սոցիալիստական կուսակցութեան հետ, որը իր աշխարհայեցողութեամբ մօտ է Հ.Յ.Դ-աշնակցութեան, նախօրօք որոշելով այդպիսի սոցիալիստական կուսակցութիւնների յարաբերութիւնները ֆեդերատիւ հիմներով:

Որովհետեւ մի քանի ընկերներ յայտնում էին տարբեր կարծիքներ արհեստակցական միութիւնների քաղաքականութեան մասին, խորհրդրդածողովը ընդունեց հետեւեալ լրացուցիչ որոշումը.-

«Ի նկատի ունենալով այն տարբեր կարծիքները, որ կան ընկերների մէջ արդի արհեստակցական միութիւնների գործունէութեան քաղաքականութեան մասին, առաջարկել բոլոր մարմիններին՝ միևնույն կողմ ռաշոնական ժողովը կազմել ամփոփ զեկուցումներ իրենց գործունէութեան թէ յաջողութիւնների եւ թէ սխալների մասին, ինչպէս եւ մշակել այն [տրակտիկան], որով ընթանալու են ապագայում: Դրա հետք միասին որոշում է կուսակցական մամուլի մէջ քննել եւ օրուայ հարց դարձնել արհեստակց. միութիւնների քաղաքականութեան հարցը»:

Արհեստակցական միութիւնների յարաբերութիւններն ու իրաւունքները կուսակցութեան գործերի եւ ընտրութիւնների վերաբերմամբ.-

Խօսելով արհեստակցական միութիւնների յարաբերութիւնների եւ իրաւունքների մասին՝ կուսակցութեան գործերի եւ ընտրութիւնների վերաբերմամբ, եւ աչքի առաջ ունենալով ներկայ պայմանները, խորհրդրդածողովը գտնում է, որ՝

1. Կուսակցական մարմինների ընտրութեան միութիւնները մասնակցում են յատուկ այդ նպատակով ընտրուած ներկայացուցիչների միջոցով (մանրամասնութիւնները իրաքանչիւր վայրի վերաբերմամբ որոշում է տեղական մարմնի եւ Արեւելեան Բիւրոյի խորհրդակցութեամբ):

2. Կուսակցական ընթացիկ գործերում միութիւնները մասնակցում են իրենց վարչութիւնների եւ խորհուրդների միջոցով:

Խորհրդածողովը, ցանկալի համարելով որ կովկասեան բոլոր քաղաքական դաշնակցական միութիւնների ներկայացուցչական համաժողովը լինի յառաջիկայ աշնանը, այժմ եւ եթ հարկաւոր է համարում շեշտել, որ դաշնակցական միութիւնների վարչական մարմինները պէտք է կազմուած լինեն միեւնոյն սկզբունքով եւ միատեսակ անուններով, այսինքն իրաքանչիւր միութիւն պէտք է ունենայ՝

1. Ռայոնական ներկայացուցիչների ժողով, եթե միութեան անդամների բազմութեան կամ կոնսպիրացիայի պատճառով, անհնարին է միասին ժողով գումարել.

2. Վարչություն.

3. Բոլոր միութիւնների վարչութիւնները կամ նրանց ներկայացուցիչները պարբերական ժողովներով կազմում են միութիւնների խորհուրդ:

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հ.Յ.Գ. կովկասեան ռայոնական խորհրդաժողովը, քննելով գիւղացիական միութիւնների հարցը, որոշեց՝ գիւղացիական խաւերում գործելիս՝ առաջնորդուել հետեւեալ սկզբունքներով.-

...

... դ. Կազմակերպութիւն

- Գիւղացիական մարմինները կազմակերպելիս, սկսել գիտակիցների խմբերից, որոնց միջոցով վերը նշանակած ձեռնարկների իրականացման, ինչպէս եւ ընդհանուր կազմակերպական նպատակների համար կազմել աշխատատուր գիւղացիութիւնից գիւղացիական միութիւն իր յատուկ վարչութեամբ: Գիւղացիական միութիւնը հանդիսանում է կազմակերպական առաջին աստիճանը: Միեւնոյն շրջանի գիւղացիական միութիւնների ներկայացուցիչներից կազմում են պարբերաբար շրջանային խորհուրդներ, որոնց որոշումները կ'իրագործեն գիւղացիական միութիւնների վարչութիւնները: Գիւղացիական միութիւնները ընտրում են ներկայացուցչական սիստեմով յեղափոխական շրջանային կոմիտէ, որ եւ կապում է միութիւնները ռայոնի Կենտր. կոմիտէի հետ:

Գիւղացիական միութեան անդամները վճարում են անդամավճարներ, որոնց կէտը յատկացում է տեղական միութեան պէտքերին, իսկ միւս կէտը յատկացում է ընդհանուր կազմակերպական պէտքերի համար:

ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆՈՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Խորհրդաժողովը, քննութեան առնելով այդ հարցը, ընդունեց հետեւեալ առաջարկը.-

«Առանձին որոշում չկայացնել գործարանային բանուորութեան կազմակերպութեան շեւի մասին, առայժմ բողոքելով տեղական մարմիններին տրանելու այդ գործը յարմարագոյն եւ իրենց ցանկացած սիստեմով, եւ իրաւունք վերապահել նրանց կուսակցական մարմինների ընտրութեան մասնակցելու ներկայացուցչական սիստեմով»:

ՍԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ

Քննելով մարտական խմբերի հարցը, խորհրդաժողովը ընդունեց հետևեալ բանաձևեր.-

«Անհրաժեշտ համարելով ժողովրդական միլիցիայի զաղափարը իրականացնել հենց մեր շրջաններից, խորհրդաժողովը առաջարկում է շրջանների կուսակցական մարմիններին՝ բոլոր գիղացիական և արհեստակցական, ինչպես նաև քաղաքական խմբերի անուններից կազմակերպել զինավարժական խմբեր:

Իսկ դրա միջից ամենագիտակիցներին, անչնագոհներին և ընդունակներին ընդունել իբրև մարտական խմբեր՝ կուսակցութեան սկզբի ջեռնարկների համար...»

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՕԺԱՆԴԱԿ ԽՄԲԵՐԻ ՀԱՐՑԸ

Խօսելով քաղաքական խմբերի կազմակերպելու մասին, կցելով դրան նաև օժանդակ խմբերի հարցը, խորհրդաժողովը եկաւ այն եզրակացութեան, որ՝

1. Քաղաքական խմբերի մէջ կարող են կազմակերպուել այն յեղափոխական ինտելիգենտները (ծառայողներ, ուսուցիչներ եւ այլն) և այն աշխատատարները, ինչպէս եւ կանայք, որոնք համապատասխանելով մեր ծրագրի ու կանոնագրութեան պահանջներին, յարմարութիւն չունին առանձին արհեստակց. միութիւն կամ բանուորական խումբ կազմելու.

2. Ինչ վերաբերում է արհեստատարներին, նրանք կարող են Դաշնակցութեան գործօն անդամ ընդունուել միայն այն դէպքում, երբ իրենց արհեստանոցում կ'իրականացնեն կօօպերացիայի սկզբունքը եւ դրանով կը հրաժարուեն նոյնիսկ փոքր չափով շահագործումից.

3. Իսկ բոլոր միւս անհատները, որոնք, ընդունելով Հ.Յ.Դ. ծրագիրը եւ նիւթական կամ այլ տեսակի օժանդակութիւն հասցնելով նրան, իրենց մասնաւոր կեանքում չեն դեկլարում նրա տակտիկով եւ կանոններով, կարող են կազմակերպուել իբրև օժանդակող անդամներ՝ առանց ընտրողական իրաւունքի կուսակցութեան մէջ:

«Հ.Յ.Դ. Կովկասեան Խորհրդաժողովի Որոշումները»

45

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՇՏՈՒԹԿԱՐՏԻ ՀԱՍՏԳՈՒՄԱՐԻՆ (1907)

... ԱՐՎԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ.-

Ասիկա անբաժան մասն է մեր տնտեսական գործունէութեան: Կարճ ժամանակի ընթացքին, Կովկասի մէջ մասնակի ազատութեանց ձեռք-

բերումն է ի վեր, կազմակերպած ենք զանազան արհմիութիւններու մեծ թիւ մը - Թիֆլիս, Պաքու, Պաթում, Ալեքսանդրապոլ, Երեւան, Էլիզապէթպոլ, Շուշի:

ԱՆՈՆՅ ՀԱՄՐԱՆՔԸ.-

Արհմիութիւններ		Անդամներ
Պաքու	10	2000
Թիֆլիս	38	5100
Պաթում	4	750
Երեւան-Կարս-Ալեքսանդրապոլ	33	1900
Էլիզապէթպոլ	6	600
Շուշի	19	640
ԳՈՒՍԱՐ	110	10990

Ասոնցմէ զատ, ունինք բազմաթիւ գիղական միութիւններ զաւառի մէջ: Ասոնց խմբած կազմակերպեալ հողագործներու թիւն է 67000:

Արհմիութիւնները դասակարգային պայքարի սկզբունքին վրայ դրուած են եւ անբաժանելիօրէն կապուած են կուսակցութեան:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՈՒԺԸ

Մեր շարքայիւնները եւ անդամները չորս դասի կը բաժնուին:

Անոնց թիւը՝

- Թրքահայաստանի մէջ 693 խումբ

- Կովկասի մէջ՝

- | | |
|-------------------------------|-----------|
| 1. Թիֆլիս եւ զաւառներ | 270 խումբ |
| 2. Պաքու եւ զաւառներ | 265 խումբ |
| 3. Ալեքպոլ եւ զաւառներ | 206 խումբ |
| 4. Երեւան եւ զաւառներ | 540 խումբ |
| 5. Կարս եւ զաւառներ | 140 խումբ |
| 6. Շուշի եւ զաւառներ | 230 խումբ |
| 7. Պաթում եւ զաւառներ | 120 խումբ |
| 8. Էլիզապէթպոլ եւ զաւառներ | 180 խումբ |
| 9. Հիւսիս. Կովկաս եւ զաւառներ | 260 խումբ |

- Պարսկաստան	90 խումբ
- Պալքաններ	48 խումբ
- Ամերիկա	51 խումբ

Կոմիտեներու եւ բոլոր այլ դասերու մէջ կազմակերպուած անդամ-
շարքայիններու թիւը կը հասնի շուրջ 165.000ի:

Ունինք 21 Կեդր. Կոմիտեներ, մեծ մասը՝ Թուրքիա եւ Կովկաս. երկու
Բիւրօներ, մէկը՝ Երկիր, միւսը՝ Եւրոպա: Այս վերջինը ի մէջ այլոց պա-
տասխանատու է կուսակցութեան կեդրոնական օրգանի՝ «Դ-րօշակ»ի
հրատարակութեան:

Կազմակերպութիւնը կառուցուած է ապակեդրոնացման սկզբունքին
վրայ, որ բաւական լայն ինքնավարութիւն կը տրամադրէ տեղական
կոմիտեներուն...

«Տեղեկագիր Ընկվ. Միջազգ. Շարքկարդի համագումարին»

46

[Հ.Յ.Գ. ԽՈՐՀՈՒՐԳ, 1908Ի ՆՍՏԱՇՐՋԱՆ]

ԽՄԲԵՐ ԵՒ ՄԻՈՒԹԻԻՆՆԵՐ

Կուսակցութեան ամբողջական աշխատանքը կատարել կարողա-
նալու համար, յանձնարարուծ է հետամուտ լինել կազմակերպական
ուժերի ինտեգրալ զարգացման:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ անդամ համարել ամէն դասակարգի
պատկանող անհատներին (արհեստաւոր, բանուոր, վաճառական եւն.),
եթէ նրանք ընդունում են կուսակցութեան ծրագիրը, ենթարկուծ են որո-
շումներին եւ իրօք ձգտուծ են իրականացնել նրանց կեանքի մէջ: Այդ
խմբերը պատրաստուծ են քաղաքական գործունէութեան, ակտիւ մաս-
նակցութիւն են ցոյց տալիս ընտրութիւնների մէջ, կազմուծ են ժողովներ,
միտինգներ, ցոյցեր՝ ի հարկին զինուած: Կուսակցական աւելի լայն գի-
տակցութեան հասած ք.[աղաքական] խմբերը վարում են ընդհանուր
պրոպագանդ եւ կազմուծ են կօօպերատիւ միութիւններ՝ սպառողական
ու արդիւնաբերական, գործնականապէս տարածելու համար կեանքի
մէջ ընկերվարական սկզբունքները:

ԱՐՋԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԵՒ ԲԱՆՈՒՌԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ աւելի շահա-
գրգռել ընդհանուր քաղաքական խնդիրներով, մտցնելով նրանց մէջ
կուսակցական գիտակցութիւն եւ պարտաճանաչութիւն:

ԳԻՒՂԱՅԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ կազմակերպելիս՝ ընդհանուր պրոպագանդի հետ միասին մտցնել նրանց մէջ ներքին բովանդակութիւն կոնկրետ ձեռնարկների ճանապարհով: Սկզբնատրոփիւնը դնել այնպիսի քայլերով, որոնց նպատակաշարժարտրոփիւնը ատելի մատչելի է գիտացի աշխատատրոփեանը (հողաբաժինների կանոնատրում ու լայնացում, հարկերի դասատրում, համայնական աշխատանք, համայնական պետքերի համար եւայլն):

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ կանոնատրման եւ բարձրացման վրայ դարձնել յատուկ ուշադրութիւն... Օրէցօր բազմացող բանտարկեալների վիճակը թեթեւացնելու նպատակով տարածել «Կարմիր Խաչի» սահմանները լայն չափերով:

47

[ԺՈՂՈՎԱԿԱՆ/ԿԱՆՈՆԱԳՐԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ՝ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԷՆ. 1908-1914]

I. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Հ.Յ.Գ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏԱՍԽ. ՄԱՐՄԵԻ

Դաշնակցութեան Կ. Պոլսոյ Պատասխանատու Մարմինը, նկատի ունենալով սահմանադրական կարգերու ներմուծմամբ ստեղծուած նոր պայմանները, կը յայտարարէ հետեւեալը.-

Ա) Այն բոլոր ընկերները, որոնք կը պատկանէին Կազմակերպութեան, բայց բանտարկուած կամ աքսորուած էին, այժմ ազատ ըլլալով, պէտք է շտապէն անմիջապէս մտնել պատկանեալ խմբերու կամ կոմիտէներու մէջ:

Բ) Բոլոր խմբերն ու կոմիտէները պէտք է վերակազմուեն՝ համաձայն Դաշնակցութեան «Կանոնագրի» (որոնց օրինակները կրնան խնդրուիլ Արեւմտեան Բիւրոյէն կամ Կեդրոնական Կոմիտէներէն):

Գ) Կուսակցութեան մարմինները հրամայական պարտք ունին, առանց յապաղելու, ձեռնարկել մարտական ու քաղաքական խմբերու կազմութեան, իրագործելու համար այն ձեռնարկները, որոնք կրնան ծրագրուիլ Պատասխ. Մարմիններու կամ Կեդր. Կոմիտէներու կողմէ:

Դ) Ձեղծումներու ու թիրիմացութիւններու տեղիք չտալու համար, բոլոր մարմինները պարտաւոր են ղեկավարուել «Կանոնագրով», թէ իրենց ներքին յարաբերութիւններու, թէ որեւէ ձեռնարկներու մէջ, եւ թէ դրամական հարցերու վերաբերմամբ:

Առիթէն կ'օգտուինք յիշեցնելու բոլոր ընկերներուն, որ համաձայն Ընդհանուր Ժողովի շեշտուած ցանկութեան, Կազմակերպութեան շարքերու մէջ պիտի չընդունուին այնպիսիները՝ որոնք իրենց անձով կամ քայլերով կրնան արատ բերել Դաշնակցութեան անուան եւ հմայքին: Ընդհակառակը, անշիտակ եւ Կազմակերպութեան անունը շահագործելու միտումներ ունեցող անձինք, ո'վքեր եւ ըլլան, պիտի հեռացուին կազմակերպութեան շարքերէն:

Կ. Պոլիս, 3 Օգ. 1908
«Դրօշակ», ք. 8, 1908

Հ.Յ.Դ. Կ. Պոլսոյ Պատասխ. Մարմին

II. ՏՐԳ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ (1909) - ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԷՆ

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Դաշնակցութեան Ե. Ընդհանուր Ժողովը մանրամասն քննութեան ենթարկելով ինքնապաշտպանութեան խնդիրը եւ լսելով կուսակցութեան մարմիններու կարծիքները այդ մասին, ... որոշեց՝

ա) Ինքնապաշտպանութեան գործը, իբրեւ համաժողովրդական՝ դրնել ժողովրդական եւ անկուսակցական հողի վրայ.

բ) Նախապատրաստական շրջանի մէջ, Դաշնակցութեան բոլոր անդամները պարտաւոր են մասնակցել ինքնապաշտպանութեանը, իբրեւ անհատներ, նպաստելով անոր կազմակերպելուն ու զինման գործին.

գ) Վտանգի ատեն Դաշնակցութիւնը հրապարակ կու գայ իր ամբողջ ուժով թէ ընդհարման առաջքը առնելու եւ թէ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը ուժեղացնելու համար: ...

ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Քննելով Դաշնակցութեան մասնակցումի խնդիրը ազգային-կուլտուրական հիմնարկութիւններու եւ գործերու մէջ, եւ ուշադրութեան առնելով այդ առիթով արտայայտուած բոլոր հայեացքները, ... Ընդհանուր Ժողովը որոշեց՝

ա) Դաշնակցութիւնը, իբրեւ կուսակցութիւն, պիտի չմասնակցի ազգային-կուլտուրական եւ հասարակական հիմնարկութիւններու մէջ.

բ) Կուսակցութեան անդամները, իբրեւ անհատ քաղաքացիներ, կարող են մասնակցել այդ հիմնարկութիւններուն, առանց հակասելու կուսակցութեան սկզբունքներուն:

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ
(Դաշնակցական պատգամաւորներու դիրքը)

Ընդհ. Ժողովի կողմէ գծուած ուղղութեամբ՝ կուսակցական մարմիններու հետ՝ պիտի հետեւին նաեւ Թուրքիոյ, Ռուսիոյ եւ Պարսկաստանի պարլամենտներու դաշնակցական պատգամաւորները:

Պատգամաւորներու նկատմամբ Ընդհ. Ժողովը կը հրահանգէ նաեւ՝

1) Գործել հաւաքական խորհրդակցութեամբ ու պատասխանատուութեամբ.

2) Սերտ յարաբերութիւն պահել զիրենք ընտրող շրջաններու Կ. Կոմիտէներու հետ եւ փոխադարձ տեղեկութիւններ ստանալ.

3) Իրենց պարլամենտական քայլերու համար խորհրդակցիլ իրենց ներկայացուցած շրջանի բարձր մարմնի հետ....

... 7) Պատգամաւորներուն, ինչպէս նաեւ դաշնակցականներուն առհասարակ՝ կ'արգիլուի մտնել նախարարական կազմերու մէջ.

***ԾԱՆՕԹ:**- Այս որոշումը չի վերաբերիր յեղափոխական եւ բացառիկ-անցողական շրջաններուն: Իր ներկայացուցած շրջանի ղեկավար մարմիններու համաձայնութեամբ՝ դաշնակցական ընկերները կարող են մտնել ժամանակաւոր կառավարութեան մէջ՝ դադրելով նոյն օրէն կուսակցութեան գործօն անդամ ըլլալէ:*

8) Ընդունելով որ դաշնակցական պարլամենտական ֆրակցիան մարմին կը կազմէ, Ընդհ. Ժողովը պարտք կը դնէ անոնց վրայ՝ իբրեւ այդպիսին՝ [իր] ներկայացուցչի միջոցով մասնակցել Ընդհ. Ժողովին եւ ներկայացնել հաշուետուութիւն:

III. 6ԲԳ ԸՆԳՀ. ԺՈՂՈՎ (1911) - ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԷՆ

ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

6րդ Ընդհանուր Ժողովը, քննելով Կուսակցութեան ներքին՝ ազգային գործունէութեան քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ մեր բռնելիք դիրքը նոյն ասպարէզին վրայ գործող հայ կուսակցութիւններուն հանդէպ, ...

Կ'որոշէ.

... 2) Հ.Յ. Դաշնակցութիւնը իբր կուսակցութիւն եւ ամբողջութիւն չի մասնակցիլ ազգային մշակոյթի գործերուն եւ հիմնարկութիւններուն: Կուսակցական շրջաններն ու անհատներն են, որ կրնան մասնակցիլ անոնց՝ առանց հակասելու կուսակցութեան սկզբունքներուն, միշտ մընալով սակայն ներշնչողի, ուղղութիւն տուողի, գործակցողի եւ ո՛չ թէ տնօրինողի կամ կամ միակ գործադիրի դերին մէջ:

3) Կրօնի եւ անոր հետ կապուած դաւանական խնդիրներուն ու հաւանապատասխան հաստատութիւններուն հանդէպ՝ դաշնակցականները չէգոք դիրք կը բռնեն, ապահովելով ու յարգելով ամէն մարդու խղճի ազատութիւնը, պատշաճ ու համբերատար վերաբերում ցոյց տալով ամէն տեսակի դաւանանքներու ու կրօնական զգացումներու հանդէպ:

4) Երեսփոխանութեան թեկնածուները կ'անուանուին, եթէ հնար է, Շրջանային Պատգ. Ժողովէն, հակառակ պարագային՝ Շրջանին ղեկավար մարմինէն (Պոլսոյ մէջ՝ խորհրդակցութեամբ՝ Բիւրօյին), որ այդ առթիւ կու տայ ընտրական հրահանգները: Երեսփոխան ընկերները համարատու են Շրջան. Պատգ. Ժողովին:

5) Երեսփոխան ընկերները Ազգային ընդհանուր եւ Գաւառային ժողովներու մէջ կը ներկայանան իբրեւ դաշնակցական խմբակցութիւն:

6) Դաշնակցական ղեկավար Մարմիններու (Բիւրօ, Կ. Կոմիտէ) անդամները, ինչպէս նաեւ խորհրդարանի երեսփոխանները եւ կէսպաշտօնական թերթերու խմբագիրները չեն կրնար մտնել Ազգային կեդր. եւ գաւառ. վարչութիւններու մէջ (քաղաքական ժողովներ):

Ատոնցմէ դուրս ուրիշ ընկերներ իրենց անձնական պատասխանատրութեան տակ միայն կրնան անդամակցիլ վարչական մարմիններուն, կանխաւ հաւանութիւն առնելով իրենց Ազգ. Խորհրդարանական խմբակցութեան կամ Շրջանի ղեկավար մարմին: Անոնց անդամակցութիւնն ալ կ'արգիլուի, երբ վնասակար դատուի կուսակցութեան տեղական գործերուն համար:

7) Ազգային բոլոր այդ մարմիններուն մէջ աշխատող մեր ընկերները պոքր կը կազմեն յարատեւ գործունէութեան ընդունակ ազատական [ժողովրդավար] տարրերու հետ:

8) Ազգային մշակոյթի հասունցած անմիջական պահանջներուն համար կը մշակուի յատուկ պլատֆորմ, որով պարտին առաջնորդուիլ դաշնակցական երեսփոխանները:

IV.- 7ԻԳ- ԸՆԳՂ. ԺՈՂՈՎ (1913) - ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԷՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

Ընդհ. Ժողովը, նկատի ունենալով կուսակցութեան գործունէութեան ծաւալումը եւ գործնական կեանքին մէջ ունեցած արդէն հասունցած կազմակերպական պահանջները, հարկ տեսաւ հետեւեալ փոփոխութիւնները ներմուծել Կանոնագրին մէջ.

1) Հ.Յ. Դաշնակցութիւնը ունի երեք Բիւրօ. ա) Հայաստանի Բիւրօ,

որու շրջանն է Թիւրքիոյ վեց հայաբնակ եւ Տրապիզոնի նահանգները ճանիկի հետ:

բ) Արեւմտեան, որու շրջանն է Արեւմտեան Թիւրքիա եւ գաղութները:

գ) Արեւելեան, որուն շրջանն է Ռուսիա եւ Պարսկաստան:

Ծանօթ.- Առաջիկայ ժողովական շրջանի համար Բիւրօները կը միացնեն իրենց վրայ՝ Բիւրոյի եւ պարասիսանսարու մարմնի (կանոնագրով նախարեսուած) պարպականութիւններն ու իրաւունքները:

... 3) Օսմ. Խորհրդարանի Դաշնակցական հատուածը պարտաւոր է առաջնորդուիլ Արեւմտեան Բիւրոյի որոշումներով: Այդ հատուածին ներկայացուցիչը Խորհրդակցական ձայնով կը մասնակցի նոյն Բիւրոյի նիստերուն:

Ծանօթ.- Նկատելով, որ կուսակցութեան արտաքին յարաբերութիւններուն մէջ տեղի կ'ունենան թիւրիմացութիւններ, շնորհիւ այն պարագային, որ Կ. Պոլսի Կեդր. Կոմիտէն օտարներու կողմէ սր-խալմամբ կը համարուի իբրեւ Թիւրքիոյ Դաշնակցութեան մարմինը,

Ընդհ. ժողովը կ'որոշէ.

Կ. Պոլսի Կեդր. Կոմիտէն անուանել Բիւքանիոյ կամ Մարմարայի Կեդր. Կոմիտէ, թողնելով պատրկան մարմինն, որ այդ երկու անուններէն մէկը ընտրէ:

ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Դաշնակցութեան Խորհուրդը կը կազմեն երեք Բիւրօներու եւ Ամերիկայի Կեդր. Կոմիտէի ներկայացուցիչները:

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ

- Ոստիկանութեան կամ պետութեան վարչական կազմին մէջ պաշտօն ստանձնող դաշնակցականները դադրած կը համարուին կուսակցութեան մէջ իրենց անդամակցութենէն:

- Երբ ռեւ. ընկեր որեւէ առթիւ թոյլ կու տայ իրեն գործել կամ արտայայտուիլ այնպիսի եղանակով մը, որ կը հակասէ կուսակցութեան ԾՐԱ-ԳՐԻՆ, ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻՆ կամ ԿԱՆՈՆԱԳՐԻՆ, կամ որ տեղի կրնայ տալ ոչ-բաղձալի թիւրիմացութիւններու, պատկան մարմինը պարտաւոր է անյապաղ ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ բաժնելու եւ ճշդելու համար, տուեալ պարագային մէջ, կուսակցութեան պատասխանատութիւնը:

Վ.- ՑՐԳ ԸՆԳՀ. ԺՈՂՈՎ (1914) - ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԷՆ

ԲԻՒՐՕՆԵՐՈՒ ՎԵՐԱԿԱԶՍՈՒԹԻՒՆԸ

Ընդհանուր Ժողովը, քննելով գոյություն ունեցող երեք Բիւրօներու հարցը, եւ նկատելով որ մեր գործունէութեան կեդրոնը պէտք է քայլ առ քայլ դէպի Երկիր փոխադրել,

Որոշեց՝

1) Պահել Հայաստանի Բիւրօն, եւ անոր իրաւասութեան ենթարկել այն շրջանն եւս, որ մինչեւ այժմ յատուկ էր Արեւմտեան Բիւրոյին.

2) Ջնջել Արեւմտեան Բիւրօն եւ Պոլսոյ մէջ ունենալ Հայաստանի Բիւրոյի հատուած.

3) Պահել Արեւելեան Բիւրօն, իր այժմեան կանոնական իրաւունքներու սահմանին մէջ.

4) Կազմել Հայաստանի Բիւրօն տասն անդամէ, Երկիր՝ 6, Պոլսոյ հատուած՝ 3, եւ Ժրննէ՝ 1: Արեւելեան Բիւրօն՝ 7 անդամէ - 5ը ընտրուած Ընդհանուր Ժողովէն, 2ը Կովկասեան Ռայոնական Ժողովէն:

Ծանօթ.- Բիւրօներու իրաւասութեանց եւ ընտրութեանց մասնաւաստութիւնները ձեռնարկուած են Ընդհանուր Ժողովի արչանագրութեանց մէջ:

48

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ 13ՐԳ ԸՆԳՀ. ԺՈՂՈՎԷՆ (1938)

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՍԱՍՈՒԼ

Լսելով Բիւրոյի զեկոյցը դաշնակցական մամուլի (օրաթերթ, շաբաթաթերթ, ամսագիր եւն.) մասին եւ նկատի առնելով մատնանշուած թերութիւնները անոր բովանդակութեան, ուղղութեան, գաղափարական միութեան եւ նիւթական մատակարարութեան տեսակէտէն, ԺԳ Ընդհ. Ժողովը կ'որոշէ.

1. Առանձին ուշադրութեամբ հետեւիլ, որ դաշնակցական տեղական թերթերը չհաթարեն կուսակցութեան գաղափարական միօրինակութիւնը եւ մանաւանդ չհակասեն կուսակցութեան ծրագրին, գործելակերպին եւ գործնական քաղաքականութեան:

2. Հակել, որ մեր մամուլը առաջնահերթութիւն չտայ տեղական հարցերուն՝ ընդհանուր կուսակցական հարցերուն հանդէպ: Դաշնակցական ամէն թերթ, ուր եւ ինչ պայմաններու տակ ալ իրատարակուի, պարտաւոր է իր մտահոգութեան առարկան դարձնել Երկրի ներսը տեղի ունեցող երեւոյթներու լուսաբանութիւնը եւ Երկրի նկատմամբ եղած կարգադրութիւններու, ինչպէս եւ Սփիւռքի հայութիւնը շահագրգռող հարցերու, կուսակցական ընդհանուր գաղափարներու եւ առաջադրութիւններու պրոպագանդը եւ նոր սերունդի քաղաքական դաստիարակութիւնը ազգային եւ յեղափոխական ոգիով...

3. Կուսակցական մամուլը դնել Բիւրոյի եւ պատկան Կ.Կ.ի կատարեալ հակակշիռին տակ: Բիւրօն իրաւունք ունի անսաստող թերթերու (օրաթերթ կամ ուրիշ որեւէ պարբերական) դէմ վճռական միջոցներ ձեռք առնել, մինչեւ խմբագրին հեռացումը, թերթին խափանումը եւ Կ.Կ.ին լուծումը: Բիւրոյի այս իրաւունքը կը տարածուի նաեւ դաշնակցական անհատներու իրատարակած ամէն կարգի պարբերականներու վրայ:

4. Այն Կեդր. Կոմիտէները, որոնք չեն լրացներ կուսակցական սակը, իրաւունք չունին կուսակցական թերթ հրատարակելու:

5. Դաշնակցական անհատները իրաւունք չունին թերթ կամ որեւէ պարբերական հրատարակելու՝ առանց շրջանի Կ.Կ.ի հաւանութեան եւ Բիւրոյի վաւերացման:

6. Կեդր. եւ Սեկուսի Կոմիտէները պատասխանատու են իրենց շրջանին մէջ հրատարակուող կուսակցական անհատական թերթերու բովանդակութեան համար:

... 9. Կուսակցական մարմիններու կամ անհատ ընկերներու հրատարակած բոլոր օրկանները իրենց բարոյական կողմով կը կազմեն Կուսակցութեան սեփականութիւնը. տնտեսական կողմով միայն կրնան սեփականութիւն ըլլալ անհատ դաշնակցականներու:

... 11. Կուսակցական որեւէ թերթի մէջ լոյս տեսած յօդուած մը կը նկատուի կուսակցական համայն մամուլի սեփականութիւն: Դաշնակցական թերթերը կրնան արտատպումներ ընել՝ առանց աղբիւրը յիշելու:

...

ԲԱՆԱԽՈՐ ՊՐՈՊԱԳԱՆԴ

Քննելով բանաւոր պրոպագանդի խնդիրը եւ նկատի առնելով այդ պրոպագանդը հայ ժողովուրդի եւ Դաշնակցութեան համար ստեղծուած նոր պայմաններուն յարմարցնելու անհրաժեշտութիւնը,

Ընդհ. ժողովը կ'որոշէ՝

1. Յանձնարարել Բիւրոյին, որ կազմէ բանաւոր պրոպագանդի մանրամասն ծրագիր մը այն բոլոր քաղաքական-ընկերային եւ տնտեսական հարցերու մասին, որոնց ծանօթութիւնն անհրաժեշտ է հայ ժողո-

վորդին եւ մեր շարքերուն՝ Հ.Յ.Դ. ծրագիրը, գործելակերպը եւ ընթացիկ քաղաքականութիւնը հասկնալու համար...

2. Յանձնարարել Կեդր. եւ Սեկուի Կոմիտէներուն՝

ա. Հիմ ունենալով Բիւրոյի կազմած պրոպագանդի ընդհանուր ծրագիրը, որոշել այն նիւթերը, որոնք օրուան հրատապ խնդիրներու հետ միասին պէտք է բանաւոր պրոպագանդի առարկան կազմեն մէկ Շրջանային ժողովէն մինչեւ միւսը.

բ. Մշակել գործիչ ընկերներու համար ուղեցոյց-հրահանգներ՝ խըմբական, դասախօսական եւ հրապարակային ժողովներու մէջ բանաւոր պրոպագանդը սիստեմատիկ ձեւով առաջ տանելու.

գ. Հոգ տանիլ, որ բանաւոր պրոպագանդը հիմնական նիւթերու ընտրութեան տեսակէտէն միատեսակ ըլլայ շրջանի բոլոր վայրերուն մէջ.

դ. Հետեիլ, որ կուսակցական կեդրոնական օրկանին մէջ արծարծուած քաղաքական եւ ընկերային խնդիրները խմբական ընթերցանութեան եւ մտքերու փոխանակութեան առարկայ դառնան.

ե. Շրջանի այն վայրերուն մէջ, ուր որոշ թիով մտաւորական եւ ուշիմ ընկերներ կան, կազմել առանձին խմբակներ, որոնց նպատակը պէտք է ըլլայ գործօն հետաքրքրութիւն առաջ բերել այդ տարրերու մէջ դէպի կուսակցութեան ընդհանուր առաջադրութիւնները, բարձրացնել անոնց հասունութիւնը Կուսակցութեան ծրագրի, տակտիկի եւ գործնական քաղաքականութեան ըմբռնողութեան մէջ եւ այդպիսով զանոնք օգտագործելի դարձնել բանաւոր պրոպագանդի համար թէ՛ իրենց բնակավայրին եւ թէ՛ շրջանի ուրիշ վայրերուն մէջ:

...

Ձարկ տալ տեսական խնդիրներու ուսումնասիրութեան ընկերային եւ քաղաքական մարզերու մէջ: Շարքային մտաւորականութեան մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձնել ընկերվարական եւ համայնավար այլեւայլ հոսանքներու ուսումնասիրութիւնը:

49

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ 18ԲԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԷՆ (1963)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԶՕՐԱՅՈՒՄ

Հ.Յ.Դ. 18րդ Ընդհ. ժողովը հանգամանօրէն եւ երկարօրէն քննեց կազմակերպութեան ներկայ գոյավիճակը, անոր [ցուցաբերած] թոյլ կէ-

տերը, ինչպէս նաեւ ուժն ու կարողութիւնը, եւ գտաւ, որ իր ամբողջութեան մէջ... ան ուժեղ է, ուռնացած, յաղթանակներ արձանագրած: Նոյն ատեն, կեանքի, գործունէութեան նիւթի ու ձեւի բերումով առաջացած են թուլացումներ, հարցերուն եւ ընկերներուն հանդէպ մօտեցման անմտերի ձեւեր,... կանոնագրի ու կարգապահութեան կարգ մը աններելի խախտումներ:

18րդ Ընդի. ժողովը կ'արձանագրէ նաեւ շարքերու միահամուռ փափաքը նոր էջ մը բանալու Դաշնակցութեան սփիւռքահայ տարածքին վրայ ունեցած գործունէութեան մէջ, անտեսելու անցեալի տկարութիւնները, միակամ լծուելու կազմակերպութեան ուժեղացման, աշխատանքներուն եւ անոր բարոյական նկարագրի վերակերտումին:

Առ այդ, 18րդ Ընդի. ժողովը կը յայտարարէ յառաջիկայ քառամեակը կազմակերպութեան ամրապնդման եւ հայ դատի հետեւողական հետապնդման քառամեակ:

Կազմակերպութեան հզօրացման համար կ'առաջարկուին զանազան միջոցներ, զորս Ընդի. ժողովը կ'արձանագրէ որպէս թելադրանքներ յառաջիկայ Բիւրոյին եւ Կեդր. Կոմիտէներուն, աստիճանաբար գործադրելու համար զանոնք, ամէն ճիգ թափելով՝ որ առաւելագոյնը ձեռք բերուի յառաջիկայ քառամեակի ընթացքին:

1. Ուժեղացնել շարքերու նախաձեռնութեան ոգին, կարգապահական բծախնդրութիւնն ու ընկերական սէրն ու նուիրումը... [ի հարկին] նաեւ դիմելով կանոնագրի տրամադրութեանց:

2. Շրջաններուն մէջ կազմակերպել կուսակցական դպրոցներ, պատրաստելու համար տեղական գործիչներ, քարոզիչներ, շարքերուն կուսակցական դաստիարակութեան նպաստող տարրեր:

3. Կազմակերպել անհատ ընկերներու ու խմբական փոխ-այցելութիւններ, երկրէ երկիր:

4. Կազմակերպել Հ.Յ.Դ. Երիտասարդացներու եւ ուսանողականներու համագումար, իրար մօտ բերելու, իրար ծանօթացնելու համար Սփիւռքի տարածքին վրայ ցրուած դաշնակցական երիտասարդութիւնը:

... 8. Բիւրօն, Կ.Կ.երու օժանդակութեամբ, պարտաւոր է տրամադրելի ուժերու զօրաշարժ կատարել... կազմել մասնագէտներէ բաղկացած մասնաւոր յանձնախումբեր, որոնք հիմնական ծրագիրներ պիտի գծեն - տնտեսական, քաղաքական եւ այլն - աստիճանաբար գործադրելի:

... 12. Այս բոլորի իրականացման համար անհրաժեշտ են նաեւ տընտեսական լայն միջոցներ:

18րդ Ընդի. ժողովը այս ուղղութեամբ կը պահէ 17րդ Ընդի. ժողովի որոշումը՝ առաջացնելու մեծ դրամագլուխ մը, որուն եկամուտը պիտի ապահովէ կուսակցութեան հիմնական ծախքերը:

... 14. Երիտասարդութիւնը գործի մղելու համար, մասնատրաքար հիւսիսային եւ հարաւային Ամերիկաներու մէջ, կազմակերպել հայ դատի հետապնդման քարոզչական եւ քաղաքական կեդրոնական մարմին մը, ինչպէս նաեւ ցանց մը մասնաճիւղերու: Պատրաստել սակայն հիմնական եւ գործնական իրաւասութիւնները ճշդող ծրագիր մը հայ դատի հետապնդման ձեւերուն եւ տրամադրել պէտք եղած պիտճէն, իրական եւ գործնական չափերով: Այդ պիտճէի իրականացման ձեւերու մասին եւս մտածել, եւ ջանալ որ տեղական միջոցներով հայթայթուի ան...

50

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ 19ԲԳ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԷՆ (1967)

**ԹԵԼԱԳՐԱՆՔՆԵՐ՝ ՇԱՐՔԵՐՈՒ ԵՒ ՍԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐ-
ԳԱՅՄԱՆ ՍԱՄԻՆ**

Կուսակցութեան մը յաջորդականութիւնը պահպանելու եւ յարատեւութիւնը ապահովելու համար՝ անհրաժեշտ է որ անոր շարքերը թարմանան եւ խտանան երիտասարդ տարրերով: Առ այդ, մեր Կուսակցութեան համար առաջնակարգ եւ հիմնական կարեւորութիւն ունի երիտասարդութիւնը դարձնել մեր Սարմիններու յատուկ ուշադրութեան եւ հոգատարութեան առարկայ: Այդ առաջադրանքը իրակացնելու նպատակով՝ կ'առաջարկուի.

1. Երիտասարդութիւնը գաղափարականապէս պատրաստելու եւ անոր ազգային ոգի ներշնչելու համար, գործադրել Կուսակցութեան նիւթական եւ բարոյական բոլոր հնարարութիւնները. ի հարկին՝ այդ նպատակին հասնելու համար ստեղծել նոր միջոցներ:

2. Երիտասարդութեան մօտենալ նկատի առնելով անոր հոգեբանութիւնը, մտայնութիւնը, պահանջներն ու ձգտումները: Արդիականացնել դաստիարակութիւն տալու ձեւերը...

3. Երիտասարդութեան ներշնչել անոր վերապահուած պատմական առաքելութիւնը՝ թէ՛ կուսակցական, թէ՛ ազգային եւ թէ՛ քաղաքական մարզերուն մէջ՝ ապագայ դրօշակիրներ ու ղեկավարներ ըլլալու կոչումը:

4. Քաղաքական եւ ազգային մարզերուն մէջ լայն ասպարէզ տալ երիտասարդութեան, ինչպէս եւ քաջալերել անոր մուտքը՝ կուսակցական Սարմիններու մէջ:

5. Ազատ ձգել՝ որ երիտասարդութեան մօտ ծնի եւ զարգանայ նախաձեռնութեան ոգին...

6. Երիտասարդութեան մէջ աշխատելու համար՝ յոյժ կարեւոր է անոնցմէ իսկ պատրաստել կարող եւ աշխատունակ գործիչներ: Այդ տեսակէտէն՝ կարեւորութիւն կը ներկայացնէ հիմնուած Մեմինարը, գոր պէտք է ընդարձակել, տեսականացնել եւ արդիականացնել: ...

Հ.Յ.Գ. ՀԻՄՆԱԳՐԱՄ

Լսելէ ետք Բիւրոյի տեղեկագիրը, շրջաններէ եկած բանաձեւերն ու առաջարկները, ինչպէս նաեւ ընկերներու տեսակէտներն ու թելադրանքները, Հ.Յ.Գ. 19րդ Ընդհ. ժողովը կ'որոշէ.

1. Շարունակել Հ.Յ.Գ. Հիմնադրամի հանգանակութիւնը անհրաժեշտ թափով ու հետետողականութեամբ, ամբողջացնելու համար շրջաններու վրայ դրուած սակերը՝ յառաջիկայ երկու տարիներու ընթացքին...

51

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ 20ԲԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԷՆ (1972)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՂԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

ա. Հ.Յ.Գ-աշնակցութեան 20րդ Ընդհ. ժողովը, մեծ կարեւորութեամբ եւ բազմակողմանիօրէն քննելէ ետք մեր Կազմակերպութեան ներկայ վիճակը, կուգայ այն եզրակացութեան, թէ Հ.Յ.Գ-աշնակցութիւնը, ներքին կազմակերպական տեսակէտէ, պէտք ունի վերականգնումի եւ վերակառուցման, որ առանց ընկերական գոհողութեան եւ անանձնական նուիրումի, մեր շարքերուն եւ մեր ղեկավարութեան մէջ՝ մեր Կազմակերպութիւնը կրնայ պարպուիլ իր բովանդակութենէն եւ հայ ժողովուրդը այդպէսով կրնայ կորսնցնել իր Գ-ատի հետապնդման աշխատանքի յենարաններէն եւ առաջնորդներէն գլխատրագոյնը:

Այս խոր գիտակցութեամբ, 20րդ ընդհ. ժողովը յաջորդ քառամեակը կը յայտարարէ Հ.Յ.Գ-աշնակցութեան վերակազմութեան եւ վերակառուցման շրջան, որու տեւողութեան Հ.Յ.Գ. Բիւրօն, բոլոր Մարմինները եւ ընկերները պարտաւոր են ծրագրուած եւ հետետողական աշխատանք տանիլ՝ Կազմակերպութեան կառոյցը, ներքին միակամութիւնն ու ընկերականութիւնը, գաղափարական ոգին եւ կարգապահութիւնը, ինչպէս նաեւ դաստիարակութիւնը ամուր հիմներու վրայ դնելու համար:

բ. Կարենալ ծառայելու համար հայ ժողովուրդի հիմնական նպատակներու իրագործման, պէտք է վերացուին սփիւռքեան պայմաններու

պատճառով ստեղծուած տկարացումները, ընկրկումները... Այդ ամբողջը պէտք է կատարուին կենդանի ու վարակիչ օրինակովը ղեկավարութեան, որ դուրս [պիտի գայ կուսակցական նեղ մտահոգութիւններէ մղուած գործունէութեան սահմաններէն]...

[գ.] Այս վերակառուցման աշխատանքին մէջ... Բիւրօ թէ Կեդրոնական ու Մեկուսի Կոմիտէներ պէտք է աշխատանքի լայն ասպարէզ բանան ընկերներու առջեւ, տալով մեր շարքերուն իրական օրակարգ ու աշխատանք:

դ. Այս աշխատանքի ընթացքին պէտք է ունենալ կուսակցական գործունէութեան շարունակականութեան գիտակցութիւնը: Մարմինները պէտք է ծրագրեն ու գործեն ... առաջադրուած գործին ամբողջութիւնը նկատի առնելով: Ամէն Մարմին պէտք է շարունակէ իր նախորդին գործը, նկատի ունենալով իր նախորդին տուած որոշումները եւ սկսած աշխատանքը: Անհրաժեշտ է, որ Մարմնէ Մարմին փոխանցուի կատարուելիք գործերու թղթածրար մը...

ե. Բացի աշխատանքի շարունակականութենէն, պէտք է նաեւ ստեղծուի ղեկավար տարրերու շարունակականութիւն, այն իմաստով՝ որ գործէ դադրած Մարմնի անդամները պէտք է շարունակեն օգտագործուիլ աշխատանքներու իրագործման համար: Կազմի մը ղեկավարութիւնը երբեք պէտք չէ սահմանափակուի գործադիր Մարմնի անդամներով:

զ. Կազմակերպական հզօրացումը չի նախատեսեր տեսակէտներու, մտածելակերպի եւ գործելակերպի նոյնացում, սակայն նման տարբերութիւնները ընկերներու միջեւ պէտք չէ վերածուիլ անհատական կողմնակալութիւններու, նախասիրութեանց կամ հակակրանքներու:

է. Կուսակցութեան զօրեղացման այս ճամբուն վրայ՝ Կազմակերպութիւնը հաւանաբար պէտք ունենայ դիմելու կանոնագրական միջոցառումներու անոնց հանդէպ, որոնք իրենց քարացած կողմնակալութեամբ կամ մտածելակերպով արգելք կը հանդիսանան այս վերակազմութեան գործին: Նման պարագաներու պէտք է խստօրէն, սակայն արդարօրէն ու անկողմնակալօրէն գործադրել կանոնագրային տրամադրութիւնները:

ը. Մեր Կազմակերպութեան ապակեդրոնական ու ժողովրդավարական կառոյցը թոյլ կուտայ, որ զանազան շրջաններն ու կազմերը գործեն ըստ իրենց պայմաններուն. սակայն ապակեդրոնացում եւ ժողովրդավարութիւն համազօր չեն անիշխանութեան կամ ինքնիշխանութեան. այլ կը ձգտին ստեղծել կարելիութիւններ՝ որպէսզի առանց կաշկանդումի Կազմակերպութիւն եւ անհատ կարողանան իրենց միջավայրի ... պայմաններու համեմատ կատարել իրենց լաւագոյնը՝ ընդհանրական նպատակի մը իրագործման համար...

թ. Անհատին արժէքը [չի կայանար անոր կողմէ ընդհանրական գործին բերուած որակական կամ քանակական արժէքին մէջ, այլ]

անհատի կարողական տուեալներու ամբողջական նուիրաբերումին... այս հիման վրայ է որ պէտք է մեր Կազմակերպութիւնը գնահատէ իր ընկերները:

ժ. Բիւրօն, իբրեւ գործադիրը մեր ընդհանրական որոշումներուն, պէտք է դառնայ ամէնօրեայ ներկայութիւն մեր կազմակերպական կեանքին մէջ եւ համադրող ուժ՝ ապակեդրոնացման հիման վրայ գործող մեր Մարմիններուն համար: Բիւրօն պէտք է նաեւ հսկէ, որ անվթար պահուիմ մեր Կազմակերպութեան կանոնական հիմնական սկզբունքները, բարքերը եւ ասանդութիւնները՝ բոլոր շրջաններուն մէջ:

Ժա. Բացի վերոյիշեալ հիմնական ու սկզբունքային դիրքորոշումէն, Հ.Յ.Գ. 20րդ Ընդհ. ժողովը կազմակերպական ուժեղացման համար անհրաժեշտ կը տեսնէ հետեւեալները.-

1. Գործիչներու դրութեան հաստատում՝ այն շրջաններուն մէջ ուր անհրաժեշտ է.

2. Աշխատանքի բաժանում՝ կազմերու եւ Մարմիններու մէջ.

3. Գաղտնապահութեան վերականգնում մեր շարքերուն մէջ.

4. Կազմութիւնը կուսակցական ընդհանուր վիճակագրութեան մը, Հ.Յ.Գ-աշնակցութեան մասնագիտական, քաղաքական եւ վարչական ուժերը գնահատելու եւ Գ-աշնակցութեան ուժեղացման ու Հայ Դատի հետապնդման աշխատանքներուն մէջ՝ զանոնք լաւագոյնս օգտագործելու առաջադրանքով:

ՍՄՍՈՒԼ ԵՒ ԲԱՐՈՁՉՈՒԹԻՒՆ

Հ.Յ.Գ. 20րդ Ընդհ. ժողովը ... կը հաստատէ, թէ՛

1. Մեր պաշտօնաբերքերը առհասարակ եղած են հետեւողական 19րդ Ընդհ. ժողովի որոշումներուն եւ Հ.Յ.Գ. Բիւրոյի մամլոյ ուղեցոյցներուն. ազգային եւ կազմակերպական իրենց դերակատարութիւնը փորձած են արժեւորել կարելի բժախնդրութեամբ:

2. Անոնցմէ ոմանք, սակայն, արժանի կարեւորութեամբ նկատի չեն ունեցած Հ.Յ.Գ. պաշտօնաբերք «Ա.Շ.-Գրօշակ»ի միջոցաւ արծարծուած հանրային, գաղափարական եւ առհասարակ ընկերային-քաղաքական հարցերը, իրենց կարգին արձագանգելու համար անոնց՝ բացատրական կամ վերլուծական խմբագրականներով, յօդուածներով եւսայլն: ...

3. Մեր թերթերուն մէջ ակնբախ դարձած է բացակայութիւնը հանրային, քաղաքական, կազմակերպական-գաղափարական, ընկերային խնդիրներ շօշափող որակատու գրութիւններու, նաեւ տեղական ու միջազգային հարցեր ընդգրկող յօդուածներու...

Քննելով այս տկարութեանց դարձանումի կերպերն ու միջոցները,

ինչպես նաև մեր թերթերու որակը բարձրացնելու առաջադրանքը, 20րդ Ընդհ. ժողովը կ'որոշէ.-

ա. Ազատ արտայայտութեան եւ դրական ու շինիչ քննադատութեան իրաւունք տալ մեր մամուլին, այն հասկացողութեամբ, որ մեր հիմնական սկզբունքներուն, Կազմակերպութեան գաղափարական համոզումներուն եւ Ընդհ. ժողովներու որոշումներուն անհաշտ քայլեր չառնուին:

բ. Ընդհ. ժողովը մեր մամուլի հանրային դերակատարութեան համար բարենպաստ կը նկատէ Դաշնակցական մամուլի անկաշկանդ արտայայտութիւնն ու ազատ քննադատութիւնը՝ երբ հանրային կեանքի զանազան ճակատներուն վրայ կամ մեր իսկ անմիջական շրջապատին մէջ գործուած թերիներ ու սխալներ, սրբագրելի կամ դատաւարտելի երեւոյթներ կան, կամ հայութեան տեղական թէ ընդհանուր շահերուն վնասող քայլեր կ'առնուին: Էական է, որ մեր խօսքը ըլլայ միշտ առարկայական տուեալներով հիմնաւորուած, յատկանշուի Դաշնակցական մամուլին վայել լրջութեամբ ... դաստիարակիչ բնոյթ ունենայ եւ հանրային կարծիքը լուսաբանէ ճշմարտութեան եւ արդարամտութեան ոգիով:

... դ. Դարմանելու համար ուժերու անձկութեամբ ստեղծուած տկարութիւնը մեր մամուլին, ինչպէս նաև նպաստելու համար առողջ, ներդաշնակ եւ ազդու [դառնալու] նպատակին, Հ.Յ.Դ. 20րդ Ընդհ. ժողովը պարտականութիւն կուտայ Հ.Յ.Դ. Բիւրոյին՝ ստեղծելու «Հ.Յ.Դ. Մամուլի Դիւան» մը, որուն դերը պիտի ըլլայ՝ 1. կարելի առաւելագոյն չափով ինքնագիր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր եւն. տրամադրել մեր պաշտօնաթերթերուն. 2. հսկել մեր թերթերու համակազմակերպական-գաղափարական ուղղութեան վրայ... Բիւրոյի ճամբով:

ե. 20րդ Ընդհ. ժողովը կուսակցական պարտաւորութեան տակ կը դնէ դաշնակցական գրիչները՝ աշխատակցելու Բիւրոյի օրկան Ազգակ-Շաբաթօրեակ»ին... կ'որոշէ «Արմինիլըն Բիվիու»ն վերածել համակազմակերպական եռամսեայի, իբրեւ քարոզչական օտարալեզու հրատարակութիւն... Պարտականութիւն կուտայ Հ.Յ.Դ. Բիւրոյին՝ ամբողջացնելու «Դրօշակ»ի հին հաւաքածոյին վերահրատարակութիւնը...

52

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ 21ՐԴ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԷՆ (1977)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՈՒԺԵՂԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

... Հ.Յ.Դ. Բիւրօն արդիւնաբեր եւ օգտաշատ ձեւով կրնայ գործել՝ երբ շրջաններու մարմինները, ընկերները, գործիչները, խմբագիրները,

լաւագոյնս ըմբռնած են Հ.Յ.Գաշնակցութեան ապակեդրոնացման իմաստը եւ ըստ տեղական պայմաններուն գործելու իրենց իրաւունքը կը գործածեն Գաշնակցութեան ընդհանրական որոշումներուն լրի գործադրութեան նպատակին համար ...

Այս պատճառներով ալ 21րդ Ընդհ. ժողովը կը պահանջէ բոլոր մարմիններէն եւ ընկերներէն ամէն գնով գործադրել 20րդ Ընդհ. ժողովի կողմէ այս ուղղութեամբ տրուած որոշումները, որոնք կը վերաբերին կազմակերպութեան ուժեղացման՝ ընդհանրապէս:

... Վերահաստատելով 20րդ Ընդհ. ժողովին կողմէ տրուած վերոյիշեալ որոշումները, 21րդ Ընդհ. ժողովը կը հաստատէ նաեւ, որ այս որոշումներուն գործադրութեան իրենց ճիգին մէջ, ժողովներն ու մարմինները պէտք չէ վարանին արմատական միջոցներու դիմելէ, հարկ եղած պարագային յանձն առնելով շարքերու նօսրացումը, ի խնդիր ոգիի, բարքերու, գաղափարականի, ասանդութեանց եւ կանոնագրի անվրթար պահպանման:

Հ.Յ.Գաշնակցութեան ուժը իր ընկերներու թիւն աւելի անոնց գաղափարականութեան, նուիրումի ու զոհաբերութեան ոգիին մէջ է:

ՇԱՐՔԵՐՈՒ ՔԱՂԱՔԱ-ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

21րդ Ընդհ. ժողովը կ'որոշէ.

1. ... որ Բիւրօն իրեն համար յարմար նկատած միջոցներով անմիջապէս մշակէ քաղաքական թէ գաղափարական դաստիարակութեան յատուկ ծրագիր, զայն յղելու համար կուսակցական միաւորներուն՝ առ ի գործադրութիւն: Քաղաքական դաստիարակութեան ծրագիրը պէտք է պարունակէ բոլոր այն նիւթերը, որոնց տեղեակ պէտք է ըլլայ միջին զարգացման տէր ամէն մէկ ընկեր: Ինչ կը վերաբերի գաղափարական դաստիարակութեան, անիկա պէտք է հիմնուած ըլլայ Գաշնակցութեան ծրագրի տառին ու ոգիին վրայ ու նպաստէ ընկերներու ... քաղաքական մտածելակերպի զարգացման ու հասունացման: Գաղափարական դաստիարակութիւնը պէտք չէ ունենայ տեսաբանական եւ դաւանամուլական պարտադիր կրթութեան բնոյթ, այլ առիթ ընծայէ անտեղեակ մեր ընկերներու բազմութեան, որ տրամաբանութեան եւ համոզումի ճամբով՝ գիտակցօրէն իւրացնեն գաղափարական մեր հիմնական սկզբունքները:

2. Բիւրօն պէտք է մղում տայ մարմիններուն, որ խստօրէն գործադրեն կազմակերպական կանոններու տրամադրութիւնները, որպէսզի կարգապահ մթնոլորտի մէջ ստեղծուին քաղաքական եւ գաղափարական դաստիարակութեան հնարաւորութիւնները:

3. Բիւրօն պէտք է հնարաւորութիւններ ստեղծէ՝ զանազան շրջաններու ընկերները փոխադարձ շփման մէջ դնելու, շրջաններու իրակա-

նութեան եւ մտահոգութիւններուն փոխադարձ ծանօթացման նպատակով: ...

ԿԱՌՈՅՑ ԵՒ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ընդհանուր Սկզբունքներ

Նկատի ունենալով ընդհանրապէս մեր կուսակցութեան կառոյցի անցեալ ու ներկայ տարբերակները, գործունէութեան դաշտերն ու ձեւերը, ինչպէս նաեւ մեր ներկայ նպատակներն ու պայմանները, կազմակերպական կառոյցի մասին 21րդ Ընդհ. ժողովը կ'ընէ սկզբունքային հետեւեալ կարգ մը հաստատումները.-

1. Կազմակերպական ապակեդրոնացումը եղած է ցարդ, եւ պէտք է մնայ այսուհետեւ, մեր կուսակցական կառոյցի եւ գործելակերպի հիմնական ձեւը:

Ան ոչ միայն յեղափոխական-բարոյական հիմք ունեցող եւ մեզի համար աւանդութիւն դարձած դրութիւն է, այլ նաեւ միշտ ստեղծած է եւ այսուհետեւ ալ կրնայ ստեղծել պատասխանատուութեան գիտակցութիւն ունեցող, կենդանի եւ գործօն մարմիններու ուժական համակարգ մը: Եւ առաել էւս մեր ներկայ իրականութեան մէջ, երբ այնքան տարբեր են յաճախ քաղաքական, ընկերային եւ տնտեսական այն պայմանները՝ որոնց մէջ գործելու կոչուած են զանազան երկիրներու մեր շարքերն ու մարմինները, կազմակերպական ապակեդրոնացումը արդիւնաւէտ գործունէութեան համար յարմարագոյն դրութիւնն է:

2. Մեր կուսակցութեան համար նոյնքան հիմնական եւ նոյնքան աւանդութիւն դարձած ըմբռնում եւ սկզբունք է սակայն՝ դաշնակցական մարդոց եւ մարմիններու զաղափարական-բարոյական կեդրոնացումը: Դաշնակցութեան զաղափարական-բարոյական նոյնանման մթնոլորտն է որ, տարբեր երկինքներու տակ եւ յաճախ բոլորովին տարբեր պայմաններու մէջ, կը ստեղծէ դաշնակցական մտածողութիւն, դաշնակցական որոշումներ, դաշնակցական գործ, գործելու դաշնակցական եղանակ եւ դաշնակցականօրէն գործող մարդիկ: Սրբութեան մման՝ պէտք է անադարտ պահել մեր զաղափարական եւ բարոյական ըմբռնումներու կեդրոնացեալ այդ դրութիւնը, առանց որուն մեր կազմակերպական ապակեդրոնացումը մեզ կրնայ վերածել իրարմէ հետզհետէ հեռացող, իրարմէ հետզհետէ տարբերող շրջաններու եւ մարմիններու կեդրոնախոյս եւ անճանաչելի ամբողջութեան մը:

3. Ընդունելի ու փափաքելի է նաեւ կուսակցական մարմիններու մէջ

որդեգրել, ամենուրեք ուր ցարդ եղած չէ, որոշ մարզերու մէջ լայն իրաւասութիւններով օժտուած ենթամարմիններով, դիւաններով կամ յանձնախումբերով աշխատելու դրութիւնը, առաւելագոյն չափով օգտագործելով մասնագէտ ու ատակ տարրերը...

4. Հ.Յ.Գ. Բիւրօն Կուսակցութեան գերագոյն գործադիր մարմինն է: Անոր կը պատկանի Դաշնակցութեան քաղաքականութեան ընդհանուր ղեկավարութիւնը: Ան կը հսկէ, որ ժողովներու եւ մարմիններու որոշումներն ու գործերը չհակասեն Դաշնակցութեան Ծրագրին, Կազմակերպական Կանոններուն եւ Ընդհանուր ժողովի որոշումներուն: Ան գերագոյն պահակն է Դաշնակցութեան գաղափարաբանութեան եւ բարոյական ըմբռնումներուն:

Բիւրօն կը գործէ Կանոնագրով նախատեսելի աշխատանքի բաժանման դրութեամբ, մնալով հանդերձ հաւաքաբար պատասխանատու իր բոլոր գործերուն համար:

21րդ Ընդհ. ժողովը կ'որոշէ.-

1. «Հ.Յ.Գ. Կազմակերպական Կանոններ»ուն մէջ տալով հանդերձ մարմիններու եւ ժողովներու դրութեան ներկայ, դասականացած ու նուիրականացած ձեւը, շրջաններուն տալ լայն ազատութիւն՝ իրենց Երջանային Պատգամաւորական ժողովներուն մէջ ճշդելու իրենց պայմաններուն ու հնարաւորութիւններուն լաւագոյնս պատշաճող ներքին կառոյցը, պայմանաւ որ ան չհակասէ Կազմակերպական Կանոններու հիմնական ըմբռնումներուն:

Կազմակերպական կանոններուն մէջ, Երջանային ժողովներու կողմէ փոփոխելի բաժինները կը վերաբերին հետեւեալ ժողովներուն ու մարմիններուն - խմբական ժողով, խումբերու ընդհանուր ժողով եւ ներկայացուցչական ժողով, խումբի դիւան, ենթակոմիտէ եւ կոմիտէ:

Որեւէ շրջանի Ներքին կանոնագիր ի գօրու կրնայ դառնալ Բիւրոյի կողմէ անոր վաւերացումէն ետք միայն:

2. Ընդհանուր ժողովին կողմէ քուէարկուած կանոնագրային փոփոխութիւնները նկատի ունենալով՝ կազմակերպական կանոնները վերախմբագրելու եւ հրատարակելու պարտականութիւն տալ Բիւրոյին: Կազմակերպական կանոններուն որպէս նախաբան պէտք է աւելցուին վերոյիշեալ Ընդհանուր Սկզբունքները....

ՑԱՆԿ ԱՆՉԱՏ-ՅԵՂԻՆԱԿՆԵՐՈՒ

Յեղիճակներու յղումի համարները կը համապատասխանեն հատուածներու շարաթիւերուն:

Շեղագիրով տրուած է ոչ-հեղիճակային ձեւով արտայայտուած անձի մը անունը, կամ տունեալ ելոյթին թիւը (ժողովական ելոյթ, նամակ, վաւերաթուղթ, վկայակոչում, խմբագրական հրապարակում): Ներդիր կազմող հատուածներու հեղիճակներուն համար տրուած է թիւը այն հատուածին, որուն կընկերանան:

-
- | | |
|--|--|
| - ԱՂԲԱԼԵԱՆ Ն. - 1, 2, 3, 8, 10, 11, 12 | - ՇՈՒՇԱՆԵԱՆ Վազգէն - 7 |
| - Անտոն, տես Զաւարեան Ս. | - ՊԵՐՊԵՐԵԱՆ Ն. (Խաժակ) - 17, 21 |
| - ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆ Ա. - 42 | - ԶԱՄԱԼԵԱՆ Արշակ - 29 |
| - ԴԱԻԹԵԱՆ Յոնան - 19, 42 | - ՍԱՍՈՒՆԻ Կարօ - 30, 31 |
| - ԶԱԽԱՐԵԱՆ Սիմոն - 39, 42 | - ՍԻՒՆԻ Բաբկէն - 19 |
| - ԶՕՐԵԱՆ Ստ. (Ռոստոմ) - 16 | - Սրուանձտեան Դամ. - 42 |
| - ԷԼԼԷՆ, տես Սիքայէլեան Քրիս. | - ՎԱՐԱՆԴԵԱՆ Սիք. - 9, 42 |
| - ԹՈՓՉԵԱՆ Եղիշէ - 37, 42 | - ՎՈՍՍԵԱՆ Ա. - 20 |
| - ԽԱԺԱԿ, Գ. - 42 | - ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ Դրաչ - 4, 22 |
| - ՍԱՐԳԱՐԵԱՆ Ս. (Սաֆօ) - 42 | - ՏԵՐ-ՍԻՆԱՍԵԱՆ Ռուբէն - 13, 14, 19, 25, 26, 27, 28, 33, 34, 35, 36 |
| - ՍԻՔԱՅԷԼԵԱՆ Քրիստ. - 5, 41 | - ՏԵՐ-ՍԿՐՏՉԵԱՆ Ստ. - 42 |
| - ՍՈՒՐԱՏ (Սերաստացի) - 42 | - ՓԱՓԱՉԵԱՆ Բ. - 7, 20, 32 |
| - ՆԱԶԱՐԵԱՆՅ Լիպարիտ - 42 | - ՕԴԱՆԶԱՆԵԱՆ Դամօ - 42 |
| - ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ Վ. - 15, 16, 18 | - ՕԴԱՆԶԱՆԵԱՆ Սարգիս - 42 |
| - ՆՈՐԴԱՏԵԱՆ Դ. - 42 | |

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ Ա. ՀԱՏՈՐԻ

*Արդեն նշուած աղբիւր-յղումները ամբողջական ձեւի տակ - թուական, հրատարակութիւն, հրատարակութեան վայր:
(Պարբերական մամուլի աղբիւրները չեն կրկնուած, բացի եթէ իրենց տեղը զանց առնուած էին:)*

Ե. Ֆրանգեան, ՄԵՐ ՓԻԼԻՍՈՓՈՒՄՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔԸ, Փարիզ, 1929
Մ. Վարանդեան, Հ.Յ.Դ.Ը ԵՒ ՆՐԱ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ, Թիֆլիս, 1906

- ՎԵՐԱԾՆՈՒՈՂ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ՄԵՐ ԴԵՐԸ, Ժընև, 1910

- ՀԱՄԱՅՆԱԿԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽ. ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ
Գահիրէ, 1926

Գ. Նժդեհ, ԲԱՆՏԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ, Երեւան, 1993

Էդ. Յովհաննիսեան, ԱԶԳ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՓԻԼԻՍՈՓՈՒՄՅՈՒԹԻՒՆ,
Պէյրուս, 1979

Ռուբէն, ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ, Պոսթըն, 1952

Ա. Շահխաթունեան, ՖԵԴԵՐԱԼԻՉՄ ԵՒ ԴԵՄՈԿՐԱՏԻՉՄ, Թիֆլիս, 1907

Վ. Նաւասարդեան, Հ.Յ.Դ. ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ, in Յուշապատում
Հ.Յ.Դ.եան, Պոսթըն, 1950

- ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՈԳԻՆ, Գահիրէ, 1951

Հ. Տասնապետեան, Ո՞Վ Է ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ, Պէյրուս, 1975

- ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ, Պէյրուս, 1978

ՏԵԴԵԿԱԳԻՐ ՓԵԹԵՐՄՊՈՒՐԿԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՄ. ՄԻՈՒԹԵԱՆ,

in Նիւթեր Հ.Յ.Դ. Պատմութեան համար, ք, Պէյրուս

Գ. Խաժակ, ԻՆՉ Է ԱԶԳՈՒԹԻՒՆԸ, Պէյրուս, 1974

ԻՆՉ Է ԴԱՄԱԿԱՐԳԸ, Պէյրուս, 1981

Լ. Շանթ, ԱԶԳՈՒԹԻՒՆԸ ՀԻՄՔ ՄԱՐԴԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ, Պէյրուս, 1979

Ա. Զամալեան, Հ.Յ.Դ. ԵՒ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ, Հայրենիք ամս., 1931-32

Վարանդ Փափագեան, ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՈՎՁՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ, Երեւան, 1993
Վահէ, ԱՆՁԱՏՈՒՄԾՆԵՐԸ, Թիֆլիս, 1907

Պատգամաւոր, Հ.Յ.Դ. ՊՍՏՁԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼԻ Գ.

ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ, Դրօշակ, ք. 11, 1931

Գ. Խաժակ, ԴԵՊԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ, Թիֆլիս, 1907

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ Բ. ՀԱՏՈՐԻ

*Կը տրուի՛ն բոլոր այն աղբիւր-յղումները, որոնք ամբողջական ձե-
ւով չէին տրուած հատորին մէջ - թուական, հրատարակութիւն, հրա-
տարակութեան վայր:*

- Ն. Աղբալեան, ՄՏԱԾՈՒՄՆԵՐ Հ.Յ.Դ.ԵԱՆ ՄԱՍԻՆ, Փարիզ, 1930
*(անկախ հատուածներուն հետ արդէն տրուած յղումն ա. հրա-
տարակութեան համար - « Դրօշակ » ի մէջ)*
ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ (ա.), Պէյրուօ, 1937
ԿՐԿԻՆ ՄԵՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ (բ.), Պէյրուօ, 1937
- Հ. Տասնապետեան, Ո՞Վ Է ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ, Պէյրուօ, 1975
Հ.Յ.Դ. ԿԱԶՄ. ԿԱՌՈՅՑԻ ՀՈՒՈՎՈՅԹԸ, Պէյրուօ, 1974
(Հ. Տասնապետեան, խմբգ.), ՆԻԻԹԵՐ Հ.Յ.Դ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ,
բ. հատոր, Պէյրուօ
- Մ. Վարանդեան, Հ.Յ.Դ.Ը ԵՒ ՆՐԱ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ, Թիֆլիս, 1906
Ռուբէն, Հ.Յ.Դ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ, Գահիրէ, 1935
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ, Պոսթըն, 1952
- Վ. Նաւասարդեան, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՈԳԻՆ, Գահիրէ, 1951
Ե. Թոփչեան, ԱՐՅԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ, Թիֆլիս, 1907
(Ս. Վրացեան, խմբգ.) ԴԻԿԱՆ Հ.Յ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ, ա. եւ բ. հատորներ,
Պոսթըն, 1934 եւ 1938
- ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ, Պէյրուօ, 1993
(ԺՂՂՈՎԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒ ԵՒՆ. ԳՐՔՈՅՎ-
ՆԵՐԷ
- թթ. 44էն 52 հատուածներու նիւթերը)

«Յեղափոխական Գրադարան» մատենաշար, Թիւ 15

ԳԱՂԱՓԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ Յ.Յ.ՂԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Եռահատոր շարք

Խմբագիր՝ Յ. Քիւրքճեան

Յատոր Երկրորդ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Աշխատակիցներ

Կ. Մանոյեան

Շ. Գանտահարեան

Յրատարակութիւն Բ. կիսամեակ, 1997

Կեդրոնատեղիներ

ՀԱՅԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

ARMENIAN EDITIONS

P.O.BOX 19226 - 11710 ATHENS

GREECE

Յեռաձայն՝ 301. 922 6142 - Յեռապատճէն՝ 924 0124

ՇԱԴՉՈՅԵԱՆ ԿԵՂՐՈՆ

SHAGHZOYAN CULTURAL CENTER

BOURJ-HAMMOUD - LEBANON

